

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts


Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՄԱՍԿՈՒ ԱՄՅԱԽԵԼ

1917-2000

ՀՐԱՆՏ ԱՐԱՀԱՄՅԱՆ

գիրք **Բ**

1923-1985

ԸՅ Յ12Կ1


ԼԻ-16

ՀՐԱՆՏ ԱՐՐԱՐԱՄՅԱՆ

ՄԱՐՏԵՉՈՂ ԱՐՅԱԽԸ 1917-2000

ՊԻՐԶ Բ
1923-1985

38 749



ԵՐԵՎԱՆ 2005

Նվիրում եմ ծնողներին՝
Քարսեղ և Մարյանգյուլ Աբրահամյանների
հիշատակին, ինչպես և նրանց,
ովքեր այդ ծանր տարիներին իրենց մկիրել են
հայրենի երկրի կերտմանը

Խմբագիր՝ Գ. Մ. Գեղամյան
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գրախոսներ՝ պատմագիտության դոկտորներ
Կ. Ա. Հարությունյան (ԳԱԱ ՊԻ),
Է. Գ. Մինասյան (ԵՊՀ)

Աբրահամյան Հ.

Ա 161. Մարտնչող Արցախը, 1917-2000, Գիրք Բ, 1923-1985,
- Եր.: Զան-ակ-97, 2005, 280 էջ:

*Դրանտ Աբրահամյանի սույն ուսումնասիրությունը համեմուն աշխատության
շարունակությունն է, որն ընդգրկում է Արցախ-Ղարաբաղի պատմությունը 20-րդ դա-
րի ք20-ական թթ. մինչև 80-ական թթ. կեսերը:*

*Ղա դժվարին և ծանր շրջան էր: Սակայն դարերի ծանրությանը դիմակայած ար-
ցախահայությունը հաղթահարեց հերոսաբար և ամրապնդեց մայր հողի արմատնե-
րը՝ այն դարձնելով ավելի կուռ ու կենսունակ: Պատմությունն արցախցիների հնա-
րավորություն էր ընձեռել ոչ միայն պայքարել տնտեսությունն առաք նրջելու և ապրե-
լու պայմանները տանելի դարձնելու համար, այլև աննահանջ պայքարել թուրք-ա-
զերիների հակահայ մոլուցքի դեմ, որի նպատակն էր հայաթափել և թուրքացնել Ար-
ցախը. այն Արցախը, որը, լինելով արցախահայության վաղնջական բնօրրանը, դա-
րեր շարունակ շունչ ու կյանք է տվել նրան:*

Ա 0503020913
0003(01)-2005

ԳՄԴ 63.3(27)

ISBN 99930-2-532-1

© Հ. Աբրահամյան, 2005 թ.
© «Զան-ակ-97», 2005 թ.

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Առաջին աշխարհամարտի և նրան հաջորդած քաղաքացիական պա-
տերազմների ու ազգային ընդհարումների հետևանքով լիովին քայքայ-
վել էր Արցախ-Ղարաբաղի տնտեսությունը, և բնակչության զգալի մա-
սը դարձել էր գաղթական: Այն վերականգնելու համար պահանջվում էր
հաղթահարել բազում դժվարություններ: Դարեր շարունակ իրենց զոյա-
պայքարով արցախցիները կարողացան հերոսաբար հաղթահարել այդ
դժվարությունները ևս և 20-30-ական թթ. վերափոխել ու ստեղծել արդ-
յունաբերություն, վերակառուցել գյուղատնտեսությունը, ստեղծել կու-
սակցական և խորհրդային մարմիններ, հաստատել նոր հարաբերու-
թյուններ, բարձրացնել բնակչության կենսամակարդակը, աշխուժացնել
մշակութային կյանքը և այլն: Իսկ Մեծ հայրենականի տարիներին ար-
ցախահայությունը ոչինչ չխնայեց երկրի պաշտպանությանն աջակցե-
լու համար: Նա ցուցաբերեց անասելի խիզախություն թե՛ ռազմաճակա-
տում և թե՛ թիկունքում: Տասնյակ հազարավոր արցախցիների անուննե-
րը պատմության մեջ գրվեցին ոսկե տառերով:

Չետպատերազմյան տասնամյակներում, չնայած դանդաղ, բայց և
այնպես առաջխաղացում էր նշմարվում Արցախի ընդհանուր կյանքում:
Այդ ժամանակաընթացքում Ադրբեջանի թուրք ազգայնամուլները ջանք
չէին խնայում Արցախը հայաթափելու և այն թուրքացնելու համար:
Բաքվից Լեռնային Ղարաբաղ ուղարկված տասնյակ կամակատարներ
հլու-հնազանդ կատարում էին վերևից իջեցված բոլոր պահանջները,
ամենից առաջ նպաստում էին երկրամասը թուրքացնելու քաղաքակա-
նությանը: Անշուշտ, այս ամենի նկատմամբ արցախցիները չէին կարող
անտարբեր լինել: Նրանք վաղուց էին զգացել թուրքի հայակործան այդ
քաղաքականությունը և երբեք չէին դադարել դրա դեմ պայքարելուց:
Արցախցիների այդ պայքարը նոր թափ առավ անցյալ դարի 80-ական
թթ. կեսերից սկսած: Հյուսիսային Արցախը գրեթե լրիվ հայաթափվել էր,
Ադրբեջանի այլ տարածքներից տասնյակ հազարավոր հայ ընտանիք-
ներ ստիպված էին գաղթել Հայաստան, Վրաստան, Միջին Ասիա, Ռու-
սաստան և այլ տեղեր: Ամենամեծ վտանգը կախվել էր Լեռնային Ղարա-

բաղի գլխին: Այն վերացնելու համար հարկավոր էր հայի միասնական բռունցք: Եվ այն վեր բարձրացավ Արցախին ազատություն բերելու և ընդմիջտ մայր հայրենիքի հետ լինելու համար:

Արցախ-Ղարաբաղի այդ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրումը և երևույթներին ընդհանուր ու ճիշտ գնահատական տալն ունեն գիտական, քաղաքական կարևոր նշանակություն: Այդ ժամանակաշրջանի Արցախի պատմության ուսումնասիրումը գրեթե դուրս է մնացել հայ պատմաբանների ուշադրությունից: Ահա թե ինչու նպատակահարմար գտանք սույն ուսումնասիրության այս մասը լիովին նվիրել Արցախի 20-ական թթ. մինչև 80-ական թթ. կեսերն ընկած պատմության ընդհանուր դիտարկմանը:

Այդ ժամանակաշրջանում Արցախի մասին տպագրվել են մասնակի ուսումնասիրություններ, պաշտպանվել են գիտական թեզեր, հրատարակվել վիճակագրական բազմաթիվ ժողովածուներ, մասնագիտական գրքույկներ և այլն: Այդ ամենի հետ միասին օգտագործել ենք ԼՂՀ, Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների արխիվներում պահպանվող բազմաթիվ նյութեր, մամուլում և հանդեսներում տպագրված հաղորդումներ ու հոդվածներ, այդ տարիներին Լեռնային Ղարաբաղում աշխատած մի շարք մարդկանց հուշեր և այլն:

Դեռևս անցյալ դարի 20-ական թթ. կեսերին տպագրված Գ. Քոչարյանի¹ և Գ. Սեյրամի² ուսումնասիրություններում առաջին անգամ հանգամանորեն վեր է լուծվել Արցախում ստեղծված տնտեսական ընդհանուր վիճակը: Նրանք, օգտագործելով և քննարկելով 1921 թ. և 1926 թ. վիճակագրական տվյալները, համոզիչ փաստարկումներով ցույց են տվել Լեռնային Ղարաբաղի տնտեսական պատկերը: Ամենակարևորը, նրանք դեմ էին Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանի կազմում մնալուն:

Լեռնային Ղարաբաղի տնտեսական վերափոխումների ուսումնասիրությանն են նվիրված Գրիգոր Հովհաննիսյանի մի շարք հետազոտություններ³: Այդ աշխատանքներում ցույց է տրված երկրամասի կյանքի վերափոխման ուղղությամբ Լեռնային Ղարաբաղի կուսակցական, պետական մարմինների և հասարակական ու քաղաքական կազմակերպությունների գործունեությունը: Մինևս սույն ժամանակ հեղինակն անդրադարձել է այդ ճանապարհին մարզում թույլ տրված սխալներին և շեղումների պատճառների վերլուծությանը ու դրանց վերացման համար ձեռնարկված միջոցառումներին: Բայց և այնպես, Գ. Հովհաննիսյանի ուսումնասիրություններից դուրս են մնացել մի շարք կարևոր հարցեր: Նա գրեթե չի խոսում Լեռնային Ղարաբաղի սահմանադրության, Լեռնային Ղարաբաղում իրագործված բռնարարքների, 20-ական թթ. Ադրբեջանի իշխանությունների կողմից ծամծմված «քրդական» հարցի և այլ

խնդիրների մասին: Հեղինակն ամբողջապես չի մեկնաբանել Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր հեղկոմի և խորհուրդների համագումարների հետ կապված որոշ հարցեր, գրեթե անտեսվել են մարզի գյուղատնտեսության վերափոխման ճանապարհին խորհրդային մարմինների ունեցած դերն ու նշանակությունը և այլ հարցեր:

Շերամապահությունը և մետաքսագործությունը Արցախում ունեցել են դարերի պատմություն, որը արդյունաբերական հիմքի վրա է դրվել 19-րդ դարի կեսերից հետո: Այն վերածնունդ է ապրել խորհրդային իշխանության տարիներին, որին են նվիրված Ար. Առաքեյանի⁴ և Ա. Չաքարյանի⁵ ուսումնասիրությունները: Նրանք իրենց առաջ խնդիր էին դրել ցույց տալ խորհրդային իշխանության տարիներին մարզում շերամապահության և մետաքսարդյունաբերության զարգացման առանձնահատկություններն ու դրանց դերը մարզի տնտեսության զարգացման գործում: Այդ հեղինակները, որոնց աշխատանքները թեև նեղ մասնագիտական բնույթ ունեն, ուսանելի ազդեցություն են թողել Արցախի խորհրդային շրջանի պատմությունն ուսումնասիրողների վրա:

Արցախի թե՛ անցյալի և թե՛ խորհրդային տարիների պատմության վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ կան Ս. Բարսեի (Սամսոն Բարսեղյան) բազմաթիվ հոդվածներում և «Լեռնային Ղարաբաղ» գրքում⁶: Նախկին ծխական դպրոցի ուսուցիչը, որը հետագայում դեկավարել է մարզի գյուղատնտեսությունը, հրապարակած իր նյութերում տվել է Արցախի պատմությանը վերաբերող բավականին ճիշտ տվյալներ, սակայն նաև անճշտություններ է թույլ տվել: Օրինակ՝ նա ոչ ճիշտ տեղեկություններ է հաղորդել Ղարաբաղի գինու տրեստի կազմավորման, գործարանների կողմից սպիրտի արտադրության թողարկման ժամկետների մասին: Իսկ մեկ ուրիշ հեղինակ՝ Ն. Շահնազարովը, որը մի որոշ ժամանակ եղել է Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար, իր հեղինակությամբ տպագրած «Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզ»⁷ գրքում, որի կազմմանը մասնակցել են նաև մի խումբ հայ և թուրք հեղինակներ, գրում է, թե իբր մետաքսագործությունը Լեռնային Ղարաբաղում սկիզբ է առել 19-րդ դարի սկզբից: Մինչդեռ մետաքսագործությունն Արցախում ունեցել է նախընթաց դարերի պատմություն: Այդ գրքում կան նաև այլ բնույթի թերություններ և անճշտություններ:

Լեռնային Ղարաբաղի խորհրդային շրջանի մամուլի պատմությանն են նվիրված Սմբատ Ավագյանի բազմաթիվ հոդվածներ և «Սովետական Ղարաբաղի մամուլը» ուսումնասիրությունը⁸: Հեղինակը, բազմիցս անդրադառնալով Արցախի մամուլի պատմության հարցին, վեր է հանել մամուլի ունեցած դերը Արցախում խորհրդային կարգերի հաստատման և ամրապնդման գործում: Արցախի մշակութային կյանքին է նվիրված

վերջերս լույս տեսած Համլետ Գրիգորյանի և Գրիշա Հարությունյանի ծավալուն մենագրությունը՝ «Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»⁹, որն իր հարուստ բովանդակությամբ կարևոր ներդրում է Արցախի դպրոցի պատմությունն ուսումնասիրելու համար:

Լեռնային Ղարաբաղի խորհրդային ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ փաստական հարուստ տվյալներ են պարունակում ԼՂԴ մարզային վիճակագրական վարչության ժողովածուները¹⁰, որոնք լայնորեն օգտագործվել են սույն աշխատության մեջ: Արցախի վերաբերյալ մի շարք թվական տվյալներ են գետնդրված նաև Ադրբեջանում տպագրված վիճակագրական ժողովածուներում¹¹:

Խորհրդային տարիներին իրենց աշխատություններում Արցախի պատմությանն են անդրադարձել Բագրատ Ուլուբաբյանը, Վահրամ Բալայանը և ուրիշներ¹², ովքեր, շարադրելով Արցախի պատմությունը կամ դիտարկելով դրան առնչվող որոշ հարցեր, հիմնականում կարողացել են դրականորեն լուծել իրենց առաջ դրված խնդիրները: Մեր կողմից, անշուշտ, դրանք օգտագործվել են:

Չի կարելի չընդգծել Շահեն Սկրտչյանի կատարած աշխատանքը: Վերջին տասնամյակներում նա հրատարակել է բազմաթիվ ուսումնասիրություններ¹³, որոնցում մերկացվում է Խորհրդային Ադրբեջանի պարագլուխների կողմից արցախահայության նկատմամբ իրագործված ցեղասպանությունը, որոնց բարբառոս քաղաքականության նպատակն էր ունենալ Արցախ՝ առանց նրա բնիկ տերերի՝ հայերի: Շ. Սկրտչյանի այդ աշխատությունները նույնպես օգտագործվել են մեր կողմից:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ամասելի հերոսություն է ցուցաբերել արցախահայությունը տալով մարշալներ, ծովակալներ, գեներալներ, տասնյակ հերոսներ: Այդ մասին համգամանորեն խոսվում է Հայրենական մեծ պատերազմի պատմության լավագույն մասնագետ Կլիմենտ Հարությունյանի աշխատություններում¹⁴:

Հայրենական պատերազմին արցախցիների մասնակցության վերաբերյալ գրքեր և հոդվածներ են տպագրել կամ թեկնածուական թեզեր պաշտպանել մի շարք հեղինակներ¹⁵, որոնց աշխատանքներին անդրադարձել ենք Հայրենական մեծ պատերազմի հետ կապված գլխի շարադրանքում:

Խորհրդային Ղարաբաղի պատմության վերաբերյալ որոշ նյութեր կան Ադրբեջանի մի շարք պատմաբանների աշխատություններում, հրատարակված ժողովածուներում և տարբեր բնույթի գրքերում¹⁶: Այդ հեղինակները, սակայն, հարցին մոտեցել են միտումնավոր և ամեն կերպ փորձել են նսեմացնել ու անտեսել արցախցիների մղած հերոսական պայքարը:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական – սոցիալ-քաղաքական կյանքը 1920-1930-ական թթ.

1. Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը վերականգնման ճանապարհին

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալուց հետո երկրամասի կյանքում նկատվում էին որոշ տեղաշարժեր: Առաջընթաց քայլեր կատարվեցին մարզի արդյունաբերության վերականգնման ուղղությամբ: Լեռնային Ղարաբաղի մարզկոմի նախագահությունը 1923 թ. օգոստոսի 29-ի իր նիստում շեշտեց, որ մարզի տարածքում գտնվող արդյունաբերական ձեռնարկությունները գտնվում են բարձիթողի վիճակում, թալանվում են և գողացվում: Նախագահությունը հարց հարուցեց վերադաս իշխանությունների առաջ՝ մարզի տարածքում գտնվող արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները հանձնել մարզային գործադիր կոմիտեի իրավասությանը¹: Դա հնարավորություն կտար մոտիկից հսկել և ղեկավարել ձեռնարկությունները, ժամանակին հոգալ նրանց պահանջները և ստացած օգուտների մի մասը ներդնել մարզի տնտեսության զարգացման մեջ: Ելնելով այդ պահանջից՝ Ադրկոմկուսի Կենտկոմի քարտուղարությունը նպատակահարմար գտավ Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող մետաքսուլորման և մետաքսագործական բոլոր ֆաբրիկաները հանձնել Ղարաբաղի հեղկոմին²: Եվ ահա, Ադրբեջանի համապլանային հանձնաժողովի որոշմամբ, Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող մետաքսարդյունաբերական ձեռնարկությունները հանձնվեցին մարզային գործադիր կոմիտեի տնօրինությանը: Նախապատերազմյան Լեռնային Ղարաբաղում գործել է 42 մետաքսագործական ֆաբրիկա, որից 38-ը՝ մետաքսագործական, 4-ը՝ մետաքսուլորման: Այդ ֆաբրիկաներում աշխատում էր ավելի քան 3000

բանվոր⁹: Մեկ այլ աղբյուրի համաձայն 1914 թ. Լեռնային Ղարաբաղում գործել է 46 ֆաբրիկա, որոնցից 36-ը գործող, 10-ը ուղրող: Այդ բոլոր ֆաբրիկաներում գործում էր 1590 հաստոց⁴: Այդ ժամանակ, քանի որ մարզում որևէ տնտեսական ղեկավար մարմին չկար, որ ղեկավարեր այդ ձեռնարկությունները, դրանց հսկողությունը և վերականգնման համար տարվող աշխատանքների ղեկավարումը ժամանակավորապես թողնվեցին մարզկենտրոնի կոմունալ տնտեսությանը: Ըստ տվյալների արդեն 1924 թ. Լեռնային Ղարաբաղում աշխատում էին վեց մետաքսագործական և մեկ մետաքսուլորման ֆաբրիկաներ⁵: Մեկ տարվա ընթացքում նկատելիորեն բարձրացել էր ֆաբրիկաների աշխատանքային արտադրողականությունը: Այսպես, եթե 1922 թ. մեկ կարծական հաստոցը աշխատել էր ընդամենը 32,2 օր, ապա 1924 թ. այն հասել էր 145,6 օրվա: Եվ որպեսզի ֆաբրիկաները պարապուրդ չտային, Արցախի մետաքսագործները բոժոժ էին ստանում մարզի հարևան շրջաններից և վրաստանից⁶: Մետաքսակարծական հաստոցների արտադրողականությունը և արտադրվող մետաքսահումքի որակը բարձրացնելու ուղղությամբ ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում մեկ հաստոցի արտադրողականությունը 1923 թ. 1,2-ից հասցվեց 2,3 փոխ: Մետաքսի ֆաբրիկաները վերականգնելու և 40-50 տարվա հաստոցները նորերով փոխարինելու համար 1925 թ. ներդրվեց 188 հազար ռուբլի, որը, սակայն, աննշան էր⁷:

Լեռնային Ղարաբաղում մետաքսարդյունաբերությունը սկսեց արագ վերելք ապրել 1925 թ. սկսած: Արդեն այդ նույն թվականին մարզում արտադրվել է 543 փութ մետաքս-հումք⁸: Մետաքսարդյունաբերության որպես մարզի արդյունաբերության հիմնական ճյուղի, վերականգնման և հետագա զարգացման կարևոր պահանջն առաջ բաշեց մարզում ստեղծել տնտեսական մի համակարգող մարմին, որը պետք է մոտիկից ղեկավարեր արդյունաբերության այս ճյուղը: Մարզում մետաքսարդյունաբերության վերականգնումը և նրա հետագա զարգացումը ոչ միայն տնտեսական, այլ նաև պատվի խնդիր էր: 1924 թ. օգոստոսին տեղի ունեցած մարզխորհրդի կենտրոնական գործադիր կոմիտեի պլենումը ամիրաժեշտ համարեց կազմակերպել մետաքսի տրեստ⁹: Մակայն նյութաֆինանսական միջոցների բացակայության պատճառով խնդրի լուծումը ձգձգվեց շուրջ մեկ ու կես տարի:

Լեռնային Ղարաբաղի տարածքում դարեր շարունակ իր եկամտաբեր ճյուղ էր համարվում սպիրտի և խմիչքների արտադրությունը: Տնայնագործական եղանակով արտադրված այդ նթերքները իրացնելու համար, սակայն, գյուղացիները հաճախ հանդիպում էին լուրջ դժվարությունների և կրում նյութական մեծ վնասներ: Դրա հիմնական պատճառը թերևս

մարզի տարածքում օղեթորման գործարանի բացակայությունն էր: Վերանորոգված օղեթորման Աղզամի միակ գործարանն ի վիճակի չէր լրիվ սպառել Ղարաբաղում արտադրված և վաճառքի ենթակա ամբողջ օղին: Բերենք մի այսպիսի օրինակ. որպեսզի կարողանար իր արտադրած օղին իրացնել, Տոդի գյուղատնտեսական ընկերությունը 1924 թ. ստիպված էր դիմել Ազգինին և մի կերպ իրավունք ստանալ ընդամենը 500 դուլլ օղի հանձնել Աղզամի օղեթորման գործարան¹⁰: Մարզում սպիրտի և խմիչքների արտադրության ծավալմանը բացասաբար էր ազդում նաև այն, որ այդ ապրանքները պետությունը գնում էր խիստ էժան գներով: Օրինակ՝ 1924 թ. մեկ դուլլ օղու համար պետությունը վճարել է ընդամենը հինգ ռուբլի¹¹: Օգուտը կազմում էր կոպեկներ, դրա համար էլ արցախցիների մի մասը հրաժարվում էր զբաղվել սպիրտի և խմիչքների արտադրությամբ: Եվ, չնայած դրան, այնուամենայնիվ, այդպիսի պայմաններում Լեռնային Ղարաբաղում 1925 թ. արտադրվել է 3.169.621 աստիճան սպիրտ¹²: Իսկ դա գրեթե հավասար էր նախապատերազմյան 1913 թթ. մակարդակին: Ելնելով դրանից՝ 1924 թ. հարց դրվեց մարզի տարածքում կառուցել օղեթորման գործարան: Այն կառուցվեց 1925 թ. Ասկերանում, որի օրական արտադրողականությունը հասնում էր 10.000 աստիճան առաջին կարգի սպիրտի: Արդյունաբերական այդ առաջնեկը խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղում կառուցված այն ձեռնարկությունն էր, որին սարքավորումներով մեծ օգնություն է ցույց տվել խորհրդային Հայաստանի կառավարությունը¹³:

Լեռնային Ղարաբաղի տարածքի գրեթե մեկ երկրորդը կազմում են անտառները: Դրանք մեծամասամբ մնացել էին անօգտագործելի: Հաճախեցին և կաղնիներով հարուստ այդ անտառներն օգտագործելու համար չկար փայտամշակման որևէ գործարան: Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի 1924 թ. օգոստոսին ընդունած որոշման համաձայն՝ մարզի տարածքում սկսել էին կառուցել փայտասղոցման արհեստանոցներ: Մեկ տարի անց մարզի անտառներից ստացվել էր 58.309 ռուբլու գուտ եկամուտ¹⁴:

Առաջածրի ջրաղացաքարերի հումքը հայտնի էր շատ վաղուց: Արտադրանքի այդ տեսակն Անդրկովկասում եզակի էր: Ջրաղացաքարեր արտահանվում էին Կովկասի տարբեր շրջաններ, Միջին Ասիա, Ռուսաստան և Մերձավոր Արևելքի երկրներ: 1923 թ. վերակառուցվեց հանքը և տրվեց մարզային ժողովախորհին: Վերջինիս նախաձեռնությամբ նորոգվեց դեպի քարահանք տանող ճանապարհը, ձեռք բերվեցին քարահատ նոր մեքենաներ, բեռնաքարշեր, ավելացվեց բանվորների թիվը, բարձրացվեց աշխատավարձը և այլն: Այսպիսով՝ քարահանքում աշխատանքներն առաջ էին գնում նոր թափով:

ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Լեռնային Ղարաբաղում շեշտը դրվում էր հատկապես գյուղատնտեսության վերականգնման և նրա հետագա զարգացման վրա: Այդ ուղղությամբ նշանակալից դեր խաղաց ինքնավար մարզի հողային կոմիսարիատը, որը կարևոր ուշադրություն էր դարձնում հողաշինարարության աշխատանքներին, անտառային և արոտավայրային տնտեսությունների կազմակերպմանը, անասնապահության զարգացմանը, ոռոգման ցանցի ընդլայնմանը և գյուղատնտեսության մեջ պետական սեկտորի ստեղծմանն ու խթանմանը: Հող֪ժողկոմը, որը ղեկավարում էր նախկինում Բաքվի բանվոր Սուկուչ Արզանյանը, ձգտում էր ավելացնել մարզի հող֪օգտագործման ֆոնդը: Մարզային իշխանությունների պահանջով 1923 թ. ամառվանից մինչև 1925 թ. կեսերը Ղարաբաղի հարթավայրային շրջաններից Լեռնային Ղարաբաղին հատկացվեց 16 հազար դեսյատին հող¹⁵: Ղա բավարարեց հողի նկատմամբ Լեռնային Ղարաբաղի պահանջի մի չնչին մասը միայն: Ակնհայտ է, որ հողային հարցը միշտ էլ վիճելի է եղել ԼՂԻՄ, Քրդստանի, Ադրամի և Կարյազինոյի գավառների միջև: Այդ կապակցությամբ մինչև 1925 թ. Ադրբեջանի և Անդրկովկասի Ղաշնային Հանրապետության բարձրագույն իշխանություններն ընդունել էին բազմաթիվ որոշումներ: Այդ ժամանակ մարզում մեկ շնչին միջին թվով ընկնում էր 0,41 դեսյատին վարելահող¹⁶, որը զգալիորեն ցածր էր Ադրբեջանի միջինից: Անշուշտ, հողի այդ չափը չէր կարող բավարարել հողի նկատմամբ Լեռնային Ղարաբաղի բնակչության ունեցած պահանջը, մանավանդ որ անհրաժեշտ էր ընդլայնել ցանքատարածությունները, թոխմաշարի և բամբակի պլանտացիաները, զարգացրոլ անասնապահության համար ստեղծել կերերի և անասունները տեղավորելու կայուն բազա:

Լեռնային Ղարաբաղի տարածքի գրեթե 75%—ը գտնվում է Լեռնային և նախալեռնային շրջաններում, որտեղ ցածր էր բերքատվությունը: Աննշան տեղ էր գրավում արդյունաբերական նշանակություն ունեցող բույսերի ցանքսը: Մարզում արդյունաբերական ապրանքների գները դեռևս մնում էին բարձր և մատչելի չէին բնակչության մեծամասնության համար: 1923 թ. վերջին 4—5 անգամ ընկել էր ցորենի՝ որպես ապրանքափոխանակման հիմնական միջոցի գինը, 3—4 անգամ՝ գաբու գինը, 4 անգամ՝ յուղինը, 6—7 անգամ՝ գինուը, 7 անգամ՝ մսինը, 4 անգամ՝ մեղրինը և այլն: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը արցախցին մեկ փուլ բամբակի դիմաց ստանում էր 6—7 փուլ ցորեն, իսկ 1923—ին՝ 20 փուլ, կամ թանկացել էր 3 անգամ, 2—2.5 անգամ էլ թանկացել էր բուրդը: Որպեսզի շատ վնաս չկրեն, գյուղացիները հաճախ ստիպված էին հրաժարվել արդյունաբերական ապրանքներ գնելուց և տնայնա-

գործական եղանակով իրենց կարիքների համար պատրաստում էին հագուստ, գյուղատնտեսական գործիքներ և այլն: Իսկ ղա զգալի ժամանակ էր խլում գյուղացիներից: Կուսակցության մարզկոմը և խորհրդային մարմինները ձգտում էին վերացնել նման երևույթները: Հոգ էր տարվում զարգացնելու պետական առևտուրը և գյուղական բնակչությանն ապահովելու արդյունաբերական անհրաժեշտ ապրանքներով: Գյուղացին սկսում էր իր ժամանակի մեծ մասը նվիրել այգիների և ցանքերի մշակմանը, նոր հողակտորների յուրացմանը, ջրատարներ փորելուն և այլն: Այսպիսով՝ դարեր շարունակ մաքառող արցախցու կյանքը դեռևս մնում էր ծանր: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ 1923 թ. խիստ անբարենպաստ տարի էր, ապա ընդհանուր վիճակն ավելի պարզ կլինի: Այդ նույն թվականին բնական պատահարների հետևանքով ոչնչացվել էր 11 հազար դեսյատին ցանքս¹⁷: Վնասվեց նաև այգիների զգալի մասը: Այդ նույն տարվա գարնանացանը կատարելու համար պետական ֆոնդերից Ղարաբաղ բաց թողնվեց 10 հազար փուլ սերմացու¹⁸, իսկ աշնանացանը կատարելու համար 25 հազար փուլ¹⁹:

Արցախցիները հիմնականում օգտագործում էին աշխատանքային հասարակ գործիքներ: Նրանք մտահոգված էին իրենց տնտեսությունը վերականգնելու և ապրանքային դարձնելու համար: 1924/25 տնտեսական տարվա մարզի հող֪ժողկոմատի հաշվետվության մեջ նշված է, որ մարզի գյուղացիները ձգտում են «բարելավել իրենց տնտեսությունը, նրան տալ արդյունաբերական բնույթ, վերանշակել իրենց հումքը, շուկայում հանդես գալ որպես մթերքներ իրացնողներ, օգտվել վարկից, ձեռք բերել իրենց համար անհրաժեշտ գործիքներ և քաղաքային արդյունաբերության այլ իրեր...»²⁰:

Ընդհանրապես, գյուղատնտեսության վերականգնման կարևոր պայմաններից մեկը հանդիսանում էր գյուղատնտեսական ընկերությունների ստեղծումը: Ընդօրինակելով Խորհրդային Միության առաջավոր փորձը 1924 թ. երկրորդ կեսից սկսած Լեռնային Ղարաբաղում կազմակերպվեցին հողի մշակման, մեքենայական, վարկային, ջրային և այլ ընկերություններ, որոնք պետությունից ստանում էին աջակցություն: Միայն 1924 թ. առաջին կեսից մարզային հող֪ժողկոմատը գնել և գյուղատնտեսական ընկերություններին բաժանել էր 12 հազար ռուբլու սերմացու²¹: Գյուղատնտեսական վարկային ընկերություններ կազմակերպվեցին Հաղրոթում, Տողում, Խոնաշենում և Ղաշբուլաղում: Պետ֪գյուղբանկը վարկ տրամադրում էր միայն վարկային ընկերությունների միջոցով: Եթե 1924/25 տնտեսական տարում Ստեփանակերտի պետ֪գյուղբանկի շրջանառությունը կազմել է 1417 հազար ռուբլի, ապա հաջորդ տարում այն հասել էր 6 միլիոնի²²:

Մարզի գյուղացիներին օգնելու և գյուղատնտեսությունն արագ վերականգնելու նպատակով 1925 թ. ստեղծվեցին հողը մշակող մեքենաների և գործիքների վարձակետեր, որտեղից գյուղացիները ժամանակավոր օգտագործման համար վերցնում էին սերմազտիչներ, սրսկիչներ, գութաններ, գյուղատնտեսական այլ գործիքներ ու մեքենաներ: Ժամանակի մասուլը նշել է, որ անհրաժեշտ է երկրամասում զարգացնել կոլեկտիվ երկրագործությունը, որի համար պետք է բերվեն գութաններ, ցաքաններ, սերմազտիչներ, սերմող, հարող, հնձող, սրսկիչ մեքենաներ և դեղորայք²³:

Մարզի գյուղատնտեսության վերականգնման գործում կարևոր դեր են ունեցել նաև ագրոկետերը: Դեռևս 1923 թ. վերջին մարզխորհրդի գործադիր կոմիտեն մշակել էր մարզի գյուղական տնտեսություններին ագրոնոմիական օգնություն ցույց տալու ծրագիր: Այն շրջանային և գյուղական խորհուրդներից պահանջում էր բարելավել սերմացուն, կատարել ցանքատարածությունների պարարտացում, մտցնել խտացանություն և այլն: Այդ ծրագրի համաձայն՝ ընդլայնվեց Ստեփանակերտի մարզային կենտրոնական ագրոկետը, որը կազմակերպվել էր 1923 թ.: 1924 թ. ագրոկետեր բացվեցին Խոնաշենում, Ջրաբերդում և Դիզակում: Ագրոկետերը գյուղացիներին պրոպագանդում էին գյուղատնտեսությունը նոր ձևով վարելու և առաջ մղելու օրինակներ: Ամենից առաջ արմատավորում էին շաբաթային ցանքը, հողամշակման ժամանակ քիմիական նյութերի և տեխնիկայի օգտագործումը, հողի պարարտացման ձևերը և այլն: Այդ ժամանակ, ինչ խոսք, տեղական գյուղատնտեսները հատուկ կենտ էին: Առաջին տարիներին այստեղ աշխատում էին ռուս մասնագետներ Յակովը, Միսինը, անասնաբույծներ Գրիգորևը, Տրոյնիցկին, զոոտեխնիկ Բուլգակը: Հետո աշխատելու եկան Արզո Հովհաննիսյանը, Արահամ Աթաբեկյանը (Երևանից), Խորեն Տեր-Գրիգորյանը, Սոնյա Գասպարյանը, Արուսյակ Միրզոյանը և շատ ուրիշներ: 1925 թ. Մարտունու, Հաղորթի, Մարզուշևանի և Ստեփանակերտի ագրոկետերը համալրվեցին նոր մասնագետներով: Ագրոկետերին կից ստեղծվեցին ագրոմիսիոնուի խմբակներ, որտեղ ագրոկետերի մասնագետները գյուղացիներին տեղյակ էին պահում հողը նոր ձևով վարելու եղանակներին, անց էին կացնում զրույցներ, գյուղատնտեսական տարբեր հարցերի շուրջ կազմակերպում դասախոսություններ և այլն:

Գյուղատնտեսության վերականգնումն ու զարգացումը հնարավոր չէր պատկերացնել առանց ոռոգման աշխատանքները կայուն հիմքերի վրա դնելու: 1924 թ. մարզում գործում էր 61 քյարիիգ²⁴, որոնց ջրերն օգտագործվում էին ոռոգման համար: Նորոգվում էին հին քյարիիգները, կառուցվում նորերը: Հաճախ գյուղացիներն իրենց նախածեռնությամբ

փորում էին ջրանցքներ: Օրինակ՝ դաշբուլաղցիների փորած ջրանցքի ջրով ոռոգում էին 500-600 դեյալտին հող²⁵: 1925 թ. հունիսի 16-ին մարզգործկոմը, քննարկելով մարզում ջրանցքներ անցկացնելու հարցը, որոշեց «նկատի ունենալ Լեռնային Ղարաբաղի գյուղացիության, իսկ առանձնապես հարթավայրային մասին կից գյուղացիության սակավահողությունը և հողերի անջրդի լինելը, որի համար ժողովուրդը ստիպված է խմբով գաղթել դեպի հեռավոր նահանգներ ու քաղաքներ, առաջարկել շրջագործկոմին և հողբաժնին ամենալուրջ ուշադրություն դարձնել և ամենամոտ ապագայում աշխատել անցկացնել Ջիվանշիրի և Թալիշի ջրանցքները»²⁶: Իսկ մինչ այդ՝ փետրվարի 23-ին, մարզկոմի ընդլայնված նիստը, քննարկելով մարզի ջրանցքների օգտագործման հարցը, որոշել էր անհապաղ սկսել Մատաղիսի, Փիքջամալի և Ուզուն Թալիշի ջրանցքների նորոգման աշխատանքները: Չեռնարկված միջոցառումների հետևանքով 1925 թ. վերջին բավականին ավելացել էին մարզի ջրովի տարածքները, ինչը նպաստեց գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացմանը:

Լեռնային Ղարաբաղը հնուց ի վեր զարգացած անասնապահական երկրամաս էր: Առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմները մեծ հարված էին հասցրել մանավանդ անասնապահությանը: Այստեղ 1924 թ. 100 տնտեսությանն ընկնում էր հազիվ 6.8 ծի, 79.2 խոշոր եղջերավոր անասուն և 151.3 գլուխ ոչխար ու այծ: Այդ ցուցանիշները խիստ ցածր էին, և հարևան շրջանների համեմատությամբ գրավում էր ամենաետին տեղը²⁷:

Անասնապահության զարգացման հիմնական պայմաններից մեկը կերի կայուն բազայի ստեղծումն է: Մարզում շատ քիչ հողատարածություններ էին հատկացվում կերակուլտուրաների ցանքերի համար, որի պատճառով էլ անասունների համար հաճախակի ստեղծվում էր սպառնալից վիճակ: Որպեսզի կանխվեին անասունների կորուստները, գյուղացիները ստիպված էին լինում իրենց ստացած հացահատիկի մի մասը դարձնել անասնակեր: Դրանից խուսափելու համար գյուղացիները պակասեցնում էին անասունների զխաքանակը, և, այսպիսով, կասեցվում էր անասնապահության հետագա զարգացումը: Մարզում անասնապահությունը զարգացնելու համար մարզային ժողկոմխորհի նախածեռնությամբ Ռուսաստանից ձեռք էին բերվում տարբեր տեսակի կերակուլտուրաների սերմեր և տարածում մարզում²⁸:

Անասնապահության զարգացման մյուս կարևոր պայմանը վարակիչ հիվանդությունների (չլումա, սիբիրախտ) դեմ տարվող պայքարն էր: Միայն 1925 թ. առաջին կեսին մարզում չլումայից սատկել էր 3678 անասուն: Առանձնապես մեծ էին խոզերի և թռչունների կորուստները²⁹: Անա-

սուճնների կորուստները կանխելու համար մարզի բոլոր շրջաններում ստեղծվեցին անասնաբուժական կետեր՝ համապատասխան մասնագետներով, դեղերով և գույքով:

Անհրաժեշտ էր ոչ միայն վերականգնել անասունների գլխաքանակը և նպաստել նրա հետագա զարգացմանը, այլև աստիճանաբար փոխել և բարելավել ցեղայնությունը: 1925 թ. Լիսագորում Թթու ջրի տեղամասում, որը գտնվում է ծովի մակերևույթից 1800 մետր բարձրության վրա, կազմակերպվեց անասնաբուժական ֆերմա, որի նպատակն էր ուսումնասիրել արոտավայրերի և կերակուլտուրաների օգտագործման ձևերը, հայտնաբերել տեղական անասունների ավելի օգտավետ ցեղեր, շվից ցեղի կովերին հարմարեցնել տեղական կլիմային, ուսումնասիրել խոշոր ու մանր անասունների օգտավետությունը և այլն³⁰: Այդ ֆերման հետագայում վերածվեց պետական տնտեսության և 1930 թ. անվանվեց Համամիութենական ցեղային անասնաբուժական պետտնտեսություն: Այն կարևոր դեր է խաղացել մարզի և նրա հարևան շրջանների անասունների ցեղայնությունը բարելավելու, անասնապահական մթերքների մշակման նորագույն ձևերը և անասուններին խնամելու առաջավոր մեթոդները գյուղացիներին ուսուցանելու գործում: Մարզի աշխատավորներն օգնություն ստացան նաև Խորհրդային Ռուսաստանից: 1925 թ. սկզբին ՌեսՖՍՀ-ից ստացվեց 20 արտադրող, որոնք հանձնվեցին բեղմնավորման կայաններին³¹: 1924 թ. Մոսկվայի մարզի «Շչեպկին» ցեղային տնտեսությունից ստացվեց մի քանի յորկչիրյան արու խոզ, իսկ մարզային թռչնաբուժական ընկերությունից՝ ցեղային հավեր և աքաղաղներ³²: Սրանք, անշուշտ, նպաստեցին անասունների և թռչունների ցեղայնության բարձրացմանը:

Մարզում միջոցառումներ ձեռնարկվեցին այգեգործությունը վերականգնելու և զարգացնելու ուղղությամբ: Մարզկոմի նախագահությունը 1924 թ. մարտի 28-ին որոշեց հաշվառել բոլոր ազգայնացված այգիները և հողբաժնին առաջարկեց «աղբատ ու անուժ գյուղացիներից կոլեկտիվներ կազմակերպել» ու ազգայնացված այգիները հանձնել նրանց օգտագործմանը³³: Համանման փորձ կատարվել էր դեռևս 1920 թ., երբ Քարինտակ գյուղի համայնքի ընդհանուր ժողովը որոշում էր ընդունել կալվածատեր Ասլան բեկի ազգայնացված այգիների բազայի վրա կազմակերպել կոլեկտիվ ընկերություն: 1925 թ. ապրիլի 8-ին մի խումբ բատրակներ և չքավորներ նախկին կալվածատեր Մելիք Փաշաևի ազգայնացված կալվածքի բազայի վրա կազմակերպեցին «Ղարալազյազ» գյուղական ընկերությունը: Նույն թվականի մարտի 8-ին Խանածախ գյուղի մի խումբ չքավորներ Մելիք Հայկազովի ազգայնացված այգիների բազայի վրա կազմակերպեցին Շահունյանի անվան արտելը: Հա-

մանման ընկերություններ կազմակերպվեցին նաև Մարտունիում, Քոռասնիում և այլ տեղերում: Ինչ խոսք, այդ ընկերություններն իրենց փորձով դեռևս չէին կարող օրինակ հանդիսանալ մարզի այգեգործների համար:

Տնտեսության վերականգնման տարիներին մարզում առանձնապես զարգանում էր սպառողական կոոպերացիան: Ընդհանրապես, մեծ էր սպառողական ընկերությունների դերը: Սպառողական կոոպերացիան իրավունք ուներ ազատ գնել և վաճառել պետական ու անհատական բնույթի արտադրանք, ինչպես և գյուղատնտեսական մթերք: Սակայն, պետք է ասել, սպառողական կոոպերացիան, դեռևս չունենալով նյութաֆինանսական ամուր բազա, մի առ ժամանակ չկարողացավ զարգանալ և ընդլայնվել: Հենց դրա պատճառով էլ ստեղծված առաջին կոոպերատիվները սկսեցին ցրվել: Օրինակ Շուշիի գավառի 22 սպառողական կոոպերատիվներից մնացել էին մի քանիսը, մյուսները ցրվել էին³⁴: 1922 թ. Շուշիում կազմակերպվեց «Վերածնունդ» սպառողական կոոպերատիվը, որը մեծ դեր խաղաց գավառում առևտրի զարգացման գործում:

Լեռնային Ղարաբաղում սպառողական կոոպերացիայի աշխատանքները նոր թափ ստացան ինքնավարության առաջին օրերից սկսած: Արդեն 1923 թ. միայն Շուշի քաղաքում կային 137 առևտրական կետեր, որոնց թիվը հաջորդ տարում հասել էր 212-ի³⁵: Սպառողական կոոպերացիան տարածվում է նաև Ստեփանակերտում: 1924-ին այնտեղ կար 40 առևտրական կետ: Առևտրական կետերի թիվը 1925-ին մարզում հասավ 283-ի: Եվ այստեղ կատարվող ամբողջ առևտրի 60%-ը բաժին էր ընկնում պետական և կոոպերատիվ առևտրական կետերին³⁶: 1925 թ. առևտրական նոր կետեր բացվեցին Հաղրուբում, Թաղավարդում, Տողում, Դուլանլարում, Մարտունիում, Ստեփանակերտում և այլ խոշոր բնակավայրերում: Արդեն 1925-ի վերջին մարզում կային 14 սպառողական կոոպերատիվներ 41 բաժանմունքով և 55 սպառողական կետերով: Այդ ժամանակ սպառողական կոոպերատիվների անդամների թիվը հասնում էր 11666-ի³⁷: 1925/26 տնտեսական տարում Լեռնային Ղարաբաղում առևտրի ընդհանուր ծավալը հասել էր 3.048.229 ռուբլու, որի 56.5%-ը բաժին էր ընկել սպառողական կոոպերատիվներին:

Լեռնային Ղարաբաղում ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքների քննարկումը ցույց տվեց, որ մարզային կուսակցական և պետական մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների շնորհիվ առաջընթաց էր ապրել առանձնապես մարզի գյուղատնտեսությունը, որը տալիս էր ամբողջ արտադրանքի գրեթե 90%-ը: 1925 թ.

մարզում կատարվել է 33270 դեռյալներ ցանքս, և ստացվել 852 հազար փուխ հացահատիկ, որը կազմել է 1913 թ. մախապատերազմյան մակարդակի 92.2%-ը: Չորս տարում մարզի այգեատարածությունները չնայած ընդլայնվել էին ընդամենը 30 դեռյալներով, սակայն 1921 թ. համեմատությամբ բերքատվությունն ավելացել էր 2.5 անգամ: 1925 թ. մարզում արտադրվել է 226200 փուխ խաղող, որը կազմել է 1913 թ. մակարդակի 70.7%-ը³⁰: Նույն թվականին մարզում սպիրտի արտադրություն կազմել է 1913 թ. մակարդակի 96%-ը³⁰:

Մարզի բնակչությունը որոշ հաջողությունների հասավ նաև անասնապահության վերականգնման գործում: 1921 թ. համեմատությամբ կրկնապատկվել էր բոլոր տեսակի անասունների զխաքանակը և հասել 201.3 հազարի, որը գրեթե հավասար էր մախապատերազմյան մակարդակին: Եթե 1921 թ. յուրաքանչյուր 100 տնտեսության բաժին էր ընկնում 84.5 գլուխ բանող անասուն, ապա 1925 թ. այն հասել էր 201.2 գլխի, և բանող անասուններ չունեցող տնտեսությունների թիվը նվազել ու հասել էր 29%-ի:

Բերված տվյալները համոզում են, որ 1925 թ. վերջին Լեռնային Ղարաբաղի տնտեսությունն ընդհուպ մոտեցել էր մախապատերազմյան մակարդակին: Այն գերազանցելու համար պահանջվեց 2-3 տարի ևս:

2. Հասարակական-քաղաքական կյանքի տեղաշարժերը

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տրվեց ոչ Ադրբեջանի իշխանությունների ցանկությամբ: Ընդհակառակը, Ն. Նարիմանովը թե՛ Բաքվում և թե՛ Մոսկվայում դիմադրում էր և ամեն կերպ ձգտում ձախողել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու գործը: Սակայն 1923 թ. հունիսի 27-28-ը տեղի ունեցած Անդրերկրկոմի պլենումը, լսելով Ղարաբաղի կոմիտեի անդամներ Սուրեն Շադունցի և Արմենակ Կարակոզովի զեկուցումը, հանձնարարեց Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին մեկ ամիս ժամկետում ստեղծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ «առանձնացված շրջանների գյուղացիներին շնորհված հացով և ջրով»: Ելնելով այդ որոշումից՝ Ադրկոմկուսի Կենտկոմի մախապահությունը 1923 թ. հուլիսի 1-ին, լսելով «Ղարաբաղի մասին» հարցը, Ադրկենտգործկոմին առաջարկեց մախապահության անունից հռչակագիր հրապարակել Լեռնային Ղարաբաղի ինքնավարության մասին ստեղծելով «Ղարաբաղի Ինքնավար Մարզ»՝ հանքենդ կենտրոնով: Առաջարկվում է հռչակագրում շեշտել, որ սահմաններն ու այլ հարցեր պետք է որոշվեն հատուկ հանձնաժողովի կողմից: Այդ որոշումով ստեղծվում է

58 749

մարզային կուսակցական կոմիտե, որի քարտուղար է հաստատվում Հայաստանից գործուղված Սերո Մանուցյանը: Ինքնավար մարզը ժամանակավոր կառավարելու համար ստեղծվում է հինգ հոգուց բաղկացած Յեղափոխական կոմիտե, որին հանձնարարվում է մախապատրաստել և երկու ամսվա ընթացքում հրավիրել ինքնավար մարզի խորհուրդների համագումար: Յեղկոմի մախապահ է հաստատվում Արմենակ Կարակոզովը: Ստեղծվում է հանձնաժողով Կարան (մախապահ), Կարակոզով, Սվիրիդով, Իլդրըն և Բունիաթզադե, որին հանձնարարվում է որոշել ինքնավար Ղարաբաղի սահմանները, Քրդստանի վիճակը և Հարթավայրային Ղարաբաղի վարչական սահմանները³¹:

Չմայած 1923 թ. հուլիսի 7-ին հրապարակվեց Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու Ադրբեջանի կենտգործկոմի հռչակագիրը, սակայն Ադրբեջանի բռնատիրական իշխանությունը, որպես պետական քաղաքականություն, տասնյակ տարիներ շարունակ հետևողականորեն վարել է պատմական հայրց Արցախը հայաթափելու քաղաքականություն՝ կանգ չառնելով նենգափոխումների առաջ: Մարզի տարածքում թողնելով ընդամենը Շուշի քաղաքը, Խանքենդի ավանը, 248 գյուղեր և գյուղակներ՝ 4.4 հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ, կազմվեց չորս շրջան՝ Ջրաբերդի (կենտրոնը՝ Մարտակերտ), Խաչենի (կենտրոնը՝ Խանքենդ), Վարանդայի (կենտրոնը՝ Ճարտար) և Դիզակի (կենտրոնը՝ Հաղրուք): Սեկ տարի անց կազմվեց հինգերորդ շրջանը՝ Շուշի կենտրոնով³²:

Ադրբեջանի իշխանությունները Լեռնային Ղարաբաղին առնչվող յուրաքանչյուր հարց ձգտում էին լուծել թուրքավարի: Դա է պայացուցում մարզի գոյության ամբողջ պատմությունը: Սկզբում որոշ քայլեր ձեռնարկում էին զգույշ: Մինչ մարզային խորհուրդների առաջին համագումարի հրավիրումը, Ադրկենտգործկոմի և ժողովրդական կոմիսարների խորհրդի 1923 թ. հուլիսի 24-ի որոշմամբ ստեղծվեց ժամանակավոր հեղափոխական կոմիտե հետևյալ կազմով. Ա. Կարակոզով (մախապահ), Մ. Չալյան, Ս. Մանուցյան, Բ. Բինիաթով, Կ. Կաֆիև: Լուծարվեց մինչ այդ գոյություն ունեցած Լեռնային Ղարաբաղի գծով կոմիտեն, և նրա ամբողջ գույքային ու ֆինանսական միջոցները հանձնվեցին հեղափոխական կոմիտեին³³:

1923 թ. հուլիսի 7-ի հռչակագրի համաձայն ստեղծվել էր ինքնավար Ղարաբաղի և Քրդաստանի սահմանները որոշող հանձնաժողով, որը հենց այդ նույն օրը հուլիսի 7-ին, հրավիրված առաջին նիստում որոշեց Ղարաբաղի գավառի հարթավայրային մասն անջատել Լեռնային մասից և ստեղծել առանձին մարզային վարչություն Ադղամ կենտրոնով: Վարչական բաժանումների կառուցվածքը ներկայացնելու հա-

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ

մար տրվեց մեկ օր ժամանակ: Պահանջվեց ստեղծել ինքնավար Քրդստան, որի կենտրոնը և սահմանները պետք է որոշվեին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանները որոշելու ժամանակ: Ղարաբաղի հարցով ստեղծված հանձնաժողովը ղեկավարում էր թուրք Բունիաթգաղեն: Ադրկոմկուսի Կենտկոմը, հուլիսի 16-ին լսելով Ղարաբաղի հարցի գծով հանձնաժողովի նախագահ Բունիաթգաղեի զեկուցումը, որոշեց նախկին ռուսական բնակավայր Սկորելսկը և Շուշի քաղաքը թողնել մարզի կազմում, ստեղծել Քրդստանի մարզ, Լեռնային Ղարաբաղի հեղկոմ և կուսակցության մարզկոմ՝ 9 հոգուց բաղկացած Կոստանյան (քարտուղար), Մանուցյան, Կարակոզով, Բինիաթով, Արզանյան և Չալյան: Մյուս անդամների ընտրությունը թողնվում էր քարտուղարության վրա, որոնց ցուցակը պետք է ներկայացվեր նախագահության հաստատմանը: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կանոնադրությունը կազմելու համար ստեղծվեց հանձնաժողով հետևյալ կազմով. Կարակոզով, Բինիաթով, Չալյան, Վարեյկիս և Մանուցյան: Կանոնադրությունը մշակելու համար տրվում է երեք օր ժամանակ: Առաջարկվում է ստեղծել նաև Քրդստանի և Հարթավայրային Ղարաբաղի գավառների վարչական մարմիններ: Դետո Հարթավայրային Ղարաբաղը բաժանվեց երկու գավառների՝ Աղզամի և Ջեբրայիլի: Այսպիսով՝ Ադրբեջանի իշխանությունները հապճեպորեն Ղարաբաղի ամբողջ տարածքը բաժանեցին մի քանի շրջանների: Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահության հուլիսի 30-ի նիստը, որտեղ նախագահում էր Ս. Կիրովը, որոշեց Քրդստանի, Ջեբրայիլի և Աղզամի սահմանները հաստատել ներկայացված քարտեզի հիման վրա, Քրդստանի գավառային կենտրոն հաստատել Փիրիջանը, Ջեբրայիլի գավառային կենտրոնը Կարյազինոյից տեղափոխել Ջեբրայիլ, իսկ Աղզամի գավառային կենտրոն ճանաչել Աղզամը: Ջեբրայիլի գավառային կենտրոնը Կարյազինոյից Ջեբրայիլ տեղափոխվեց այն նախատակով, որպեսզի հետագայում ստեղծվի ադրբեջանական մի գավառ ևս Կարյազինո կենտրոնով: Ասենք, որ ընդհանրապես շատ դժվարությամբ էր առաջ գնում Ղարաբաղը մասնատելու հետ կապված տարածքային հարցերի լուծումը:

Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական կոմիտեի նախագահությունը, հուլիսի 23-ին քննարկելով ժամանակավոր հեղկոմի կառուցվածքի հարցը, որոշեց ստեղծել հետևյալ բաժինները. ներքին գործերի վարչություն և արտակարգ հանձնաժողով (Մ. Չալյան), տնտեսության և մթերման (Գ. Կաֆյան), հողային (Մ. Արզանյան), ժողկրթության և վիճակագրության (Ա. Քամալյան), աշխատանքի և սոցալպահովագրության (Բ. Բինիաթով), ֆինանսների (Տեր-Գրիգորյան), առողջապահության (Մ. Բաղդասարյան) և բանվորագյուղացիական տեսչությունը՝

Ընդհանրապես թե՛ Լեռնային Ղարաբաղի կանոնադրությունը մշակող և թե՛ սահմանները որոշող հանձնաժողովների կազմերը հաճախակի փոփոխվում էին: Պատճառը, սակայն, չէր բացահայտվում: Լեռնային Ղարաբաղի կանոնադրությունը մշակող, Հարթավայրային և Լեռնային Ղարաբաղների, ինչպես և Լեռնային Ղարաբաղի և Քրդստանի սահմանները, Լեռնային Ղարաբաղի, Հարթավայրային Ղարաբաղի և Քրդստանի վարչական կառուցվածքները որոշող հանձնաժողովների համատեղ նիստը որոշեց Լեռնային Ղարաբաղի կազմի մեջ թողնել Ջիվանշիրի գավառից 46, Շուշիի գավառից 94, Ղուբաթլուի շրջանից 32 բնակավայր: Սահմանները որոշող հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ որոշեց Խոնաշենը (այդպես էր վերանվանվել Սկորելսկը) և Շուշին թողնել նորահռչակ Աղզամի գավառի կազմի մեջ: Արմենակ Կարակոզովը դեմ էր այդ որոշմանը և պահանջում էր այդ բնակավայրերը թողնել Լեռնային Ղարաբաղի կազմի մեջ: Ստեղծվեց Հարթավայրային Ղարաբաղի մարզային գործկոմ: Այդ գավառի մեջ մտցվեցին Ջեբրայիլի, Ղուբաթլուի և Կարյազինոյի գավառների հարթավայրային բոլոր բնակավայրերը: Այդ որոշումով Քրդստանն առանձնացվեց որպես գավառային իրավունքներով տարածք Կենտրոնին ենթակայությամբ, որի կազմի մեջ պետք է մտնեին Ջեբրայիլի, Շուշիի և Ղուբաթլուի քրդաբնակ գյուղերը մոտ 60 հազար բնակչությամբ՝

Ըստ երևույթին Ադրբեջանում զգում էին, որ իրար հետևից ընդունված այդ որոշումները շփոթություն էին առաջ բերում և ամեն ինչ խառնում: Եվ ահա 1923 թ. օգոստոսի 6-ին Ադրկենտգործկոմը հրապարակեց մի հրաման, ըստ որի՝ այդ բոլոր որոշումները դրվեցին մի կողմ և որոշվեց Ղարաբաղի լեռնային մասին ինքնավարություն տալուց բացի ստեղծել Աղզամի, Ջեբրայիլի և Քրդստանի գավառները իրենց հիմնական սահմաններով: Ահա այսպես՝ թուրքավարի մասնատվեց պատմական Հայաստանի 10-րդ նահանգը՝ Արցախ-Ղարաբաղը, և նրա մի փոքր մասին տրվեց ինքնավարություն, որի չորս կողմը օղակվեց թուրքական շրջաններով, և այն լիովին անջատվեց խորհրդային Հայաստանից: Արցախ-Ղարաբաղը, դառնալով ինքնավար տարածք, տասնամյակներ շարունակ պահել է իր գոյությունը և ոչ մի անգամ չի դադարել ստեղծված արհեստական անօրենությունը վերացնելու ու մայր Հայաստանի հետ վերամիավորվելու համար պայքարելուց:

Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր հեղկոմը իր գործունեությունը սկսեց 1923 թ. օգոստոսի 1-ից, որի հիմնական խնդիրն էր արագացնել երկրի քայքայված տնտեսության վերականգնումը, ամրապնդել խորհրդային իշխանության տեղական մարմինները, նախապատ-

րաստել մարզային խորհուրդների առաջին համագումարը, կազմակերպել բերքահավաքը, նախապատրաստվել աշխատանքներ տանել անգործության մատնված մետաքսագործական ֆաբրիկաները վերականգնելու, հավաքել պարենհարկը, կազմակերպված սկսել ուսումնական նոր տարին, վերջ տալ գյուղերի և շրջանների միջև հողատարածությունների համար տեղի ունեցող վեճերին, հնարավորության սահմաններում բավարարել աշխատողների տնտեսական պահանջները, պայքարել սովի դեմ և այլն: Ամենից առաջ անհրաժեշտ էր նպաստել գյուղատնտեսության վերականգնմանը, սերտ կապ ստեղծել մարզկենտրոնի և շրջանների միջև, հոգալ մարզի բնակչության բժշկական կարիքները, խրախուսել մշակութային ամեն մի միջոցառում, աշխուժացնել կոոպերացիան, ուշադրություն դարձնել շինարարությանը:

Կուսակցության մարզկոմի նախագահության 1923 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ ժամանակավոր հեղկոմներ ստեղծվեցին նաև մարզի շրջաններում հետևյալ կազմերով. Ջրաբերդի Ջ. Սկրտչյան, Բ. Խուրշուդով և Ա. Մարտիրոսով, Խաչենի Շ. Պողոսբեկյան, Գ. Վարշաբով և Ե. Վարդանյան, Վարանդայի Ա. Գակոբյան, Ա. Սարգսյան և Ս. Առուշանյան, Դիզակի Ե. Աթայան, Ս. Զարությունյան և Ս. Խուբլարով: Նույն որոշմամբ կուսակցության շրջկոմներ ստեղծվեցին Դիզակում և Ջրաբերդում, իսկ Վարանդայում և Խաչենում հաստատվեցին կազմակերպիչներ¹⁰: Նույն թվականի օգոստոսի 13-ին ժողովրդական դատարաններ ստեղծվեցին մարզի բոլոր շրջաններում, իսկ հողկոմներին կից ստեղծվեցին աշխատանքային բաժիններ: Մինչև 1923 թ. վերջը մարզում արդեն կազմակերպվել էին 29 խորհրդային հիմնարկություններ մոտ 500 աշխատակիցներով¹¹:

Լեռնային Ղարաբաղի մարզկոմի նախագահությունը, 1923 թ. օգոստոսի 29-ին քննարկելով մարզի սահմաններում արդյունաբերական ձեռնարկությունները շահագործման հանձնելու, սովի դեմ պայքարելու, ֆինանսական և այլ հարցեր, որոշեց արագացնել մարզի կանոնադրության հրապարակումը, արդյունաբերական ձեռնարկությունների շահագործումը և անգիջում պայքարել գողությունների ու հափշտակումների դեմ: Նաև որոշում ընդունվեց հարց հարուցել հանրապետության իշխանությունների առաջ ինքնավար մարզի տարածքում գտնվող արդյունաբերական ձեռնարկությունները լրիվ հանձնել մարզգործկոմի տնօրինությանը, սովի պատճառով մարզի տարածքից բնակչության մասսայական հեռանալը կանխելու համար վերադաս իշխանությունները խնդրել Լեռնային Ղարաբաղին հատկացնել 300 000 փութ հացահատիկ, մարզի որոշ շրջաններ ազատել մթերահարկից և այլն¹²: Մի քանի օր

անց սեպտեմբերի 5-ին, Ադրկոմկուսի Կենտկոմի քարտուղարությունը, լսելով մարզկոմի նախագահության վերոհիշյալ պահանջը, որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղում իջեցնել միասնական գյուղահարկի չափը, մարզային իշխանություններին հանձնել մարզի տարածքում գտնվող մետաքսագործական բոլոր ֆաբրիկաները, իսկ հանրապետության նախարարների խորհուրդը հոկտեմբերին որոշում ընդունեց Ղարաբաղի սովյալներին տրամադրել հացահատիկ, որի քանակի մասին պետք է հայտարարեր հետո¹³:

Լեռնային Ղարաբաղի մարզի աշխատավորներն օգնում էին հեղկոմներին և կատարում նրանց պահանջները: Մարզային ժամանակավոր հեղկոմի նախաձեռնությամբ Ստեփանակերտում կառուցվեց հեռագրատուն, ռադիոկայան, նախապատրաստական աշխատանքներ տարվեցին հիդրոկայան կառուցելու համար, վերականգնվեցին մի քանի շենքեր, որոնցում տեղավորվեցին կուսակցության մարզկոմն ու հեղկոմը՝ իրենց բոլոր բաժիններով: Հրավիրված մասնագետների համար նորոգվեց 140 սենյակ: Կարեր պատրաստելու համար առաջին պլան քաշվեց դպրոցների կազմակերպման և բնակչության անգրագիտության վերացման հարցը: Մարզի մի շարք բնակավայրերում ազգայնացված շենքերը նորոգվեցին և տրամադրվեցին գյուղական խորհուրդներին, կուսակցական բջիջներին ու դպրոցներին:

Լեռնային Ղարաբաղի մարզկոմի սեպտեմբերի 18-ին տեղի ունեցած միստը քննարկեց Ս. Մամուկջյանի զեկուցումը կուսակցական կազմակերպչական և Ա. Կարակոզովի զեկուցումը՝ խորհուրդների աշխատանքների մասին: Մամուլջյանն իր զեկուցման մեջ խոսեց մարզում տարվող կուսակցական-կազմակերպչական աշխատանքների մասին, չթաքցրեց տեղ գտած թերությունները, իսկ Կարակոզովը, նկարագրելով ազգամիջյան ընդհարումներից հետո Ղարաբաղում ստեղծված ընդհանուր վիճակը, կանգ առավ դրա հետևանքները վերացնելու համար մարզում կատարվող աշխատանքների վրա: Նիստին մասնակցող Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահության քարտուղար Ս. Խանբուդաղովը, Ղարաբաղում գտնվող Ս. Բաղդիովը և ուրիշ թուրք կոմիսարներ իրենց ելույթներում շեշտեցին, որ մարզում առկա են վարչատարածքային, հողաբաժանման և այլ հարցերի վերաբերյալ անցանկալի վիճաբանություններ, և ստանում են «ազգային զուսմավորում»: Ահա թե որտեղից է գալիս արցախցիներին ազգային հողի վրա մեղադրանքներ կերկայացնելը և հորինելը: Հենց Բաքվի այդ կոմիսարների ներկայությամբ Լեռնային Ղարաբաղի մարզկոմը որոշեց, ի հիշատակ Ստեփան Շահունյանի և Բաքվի 26 կոմիսարների, Խանբենդը վերանվանել Ստեփանակերտ¹⁴:

Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 8-ին, Ադրկոմկուսի Կենտկոմը, քննարկելով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման հետ առնչվող հարցերն ուսումնասիրող հատուկ հանձնաժողովի զեկուցումը, որոշեց նախարարների խորհրդին առաջարկել ավելացնել Լեռնային Ղարաբաղի համար առանձնացված ֆինանսական միջոցները, դրանք հատկացնել Ստեփանակերտում էլեկտրակայան կառուցելու համար, արագացնել ղարաբաղցիներին օգնություն ցույց տալու գործը, առողջապահության նախարարությանն առաջարկեց Ստեփանակերտում բացել հիվանդանոց, հանձնարարվեց ուսումնասիրել Քրդստանը և Լեռնային Ղարաբաղն իրար հետ կապող սահմանները և այլն: Ասենք, քանի դեռ Ադրկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարը Ս. Կիրովն էր, նրա օրոք, ինչպես և նրան հաջորդած Լևոն Միրզոյանի ժամանակ Լեռնային Ղարաբաղի մասին ընդունված որոշումները չափավոր էին, և վիճակը թերևս հանդուրժելի էր: Իրոք, 1923 թ. այդ ամիսներին մի շարք քայլեր ձեռնարկվեցին, որոնց նպատակն էր օգնել Լեռնային Ղարաբաղին դուրս գալ ստեղծված ծանր վիճակից և արագացնել երկրամասի քայքայված տնտեսության վերականգնումը: Օրինակ՝ Շուշում գտնվող տպարանը հանձնվեց մարզի տնօրինությանը, բացվեցին բազմաթիվ խրճիթ-ընթերցարաններ, կազմակերպվեցին կանանց բաժիններ, ստեղծվեց 43 կոմերիտական բջիջ՝ 520 անդամով, 37 կուսակցական բջիջ՝ 226 անդամով և 76 թեկնածուով: Կարգավորվում էին խորհուրդների աշխատանքները, բացվում էին դպրոցներ, հիվանդանոցներ, ֆաբրիկաներ, լուծվում հողային հարցեր, պայքարում սովի դեմ և այլն¹⁶:

Լեռնային Ղարաբաղում ոգևորված նախապատրաստվում էին մարզային խորհուրդների առաջին համագումարին: Խորհուրդների ընտրությունները սկսվեցին հոկտեմբերի 5-ից: Ընտրական ժողովներն անցնում էին «բազմամարդ և հախուռն»,- գրել է «խորհրդային Ղարաբաղ» թերթը և ավելացրել, որ մարզի աշխատավոր գյուղացիությունը, «խորհրդային կարգերը և խորհրդային իշխանությունը իր հարազատ արտահայտությունը համարելով, եռանդուն մասնացկություն էր ցույց տալիս իր խորհուրդները և նրանց գործադիր մարմինները ընտրելիս»¹⁷: Արդեն 1923 թ. նոյեմբերի սկզբին խորհուրդներ էին ստեղծվել 198 գյուղական վայրերում, 5 շրջկենտրոնում և 2 քաղաքում, որոնցում ընտրվել էր 2200 անդամ¹⁸:

1923 թ. նոյեմբերի 6-ին Ստեփանակերտի կուսակցական դպրոցի ակումբում բացվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի խորհուրդների առաջին համագումարը: Համագումար էին եկել 132 պատգամավոր, ինչպես նաև հյուրեր հարևան թուրքական շրջաններից, Քրդստանից և Անդրկովկասի մյուս հանրապետություններից: Մանդատային հանձնաժողովի զեկուցումից իմանում ենք, որ Լեռնային Ղարա-

բաղի այն ժամանակվա 162370 մարդուց ընտրվել էր 172 պատգամավոր, սակայն համագումար էր եկել 132-ը, որոնցից 116-ը՝ հայ, 16-ը՝ թուրք, 120-ը՝ տղամարդ, 12-ը՝ կին, 51-ը՝ ծառայողներ, 43-ը՝ գյուղացիներ, 38-ը՝ արհեստավոր: Պատգամավորներից 93-ը կոմունիստ էին, 6-ը՝ կոմերիտական, 33-ը՝ անկուսակցական, 2-ը՝ անգրագետ, 102-ը՝ տարրական կրթությամբ, 20-ը՝ միջնակարգ, 8-ը՝ բարձրագույն: Մարզի 1000 բնակչից ընտրվել էր 1 պատգամավոր: Մարզի գրեթե բոլոր բնակիչները, ըստ մամուլի հաղորդման, մասնակցել էին պատգամավորների ընտրություններին, որովհետև դա «մի եզակի հետաքրքրություն է Ղարաբաղի իրականության մեջ»²⁰:

Համագումարի բացման առթիվ ճառով հանդես եկավ ԼԴԽՍ ժամանակավոր հեղկոմի նախագահ Արմենակ Կարակոզովը: Ադրբեջանի կոմկուսի և ժողկոմխորհի անունից ճառով հանդես եկան Իլդրիմ Չինգիզը և Համիդ Սուլթանովը: Վերջինս հայտարարեց, թե խորհրդային Ադրբեջանի կառավարությունը Լեռնային Ղարաբաղին նվիրաբերել է 20 հազար փութ նավթ, 20 հազար արշին քաթան, մեկ տպարանի սարքավորում, 15 հազար ռուբլի (ոսկով), շինանյութ²¹:

Համագումարը քննարկեց հետևյալ հարցերը. միջազգային, հեղկոմի հաշվետվությունը կոոպերացիայի մասին, լուսժողկոմի հաշվետվությունը և ընտրություններ: Առաջին հարցի մասին զեկուցեց մարզկոմի քարտուղար Սերո Մանուցյանը: Համագումարի աշխատանքներում հիմնականը երկրորդ հարցն էր, որի մասին զեկուցեց Արմենակ Կարակոզովը: Համագումարը բարձր գնահատեց ժամանակավոր հեղկոմի երեք ամսվա գործունեությունը և ապագա մարզային խորհրդի գործադիր կոմիտեին առաջարկեց սակավահող բոլոր գյուղացիներին բավարարել հողով, բարձրացնել գյուղատնտեսական աշխատանքի արդյունավետությունը, լայն ասպարեզ տալ աշխատանքային դպրոցներին, առաջիկա մի քանի տարիների ընթացքում վերացնել անգրագիտությունը, վերականգնել շերամապահությունն ու մետաքսարդյունաբերությունը, զարգացնել առևտուրը, կառուցել նոր ճանապարհներ:

Համագումարն ապագա մարզգործկոմին հանձնարարեց մարզի տարածքում կազմակերպել սպառողական, գյուղատնտեսական և վարկային կոոպերացիաներ: Համագումարն անհրաժեշտ համարեց հետևողական կերպով զբաղվել խորհրդային առևտրի հարցերով և անգիջում պայքար մղել սպեկուլյացիայի ու խաբեբայության դեմ: Կարևոր համարվեց նաև գյուղական խորհուրդների հետագա խոշորացումը²²:

Համագումարն ընտրեց Լեռնային Ղարաբաղի մարզխորհուրդ բաղկացած 25 անդամներից և 7 թեկնածուներից: Մարզխորհրդի կենտրոնական կազմի մեջ ընտրվեցին Արմենակ Կարակոզովը (նախագահ),

Միքայել Չալյանը, Բաշիր Բինիաթովը, Սերո Մանուցյանը, Արմեն Բեթիկյանը, Մուկուչ Արզանյանը և Արտեմ Չոիրաբյանը:

ԼԴԻՄ խորհուրդների համագումարից հետո իրար ետևից տեղի են ունենում կադրերի փոփոխություններ: Դեկտեմբերի 9-ին մարզկոմի քարտուղարի պաշտոնից ազատվեց Սերո Մանուցյանը և նշանակվեց Բաքվում տպագրվող «Կոմունիստ» թերթի պատասխանատու խմբագիր²³: Դեկտեմբերի 11-ին Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահությունը հաստատեց Լեռնային Ղարաբաղի մարզկոմ 9 հոգուց բաղկացած Կամարի, Արզանյան, Չալյան, Վարդանյան, Շահվերդյան, Սարկիսով, Կարակոզով, Խուբլարով, Իսմայիլով²⁴, իսկ դեկտեմբերի 17-ին տեղի ունեցած նիստը Գակոբ Կամարիին հաստատեց որպես Լեռնային Ղարաբաղի մարզկոմի քարտուղար, որին 1924 թ. ապրիլի 4-ին փոխարինեց Բաքվից ուղարկված Նիկոլայ Սարկիսովը²⁵: Այդ նույն որոշմամբ իրենց զբաղեցրած պաշտոններից ազատվեցին Չալյանը, Աթաևը, Ակոպովը և Շահվերդյանը, իսկ օգոստոսի 8-ից մարզկոմի քարտուղար ուղարկվեց Արտո Մահակյանը²⁶: Ինչպես տեսնում ենք, մեկը մյուսի ետևից փոխվում էին մարզկոմի քարտուղարները, և կադրային հարցը սկզբից լուծվում էր Բաքվում: Լեռնային Ղարաբաղի մարզկոմը, ըստ էության, դարձել էր ձևական: Փաստորեն, Բաքվին հարկավոր էին այնպիսի մարդիկ, ովքեր լուռումուռեց կկատարեին նրա բոլոր պահանջները: Այդ շարքում առավել աչքի էր զարնում Արմենակ Կարակոզովը:

Ասվել է, որ Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տրվելուց հետո ստեղծվել էր մի հանձնաժողով, որը պետք է շատ կարճ ժամկետում կազմեր ինքնավար Լեռնային Ղարաբաղի կանոնադրությունը: Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահությունը, 1923 թ. դեկտեմբերի 11-ին լսելով կենտգործկոմի քարտուղար Մ. Խանբուրադովի զեկուցումը ԼԴԻՄ կանոնադրության մասին, որոշեց արագացնել կանոնադրության ավարտումը: 1924 թ. ապրիլի 2-ին տեղի ունեցած նիստում Ադրկոմկուսի Կենտկոմի քարտուղարությունը նպատակահարմար գտավ մարզկոմի իրավունքները հավասարեցնել նահանգային կոմիտեի իրավունքներին: Նույն ամսի 17-ին Կենտկոմի նախագահությունը, լսելով Լեռնային և Գարթավայրային Ղարաբաղներում կուսակցական ու խորհրդային աշխատանքներն ուսումնասիրող հանձնաժողովի առաջարկությունները, որոշեց պաշտոնից ազատել ԼԴԻՄ մի շարք կուսակցական և պետական աշխատողների: Այդ նույն նիստում լսելով Ս. Կիրովի հաղորդումը ԼԴԻՄ-ի մասին որոշեց ԼԴԻՄ գծով հանձնաժողովի աշխատանքը գնահատել անբավարար, ստեղծվեց նոր հանձնաժողով Մուսաբեկով (նախագահ), Բունիաթզադե, Բաղիրով, Կարակոզով, Դովլաթով և Ջաբիև: Հանձնաժողովին հանձնարարվեց վերջնականապես որոշել ԼԴԻՄ վար-

չական սահմանները թե՛ մարզի ներսում և թե՛ հարևան շրջանների հետ հողային վիճելի հարցերը լուծելու համար և Ղարաբաղում հաստատել ազգամիջյան համերաշխ հարաբերություններ: Հանձնաժողովին ժամանակ տրվեց այդ աշխատանքներն ավարտել մինչև մայիսի 1-ը և արդյունքների մասին լսել Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահության նիստում²⁷: Մայիսի 5-ին տեղի ունեցած Ադրկոմկուսի 6-րդ համագումարին տված իր զեկուցման մեջ Ս. Մ. Կիրովը հայտարարեց, թե իբր «ոչ լրիվ, բայց և այնպես նշանակալիորեն լուծվել է, այսպես կոչված, Ղարաբաղյան հարցը»: Այս նշեց, որ այդ հարցը թեկադրվել է Անդրֆեդերացիայի կողմից, որը ավելի քան երկու տարի է, ինչ կանգնած է մեր առաջ: «Այդ հարցը,— շարունակում է Կիրովը,— ծեծվել է մեծ ու փոքր ժողովներում, և հիմա պիտի խոստովանել, որ այն վճռելու համար մենք մոտեցել ենք արտակարգ երկչուտ: Այդ հարցի պատմությունը ցույց է տալիս, թե իբր մենք այն յուրացրել ենք վաղուց: Սակայն երբ սկսել ենք Ղարաբաղյան հարցին մոտենալ գործնականորեն, մենք հանդիպել ենք շատ մեծ հակասության... Այդ հարցը ի վերջո վճռել ենք և, անշուշտ, կատարել ենք միանգամայն ճիշտ գործ»²⁸:

Թող այդպես լինեք, ինչպես ենթադրում էր Ս. Մ. Կիրովը: Սակայն հետագա տասնամյակների պատմությունն ապացուցեց հակառակը: Ադրբեջանի իշխանությունները շարունակում էին իրենց հակահայկական քաղաքականությունը: Մենք դեռ առիթ կունենանք այդ մասին խոսել: Այնուամենայնիվ, վիճաբանությունները չէին դադարում Լեռնային Ղարաբաղի և Ադրամի գավառի միջև: Վիճաբանությունները չէին դադարում, ասենք, հենց Խոնաշենի քթի տակ գտնվող Կուրոպատկինո տարածքի համար, որը միշտ էլ պատկանել է Արցախի Վարանդա գավառին: Երկարատև վիճաբանությունից հետո Ադրամի գավառի և ԼԴԻՄ սահմանային հարցերը վճռող հանձնաժողովը հունիսի 5-ին որոշեց Կուրոպատկինոն թողնել ԼԴԻՄ Խոնաշենի շրջանի մեջ: Այդ տեղ բնակված ավչարցի թուրքերը բերքահավաքից հետո պետք է թողնեին այդ տարածքը և հեռանային²⁹: Սակայն նրանք փորձեցին դիմադրել:

Ընդհանրապես, շատ քիչ էին Լեռնային Ղարաբաղի հողատարածությունները և մեկ շնչին հասնող հողաքանակի տեսակետից Լեռնային Ղարաբաղն Անդրկովկասում զբաղեցնում էր ամենացածր տեղերից մեկը: Սահմանային տարածքները որոշող հանձնաժողովը, ելնելով դրանից, 1924 թ. հունիսի 13-ին որոշում ընդունեց հարց բարձրացնել հանրապետության հողժողկոմի առաջ Ադրամի և Կարյազնոյի գավառների հարավային տարածքների «ավելցուկ» հողերից ձեռնային արոտավայրեր հատկացնել Լեռնային Ղարաբաղին և «առանց ուշացնելու սկսել

այդ հողերի յուրացումը»³⁰: Ադրկոմկուսի Կենտկոմի քարտուղարությունը 1924 թ. հունիսի 26–ին առաջարկեց Ղարաբաղում արագացնել հողաշինարարական աշխատանքները³¹:

Ի վերջո, գործը հասավ Լեռնային Ղարաբաղի կանոնադրությանը, որը մշակվել էր հանձնաժողովի կողմից: Այն խմբագրելու համար Կենտկոմի նախագահությունը հուլիսի 1–ին ստեղծեց հանձնաժողով՝ Մ. Բաղիրով (նախագահ), Ա. Թեյմուրով և Ա. Կարակոզով³²: Այն խմբագրելու համար տրվեց երկու օր ժամանակ: Խմբագրված տարբերակը վերանվանվեց ԼՂԻՄ սահմանադրություն: Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահությունը հուլիսի 3–ին քննարկեց ԼՂԻՄ Սահմանադրության խմբագրված տարբերակը և Ադրկենտգործկոմի նախագահությանն առաջարկեց այն շտապ բերել «խորհրդային տեսքի ու հրապարակել թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով»³³: 1924 թ. հուլիսի 6–ին Բաքվի «Կոմունիստ» թերթում հայերեն և թուրքերեն լեզուներով հրապարակվեց «Սահմանադրություն Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Շրջանի» վերատառությամբ: Այն «խորհրդային Ղարաբաղ» թերթում արտատպվեց հուլիսի 24–ի համարում: «Բակինսկի ռաբոչի» թերթը տպագրեց նույն թվականի նոյեմբերի 26–ի համարում՝ «սահմանադրությունը» փոխելով «կանոնադրության»: Ասենք, որ այդ նույն թերթը ԼՂԻՄ սահմանադրությունը հուլիսի 6–ին շնորհավորել էր «Ղարաբաղի գյուղացիությունը և հուլիսի 6–ը» վերտառությամբ: Բաքվում գրված ԼՂԻՄ այդ սահմանադրությունը, իր բոլոր թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, չնայած կարճ ժամանակով, սակայն որոշ դեր է խաղացել ինքնիրեն գոյություն ունեցող Լեռնային Ղարաբաղի կյանքում:

ԼՂԻՄ Սահմանադրության համաձայն, բացի Շուշի և Ստեփանակերտ քաղաքներից, ԼՂԻՄ կազմի մեջ մտցվել էին Շուշիի գավառից 115, Զիվանշիրի գավառից՝ 52, Կարյազինոյի գավառից՝ 30 և Ղուբաթլուի գավառից՝ Բերդաձորը՝ շրջակա գյուղերով: Սահմանադրությամբ 1924 թ. նոյեմբերի 26–ին ստեղծվում է ԼՂԻՄ ժողովրդական կոմիսարների խորհուրդը: Այն գոյություն ունեցավ մինչև 1929 թ., իսկ 1923 թ. նոյեմբերի 10–ին ստեղծված Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսական խորհուրդը գոյություն ունեցավ մինչև 1933 թ.: Արդեն 1925 թ. վերջին Լեռնային Ղարաբաղում ստեղծվել և գործում էին ԼՂԻՄ Սահմանադրությամբ նախատեսված բոլոր նախարարություններն ու գերատեսչությունները:

ԼՂԻՄ սահմանադրությունը ինքնորոշված հայկական շրջանի իրավաբանական փաստաթուղթ էր, անկախ այն բանից, որ այն ընդունվել էր Ադրկենտգործկոմի նախագահության կողմից, առանց արցախահայության հանրաքվեի:

Հայտնի է, որ սահմանադրություն կարող են ունենալ անկախ և ինքնավար հանրապետությունները: Սահմանադրությունը տվյալ պետության հիմնական օրենքն է, այն ընդունվում է հանրաքվեով կամ էլ սահմանադիր ժողովի կողմից: Սահմանադրությունը սահմանում է տվյալ պետության հասարակական և պետական կառուցվածքը, ընտրակարգը, պետական մարմինների կազմակերպման ու գործունեության սկզբունքները, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, ընդգծում տարածքային ամբողջականությունը: ԼՂԻՄ սահմանադրությունն ընդունվել է կոպիտ խախտումներով, առանց արցախահայության համաձայնության: Այդ պատճառով էլ Բաքվում գրված և այնտեղ հաստատված ԼՂԻՄ սահմանադրությունը չէր կարող լինել լիարժեք: Այն հիմնականում հարմարեցվել էր Ադրբեջանի իշխանությունների կամքին ու ցանկությանը: ԼՂԻՄ սահմանադրությունը բաղկացած էր չորս բաժնից. 1. ընդհանուր հիմունքներ, 2. ինքնավար Լեռնային Ղարաբաղի տարածությունը, 3. կենտրոնական իշխանության կազմակերպումը և 4. իշխանության կազմակերպումը տեղերում:

Առաջին բաժինը բաղկացած էր երեք հոդվածներից: Առաջին հոդվածում մշված էր, որ ինքնավար Լեռնային Ղարաբաղը կազմում է Ադրբեջանի խորհրդային Հանրապետության «մի բաղկացուցիչ մասը», իսկ երկրորդ հոդվածում Լեռնային Ղարաբաղում «բոլոր գործավարությունը, դատավարությունը և ուսուցումը ղարկցներում տարվում է մայրենի լեզվով», այսինքն՝ հայերենով: Երրորդ հոդվածը շեշտում է, որ Լեռնային Ղարաբաղը մասնակցում է Ադրբեջանի Հանրապետության «բոլոր մարմիններում համեմատական կարգի սկզբունքով», ասել է թե՛ արցախահայությունը դիտվում էր որպես Ադրբեջանի Հանրապետության իշխանությունը կրողներից մեկը: Իսկ դա կարևոր հանգամանք էր:

Սահմանադրության երկրորդ բաժնում սահմանված է ինքնավար շրջանի ամբողջ տարածքը: Փաստորեն, Հյուսիսային Արցախը լիովին անջատվել էր ԼՂԻՄ–ից և թողնվել Ադրբեջանի անմիջական ենթակայության տակ: Բացի այդ, հայկական գյուղերի մեծամասնության անունները թուրքացվել էին՝ Ղայբալիբենդ, Մխիթարաբենդ, Ղաշուբենդ, Շուշիբենդ, Մաշադիբենդ, Աղբենդ, Ենիբենդ, Կարաբենդ, Գզուբենդ, Քեշիշբենդ, Բազարբենդ և այլն:

Սահմանադրության երրորդ բաժնի բոլոր 11 հոդվածները վերաբերում էին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Շրջանի պետական մարմինների կառուցվածքին: Ասված է, որ Լեռնային Ղարաբաղում իշխանությունը պատկանում է խորհուրդների համագումարին, կենտրոնական

գործադիր կոմիտեին և տեղական խորհուրդներին. բարձրագույն իշխանությունը խորհուրդների համագումարն է: Այդ բաժնի չորրորդ հոդվածում ասված է. «խորհուրդների համագումարները և ինքնավար Լեռնային Ղարաբաղի կենտրոնական գործադիր կոմիտեն ընտրում է Ղարաբաղի ժողովրդական կոմիսարների խորհուրդ, ըստ որում ինքնավար Լեռնային Ղարաբաղի ԿԳԿ նախագահը միևնույն ժամանակ համդիսանում է նաև ժողկոմխորհի նախագահը»: Հինգերորդ հոդվածով սահմանված են ժողովրդական կոմիսարիատները՝ ներքին գործերի, արդարադատության, լուսավորության, առողջապահության, երկրագործության, կենտրոնական վիճակագրական վարչություն, ժողովրդական տնտեսության խորհուրդ, զինվորական կոմիսարիատ, աշխատանքի, ֆինանսների և բանվորագյուղացիական լիազորներ: 9-րդ հոդվածը հռչակում է. «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ներքին գործերի, արդարադատության, լուսավորության, առողջապահության, երկրագործության կոմիսարիատներն իրենց բոլոր գործողությունների մեջ ինքնավար են և պատասխանատու ինքնավար Լեռնային Ղարաբաղի կենտրոնական գործադիր կոմիտեին», իսկ տասներորդ հոդվածով՝ «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի արդյունաբերության անմիջական ղեկավարությունը պատկանում է ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության խորհրդին»:

Սահմանադրության չորրորդ բաժինը բաղկացած է երեք հոդվածներից, որտեղ սահմանված են իշխանության տեղական մարմինների ֆունկցիաները: Այդ բաժնի երրորդ հոդվածն ասում է. «խորհրդային իշխանության տեղական մարմինների ընտրության ժամանակամիջոցն ու կարգը, ներկայացուցիչների թիվը և այդ մարմինների ներքին կազմակերպության ընդհանուր կանոնները, վարչական խնդիրների և իշխանության սահմանագծունը նրանց միջև, ինչպես և սահմանագծունը իրավական խնդիրների տեղական մարմինների և կենտրոնականի միջև սահմանվում են ինքնավար Լեռնային Ղարաբաղի կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից»:

Այսպիսով, ինչպես բխում է սահմանադրության բուն եությունից, մինչև 20-ական թթ. վերջը Լեռնային Ղարաբաղի մարզը չնայած ինքնուրույն էր, սակայն գտնվում էր Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության սահմաններում: Լեռնային Ղարաբաղի սահմանադրությունը ոչ թե խորհրդային Ադրբեջանի նվերն էր, այլ արցախահայության հետևողական և անզիջում պայքարի արդյունք: Արցախահայությունը, համաձայն սահմանադրության, երկրամասը վարում էր ինքնուրույն: Հենց սահմանադրության գերակայման շնորհիվ էր երկրամասում հաջողությամբ վերականգնվում քայքայված տնտեսությունն ու մշակույթը: Լեռնային Ղա-

րաբաղ վերադարձան հարյուրավոր մասնագետներ և անցյալում իրենց օջախներից հեռացածներ: Առանձնապես արագ էին զարգանում խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական ու մշակութային կապերը: Այդ տարիներին խորհրդային Հայաստանի օգնությամբ կառուցվեցին Ասկերանի և Կարմիր շուկայի սպիրտի արտադրության գործարանները, վերակառուցվեցին մետաքսի մի շարք ֆաբրիկաներ, ստեղծվեցին համատեղ կոոպերատիվ և առևտրական ձեռնարկություններ, բացվեցին մշակույթի տասնյակ օջախներ և այլն: Իճ խոսք, այս բոլորը Ադրբեջանի ազգայնամոլների համար անընդունելի էր: Ահա թե ինչու նրանք 1929 թ. վերացրին Լեռնային Ղարաբաղի սահմանադրությունը: Այնուհետև Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հայաթափումն ընդունեց բացահայտ և ամոթալի բնույթ:

Լեռնային Ղարաբաղում, չնայած դանդաղ, բայց և այնպես ամրապնդվում էին պետական, կուսակցական և հասարակական մարմիններն ու կազմակերպությունները: 1924 թ. օգոստոսի 10-12-ը տեղի ունեցած ԼԴԽ խորհուրդների ԿԳԿ հերթական նստաշրջանը, քննարկելով ԿԳ կոմիտեի անցած ժամանակաշրջանում կատարած աշխատանքների հաշվետվությունը, որոշեց ամրապնդել խորհուրդների տեղական մարմինները և նրանց գործունեությունը դնել ամուր հիմքի վրա, ընդլայնել գյուղական խորհուրդների սեկցիաները, բարելավել պետական ծառայողների ապրելապայմանները և բարձրացնել կենսամակարդակը, արմատախիլ անել խորհրդային մարմիններում տեղ գտած վարչարարությունը, ուշադիր լսել գյուղացիներին և ընթացք տալ նրանց բողոքներին, ակտիվացնել գյուղական խորհուրդների անդամ կանանց գործունեությունը, աշխատավորների ակտիվ մասնակցությամբ նորոգել աղբյուրներն ու քյահրիզները, հատուկ ուշադրություն դարձնել ճանապարհաշինությանը, պետական առևտրին, կապի միջոցների բարելավմանը, լայն թափ հաղորդել Առեփանակերտ քաղաքի շինարարությանը, էլեկտրիֆիկացմանը և այլն: Միջոցառումներ նշվեցին նաև ժողտնտխորհի, լուսժողկոմի, կոոպերացիայի, արդարադատության, ֆինանսական, հարկահավաքման, զինժողկոմատի և այլ բնագավառների աշխատանքների բարելավմանը: Առանձնապես շեշտվեց գյուղական խորհուրդների դերի բարձրացման անհրաժեշտությունը և կարևորությունը²⁴:

Ոգևորված այդ որոշումով մարզի աշխատավորները ձեռք էին բերում նորանոր հաջողություններ: Օրինակ՝ 1924 թ. վերջին ավարտվեց Առեփանակերտի ջրմուղի կառուցումը, պարտավորվեցին 1925-ին

մարզում սկսել գյուղական 26 դպրոցական շենքերի շինարարությունը, կառուցել գյուղական խորհուրդների 4 շենք, նորոգել 108 վերստ երկարությամբ ջրատարներ, 204 վերստ երկարությամբ ճանապարհներ, մաքրել 194 աղբյուր, դպրոցների շինարարության համար մթերել 601 խորանարդ մետր քար, շաքաթօրյակների միջոցով գյուղկոմների համար կատարել 193 դեսյատին ցանքս, բացել 42 լիկկայան, 28 խրճիթ-ընթերցարան և այլն³⁵:

Մեծ ակտիվությամբ էին անցնում տեղական խորհուրդների ընտրությունները: 1925 թ. հունվարի 5-ին մարզկոմի նախագահությունը, անդրադառնալով այդ հարցին, որոշեց գավառակների թիվը կրճատել և հասցնել տասնհինգի, իսկ գյուղական խորհուրդների թիվը 172-ի³⁶: Նույն թվականի փետրվարի 23-ի տվյալներով մարզում կային 4 շրջ-խորհուրդ, մեկ քաղաքով և 175 գյուղական խորհուրդ՝ 4268 ժողովրդական պատգամավորներով, որոնցից 195-ը կանայք էին, 3504-ը չքավորներ: Մարզում գործում էին նաև 19 պատգամավորական ժողովներ³⁷:

1925 թ. փետրվարին տեղի ունեցավ ԼԳԽ մարզային խորհուրդների երկրորդ համագումարը, որը հատուկ ընդգծեց տեղական խորհուրդների դերն ու նշանակությունը և կոնկրետ միջոցառումներ նշեց նրանց հետագա գործունեությունը բարելավելու համար:

Այդ ժամանակաշրջանում մարզում ժողովրդական տնտեսության վերականգնման և խորհրդային շինարարության կազմակերպման գործում եական դեր խաղացին մարզային կուսակցական և կոմերիտական կազմակերպություններն ու արհմիությունները:

Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո կուսակցության Շուշիի օկրուգկոմը լուծարվեց, և ստեղծվեցին գավառային կուսակցական կոմիտեներ: 1923 թ. հուլիսի 21-ին, ինչպես նշվել է, ստեղծվել էր ԼԳԽ մարզային կոմիտե: 1923 թ. հուլիսի վերջին Լեռնային Ղարաբաղում գոյություն ուներ կուսակցական 14 բջիջ, որոնց շարքերում հաշվվում էին 96 անդամ և 119 թեկնածու³⁸: Երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1924 թ. ապրիլի 25-ին, Ստեփանակերտում տեղի ունեցավ կուսակցության մարզային առաջին կոնֆերանսը: Այդ ժամանակ մարզի 34 կուսբջիջներում հաշվվում էին 213 կուսանդամ և 82 թեկնածու³⁹: Կոնֆերանսը քննարկեց մարզկոմի հաշվետվությունը (Ն. Սարգսյան), պետական առևտուրը գյուղում (Ա. Քեթիկյան), աշխատանքը երիտասարդության հետ (Ս. Գայրապետյան), մարզլուսբաժնի հաշվետվությունը (Ա. Քամալյան) և այլ հարցեր: Գաշվետվության վերաբերյալ ընդունված որոշման մեջ մասամբ նշվել է, որ պետք է հատուկ ուշադրություն դարձվի մարզի տնտեսական շինարարության հարցերին, հատկապես շերամապահության և տեղական արդ-

յունաբերության զարգացմանը: Կոնֆերանսը կոնկրետ միջոցառումներ նշեց անգրագիտության վերացման, կանանց շրջանում տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման, կուսակցական կարգապահության ամրապնդման հարցերին: Պետական առևտրի և կոոպերացիայի հարցի վերաբերյալ ընդունված որոշման մեջ նշված է, որ անհրաժեշտ է մարզի բոլոր շրջաններում բացել պետական առևտրի կետեր, կազմակերպել պետական առևտրի մարզային վարչություն՝ Պետառ: Որպեսզի հնարավոր լինեի մրցել մասնավոր առևտրի հետ, կոնֆերանսը պարտավորեցրեց նորաստեղծ կազմակերպությանը՝ խոշոր առևտուրը կենտրոնացնել Պետառում, իսկ մանրը՝ կոոպերատիվներում: Առաջ բաշվեց բատրակներին և չքավորներին կոոպերատիվներում ընդգրկելու և նրանց որոշ արտոնություններ ընձեռելու հարցը: Կոոպերացիայի աշխատանքը նպատակալաց կազմակերպելու համար կոնֆերանսն անհրաժեշտ գտավ հրավիրել կոոպերատիվների մարզային համագումար և ստեղծել կոոպերացիայի մարզային կենտրոնական վարչություն:

Կուսակցության մարզային կոնֆերանսը կարևոր ուշադրություն դարձրեց գյուղում տարվող աշխատանքին: Որոշվեց ուժեղացնել պայքարը կուլտիկների և չարաշահողների դեմ, գյուղերում կառուցել «կամուրջներ, ծանապարհներ, ջրանցքներ, դպրոցական շենքեր և այլ հասարակական կառույցներ»⁴⁰:

Կոնֆերանսը լայնորեն քննարկեց երիտասարդության շրջանում տարվող աշխատանքի հարցը: Այդ ժամանակ կոմերիտական 55 բջիջներում հաշվվում էին 2440 անդամ և թեկնածու: Ընդունված որոշման մեջ նշվեց, որ անհրաժեշտ է կոմերիտական բջիջներ ստեղծել բոլոր բնակչւայրերում, ընդլայնել կազմակերպության շարքերը, քաղաքականապես կործել ու կոփել նրանց և մասնակից դարձնել հասարակական աշխատանքներին:

Նորընտիր մարզկոմի առաջին պլենումը մարզկոմի առաջին քարտուղար ընտրեց Նիկոլայ Մարգսյանին:

Նորընտիր մարզկոմը հատուկ ուշադրություն էր դարձնում մարզում խորհրդային շինարարության ընդլայնման հարցին: 1925 թ. նոյեմբերի 21-ին տեղի ունեցած կուսակցության մարզկոմի երկրորդ կոնֆերանսը, քննարկելով խորհրդային ներքին մարմինների աշխատանքներն ակտիվացնելու հարցը, որոշեց հատուկ ուշադրություն դարձնել գյուղական խորհուրդների առաջիկա ընտրություններին և գյուղացիներին խորհուրդների աշխատանքներին մասնակից դարձնելուն⁴¹: Կոնֆերանսը լուրջ ուշադրություն դարձրեց նաև մարզի ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքների արագացմանը:

Մարզի ժողովրդական տնտեսության վերականգնման գործում նշանակալից դեր են խաղացել նաև կոմերիտականները: Դեռևս 1919 թ. աշնանը ՌԿ(բ)Կ Շուշիի օկրուգկոմի նախաձեռնությամբ Շուշիում հիմնադրվել էր կոմունիստական երիտասարդության կազմակերպություն: Կազմակերպության աշխատանքները թարմացվել են 1920 թ. մայիս-հունիս ամիսներին: 1923 թ. օգոստոսի 15-ին կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի նախագահության որոշմամբ ստեղծվել էր կոմունիստական երիտասարդական կազմակերպության մարզային կազմբյուր: Նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1924 թ. հունիսի 1-ին, Ստեփանակերտում տեղի ունեցավ մարզային առաջին կոնֆերանսը: Այդ ժամանակ կոմերիտկազմակերպության 65 բջիջներում հաշվվում էին 1019 անդամ և 276 թեկնածու: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էր 151 պատգամավոր⁴²: Կոնֆերանսից հետո աճում են կոմերիտկազմակերպության շարքերը, որի անդամների թիվը 1925 թ. սկզբին հասնում են 4000-ի⁴³:

Մարզի կոմերիտականներն օգնություն էին ցույց տալիս չբավորներին, ակտիվորեն մասնակցում կոոպերացիայի աշխատանքներին, շաբաթօրյակների միջոցով նորոգում դպրոցական գույքը, օժանդակում դպրոցների և մշակույթի այլ օջախների բացմանը: Առանձնապես ակտիվորեն էին մասնակցում արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և նորերի կառուցման աշխատանքներին: Կոմերիտականները հանդիսանում էին գյուղական խորհուրդների աշխատանքների ակտիվ օժանդակողներ և հակախորհրդային տարրերի դեմ տարվող պայքարի առաջամարտիկներ:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության վերականգնման և աշխատավորների իրավունքների պաշտպանման գործում քիչ աշխատանք չկատարեցին նաև արհմիությունները: Արցախ-Ղարաբաղում առաջին արհմիութենական կազմակերպությունը ստեղծվել է 1917 թ.: Այդ նույն թվականի մարտի 28-ին ստեղծվել են Ղարաբաղի ուսուցիչների, իսկ որոշ ժամանակ անց՝ Շուշի քաղաքի ծառայողների արհմիութենական կազմակերպություններ⁴⁴: 1917 թ. ամռանը կազմակերպվել է արհեստավորների միասնական ինտերնացիոնալ արհմիութենական կազմակերպություն⁴⁵: Խորհրդային կարգերի հաստատումից հետո ստեղծվել էր արհմիութենական կազմակերպությունների Շուշիի բյուրո: 1920 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին տեղի ունեցած համաաղբբեջանական արհմիությունների առաջին համագումարը հանձնարարել էր արհմիությունների Շուշիի բյուրոյին՝ միավորել Ղարաբաղի արհմիութենական բոլոր կազմակերպությունները: Իսկ Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տրվելուց հետո ստեղծվեց արհմի-

ութենական կազմակերպությունների մարզային բյուրո: Արագորեն աճում էին արհմիության շարքերը: Արդեն 1924 թ. մարզում կար արհմիության 1624 անդամ: Հաջորդ տարում այդ թիվը հասել էր 2750-ի⁴⁶: 1924 թ. փետրվարի 9-ին կուսակցության մարզկոմի նախագահությունը հանձնարարեց արհմիությունների մարզային բյուրոյին՝ սերտ կապ ստեղծել մարզի բոլոր հիմնարկությունների հետ, թարմացնել սկզբնական կազմակերպությունների աշխատանքները, վերացնել արհմիության անդամների անգրագիտությունը, մշակութային օջախներ ստեղծել արդյունաբերական ձեռնարկություններում և այլն⁴⁷: Արհմիությունների նախաձեռնությամբ արդյունաբերական ձեռնարկությունների աշխատավորների համար բացվեցին անգրագիտության վերացման կետեր, միջոցառումներ ձեռնարկվեցին բանվորների աշխատանքային պայմանները բարելավելու համար, ձեռնարկություններում կազմակերպվեցին գեղարվեստական ինքնագործունեության խմբակներ, աշխատանքներ էին տարվում Շուշիում բացելու հանգստյան տուն, նյութական օգնություն էր տրվում բազմազավակ բանվորներին, ծառայողներին, ինչպես և գյուղի չբավորներին:

3. Ինքնավար մարզի արդյունաբերությունը 1920-1930-ական թթ.

Խորհրդային իշխանության առաջին տարիներին Անդրկովկասում հիմնական ուշադրությունը դարձվում էր թեթև արդյունաբերության, առանձնապես սննդի, հագուստի և այլ ճյուղերի զարգացմանը: Նման ձեռնարկություններ կառուցելու համար 1925 թ. փետրվարի 6-ի ԽՍՀՄ ԿԳԿ նախագահության որոշմամբ՝ երկրի բյուջեի ընդհանուր ֆոնդից Լեռնային Ղարաբաղին լրացուցիչ հատկացվեց 50 հազար ռուբլի⁴⁸:

Լեռնային Ղարաբաղում արդյունաբերության զարգացման համար կային մի շարք նախադրյալներ: Սպիրտի արտադրության համար, որի կարիքը բավականին մեծ էր, կար թթի առատ հունք: Մետաքսարդյունաբերությունն ընդլայնելու համար վերականգնվում էին ցարական Ռուսաստանից ժառանգված ֆաբրիկաները, հիդրոկայաններ կառուցելու համար նպաստավոր գետեր էին Թարթառը, Կարկառը, Խաչենը, Քյոնդալյանը և Ղուրուչայը, իսկ տեղական արդյունաբերության զարգացման համար կային բնական առատ պաշարներ: Այդ բոլորին ավելացնենք նաև այն, որ Լեռնային Ղարաբաղում կար ազատ աշխատուժ, որը աշխատանք որոնելու համար ստիպված էր լքել հայրենի օջախը: 1925 թ. փետրվարին Լեռնային Ղարաբաղի ժողովմխորը, լսելով և քն-

նարկելով մարզում արդյունաբերության վերականգնման և այն զարգացնելու հարցը, կոնկրետ միջոցառումներ մշակեց մետաքսարդյունաբերության, ամտառային և սպիրտի արդյունաբերության, էլեկտրաէներգիայի զարգացման, գյուղատնտեսական մթերքների վերամշակման ուղղությամբ²։ Քանի որ սպիրտի և մետաքսի արտադրության ընդլայնումն ամենից առաջ կապված էր այգեգործության և շերամապահության զարգացման հետ, ուստի մարզում շեշտը դրվում է գյուղատնտեսության այդ ճյուղերի խթանման վրա։ Միայն թաքսուծության և շերամապահության զարգացումը մարզի գյուղական տնտեսությունների ավելի քան 45%—ին հնարավորություն էր տալիս ստանալ բավականին շահույթ։ Գյուղացուն ամենից առաջ հետաքրքրում էին օգուտն ու լավ օրինակը։ Նման օրինակ ցույց էր տալիս սեփականության համընդհանուր ձևը, որը սերտորեն կապված էր գյուղական տնտեսությունների հետ։ Պետականացված ձեռնարկություններն անշահախնդիր վերաբերմունք էին ցույց տալիս մարզի գյուղական տնտեսություններին, նախօրոք նրանց ավանսավորում էին բոժոժի և օղու արտադրության համար, օգնում էին այգետարածությունների ընդլայնման և գյուղատնտեսական հիվանդությունների դեմ պայքարելու գործում։

Լեռնային Ղարաբաղի արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը գտնվում էր Վարանադայում և Դիզակում։ Այստեղ գյուղացիները կարող էին արտադրել մինչև 2.5 մլն աստիճան սպիրտ, եթե չլինեին արտադրանքի իրացման գործում առաջ եկած դժվարությունները։ Այդ պատժառով էլ արտադրանքի մակարդակն իջել էր 1.5 մլն աստիճանի։ Ասկերանում կառուցված օղեթորման գործարանը միակն էր ամբողջ մարզում և հագիվ էր հասցնում վերամշակել հաչենի ու Վարանդայի հյուսիսարևելյան գյուղերի այգեգործների արտադրած սպիրտի հումքը։ Միայն ինչու մարզում սպիրտի արտադրության երկրորդ գործարանի կառուցումը դարձել էր խիստ անհրաժեշտ։

Գործարանի կառուցման աշխատանքները սկսվել էին 1926 թ. Վարանդայի Քյոնդալան գետի ձախ ափին՝ ներկայիս Կարմիր շուկա ավանում։ Տեղը բավականին հարմար էր հումքի աղբյուրներին և Գորանդիգ երկաթուղային կայարանին մոտ լինելու տեսակետից։ Այս գործարանի կառուցմանը նույնպես մեծ օգնություն ցույց տվեց խորհրդային Զայաստանի կառավարությունը։ Գործարանը շահագործման հանձնվեց 1927 թ. նոյեմբերի 15—ին³, որի օրվա արտադրողականությունը հավասար էր Ասկերանի համանման գործարանի արտադրողականությանը։ Նույն թվականի հոկտեմբերի 1—ին ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի գինու և սպիրտի տրեստը՝ Ղարաբնտրեստ⁴, որին հանձնվեցին երկու գործարանները։ Մարզում սպիրտի արտադրության ստեղծման և նրա հե-

տագա ծավալման գործում մեծ եռանդ ցուցաբերեցին մարզի աշխատավորները, մանավանդ սպիրտի արտադրության ձեռնարկություններում աշխատողները։ Նրանք շատ անգամ, հատկապես ամռանը և աշնանը, աշխատում էին վաղ առավոտից մինչև ուշ երեկո։ Բանվորներն օգնում էին ճիշտ կիրառել տնտեսական ռեժիմը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և իջեցնել արտադրված յուրաքանչյուր մեկ աստիճան սպիրտի ինքնարժեքը։

Սպիրտի արտադրության ընդլայնմանը նպաստեց մարզի գյուղական տնտեսությունների արագ վերականգնումն ու զարգացումը։ Գյուղացիների մեջ առաջ էր եկել հումքը որակով և շատ արտադրելու շահագրգռվածություն։ Այսպես, եթե 1925/26 տնտեսական տարում մթերվել էր 1.500.000 աստիճան սպիրտի հումք, ապա 1927/28 տնտեսական տարում այն հասավ 2.000.000 աստիճանի։ Մարզում հետագա տարիներին սպիրտի արտադրությունը հասավ մոտ չորս միլիոն աստիճանի⁵։ Ասենք նաև, որ սպիրտի արտադրության ծավալման շնորհիվ Ղարաբնտրեստի արտադրանքի ծավալը 1928 թ. հասավ 1552.9 հազար ռուբլու⁶ և ստացավ 70 հազար ռուբլու մաքուր շահույթ⁷։ Զանրապետության գերագույն տնտեսական խորհրդի 1928 թ. դեկտեմբերի 17—ի որոշմամբ Ղարաբնտրեստը ճանաչվեց որպես հանրապետական կարգի ձեռնարկություն, և նրա շահույթը 1929/30 տնտեսական տարուց մտցվեց մարզի բյուջեի մեջ⁸։

Լեռնային Ղարաբաղի սպիրտի և խմիչքի արտադրությունն ընդլայնվեց մանավանդ նախապատերազմյան հնգամյակների տարիներին։ Օրինակ՝ առաջին հնգամյակի տարիներին յուրաքանչյուր տարի ավելանում էր գրեթե 500 000 աստիճանով։ Ասենք նաև, որ ընդհանրապես Ղարաբնտրեստի գործողության ոլորտները խիստ նեղ էին։ 1929 թ., երբ լուծարվեցին Բաքվում գտնվող խորհրդային Զայաստանի առևտրական հիմնարկները, նրա բոլոր առևտրական կետերը և պահեստները տրվեցին Ղարաբնտրեստին։ Այդ նույն թվականին Ղարաբաղի գինու տրեստը Բաքվում բացեց գինու և կոնյակի արտադրամասեր, իսկ հաջորդ տարում Ստեփանակերտում կազմակերպվեց ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն։ 1931 թ. սկսած Ասկերանի գործարանն արտադրում էր կոնյակի հումք, իսկ Կարմիր շուկայի գործարանը նման հումք սկսեց արտադրել 1933 թ. սկսած։ 1930 թ. տվյալներով Ղարաբնտրեստն արտադրում էր 4 տեսակի կոնյակ, 9 տեսակի չոր, 3 տեսակի սեղանի, 6 տեսակի թունդ և 4 տեսակի անուշեղեն գինիներ⁹։

Տրեստի արտադրությունն առաջին հնգամյակի տարիներին զարգանում էր մեծ թափով, ինչը երևում է ստորև բերված աղյուսակից¹⁰։

	1928	1929	1930	1931	1932	1933
Գործարանների թիվը	5	6	7	7	8	9
Որից մարզի սահմաններից դուրս	2	3	3	3	4	4
Արտադրանքը (հազար ռ-ով)	1.552.9	1.980.0	3.304.0	1.768.0	4.372.5	4.919.7
Ընդհանուր շրջանառությունը (հազար ռ-ով)	1.189.0	2.613.0	3.362.5	4.741.7	9.800.0	16.500.0

Առաջին հնգամյակի տարիներին Ղարաբնդ տրեստը կարողացավ ստեղծել արտադրանքն իրացնելու լայն ցանց: Այն իրացվում էր մարզում, Ադրբեջանում, Վրաստանում, Միջին Ասիայում և ՌՍՖՍՀ կենտրոնական մարզերում: Բացի դրանից, Ադրբեջանի Պետրոլժառը, դեղատնային վարչությունը, Ազնվքը և ուրիշ շատ խոշոր կազմակերպություններ տեխնիկական նպատակներով պահանջվող սպիրտը բացառապես գնում էին Ղարաբնդ տրեստից¹¹: Ղարաբնդ տրեստի գոյությունը կյանքի կոչեց մարզի տեղական արդյունաբերության շատ ճյուղեր: Տրեստը ակտիվ մասնակցություն ունեցավ մարզում էլեկտրակայանների կառուցմանը, ռոզգման և հողալվացման աշխատանքներին, այգեգործության և գյուղատնտեսության այլ ճյուղերի զարգացմանը: Ցանքսի ժամանակ կոլտնտեսություններին օգնում էր տրակտորներով, այգիները բուժում էր հիվանդություններից, գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու համար պատրաստում էր մասնագետներ, օդին թորելու համար կոլտնտեսություններին ապահովում էր կաթասներով և այլն: Տրեստի դերը մեծ էր նաև մարզում տրանսպորտի կազմակերպման, ճանապարհաշինարարության և բնակարանաշինարարության գործում: Տրեստը թթաբուծական և խաղողագործական շրջաններում իր հաշվին պահում էր մանկանսուրներ, տասնյակ լիկկայաններ, նորոգում էր դպրոցական շենքերն և իրերը, կառուցում արհեստանոցներ, դպրոցների համար ձեռք բերում լաբորատոր սարքավորումներ և այլն: Միայն 1932 թ. մարզում կոլտուր-լուսավորական գործի ընդլայնման ուղղությամբ տրեստը ծախսել է 100 հազար ռուբլի: Ստեփանակերտում կառուցվեց արդյունաբերական տուն 700 հազար ռուբլու արժողությամբ, տրեստի աշխատողների համար 3500 քառակուսի մետր բնակ-

տարածություն: Ղարաբնդ տրեստը մասնակցում էր մարզի գրեթե բոլոր ձեռնարկությունների կողմից կազմակերպված միջոցառումներին, օգնում կամ ղեկավարում:

1933 թ. հունվարի 1-ից Ղարաբնդի գինու տրեստը վերանվանվեց Ղարաբնդի գինու և սովխոզների տրեստ (Ղարաբնդ սովխոզտրեստ): Մարզի բոլոր սովխոզները (պետտնտեսություններ), բացի անասնաբուծականից, տրվեցին Ղարաբնդ սովխոզտրեստին: Այդ ձեռնարկումը լուրջ փոփոխություններ մտցրեց տրեստի գործունեության մեջ: Մինչև 1933 թ. տրեստը պատրաստի գինիները մթերում էր կոլտնտեսություններից պայմանագրային սկզբունքով: Դրա պատճառով էլ տրեստի արտադրանքի որակը լինում էր նկատելիորեն ցածր: Դրան վերջ տալու, գինիների մշակման ավելի կատարելագործված և ճանաչում գտած եղանակներ իրագործելու համար տրեստն անցավ արդյունաբերական խաղողի մթերմանը: 1933 թ. սկսած մարզում արդյունաբերական խաղողի մթերումը կատարվում էր պետական պարտադիր պայմանագրային ձևով:

Մարզի թե՛ պետտնտեսությունները և թե՛ կոլտնտեսությունները սկսեցին ընդլայնել խաղողի և թթի այգիները: Տարեցտարի սկսեց ավելանալ տրեստի հումքի բազան: Արդեն 1934 թ. տրեստը տվեց ավելի քան 4 միլիոն ռուբլու արտադրանք¹²:

Ղարաբնդ սովխոզտրեստի կյանքում երկրորդ հնգամյակի սկզբից հանդես եկավ մի նոր երևույթ. տրեստը սկսեց իր համար ստեղծել հումքի բազա: Մասնագիտացված պետտնտեսություններն իրենց տված առաջին բերքով ապացուցեցին տրեստի սեփական հումքի բազա ունենալու օգտավետությունն ու կարևորությունը: Տրեստը մարզի նախալեռնային շրջաններում զբաղվում էր խաղողագործությամբ, թթաբուծությամբ և մրգեղենի արտադրությամբ, իսկ լեռնային շրջաններում մեղվաբուծությամբ: 1934 թ. տվյալներով՝ տրեստն ուներ 7 պետտնտեսություն, որոնցից երեքը մեղվաբուծական (Նավաթխանի, Մարտակերտի և Չաղրութի), երկուսը՝ խառը (Տողի և Խոջալլուի), երկուսն էլ՝ խաղողագործական (Արմենաբաղի և Մարտունու): Բացի այդ, Ասկերանի գործարանին կից կառուցվեց գինու օրինակելի մառան, որը մարզի կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների համար հանդիսացավ որպես ցուցադրական կետ:

Այնուամենայնիվ, անհրաժեշտություն զգացվեց տրեստի կառուցվածքի մեջ մտցնել փոփոխություններ: Անդրֆեդերացիայի 1936 թ. հունիսի 21-ի որոշման համաձայն՝ նույն թվականի հուլիսի 3-ին մարզգործկոմում տեղի ունեցած խորհրդակցությունը նպատակահարմար գտավ Ղարաբնդ սովխոզտրեստի մի շարք ձեռնարկություններ հանձնել տեղական արդյունաբերության կառավարմանը: Տրեստի իրավասու-

թյան տակ մնացին Ասկերանի և Կարմիր շուկայի սպիրտի ու կոնյակի արտադրության գործարանները, Ստեփանակերտի գինու և օղու արտադրության կոմբինատը, Բաքվի գինու-կոնյակի-լիկորի և օղու գործարանները, Բաքվի առևտրական հիմնարկությունները՝ 18 առևտրական կետերով և երկու բազայով, Լեռնային Ղարաբաղի առևտրական հիմնարկությունները՝ 26 առևտրական կետերով, և տրեստին հումք մատակարարող պետտնտեսությունները: Այդ ձեռնարկումը բեթևացրեց տրեստի աշխատանքերը և կոնկրետացրեց գործունեության ոլորտը: Ղրա արդյունքում 1936 թ. գինու թողարկումն ավելացավ 40.1, օղունը՝ 4.0, գազավորված ջրինը՝ 79.3%-ով¹⁵: Պարզապես Ղարաբաղի սոցիալիստիկ տնտեսությունը վերցրել էր կոնկրետ մասնագիտացման ուղղություն:

Ակսած 30-ական թթ. կեսերից՝ խաղողագործությունը համարվում էր մարզի նախալեռնային կոլտնտեսությունների հիմնական զբաղմունքը, որը եկամտաբեր ճյուղ էր և հանդիսանում էր Ղարաբաղի սոցիալիստիկ տնտեսության հիմնական բազան:

1937 թ. նոյեմբերի 16-ին մարզգործկոմը հարց դրեց մարզում գիտահետազոտական աշխատանքներ սկսել խաղողագործության զարգացման ուղղությամբ: Որոշվեց Մարտունու շրջանի Գյուլես ճարտար գյուղում ստեղծել խաղողագործության զարգացման հենակայան: Այն ժամանակ Մարտունու շրջանը դիտվում էր որպես մարզում խաղողագործության զարգացման «հեռանկարային և հատուկ» շրջան¹⁶: Առանձնապես շեշտվեց ճարտարի հողերի դերը, որոնք իրենց հողակլիմայական և կառուցվածքային հատկություններով խաղողագործության զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունեին: Ուսումնասիրելու համար հողամասեր առաջարկվեցին նաև Գիշու, Ղզալայի և Աշանի կոլտնտեսություններում: Ղարաբաղի սոցիալիստիկ տնտեսության առաջ կարևոր խնդիր ծառայեց մոտակա տարիներին ընդլայնել խաղողի այգիները մասնավոր Մարտունու շրջանում և ապահովել տրեստի գործարանների ամբողջ պահանջը:

Ինչպես նշվել է, Լեռնային Ղարաբաղում մետաքսագործական ֆաբրիկաների պետական տրեստը՝ Ղարմետաքսարդյունաբերությունը, ստեղծվել է 1925 թ. օգոստոսին, սակայն ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով այն իր գործունեությունը սկսել է 1926 թ. հունվարի 1-ից: Ղարաբաղի մետաքսի տրեստի կազմակերպումով նոր հնարավորություններ ստեղծվեցին մարզի մետաքսարդյունաբերության հետագա զարգացման համար: Տրեստի իրավասությանն անցան մարզի տարածքում գործող մետաքսարդյունաբերական պետական բոլոր ձեռնարկությունները: Նորաստեղծ տրեստը նյութական կարևոր օժանդակություն ստացավ մետաքսի միութենական տրեստից: Մարզային ժող-

կոմխորհի 1925/26 տնտեսական տարվա զեկուցումից իմանում ենք, որ այդ նույն տարում, շնորհիվ Մոսկվայի մետաքստրեստի ֆինանսական օժանդակության, հաջողվել էր գործարկել 3 ֆաբրիկա¹⁷: Արդեն 1927/28 տնտեսական տարում մարզում աշխատում էր 13 ֆաբրիկա, որից յոթը պետական էր, իսկ վեցը՝ վարձակալությամբ տրված: Պետական էր նաև Քարինտակի 1920 դազգահ ունեցող մետաքսուլորման ֆաբրիկան: Այդ նույն տնտեսական տարում մարզի մետաքսագործական բոլոր ֆաբրիկաների արտադրանքը կազմել է 36.672 կգ մետաքսիումը, որից 27872 կգ-ն արտադրել էին պետական ձեռնարկությունները: Այդ ժամանակ ֆաբրիկաներում աշխատող բանվորների թիվը հասնում էր 568-ի¹⁸:

Լեռնային Ղարաբաղում մետաքսի արդյունաբերության զարգացման համար կարևոր էր հումքի հարցը: Մարզում մթերվող բոժոժը հազիվ էր բավարարում ֆաբրիկաների 30-40 օրվա պահանջը: Մնացածը լրացվում էր Զարթավայրային Ղարաբաղից, Կրաստանից, Թուրքմենստանից և Իրանից գնված բոժոժի հաշվին: Ահա թե ինչու մարզում շերամապահության հետագա զարգացումը դարձել էր հրատապ պահանջ: Այդ նպատակով եթե 1927 թ. ծախսվել էր 4000 ռուբլի, ապա 1929 թ. այն տասնապատկվել էր և հասել 40 հազարի¹⁹: Ար. Առաքելյանը «Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում» ուսումնասիրության մեջ ցույց է տվել մարզում խորհրդային իշխանության տարիներին շերամապահության զարգացման ընթացքը: Նա նշում է, որ շերամապահության զարգացումը մարզում ունեցել է կազմակերպչական երկու շրջան. 1. 1924-1930 թթ., երբ մասնավոր գործարաններն անցնում էին պետության ձեռքը, և 2. 1931-1939 թթ., երբ շերամապահությունը դուրս է եկել վերակառուցման շրջանից և թևակոխել կոլտնտեսային շրջան, որի ժամանակ դրական լուծում էին ստացել կերային բազայի, հունդի մատակարարման, շերամապահության տեխնիկայի և կադրերի հարցերը: Եվ եթե 1925 թ. հնարավոր է եղել կերակրել 1945 տուփ շերամի հունդ, ապա 1936 թ. այն հասել էր 2735 տուփի, և այդ թվականին արտադրվել է 1275.40 ց հումք բոժոժ՝ մեկ տուփից միջին հաշվով ստանալով 46.6 կգ բոժոժ: Այդ նույն թվականին եթե Աղբեջանը տարվա պլանը կատարել է 98%-ով, ապա Լեռնային Ղարաբաղն այն կատարել է 101%-ով²⁰: Ասենք նաև, որ մինչև 1932 թ. մարզում բոժոժի մթերման գծով որևէ հիմնարկ չկար, բոժոժի գնումն իրագործում էին կոոպերատիվները, վարկային ընկերությունները և բանկերը, որոշ քանակությամբ էլ՝ Ղարմետաքստրեստի արդյունաբերության վարչությունը:

Մարզային ժողտնտխորհի և Ղարմետաքստրեստի առաջ ծառայած ամենահրատապ խնդիրը հանդիսանում էր մետաքսարդյունաբերությունը ամբողջովին պետական ուղու վրա դնելու հարցը:

Ստորև բերվող աղյուսակը ցույց է տալիս Լեռնային Ղարաբաղում մետաքսարդյունաբերության ընդհանուր պատկերը առաջին հնգամյակի նախօրյակին.

Թթ.	Ֆարրիկաների քանակը	Այդ քվում Ղարմետաքստրեստի	Թասերի թիվը	Այդ քվում Ղարմետաքստրեստի	Արտադրված մետաքսահումքը (փթերով)	Այդ քվում Ղարմետաքստրեստի
1926	13	3	505	102	543	181
1927	16	6	587	254	2296	1166
1928	12	6	472	254	2000	1600

Ինչպես երևում է աղյուսակից, 1928 թ. մետաքսարդյունաբերության մեջ պետական սեկտորի աճը կազմել է չորս անգամ ավելի մասնավոր սեկտորից: Մարզի մետաքսագործական ֆաբրիկաները տեղավորված էին Խնձրիստանում, Սեյդիշենում, Ղաշբուլաղում, Բաղարայում, Դիլիսում, Ղարաղշլաղում, Գարավում, Չանախշիում, Ջարդարաշենում, Թաղավարդում, Առաքելում, Տոդում, Գաղրուծում և Քարինտակում: Ֆաբրիկաներն իրարից կտրված էին, չկային բարեկարգ ճանապարհներ, զգացվում էր հումքի, փոխադրամիջոցների և վառելանյութի խիստ պակաս: Վիճակն առանձնապես ծանր էր վարձակալությանը տրված ֆաբրիկաներում, որոնք խիստ դժվարանում էին հումք և վառելանյութ ձեռք բերելու գործում: 1927 թ. հունիսին տեղի ունեցած կուսակցության մարզկոմի պլենումը անհրաժեշտ գտավ արագացնել վարձակալությանը տրված ֆաբրիկաները ետ վերցնելու աշխատանքները¹⁹:

Տարեցտարի ավելանում էին մետաքսարդյունաբերության մեջ ներդրվող կապիտալ ներդրումները: Այսպես. եթե 1926 թ. այն կազմել է 296 հազար ռուբլի, ապա 1928-ին հասել էր 500 հազարի: Բացի այդ, մտածում էին մարզում ունենալ 4000 հեկտար թոխմաշար: Այդ նպատակով 1926 թ. ստեղծվել էր փորձնական տնտեսություն, որի ջերմոցներում աճում էր 600 հազար թթենի²⁰:

Ֆաբրիկաների սարքավորումները շատ էին հին, տասնամյակների պատմություն ունեին: Դաստոցների մեծ մասը «չորսաջքանի» էր, միայն երեք ֆաբրիկա ուներ «հինգաջքանի» հաստոցներ: 1926-1927 թթ. վերականգնվեցին Ստեփանակերտի ու Քարինտակի ֆաբրիկաները, և յուրաքանչյուրում տեղադրվեցին 80-ական «վեցաջքանի» հաստոցներ: Մնացած ֆաբրիկաների հաստոցների մաշվածությունը հասնում էր

մինչև 80%-ի²¹: Գործող հաստոցների 90%-ից ավելին ենթակա էին ղուրսգրման: Նկատի ունենալով այդ բոլորը, ինչպես և մարզում մետաքսարդյունաբերության զարգացման հեռանկարները՝ 1927 թ. օգոստոսին Ստեփանակերտում սկսվեց մետաքսագործական նոր ֆաբրիկայի շինարարությունը: Նախատեսված էր այն կառուցել գիտության և տեխնիկայի վերջին խոսքով²²: Այդ ֆաբրիկայի համար 75 հազար ռուբլու սարքավորում պատվիրվեց խտալական «Բատալիա» ֆիրմային: Նախատեսված էր ֆաբրիկայի շինարարությունն ավարտել երկու տարում: Նորակառույց ֆաբրիկայի յուրաքանչյուր հաստոցի արտադրողականությունը օրական պետք է կազմեր 600 գրամ մետաքսաթել, և ֆաբրիկայի ընդհանուր արտադրողականությունը հինգ անգամ պետք է գերազանցեր մարզում գործող բոլոր ֆաբրիկաների արտադրողականությունը: Մտնելով մրցության մեջ՝ ֆաբրիկայի շինարարները առաջին կորպուսը շահագործման հանձնեցին 1929 թ. սեպտեմբերի 20-ին: Այն սարքավորված էր ութբռնիչավոր «Բատալիա» սիստեմի 96 հաստոցով: Ֆաբրիկան կոչվեց Բաքվի 26 կոմիսարների անվամբ:

Առաջին հնգամյա պլանի համաձայն՝ նախատեսված էր Լեռնային Ղարաբաղի մետաքսարդյունաբերության հետագա զարգացման համար հատկացնել 150 հազար ռուբլի²³ և մետաքսարդյունաբերության բնագավառում աշխատողների թիվը հասցնել 2451-ի²⁴: Գնզամյակի սկզբից իրագործվում էին ֆաբրիկաների հին սարքավորումները նորերով փոխարինելու, ֆաբրիկաների թիվը աստիճանաբար կրճատելու, դրա փոխարեն Ստեփանակերտի նորակառույց ֆաբրիկայի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրվող մետաքսաթելի որակը բարելավելու, շերամի սեփական բազան ընդլայնելու, բանվորների ակտիվությունը բարձրացնելու աշխատանքներ:

Գնզամյակի հենց սկզբից լայն թափ էր առել մետաքսարտադրանքի ծավալը մեծացնելու մրցությունը: Գնզամյակի առաջին տարում մարզի ֆաբրիկաները թողարկեցին 2.858 հազար ռուբլու արտադրանք՝ 571 հազարով գերազանցելով նախորդ տարվա մակարդակը: Ֆաբրիկաների գործունեությունը լայնորեն ծավալվեց Լեռնային Ղարաբաղի և Վրաստանի Սամտրեդ քաղաքի մետաքսագործների միջև սցոմրցության պայմանագիր կնքելուց հետո: Մարզի մետաքսագործներին մրցության հրավիրեցին նաև Նուխի մետաքսագործները: Խնձրիստանի ֆաբրիկայում լայն աշխատանք ծավալվեց արտադրանքի ինքնարժեքի իջեցման և բանվորների աշխատավարձը բարձրացնելու ուղղությամբ: Այդ ֆաբրիկայում եթե 1928 թ. մեկ կիլոգրամ մետաքսահումք արտադրելու համար ծախսվել էր 11 ռ. 28 կ., ապա 1929 թ. այն իջել էր 10 ռ. 04 կ-ի²⁵:

Ֆաբրիկաներում հանդես եկան նորարարներ և նախածեռնողներ: Քարինտակի մետաքսուղորման ֆաբրիկայի բանվոր Յայրապետ Էլյասյանը հյուսելու հաստոցին կցեց հաստոցների երկու շարք, որի օգնությամբ արտադրողականությունը կրկնապատկեց: Էլյասյանը նորություն մտցրեց նաև թելի ոլորման գործում և 60%-ով իջեցրեց ոլորելու ինքնարժեքը²⁶: Ֆաբրիկաներում տեխնիկական ռեժիմների մշակման և նրանց պահպանման գործում մարզի մետաքսագործների մեջ աչքի ընկան նաև Թամրազ Գևորգյանը, Շիրին Աղաջանյանը, Յարություն Սեյրանյանը և ուրիշներ: Ստեփանակերտի ֆաբրիկայի բանվորների 80%-ը մասնակցում էր մրցությանը²⁷: Այդ ամենի հետևանքով, եթե 1931 թ. արտադրվել է 16900 կգ գրեժա, ապա հաջորդ տարում այն հասավ 28 հազար կգ-ի: Յնգամյակի վերջում մետաքսարդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվն աճեց գրեթե երկու անգամ, իսկ նրանց աշխատավարձի տարեկան ֆոնդի աճը կազմեց 244%²⁸:

1930 թ. Լեռնային Ղարաբաղում առաջին անգամ կազմակերպվեց ֆաբրիկագործարանային դպրոց մետաքսագործության թեքումով: Երեք տարում դպրոցում որակավորում ստացավ 206 մետաքսագործ: Դպրոցը պատրաստում էր նաև գործողներ, հաշվետարներ և խրոնոմետրաժիստներ²⁹:

Մարզի մետաքսագործներն իրենց արտադրությունն ավելի ընդարձակեցին երկրորդ հնգամյակի տարիներին: Մետաքսագործներ Ջարվարդ Մանուչարյանը, Մինաս Պետրոսյանը (Ղարաղշլաղ), Էրիկ Ղահրանյանը (Քաղարա), Ազիզ Սարգսյանը (Խնձրիստան), Քնարիկ Բալասանյանը (Քարինտակ), Բալասան Բալայանը (Սեյդիշեն) և շատ ուրիշներ իրենց օրվա պլանները կատարում էին 150–200%-ով: Դարձյալ առաջին շարքերում քայլում էին Ստեփանակերտի ֆաբրիկայի բանվորուհիները: 1933 թ. մայիսի 1–ից մինչև հոկտեմբերի 1–ը որակյալ արտադրանք տալու նշանաբանով անցկացված մրցույթին մասնակցեց 963 բանվոր: Այդ ընթացքում ներդրվեցին 12 նորարական առաջարկներ, կազմակերպվեց տեխնիկիումի 5 խմբակ, որտեղ ընգրկվեց 100 հոգի³⁰:

Սակայն հին, մաշված հաստոցների պատճառով հաճախ արտադրվում էին ցածր որակի ապրանքներ: Անհետաձգելի հարց դարձավ հին հաստոցները նորերով փոխարինելը և բարձր որակի մասնագետների պատրաստումը: Տասնյակ երիտասարդներ ուղարկվեցին միության տարբեր ֆաբրիկաներ մասնագիտամալու և կատարելագործվելու: Երկրի տարբեր տեղերից Լեռնային Ղարաբաղ եկան բարձրորակ ինժեներներ, ինչպես, օրինակ՝ Ստեփան Շչենկովը (Մոսկվա), Լևոն Ջանոկը (Թիֆլիս) և ուրիշներ: Արդեն երկրորդ հնգամյակի առաջին տարվա վերջին միայն Ստեփանակերտի ֆաբրիկայից 107 հոգի հարվածայիններ

էին: Այստեղ մեկ կգ մետաքսաթել ստանալու համար նախատեսված 4.05 կգ բոժոժի քանակը իջեցվել էր 3.88 կգ³¹: Այնուամենայնիվ, չնայած մետաքսագործները հնգամյակի առաջին տարվա ընդհանուր արտադրանքի պլանը գերակատարեցին 3%-ով, սակայն որոշ գծերով չկատարեցին³², որի պատճառները բացահայտվեցին, և միջոցառումներ ձեռնարկվեցին հաջորդ տարում չկրկնվելու համար:

1934 թ. ապրիլին Ղարաբաղի մետաքսի տրեստը վերանվանվեց Ղարաբաղի մետաքսի արդյունաբերության վարչություն (Ղարմետաքսարդյունաբերություն), որի մեջ ընդգրկվող յուրաքանչյուր ֆաբրիկա իրենից ներկայացնում էր առանձին տնտեսավարկային միավոր: Այդ միջոցառումը ելնում էր հետևյալից. ֆաբրիկաները կտրված էին տրեստից, որի պատճառով էլ վերջինս չէր կարողանում ժամանակին ապահովել հումքով, պահեստամասերով, վառելանյութով, բանվորներն ուշացումով էին աշխատավարձ ստանում և այլն: Վերակառուցումը, որից հետո ֆաբրիկաները դարձել էին ինքնուրույն ձեռնարկություններ, տվեց դրական արդյունք: Արտադրամասերի վարիչները, ազատվելով ֆինանսական հարցերից, վառելանյութ և հումք ձեռք բերելու պարտականություններից, իրենց ուշադրությունը կենտրոնացրին բացառապես արտադրական հարցերի վրա, մեծացավ ֆաբրիկաների դերն ու կշիռը: Բարձրացավ աշխատավորների պատասխանատվությունը արտադրանքի քանակի և որակի նկատմամբ:

Մինչ տրեստի վերակառուցումը բոժոժի տեսակավորումը կատարվում էր տեսակավորման բազայում կենտրոնացված ձևով: Սակայն վերջինս ամբողջ բոժոժի տեսակավորման համար ոչ տեղ ուներ և ոչ էլ միջոցներ, դրա համար էլ հաճախ որակյալ տեսակներն անցնում էին վատ տեսակների տեղ, կամ էլ հակառակը: Բոժոժը սկզբում տեղափոխվում էր տեսակավորման բազա, այստեղից էլ ֆաբրիկա: Այսպես հեռավորությունը կրկնապատկվում էր, կատարվում ավելորդ ծախսեր և ժամանակի վատնում: Փաստորեն, տեսակավորման բազայի գոյությունն ավելորդ էր, ուստի այն լուծարվեց և բոժոժի տեսակավորումը հանձնվեց ֆաբրիկաներին կամ արտադրամասերին:

Այդ ամենի արդյունքում Լեռնային Ղարաբաղի մետաքսագործները երկրորդ հնգամյակի հաջորդ տարիներին նախատեսված պլանները գերակատարեցին: Արտադրանքի որակը բարձրացնելու և ստացած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու համար հաճախակի դարձան մետաքսագործների կոնֆերանսների և արտադրական խորհրդակցությունների հրավիրումը, հայերենով մասնագիտական հրահանգների տպագրումը, ֆաբրիկաների և արտադրամասերի միջև փորձի փոխանակումը և այլն: Սոցմրցումն ընդգրկեց ֆաբրիկաների

բանվորների 92%—ը: Առաջավորների շարքերում էր 293 բանվորներ: Գրեթե կրկնապատկվեց բանվորների աշխատավարձի ֆոնդը և հասավ 1828 հազար ռուբլու³³: Հնգամյակի երրորդ տարում արտահանման համար արտադրվեց 16 տոննա մետաքս, և այլանը կատարվեց 102.9%—ով, որի համար արտաքին առևտրի անդրկովկասյան լիազորության երկրորդ եռամսյակի փոխանցիկ դրոշը և 2000 ռուբլի նվիրատվություն տրվեցին Լեռնային Ղարաբաղի մետաքսագործներին: Այդ ժամանակ Մոսկվայում անցկացված ստուգումների ժամանակ Լեռնային Ղարաբաղի մետաքսի առաջին, երկրորդ և երրորդ խմբերը տվել են 100, իսկ չորրորդ և հինգերորդ խմբերը 85% որակ: Վերջինիս ցածր լինելու հիմնական պատճառը հաստոցների մաշվածությունն էր:

Հաջորդ տարիներին ավելի աշխուժացավ ֆաբրիկաների գործունեությունը: Եվ եթե 1935 թ. արտադրվել է 3.242 հազար ռուբլու արտադրանք, ապա 1936—ին այն հասել էր 5.268 հազարի³⁴: Ընդհանուր արտադրանքի մակարդակն ավելի մեծացավ, երբ 1936 թ. շարք մտավ Ստեփանակերտի ֆաբրիկայի մետաքսագործական արտադրամասը՝ 12 հաստոցով: Այդ նույն թվականին մարզի մետաքսարդյունաբերության այլանը կատարվեց 120.5%—ով և մոտեցավ հնգամյակի վերջին տարվա համար նախատեսված սահմանագծին:

Երկրորդ հնգամյակի վերջին տարիներին ֆաբրիկաներում լայն ծավալ ընդունեց ստախանովյան շարժումը, որի գլխավոր մոտիվը հանդիսացան աշխատանքի արտադրողականության բարձր ցուցանիշների նվաճումը և հայրենիքի հարստության բազմապատկումը: Ֆաբրիկաներում անցկացված ստուգումները պարզել էին բավականին թերություններ, որոնք վերացնելու համար Լեռնային Ղարաբաղի մարզկոմն ընդունեց հատուկ որոշում³⁵: Այդ որոշման իրագործման հետևանքով ստախանովյան շարժումն ընդգրկեց բանվորների մի զգալի մաս: Արդեն երկրորդ հնգամյակի վերջին մետաքսագործ ստախանովականների թիվը հասնում էր 327—ի³⁶:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի արդյունաբերության ստեղծման և նրա հետագա զարգացման գործում կարևոր նշանակություն ուներ էներգետիկ բազայի ապահովման հարցը: Այնինչ մարզը շատ էր ետ մնում էլեկտրաէներգիայի արտադրությամբ, և դա այն դեպքում, երբ դրա համար ուներ մեծ հնարավորություններ: Եթե 1913 թ. արտադրվել է 0.08 միլիոն կվտ էլեկտրաէներգիա, ապա 1928 թ. այն հասել էր 0.29 միլիոնի³⁷: Այդ ճեղքվածքը վերացնելու նպատակով նույն թվականի հուլիսին Կարկառ գետի վրա սկսեց կառուցվել 225 կվտ հզորությամբ էլեկտրակայան, որը շահագործման հանձնվեց 1930 թ.: Այն բավարարում էր քաղաքի բնակչության և արդյունաբերական ձեռնարկու-

թյունների պահանջները: 1930 թ. փոքր հզորության էլեկտրակայաններ կառուցվեցին նաև Շուշիում, Մարտակերտում, Հադրուբում, Մարտունիում և մի քանի խոշոր բնակավայրերում:

Հաջորդ տարում նոր թափ հաղորդվեց Թարթառի հիդրոկայանի շինարարությանը: Մարզկոմի բյուրոն, 1936 թ. հունվարի 10—ին քննարկելով «Թարթառիկի շինարարության մեջ ստախանովյան շարժման մասին» հարցը, նշեց, որ այնտեղ կան 83 ստախանովական շինարարներ՝ Լիպատովը, Բալաշևը, Պետրուշկինը, Մելանչեկոն, Օհանովը, Սարկիսովը և շատ ու շատ ուրիշներ, ովքեր օրվա առաջադրանքները կատարում են 212—533%—ով: Նաև շեշտվեց, որ հիդրոկայանի շինարարությունում տեղ են գտել մի շարք թերություններ. հաջող չէր ընթանում հատկապես շինարարների տեխուսուցումը, վատ էր ուսումնասիրվում առաջավորների փորձը, ցածր մակարդակի վրա էին գտնվում կուլտուր—մասսայական աշխատանքները, կոմունիստներից քչերն էին քայլում առաջավորների շարքերում և այլն³⁸: Հիդրոկայանի շինարարության ընթացքն արագացնելու և տեղ գտած թերությունները վերացնելու համար ձեռնարկվեցին մի շարք կոնկրետ միջոցառումներ:

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին մարզում կազմակերպվել են նաև այլ բնույթի արտադրություններ: Կառուցվել են Ստեփանակերտի փայտամշակման և մեխանիկական արհեստանոցը, որի կահավորման համար Մոսկվայից ստացվեց «Կրաուզե»—ի սխտեմի փականահատիչ փորող և ճնշող մի հաստոց³⁹: Նման արհեստանոցի կարիքը Լեռնային Ղարաբաղում վաղուց էր զգացվում: Մինչ այդ այստեղ փայտը մշակվում էր տնայնագործական եղանակով: Առաջին անգամ հնարավորություն ստեղծվեց ծանր ֆիզիկական աշխատանքը փոխարինել մեքենայական աշխատանքով: Արհեստանոցի դերը մեծ էր նաև նրանով, որ հնարավորություն ստեղծվեց մարզի մետաքսարդյունաբերական ֆաբրիկաների և մյուս արդյունաբերական ձեռնարկությունների հաստոցների նորոգումները կատարել տեղում, պատրաստել հնարավոր մասերը և զգալիորեն կրճատել պարապուրդները:

Մարզի տնտեսական կյանքում որոշ տեղ ուներ ջրաղացքարերի արտադրությունը, որն ուներ վաղեմի ծագում: Ջրաղացքարեր պատրաստվում էին Գանձասարի մոտ գտնվող քարահանքում: Ջրաղացքարերի պատվերներ էին ստացվում ոչ միայն Անդրկովկասի տարբեր շրջաններից, այլև Թուրքիայից և Իրանից: 1928 թ. Լեռնային Ղարաբաղի ժողկոմիտորը իրավունք ստացավ ջրաղացքարեր արտահանել արտասահման, մանավանդ Թուրքիա: Եթե 1924 թ. արտադրվել է 400 ջրաղաց-

քար, ապա 1928 թ. դրանց թիվը կրկնապատկվեց և բերեց բավականին շահույթ: Արդեն հնգամյակի տարիներին ջրաղացքարերի արտադրությունը զգալի վերելք ապրեց:

Նախապատերազմյան տարիներին զարգացավ նաև մարզի տնայնագործությունը: 1926 թ. կազմակերպվեց տնայնագործ արդյունաբերողների ընկերությունը («Գյուղտնայնագործ»), որն իր մեջ ներգրավեց մարզի գրեթե բոլոր տնայնագործ մենաշխատ արհեստավորներին: Ընկերությունը 1930 թ. վերանվանվեց Ղարաբաղի արդյունաբերական միություն («Ղարաբղմիություն»):

Արհեստագործության բնույթը բավականին փոփոխվել էր. տնայնագործ վարպետներն անդամագրվում էին կոոպերատիվներին և հրաժարվում էին տնայնագործական աշխատանքներից: Տնայնագործ վարպետները սկսեցին համոզվել, որ արտելում աշխատելն ավելի շահավետ է, քան անհատապես աշխատելը: Նոր պայմաններում տնայնագործությունն այլևս սպառել էր իրեն: 1936 թ. մարզում գոյություն ունեցած արդյունաբերական 24 արտելներում արդեն ընդգրկված էր 694 արհեստավոր:

Լեռնային Ղարաբաղի կուսակցության մարզկոմը և մարզգործկոմը, 1933 թ. հունիսի 18-ին քննարկելով մարզի արդյունաբերական արտելների կողմից լայն սպառման ապրանքների արտադրության ընդլայնման հարցը, ընդունեցին որոշում սպառկոոպերացիայի ձևերի վերականգնման և լայն սպառման ապրանքների արտադրության ծավալն ընդլայնելու մասին: Առաջարկվեց կարծ ժամկետում «ձեռնամուխ լինել սեփական հումությային հիմունքով ընդարձակել արտադրությունը, ինչպես նոր արտելներ կազմակերպելու, նույնպես և գոյություն ունեցող արտելների արտադրական ուժը մեծացնելու ճանապարհով...»: Որոշումը պահանջում էր լուծել մարզում կաշեհմույթ մթերելու, արտելներին պարենային և արդյունաբերական ապրանքներ մատակարարելու հարցերը, մտցնել խոտանողների հաստիք, վճռական պայքար մղել վերավաճառման միտումների դեմ, վաճառման գները սահմանելիս առաջնորդվել միայն գործող օրենքներով, օգնել և ընդլայնել առևտուրը, արտելներն ապահովել բարձրորակ մասնագետներով, ուժեղացնել ամենօրյա օգնությունն ու ղեկավարությունը և այլն⁴⁰: Այդ որոշումը կարևոր դեր խաղաց մարզի արհեստակցական արդյունաբերության հետագա զարգացման գործում: Արտելները հնարավորություն ստացան լայն կերպով օգտագործել տեղական հումքը և օժանդակել տեղական արդյունաբերության արագ զարգացմանը:

1934 թ. հոկտեմբերին ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի մարզային տեղական արդյունաբերության կոմբինատը (Տեղարդկոմբինատ), որի մեջ մտան Ստեփանակերտի մեխանիկական նոոգոման արհեստանոցը,

փայտամշակման ֆաբրիկան, կղմինդրի և կրի գործարանները, քարի և ավազի հանքերը, Վանքի ջրաղացքարերի հանքը, Շուշիի գորգագործական ֆաբրիկան և արդյունաբերական այլ ձեռնարկություններ⁴¹: Մարզգործկոմի 1937 թ. մարտի 3-ի որոշմամբ մարզի տեղական վարչությանը հանձնվեցին Ստեփանակերտի կարի արհեստանոցը, սննդամթերքի արտադրության կոմբինատը և այլ ձեռնարկություններ: Այսպիսով երկրորդ հնգամյակի վերջին Լեռնային Ղարաբաղի տեղական հումքի բազայի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես և ծանր արդյունաբերության ճյուղին պատկանող առանձին ձեռնարկություններ, միավորվեցին մարզային տեղական արդյունաբերության վարչության մեջ: Դա հնարավորություն տվեց կենտրոնացված ձևով ղեկավարել տեղական արդյունաբերության ձեռնարկությունները և նրանց միջև ստեղծել տնտեսական սերտ կապ ու պայմանավորվածություն: Արտադրությունը կենտրոնացված ձևով պլանավորելն ու ղեկավարելը օգնեցին կրճատել պարապուրդները և հնգամյակի առաջադրանքները կատարել ժամկետից շուտ: Ձեռնարկությունների, դրանց արտադրամասերի, բրիգադների միջև սկիզբ առած սոցիալիստական մրցությունը և ձեռնարկություններում լայն տարածում գտած ստախանովյան շարժումն օգնեցին կրկնապատկել տեղական արդյունաբերության ընդհանուր ծավալը:

Տեղական արդյունաբերության ճյուղերից կարևոր նշանակություն ուներ փայտամշակությունը: 1934 թ. տվյալներով մարզի փայտանյութի ընդհանուր պաշարը կազմում էր 15.557.000 խորանարդ մետր: Լեռնային Ղարաբաղում փայտամշակումը արդյունաբերական ուղու վրա է դրվել միայն խորհրդային իշխանության տարիներին: 1920-ական թթ. վերջին մարզի անտառները տալիս էին տարեկան մինչև 45 հազար խորանարդ մետր շինանյութ և 68 հազար խորանարդ մետր վառելիք-փայտ⁴²: Հնգամյակի տարիներին սղոցարաններ կառուցվեցին Տուսի, Բաղարա գյուղերում և Մարտակերտի շրջանում: Երկրորդ հնգամյակի տարիներին մարզի անտառներից մեծ քանակությամբ շինանյութ էր մատակարարվում Ադրբեջանի մի շարք կահույքի ֆաբրիկաների:

Ընդհանրացնելով առաջին երկու հնգամյակների արդյունքները կարելի է ասել, որ առաջին հնգամյակի վերջին մարզում մետաքսհումքի արտադրությունը հասել էր 49.8 տոննայի, մետաքսի արտադրությունն աճել էր 171.1%-ով, իսկ բանվորների աշխատավարձը՝ 36%-ով⁴³: Հնգամյակի տարիներին կրկնապատկվել էր սպիրտի արտադրությունը, 100%-ով աճել էր կոնյակի-սպիրտի արտադրությունը, իսկ կոնյակի արտադրությունը՝ 218%-ով: Ղարաբղմիտրեստի բանվորների թիվը աճել էր 755, իսկ նրանց աշխատավարձը՝ 125.9%-ով⁴⁴: Հնգամյակում էլեկտ-

րաւենդօհան աճեց 2.7 անգամ, էլեկտրականութիւնից օգտվող ընտանիքների թիվը 1.9 անգամ: Մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորների թիվը հասել էր 2118-ի⁴⁵:

Երկրորդ հնգամյակի տարիներին հաջողություններն ակնառու էին մանավանդ արդյունաբերության տարբեր ճյուղերում: Մետաքսարդյունաբերության մեջ կապիտալ ներդրումներն առաջին հնգամյակի 2524 հազար ռուբլուց երկրորդ հնգամյակում հասել էին 5.304 հազար ռուբլու, իսկ արտադրանքի աճը հնգամյակի վերջում հասել էր 4589 հազար ռուբլու⁴⁶: Երկրորդ հնգամյակում Ղարաբինսովխոզտրեստի ընդհանուր արտադրանքը աճել էր մոտ երկու անգամ, էլեկտրաէներգիայինը 3.2, իսկ տեղական արդյունաբերությունը 1.4 անգամ գերազանցեց 1932 թ. մակարդակը:

Երրորդ հնգամյակի 3.5 տարում մարզի աշխատավորները պայքարում էին արդյունաբերական բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում և պետական տնտեսություններում աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, բերքատվության բարձրացման, հումքի, վառելանյութի, էլեկտրաէներգիայի տնտեսման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և մշակույթը հաջող զարգացնելու ուղղությամբ: Այդ 3.5 տարվա ընթացքում Ստեփանակերտի Բաքվի 26 կոմիսարների անվան ֆաբրիկան վերածվեց խոշոր կոմբինատի, որի բանվորների թիվն անցավ երկու հազարից: Արդեն 1940 թ. մարզում արտադրվեց 98.1 տոննա մետաքս-հունք, 120 հազար քառակուսի մետր կտոր և 25.9 տոննա ոլորաթել⁴⁷: Այդ նույն թվականին Ղարաբինսովխոզտրեստի ձեռնարկություններն արտադրեցին 105.2 հազար դեկալիտր գինի, 1.2 հազար դեկալիտր կոնյակ⁴⁸, իսկ մարզի տեղական արդյունաբերության ձեռնարկությունները 1930 թ. մակարդակը գերազանցեցին 11 անգամ⁴⁹:

4. Մարզի գյուղատնտեսությունը վերափոխման ճանապարհին

Խորհրդային Միությունում սոցիալիստական արդյունաբերության զարգացման պայմաններում նկատելի դարձավ գյուղատնտեսության ետ մնալը: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի մարզում արդյունաբերությունը կրում էր պետական-հասարակական բնույթ, իսկ գյուղատնտեսությունը մասնավոր: Ըստ այն ժամանակվա բարձրիշխան այրերի բացատրության այդ անհամապատասխանությունը իբր կասեցնում էր տնտեսության արագ զարգացումը: Նրանք հորդորում էին, թե սոցիալիստական վերափոխումների իրագործումը

պահանջում է հաստատել միատիպ արտադրահարաբերություններ: Ելնելով դրանից նեպի երկրորդ շրջանում կուսակցությունը առանձնապես սուր դրեց գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման հարցը: Դեռևս 1919 թ. դեկտեմբերի 11-ին չքավորական կոմիտեների համառուսաստանյան առաջին համագումարում արտասանած ճառում Վ. Ի. Լենինը նշել է, որ մանր արտադրության վրա հիմնված գյուղի սոցիալիստական վերակառուցման գործը «ամենից դժվարինն է, բայց և միաժամանակ ամենից կարևորը»: Վլադիմիր Լենինը դեռ այն ժամանակ պահանջում էր այդ ամենաշնորհակալ աշխատանքը կատարելու համար «գյուղում գիտակցություն արթնացնել գյուղացիության աշխատավոր մասի մեջ» և ամենից առաջ «պայքարել հողի հանրային մշակման համար»¹: Նման խոշոր հեղաշրջում կատարելը, այսինքն «մանր, զատ-զատ գյուղացիական տնտեսություններից հողի հանրային մշակման անցնելը», անշուշտ, «պահանջում է երկար ժամանակ», և ոչ մի դեպքում հնարավոր չէ այն «միանգամից կատարել»²: Լենինը նաև նշել է, որ մանր հողագործի վերամշակման, նրա ամբողջ հոգեբանության և նրա հակումների վերամշակման գործը սերունդներ պահանջող գործ է: Մանր հողագործի նկատմամբ այդ հարցը լուծել, այսինքն «առողջացնել, այսպես ասած, նրա ամբողջ հոգեբանությունը, կարող է միայն նյութական բազան, տեխնիկական, տրակտորների ու մեքենաների մասսայական կիրառումը գյուղատնտեսության մեջ, նրա մասսայական էլեկտրիֆիկացումը: Ահա թե ինչը արմատապես ու հսկայական արագությամբ կվերափոխեր մանր հողագործին»³: Նշենք նաև, որ մանր գյուղացիների միավորման և նրանց մասնավոր արտադրությունը ընկերական դարձնելու վերաբերյալ Ֆ. Էնգելսը 1894 թ. գրել է. «...Մեր խնդիրը նախ և առաջ այն է, որ նրանց մասնավոր արտադրությունը և մասնավոր ունեցվածքը դարձնենք ընկերական, բայց ոչ թե բռնի ճանապարհով, այլ օրինակի և այդ նպատակի համար հասարակական օգնություն առաջարկելու միջոցով»⁴:

Խորհրդային Միության գյուղի սոցիալիստական վերափոխման պլանի առանձնահատուկ մասերից մեկը հանդիսանում էր կոոպերացիայի միջոցով գյուղի սոցիալիստական վերափոխումը «երկրի տնտեսությունը, այդ թվում նաև հողագործությունը, փոխադրել նոր տեխնիկական բազայի վրա»⁵: Ասենք, որ վերոնշյալ սկզբունքները կոպտորեն խախտվեցին Խորհրդային Միությունում, որն էլ առաջ բերեց բարոյանյութական մեծ կորուստներ:

1927 թ. տեղի ունեցած կուսակցության 15-րդ համագումարը որոշում ընդունեց երկրում գյուղական անհատական տնտեսություններից կոլեկտիվ տնտեսությունների անցնելու վերաբերյալ, իբր դրանից

էր կախված սոցիալիզմի բախտը Խորհրդային Միությունում: Հավատալի դրան: Հազիվ թէ: Նախ դա լենինյան սկզբունքի կոպիտ խախտում էր, հետո՝ երկրի արդյունաբերության զարգացման համար պահանջվում էին հսկայական միջոցներ, իսկ դրանց զգալի մասը կարող էին ձեռք բերել երկրի գյուղացիներին թալանելու միջոցով: Եվ այդպես էլ արվեց, որին զոհ գնացին միլիոնավոր գյուղացիներ:

Գյուղատնտեսության կոլեկտիվացման ճանապարհին նախ պետք է լուծվեր հողաշինարարության, տեխնիկայի և գյուղատնտեսական գործիքների որոշ մակարդակ: Լեռնային Ղարաբաղում արդեն 1926 թ. հողաշինարարական աշխատանքներն ավարտվել էին 42.000 հեկտարի վրա⁶: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1926 թ. Լեռնային Ղարաբաղում 100 տնտեսությանն ընկնում էր 6.6 գութան, գյուղական բոլոր տնտեսությունների 48%—ը գուրկ էր բանող ամասուններից, իսկ 42%—ն ուներ մեկ-երկու գլուխ⁷: Որպեսզի լուրջ փոփոխություններ տեղի ունենային հացահատիկի արտադրության բնագավառում, պահանջվում էր ամենից առաջ խոշորացնել մանր տնտեսությունները և նրանց ապահովել հողամշակման տեխնիկայով: Այդ ուղղությամբ հաստատուն քայլեր ձեռնարկեցին մարզի վարկային ընկերությունները, որոնց թիվը 1928 թ. հասնում էր 13—ի: Վարկային ընկերությունները գյուղացիներին մատակարարում էին սերմացու, գութաններ և գյուղատնտեսական այլ գործիքներ⁸:

Գյուղերում վիճակը հետզհետե բարդանում էր նրանով, որ հողից և աշխատանքի գործիքներից զուրկ չքավոր գյուղացիների մի մասը ստիպված էր դառնալ գյուղական վարժու աշխատողներ՝ բատրակներ, իսկ մի մասն էլ տեղափոխվում էր քաղաք: Որպես ժամանակավոր երևույթ, թույլատրվեց հողի, այգիների և աշխատուժի վարձակալում: Միևնույն ժամանակ, որպեսզի սահմանափակվի շահագործումը, ուժեղացվեց հարկային քաղաքականությունը, որը հիմնականում կիրառվում էր ունևոր գյուղացիների նկատմամբ, որոնց տվեցին «կուլակ» անունը:

1926 թ. տվյալներով՝ մարզի 152 հազար բնակչության 96%—ը գյուղացիներ էին: Մարզի գյուղական տնտեսությունների 3%—ն էր ապահովված գութաններով: Ավելացնենք նաև այն, որ մարզի գյուղական տնտեսություններն ամեն տարի մեծ վնաս էին կրում բնական պատահարներից: Օրինակ՝ միայն 1926 թ. կարկուտից տուժեց 112 գյուղ, ոչնչացան 15 հազար դեռյալից ցանքս և մարգագետին, 2350 դեռյալից այգի, և ամբողջ վնասը կազմեց 1.450 հազար ռուբլի: Պետությունն ամենից առաջ օգնում էր այն համատեղ գործող տնտեսություններին, որոնք զբաղվում էին բամբակագործությամբ: 1927 թ. Ջրաբերդի շրջա-

նին այդ նպատակով տրվեց 8 շարքացան և 10 ձիաքարշ գութան⁹: Այդ նույն թվականին շրջանում կատարվեց 1067.5 հեկտար բամբակի ցանքս, որը 63.29%—ով գերազանցել էր 1913 թ. մակարդակը: Մարզում ստեղծվեցին մի շարք մեքենայական ընկերություններ, որոնք աստիճանաբար դուրս էին մղում պապենական արտորը: Արդեն 1928 թ. մարզում գործում էր 15 տրակտորային շարասյուն¹⁰, որոնք զգալիորեն նպաստեցին գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականության բարձրացմանը, ինչպես և Մարտունու ու Ջրաբերդի շրջանների հարթավայրային գոտիներում խամ ու խոպան հողերի յուրացմանը: Հենց դրա հաշվին էլ մարզի ցանքատարածությունները 1929 թ. հասցվեցին 37760 հեկտարի, որը 1760 հեկտարով գերազանցեց 1913 թ. մակարդակը¹¹: Գյուղական կոոպերացիան նպաստում էր մարզում արտադրվող գյուղատնտեսական մթերքների կոնտրակտացիայի (պայմանագրային) հետագա զարգացմանը: 1927/28 տնտեսական տարում կոնտրակտացիան ընդգրկեց բամբակի, հացահատիկի, օղու և բոժոժի բնագավառները: Գյուղատնտեսական կոոպերացիան միջոցներ ձեռնարկեց թթի և խաղողի վերամշակման ասպարեզում տնայնագործական ձևը վերացնելու և վերամշակման նոր, կատարելագործված եղանակներ արմատավորելու, արտադրության ընթացքը հանրայնացնելու, այդ բնագավառից կապալառուներին և ունևորներին դուրս մղելու ուղղությամբ: Գյուղացիները պետությունից ստանում էին ավանսավորում, աշխատանքային գործիքներ, տարաներ, թեմու և թոխմաչարի տնկիներ և այլն: Գյուղացիները գործնականում տեսնում և համոզվում էին, որ կոոպերացիան ունի որոշ առավելություններ: Դրա համար էլ կոոպերատիվ մտնելու ձգտումը հետզհետե մեծանում էր և ընդգրկում ավելի լայն մասսաների: 1926 թ. մարզի բոլոր տնտեսությունների (իսկ նրանց թիվը հասնում էր 27 հազարի) 55%—ն ընդգրկված էր կոոպերատիվների մեջ¹²:

1927 թ. նոյեմբերին տեղի ունեցած կուսակցության մարզային կազմակերպության չորրորդ կոնֆերանսը հարց բարձրացրեց՝ լուրջ ուշադրություն դարձնել մարզի տնտեսությունների կոլեկտիվացմանը: Կոնֆերանսը պահանջեց գյուղատնտեսական վարկային ընկերություններում ընդգրկել չքավորներին և բատրակներին, գյուղի աշխատավորներին տրամադրել երկարատև վարկ, արտադրության գործիքներ և մեքենաներ, զարգացնել արտադրական բնույթի կոոպերատիվները, մարզում ստեղծել տրակտորների վերանորոգման արհեստանոց և այլն¹³:

Մարզում գյուղատնտեսական որոշ աշխատանքներ կատարվում էին վարձակալության սկզբունքով: Դա վնաս էր բերում կոոպերատիվներին և գյուղական տնտեսություններին: 1928 թ. որոշվեց արգելել այգիները,

վարելահողերը և խոտհարքները վարձակալությամբ տալը, մասնավաճառ սակավահող և աղքատ գյուղերում: Որոշվեց գյուղական կոմիտեների իրավունքի տակ գտնվող հողերում, այգիներում և խոտահարքներում աշխատանքներն ու բերքի հավաքումը կատարել կոլեկտիվ ձևով, հիմնականում անվարձ և ստացված ամբողջ բերքը հանձնել գյուղական կոմիտեներին: Գյուղական կոմիտեների ֆոնդերից հողամասեր առանձնացվեցին կոլտնտեսություն մտնող չքավորներին տալու համար¹⁵:

1926 թ. դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի գյուղացիության առաջին կոնֆերանսը հարց դրեց արագացնել հողաշինարարական աշխատանքները և ընդլայնել սպառողական կոոպերացիայի շրջանակները¹⁶: Հաջորդ տարվա հոկտեմբերին հրավիրված ԼՂԻՄ-ի չքավորական խմբակների առաջին կոնֆերանսը պահանջեց ուժեղացնել չքավորների և բատրակների հետ տարվող աշխատանքները ու ամեն կերպ պաշտպանել նրանց շահերը:

Լեռնային Ղարաբաղում գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման գործում որոշ դեր խաղացին առաջին կոլեկտիվ տնտեսությունները, որոնց նախադրյալները հանդիսացան կոմունաները: Մարզում առաջին կոմունան ստեղծվել է 1925 թ. Ջրաբերդի շրջանի Կարմիրավանում և կրում էր Ստեփան Շահումյանի անունը: Երկու տարի անց՝ 1927 թ. գարնանը, նման կոմունա ստեղծվել է նաև Մարտունու շրջանի Ամարասի վանքում: Այդ կոմունաներով Լեռնային Ղարաբաղում դրվել էր կոլտնտեսային շարժման հիմքը¹⁷: Սակայն հետագայում պրակտիկան ցույց տվեց, որ աշխատանքի և կենցաղի կազմակերպման մի շարք սկզբունքներ հնարավոր չէր լուծել կոմունաների միջոցով: Ուստի մարզում հրաժարվեցին կոմունաների թվի հետագա ընդլայնումից, և նախապատվությունը տրվեց կոլտնտեսություններին: Արդեն 1927-ի վերջին մարզում կար 13 կոլտնտեսություն, որոնցում ընդգրկված էին 195 գյուղական տնտեսություններ: Կոլտնտեսային շարժման ալիքը հետզհետե տարածվեց մարզի շրջաններում: Արդեն 1928 թ. վերջին մարզում կար 27 կոլտնտեսություն, որոնցում ընդգրկված էր 453 տնտեսություն¹⁸: 1928 թ. նոյեմբերին տեղի ունեցած կուսակցության մարզկոմի 5-րդ կոնֆերանսը ցուցում տվեց ավելի շատ միջոցներ տրամադրել գյուղատնտեսության զարգացման համար, նորոգել բոլոր քյարիիզներն ու ջրանցքները, կառուցել նորերը: Կոնֆերանսն արձանագրեց, որ 1927 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1928 թ. հոկտեմբերի 1-ը արտադրական կոոպերացիաներում ընդգրկված տնտեսությունների թիվը 26.6%-ից հասել էր 55.7%-ի, իսկ սպառկոոպերացիաներում ընդգրկվածների թիվը 18.914 մարդուց հասել էր 22.047-ի:

Կոլտնտեսությունների զարգացման համար պետությունը ցույց էր տալիս օգնություն և ամեն կերպ նպաստում նրա ընդլայնմանը: Այսպես՝ մինչև 1928 թ. վերջը նորաստեղծ կոլտնտեսություններին տրվեց 75 հազար ռուբլու օգնություն, իսկ անհատական տնտեսություններին տրամադրվեց 824 հազար ռուբլու վարկ: Կոնֆերանսը նպատակահարմար գտավ անհատական տնտեսություններին տրված վարկի հաշվին ավելացնել կոլտնտեսություններին հատկացված վարկի չափը, արագացնել հողաշինարարական աշխատանքները, բարելավել կոլտնտեսությունների մասնագիտական սպասարկումը, նոր թափ հաղորդել մեքենայացմանը, կանխել կոլտնտեսությունների տարերային աճը, բարձրացնել աշխատանքի որակը, խոշորացնել կոլտնտեսությունները մեքենայացնելու համար նախատեսված հատկացումները և այլն¹⁹:

1929 թ. մարտին տեղի ունեցած ԼՂԻՄ խորհուրդների 5-րդ համագումարը ցուցում տվեց զարգացնել անասնապահությունը, գյուղատնտեսության զարգացման համար ձեռք բերել նոր մեքենաներ, գործիքներ, որակյալ սերմացու, կիրառել հողագործական առաջավոր մեթոդները, ավելացնել մարզում աշխատող գյուղատնտեսական մասնագետների թիվը, շերամապահությունը զարգացնելու համար առաջիկա երկու տարում մարզի կոլտնտեսություններին, կոոպերատիվներին և անհատական տնտեսություններին հատկացնել 313 հազար թեթնու տունկ, նոր թափ հաղորդել կոլտնտեսային շարժմանը և այլն: Համագումարն աշխատողներին կոչ արեց հացահատիկային տարածությունն ավելացնել 10, բերքատվությունը՝ 7, բամբակի տարածությունը՝ 100, բերքատվությունը՝ 10%-ով²⁰:

ԼՂԻՄ խորհուրդների 5-րդ համագումարի որոշումներն իրագործելու համար կատարվեցին մի շարք գործնական քայլեր: Առանձնակի ուշադրություն էր դարձվում անասնապահության զարգացմանը: Նույն թվականի հուլիսին կազմակերպվեց Գևորգավանի անասնաբուժական կոմունան, որը քիչ դեր չխաղաց մսի արտադրությունը զարգացնելու գործում: 1930 թ. սկզբին մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1.3 անգամ գերազանցեց 1928 թ. մակարդակը²¹: Զգալիորեն գերազանցվեցին զարնանացանի և աշնանացանի պլանները, մթերվեցին նախատեսվածից ավելի միս, հացահատիկ և գյուղատնտեսական այլ մթերքներ: Այնուամենայնիվ, գյուղական տնտեսությունների արտադրական կոոպերացիայի բնագավառում առաջ էին եկել լուրջ թերություններ: Ունևորները շարունակում էին դիմադրել, միջակի մի մասը շարունակում էր տատանվել, բացակայում էր տնտեսության հանրային ձևի կազմակերպման ու վարման փորձը, չափազանց քիչ էր գյուղատնտեսական տեխնիկան, զգացվում էր մասնագետների խիստ

պակաս և այլն: Այդ թերությունները վերացնելու և կոլտնտեսային շարժման մեջ կարգ ու կանոն մտցնելու համար կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմը մշակեց մի շարք միջոցառումներ: Կոլտնտեսային շարժման ընթացքում ձեռք բերված որոշակի փորձը համոզում էր, որ հողօգտագործումը և արտադրության հիմնական միջոցների բանող և ապրանքամթերատու անասուններ, ապրանքային նշանակություն ունեցող այգիներ, գութաններ, օղեթորման կաթսաներ և այլն, հանրայնացումը իբր հանդիսանում է կոլտնտեսությունների անձնական և հանրային շահերի ծուլման հաջող ձև²²: Համաձայն չլինելով հեղինակի այդ տեսակետի հետ ասենք, որ կոլեկտիվացումն իր ամբողջ էությանը աչքակապություն էր, ոչ թե ինչ—որ «շահերի ծուլման հաջող ձև»:

Կոլտնտեսային շարժումը Լեռնային Ղարաբաղում թափ առավ 1929 թ. վերջին եռամսյակում: Մոսկվայի և Բաքվի խոսնակ հանդիսացող կուսակցության մարզկոմը, 1929 թ. հոկտեմբերին դիմելով մարզի բոլոր բնակիչներին, կոմունիստներին և կոնեքիտականներին, հայտարարեց, թե գյուղական տնտեսությունների կոլեկտիվացման թափը մարզում դանդաղ է ընթանում, և որ իբր դասակարգային թշնամին կուլակը, կատաղի հարձակում է կազմակերպում կոլեկտիվացման դեմ: «Սոցիալիստական հիմունքներով վերափոխենք մեր գյուղը, լայնացնենք ցանքադաշտերը, գյուղական տնտեսությունն ուժեղ թափով կոլեկտիվացման ենթարկենք ու հակահարված տանք կուլակի հարձակմանը»,— հորջորջված էր այդ կոչում²³:

Մինչ այդ կուսակցության մարզկոմը չէր շտապեցնում կոլեկտիվացման ընթացքը: Ենթարկելով վերևից իջնող ճնշումներին՝ Լեռնային Ղարաբաղի մարզկոմը ոչինչ չէր խնայում պատվերը ժամանակին կատարելու համար: Նա, շեղվելով կոլեկտիվացման վերաբերյալ կուսակցության ընդհանուր գծից, մարզի աշխատավորներին շտապեցնում էր կոլեկտիվացումն իրագործելու համար և ունևոր տնտեսություններին գրգռում խորհրդային իշխանության դեմ: Դեռ ավելին՝ կատարելով Բաքվից եկող պահանջները՝ Լեռնային Ղարաբաղի մարզկոմը 1930 թ. սկզբին ավելի հստակեցրեց իր անելիքները և բոլոր ուժերը կենտրոնացրեց մարզում կոլեկտիվացումն ավելի շուտ ավարտելու համար: Այդ նպատակով նորաստեղծ կոլտնտեսություններին պետության կողմից տրվում էին ֆինանսական օգնություններ և պահանջում այն օգտագործել նպատակային: Օրինակ՝ 1929 թ. վերջին ամիսներին մարզում նորաստեղծ կոլտնտեսություններին տրվեց 120 հազար ռուբլի օգնություն²⁴: Բացի այդ, կոլտնտեսություններին տրվեցին նաև գյուղատնտեսական մեքենաներ ու աշխատանքային գործիքներ: Այնուհանդերձ,

դանդաղ էր ընթանում կոլեկտիվացումը: 1929 թ. աշնան կեսերին մարզում կազմակերպված 49 կոլտնտեսություններում ընդգրկվել էր գյուղական տնտեսությունների հազիվ 4.8%—ը²⁵:

Ինչ խոսք, կոլտնտեսությունների կազմակերպման նման դանդաղ ընթացքը չէր գուցացնում մարզի և վերադաս կուսակցական կազմակերպություններին ու ղեկավար այրերին: Ելնելով դրանից՝ առաջ քաշվեց մարզում կոլեկտիվացումն արագ ավարտելու հարցը: Բանը հասավ նրան, որ 1929 թ. դեկտեմբերին տեղի ունեցած կուսակցության Մարտունու շրջկոմի պլենումը ավելի հեռուն գնաց և որոշեց մինչև 1930 թ. մարտ ամիսը շրջանը ենթարկել համատարած կոլեկտիվացման: Մի քանի օր անց՝ 1930 թ. հունվարին, համանման որոշում ընդունեց նաև Դիզակի կուսշրջկոմի պլենումը²⁶: Կուսակցության մարզկոմը բավարարվեց նրանով, որ վերոհիշյալ շրջաններում համատարած կոլեկտիվացման ժամկետը երկարաձգվեց մեկ տարով: Կուսակցության մարզկոմը որոշեց 1929 թ. դեկտեմբերի 20—ից մինչև 1930 թ. հունվարի 5—6—ը մարզում անցկացնել գյուղական տնտեսությունների կոլեկտիվացման երկշաբաթյակ, ըստ որում այդ օրերին պետք է կոլեկտիվացման ենթարկվեր 2870 տնտեսություն: Մի քանի օրվա ընթացքում մարզում կազմակերպվեց 28 նոր կոլտնտեսություն՝ 22/7 գյուղական տնտեսությունների ընդգրկումով²⁷: Մեիթիշեն, Նորագյուղ և ուրիշ մի քանի բնակավայրեր ենթարկվեցին համատարած կոլեկտիվացման, իսկ Մայիտակաշենում, Քերթում, Թաղավարդում, Մարտակերտում, Մարտունիում, Դզդալայում և այլ գյուղերում ամեն օր կոլտնտեսություններ էին մտնում տասնյակ տնտեսություններ:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կոլեկտիվացումը խթանելու համար կուսակցության մարզկոմը մշակեց ավելի կոնկրետ պլան՝ մարզի գյուղերում լայնորեն ծավալել սոցիալիստական մրցություն, ավելացնել գյուղատնտեսական մասնագետների թիվը, մարզում կառուցել պանրի գործարան, կոլտնտեսություններին մատակարարել 200 հազար ռուբլի արժողությամբ գյուղատնտեսական մեքենաներ, կոլտնտեսությունների թիվը հասցնել 150—ի, կոլեկտիվացման ենթարկել 3000 անհատական տնտեսություններ, կառուցել 30 նոր և նորոգել 80 հին քյարիիզներ, տրակտորները նորոգելու համար ստեղծել շրջիկ արհեստանոց, գյուղացիներին տրամադրել 2.5 մլն ռուբլու վարկ, կոլտնտեսություններին հատկացնել 100 հազար ռուբլու գյուղատնտեսական մթերքներ, բանբակի ցանքսը հասցնել 1000 հեկտարի և այլն²⁸: Այդ պլանը իրագործելու համար մարզկոմը բնակավայրեր ուղարկեց կուսակցական և պետական մարմիններում աշխատող տասնյակ մարդկանց, ովքեր փորձում էին առաջնորդվել Լենինի հետևյալ ցուցումներ-

րով. հարկավոր են «տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքում այնպիսի մեծագույն հեղաշրջումներ, որոնք վերաբերում են կյանքի ու կենցաղի առավել խոր հիմքերին, այնպիսի հեղաշրջումներ, ինչպես մանր, գատ-գատ գյուղական տնտեսությունից հողի ընդհանուր մշակման անցնելն է, կարող են ստեղծվել միայն տնական աշխատանքով, որ դրանք առհասարակ իրագործել են միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտությունն ստիպում է մարդկանց վերափոխել իրենց կյանքը»²⁹: Այո՛, «վերափոխել կյանքը», բայց ինչպե՞ս, մտրակի և մահակի ուժով:

Երկրում հետ էր մնում հացահատիկի և անասնամթերքի արտադրությունը: Կուսակցական և պետական մարմինները գտնում էին, որ դրա վերացման ուղին գյուղական տնտեսությունների խոշորացումն է և սոցիալիստական վերափոխումը: Դա երբեք էլ համոզիչ չէր: Հիմնական պատճառը թերևս այն էր, որ մանր ապրանքային բնույթ կրող գյուղատնտեսական արտադրությունը, գտնվելով ցածր մակարդակի վրա, չէր կարող օգտագործել գիտության և առաջավոր փորձի նվաճումները, բարելավել տեխնիկայի սպասարկումը: Բացի դրանից, այնքան էլ հեշտ չէր գյուղացիների մանր սեփականատիրական հոգեբանությունը վերափոխել և նրանց ընդգրկել հանրային տնտեսության մեջ: Դա, անկասկած, պահանջում էր որոշ ժամանակաշրջան և նյութատեխնիկական նախադրյալներ: Ավելացնենք, որ դեռևս շատ ցածր էր կոլտնտեսությունների տեխնիկական զինվածությունը, աշխատանքները կազմակերպվում էին անբավարար, հախուռն, ցածր էր արտադրողականությունը, չկային կադրեր ու մասնագետներ: Այս և նման բնույթի բազմաթիվ թերություններ քննադատության ենթարկվեցին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերին տեղի ունեցած պլենումում, և միջոցառումներ մշակվեցին այդ թերությունները վերացնելու ու կոլտնտեսային շինարարությունը հաջող կազմակերպելու համար:

1930 թ. հունվարի 5-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ընդունեց «Կոլեկտիվացման տեմպի և պետության կողմից կոլտնտեսային շինարարությանն օգնություն ցույց տալու միջոցառումների մասին» որոշումը, որտեղ, հաշվի առնելով պայմանների բազմազանությունը և կոլեկտիվացման համար երկրի տարբեր գոտիներում գյուղացիների նախապատրաստվածության ոչ միասնական աստիճանը, ցուցում տրվեց կոլեկտիվացումը հիմնականում ավարտել առաջին հնգամյակի վերջին 1933 թ.: Ըստ կոլեկտիվացման տեմպերի երկիրը բաժանվեց երեք շրջանի: Անդրկովկասում, որը մտնում էր երկրորդ խմբի մեջ, կոլեկտիվացումը պետք է ավարտվեր 1933 թ.: Կուսակցության Կենտկոմի վերոհիշյալ որոշմամբ սկսեցին կոլտնտեսություններն ապահովել գյուղատնտեսական մեքենաներով: Պետությունն իր վրա վերցրեց կոլտնտեսություններ-

րի հողաշինարարության ծախսերը, մեխանիզատորների պատրաստումը և կոլտնտեսությունների տեխնիկական սպասարկումը: Կենտկոմը նպատակահարմար գտավ կոլեկտիվների նկատմամբ սահմանափակման և արտամղման քաղաքականությունից անցնել համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը: Սա կոպիտ և չարամիտ սխալ էր: Նախ ո՞վ էր կոլակը: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում «կուլակը» համեմատաբար ունևոր գյուղացին էր, որ իր ունեցվածքը ձեռք էր բերել հիմնականում իր սեփական աշխատանքով: Նա հաճախ ստիպված էր լինում, այն էլ մեծամասամբ բերքահավաքի ժամանակ, օգտագործել շատ սահմանափակ քանակությամբ վարձու աշխատողներ՝ բատրակներ: Ունևորները (կուլակ), կազմելով ամբողջ երկրի գյուղական տնտեսությունների 4%-ը, տալիս էին երկրում արտադրվող հացահատիկի ավելի քան 20%-ը: Հետևապես, նրանց «վերացնելը» մեծագույն սխալ էր: Խորհրդային իշխանության կողմից ունևորների (կուլակների) նկատմամբ իրագործվող կոպիտ քաղաքականությունը զրգռում էր նրանց և ստիպում դիմել պատասխան գործողությունների: Փաստորեն, ստալինյան բռնատիրությունը երկիրը կանգնեցրեց ողբերգության առաջ:

Լեռնային Ղարաբաղում մի շարք գյուղեր Մարզուշևան, Հաղործ, Մարտունի, Տող, Ասկերան և այլն, ուղարկվել էին նույնիսկ տասնյակ շարասյուններ³⁰, իսկ այլ գյուղեր ուղարկել էին բանվորական խմբեր և զինվորական զորամասեր³¹, որոնք մասնակցում էին կոլեկտիվացման ընթացքին և նաև ահաբեկում մարդկանց: Իսկ որպես քսանհինգհազարական, 1930 թ. սկզբին Լեռնային Ղարաբաղ ուղարկվեց 11 բանվոր³²:

Կոլտնտեսային շինարարության գործում թույլ տրվեցին կոպիտ աղավաղումներ: Ամենից առաջ խախտվեց կոլտնտեսություն մտնելու կամավորականության սկզբունքը և արհեստականորեն շտապողականություն հրահանգվեց: Կատարելով վերադաս մարմինների պահանջները՝ մարզի կուսակցական և պետական իշխանությունները, միջամտելով և օգտագործելով հարկադրանքի մեթոդը, ժամ առ ժամ ուռճացնում էին կոլեկտիվացման թվերը: Այսպես, եթե 1930 թ. հունվարի 25-ի դրությամբ մարզում կոլեկտիվացվել էր գյուղական տնտեսությունների 23%-ը³³, ապա փետրվարի կեսերին մարզում կար 112 կոլտնտեսություն, որոնցում ընդգրկված էր գյուղական տնտեսությունների գրեթե մեկ երրորդը³⁴: Մարզկոմը փետրվարի 7-ին տեղեր ուղարկված գրությամբ զգուշացնում էր առանց համապատասխան աշխատանքներ տանելու ենթաշրջանները և գյուղերը չհայտարարել մասսայական կոլեկտիվացված, և այն կատարել միայն մարզկոմի հրահանգի դեպքում: Մարզկոմը միևնույն ժամանակ պահանջում էր վճռական պայթյալ մղել

կուլակների դեմ, բացատրական աշխատանքների միջոցով գյուղի աշխատավորներին համոզել անհատական տնտեսությունները կուլտնտեսություններում միավորելու առավելությունը և նոր միայն անցնել մասսայական կուլեկտիվացման: Մարզկոմը ցուցում տվեց կուլեկտիվացումն առաջ տանել «դասակարգային ընդլայնված պայքարի պայմաններում», որին պետք է կազմակերպված մասնակցեն բատրակները, չքավորները և միջակները: Մարզկոմը հիշեցնում էր չթուլացնել ձեռք բերված նվաճումները, ամեն կերպ ուժեղացնել կուլտնտեսային շարժումը և կանխել կուլակների կողմից «սեփական արտադրամիջոցների ոչնչացումը»³⁵: Պարզվում է, որ որոշ տեղեր միջակի նկատմամբ գործադրվում էր կոպիտ վարչարարություն: Օրինակ Ղարաբուլաղ, Հացի, Հաղորտի, Մեծ Շեն, Ջրակուս և այլ գյուղերում բռնագրավվել էին նաև միջակ գյուղացիների արտադրամիջոցները, և դա այն դեպքում, երբ Լենինը «բռնությունը միջակ գյուղացիության վերաբերմամբ» համարում էր «իմքնին մեծագույն վնաս»³⁶: Եւ պահանջում էր միջակ գյուղացիներին չխառնել կուլակների հետ և նրանց նկատմամբ չկիրառել կուլակի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը: Հակառակ դեպքում դա կնշանակի «ամենակոպիտ կերպով խախտել ոչ միայն սովետական իշխանության բոլոր դեկրետները և նրա ամբողջ քաղաքականությունը, այլև կոմունիզմի բոլոր հիմնական սկզբունքները...»³⁷:

Կուլտնտեսային շարժման ծավալման ընթացքում թույլ տրված սխալների հետևանքով գյուղում ուժեղացավ դասակարգային պայքարը: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում կուլտնտեսային շարժման մի շարք ակտիվիստներ ենթարկվեցին ահաբեկչության: Օրինակ գոհվեցին Ղզղալայի կուլտնտեսության նախագահ Ասծատուր Հարությունյանը, Մաղավուզի կուլտնտեսության նախագահ Պրտեմ Ղասումյանը: Ահաբեկիչները հասցնում էին այլ բնույթի վնասներ: Մեհթիշեն, Քերթ և այլ գյուղերում հրդեհվեցին կուլտնտեսությունների խոտի դեզերը, Քոչքեկում ջրաղացը, Սպիտակաշենում կալսիչ մեքենան, Աշան, Քյոսալար, Խծաբերդ գյուղերում ծեծելով սպանեցին կուլտնտեսային ակտիվիստների, Սոս, Մաճկալաշեն, Խնուշինակ, Մարտակերտ, Մինգրեյսկ, Լեռնարխ, Քարահունջ և այլ գյուղերում ունևորները փորձեցին հրաժարվել պետությանը հացահատիկ վաճառելուց և այլն: Կուլակները մարդկանց ստիպում էին կուլտնտեսություն մտնելուց առաջ ոչնչացնել իրենց արտադրամիջոցները: Ոչնչացվում էին մանավանդ բանող անասունները և հողամշակման գործիքները: Փետրվարի 8-ին «խորհրդային Ղարաբաղ» թերթում հրապարակվեց մարզային խորհրդի գործադիր կոմիտեի որոշումը, ըստ որի արգելվում էր առանց խորհր-

դային մարմինների թույլտվության անասունների մորթելը և վաճառքը, բերքատու ծառերի կտրելը: Սակայն մի շարք տեղերում խախտվում էր այդ որոշումը, և տեղի էր ունենում արտադրամիջոցների ոչնչացում: Տվյալները հաստատում են, որ միայն խոշոր եղջերավոր անասուններից ոչնչացվեց 10239 գլուխ³⁸, որը մեծ հարված հասցրեց մարզում անասնապահության հետագա զարգացմանը: Դեռ ավելին Աշանում, Սպիտակաշենում, Ղիչքաղում, Մարտակերտում և այլ գյուղերում կուլակները բնակչությանը գրգռում էին խորհրդային մարմինների դեմ: Նրանք խորհրդային իշխանությունից թաքցնում էին հացահատիկ և ապրանքային նշանակություն ունեցող մթերքները: Մարտակերտի չքավորները, ստուգելով ունևոր Իսահակ Հակոբյանի տունը, հայտնաբերեցին 400 փութ հացահատիկ, մեկ արկղ փամփուշտ, 1360 ռ. արծաթ դրամ և 60 փութ բամբակ³⁹:

Կուլակների հակախորհրդային քայլերը կանխելու համար խորհրդային իշխանությունը վերացրեց կուլակաթափ անելու արգելքը և տեղական մարմիններին իրավունք տրվեց կուլակներին արտաքսել իրենց մշտական բնակավայրից հեռու շրջաններ, բռնագրավել արտադրության բոլոր միջոցները և դրանք հանձնել կուլտնտեսություններին: Ահա այսպես կուլակության դեմ պայքարն ընդունեց համընդհանուր բնույթ, որը չափից դուրս ծայրահեղություն էր:

Լայն թափ ընդունած համատարած կուլեկտիվացման հետևանքով ավելի էին խորանում աղավաղումները: «Ձարյա Վոստոկա» թերթը 1930 թ. փետրվարի 12-ի իր առաջնորդողում ուղղակի գրել է, թե Լեռնային Ղարաբաղում համատարած կուլեկտիվացման անցնելու համար «առայժմ չկան ոչ սոցիալական և ոչ էլ տնտեսական նախադրյալներ»: Թերթը զգուշացնում էր, որ չպետք է թույլ տալ վարչական մեթոդներով իրագործել համատարած կուլեկտիվացումը: Կուսակցության մարզկոմի և խորհրդային մարմինների մի շարք պատասխանատու աշխատողներ, անուշադրության մատնելով այդ նախազգուշացումը և կատարելով Բաքվի պահանջները, թույլ տվեցին ավելի կոպիտ սխալներ: Դեռ ավելին կուսակցության մարզկոմի քարտուղար Ավագ Քարամյանը, հողվածով հանդես գալով «խորհրդային Ղարաբաղ» թերթում, խստիվ պահանջեց հանրայնացնել գյուղացիների բոլոր անասունները⁴⁰: Իսկ դա ավելի կոպիտ աղավաղում էր:

Կուլեկտիվացման կուրսը Լեռնային Ղարաբաղում արհեստականորեն արագացնելու հետևանքով 1930 թ. հունվարի 1-ից մինչև նույն թվականի մարտի 10-ը կուլեկտիվացման ենթարկվեց մարզի գյուղական տնտեսությունների 63%-ը: Արդեն մի քանի օր անց մարզում կազմակերպված 163 կուլտնտեսություններում ընդգրկված էր 18793 տնտե-

տություն, որը կազմում էր մարզի գյուղական տնտեսությունների 73.3%-ը⁴¹: Լեռնային Ղարաբաղում պարզապես «ընկել էին թվերի ետևից».— գրել է «Ձարյա Վոստոկա» թերթը⁴²: Առանց հաշվի առնելու Լեռնային Ղարաբաղում հողի պակասությունը, գյուղական տնտեսության բազմազբաղվածությունը և քիչ եկամտաբեր լինելը, գյուղացիների մասսայական սեզոնային արտագնա աշխատանքի գնալը, աշխատանքի շատ ցածր մեքենայացված լինելը և այլն՝ կուսակցության մարզկոմը հարց դրեց մեկ տարվա ընթացքում մարզում ավարտել կոլեկտիվացման կուրսը: Միջակի նկատմամբ թույլ տրված սխալին և բոլոր տեսակի անասունները հանրայնացնելու վերաբերյալ խեղաթուրումներին գումարվեց սեզոնային աշխատանքի մեկնած գյուղացիների նկատմամբ կիրառվող անօրեն տուրքավորումը: Եթե դրանից առաջ վերցնում էին վաստակի 2–10%-ը, ապա 1930 թ. գարնանից այն հասցվեց 60%-ի⁴³: Դա առաջ բերեց մեծ դժգոհություն:

Կոլտնտեսային շարժման ընթացքում թույլ տրված սխալները շտկելու գործում որոշ դեր խաղաց 1930 թ. մարտի 2–ին հրապարակված գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը, որի մեջ հաշվի էին առնված գյուղացիների արտադրական միջոցների հանրայնացման վերաբերյալ առաջարկությունները: Ըստ կանոնադրության՝ հանրայնացման ենթակա էին բանող անասունները, գյուղատնտեսական մեքենաները և տնտեսական նշանակություն ունեցող շենքերը:

1930 թ. մարտի 9–ին և 14–ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը կարևոր որոշումներ ընդունեց կոլտնտեսային շարժման բնագավառում թույլ տրված սխալների բացահայտման և դրանց դեմ մղվող պայքարը կազմակերպելու վերաբերյալ: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. ապրիլի 10–ի որոշմամբ կոլտնտեսությունները երկու տարով ազատվեցին անասնահարկից, բացի այդ, կոլտնտեսությունները պետությունից ստացան ֆինանսական որոշ օգնություն:

Իրենց իսկ եփած շիլան լափելու համար Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը, 1930 թ. մայիսի 20–ին քննարկելով կոլեկտիվացման գործում Լեռնային Ղարաբաղում թույլ տրված սխալների մասին հարցը, ընդունեց բանաձև, ըստ որի նախագծվում էր վերացնել այդ սխալները. աշխատանքից ազատվեցին մարզկոմի առաջին քարտուղար Ա. Քարանյանը, կազմբաժնի վարիչ Գ. Դավթյանը, Ջրաբերդի շրջկոմի քարտուղարը և շրջգործկոմի նախագահը⁴⁴:

Ընդհանրապես, Լեռնային Ղարաբաղում կոլեկտիվացման ընթացքում թույլ տրված սխալներն ուղղվեցին, որի պատճառով էլ տասնյակ կոլտնտեսություններ ցրվեցին: 1930 թ. հուլիսի 31–ի դրությամբ մարզում մնացել էր 114 կոլտնտեսություն՝ 4286 տնտեսության ընդգրկու-

մով⁴⁵: Իսկ դա կազմում էր մարզի գյուղական տնտեսությունների 15%-ը: Այն փաստը, որ մի քանի ամսվա ընթացքում մարզի կոլտնտեսություններից մաղվեցին ավելի քան 14 հազար գյուղական տնտեսություններ, երբեք էլ չի բացատրվում միայն միջակի տատանվողականությամբ: Լեռնային Ղարաբաղում սխալներ թույլ տրվեցին ոչ միայն «համատարածի» շրջանում, այլ նաև սխալների ուղղման ընթացքում: Մարզի կուսակցական և խորհրդային մի շարք ղեկավարներ սկսեցին վարչական կարգով ցրել այն կոլտնտեսությունները, որոնք կազմակերպվել էին «համատարածի» ընթացքում, նույնիսկ արգելեցին նոր անդամներ ընդունել կոլտնտեսություններում: Մարաղայում, Եմիշճանում, Մարտունիում, Հաղորտիում և մարզի այլ բնակավայրերում հրաժարվեցին կոլտնտեսություններից դուրս եկած տնտեսություններին տալ հող, սերմացու, բանող անասուն, իսկ Սեհտիշենի, Դուզե ճարտարի, Խանցքի, Դղալալայի և այլ տնտեսություններ կոլտնտեսությունների անդամներին ետ վերադարձրին միայն կթան կովերը⁴⁶: Համանման սխալներ թույլ տրվեցին նաև Բալլուջա, Գյուլաթաղ, Ղավախան, Ղարաղշլաղ, Չլդրան, Թաղավարդ և այլ գյուղերում: Ջրաբերդի շրջանում, մանավանդ բամբակաբուծությամբ զբաղվող կոլտնտեսություններում, կատարվեցին նոր շեղումներ, որի պատճառով շատ դանդաղ էին առաջ գնում բամբակահավաքը, աշնանացանը և մրգահավաքը: Դրա համար էլ աշխատանքից ազատվեցին շրջկոմի քարտուղար Երեմ Կարդանյանը և այլ ղեկավարներ: Լուրջ թերությունների համար աշխատանքից ազատվեց նաև «խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր Ս. Վարդանյանը:

Լեռնային Ղարաբաղում կոլեկտիվացման ընթացքում թույլ տրված սխալների շտկման և կոլտնտեսականների հետագա ամրապնդման գործում կարևոր դեր խաղացին մանավանդ մարզի կոլտնտեսությունների առաջին համագումարը և հունիսի 20–22–ին տեղի ունեցած կուսակցության մարզկոմի պլենումը: Կոլտնտեսականների առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1930 թ. մայիսի 25–26–ը, անհրաժեշտ համարեց գյուղում ծավալել կուլտուր–լուսավորական լայն աշխատանք, ամրապնդել կարգապահությունը, «աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար ստեղծել նյութական շահագրգռվածություն», իսկ «դրա համար,— ինչպես ասված է ընդունված բանաձևում,— պետք է լայնորեն օգտագործել... մրցությունը, ուժեղացնել քննադատությունն ու ինքնաքննադատությունը, կոլտնտեսային շինարարության համար բարձրացնել խորհրդրդների պատասխանատվությունը»: Համագումարը պահանջեց ուշադրություն դարձնել կոլտնտեսային կադրերի պատրաստմանը, լայն ճանապարհով պայքարել կու-

լակների և հակախորհրդային թափփուկների դեմ, կոլտնտեսություններից դուրս վճարել անհարազատ տարրերին, ուժեղացնել բատրակաչքավորական խմբակների ամրապնդման աշխատանքները: Համագումարը նպատակահարմար գտավ կոլտնտեսություններում սկսել շինարարական աշխատանքները, հանրայնացնել այգիները և նախապատրաստական աշխատանքներ տանել անասնապահական ֆերմաներ ստեղծելու համար⁴⁷: Նույն թվականի հունիսին գումարված հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարը, էլնելով մարզի կոլտնտեսականների առաջին համագումարի մշված որոշումից, քննարկեց կոլտնտեսային շինարարության հեթոթական խնդիրները և երաշխավորեց մարզի կոլտնտեսություններում անցնել գյուղատնտեսական արտելի նոր, օրինակելի կանոնադրության կիրառմանը: Իսկ կուսակցության մարզկոմի հունիսին տեղի ունեցած պլենումը, հանգամանորեն քննության առնելով կոլտնտեսային շարժման ընթացքում տեղ գտած շեղումների պատճառները և կոլտնտեսությունների թվի նվազեցումը կանխելու ուղիները, որոշեց մարզի բոլոր գյուղերում ուժեղացնել մասսայական-քաղաքական աշխատանքը, ամրապնդել կարգապահությունը, լուրջ ուշադրություն դարձնել աշխատանքի կազմակերպմանը, կատարել տարված աշխատանքների ճիշտ հաշվարկ, ուշադրություն դարձնել բատրակաչքավորական խմբերին և գյուղական խորհուրդների աշխատանքներին: Պլենումն ընդգծեց, որ մարզի կոլտնտեսությունների ամրապնդման համար տարվող բոլոր աշխատանքները, կոլտնտեսությունների արտադրական պլանների կատարումը, աշխատանքային կարգապահության ամրապնդումը և կոլտնտեսային շինարարության հետ կապված բոլոր հարցերը պետք է լուծվեն սոցմրցության միջոցով: Արձանագրեց նաև, որ թույլ տրված սխալներն արագորեն շտկելու հետևանքով մարզում զարմանացանի պլանը կատարվել է 110.8%-ով, կոլտնտեսություններում ցանվել են 11.787 հեկտար զարմանացան հացահատիկային և տեխնիկական կուլտուրաներ նախորդ տարվա 9.031 հեկտարի դիմաց, սերմերի գտումը կատարվել է 122, իսկ թունախեղումը՝ 104%-ով, մտցվել է ցանքաշրջանառություն և շարքային ցանքս, կազմակերպվել են կարճատև դասընթացներ, ձեռք են բերվել պակասող բոլոր սերմերը և այլն: Պլենումը պահանջեց կազմակերպված ավարտել բերքահավաքը և նախապատրաստվել աշնանացանին, օգնություն ցույց տալ չքավորներին, արագացնել գյուղատնտեսական մեքենաների նորոգման շրջիկ արհեստանոցների ստեղծման աշխատանքները, Մարտունու և Ջրաբերդի շրջաններում կազմակերպել տրակտորների նոր շարասյուներ և կոլտնտեսականներին գյուղատնտեսական գիտելիքներ սովորեցնելու համար շրջաններում կազ-

մակերպել դասընթացներ⁴⁸: Պլենումից մի քանի օր անց «խորհրդային Ղարաբաղը» հաղորդել է, թե մարզում զարմանացանի պլանը կատարվել է 114, իսկ բանքակացանի պլանը՝ 103%-ով⁴⁹:

Վերոհիշյալ որոշումների իրագործմամբ, փաստորեն, վերջնականապես կասեցվեց կոլտնտեսությունների թվի նվազումը, և կոլտնտեսային շարժման մեջ առաջ եկավ նոր վերելք: Օրինակ՝ 1930 թ. սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի վերջը մարզում կազմակերպվեցին 30 նոր կոլտնտեսություններ: Ասենք նաև, որ մարզում հացամթերման պլանը կատարվեց 104, իսկ աշնանացանը՝ 129%-ով⁵⁰: Մարզում մթերվեց 46841 փութ հացահատիկ: Հատկանշական է այն, որ մարզի կոլտնտեսությունները պլանային 3100 փթի դիմաց պետությանը վաճառեցին 12599 փութ հացահատիկ՝ պլանը կատարելով 460.2%-ով⁵¹:

Ստորև բերված աղյուսակում ցույց է տրված կոլեկտիվացման ընթացքը մարզում 1931 թ. հունվարի 1-ի դրությամբ⁵²:

Շրջանները	Տնտեսությունների թիվը	Կոլտնտեսությունների թիվը	Կոլտնտեսություն մտած կոլտնտեսականների թիվը	Մեկ կոլտնտեսության կոլտնտեսականների միջին թիվը	Տոկոսը
Մտեփանակերտ	6000	37	1349	36	22.5
Շուշի	882	10	160	16	18.1
Դիգակ	5598	22	365	16	6.5
Ջրաբերդ	6246	41	1173	28	18.8
Մարտունի	6900	21	1689	80	24.5
Ընդամենը մարզում	25626	131	4736	36	18.5

Նշված 131 կոլտնտեսություններից 25-ը հողի համատեղ մշակման ընկերություններ էին⁵³:

Բերված աղյուսակից երևում է, որ Լեռնային Ղարաբաղում կոլեկտիվացումը համեմատաբար հաջող էր ընթացել Մարտունու, Ջրաբերդի և Մտեփանակերտի շրջաններում: Դա բացատրվում է մի քանի պատճառներով. այդ շրջաններում գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնությունը բարձր էր, համեմատաբար զարգացած էր մանրապրանքային արտադրությունը: Մարզում բանբակ և գվայուլա (կաուչու-

կաբեր բույս) ցանվում էր միայն Ջրաբերդի շրջանում, իսկ բոլոր թե-
նիների և խաղողի այգիների 80%-ից ավելին գտնվում էր Մարտունու
և Ստեփանակերտի, մասամբ էլ Հաղուրթի շրջաններում: Ղարգինտրես-
տը սպիրտի հումքը թթի օղին և գինին, առաջին հերթին գնում էր
կոլտնտեսություններից: Անհատական տնտեսությունները չէին կարո-
ղանում իրացնել իրենց արտադրանքը. դրա համար հնարավորություն
չէր ընծեռվում նրանց, հետևապես մեծ վնաս էին կրում: Պետությունը,
օգնելով կոլտնտեսություններին, տալիս էր գյուղատնտեսական մեքե-
նաներ և աշխատանքի գործիքներ, սերմացու, իսկ բամբակի դաշտերը
և խաղողի այգիները բուծում էին հիվանդություններից ու նպաստում
դրանց բերքատվության բարձրացմանը: Ահա թե ինչու մանր ապրան-
քային արտադրությամբ զբաղվող գյուղացիների համար ծեռնտու էր
մտնել կոլտնտեսություն և ազատվել քազմաթիվ հոգսերից: Մարզում
խաղողի և թեֆնու այգիները հանրայնացնելու վերաբերյալ առաջար-
կություններով հանդես եկան այն գյուղացիները, ովքեր ունեին հա-
մանման այգիներ: Համեմատաբար արագ էին մեծանում այն կոլտնտե-
սությունները, որոնք զբաղվում էին բամբակի արտադրությամբ: Արդեն
1931 թ. հուլիսի 1-ի դրությամբ բամբակացան շրջանում կոլտնտեսու-
թյուններ էր մտել գյուղական տնտեսությունների 54%-ը⁵⁴, ինչը
19%-ով բարձր էր մարզի միջինից և 14%-ով հանրապետության միջի-
նից: Լեռնային Ղարաբաղի մարզկոմը, նամակով դիմելով մարզի շրջ-
կոմներին, կուսկոմներին, կազմակերպություններին և կուսանդամնե-
րին, առաջարկեց 1931 թ. մարզում կոլետիվացումը հասցնել 42.2%-ի,
բամբակի ցանքսի պլանը կատարել 100.2%-ով, իսկ հացահատիկային
կուլտուրաների ցանքատարածությունն ավելացնել 48%-ով և ունեզր-
կել կուլակներին⁵⁵:

Առաջնորդվելով ԽՍՀՄ խորհուրդների 6-րդ համագումարի և Լեռնա-
յին Ղարաբաղի մարզկոմի 1931 թ. ապրիլին տեղի ունեցած պլենումի
որոշումներով՝ մարզի գյուղաբնակ աշխատավորները նոր ոգևորու-
թյամբ էին աշխատում: Կոլտնտեսություններում ամրապնդվեց աշխա-
տանքային կարգապահությունը, կատարելագործվեց բերքի բաշխման
կարգը, ուժեղացվեց պայքարը կուլակների և հանրային սեփականու-
թյունը հափշտակողների ու փչացնողների դեմ, բարելավվեց
հաշիվ-հաշվարկը կոլտնտեսություններում, սկսեցին կոլտնտեսու-
թյուններն ապահովել գործունյա կադրերով ու մասնագետներով, դա-
սընթացներ կազմակերպվեցին անասնապահների, հացագործների և
այգեգործների համար, աշխուժացվեցին վարկավորող և մատակարար-
ող ցանցերի աշխատանքները, չքավոր և միջակ գյուղացիներն ավելի
համախմբվեցին կուսակցական կազմակերպությունների և գյուղական

խորհուրդների շուրջը: Բնականաբար, կոլտնտեսությունների միջև
ծնունդ առան օգոմբությունն ու փորձի փոխանակումը, կայուն հիմքե-
րի վրա դրվեցին կոլտնտեսություններում սկսված շինարարական աշ-
խատանքները և մի շարք միջոցառումներ ծեռնարկվեցին բնակչության
կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու համար:

Ամենից առաջ հոգ տարվեց գարնանացանը ժամկետից շուտ և որա-
կով կատարելու ուղղությամբ: Ստեղծվեց գարնանացանի աշխատանք-
ները ղեկավարող մարզային շտաբ, որի հրամանի համաձայն մարտի
22-ից մինչև ապրիլի 1-ը մարզում անցկացվեց գարնանացանի արշավ:
Այդ օրերին 40 հոգի Ստեփանակերտից և 22 հոգի շրջկենտրոններից
մոբիլիզացվեցին և ուղարկվեցին գյուղերը գարնանացանի աշխա-
տանքները կազմակերպելու համար⁵⁶:

Մարզի կոլտնտեսություններում տարեցտարի ավելանում էր տրակ-
տորների և կալսիչների թիվը: Արդեն 1931 թ. գարնանը մարզում տրակ-
տորների թիվը հասնում էր 40-ի⁵⁷, որոնց օգնությամբ մի քանի օրվա ըն-
թացքում զերակատարվեց հացահատիկային կուլտուրաների գարնա-
նացանի պլանը, իսկ ապրիլի 28-ից մինչև մայիսի 12-ը՝ 13 օրում, 2771
հեկտար բամբակի պլանի դիմաց կատարվեց 3060 հեկտար⁵⁸: Հաջողու-
թյամբ էին ընթանում նաև կոլտնտեսությունների ամրապնդման ուղղու-
թյամբ տարվող աշխատանքները: Մինչև 1931 թ. աշնան կեսերը մարզի
գյուղական բոլոր բնակավայրերում ստեղծվել էին կոլտնտեսություն-
ներ: Արդեն նոյեմբերի վերջին մարզում կար 224 կոլտնտեսություն,
որոնցում ընդգրկված էր գյուղական տնտեսությունների 40.3%-ը: Այդ
նույն թվականին պետությանը վաճառված 2678117 փութ բամբակից
1296091 փութը բաժին էր ընկնում մարզի կոլտնտեսություններին⁵⁹:

Երկու-երեք տարվա փորձը ցույց տվեց, որ մանր կոլտնտեսություն-
ներն իրենց չէին արդարացնում: Ընդունվեց կոլտնտեսությունները
խոշորացնելու կուրս: Այն բնակավայրերը, որոնք ունեին մինչև 20-30
տնտեսություն և կազմակերպել էին կոլտնտեսություն, միացվեցին
հարևան բնակավայրի կոլտնտեսությանը: Դրա համար էլ կոլտնտեսու-
թյունների թիվը կրճատվեց, և 1932 թ. վերջին մարզում դրանց թիվը հա-
սավ 210-ի, որոնցում ընդգրկված էր գյուղական տնտեսությունների
46%-ը⁶⁰: Այդ ժամանակ մարզի բոլոր գյուղական տնտեսությունների
ցանքերի 44.1%-ը պատկանում էր կոլտնտեսություններին⁶¹:

Կոլտնտեսությունները ամրապնդելու, նրանց արտադրողականու-
թյունը բարձրացնելու, գործունեության շրջանակներն ընդլայնելու և
գյուղերի վերափոխումներին հաջող ընթացք տալու համար 1931 թ. հու-
նիսի 3-ին մարզային հողվարչությունը որոշեց կոլտնտեսություններում
ստեղծել խոզաբուծական և կաթնապրանքային ֆերմաներ: Կովաբու-

ծական ֆերմաներ ստեղծվեցին 50 գլխի, իսկ խոզաբուծական ֆերմաներ՝ 25 խոզամերուկի առկայության դեպքում: Մարզի շրջգործկոմներից հանձնարարվեց մինչև հունիսի 15-ը ավարտել ֆերմաների կազմակերպումը և որպես անասնաշենքեր օգտագործել կուլակներից խլված շիմությունները⁶²: Արդեն մեկ տարի անց մարզում կային 62 խոզաբուծական (11.000 գլխով), 34 կովաբուծական (4500 գլխով) և 5 մատաղաշների ֆերմաներ⁶³: 1932 թ. աշնանը հանրայնացվել էր մարզի բոլոր տեսակի անասունների 7.1%-ը⁶⁴:

Հանրային անասնապահության զարգացումը պահանջում էր ստեղծել կերային ամուր բազա: Միայն խոտաբույսերի սերմեր ձեռք բերելու համար հատկացվեց 100.000 ռ.⁶⁵: 1932 թ. մարզում ցանվել էր 794 հա սիլոսային կուլտուրաներ և 1964 հա խոտաբույսեր⁶⁶:

Կոլտնտեսությունների հաշվետու ժողովները դարձել էին կոլտնտեսությունների զարգացումը խթանող միջոցառումներից մեկը: Ժողովներում վեր էին հանվում տեղ գտած թերությունները և դրանք վերացնելու համար նշվում կոնկրետ ուղիներ: 1932 թ. փետրվարի 20-ին Կուսապատի «Տրուդ» կոլտնտեսության հաշվետու ժողովում կոլտնտեսականներ Թևոս Գասպարյանը, Հրանտ Երիցյանը և ուրիշներ իրենց ելույթներում բացահայտեցին, որ կոլտնտեսության անասունները վատ են խնամվում, ոմանք կոլտնտեսություն են մտնում իրենց արտադրամիջոցները ոչնչացնելուց հետո, կոլտնտեսությունում չի գործում բրիգադային համակարգը, աշխատանքները կատարվում են անորակ, բացակայում է սոցմրցությունը և այլն: Մի կոլտնտեսական՝ Ակոբջանը, ընդգծեց, որ Կուսապատը իր գոյության ընթացքում ոչ մի տարի 7000 փուխ հացահատիկ չի ստացել, մինչդեռ այդքան ստացել է 1931 թվականին⁶⁷: Ժողովները նույն ձևով և նույն բովանդակությամբ էին ընթանում նաև մարզի մյուս կոլտնտեսություններում:

Կոլտնտեսությունների կազմակերպչական աշխատանքների ամրապնդման բաղադրիչ մաս էր հանդիսանում կոլտնտեսային առևտրի կազմակերպումը: Միջոցներ հատկացվեցին, և 1932 թ. սկսվեց Ստեփանակերտի կոլտնտեսային շուկայի կառուցումը⁶⁸: Մարզի տարբեր բնակավայրերում բացվեցին մի շարք կոլտնտեսային խանութներ և կրպակներ:

Առանց համապատասխան կադրեր ու մասնագետներ ունենալու դժվար էր վարել կոլտնտեսային գործերը: Մարզի կոլտնտեսությունների համար մասնագետներ և կադրեր պատրաստելու գործում կարևոր դեր խաղաց Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, որը բացվել էր 1923 թ. նոյեմբերի 6-ին⁶⁹: 1927 թ., մարզային ժողովնախորհի որոշմամբ, Ստեփանակերտում բացվեցին մեքենավարներ և տրակտո-

րիստներ պատրաստելու ամենամյա դասընթացներ⁷⁰: 1930 թ. Շուշիում բացվեցին հաշվետարների եռամսյա դասընթացներ: Նույն թվականի հունիսին մարզկոմի բյուրոն անհրաժեշտ համարեց մարզի հիմնարկություններից մոբիլիզացնել հաշվետարներ և ուղարկել կոլտնտեսություններ: 1930 թ. հուլիսի 1-ից երկամսյա դասընթացներ կազմակերպվեցին կոլտնտեսային նախագահներ, նորմավորողներ և հրահանգիչներ պատրաստելու համար⁷¹: 1931 թ. սեպտեմբերին կազմակերպվեցին 10-օրյա դասընթացներ բրիգադավարներ պատրաստելու համար: Այլ տեղերում աշխատելու համար ևս կազմակերպվեցին տարբեր բնույթի դասընթացներ:

Այդ տարիներին կոլտնտեսություններն ամրապնդելու համար կարևոր դեր խաղաց նաև բանվորական շեֆությունը: Արձակուրդներին կամ բերքահավաքի ժամանակ արդյունաբերական ձեռնարկություններից անհատական կամ խմբով բանվորներ էին ուղարկվում կոլտնտեսություններ՝ աշխատանքներին օգնելու համար: Նրանք հաճախ իրենց հետ բերում էին աշխատանքային գործիքներ և ֆինանսական միջոցներ: Մարզի կոլտնտեսությունները, բացի անձնական նախաձեռնություններից, օգնություն էին ստանում արդյունաբերական ձեռնարկություններից, որտեղ աշխատում էին համաերկրացիներ: Օրինակ՝ Բաքվի «Կարմիր աստղ» էլեկտրակայանը Լախիջևանի կոլտնտեսության համար, որպես նվեր, ուղակեց մեկ կալսիչ և գուբաններ:

Մարզային ղեկավար մարմինների, մասնավոր մարզկոլտնտմիության ուշադրության կենտրոնում էին գտնվում կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման, հաշվառման և վարձատրման հարցերը: 1930 թ. օգոստոսին Մարտունու շրջանի Դուզե ճարտարի կոլտնտեսությունում տեղի ունեցավ շրջանի կոլտնտեսային ղեկավար աշխատողների, մասնագետների և ակտիվիստների խորհրդակցություն, որը մի շարք միջոցառումներ մշակեց կոլտնտեսություններում աշխատանքները հաջող կազմակերպելու համար:

Ընդհանրապես մարզում ղեկավար կադրերի պակասը մեծ էր: Կենտրոնի որոշման համաձայն՝ գյուղում ղեկավար կուսակցական և կոլտնտեսային աշխատանքի ուղարկվեցին ավելի քան 25 հազար առաջավոր բանվորներ: Լեռնային Դարաբաղ եկած քսանհինգհազարականները մեծ դեր խաղացին մարզի կոլտնտեսությունների ամրապնդման գործում: Նրանցից Եղիշե Օհանյանը վարեց մի շարք պաշտոններ՝ Առաքել գյուղի, հետո՝ Մարտակերտի գյուղատնտեսական վարկային ընկերությունների նախագահ, ապա Մարտունու կուսշրջկոմի քարտուղար, հետագայում Գևորգավանի «Սոցիալիզմի հաղթանակ» պետտնտեսության տնօրեն, Մարտունու ՄՏկայանի քաղբաժնի պետ, իսկ

Բախշի Մեսրոբյանը ընտրվեց Ղուզե ճարտարի կոլտնտեսության նախագահ: Կոլտնտեսությունների լավ կազմակերպիչներ էին նաև Հաղորտու և Մարգսաշենի կոլտնտեսությունների նախագահներ Բախշի Ավանեսյանը և Մարգարա Մարգսյանը: Կոլտնտեսությունների կազմակերպման և ամրապնդման գործում կարևոր դեր խաղացին Մարտակերտի կուշրջվածի քարտուղար Երեն Ներսիսյանը, մարզի առաջին ՄՏկայանի տնօրեն Արամ Բաբայանը, Թալիշի կոլտնտեսության կուսկազմակերպության քարտուղար Ստեփան Ստեփանյանը և ուրիշներ: Չնայած մարզում քիչ էին գյուղատնտեսական կադրերը, սակայն եղածներն էլ աշխատում էին մեծ ակտիվությամբ: Մարզկոլտնտնության գլխավոր գյուղատնտես Արսո Հովհաննիսյանը, գլխավոր գոտեխնիկ Արտո Արագյանը, մարզհողբաժնի գլխավոր գյուղատնտես Սամսոն Բարսեղյանը (Բարսե) և ուրիշներ ոչինչ չէին խնայում գյուղատնտեսության զարգացման, կոլտնտեսությունների կազմակերպատեխնիկական ամրապնդման համար: Այդ տարիներին մարզում ղեկավար նվիրյալ գործիչներ են հանդիսացել Արմենակ Շաբուրովը, Մուկուչ Արզանյանը, Ալեքսանդր Պետրոսյանը, Լազո Գրիգորյանը, Ներսես Ղուկասյանը, Ավետիս Գալստյանը, Սմբատ Բաղդասարյանը, Արմենակ Գրիգորյանը, Միրզա Աղամյանը և ուրիշներ⁷²:

Լեռնային Ղարաբաղի մարզում քիչ չէին օրինակելի կոլտնտեսությունները: Մարտակերտի շրջկենտրոնի կոլտնտեսության մեջ 1932 թ. աշնանն ընդգրկված էր 227 տնտեսություն: Այդ կոլտնտեսությունը Բաբվում կազմակերպեց տոնավաճառ, մասնակցեց նաև Թիֆլիսում կազմակերպված տոնավաճառին: Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղի «Աշխատանք» կոլտնտեսությունը 1931 թ. համեմատությամբ 1932 թ. աշխտին երկու անգամ ավելի մթերքներ բաշխեց: Մարզի առաջավոր կոլտնտեսություններից էին նաև Ղուզե ճարտարի, Սեհտիշենի, Շեխերի, Սխտորաշենի, Տրախտիկի, Ազոխի, Շովատեղի, Շոշի, Դաշբուլաղի, Ղզղալայի և այլ կոլտնտեսություններ:

Մարզում գյուղատնտեսության զարգացման և վերափոխման գործում կարևոր դեր խաղացին նաև պետական տնտեսությունները: Առանձնապես պետք է նշել Լիսագորի կոլվարուծական համամիութենական ցեղային պետտնտեսությունը, որը 1931 թ. ուներ 4463 գլուխ անասուն⁷³: Այն մարզի կոլտնտեսություններին մատակարարում էր ցեղային անասուններ և տարածում անասնապահության բնագավառում կուտակած իր փորձը:

Մարզում երկրորդ խոշոր անասնապահական պետտնտեսությունը՝ «Սոցիալիզմի հաղթանակ» անունով, ստեղծվել է 1930 թ. աշնանը Մարտունու շրջանի Գևորգավան կոչված տեղամասում: Նույն թվական

մին Մարտակերտի շրջանի Մարգուշևանում ստեղծվեց կաուչուկի պետտնտեսությունը, որը 7 հազար հեկտարի վրա ցանում էր գվայուլա: Հետագայում բնական հումքի այդ բազայի վրա Մարտակերտի շրջանի Մատաղիս ավանում կառուցվեց բնական կաուչուկի փորձնական գործարան:

Ստեփանակերտից ոչ շատ հեռու գտնվող Արմենավանի տեղամասում 1928 թ. կազմակերպվեց Բուսաբուծության համամիութենական ինստիտուտի տեսակների տեղամաս: Հաջորդ տարում տեսակների փորձնական հողամասի այդ վայրը տեղափոխվեց Սուևջիկա բնակավայրի տարածքը: Փորձերի մի մասը կատարվում էր Սուևջիկայից ոչ հեռու գտնվող Խոջալլու գյուղի տարածքում: Այդ փորձադաշտերի բազայի վրա 1931 թ. ստեղծվեց Սուևջիկայի փորձնական կայանը, որը հետագայում սկսեց աշխատանքներ տանել անասնաբուծական պետտնտեսության հետ և նրա տարածքում ուսումնասիրել մարզի հողագործությունը⁷⁴:

Ինչպես արդեն ակնարկվել է, իր համար հումքի կայուն բազա ստեղծելու նպատակով Ղարաբնտրեստը 1931 թ. Մարտունիում ստեղծել էր N1 խաղողագործական պետտնտեսությունը: Նույն թվականին սկսեց կազմակերպվել նաև Խոջալլուի խաղողագործական պետտնտեսությունը, որը հետագայում դարձավ խառը պետտնտեսություն, որտեղ աճեցվում էին թոխմաշարի և պատվաստված թթենիների տնկիներ: 1931 թ. վերջին ստեղծվեց Նավթախանի մեղվաբուծական պետտնտեսությունը, որը հաջորդ տարվա ամռանն ուներ 816 մեղվաբնտանիք: Այն մեծ օգնություն էր ցույց տալիս հարևանությամբ գտնվող Սղնախի, Ազնեքի, Չանախու, Շոշի և Նորագյուղի կոլտնտեսություններին ու մեծատնտեսություններին: 1932 թ. մեղվաբուծական պետտնտեսություններ ստեղծվեցին նաև Մարտակերտի և Հաղորթի շրջաններում: Նույն թվականի վերջին ստեղծվեց Արմենաբաղի պտղաբուծական պետտնտեսությունը: Խառը պետտնտեսություն ստեղծվեց Տողում: 1933 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում կար 8 պետտնտեսություն, որոնցից մեկը մտնում էր Ղարաբնտրեստի սիստեմի մեջ:

Լեռնային Ղարաբաղում կոլտնտեսային մասնագետների և կադրերի պատրաստման գործում էական դեր են խաղացել մասնավաճառ մեքենատրակտորային կայանները (ՄՏԿ): Նորաստեղծ կոլեկտիվ տնտեսությունները կարիք ունեին տրակտորների, կոմբայնների, շարքացանների և գյուղատնտեսական այլ մեքենաների: Կոլտնտեսությունները դեռևս ի վիճակի չէին սեփական միջոցներով գնել և օգտագործել գյուղատնտեսական մեքենաներ: Պետությունն էլ ի վիճակի չէր բոլոր կոլտնտեսություններին ապահովել գյուղատնտեսական մեքենաներով:

Ահա թե ինչու անհրաժեշտություն զգացվեց երկրում ստեղծել մեքենատրակտորային կայաններ: ԽՍՀՄ-ում առաջին ՄՏ4-ն ստեղծվել էր 1928 թ., Օդեսայի մարզի Շևչենկոյի անվան պետտնտեսության տրակտորային շարասյան և այլ շարասյունների փորձի հիման վրա, որոնք օգնություն էին ցույց տալիս չքավորական տնտեսություններին և արտադրական կոոպերացիաներին: Լեռնային Ղարաբաղում ՄՏ4-ի ստեղծման կարիքը բոլորից շատ էր զգացվում մանավանդ Մարտակերտի բամբակացան շրջանում: Շրջանի հարթավայրային տարածքն աստիճանաբար զբաղեցվում էր բամբակի ցանքով: Դրան էլ եթե ավելացնենք զվայրուլան, ապա ամեն ինչ հասկանալի կլինի: Բավական է նշել, որ միայն 1932 թ. բամբակի ցանքսը 329 հեկտարով գերազանցել էր նախորդ տարվա մակարդակը: 1932 թ. հունիսին Մարտակերտի շարասյան բազայի վրա Մարգուշևանում ստեղծվեց առաջին ՄՏ4-ն մարզում, որը սկզբում սպասարկում էր 14 կոլտնտեսության՝ 7714 հա վարելահողով⁷⁵: Հետագայում՝ 1934 թ., ՄՏ4 ստեղծվեց նաև Մարտունիում: Երրորդ ՄՏ4-ն ստեղծվեց Ասկերանում: Միայն 1931 թ. տրակտորները կատարեցին 24050 հա ցանքս՝ նախորդ տարվա 7890 հա-ի դիմաց:

1933 թ. հունվարի 1-ի դրությամբ կոլտնտեսություններում կենտրոնացված էին մարզի վարելահողերի 51, այգիների՝ 44, ցանքսերի՝ 44.1%-ը: 1932 թ. մարզի կոլտնտեսությունների ընդհանուր եկամուտը կազմել է 7364 հազար ռուբլի, ըստ որում՝ նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել էր 84.4%: Սեկ աշխօրի արժեքը հասել էր 1.83 ռուբլու՝ նախորդ տարվա 99.6 կոպեկի դիմաց: Առաջին հնգամյակի տարիներին կոլտնտեսությունների համար պատրաստվել էր 200 հաշվապահ: Կոլտնտեսություններին սպասարկելու համար գյուղերում բացվել էին 167 խրճիթ-ընթերցարան, 102 ակումբ, 19 մսուր-մանկապարտեզ, 10 կինոտեղակայում և այլն⁷⁶:

Հետագա տարիներին մինչև պատերազմի սկիզբը, գյուղատնտեսության վերափոխումները շարունակվում էին հաստատակամորեն, չնայած, ընդհանուր առմամբ, կոլտնտեսությունների մեծամասնությունը դեռևս մնում էր տնտեսապես թույլ, որոնց սեփականություն էին միայն լծկան անասուններ, գութաններ, արորներ, փոցխեր, տնտեսական մասնակի շենքեր: Կոլտնտեսությունները դեռևս չունեին մամր և խոշոր եղջերավոր անասունների ապրանքային նշանակություն ունեցող ֆերմաներ, դրանք կարիք ունեին տեխնիկայի ու փորձված կադրերի: Երկրորդ հնգամյակի հենց սկզբից աշխատանքներ էին տարվում կոլտնտեսություններում անասնապահական ֆերմաներ ստեղծելու, ճիշտ վարձատրման կարգ մտցնելու, բրիգադային ձևը և աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու համար: Շարունակվում էր կոլտնտեսու-

թյունների խոշորացումը: 1934 թ. հունվարի 1-ի դրությամբ կոլտնտեսություններ էր մտել գյուղական տնտեսությունների 56%-ը: Առաջընթացի այդ թափը ոգևորում էր մարզի կոլտնտեսություններում, պետտնտեսություններում և ՄՏ4-ում աշխատողներին: Այդ ժամանակ կոլտնտեսությունների ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունեցավ կուսակցության Կենտկոմի 1933 թ. հունվարյան պլենումի որոշմամբ ՄՏ4-ում և պետտնտեսություններում քաղաքական բաժինների ստեղծումը: Դրանք թեև գոյություն ունեցան շատ կարճ ժամանակով հազիվ երկու տարի, սակայն պատվով կատարեցին իրենց առջև դրված խնդիրը: Այդ բաժիններ աշխատանքի ուղարկվեցին մեծ թվով կուսակցական աշխատողներ, որոնք պատվով էլ հեռացան: Երկրի տարբեր տեղերից Լեռնային Ղարաբաղի ՄՏ4-ում աշխատելու համար եկան բավականին թվով բանվորներ և մասնագետներ: Շուտով ՄՏ4-ները դարձան կոլտնտեսություններում ոչ միայն կազմակերպատնտեսական, այլև քաղաքական դեկավարման կենտրոններ: Սակայն մարզի տասնյակ կոլտնտեսություններ շարունակում էին ետ մնալ, տեղի էին ունենում հանրային սեփականության հափշտակումներ, օրինակ՝ Ղահրավ, Հերիեր, Ղաշբուլաղ, Տող և այլ գյուղերում բազմաթիվ դեպքեր արձանագրվեցին: 1933 թ. զարմանը տեղի ունեցած հարվածային կոլտնտեսականների մարզային համագումարը հատուկ ուշադրություն դարձրեց կոլտնտեսությունները նյութապես ամրապնդելու, արտազնացությունը կանխելու, բրիգադային կարգն ամրապնդելու հարցերի վրա:

Առանձնապես մեծ ուշադրություն դարձվեց բամբակացան կոլտնտեսությունների ամրապնդմանը: 1933 թ. սկսած՝ մարզում արմատավորվում էր ցանքաշրջանառությունը: Նույն թվականի հոկտեմբերի 19-ին ցանքաշրջանառության մարզային բյուրոն որոշեց ցանքաշրջանառությունը սկսել Մարտունու շրջանից: Այդ նպատակով Մարտունու շրջանում ստեղծվեց ցանքաշրջանառության 4 բրիգադ⁷⁷:

ԼՂԻՄ հողբաժինը միջոցառումներ ձեռնարկեց մարզում խաղողագործությունն ու պտղաբուծությունը զարգացնելու համար: Մարտունու շրջանի խաղողագործական պետտնտեսությունում առանձնապես առատ բերք էր տալիս արկածիթելի տեսակը: Այն շրջանի կոլտնտեսություններում տարածելու համար տարեկան վաճառվում էր 40 հազար մատ: Ավելանում էին նաև պտղատու այգիների տարածությունները: Միայն 1934 թ. ուկրաինայից ստացվեցին 5000 խնձորենու, տանձենու, ծիրանենու և կեռասենու տնկիներ: Նույն թվականի մայիսի 1-ի դրությամբ մարզում տնկվել էր 8405 պտղատու ծառ⁷⁸: Հաջողությունների հասան նաև մարզի կաուչուկագործները: Նրանք, հաղթահարելով բոլոր դժվարությունները, 1933 թ. վերջին Մոսկվա ուղարկեցին ստացված զանգվա-

ծի առաջին տոնմաները: Չորս տարում կառուցվելի պետությունսուբյան 80 հեկտար, տարածքի վրա տնկվել էր 4 միլիոն թուփ, և երկու հեկտար տարածություն զբաղեցնող ջերմոցում աճեցվել երկու միլիոն սածիլ⁸⁰:

Նախապատերազմյան տարիներին Լեռնային Ղարաբաղում առանձնապես մեծ ուշադրություն էր դարձվում անասնապահության զարգացմանը: Հիմնական շեշտը դրվեց հանրային անասունների գլխաքանակի ավելացման վրա: Այսպես՝ երկրորդ հնգամյակի առաջին տարում մարզում եղած 146427 խոշոր և մանր եղջերավոր անասուններից, 26580 խոզերից և 7588 սմբակավոր անասուններից հանրայնացվել էր համապատասխանաբար 22955, 19518 և 2188 գլուխ⁸¹: Անասնազվաքանակն ավելացնելու համար կարևոր էր կերային ամուր բազայի ստեղծումը: Օրինակ՝ 1933 թ. մարզում կուտակվել էր 186080 ց հյութալի կեր, 9980 ց խոտ, 271.002 ց ծղոտ և այլն: Մարզի տարածքում գտնվող բոլոր արոտատեղերի 81%-ը հանձնվեց կոլտնտեսություններին: 1934 թ. մարտի 21-ին մարզկոմի բյուրոն, քննարկելով անասնապահության զարգացման հարցը, որոշեց այդ բնագավառում բարձր հաջողությունների հասած կոլտնտեսությանը հանձնել մարզկոմի և մարզխորհրդի օրգան «խորհրդային Ղարաբաղ» թերթի փոխանցիկ դրոշը: Մինչ այդ հունվարին տեղի ունեցած մարզկոմի ութերորդ կոնֆերանսը բացահայտել էր անասնապահության զարգացման գործում տեղ գտած մի շարք թերություններ: Օրինակ նշվեց, որ ֆերմաներն ապահովված չեն մասնագետներով և գործույթ աշխատողներով, դանդաղ են ընթանում անասնաշենքերի շինարարական աշխատանքները, չի հերիքում անասնակեր և այլն⁸²: Պլենումի ընդունած որոշումներից բխած մարտի 5-ին տեղի ունեցած անասնապահների մարզային խորհրդակցությունը որոշեց 1934 թ.-ից խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացնել 16, այդ թվում՝ կովերինը՝ 8, մանր եղջերավոր անասուններինը՝ 5, մայր ոչխարներինը՝ 26, խոզերինը՝ 15, այդ թվում՝ խոզամերուններինը՝ 20, ձիերինը՝ 22%-ով⁸³: Ապրիլի 4-ին տեղի ունեցած մարզկոմի բյուրոն որոշեց սահմանել մրցանակաբաշխություն՝ անասնապահության բնագավառում լավագույն ցուցանիշների հասնելու համար և այդ նպատակին ծառայեցնել ԽՍՀՄ հողօժողկոմի կողմից Լեռնային Ղարաբաղին հատկացված 20 հազար ռուբլին: Չնայած այդ ամենին, այնուհանդերձ, մարզում շարունակում էին ետ մնալ անասնաշենքերի շինարարությունը, անասունների ցեղայնության բարելավումը, համապատասխան քանակությամբ անասնակերների կուտակումը: 1932-1933 թթ. կառուցվել էին ընդամենը 21 անասնաշենք, 2 խոզանոց և 53 գյուղատնտեսական բնույթի այլ շենքեր⁸⁴: Նույն թվականի նոյեմբերի 6-10-ը Ստեփանա-

կերտի արդյունաբերական հրապարակում կազմակերպվեց անասունների ցուցահանդես, որին մասնակցեց 99 ֆերմա: Ցուցահանդես էր բերվել 543 գլուխ անասուն: Անասնապահության զարգացման բնագավառում ձեռք բերված բարձր ցուցանիշների համար «խորհրդային Ղարաբաղ» թերթի փոխանցիկը հանձնվեց Մարտակերտի շրջանի Կոծողոտի կոլտնտեսությանը:

Ցուցահանդես եկած մարզի անվանի անասնապահները, նամակով դիմելով Անդրկովկասի բոլոր անասնապահներին և կոլտնտեսություններին, նշել են. «Մենք՝ դեռ երեկ մոռացված մարդիկ... այսօր զգում ենք մեզ սոցիալիստական շինարարության իսկական մասնակիցներ»: Ապա նշել են, որ մարզում երկու անգամ կրճատվել է անասունների անկումը, և օգտագործելով խորհրդային Հայաստանի լավագույն բրիգադիր Ջավեն Քոչարյանի փորձը՝ կաթնապրանքային ֆերմաներում անց է կացվել «պասպորտիզացիա»⁸⁵: Այդ նամակը մեծ արձագանք գտավ մարզի անասնապահների շրջանում:

Մարզում հետևողականորեն քայլեր էին ձեռնարկվում կոլտնտեսականների անասնազվաքանակն ավելացնելու համար: ԼՂԽՄ մարզկոմի և մարզխորհրդի 1933 թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ՝ կով գնելու համար կոլտնտեսականներին տրամադրվեց 35409 ռուբլու վարկ⁸⁶: Դա նպաստեց մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը որոշ չափով ավելացնել:

Ինչպես ասվել է, մարզում կոլտնտեսային աշխատանքները կազմակերպելու և ամրապնդելու գործում կարևոր դեր է ունեցել բրիգադային կարգի մտցնելը: 1934 թ. գարնանից մարզի բոլոր կոլտնտեսություններում անցան աշխատանքների կազմակերպման բրիգադային համակարգի: Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոն, 1934 թ. մարտի 3-ին քննարկելով այդ հարցը և բրիգադավարների միանձնյա ղեկավարությունը ուժեղացնելու համար որոշեց «բրիգադիների աշխօրերը բխեցնել ամբողջ բրիգադի պլան-առաջադրանքների դրակական և քանակական ցուցանիշների լրիվ կատարումից և բազմաձյուղ պլան-առաջադրանք ունեցող բրիգադավարներին միանձնյա ղեկավարների տալ առաջադրանք օրական վարձատրելով 1.5 աշխօր, բրիգադի պլանը չկատարելու դեպքում այն համապատասխանաբար իջեցնել»: Բյուրոն զգուշացրեց մարզի բոլոր կոլտնտեսությունների վարչություններին, որ բրիգադավարների հաճախակի փոփոխումը և բրիգադից բրիգադ կոլտնտեսականների հոսունություն ստեղծելը նշանակում է կուսակցության որոշումների աղավաղում⁸⁸: Այդ որոշումը նպաստեց բրիգադի աշխատանքային կարգապահության ամրապնդմանը:

Մարզում հաջողությամբ առաջ էր գնում կոլեկտիվացման գործընթացը: 1935 թ. հունվարի 1-ի դրությամբ կատարվել էր 79.6 հազար հեկտար ցանքս, իսկ բոլոր տեսակի 243 ֆերմաների անասունների գլխաքանակը հասել էր 52.339-ի: Միայն 1934 թ. կառուցվել էին 150 անասնազոմ և խոզանոց⁹⁵: Այդ և հաջորդ տարիներին հաջողությունների հասան առանձնապես անասնակերերի կուտակման բնագավառում: Միայն 1936 թ. մարզում ցանվել էին 22 հազար հեկտար կերակուլտուրաներ, որոնց բերքատվությունը 1.5-2 անգամ գերազանցել է 1933 թ. մակարդակը⁹⁶: Անասնապահության բնագավառում ծեռք բերված փայլուն հաջողությունների համար ԽՍՀՄ հող-ժողովմասի կողմից մարզը պարգևատրվեց 60 հազար ռուբլիով, կոլտնտեսություններին հատկացվեցին 10 յուղահան, 40 սերմագատիչ մեքենաներ, բավականին շինանյութ: Անասնաֆերմաների քանակն ավելացվեց 30%-ով⁹⁷: Երկրորդ հնգամյակի վերջին՝ 1938 թ. հունվարի 1-ի դրությամբ, խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը հասել էր 221.4 հազարի⁹⁸, իսկ 1936 թ. մարզում գոյություն ունեցած բոլոր տեսակի 402 անասնաֆերմաներում կար 73.423 գլուխ անասուն⁹⁹:

Մարզում հետևողական աշխատանքներ էին տարվում անասունների տոհմային կազմը բարելավելու ուղղությամբ: Դրանում մեծ օգնություն էին ցույց տալիս երկրի մի շարք անասնապահական տնտեսություններ: Միայն 1935 թ. աշնանը Ազով-Սևծովյան երկրամասային ցեղային միության հիմնարկությունը Լեռնային Ղարաբաղ ուղարկեց 210 ցեղային խոզ⁹⁶: 1934 թ. մարզում ստեղծվել էին խոշոր եղջերավոր անասունների երեք և խոզաբուծական երկու ֆերմաներ, որոնք տոհմական կովեր և խոզեր էին մատակարարում մարզի կոլտնտեսությունների ֆերմաներին: Նշված տոհմային ֆերմաների համար Սնդենսկից ստացվեցին 44 երինջ և ցուլ⁹⁵:

Մարզում երկրորդ հնգամյակի տարիներին հաստատուն կերպով ավելանում էին ցանքատարածությունները, և տեղաշարժեր էին նկատվում բերքատվության բարձրացման գործում: Արդեն 1936 թ. կատարվեց 81 հազար հեկտար ցանքս, որը 2.2 անգամ գերազանցում էր նախապատերազմյան մակարդակը: Եթե 1913 թ. մեկ տուփ գրենայից միջին հաշվով ստացվել էր 18 կգ բոժոժ, ապա 1936 թ. այն հասել էր 46 կիլոգրամի⁹⁶: Հաջողությամբ էր առաջ գնում նաև բամբակագործությունը: Եթե 1930 թ. պետությանը վաճառվել էր 7350 ցենտներ բամբակ, ապա 1937 թ. այն հասել էր 73674-ի, կամ աճը կատարվել էր զրեթե վեց անգամ, և մեկ հեկտարի միջին բերքատվությունը հասցվել էր 14 ցենտների:

Հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակման և բերքատվության բարձրացման գործում շարունակում էին կարևոր դեր խաղալ ՄՏկայաները: 1937 թ. սկզբին մարզի երկու ՄՏ-ում կային 112 տրակտոր և տասնյակ գյուղատնտեսական այլ մեքենաներ: 1936 թ. մարզագործկոմի որոշմամբ՝ տրակտորային բրիգադներ ստեղծվեցին Ստեփանակերտում, Հաղթում և Մաղավուզում: Մարտունու շրջանին հարակից Ստեփանակերտի և Շուշիի շրջանների կոլտնտեսությունների հողամասերը պայմանագրային սկզբունքով մշակում էր Մարտունու ՄՏկայանը:

1936 թ. փետրվարին մարզային հողբաժնում լավեց մարզի գլխավոր գյուղատնտես Ս. Բարսեի «Այգեգործությունը ինքնավար Լեռնային Ղարաբաղում և նրա հեռանկարները» զեկուցումը: Մարզի տնտեսությունը լավ իմացող գյուղատնտեսի երկար տարիների փորձը բերել էր այն համոզման, որ մարզի ապագան ամենից առաջ կախված է այգեգործության, առանձնապես խաղողագործության զարգացումից: Մարզում կային 3650 հեկտար թթենու, խաղողի և պտղատու այգիներ, որոնցից տարեկան ստացվում էր 4 միլիոն աստիճան սալիտ, 120 հազար դույլ գինի և 10 հազար ցենտներ միրգ: Այդ բոլորը պետական մթերման գներով արժեք 3 միլիոն 200 հազար ռուբլի: Մարզում տարեկան ցանվող ավելի քան 79 հազար հեկտար դաշտային կուլտուրաները տալիս էին մինչև 5 միլիոն 800 հազար ռուբլու եկամուտ: Բերված այդ տվյալներից գյուղատնտեսը եզրակացնում էր, որ 20 անգամ քիչ տարածություն զբաղեցնող այգիներից մարզի կոլտնտեսություններն ու մենատնտեսները մոտ երկու անգամ պակաս եկամուտ էին ստանում, այլ կերպ ասած՝ այգիների մեկ հեկտարը 10 անգամ ավելի եկամուտ էր տալիս, քան ցանովի կուլտուրաների մեկ հեկտարը⁹⁶: Գյուղատնտեսը հարց դրեց մի քանի անգամ կրկնապատկել խաղողի այգիների տարածությունը: Հետագա տարիներին, մանավանդ 50-ական թթ. հետո, պրակտիկան ապացուցեց փորձառու գյուղատնտեսի հարցադրման միանգամայն ճիշտ լինելը:

Նույն 1935 թ. ապրիլի 20-ին հրավիրված այգեգործների մարզային հավաքում զեկուցումով հանդես գալով՝ հողվարչության բաժնի վարիչ Մուկուչ Արզանյանը հարց դրեց ընդարձակել կոլտնտեսությունների այգիների տարածքը: Այդ ժամանակ մարզի բոլոր այգիների 66.2%-ը պատկանում էր կոլտնտեսություններին⁹⁶: Հավաքի մասնակիցները պարտավորվեցին մինչև հնգամյակի վերջը այգետարածություններն ընդլայնել 3840 հեկտարով և զգալիորեն բարձրացնել բերքատվությունը:

Ստանալով նոր պարտավորություններ՝ մարզի աշխատանքները 30 թթ. վերջին՝ երրորդ հնգամյակի երեք ու կես տարիներին, հասան ավելի բարձր ցուցանիշների: Այսպես՝ 1940 թ. զրեթե լրիվ ավարտվել էր

կուլեկտիվացումը և հասել էր 99%-ի¹⁰⁰: Այդ նույն թվականին մարզում կատարվել էր 81969 հեկտար ցանքս: Մարզի 199 կոլտնտեսություններին և պետտնտեսություններին սպասարկում էին մոտ 200 տրակտոր, 33 հացահատիկային կոմբայն և բազմաթիվ այլ մեքենաներ: 1940 թ. մարզում ցանված տեխնիկական կուլտուրաների տարածությունը 4.5 անգամ գերազանցել էր նախապատերազմյան մակարդակը¹⁰¹: Հացդրությունները մանավանդ ակնառու էին անասնապահության բնագավառում: 1941 թ. հունվարի 1-ի դրությամբ բոլոր տեսակի անասունների գլխաքանակը հասնում էր 300.2 հազարի, որի 52%-ը պատկանում էր կոլտնտեսություններին և պետտնտեսություններին: Այդ նույն ժամանակաշրջանում մարզի կոլտնտեսությունների ամբողջ ֆոնդերը կազմում էին 800 հազար ռուբլի, իսկ դրամական եկամուտները՝ 2.600 հազար ռուբլի:

Ահա այսպիսին էր մարզի գյուղատնտեսության ընդհանուր պատկերը Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին:

5. խորհուրդների և հասարակական կյանքի վերակառուցման մի քանի հարցեր

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 20-30 թթ. տնտեսության վերակառուցման գործում նշանակալի դեր են խաղացել խորհուրդները, հասարակական կազմակերպություններն ու արհմիությունները: Կուսակցության Կենտկոմի 1926 թ. հուլիսյան պլենումը պահանջել էր ուժեղացնել խորհուրդների գործունեությունը և նրանցում պատասխանատու աշխատանքի առաջ քաշել ավելի շատ քանվորների և գյուղացիների, բարձրացնել ժողովրդական պատգամավորների պատասխանատվությունն իրենց ընտրողների առաջ, հետևողական աշխատանք տանել գյուղի անկուսակցական ակտիվի հետ, արհմիությունների, կոոպերատիվների և մյուս կազմակերպությունների աշխատանքները մոտեցնել խորհուրդների աշխատանքին և այլն: Ելնելով այդ որոշումից՝ խորհուրդների աշխատանքները հետզհետե ակտիվանում էին Լեռնային Ղարաբաղում, որին մեծ օգնություն էին ցույց տալիս չքավորներն ու միջակ գյուղացիները: 1926 թ. մարզում տեղի ունեցած խորհուրդների ընտրություններին մասնակցեց ընտրողների 61.7%-ը: Այդ ժամանակ մարզի 168 գյուղական խորհուրդների անդամ ընտրվածների 66%-ը չքավոր և միջակ գյուղացիներ էին²: Խորհուրդների ակտիվ նախաձեռնությամբ նույն թվականին մարզում

ավարտվեց 15 դպրոցական շենքերի շինարարությունը, սկսվեց 26-ի շինարարությունը, նորոգվեցին 68-ը, նորոգվեցին նաև 201 վերստ ճանապարհ, 108 վերստ ջրանցք, մաքրվեց 194 աղբյուր, դպրոցների շինարարության համար պատրաստվեց 601 սաժեն բար, բացվեցին 42 լիկկայան, 28 խրճիթ-ընթերցարան, կառուցվեց գյուղական խորհրդի գրասենյակի 4 շենք և այլն³:

1927 թ. հունվարին տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի մարզկոմի երրորդ կոնֆերանսը, քննարկելով «խորհուրդների ընտրությունների խնդիրների մասին» հարցը, ընդգծեց, որ քանվորների, չքավորների և միջակների ակտիվության աճի հետ նկատվում է հակախորհրդային տարրերի աշխուժացում: Կոնֆերանսը, հավատարիմ մնալով կուսակցության որդեգրած կուրսին, կուսակցական բջիջներին ցուցում տվեց խորհուրդների վերընտրությունների ժամանակ աշխատավորների ուշադրությունը կենտրոնացնել բատրակների, չքավորների և միջակի դաշինքի ամրապնդման վրա⁴: Այսպիսով Լեռնային Ղարաբաղում կուսակցության պահանջով խորհուրդների վերընտրությունները վերածվեցին քաղաքական արշավի, և դա դարձավ ավանդույթ: 1927 թ. մարտին տեղի ունեցած մարզային խորհուրդների հերթական չորրորդ համագումարը, ընդհանրացնելով տեղական խորհուրդների ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքները, արձանագրեց, որ խորհուրդների վերջին վերընտրություններին մասնակցել է բոլոր ընտրողների 60.5%-ը, և դա այն դեպքում, երբ ամբողջ երկրում այն կազմել է 50%: Այս անգամ մարզի խորհուրդներում ընտրվածների 17.7%-ը կանայք էին, 15-ը կուսակցականներ, 14-ը՝ կոմերիտականներ⁵:

Մի քանի տարվա փորձը համոզում էր, որ գյուղական փոքր խորհուրդների գործունեության ոլորտները նեղ էին և առաջ էին բերում մեծ ծախսեր: Ելնելով նրանից, որ խորհուրդներին պետք է գործունեության լայն հնարավորություններ ընձեռվեն՝ մարզային խորհրդի գործադիր կոմիտեն նպատակահարմար գտավ սկսել խոշորացնել գյուղական խորհուրդները: Բացի այդ, պահանջվեց խորհուրդներում լայնորեն քննարկել գյուղին և գյուղացիներին վերաբերող հարցեր: Հենց դրանից երևում էր, որ 1928 թ. մարզի գյուղական խորհուրդներում քննարկված հարցերի 95%-ից ավելին անմիջականորեն վերաբերում էր գյուղական կյանքին⁶: Ելնելով 1926 թ. օգոստոսի 9-ին տեղի ունեցած Անդրկովկասյան դաշնության ԿԳԿ-ի որոշումից՝ ԼՂԻՄ կենտգործկոմի նախագահությունը մեկ կամ մի քանի գյուղերի հասարակություններին իրավունք վերապահեց իրենց միջոցներով կատարել համատեղ բարեշինարարական և կուլտուրական աշխատանքներ⁷:

Մարզում ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակների սկզբից բավականին թարմացվեցին տեղական խորհուրդների աշխատանքները, և խորհուրդների բոլոր անդամները ներգրավվեցին հասարակական-հանրօգուտ աշխատանքներում: Թերևս այդ էր հիմնական պատճառներից մեկը, որ առաջին հնգամյակի առաջին տարում մարզում անցկացված տեղական խորհուրդների ընտրություններն անցան ավելի ակտիվ պայմաններում: Այս անգամ տեղական խորհուրդների անդամ ընտրվածների 16.1%-ը կուսակցության անդամներն էին, 65.3-ը՝ կոմերիտականներ, իսկ 18.9-ը՝ կանայք⁸: Ինչպես երևում է, առաջին շարքում քայլում էին կոմերիտականները, որոնք հասել էին նկատելի հեղինակության:

Երկրամասում չկար որևէ արդյունաբերական ձեռնարկություն, որի շինարարության գործում կարևոր դեր չխաղային խորհուրդները, չկար որևէ կոլտնտեսություն, որի կազմակերպման հարցում վճռորոշ դեր չխաղային գյուղական խորհուրդները: Առաջինը կոլտնտեսություն էին մտնում հենց իրենք՝ գյուղական խորհուրդների անդամները: Գյուղական խորհուրդների օգնությամբ և ղեկավարությամբ ընդլայնվում էին տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները, և աստիճանաբար ընդլայնվում ճանապարհաշինարարությունը: Գյուղական խորհուրդները սկսեցին ավելի մոտիկից ղեկավարել մշակույթի գյուղական օջախները, կարևոր ուշադրություն դարձնել կոլտնտեսային շարժմանը, հեղափոխական օրինականության ամրապնդմանը, գյուղատնտեսական ապրանքների մթերմանը, գյուղերը խմելու ջրով ապահովելուն, անհատական տների շինարարությանը, հակախորհրդային տարրերի դեմ պայքար ծավալելուն և այլն: Խորհրդային տնտեսական և վարչական մարմինները հետզհետե ուժեղացնում էին պայքարը մանավանդ այն ունևորների դեմ, ովքեր համոզես էին զալիս հակախորհրդային դիրքերից: Նրանք, բատրակներից, չքավորներից և միջակներից համախմբելով խորհուրդների շուրջը, նրանց հետ հաճախակի քննարկում էին կենսական նշանակություն ունեցող հարցեր և հետամուտ լինում միջակի նկատմամբ կուսակցության քաղաքականության իրագործմանը:

Ինքնաստուգումների անցկացումը մտել էր տեղական խորհուրդների կյանք, և իրենց չարդարացնող պատգամավորներին ետ կանչելը դարձավ օրինաչափ: Միայն 1930թ. մարզում ետ է կանչվել գյուղական խորհուրդների 953 անդամ⁹: Խորհուրդներն ակտիվություն էին ցույց տալիս նաև մարզի վարչատնտեսական կառուցվածքի վերանայման գործում¹⁰:

1929 թ. վերակազմվեց ԼՂԻՄ կոմիսարների խորհուրդը, և նրա բոլոր ֆունկցիաները տրվեցին աշխատավորների ղեկավարատների խորհուրդների մարզային գործադիր կոմիտեի համապատասխան բաժին-

ներին: Այնուհետև ԼՂԻՄ պետական բարձրագույն մարմինը հանդիսանում էր մարզային խորհուրդների համագումարը: 1923-1936 թթ. տեղի է ունեցել ութ համագումար: Համագումարից համագումար ընկած ժամանակամիջոցում մարզի պետական բարձրագույն իշխանությունը հանդիսանում էր համագումարի կողմից ընտրված մարզային խորհուրդների գործադիր կոմիտեն: Մարզային խորհուրդների համագումարները քննարկում էին մարզային մասշտաբի պետական, տնտեսական, քաղաքական և մշակութային բնույթի հարցեր:

Հաճախ պատահում էր՝ կոլտնտեսության վարչությունը և գյուղական խորհուրդը շփոթում էին իրենց ֆունկցիաները, և առաջ էր գալիս աշխատանքների կազմալուծում: Կուսակցության մարզկոմի 1930 թ. հունիսին տեղի ունեցած պլենումը, անդրադառնալով այդ հարցին, շեշտեց, որ գյուղական խորհուրդները՝ որպես տեղերում իշխանության մարմիններ, պետք է ղեկավարեն գյուղի ամբողջ կյանքը, այդ թվում և կոլտնտեսություններին՝ նրանց ղեկավարների զեկուցումը լսելու միջոցով և նրանց տրված ցուցումներով՝ մինևույն ժամանակ չխառնվելով կոլտնտեսությունների ներքին գործերին: Պլենումը հրահանգեց աշխատանքը ճիշտ բաժանել գյուղական խորհուրդների և կոլտնտեսությունների վարչությունների անդամների միջև, առաջնորդվել աշխատանքային պլանով, խելացի կապ հաստատել անհատական տնտեսությունների հետ, կամանց մասնակից դարձնել գյուղական խորհուրդների աշխատանքներին և այլն: Տեղական խորհուրդների դերը բարձրացնելու և կոլտնտեսություններն արդյունավետ ղեկավարելու համար պլենումը անհրաժեշտ համարեց կոլտնտեսությունների վարկավորումը կատարել գյուղական խորհուրդների երաշխավորմամբ, իսկ ավելի հրատապ դեպքում՝ շրջագործկոմների միջոցով¹¹: Մարզկոմը գյուղական խորհուրդներին հրահանգեց վարչություն էր ամեն կերպ նպաստել տեխնիկական կուլտուրաների և անասնապահության զարգացմանը, թարմացնել սելեկցիաների աշխատանքները, ղեկավարել արտադրական խորհրդակցությունները, կազմակերպել մրցությունը, չթուլացող պայքար տանել հակախորհրդային դրսևորումների դեմ և այլն¹²: Գյուղխորհուրդները, բացի դրանից, պայքարում էին բոլոր հարկերը հավաքել ժամանակին և նշված ժամկետում իրացնել փոխառությունները:

Տեղական խորհուրդների աշխատանքներն ավելի հետաքրքիր և ակտիվ գործնական բնույթ ստացան մանավանդ կոլտնտեսություններն ամրապնդելու, կուլակներին ունեզրկելու, հակախորհրդային տարրերին հայտնաբերելու, գյուղերի բարեկարգման, կուլտուրական շինարարության և այլ բնագավառներում: Ասենք նաև, որ տեղական խորհուրդները հաճախ թույլ էին տալիս կոպիտ սխալներ և կուլակներ «հայտնա-

բերում» այնտեղ, որտեղ նրանք չկային: Քիչ չեն եղել դեպքեր, երբ միջակին շփոթել են կուլակի հետ և ունեզրկել: Իսկ որոշ դեպքերում էլ ունեզրկումը հասցնում էին ծայրահեղությունների: Գյուղական խորհուրդներն ընտրությունների ժամանակ բացահայտ առաջ էին քաշում կուլակ-տեսականներին տեղ չտալով մենատնտեսներին: Օրինակ՝ 1931 թ. տեղական խորհուրդների վերընտրությունների ժամանակ ոչ մի մենատնտեսի թեկնածությունը չդրվեց: Թերևս դա էր պատճառներից մեկը, որ այդ ընտրություններին մասնակցեց ընտրողների 69.8%-ը, և ընտրություններից հրաժարվեց մենատնտեսների զգալի մասը¹³:

Մարզի տնտեսության զարգացման հարցերը միշտ էլ եղել են մարզային խորհրդի ուշադրության կենտրոնում: 1931 թ. փետրվարին տեղի ունեցած ԼՂԽ խորհուրդների 6-րդ համագումարը հարց դրեց մարզում շեշտակիորեն ավելացնել անասունների գլխաքանակը, տեղական խորհուրդներին հանձնարարեց ավելացնել պետտնտեսությունների թիվը, կարևոր ուշադրություն դարձնել կուլտնտեսությունների և ՄՏԿ-ի շինարարությանը, ընդլայնել տեխնիկական կուլտուրաների տարածքները, զարգացնել շերամապահությունն ու այգեգործությունը: Մարզում կուլտնտեսությունների դերի բարձրացման պատասխանատվությունը դրվեց գյուղական խորհուրդների վրա¹⁴:

Խորհրդային մարմինների գործունեությունը մասսաներին մոտեցնելու և դրանց դերը բարձրացնելու ուղղությամբ ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ: 1931 թ. հանրապետության ԿԳԿ նախագահության կողմից հաստատված կանոնադրության համաձայն՝ շրջանային բարձրագույն մարմինը համարվում էր խորհուրդների շրջանային համագումարը, իսկ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում՝ շրջանային գործադիր կոմիտե: Համագումարներում հարցերը վճռվում էին բաց քվեարկությամբ ու ձայների մեծամասնությամբ: Համագումարն ընտրում էր շրջանային գործադիր կոմիտե՝ մինչև 45 հոգի կազմով: Գործադիր կոմիտեն ընտրում էր 9 հոգուց բաղկացած նախագահություն: Շրջխորհուրդներում ստեղծվեցին հետևյալ սեկցիաները. խորհրդային շինարարության և կատարման հսկողության, արդյունաբերական և մատակարարման, գյուղատնտեսական, ֆինանսաբյուջետային, ժողովրդական լուսավորության, առողջապահության և աշխատանքի: Շրջագործկոմների կազմի մեջ մտնում էին ընդհանուր, հողային, ֆինանսական, պլանային բաժինները, բանվորագյուղացիական տեսչությունները, միլիցիայի և քրեական հետազոտության վարչությունը և շրջանային ջրային տնտեսությունը: Շրջագործկոմներին կից ստեղծվեցին մի շարք հանձնաժողովներ, որոնց նախագահները նշանակվում էին շրջանային գործադիր կոմիտեի կամ նախագահության կողմից: Այդ կանոնադրու-

թյունը սկսեց լայնորեն կիրառվել նաև Լեռնային Ղարաբաղում: Դա, անշուշտ, ունեցավ որոշ դրական նշանակություն, մասնավոր տեղական խորհուրդների դերի բարձրացման գործում:

30-ական թթ. սկզբից մարզում սովորական դարձավ խորհրդային աշխատողների խորհրդակցությունների հրավիրումը: Դրանցում քննարկվում էին խորհրդային շինարարության հետ կապված հարցեր, և ընդունվում անհրաժեշտ որոշումներ: 1932 թ. փետրվարին տեղի ունեցած մարզագործկոմի պլենումն ընդգծեց, որ մարզի գյուղական խորհուրդները «հիմնականում երեսները դարձրել են դեպի կուլեկտիվ տնտեսության հերթական խնդիրները» և հաջող են կազմակերպում «կուլակության վերացումը»: Պլենումը գյուղական խորհուրդներին հրահանգեց ավելի ուժեղացնել «կուլակների դեմ պայքարը» և «...կուլեկտիվ տնտեսության առավելությունները մասսայականացնելով նոր հոսանք ստեղծել դեպի կուլտնտեսությունները ...կամավոր սկզբունքներով»¹⁵: Նույն թվականի օգոստոսի 3-ին Ստեփանակերտում տեղի ունեցած մարզային խորհրդակցությունը, որին մասնակցեցին բոլոր գյուղական խորհուրդների նախագահները, քարտուղարները և շրջխորհուրդների կազմի հրահանգչական բաժինների վարիչները, ընդունեց բանաձև, որում շեշտված էր գյուղական խորհրդների որակյալ աշխատողներ պատրաստելու կարևորությունը:

Հետզհետե բարձրանում էր մարզային, շրջանային և տեղական խորհուրդների հեղինակությունը, և ընդլայնվում դրանց գործունեության ոլորտները: 1931 թ. դրությամբ մարզի 122 գյուղական խորհուրդների անդամ էր 5160 հոգի, որոնցից 897-ը կին: Այն փաստը, որ գյուղական խորհուրդների թիվը շատ էր նվազել, բացասական էր ազդում գյուղական խորհուրդների գործունեության վրա: 1927 թ. սկսած գյուղական խորհուրդների խոշորացման հետևանքով նրանց թիվը կիսով չափ կրճատվել էր: Պատահել է, որ մի գյուղխորհրդի մեջ էին միավորվել մի քանի գյուղխորհուրդներ: Հետագայում 30-ական թթ. սկզբից, այդ սխալը սկսեցին ուղղել և ապախոշորացվեցին տասնյակ գյուղխորհուրդներ:

Մարզում ավելի ակտիվ աշխատող գյուղական խորհուրդները խրախուսվում էին: Այսպես 1932 թ. իրենց առաջադրանքները գերակատարելու համար ֆինանսական միջոցներով պարգևատրվեցին Մարաղայի, Խնձրիստանի, Ղարաբուլաղի, Հարավի, Շոշիի և այլ խորհուրդների նախագահները¹⁶: Հենց գյուղական խորհուրդների նվիրված աշխատանքի հետևանքով 1936 թ. մարզում ավարտվեցին հողաշինարարական աշխատանքները: Խորհրդային Միության կառավարության 1935 թ. հուլիսի 7-ի որոշման հիման վրա հողի առիավետ օգտագործման պետական ակտը Լեռնային Ղարաբաղում 1936 թ. մայիսի 22-ին առաջինը հանդի-

սավորությամբ հանձնվեց Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի կոլտնտեսությամբ: Ապա համանման ակտեր ստացան մարզի մյուս բոլոր կոլտնտեսությունները:

Ելնելով ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարի և ԽՍՀՄ ԿԳԿ 1934 թ. մայիսի 15-ի որոշումներից վերակառուցվեցին երկրի, այդ թվում և Լեռնային Ղարաբաղի շրջանային ու գյուղական խորհուրդների մասսայական-կազմակերպչական աշխատանքները: Այդ որոշման համաձայն գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները բաժանվեցին երկու մասի՝ դաշտավարական և անասնապահական: Առևտրական և մթերման սեկցիաները միավորվեցին մեկ սեկցիայի մեջ, մեկ սեկցիայի մեջ միավորվեցին նաև առողջապահական և մշակույթի սեկցիաները: Գյուղական խորհուրդներում մնացին դաշտավարական, անասնապահական, բարեշինարարական, մշակութային, ֆինանսական, առևտրամթերման, ճանապարհաշինարարության, հեղափոխական օրինականության և պաշտպանության սեկցիաները:

Կազմակերպչական այդ վերափոխումները թարմացրին գյուղական խորհուրդների մասսայական-կազմակերպչական աշխատանքները, ավելի ընդլայնվեց նրանց գործունեությունը, առանձնապես կոլտնտեսություններն ամրապնդելու գործում: Սեկցիաներում ընդգրկվում էին ավելի շատ աշխատավորներ, և հիմնականում քննարկվում էին գործնական, ամենօրյա հարցեր: Պատգամավորների խմբեր ստեղծվեցին կոլտնտեսություններին, պետտնտեսություններին և ՄՏԿ-ին օգնելու համար: Այդ խմբերը մշանակալից դեր խաղացին աշխատավորներին կազմակերպելու գործում:

Աշխատանքներ էին տարվում նաև խորհուրդներում աշխատողների որակավորումը բարձրացնելու համար: Օրինակ՝ 1935 թ. կազմակերպվեցին դասընթացներ, որոնց մասնակցեցին գյուղական խորհուրդների 80 նախագահ և 40 քարտուղար: Նույն թվականին սոցմրցության պայմանագրեր կնքվեցին մարզի բոլոր գյուղական խորհուրդների միջև անասնապահության, դպրոցական աշխատանքների, ճանապարհաշինարարության, ֆինանսական աշխատանքներն օրինակելի կազմակերպելու, բնակարանային ֆոնդի վերականգնման, պահպանման ու բարեկարգման ուղղությամբ: Նաև ուշադրություն էր դարձվում խորհուրդներում կանանց առաջ քաշելու հարցին: Արդեն 1934 թ. մարզում կար գյուղական խորհրդի 12 կին նախագահ¹⁸:

Միությունում սկիզբ առած ստախանովյան շարժման ծավալման գործում կարևոր դեր խաղացին նաև խորհուրդները: Լեռնային Ղարաբաղի մարզային, շրջանային և գյուղական շատ անդամներ ստախանովյանների էին և արտադրության առաջավորներ: Մարտակերտի ՄՏԿ-ի ստա-

խանովյան մեխանիզատորները, որոնց շարքում կային նաև գյուղական խորհրդի պատգամավորներ, իրենց օրական պլանը կատարում էին 150-200%-ով: «Ս. Ռ 900» կալսիչի վրա աշխատող մեխանիզատոր, գյուղական խորհրդի պատգամավոր Ավետիսյանը պլանային 6.5 տոննայի դիմաց օրական կալսում էր 11.5 տ հացահատիկ, Սկրտչյանը՝ 13.7 տ, իսկ Բարսեղյանը՝ 15.8 տ¹⁹: Ղահրավ գյուղից ստախանովյան անասնապահ, գյուղական խորհրդի պատգամավոր Գրիշա Ղազարյանը իրեն հանձնված կովերի կաթնատվությունը հասցրել էր 1500 կգ-ի: Բամբակագործներ, գյուղական խորհրդի պատգամավոր ստախանովյաններ Սիրան Առաքելյանը, Մարալ Մարգարյանը, Վարսենիկ Այվազյանը, Փառանձեմ Իսայանը և ուրիշներ օրական հավաքում էին մինչև 250-ական կգ բամբակ, իսկ Մարալ Մարգարյանը հավաքում էր 350-360 կգ: 1936 թ. տեղի ունեցած ստախանովյան այգեգործների առաջին, իսկ 1937 թ. երկրորդ հավաքներին մասնակից այգեգործների մեծամասնությունը խորհուրդների պատգամավորներ էին: Շատ այգեգործ պատգամավորներ, ինչպես, օրինակ Իշխան Միրզոյանը (Բլուբան), Ասլան Թովմասյանը (Փիրջամալ), Մարտին Ավանեսյանը (Խրամորթ) և ուրիշներ, 1936 թ. իրենց պլան-առաջադրանքները գերակատարել էին 150-300%-ով²⁰: Մարզում գյուղական խորհուրդների առաջավոր նախագահներ էին Անաստաս Սկրտչյանը (Նորագյուղ), Արծվիկ Միրզոյանը (Բալլուջա), Սուրեն Թադևոսյանը (Աշան), Առաքել Այվազյանը (Շեխեր), Սողոմոն Սողոմոնյանը (Չլղրան) և ուրիշներ: Արդեն երկրորդ հնգամյակի վերջին և պատերազմի նախօրյակին մարզի տեղական խորհուրդների անդամների 90%-ից ավելին բանվորներ և կոլտնտեսականներ էին, որոնց մեկ քառորդից ավելին կանայք: Այդ տարիներին մարզում արժանի աշխատանք կատարեցին մարզգործկոմի նախագահներ Հայկ Առուստամյանը, Ներսես Ստեփանյանը, Սուրեն Բաղրամյանը և ուրիշներ:

1920-1930-ական թթ. Լեռնային Ղարաբաղի կյանքում էական դեր են խաղացել կուսակցական կազմակերպությունները: Կուսակցության մարզային կոմիտեն հանդիսացավ այն շտաբը, որն իր շուրջը համախմբեց մարզի բնակչությանը և կարողացավ դրականորեն լուծել տնտեսական, քաղաքական ու մշակութային հարցերը: 1931 թ. մայիսի 1-ի դրությամբ մարզային կուսակցական կազմակերպության շաբթերում կար 1901 անդամ²¹, իսկ 1934 թ. 2028, թեկնածուների թիվը՝ 911: Մարզի կոմունիստներից 1736 հոգի աշխատում էր արտադրության մեջ²²: Համրային աշխատանքների բոլոր բնագավառներում առաջին շաբթերում քայլում էին կոմունիստները, որոնք իրենց անձնական օրինակով ոգևորում, ղեկավարում և ուղղություն էին տալիս մարզի աշխատավորներին²³:

Սարգում տարեցտարի մեծանում էր կոմերիտկազմակերպության դերն ու նշանակությունը: Կոմերիտականները դառնում էին արտադրության առաջավորներ և մշակութային շինարարության նախածեռնողներ: Սկսած 1929 թ. կոմերիտականները ստեղծում էին կամավոր բրիգադներ՝ խոտի, ծղոտի հայթայթման, սիլոսի պատրաստման, անասնաշենքերի նորոգման, արդյունաբերական ձեռնարկություններին օգնելու և այլ աշխատանքներ կատարելու համար: Հին կոմերիտական աշխատող Ռուբեն Շումանյանը հետագայում 1968 թ., «Սովետական Ղարաբաղ» թերթում հրապարակած «Հիշում եմ, հպարտանում» հոդվածում պատմում է 30-ական թթ. մարզի կոմերիտականների կատարած հայրենամարտի աշխատանքների մասին, որոնք միշտ էլ քայլել են առաջավորների և նախածեռնողների շարքերում²⁴:

Սարգում ժողովրդական տնտեսության զարգացման գործում կարևոր դեր են խաղացել նաև արհմիությունները: Արտադրական, մշակութային և կենցաղային բնույթի շատ հարցեր լուծվում էին արհմիությունների միջոցով: 1930 թ. արհմիությունների անդամների թիվը հասնում էր 6895-ի, որը պատերազմի նախօրյակին բազմապատկվել էր²⁵:

Միությունում տեղի ունեցած տնտեսական, քաղաքական և մշակութային փոփոխությունները պետք է օրենսդրական ուժ ստանային նոր Սահմանադրությամբ: ԽՍՀՄ Սահմանադրության նախագիծը լայնորեն քննարկվեց նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Սարգում շուրջ 6 ամիս: Սահմանադրության նախագծի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտեցին 3000 հոգի, և մտցվեց ընդհանրացված 157 առաջարկություն: Մարզի գյուղական 127 խորհուրդներ իրենց 158 նստաշրջաններում և սեկցիաների նիստերում, որոնց մասնակցեց խորհուրդների և սեկցիաների 7330 անդամ, քննարկեցին Սահմանադրության նախագիծը և ներկայացրին իրենց դիտողությունները²⁶: Սահմանադրության նախագիծը քննարկվեց նաև 275 ընդհանուր ժողովներում, որոնց մասնակցեց 57450 մարդ²⁷: 1936 թ. նոյեմբերի 12-ին Ստեփանակերտում հրավիրված աշխատավորների պատգամավորների մարզային խորհրդի 8-րդ արտակարգ համագումարը միաձայն հավանություն տվեց Սահմանադրության նախագծին:

Նոր Սահմանադրության համաձայն վերացվեց Անդրկովկասյան դաշնությունը, Խորհրդային Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը դարձան ինքնուրույն խորհրդային հանրապետություններ:

Խորհրդային իշխանության տարիներին դանդաղորեն բարելավվում էր Լեռնային Ղարաբաղի բնակչության կենսամակարդակը: Նախապատերազմյան հնգամյակների տարիներին ծնունդ առան մանկանությունը ու մանկապարտեզները, բացվեցին հիվանդանոցներ, լայն սպառման ապրանքների և մթերային խանութներ, խնայողամարկ-

դեր, օրըստօրե բարձրանում էին բնակչության գնողունակությունը, նրանց ռեալ եկամուտները: Միջոցների խնայումը մտավ բնակչության կենցաղի մեջ: Արդեն 1935 թ. մարզում կար 12 խնայողամարկը՝ 6672 ավանդատուներով: Նույն թվականի վերջին խնայողամարկդերում մնացորդ կազմել է 56.9 հազար ռուբլի²⁸:

Կոլտնտեսային կարգի ստեղծումը լրիվ փոխեց մարզի բնակչության տնտեսական վիճակը, ամենից առաջ վերացան սովն ու տառապանքը, փոխվեց արցախցու ապրելակերպը: Ծնվեց նոր ու լուսավոր կյանք: Տարեցտարի հզորանում և բարգավաճում էին կոլտնտեսությունները, կրկնապատկվում մարդկանց աշխատանքային եռանդը, ավելանում եկամուտների չափը: Այսպես, եթե 1931 թ. մեկ աշխօրի միջին արժեքը կազմել էր 99.6 կոպեկ, ապա 1934 թ. այն հասավ 1 ռ. 46 կոպեկի: 1931 թ. մեկ տնտեսությանը բաժին էր ընկնում 186 աշխօր, իսկ 1934-ին՝ 379²⁹: 1934 թ. Մխտորաշենի կոլտնտեսությունում մեկ աշխօրին բաժանվեց 12 կգ հացահատիկ, Խրամորթի կոլտնտեսությունում 10.4 կգ³⁰: Նման կոլտնտեսությունների թիվը մարզում հասնում էր երեք տասնյակի: Երկրորդ հնգամյակի առաջին տարում մարզի կոլտնտեսություններում մեկ տնտեսությունը միջին հաշվով ստացավ 900 կգ ցորեն 1932 թ. ստացված 600 կգ-ի դիմաց³¹: Ղուզե ճարտարից կոլտնտեսական Պողոս Շաքարյանը իր վաստակած 349 աշխօրի դիմաց ստացել է 109 փութ ցորեն, 33 փութ գարի, 7 փութ կորեկ, 5 փութ մրգեղեն, 10 դուլլ գինի և օղի, 150 ռ. կանխիկ դրամ³²: Շաքարյանի նման բավականին թվով կոլտնտեսականներ կային Լեռնային Ղարաբաղում:

1930-ական թթ. Լեռնային Ղարաբաղի արդյունաբերական, պետական և հասարակական կազմակերպությունների աշխատողների կյանքում, նրանց ապրելապայմաններում, կենսամակարդակի մեջ տեղի էին ունենում նկատելի փոփոխություններ: Առանձնապես բարձրանում էին աշխատավարձերը, ունաք ստանում կամ ինքնուրույն կառուցում էին բնակարաններ: 1934 թ. մետաքսագործների օրական միջին աշխատավարձը կազմում էր 3.74 ռ., Ղարգինտրեստի աշխատողներինը՝ 1.26 ռ., իսկ տեղական արդյունաբերության ձեռնարկություններում աշխատողներինը՝ 1.40 ռ.: Ճաշարաններ բացվեցին բոլոր խոշոր ձեռնարկություններում, ստեղծվեցին մերձքաղաքային տնտեսություններ, ավելացավ մանկապարտեզների թիվը, մեծացան նվիրատվությունների ֆոնդերը և այլն:

Լեռնային Ղարաբաղում աստիճանաբար ծավալվում էր բնակարանաշինարարությունը: Եթե 1924 թ. այդ նպատակով ծախսվել էր 95 հազար ռուբլի, ապա չորս տարի անց այն հասել էր 500 հազարի: Հնգամյակների տարիներին գրեթե քառապատկվեցին բնակարանների շինարարության համար հատկացված միջոցները³³:

Տարեցտարի բարձրանում էին մարզի բնակչության սոցիալական ապահովագրության հատկացումները: Եթե 1934 թ. այդ նպատակով հատկացվել էր 0.2 հազար ռուբլի, ապա 1935 թ. այն հասել էր 6.0 հազարի³⁴: 1930 թ. մարզում կար 247 թոշակառու, 1934-ին՝ 518: Մեկ տարվա միջին թոշակը նույն ժամանակաշրջանում 7200 ռուբլուց հասել էր 18 հազարի³⁵: Օգնություն էր ցույց տրվում բազմազավակ ընտանիքներին: 1937 թ. մարզում գործած 18 մանկամսուրներում ընդգրկված էր 467, իսկ 30 մանկապարտեզներում 1095 երեխա³⁶:

Նախապատերազմյան տարիներին զգալի փոփոխություններ տեղի ունեցան նաև բուժսպասարկման բնագավառում: Նախահեղափոխական Լեռնային Ղարաբաղում կար ընդամենը մեկ հիվանդանոց Շուշի քաղաքում՝ 30 մահճակալով, երկու բժշկով և 7 բուժաշխատողով: Երկրամասի ավելի քան 220 բնակավայրեր գրկված էին բժշկական սպասարկումից: Խորհրդային իշխանության տարիներին սկզբում դանդաղ էր առաջ գնում բուժսպասարկման գործը, հիմնականում բուժօգնություն էին ցույց տալիս Կարմիր բանակի զորամասերի բուժաշխատողները: Վարակիչ հիվանդությունները, նյութական ծանր պայմանները, սովը ամեն օր գերեզման էին իջեցնում տասնյակ մարդկանց: Ղարաբաղի գյուղերում նույնիսկ չկային բուժակներ³⁷: Արդեն 1923 թ. մարզում կար 2 հիվանդանոց, 4 բժիշկ և 5 բժշկական կետ: 1927 թ. հիվանդանոցների թիվը հասավ 5-ի, բժիշկներինը՝ 22-ի, բժշկական կետերինը՝ 16-ի³⁸: Բժիշկներ էին հրավիրվում Երևանից, Թիֆլիսից, Մոսկվայից և այլ տեղերից: Մարզի ստեղծման առաջին տարում Ստեփանակերտում բացվել էր պոլիկլինիկա՝ 6 կաբինետով, հիվանդանոց՝ 100 մահճակալով:

Միջոցառումներ ձեռնարկվեցին մանկական կոնսուլտացիոն կետեր բացելու, կանանց օգնություն ցույց տալու, դեռահասների մահացությունը կրճատելու ուղղությամբ: 1926 թ. մարզում սկսեցին գործել երեխաների կոնսուլտացիաների 1 կետ և 3 ծննդատուն³⁹: Մարզի աշխատավորները ձրի ստանում էին դեղեր, նրանց նախաձեռնությամբ կառուցվում էին հիվանդանոցներ և բժշկական կետեր: 1927 թ. Մեծ Թաղեր գյուղում աշխատավորների միջոցներով կառուցվեց բժշկական կետ, որից օգտվում էին նաև Տումի, Ազոխ, Ղրախտիկ և Սալաքար գյուղերի բնակիչները: Բուժկետն օրական ընդունում էր մինչև 60 հոգի⁴⁰: Թաղարեցիներին ընդօրինակեցին մարզի բազմաթիվ գյուղերի բնակիչները: 1931 թ. մայիսի 3-ին մարզգործկոնը որոշեց Ստեփանակերտում կառուցել հիվանդանոցի նոր շենք, սակայն այն ձգձգվեց մինչև 1935 թ.: Հիվանդանոցներ և բժշկական կետեր բացվեցին ինչպես շրջակնտրոններում, այնպես էլ մի շարք խոշոր բնակավայրերում: Առաջին հնգամյակի

վերջում մարզում արդեն գործում էին 6 հիվանդանոց՝ 170 մահճակալով, 5 անբուլատորիա, 21 բժշկական և ֆելդշերական կետեր, մեկ ջերմախտի կայան, մանկական 4 և կանանց մեկ կոնսուլտացիոն կետեր, 36 բժիշկ, 48 կրտսեր բուժաշխատող⁴¹: Երկրորդ հնգամյակի վերջին մարզում հիվանդանոցների թիվը հասնում էր 10-ի, մահճակալների թիվը՝ 262-ի: Մարզի հիվանդանոցներում այդ ժամանակ աշխատում էին 46 բժիշկ, 5 ատամնաբույժ և 162 կրտսեր բուժաշխատող⁴²: Հնգամյակի վերջին 1937 թ., մարզում առողջապահության ուղղությամբ կատարված ծախսերը կազմեցին մարզի բյուջեի 15%-ը:

Լեռնային Ղարաբաղում առաջին հեռախոսագիծն անց է կացվել 1923 թ.: Մեկ տարի անց Ստեփանակերտում գործում էր 30-տեղանոց հեռախոսակայան⁴³:

Մինչև 1923 թ. մարզում չկար որևէ հիմնարկություն, որը միավորեր փոստային բաժանմունքները, գործակալությունները, հեռախոսային և հեռագրային կայանները, ռադիոկայանները: Գյուղերի հետ փոստային կապը տարվում էր 22 գործակալությունների և փոստատարների միջոցով, որոնց թիվը 1933-ին հասնում էր 116-ի: Նույն թվականին մարզում կար հեռախոսային 180 կետ⁴⁴: Մինչև երկրորդ հնգամյակի վերջը 1.4 անգամ աճեց գործակալությունների, փոստատարների, փոստային բաժանմունքների և հեռախոսային կետերի թիվը:

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին ուշադրություն էր դարձվում նաև մարզի ճանապարհների կարգավորմանը: Անցյալում Շուշի քաղաքով էր անցնում Անդրկովկասի ամենահին խճուղիներից մեկը, որը հնդկաստանը և Իրանը կապում էր Թիֆլիսի և Երևանի հետ: Առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմների տարիներին Ղարաբաղի ճանապարհները դուրս էին եկել շարքից, իսկ դա խիստ բացասական էր ազդում երկրամասի տնտեսության զարգացման և աշխատավորների կենսամակարդակի բարձրացման վրա: Ճանապարհներն անբարեկարգ լինելու կամ բացակայության պատճառով տարվա մի քանի ամիսներին, մանավանդ ծնոհանը, մարզի քաղաքների և բազմաթիվ գյուղերի, մարզի և հարևան հայկական ու թուրքական շրջանների, ինչպես և երկաթուղային կայանների միջև կապը խզվում էր: Ինչ խոսք, դրանից մեծ վնաս էր կրում մարզի տնտեսությունը: Խորհրդային իշխանության առաջին տարիներին մարզում ճանապարհաշինարարության ուղղությամբ չայն պլան մշակվեց, սակայն դրա իրագործումը սկսվեց նախապատերազմյան հնգամյակների տարիներին: Նախ՝ նորոգվեց Մուլլա-Նասրեդին (Վարանդայի) կոչված ճանապարհը, որը Կարյազինոն կապում էր Ստեփանակերտի հետ, ավարտվեցին դեռևս դարասկզբին սկսված Շուշի-Գյանջա (Գանձակ) ճանա-

պարհի շինարարության աշխատանքները⁴⁵: 1930 թ. սկսվեց Ստեփանակերտ- Մարտունի, 1931-ին Շուշի-Խալիֆալու, Թարթառ-Մարգուշևան- Մարտակերտ, Տող-Տունի, 1932-ին Կարյազինո-Տող, Գաղբու- Առաքել, Շոշ-Նավաթխան, Ստեփանակերտ-Ղարաշշաղ, Մարտակերտ-Գասանլիս ճանապարհների շինարարությունը: Եթե 1929 թ. մարզում կար 120 կմ հարմարավետ ճանապարհ, ապա 1933 թ. այն հասել էր 343 կմ-ի: 1936 թ. հուլիսի 26-ին մարզկոմի բյուրոն, քննության առնելով մարզում ճանապարհաշինարարության հարցը որոշեց արագացնել մանավանդ Ստեփանակերտ-Քալուբա, Մարտունի-Ննգի-Ստեփանակերտ, Գաղբու-Գյուզուլյակ և այլ ճանապարհների շինարարական աշխատանքները⁴⁶:

Խորհրդային տարիներին քավականին փոփոխություններ տեղի ունեցան նաև արցախցիների կենցաղում: Նոր պայմաններում արցախցի կինը լիովին ազատվել էր դարավոր ստրկությունից: Նախախորհրդային արցախցի կինը, ինչպես գրել է ժամանակի մամուլը, չորս պատերից դուրս հասարակական վայրերում, «մի զարմանալի երևույթ» էր⁴⁷: Նրանք լրիվ «նահապետական ստրուկներ էին»⁴⁸: Ղարաբաղի երիտասարդը, ամուսնանալով 12-14 տարեկան աղջկա հետ, սկսում էր «նրան խրատել ծեծելով, հայիոյանքներով, զանազան տեսակ պատիժներով, խրատում է սկեսուրը, տագրակինը, քեռակինը...», — վկայում էր Լեոն⁴⁹:

Արցախի կանանց այդ վիճակից դուրս բերեցին խորհրդային կարգերը: Նոր պայմաններում կանանց աշխատանքը նոր բնույթ, նոր իմաստ ստացավ: Կնոջը տրվեց տղամարդուն հավասար իրավունք: Դեռևս 1921 թ. Վ. Ի. Լենինը հարց էր դրել կնոջը դուրս բերել «տնային ստրկությունից»⁵⁰, իսկ մեկ տարի անց կուսակցության 11-րդ համագումարը ցուցում էր տվել «գյուղատնտեսությունը քարծրացնելու գործում» ղեկավար աշխատանքի առաջ քաշել նաև կանանց⁵¹:

1920 թ. կուսակցության Ղարաբաղի գավառային կոմիտեին կից կազմակերպվեց կինբաժին, որի աջակցությամբ կանանց կազմակերպություններ ստեղծվեցին արդյունաբերական ձեռնարկություններում և գյուղերում: 1924 թ. օգոստոսին մարզում 30 գյուղերի կանանց կազմակերպությունների անդամների թիվը հասնում էր 300-ի: Այդ նույն թվականին կանանց կազմակերպությունների նախաձեռնությամբ բացվեց 9 լիկկայան⁵²: 1925 թ.-ից Լեոնային Ղարաբաղի մարզգործկոմին առընթեր սկսեց գործել աշխատավոր կանանց կենցաղի բարելավման կոմիտե: Կուսակցական և պետական մարմինների շուրջը համախմբվեցին մարզի կին ակտիվիստների հիմնալի կադրեր: 1925 թ. մարտի 20-ին Ստեփանակերտում տեղի ունեցած Լեոնային Ղարաբաղի անկուսակցական կանանց համագումարը, որին մասնակցեց 70 կին պատգամավոր,

կարևոր դեր խաղաց կանանց շրջանում մասսայական-քաղաքական աշխատանքները կազմակերպելու գործում⁵³: Համագումարի նախաձեռնությամբ մարզի կանանց շրջանում աշխատանքներ էր տանում պատգամավորական 19 կետ: Սկսեցին կանանց առաջ քաշել արտադրության մեջ և կուսակցական ու պետական մարմիններում: Արդեն 1935 թ. վերջին մարզի 189 գյուղական փոխօգնության կոմիտեների 1892 անդամներից 187-ը կանայք էին⁵⁴: Մարզում չկար որևէ գյուղական խորհուրդ, որի անդամների մի մասը չլինեին կանայք: Կանանց կազմակերպությունները լայն աշխատանք էին տանում մանավանդ գյուղում: Օրինակ Տողի կանանց կազմակերպության մեջ մտնում էր 30 կին: Այդ կազմակերպությունն ուներ 5 հոգուց բաղկացած բյուրո: Կազմակերպության նիստերը, որպես կարգ, տեղի էին ունենում կիրակի օրերին և լսում էին գյուղատնտեսական, առողջապահական ու քաղաքական բնույթի զրույցներ⁵⁵: Համանման աշխատանքներ էին տանում նաև մյուս գյուղերի կանանց կազմակերպությունները: 1926/27 ուսումնական տարում մարզի կանանց համար բացվեցին 16 լիկկայան և կար ու ձևի 12 դպրոց, որոնցում սովորում էր 250 կին: 1927 թ. տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ 635 կին ընտրվեց խորհուրդների անդամներ, իսկ չորսը՝ նախագահ: Աշխատելու և սովորելու համար ստեղծվում էին պայմաններ: Մարտունիում կանանց համար բացվեց անկյուն, Խճճիստանում՝ մանկամսուր, Մարտակերտում՝ մանկապարտեզ, Կարմիր գյուղում՝ մեղվաբուծական արտել և կար ու ձևի դպրոց, Ստեփանակերտում՝ թռչնաբուծական արտել, Բաղարայում՝ կար ու ձևի արտել և այլն⁵⁶: 1928 թ. Չանախչի (Ավետարանոց) գյուղում բացվեց գուլպագործական արհեստանոց, որը ղեկավարում էր առաջավոր գուլպագործուհի Մանուշակ Շահնազարյանը, իսկ Արմենավան (Հայկական) և Կրկժան գյուղերի կանանց կողմից կազմակերպված թռչնաբուծական արտելը ղեկավարում էր մարզի անվանի թռչնաբույծ Անինկա Բալասանյանը: Արտելներ կազմակերպելու կանանց ցանկությունը լայնորեն տարածվել էր մարզի բոլոր բնակավայրերում: Կյանքի այդ նոր պայմաններին, սակայն, դժվար էին հարմարվում թրքուհիները: Նրանք դեռևս շարունակում էին շարժվել հին, նահապետական օրենքներով, դուրս չէին գալիս չաղրայի տակից: Այդ երևույթի դեմ ամենից առաջ պայքարում էին կանանց կազմակերպությունները: 1929 թ. հունվարի 24-ին Կրկժան գյուղում տեղի ունեցած կանանց ընդհանուր ժողովին մասնակցում էին 28 թրքուհի և 3 հայուհի: Խորհուրդների վերընտրությունների և չաղրայի վերացման մասին զեկուցումով հանդես եկավ մարզկոմի աշխատակցուհի Սուսաննա Բալայանը: Դրոշվեց խորհուրդների ընտրություններին ներկայանալ առանց չաղրայի և կանանց

աշխատելու համար գյուղում կազմակերպել թռչնաբուծական ֆերմա⁵⁷: Համանման ժողովներ տեղի ունեցան նաև բոլոր այն բնակավայրերում, որտեղ ապրում էին թրքուհիներ:

30-ական թթ. հազարավոր կանայք մտան կոլտնտեսություններ և դրանք ամրապնդելու համար սղված պայքարում քայլում էին իրենց ամուսինների կողքին: Մոխրաթաղցի կթվորուհի Անուշ Ասիրյանը հարվածային կոլտնտեսականների երրորդ համագումարի պատգամավոր էր: Երբ համագումարից վերադարձավ, հպարտությամբ դիմեց իր համերկրացիներին. «Ով է տեսել, որ «տրեխավոր» ու հասարակ կոլ կթողը համագումար գնա, նստի ու աշխատի այնպիսի մեծ պալատներում, ինչպիսին են Կրեմլի պալատները... Ով է տեսել, որ մեզ նմանների որդիները սովորեն համալսարաններում: Միայն խորհրդային իշխանությունն է, որ այդ բոլոր հնարավորությունները տվել է մեզ...»⁵⁸:

Մարզի կանայք աշխատանքում ետ չէին մնում տղամարդկանցից: 1936 թ. տեղի ունեցած մարզային խորհուրդների 8-րդ համագումարի անբիռնից բանագուրցի կթվորուհի Մարալ Պետրոսյանը հայտարարեց. «Ցարական իշխանության ժամանակ չորս երեխատեր կինը, այն էլ առանց ամուսնու, զբաղվում էր մուրացկանությամբ: Ես կթվորուհի եմ... վաստակել եմ 367 աշխօր, ապրում եմ ունևոր և կուլտուրական: Իմ բոլոր երեխաները սովորում են, հազնվում են լավ և ունեն կոշիկներ»⁵⁹:

Մարզում աստիճանաբար կենցաղ մտան երկաթյա մաիճակալներ, կահույք, գրամաֆոն, հագուստի նոր ձևեր, արդուկ և այլն:

Փոխվում էր գյուղերի տեսքը: Արդեն երևում էին նոր, երկհարկանի, լուսավոր բազմասենյականոց տներ, նոր փողոցներ, նոր թաղամասեր, գեղեցիկ կառույցներ, մշակութային օջախներ, էլեկտրական լույս, ռադիո, հեռախոս, էլեկտրաաղաց, ակումբ, դպրոցական շենք: Օրինակ Բալլուջա գյուղն ուներ 28-տեղանոց մանկամսուր, ակումբ, դպրոց, փոստ, կոոպերատիվ երկու խանութ, ռադիո, հեռախոս, յոթնամյա դպրոց: Արդեն պատերազմի նախօրյակին գյուղում կառուցվել էին 65 քարաշեն, լուսավոր ու հաճելի տներ: Մինչ այդ խորհրդային իշխանության տարիներին գյուղից 500 հոգի ավարտել էր համալսարան, բանֆակ, տեխնիկում և տարբեր դասընթացներ⁶⁰: Լեռնային Ղարաբաղում կային նման մի շարք գյուղեր:

Խորհրդային կարգերի ծնունդ է մարզի կենտրոն Ստեփանակերտը՝ նախկին Խանքենդը, որը հանդես էր եկել Վարարակ բնակավայրի տեղում: Ինքնավար մարզի ստեղծումից մեկ տարի անց արդեն վերականգնվել էին բոլոր ավերված տները, քաղաքն ուներ էլեկտրական,

զբոսայգի, բաղնիք, գյուղատնտեսական տեխնիկում, առաջին աստիճանի աշխատանքային դպրոց, կուսակցական դպրոց և ակումբ, կինօթարոն, թատերական խումբ, գրադարան, տպարան, հիվանդանոց և ամբուլատորիա, շուկա, փոստային բաժանմունք, հեռախոսակայան, ունիվերսալ խանութ, առևտրական 40 կետ, տնայնագործական 24 ընկերություն, 470 կառույց 20787 քառակուսի մետր բնակարանությամբ, 2467 բնակիչ և այլն⁶¹: Հաջորդ տարիներին Ստեփանակերտում, ինչպես նկատել էր Մ. Շահինյանը, «տներն աճում են ինչպես սնկեր»⁶²: Կառուցվեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, դպրոցական շենքեր, անցկացվեցին ջրախողովակներ, իրար ետևից ծնվեցին ասֆալտապատ փողոցներ և այլն: 1927 թ. գծվեց քաղաքի նախագիծը, իսկ 1930 թ. հաստատվեց քաղաքի պլանավորումը: Նախապատերազմյան հնգամյակներում հասակ էին առնում նաև Մարտակերտը, Մարտունին, Հաղրուքը և մի շարք բնակավայրեր: Շուշիում կառուցվեցին արդյունաբերական ձեռնարկություններ, հանգստյան տներ, և վերանորոգվեցին մի քանի ավերված շենքեր:

6. Այսպես կոչված «քրդական» հարցը

Թուրք-ազերիները 1920-ական թթ. սկզբներին հորինեցին «քրդական» հարցը և Հայաստանից պոկեցին ոչ միայն Արցախն ու Նախիջևանը, այլև Արցախ-Ղարաբաղից արհեստականորեն անջատեցին ամբողջ Հյուսիսային Արցախը՝ այժմյան Շահումյանի, Խանլարի, Դաշթեսանի (Քարահատ), Գետաբեկի և Շամխորի շրջանները՝ 107 հայկական գյուղերով¹:

20-ական թթ. սկզբին Խորհրդային Հայաստանը և Արցախ-Ղարաբաղը ունեցել են անմիջական սահման: Սակայն Ադրբեջանի կողմից ձեռնարկված հակահայկական քաղաքականության հետևանքով արդեն 30-ական թթ. սկզբին Արցախը մայր Հայաստանից անջատված էր նեղ շերտով: Շահեն Սկրտչյանի բերած տվյալների համաձայն՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի սահմանն անցնում էր Հագարի գետով՝ Լաչինից մոտավորապես 8 կմ հարավ, Գորիսի շրջանի Տեղ և Կոռնիձոր գյուղերի տարածքով: Այդ հողերը ոչ հեռու անցյալում պատկանում էին Հայաստան-Արցախին²: Արդեն 1930 թ. Արցախ-Հայաստան ընդհանուր սահմանը փոխվել էր, և նրանց միջև զոյացել էր Լաչինի չարաբաստիկ միջանցքը: Այստեղ հիմնական դերը խաղացել է «քրդական գավառի» ծնունդը, որը Ադրբեջանի իշխանությունների կողմից քարշ է տրվել մինչև 1929 թ.: Ադրբեջանի իշխանությունները քրդական գավառ ստեղ-

ծելու միտումով կարողացան ստեղծել մի այնպիսի վիճակ, որը հնարավորություն տվեց Հայաստանի և Արցախի միջև սահմանները հեռացնել, ապա տարածքը սկզբում «քրդացնել, հետո հապշտապ նրանց քաջցնել»: Իմիջիայլոց, նման քայլեր առաջինը կատարել էին պարսիկ խաները դեռևս 17–18-րդ դարերում, երբ Արցախի և Հայաստանի անմիջական կապը կտրելու համար Պարսկաստանից ու Անդրկովկասի տարբեր տեղերից բերել ու այդ տարածքում բնակեցրել էին մի շարք քրդական ցեղեր³: Նաև հիշենք, որ մինչև քրդական գավառի ստեղծումը, Ադրբեջանում ապրում էր 41368 քուրդ, իսկ տասը տարի անց այդ թիվը իջել էր 18183-ի: Անկասկած, քրդերի ողբերգությունը Ադրբեջանի ազգակույլ քաղաքականության մի օղակն է: Արդեն 1979 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանում ոչ մի քուրդ չկար: Ո՞ր էին նրանք անհետացել: Գուցե այդ հարցին պատասխանեն Ադրբեջանի պատմաբանները: Իսկ հիմա՝ ըստ նույնի:

Քրդստանի գավառ ստեղծելու Ադրբեջանի իշխանությունների միտումը հետապնդում էր հետևյալը. 1. Լեռնային Ղարաբաղը կտրել Հայաստանից և 2. վերացնել Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջև ընկած տարածքում անցյալում բնակեցված քրդերին նրանց թուրքացնելու ճանապարհով: Այդ քայլով Ադրբեջանը կազատվեր հանրապետությունում փոքրամասնություն կազմող քրդերից:

Իմ այս համոզումը բխում է հետևյալ դատողությունից. 1. Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև ընկած տարածքում բնակեցված քրդերի հարցը սկսել էր հետաքրքրել Ադրբեջանի ազգայնամուլ տարրերին հենց այն ժամանակ, երբ Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցը դարձել էր անհետաձգելի և դրանից խուսափելու համար ելք չունեին, չնայած թուրք Նարինանովը Մոսկվայից աղաղակում էր և ամեն կերպ ջանում բացասական լուծում տալ Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցին: 2. Ստեղծված քրդական գավառը հազիվ գոյություն ունեցավ 1923–1929 թթ.: Եվ երբ այդ շրջանում լուծվել էր քրդերին հետևողականորեն թուրքացնելու հարցը, վերացրին Քրդստանի գավառը և փոխարենը մոզոնեցին, այսպես կոչված, Լաչինի շրջանը, որտեղ, արդեն հաջորդ մարդահամարի տվյալներով, քուրդ բնակիչ «չկար», բոլորը «ազերիներ» էին, այսինքն՝ թուրքեր:

Քրդստանի մասին առաջին անգամ խոսվել է Ադրկովկասի Կենտկոմի 1923 թ. հուլիսի 1-ին տեղի ունեցած նախագահության նիստի ընդունած որոշման մեջ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումով զբաղվող նորընտիր հանձնաժողովին հանձնարարվել էր որոշել «Քրդստանի վիճակը»: Այստեղից բխում է այն, որ մինչ այդ Ադրբեջանի վերադաս մարմիններում խոսակցություն է գնացել Հայաս-

տանի և Ղարաբաղի միջև ընկած տարածքում բնակվող քրդերի մասին: Ադրկենտգործկոմի նիստը, քննարկելով «Լեռնային Ղարաբաղի մասին» հարցը, գրեթե նույնությամբ արտագրել է Ադրկովկասի Կենտկոմի նախագահության վերոհիշյալ որոշումը, մանավանդ Քրդստանի մասին⁴: Իսկ 1923 թ. հուլիսի 7-ին ընդունված ԼԴԽ հռչակագրի 4-րդ հոդվածի համաձայն մարզի կանոնադրությունը ստեղծելու և վարչական իշխանությունները Ղարաբաղի Ինքնավար Մարզին հանձնելու համար ստեղծված խառը հանձնաժողովի մեջ է մտցվել նաև Քրդստանի ներկայացուցիչը: Հուլիսի 19-ին «Բակինսկի ռաբոչի» թերթը, հանդես գալով «Ինքնավար Ղարաբաղ» հոդվածով, նշել է, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումից բացի, Հարթավայրային Ղարաբաղը, ըստ Ադրկենտգործկոմի որոշման, բաժանվում է երկու մասի. մեկը Ադղամ կենտրոնով, իսկ մյուսը Ջեբրայիլ: Նաև նշվել է, որ «Քրդստանը նույնպես առանձնացվելու է որպես հատուկ գավառ»: Արդեն Ադրկենտգործկոմի նախագահության և հանրապետության կոմիսարների խորհրդի հուլիսի 21-ի համատեղ որոշման մեջ ասված է. «Քրդերի զբաղեցրած տարածքից կազմել «Քրդստանի գավառ»⁵: Հուլիսի 30-ին տեղի ունեցած Ադրկովկասի Կենտկոմի նախագահությունը, լսելով «Լեռնային Ղարաբաղի առանձնացման հետ կապված հարցը», հաստատեց «Քրդստանի, Ջեբրայիլի և Ադղամի գավառների սահմանների վերաբերյալ» քարտեզները և Քրդստանի գավառի կենտրոն հաստատեց Փիրիջան ավանը: Այդ որոշման համար հիմք էր հանդիսացել հանձնաժողովի նախագահ Բունիաթգադեի և քարտուղար Խանբուղաղովի ստորագրություններով հաստատված արձանագրությունը, որն ունի հետևյալ անունը. «Протокол заседания комиссии по выработке положения автономной области Нагорного Карабаха, установлению границ между Низменным и Нагорным Карабахом, а также между Нагорным Карабахом и Курдистаном и определению форм административного управления Низменного Карабаха и Курдистана»: Այդ նույն նիստում, բացի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին տրվող բնակավայրերը փարկվելուց, անդրադարձել են նաև «Քրդստանի կառավարման ձևի և վարչական բաժանման մասին» հարցին ու որոշել. «Նկատի ունենալով Քրդստանի հեռու լինելը Բաքու կենտրոնից, ինչպես և Հարթավայրային Ղարաբաղից նույնպես հեռու ու կտրված լինելը և ունենալով մոտ 60 հազար բնակչություն մտել է երկու առաջարկություն. 1. Քրդստանը առանձնացնել որպես հատուկ վարչական միավոր գավառի իրավունքով, անմիջապես կենտրոնի ենթակայությամբ, Ջևանշիրի, Շուշիի և Ղուբայթուի Քրդստանների կազմով. 2. Քրդստանը թողնել որպես շրջան ենթարկելով Հարթավայրային Ղարաբաղին»:

Սակայն քանի որ նիստում ձայները կիսվել էին, ուստի որևէ որոշում չընդունվեց: Այդ նիստում, այնուամենայնիվ, Քրդստանի սահմանը Տեբրայիլի հետ որոշվել է Լեռնային Ղարաբաղի Շուշիի գավառի հետ ունեցած սահմանով⁶: Արդեն օգոստոսի 6-ին Ադրկենտոգործկոմը Փիրիջանը հաստատեց որպես Քրդստանի կենտրոն, և ստեղծվեց հինգ հոգուց բաղկացած գավառագործկոմ՝ Գաջևիսի նախագահությամբ: Որոշվեցին նաև գավառի սահմանները⁷: Իսկ մի փոքր անց 1923 թ. հոկտեմբերի 8-ի Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահության որոշմամբ Քրդստանի գավառային կենտրոնը ժամանակավոր տեղավորվեց Շուշիում, իբր Փիրիջանում չկային համապատասխան շինություններ և հնարավորություններ: Միևնույն ժամանակ կոմիսարների խորհրդին հանձնարարվեց արագորեն զբաղվել Քրդստանի գավառի կենտրոնի շինարարության հարցով: Միջոցներ խնդրվեցին Անդրկովկասի դաշնության գործկոմից՝ Քրդստանով անցնող Շուշի-Գորիս մայրուղին նորոգելու համար: Որոշվեց քրդական գավառում կազմակերպել բժշկական, ֆելդշերական և անասնաբուժական կետեր, անցկացնել հեռախոս, բացել դպրոցներ և այլն⁸: Իսկ մինչ այդ սեպտեմբերի 13-ի զեկուցագրից իմանում ենք, որ գավառում բացվել էր 26 դպրոց, սակայն դրանց մեծամասնությունը գոյություն չուներ: Առաջարկվում էր այնտեղ ուղարկել փորձառու ուսուցիչներ և դպրոցների թիվը հասցնել 50-ի: Սակայն ոչ մի փաստաթղթում չէր նշված, թե այդ դպրոցները ինչ լեզվով պետք է գործեին՝ քրդերե՞ն, թե՞ թուրքերեն:

Հրապարակված և չհրապարակված նյութերից երևում է, որ Քրդստանի գավառը կազմակերպվում էր արագ, այն էլ՝ չեղած տեղից, միայն թե Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև բոլոր կապերը կտրվեին և ստեղծվեր մի անանցանելի և անհաղթահարելի անդունդ: Հենց այդ ժամանակ էլ վիճաբանության հարց էր դարձել Հայաստանի հետ ունեցած սահմանի հարցը: Լեռնային Ղարաբաղն անջատելով Հայաստանից՝ Ադրբեջանի իշխանությունները հիմա էլ սուր էին ճոճում Ջանգեզուրի դեմ: Ջանգեզուրի և Քրդստանի սահմանների հարցը դարձել էր լուրջ վիճաբանության հարց: Ադրգործկոմի նախագահությունը, 1923 թ. հոկտեմբերի 18-ին քննարկելով այդ հարցը, որոշեց ստեղծել հանձնաժողով, որը պետք է որոշեր երկու գավառների միջև սահմանների հարցը⁹: Հանձնաժողովը զգալի աշխատանք է կատարել այդ երկու գավառների միջև սահմանների վերաբերյալ վիճելի հարցերը լուծելու համար: Ադրբեջանի կենտոգործկոմի նախագահ Մ. Կասումովը 1924 թ. դեկտեմբերին Ադրկոմկուսի Կենտկոմում Քրդստանի գավառի մասին տված զեկուցման մեջ նշել է, որ Քրդստանում չեն դադարում ազգամիջյան ընդհարումները, մասնավորապես այդտեղ ապրող ալիյալունցիների միջև: Վեր-

ջիններս, որոնք բնակվում էին Հայաստանի և Ադրբեջանի սահմանային շրջանում, ազգային հողի վրա բազմիցս ընդհարվել էին մաս հարևան հայերի հետ: Երկրամասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ալիյալունցիները սկսել էին զինվել, չճանաչել խորհրդային կարգերը, ստեղծել ավազակային խմբեր, աջ ու ձախ զբաղվել թալանով և սպանություններով: Կասումովը տեղյակ է պահում, որ այդ ավազակային խմբերը, չնայած ճնշվել էին Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի ուժերի կողմից, սակայն նրանց գործողությունները դեռևս չէին դադարել, նրանց դեմ շարունակում էր պայքարել Լեռնային Ղարաբաղի արտակարգ հանձնաժողովի վարչությունը: Ակնհայտ է, որ կիսավայրի ցեղի կողմից հայկական գյուղերը կրել են մեծ վնասներ: Կասումովը հայտարարում է, թե ազգային հողի վրա սպառվում էին Ղարաբաղի հայերի և ալիյալունցիների խոշոր ընդհարումներ: Սակայն դա կանխվել է Լեռնային Ղարաբաղի արտակարգ հանձնաժողովի վարչության կողմից¹²: Կասումովը պահանջում էր անպայման գտնել մարդասպաններին և պատժել խստորեն, արագորեն լուծել Ջանգեզուրի հետ ունեցած սահմանային հարցերը, օգնել սովի մեջ գտնվող Քրդստանի բնակչությանը, հեռացնել պաշտոն գրաված բեգերին և ավազակներին, Քրդստանի քաղաքաժինն անջատել Լեռնային Ղարաբաղի քաղաքաժինից և թողնել կենտրոնի հսկողության տակ: Այս ընթացք է տրվում այն զրպարտությանը, թե իբր Ղարաբաղի քաղաքներում ազգային հողի վրա գործում է մուսուլմանների դեմ:

Ըստ էության, Արցախ-Ղարաբաղից անջատված թուրքական շրջանները դեմ էին Լեռնային Ղարաբաղի ինքնավարությանը: Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահությունը, 1924 թ. մարտի 10-ին լսելով «Լեռնային Ղարաբաղի գործկոմի և հարևան գավառների գործկոմների հարաբերությունների մասին» հարցը, որոշում ընդունեց անհապաղ Ղարաբաղ ուղարկել Բաղիրովին, Գորբաչենկոյին և Դովլաթովին՝ պարզելու Լեռնային Ղարաբաղի ու հարևան գավառների միջև ստեղծված ծանր կացությունը: Միևնույն ժամանակ հանձնարարվեց Ադրկոմկուսի Կենտկոմի լրատվական բաժնին՝ եռօրյա ընթացքում իր ամուսնից կազմել Ղարաբաղի ինքնավարության մասին շրջիկ նամակ ուղղված Ղարաբաղի մարզկոմի և Քրդստանի, Ադղամի ու Կարյազինոյի գավառներին, որում պետք է «ցույց տրվի հարցի լուծման անխուսափելիությունը»¹³: Այս ամենի արդյունքում Լեռնային Ղարաբաղն անջատվեց մայր Հայաստանից, և քրդերը թուրքացվեցին:

Ահա թե ինչպես ծնվեց և չքացավ Քրդստանի հետ կապված հարցը, որը մեծ դառնություններ բերեց մաս արցախահայությանը:

7. Արցախի թեմը իր վերջին տարիներին¹

1920 թ. մարտին տեղի ունեցած ողբերգությունից, մանավանդ Արցախի թեմի առաջնորդ Վահան Տեր-Գրիգորյանի նկատմամբ թուրք դահիճների իրագործած դաժանությունից հետո Արցախի թեմը մնացել էր առանց ղեկավարության: Արցախահայության խնդրանքին և միջամտությանն ընդառաջելով Գևորգ Ե կաթողիկոսի սրբատառ կոնդակով Անանիա արքեպիսկոպոս Չամազասպյանը 1922 թ. մարտի 27-ին կարգվեց Արցախի թեմի առաջնորդ նստավայր ունենալով Վարանդայի Ավետարանոց գյուղը: Մինչ այդ Արցախի թեմը լիովին կազմալուծվել էր խորհրդային մարմինների կողմից: Մինչ 1922 թ. թեմի մեջ մտնում էր 159 բնակավայր, որոնցից 27-ը չունեի եկեղեցի, քահանա ունեին միայն 39-ը: Այդ ժամանակ թեմն ընդգրկող բնակավայրերն ունեին 19004 ընտանիք՝ 109.526 բնակիչով²: Չնայած Լեռնային Ղարաբաղի բնակչության մեծամասնությունը ցանկություն էր հայտնում վերականգնել իրենց եկեղեցիները, սակայն տեղի էր ունենում հակառակը: Հայտնի է, որ այդ ժամանակ Խորհրդային Միությունում լայն քարոզարշավ էր տարվում գործող եկեղեցիների և հավատացյալների դեմ: Չնայած դրան, այնուամենայնիվ, Արցախում շարունակում էին պայքարել եկեղեցիները վերականգնելու և դրանք ընդլայնելու համար: Արցախից բազմաթիվ դիմումներ ու բողոքներ էին ուղարկվում Էջմիածին, որոնց հեղինակները խնդրում էին տեղական իշխանությունների կողմից եկեղեցիներից վտարված քահանաներին վերադարձնել կամ ձեռնադրել նորերին:

Ալեգարդ Անանիա արքեպիսկոպոսը, գալով Արցախ, սկսում է լայն աշխատանք ծավալել եկեղեցիների գործունեությունն ընդլայնելու և հավատացյալների ցանկությունները կատարելու ուղղությամբ: Հակառակ դրան՝ տեղական խորհրդային իշխանությունները, արհամարհելով բնակչության հավատն ու հարգանքը եկեղեցու նկատմամբ, դիմում էին բռնարարքների: Արխիվային մի փաստաթղթում խոսվում է այն մասին, որ Խանքենդի Ս. Գևորգ եկեղեցին և նրա ունեցվածքը բռնագրավվել են խորհրդային կառավարության կողմից, իսկ քահանայի սենյակը դարձրել էին արհեստանոց, եկեղեցին էլ պահեստատեղի³: Դրանից վրդովված թեմի առաջնորդ Անանիա Չամազասպյանը 1924 թ. մարտի 12-ին բողոքի նամակ է ուղարկում մարզային գործադիր կոմիտեին, որում Ղարաբաղի իշխանություններին հիշեցնում է, որ խորհրդային բարձրագույն մարմինների կողմից եկեղեցին թողնվել է «ժողովրդի ազատ կամքին և խղճին»: Սակայն «նորաբողոք ինքնավար Ղարաբաղի զանազան գյուղերում» ժողովրդի նվիրած տուրքերի «զանձումը խիստ ար-

գելքների է հանդիպում մի քանի անմարդասեր իսպալկոմների շնորհիվ, և մինչև անգամ բռնանում են, ժողովրդի զգացմունքներն ավելի վիրավորում, եկեղեցին ժողովրդատեղի և թատերգություն են դարձնում, նրա սեփականությունը բռնագրավում»: Անանիա արքեպիսկոպոսը օրինակներ է բերում, որ շատ եկեղեցիներ դարձրել էին թատերաբեմ կամ էլ հասարակության ժողովատեղի: Բացի այդ, քահանաներից տուրքերը գանձվում էին չափից դուրս շատ: Արցախի թեմի առաջնորդը, «նկատի ունենալով այդ տարօրինակ երևույթները ու քրիստոնեական եկեղեցուն ծաղրելը» և քանի որ «նորա առաջն առնելն» իր ուժերից վեր էր, ուստի ստիպված էր խնդրել «հեռանալ» պաշտոնից: Նա առանձնապես դժգոհ էր Ստեփանակերտի խորհրդի նախագահ Հարություն Շադունցից, որը «հատուկ անմարդասեր բնավորություն ցույց տվեց և արգելք հանդիսացավ» հավատացյալների գործունեությանը: Թեմի առաջնորդը խնդրում էր կարգադրել «վերոգրյալ երևույթներին վերջ տալ» և հնարավորություն տալ 78-ամյա ծերունուն հեռանալ Արցախից⁴:

Տեղերում մի շարք քահանաներ հրաժարվել էին իրենց պարտականությունները կատարելուց, որովհետև անհնար էր տանել տեղի կուսակցական և պետական մարմինների կողմից իրագործվող ճնշումները: Արցախի թեմի առաջնորդը, 1924 թ. մայիսի 1-ին նոր նամակով դիմելով Գերագույն հոգևոր խորհրդին, հաղորդում է, որ Ստեփանակերտում տեղի ունեցածը կրկնվում է նաև մարզի մյուս բնակավայրերում: Այս և համանման այլ գործողությունների մասին չնայած նոր բողոք ուղարկվեց մարզխորհուրդ, սակայն այն մնաց անհետևանք: Արցախի իշխանավորները, պարզապես կատարելով Բաքվի պահանջները, ամբողջ թափով գործում էին Արցախի եկեղեցու դեմ և վերցրել էին այն լիովին ոչնչացնելու պատրաստականություն: Այդ ամենի հետևանքը լինում է այն, որ թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսը, այլևս չկարողանալով հանդուրժել Արցախում տեղի ունեցող այդ անարդարությունները, հաստատ վճռում է հրաժարվել «այդպիսի պատասխանատու ծանր պաշտոն վարել»⁵: 1924 թ. հունիսի 3-ի Գևորգ Ե կաթողիկոսի հրամանով Անանիա արքեպիսկոպոսն ազատվում է Արցախի թեմի առաջնորդի պաշտոնից և վերադառնում է Էջմիածին⁶: Նրան 1925 թ. փետրվարի 26-ից փոխարինում է Մայր Աթոռի միաբան Վրթանես վարդապետ Հակոբյանը, որը թեմի առաջնորդ լինելու հետ միասին նաև հանդիսանում էր Քանձասարի և Ամարասի վանքերի վանահայր⁷:

Վրթանես վարդապետի օրոք թեմի նստավայր է ճանաչվում Քանձասարի վանքը, ուր թեմակալ առաջնորդը հասավ ապրիլի 7-ին: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ թեմում «ոչ միայն որևէ հոգևոր ներկայացուցչություն գոյություն չունեի, այլև ամբողջ շրջաններ, քահա-

անյը և ժողովուրդ դադարել էին եկեղեցական ծես և արարողութիւն կատարելուց, նույնիսկ հայի համար ամենանվիրական տօներին Ճննդեան ու Ձատիկին»⁸:

Վրդանես վարդապետը բավականին ջանքեր գործադրեց Արցախի թեմն աշխուժացնելու և այն վերականգնելու ուղղությամբ: Նա, գալով Արցախ, իր առաջնահերթ պատիվը համարեց այցելել Լեռնային Ղարաբաղի կենտրոնական նախագահ Արմենակ Կարակոզովին: Ստեփանակերտում, ինչպես երևում է թեմակալի հաղորդումից, նրան ընդունեցին հարգանքով և խոստացան օգնել թեմի գործերը կարգավորելու: Թեմի առաջնորդը հաղորդում էր Էջմիածին, որ Արցախի «ժողորդի մեջ վառ է կրոնական զգացմունքը»⁹: Ինքը՝ Ս. Էջմիածինը ևս շահագրգռված էր վերականգնել Արցախի թեմը, դրա համար էլ արդեն եպիսկոպոսի աստիճան շնորհված Վրթանեսին խորհուրդ էր տալիս «աշխատել ամեն կերպ փակուած եկեղեցիները վերաբանալ և թմրած ժողովրդի միտքն, հոգին վերակենդանացնել և յորդորել հոգեշունչ քարոզներով ու կապուել եկեղեցու ու նրա անբաժան նախնալանդ ծեսերի ու սովորութիւնների հետ»¹⁰:

Լեռնային Ղարաբաղում, ուր օր օրի ավելի էր սաստկանում Ադրբեջանի մուրճի հարվածը, թեմի առաջնորդի համար աշխատելը խիստ դժվար էր: Ադրբեջանի իշխանությունների հանձնարարությամբ փակվում էին եկեղեցիները, ու դուրս վճռվում հոգևորականները: Դրան, անկասկած, ակտիվորեն նպաստում էին Արցախի իշխանությունները՝ անառարկելիորեն իրագործելով ադրբեջանամետ քաղաքականություն: Լեռնային Ղարաբաղի կենտրոնական նախագահ Արմենակ Կարակոզովի և մարզի ներքին գործերի նախարարի հասցեով ուղարկված թեմի առաջնորդի բազմաթիվ բողոք-նամակները շարունակում էին մնալ անպատասխան և անհետևանք: 1920-ական թթ. կեսերին Արցախում հազիվ գործում էր մի քանի տասնյակ եկեղեցի, իսկ մնացածները բռնագրավվել էին տեղական իշխանությունների կողմից¹¹:

Արցախում եկեղեցականները ճգնվում էին պետական հարկերի ծանրության տակ, ենթարկվում ծաղր ու ծանակի: Անմխիթար վիճակում էին գտնվում բոլոր հոգևորականները, որոնցից շատերը ստիպված էին հեռանալ հայրենի երկրամասից, որովհետև ապրելու միջոց չուներին, հալածվում էին, ծաղրվում: Արցախի թեմի այդ անմխիթար վիճակի որջ պատասխանատվությունն ընկնում էր մարզի խորհրդային իշխանության և Ադրբեջանի բռնապետության վրա: Նրանք թույլ չէին տալիս նույնիսկ հրավիրել թեմական պատգամավորական ընդհանուր ժողովներ, հոգևորականները զրկված էին քաղաքացիական բոլոր իրավունքներից¹²: Տեղական իշխանությունների բռնարարքների և ճն-

շումների հետևանքով շատ հավատացյալներ սարսափում էին գնալ եկեղեցի ու նվիրատվություններ անել: Արցախցիներն աստիճանաբար հեռացել և կտրվել էին հարազատ եկեղեցուց: Նրանց աչքերի առաջ ավերվում էին եկեղեցիները: Բացի եկեղեցիները լուսագրալիւուց, պարբերաբար ավելացնում էին քահանայավարձը և քահանաներին զրկում հողաբաժիններից ու ապրելու միջոցներից¹³: Գործող քահանաներից շատերը ստիպված էին դիմել Վրթանես եպիսկոպոսին կամ Էջմիածին՝ քահանայությունից հրաժարվելու համար¹⁴: Շատ քահանաներ իրենց ընտանիքները սուվից ու տանջանքներից փրկելու համար ստիպված էին տեղափոխվել Բաքու, Միջին Ասիա, Ռուսաստան, Հայաստան, Վրաստան և նույնիսկ արտասահման: Այդ ամենը նկատի ունենալով 1926 թ. հուլիսի 30-ին Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գյուտ եպիսկոպոսի ստորագրությամբ խորհրդային Ղարաբաղի ժողովմխորհի նախագահ Արմենակ Կարակոզովին ուղարկած նամակում շարադրվել է Արցախի գյուղերում կուսակցական գործիչների և տեղական իշխանությունների հակաեկեղեցական տգեղ և պատիվ չբերող պահվածքը և խնդրվում է դրա դեմն առնել: Գյուտ եպիսկոպոսը գրում է, թե Արցախի «գյուղական եկեղեցիները փակելուց, թատրոնի և ակումբի վերածելուց և այդպիսով գիւղական իշխանութեան ներկայացուցիչները և կուսակցական անփորձ գործիչները թոյլ են տալիս իրենց գիւղերում վերջին աստիճանի տգեղ ու վրդովեցուցիչ ձևերով ու անվայել արտայայտութիւններով վիրավորել գյուղացի հաւատացեալների կրոնական սրբութիւններն ու զգացումները»: Գյուտ եպիսկոպոսը հույս ուներ, որ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը կդադարեցնի հակաեկեղեցական այդ վայրագությունները, նրանց «կամայական վարմունքն ու հակաօրինական ճնշումները, որոնք իսկապես իրենց այդպիսի վարմունքով... վարկաբեկում են խորհրդային իշխանութեանը գիւղական հաւատացեալ համայնքների աչքերում»¹⁵: Ինչ խոսք, Գյուտ քահանայի գրած այդ բողոք-նամակը մնաց «ձայն քարբառոյ յանապատի» և ոչինչ չփոխեց եկեղեցու նկատմամբ Ղարաբաղի իշխանությունների ունեցած վերաբերմունքում:

Խորհրդային իշխանության մի խումբ ներկայացուցիչներ, Արցախի թեմի առաջնորդի խնդրանքով 1926 թ. դեկտեմբերի 24-ին առաջնորդարան գալով և լսելով առաջնորդի բողոքը, որոշում են Գանձասարի վանքի չորս կողմի վարելահողերը հանձնել թեմին¹⁶: Տեղական իշխանությունների այդ քայլը հույս էր ներշնչում սայլը տեղից շարժել:

Այնպիսի կարգ էր սահմանվել, որ թեմի առաջնորդը իր բոլոր ձեռնարկած քայլերի մասին մանրամասն պետք է տեղեկացներ մարզային իշխանություններին և ստանար նրանց հավանությունը: Օրինակ՝ 1927

թ. մարտի 16-ին ԼՂԻՄ ներքին գործերի կոմիսարին ուղարկած զեկուցագրում ստիպված էր տեղեկացնել, որ «թեմի եկեղեցական-կրօնական այլևայլ գործեր գործակալական, քահանայական-թեմական ժողով կամ խորհրդակցություն չեն լինելու առանց պատշաճ իշխանութեան նախօրոք թույլտուութեան, որին պիտի ներկայացուի և օրակարգի խնդիրները»¹⁷:

Արխիվային նյութերում կան բազմաթիվ տեղեկություններ, որ տեղական իշխանությունները աշխատանքով կաշառում էին որոշ քահանաների և նրանցից պահանջում հանդես գալ եկեղեցու դեմ ու հրապարակայնորեն հրաժարվել քահանայությունից: Թեմի առաջնորդը ջանում էր նման քահանաներին ետ պահել այդպիսի արարքներից և բարձր պահել եկեղեցու հեղինակությունը:

Արցախի թեմի վիճակն ավելի ծանրացավ 1929-1930 թթ. կոլտնտեսային շարժման տարիներին: Այդ ժամանակ մնացած եկեղեցիների բռնագրավումը և դրանք կոլտնտեսությունների կարիքների համար ծառայեցնելը, մանավանդ որպես պահեստներ և շտեմարաններ օգտագործելը, համարում էին խիստ անհրաժեշտ: Թե՛ թեմի առաջնորդը և թե՛ հոգևորականները համառորեն պայքարում էին այդ երևույթի դեմ: Չենց այդ նպատակով թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը, գտնվելով Ստեփանակերտում և հանդիպումներ ունենալով մի շարք պաշտոնյաների հետ, Գանձասար վերադարձավ հուսահատված: Նա հասկացավ, որ Ադրբեջանի պարագլուխների պահանջով ԼՂԻՄ-ի ղեկավարները որոշել էին փակել Արցախի եկեղեցին և հալածել հոգևորականներին: 1929 թ. փետրվարի 11-ին էջմիածին ուղարկած Վրթանես եպիսկոպոսի զեկուցագրից իմանում ենք, որ Արցախի 164 գյուղերում եղած 112 եկեղեցիներից 79-ը փակվել էին 1929 թ. փետրվարի 1-ի դրությամբ: Եվ եթե այդ նույն թվականի սկզբին թեմում գործում էր 91 քահանա, ապա մեկ ամսում նրանցից հեռացել էին 62-ը, իսկ 22-ն էլ գտնվում էին ծայրաստիճան հուսահատ վիճակում¹⁸:

Ադրբեջանի իշխանությունների հանձնարարությամբ զանազան կեղծիքներ էին հորինվում և զրպարտվում Արցախի թեմի հոգևորականները ու թեմի առաջնորդը: 1930 թ. փետրվարի 7-ին ձեռքակալվում է թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը և 3 տարի տառապում Շուշիի ու Բաքվի բանտերում: Ի վերջո, իրավապահ մարմինները ստիպված էին նրան ճանաչել անմեղ ու ազատել բանտից: Արդեն 1932 թ. դրությամբ Արցախում չէր գործում որևէ եկեղեցի, թեմը չուներ ոչ մի քահանա, բռնագրավվել և պետականացվել էր եկեղեցիների ու վանքերի ամբողջ սեփականությունը¹⁹:

Վրթանես եպիսկոպոսի գլխավորությամբ Արցախի պատվիրակությունը մասնակցում է 1932 թ. նոյեմբերի 10-ին գումարված Ազգային եկեղեցական ժողովին թեմակալ առաջնորդը ցանկություն է հայտնում վերադառնալ Արցախ՝ իր պարտականությունները շարունակելու համար: Նա այդ մասին հայտարարությամբ տեղեկացնում է Գերագույն հոգևոր խորհրդին: Սակայն 1933 թ. ապրիլի 7-ին թեմակալին հաղորդվում է, որ Ադրբեջանի կառավարությունը նպատակահարմար չի գտնում Արցախի թեմի հետագա գործունեությունը²⁰:

Ահա այսպես, Ադրբեջանի իշխանությունների պահապոյվ փակվեց Արցախի թեմը, և այն վերականգնելու համար պահանջվեց ավելի քան 45 տարվա անզիջում պայքար:

8. 1920-1930-ական թթ. Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած բռնարարքները

Լեռնային Ղարաբաղում խորհրդային բռնարարքները սկսվել էին հենց խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ Միրբաշիրում և Շուշիում ու նրա շրջակայքի հայկական գյուղերում հարյուրավոր հայեր գնդակահարվեցին թուրք-ազերիների և խորհրդային իշխանության կողմից: Այդ մասին խոսել ենք սույն ուսումնասիրության Ա գրքում: Չետազայում արցախահայության նկատմամբ իրագործված այդ դաժան քաղաքականությունը շարունակվել է 20-30-ական թթ., մանավանդ անհատի պաշտամունքի տարիներին: Այդ ժամանակ հալածանքների ենթարկվեցին մարզի կուսակցական, պետական, տնտեսական, մշակույթի տասնյակ ղեկավար աշխատողներ. մարդիկ, ովքեր իրենց կյանքն ու եռանդը չեն խնայել երկրամասում խորհրդային կարգերի հաստատման, քայքայված տնտեսության վերականգնման և վերափոխման դժվարին խնդիրները լուծելիս:

Ադրբեջանի երախը նետված Արցախ-Ղարաբաղը հալվում էր ու տառապում: Այն հայագրկելու համար կատարում էին նոր ու ավելի անհավոր ձեռնարկումներ: Այստեղ հիմնվեցին տասնյակ թուրք-ազերական բնակավայրեր, իսկ դրա փոխարեն արցախցիներին տեղահան էին անում ու տանում Մինգչաուրն ու Սումգայիթը կառուցելու, Սուղանի տափաստաններում ջրանցքներ փորելու: Լեռնային զովաշունչ կլիմային սովոր արցախցիների շատ զավակներ իրենց մահկանացուն կնքեցին հարավային տոթակեզ վայրերում: Ադրբեջանի իշխանությունները դեռևս 1928 թ. պարտադրեցին Լեռնային Ղարաբաղի ղեկավարությանը արցախցիների ուժերով յուրացնելու մերձարաքսյան անմարդաբնակ տա-

րածքները: Արտաշես Յակոբջանյանը հիշում է, որ այնտեղ աշխատանքների գործնական կազմակերպումը հանձնարարված էր Մարտունու շրջանի ղեկավարությանը, քանի որ յուրացվող տարածքը կազմում էր Մարտունու շրջանի շարունակությունը: Եվ ահա մարզի բոլոր շրջաններից, սկսած Մոսվի փեշին գտնվող Չափար գյուղից մինչև Յաղուրթի ծայրամասային գյուղերը, հարյուրավոր ընտանիքներ տեղափոխվեցին Արաքսի ափամերձ տարածքները, որոնք վերաբացեցին դարեր առաջ հայերի կողմից կառուցված Գյավուր արխի ջրանցքը և այդտեղ ստեղծեցին առանձին կոմունաներ, որոնց հիմքի վրա էլ հետագայում հիմնադրվեցին պետությունները:

1930-ական թթ. այդտեղ տարված արցախցիների քրտնաջան աշխատանքի հետևանքով զարգացան բանբակագործությունը, հացահատիկային կուլտուրաներն ու անասնապահությունը: Ջրանցքից վերև գտնվող անջրդի տարածքները, իբրև «չեզոք գոտի», հայտարարվեցին պետական հողեր, տրվեցին Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսություններին՝ օգտագործելու որպես ոչխարների ձմեռանոց: Յետագայում 40-50-ական թթ., այդտեղ հիմնադրված հայկական գյուղերը հայաթափվեցին և բնակեցվեցին թուրք-ազերիներով:

Ադրբեջանում բռնադատումներն ու կամայականությունները սկսվեցին Արցախից: Ստավոր հաշվարկներով զրպարտվեց և հալածանքների ենթարկվեց ավելի քան 300 հոգի: Որպեսզի կարողանային ավելի շատ մարդկանց նետել Շուշիի կամ Բաքվի բանտերը, իսկ հետո գնդակահարել կամ Սիբիրի գուլակներում ոչնչացնել, Բաքվում մշակվեց հատուկ պլան, ըստ որի առաջին հարվածը հասցվեց ԼՂԻՄ կուսակցական և պետական մարմինների ղեկավարներին: 1937 թ. հոկտեմբերի 7-ին կուսակցության մարզկոմի բյուրոն, առանց որևէ հիմնավորման, աշխատանքից ազատեց մարզկոմի առաջին քարտուղար Պյոտր Պողոսյանին և մարզգործկոմի նախագահ Սուրեն Բաղամյանին՝ իբրև «ժողովրդի թշնամիներ»: Այդ մասին «հատուկ» գրվեց 1938 թ. մայիսի 25-27-ը տեղի ունեցած կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի 10-րդ կոնֆերանսի բանաձևում, որը պարտադրվել էր Բաքվից: Կարող եմք այդ բանաձևը. «Մարզի կուսակցական և խորհրդային կազմակերպությունների հին «ղեկավարության» գլուխ կանգնած ժողովրդի մերկացված թշնամիների սև և քայքայիչ հակահեղափոխական աշխատանքը՝ քաղաքականության, ժողտնտեսության բազմաթիվ ճյուղերում, հատկապես սոց. անասնապահության բնագավառում (խոզաբուծական ֆերմաների լիկվիդացիան, անասունների մեջ վարակիչ հիվանդությունների տարածում, այգեգործության եկամտաբերության իջեցում, ֆինանսական դրության քայքայում, կադրերի ցաք ու ցրիվ տալը, դպրոցական

չինարարության տապալումը)»: Այնուհետև ասված է, թե իբր մարզում լավ չէին նախապատրաստվում Գերագույն խորհրդի ընտրություններին, տապալվում է շինարարությունը, արդյունաբերության զարգացումը հետ է մնում և այլն: Վերջում պահանջում է «պայքարել դաշնակցականների, մուսավաթականների, բուրժուական ազգայնականների մնացուկների դեմ և ուժեղացնել ժողովուրդների բարեկամությունը մարզի աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության գծով»:

Պարզ գարշահոտություն է փչում այդ տողերից: Ամբողջովին կեղծ էր ու սարքովի: Ադրբեջանի իշխանությունները փորձում էին ամեն կերպ վարկաբեկել արցախցիներին, մրտսել նրանց հերոսական անցյալը, հողին հավասարեցնել նրանց ստեղծագործ աշխատանքը և սանձազերծել Մ. Բաղիրովի գլխավորած պանթուրբական պարագլուխների գործունեությունը: Այդ ինչպե՞ս են մարզի կուսակցական և պետական մարմինները տապալել մարզի տնտեսությունը և մշակույթը, երբ հենց այդ նույն կոնֆերանսի փաստաթղթերում նշված է, որ մարզում 1937 թ. կոլեկտիվացումն աճել է 3%-ով, նախորդ տարվա համեմատությամբ ցանքատարածություններն ավելացել էին 1505 հեկտարով, բանվորների միջին աշխատավարձը՝ 1 ռ. 35 կոպեկով, մետաքսագործության բնագավառում աշխատողների թիվը երկու տարում 1335-ից հասել էր 3000-ի: Յաջողություններն ավելի ակնառու էին գյուղատնտեսության և մշակույթի զարգացման բնագավառներում: 1936 թ. համեմատությամբ 1937 թ. գերակատարվել էին բոլոր տեսակի անասունների գլխաքանակի պլանները, ըստ որում խոշոր եղջերավորներինը 2053-ով, մանր եղջերավորներինը՝ 14600-ով, ձիերինը՝ 408-ով: Միայն թերակատարվել էր խոզերի գլխաքանակը: Մարզի 191 դպրոցներում սովորում էր 37413 երեխա, որոնց դասավանդում էր 1537 ուսուցիչ: Չզալի հաջողությունների էին հասել նաև մարզի շրջաններում: Եթե 1930 թ. մեկ հեկտարից ստացվել է 7.3 ց բանբակ, ապա 1937 թ. այն հասել էր 43.67 ց-ի: Մարտունու շրջանում ցորենի միջին բերքատվությունը մեկ հեկտարից հասել էր 18 ց-ի:

Ադրբեջանի պանթուրբական պարագլուխների հրահանգով հանրապետության լրատվամիջոցները լայն ճակատով հարձակում էին սկսել Լեռնային Ղարաբաղի բնակչության և նրա ղեկավարության դեմ: Բաքվում տպագրվող հայերեն «Կոմունիստ» թերթում զետեղված «Մինչև վերջ արմատախիլ անել բուրժուանացիոնալիստական գործակալությունը Լեռնային Ղարաբաղում» վերտառությամբ ծավալուն հոդվածում որոշ «գովասանքներ» շռայլելուց հետո թերթն անցնում է բուն խնդրին. «Տրոցկիստական-բուխարինական, մուսավաթական-դաշնակցական, բուրժուական-նացիոնալիստական բանդաների վիժվածքները, նրբ-

րեն բողոքով, փորձում են վիժեցնել այդ հաջողությունները, ձեռք են բարձրացնում Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսականների ունևոր, երջանիկ կյանքի վրա ձգտելով նորից վերականգնել կապիտալիզմը»⁹:

Իսկ ովքե՞ր էին այդ «մերկացված տրոցկիստական-դաշնակցական գործակալները»: Ոչ ավել, ոչ պակաս մարզկոմի առաջին քարտուղար Պյոտր Պողոսյանը, մարզգործկոմի նախագահ Սուրեն Բաղամյանը, Ստեփանակերտի ֆինբաժվար Գրիգոր Կաֆյանը, Ղարաբնտրեստի տնօրեն Առստամ Մարգսյանը, Ղարմետաքսարոյի տնօրեն Արտաշես Սուսայելյանը, Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Մուխան Գրիգորյանը, Ստեփանակերտի կուսշրջկոմի քարտուղարի տեղակալ Արտաշես Մարգսյանը, գրող Գրիգոր Ներսիսյանը, քաղլուսբաժնի վարիչ Ա. Բաբայանը, «խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր Կարապետյանը: Ջրպարտվեցին նաև արդեն մարզից դուրս գտնվող Հայկ Առուստամյանը, Արմենակ Կարակոզովը, Մուկուչ Արզանյանը, Սեդրակ Խուբլարովը և ուրիշներ, որոնք երկար տարիներ աշխատել են մարզի կուսակցական և պետական մարմիններում: Բանից պարզվում է, իսկ դա Բաբվում լավ գիտեին, որ «թաքնված թշնամիներ» շատ կային մարզի գյուղերում: Եվ եթե որևէ պատճառով կոլտնտեսության ֆերմայի անասուններից մեկը սատկում էր, այդ նշանակում է, ըստ Բաբվի, այդ «գյուղը վարակված» էր «դավաճաններով»:

Բաբվի այն կոչը, թե «Լեռնային Ղարաբաղի բուշնիկները պետք է անխնա ջախջախեն թշնամիներին», արագորեն գործնական հողի վրա դրվեց Արցախում: 1937 թ. հոկտեմբերի 10-ին և 11-ին վերոհիշյալ «Կոմունիստը», հրապարակելով «Արագորեն վերացնել վնասարարության հետևանքները սոցիալիստական անասնապահության բնագավառում» և «Արմատախիլ անել դաշնակցական բանդաների տականքներին» հոդվածները, նպատակ ուներ Պ. Պողոսյանի և Ս. Բաղամյանի նոր «գործակալներ» որոնել: Օր օրի ցուցակը երկարում էր, և տասնյակ նոր մարդիկ ձերբակալվում ու նետվում էին խորհրդային տանջարան:

Աղբբեջանի պանթուրքական մուսավաթ տականքները իրենց հարվածի նետը հատկապես ուղղել էին Դիզակի աշխատավորների և մտավորականության դեմ: «Տրոցկիզմի» մեջ հատկապես մեղադրվում են Հաղրութի շրջխորհրդի նախագահ Հայկ Բալայանը (գրող և հրապարակախոս Ջորի Բալայանի հայրը — Հ. Ա.), շրջանային պետբանկի կառավարիչ Պ. Ավանեսյանը, Ղարաբնտրեստի շրջանային ներկայացուցիչ Հ. Սահակյանը, Տոզի փայտամշակման գործարանի տնօրեն Ս. Դավիդովը և ուրիշներ: Նրանք բոլորն էլ վերին աստիճանի ազնիվ, իրենց գործին նվիրված մարդիկ էին, որոնք ոչինչ չէին խնայում հայրենի Արցախը շենացնելու համար:

Արցախում ձերբակալվում և Բաբվի բանտ էին տարվում այն մտավորականները, ովքեր կապ ունեին մայր Հայաստանի հետ: Նմաներին տալիս էին «դաշնակցականի» պիտակ և զնդակահարում: Լեռնային Ղարաբաղում համանման բռնարարքներ կատարվում էին 20-ական թթ. սկսած: Անդրկովկասյան դաշնության լուծարման նախօրյակին, գրում է արևմտահայ պատմաբան Լ. Սկրտչյանը, Հայաստանի կոմկուսի ղեկավար Ա. Խանջյանը, ելնելով դաշնության վերացման իրողությունից, դնում է հանրապետությունից բռնի կերպով անջատված հայկական տարածքները Հայաստանին վերադարձնելու հարցը¹⁰: Գաղտնիք չէ, թե ինչ ճակատագիր ունեցավ Ա. Խանջյանը:

Արցախում կրկին ակտիվանում է մայր Հայրենիքի հետ վերամիավորվելու պայքարը: Սակայն Աղասի Խանջյանի ողբերգական մահը սառը ջուր մաղեց շարժման վրա: Ձերբակալություններն ու զնդակահարությունները դարձան սովորական¹¹:

Արցախում, մանավանդ Մարտունու և Հաղրութի շրջաններում, այդ և հետպատերազմյան տարիներին մարդկանց մեղադրում էին «թևանականության» մեջ: Եվ ամենուր թևաններ էին որոնում: 1937 թ. բռնարարքների ենթարկված բազմաթիվ արցախցիների ճակատագրեր այդպես էլ մնացին անհայտ: Մի մասն արդարացվել և ազատվել է բանտերից, մի մասը ստիպված էր հեռանալ հայրենի երկրամասից ու ապաստան որոնել Հայաստանում, Միջին Ասիայում, Հյուսիսային Կովկասում, Վրաստանում, Ուկրաինայում, Ռուսաստանի խորքերում և այլ տեղեր, մի մասն էլ զնդակահարվել կամ մահացել են Սիբիրում:

Այդ տարիներին կուսակցության շարքերից առանց հանդիչ փաստերի հեռացվում էին հարյուրավոր մարդիկ, և նրանց նկատմամբ ստեղծվում ոչ բարենպաստ հաքարակական կարծիք: Սեր ձեռքի տակ կան մի շարք կուսակցական փաստաթղթեր¹², որոնք ոչնչացումից փրկվել են 1992 թ. հունվարի սկզբին Լեռնային Ղարաբաղի մարզկոմի նախկին արխիվի վառվելու ժամանակ: Ասենք, որ այդ արխիվից բավականին փաստաթղթեր ոչնչացումից փրկվել են ԼՂՀ պետական արխիվի աշխատողները, և դրանք այժմ պահվում են հանրապետության պետական արխիվի 250-րդ ֆոնդում: Իմ ձեռքի տակ եղած գործերում գտնվող արձանագրություններից երևում է, որ մարդիկ կուսակցությունից հեռացվել էին անտեղի ու հալածվել: Օրինակ Մարտակերտի շրջանի Տոնաշենի յոթամյա դպրոցի միջնակարգ կրթությամբ ուսուցիչ Արսեն Միրզոյի Գրիգորյանի գործը: Ըստ արձանագրության Մարտակերտի շրջկոմի բյուրոն նրան կուսակցությունից հեռացրել էր «արտասահմանում ապրող իր հարազատների հետ կուսակցությունից գաղտնի կապ պահպանելու համար»: Ա. Գրիգորյանի քեռիներից մեկն ապրում էր

Իրանում, իսկ մյուսը՝ Թուրքիայում: Այս վերջինի հետ 1937 թ. ունեցել է նամակագրական կապ և այդ մասին տեղյակ չի պահել կուսակցությանը, որի կարիքը չկար: Եվ ահա Ադրկոմկուսի բյուրոն 1940 թ. ապրիլի 15-ին հաստատում է Գրիգորյանին կուսակցությունից հեռացնելու որոշումը՝ «արտասահմանի հետ զաղտնի կապ ունենալու» համար:

Քերենք մեկ ուրիշ օրինակ. Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից Լազր Աբրահամյանին կուսակցությունից հեռացրել էին 1934 թ. իբր կոլտնտեսության նախագահ եղած ժամանակ կոլտնտեսության տված անասունների կորուստի համար: Եվ ահա 1940 թ. Ադրկոմկուսի բյուրոն մերժում է նրա դիմումը՝ կուսակցության մեջ վերականգնվելու վերաբերյալ:

Այդպես անարդարացի վարվեցին Մարտակերտի Ստալինի անվան կոլտնտեսության անդամ Խրիստափոր Մաթևոսյանի, Կուսապատի դպրոցի տնօրեն Հակոբ Երիցյանի, նույն գյուղից կոլտնտեսության անդամ Առաքել Մարութովի և շատ-շատերի հետ:

Այսպիսով՝ 1920-1930-ական թթ., ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում հարյուրավոր մարդիկ անտեղի ենթարկվեցին հալածանքների ու բռնարարքների, որոնցից շատերն իրենց կյանքն ավարտեցին խորհրդային բանտերում և աքսորվայրերում:

9. Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքը 1920-1930-ական թվականներին

Լեռնային Ղարաբաղում մշակութային կյանքի վերափոխումը սկսվեց դպրոցների վերակառուցումից: Անհրաժեշտ էր վերանորոգել կիսախարխուլ դպրոցական շենքերը, կառուցել նորերը, փոփոխել կրթության ծնն ու բովանդակությունը, հավաքագրել ուսուցչական կադրեր, հիմնադրել աշխատանքային պոլիտեխնիկական դպրոցներ, ապահովել ուսումնական պարագաներով և այլն: Արցախ-Ղարաբաղում, իրոք, վիճակը շատ ծանր էր, չկային դպրոցներ բացելու պայմաններ: Փաստորեն, ամեն ինչ պետք է սկսվեր նորից:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո գավառային և շրջանային հեղկոմներին կից ստեղծվեցին լուսավորության բաժիններ, որոնց հիմնական խնդիրներից կարևորը նոր դպրոցների բացումն էր: Կուսակցության 10-րդ համագումարը ազգային հարցի վերաբերյալ բանաձևում հատուկ ընդգծել էր անցյալում ճնշված ժողովուրդների կոլտուր-լուսավորական հիմնարկների մայրենի լեզվով գործելու կարևորությունը և պահանջեց ստեղծել պրոֆեսիոնալ-տեխնիկական բնույթի դասընթացների և դպրոցների լայն ցանց¹:

Ելնելով կուսակցության այդ պահանջից՝ Լեռնային Ղարաբաղի գավառային հեղկոմը և կուսակցական կազմակերպություններն իրենց առջև խնդիր դրեցին ստեղծել նոր, խորհրդային դպրոց, երիտասարդներին զինել խորը գիտելիքներով և նրանց դաստիարակել բարոյականության ոգով: Դպրոցների բացումով մտահոգված էին նաև գավառային խորհուրդները: Օրինակ՝ 1920 թ. աշնանը Ջիվանչիրի գավառի 36 հայկական գյուղերից քսանում բացվել էին դպրոցներ, որոնցում ընդգրկված էր 2000 երեխա²:

Ընդհանրապես, Լեռնային Ղարաբաղում դպրոցների վիճակն անմխիթար էր: Կիսամերկ և քաղցած շատ երեխաներ հնարավորություն չունեին հաճախել դպրոց: Հաճախ էլ վաղ գարնանը կամ աշնանը դպրոցահասակ երեխաները ստիպված էին լինում դաշտային զանազան աշխատանքներ կատարել և օգնել իրենց ծնողներին: Բացի այդ, չկային դասագրքեր, գրենական պիտույքներ, ծրագրեր, հարմարավետ շենքեր, շատ դպրոցներում միևնույն դասարանում կողք կողքի նստում էին 8-16 տարեկան երեխաներ: 1920 թ. հոկտեմբերի 20-ին Վարանդայի ճարտար գյուղում տեղի ունեցած գավառի երկրորդ տեղամասի ուսուցիչների կոնֆերանսում Գիշի գյուղից պատգամավոր Ա. Բալայանն իր ելույթում նշեց. «Կա դպրոց, բայց չկա ինքը՝ դպրոցը: Կանչում են աշակերտին, բայց չկա ո՛չ նստարան, ո՛չ ուսումնական պարագաներ, անգամ թուղթ, չխոսելով արդեն այն մասին, որ չկա լավ շենք, ջեռուցում...»: Իսկ Ղավախան գյուղից Սամսոն Բարսեղյանն ուղղակի հայտարարեց, թե ուսումնական պարագաների բացակայության պատճառով հնարավոր չէ պարապել³: Գրեթե նույն վիճակում էին գտնվում նաև մյուս դպրոցները:

Չնայած դրան, հեղկոմները և կուսկոմները հետևում էին, որպեսզի յուրաքանչյուր ուսումնական տարի սկսվի և եզրափակվի հաջողությամբ: Դժվար պայմանները, որոնք առկա էին խորհրդային իշխանության առաջին տարիներին, այնուամենայնիվ, չկարողացան արգելակել լուսավորության ուղղությամբ տարվող աշխատանքները: Արդեն 1922/23 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում գործում էր 78 դպրոց՝ 4375 աշակերտի ընդգրկումով⁴: Այդ դպրոցներում աշխատում էր 140 ուսուցիչ:

Ինքնավար մարզի ստեղծումով սկսվեց ուսումնական գործի նոր շրջանը Լեռնային Ղարաբաղում: 1923 թ. հոկտեմբերի 5-ին ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, որը հետո՝ 1929 թ. մարտին, վերանվանվեց մարզային խորհրդի ժողովրդական կրթության բաժին: ԼՂԻՄ լուսավորության առաջին կոմիսարն էր Արշավիր Քամալյանը: Նա, ինչպես և Առա-

բել Առաքելյանը, Անդրանիկ Ավագյանը, Լևոն և Շավարշ Վարդուհիները և շատ ուրիշներ, մեծ աշխատանք կատարեց մարզում խորհրդային դպրոցի ստեղծման և ուսումնադաստիարակչական աշխատանքները բարձր մակարդակի հասցնելու համար: Ինքնավար մարզի ստեղծման առաջին տարում մարզի դպրոցների թիվը հասավ 102-ի, իսկ աշակերտներինը՝ 7624-ի⁶: Կարճ ժամանակամիջոցում մարզի աշխատավորների միջոցներով նորոգվեցին 1200 նստարան և մի շարք դպրոցական շենքեր⁷:

Մարզում ամենահրատապ հարցերից էր ուսուցչական կադրերի ստեղծումը: Այդ խնդրին, ինչպես և մարզի ամբողջ լուսավորական գործին մեծ և շնորհակալ օգնություն ու աջակցություն էր ցույց տալիս խորհրդային Հայաստանի լուստողիտատը, որը Լեռնային Ղարաբաղ ուղարկեց նորավարտ կադրեր, դասագրքեր, ուսումնական պարագաներ⁸: Մարզային լուստողիտատն իրավունք ստացավ գյուղատնտեսական մասնագետներին և ռուսական կրթություն ունեցողներին օգտագործել որպես ուսուցիչներ: Մարզում հոգ էր տարվում նաև ուսուցիչների նյութական պայմանները բարելավելու համար: Նրանց ապահովում էին բնակարաններով, վառելիքայտով, բարձրացնում էին աշխատավարձերը և այլն:

Մարզում մտահոգված էին ուսումնական կայուն պլաններ ստեղծելու հարցով: 1923 թ. հոկտեմբերի 21-ին հաստատվեց ուսումնական առաջին պլանը, ըստ որի շաբաթական սահմանվեց առաջին դասարանում 22, երկրորդում՝ 24, երրորդում՝ 27, չորրորդում՝ 29, հինգերորդում՝ 32 ժամ⁹:

Մարզի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքները բարելավելու և ուսուցիչների մասնագիտական որակը բարձրացնելու համար մի շարք դպրոցներում կազմակերպվում էին փորձնական դասեր, մանկավարժական բնույթի զեկույցներ ու դասախոսություններ: 1923 թ. դեկտեմբերի 13-ին լուստողիտատի կոլեգիան որոշեց կազմակերպել դպրոցական խորհուրդներ, որոնց կազմի մեջ կարող էին մտնել նաև ծնողներ: 1924 թ. փետրվարի 6-ին որոշվեց մարզում ընդունել Հայաստանի աշխատանքային դպրոցների կանոնադրությունը: Ուսուցչական կադրեր ստեղծելու համար 1924 թ. ամռանը Ստեփանակերտում կազմակերպվեցին երկամսյա դասընթացներ, իսկ 1925 թ. ամռանը՝ դասընթացներ 50 հոգու ընդգրկումով¹⁰: 1929 թ. հուլիսի 18-ին լուստողիտատի կոլեգիան, քննարկելով մարզի դպրոցներն ուսուցիչներով ապահովելու հարցը, որոշեց ուսուցիչներ հրավիրել Երևանից, Գյումրիից, Բաքվից, Թիֆլիսից և այլ տեղերից: Բացի այդ, 1924 թ. փետրվարի 13-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումը, քննարկելով մարզի դպրոցների վիճակի

մասին լուստողիտատի պլանումը, որոշեց պարենհարկի 20%-ը հատկացնել լուսավորչական գործին, լիկվայաններ բացելու և դպրոցների ֆինանսական վիճակը կարգավորելու համար առանձնացնել ֆինանսական միջոցներ: Պլենումն անհրաժեշտ համարեց դպրոցական շինարարության համար ձեռք բերել շինանյութեր, երկրորդ աստիճանի դպրոցներում կազմակերպել ֆիզիկայի և քիմիայի կաթինետներ, ուսուցչական կադրեր պատրաստելու համար Ստեփանակերտում սիստեմատիկ կազմակերպել մանկավարժական դասընթացներ և այլն¹¹: Մարզային կուսակցական և պետական մարմիններն անհրաժեշտ համարեցին մարզում կազմակերպել մանկատներ 200 երեխայի ընդգրկումով¹²: Ձեռնարկված միջոցառումների հետևանքով արագացվեցին Մարտունու, Ստեփանակերտի, Մեծ Շենի և Մալիբեկլուի առաջին աստիճանի դպրոցական շենքերի շինարարական աշխատանքները:

Չնայած այդ ամենին, մարզում աղքատ էր դպրոցների նյութատեխնիկական բազան: 1924 թ. օգոստոսին «խորհրդային Ղարաբաղը» հաղորդել է, թե 6100 աշակերտի համար եղած 1500 նստարանների մեծամասնությունը ջարդված է, 255 դասարանի համար կա ընդամենը 170 գրատախտակ, 102 դպրոցներից 33-ն են տեղավորված սեփական կամ ազգայնացված շենքերում, որոնցից 23-ն են գտնվում բարվոք վիճակում: Դպրոցներում ընդգրկված էր 8-15 տարեկան երեխաների հագիվ 30%-ը¹³: 1927 թ. հունվարի 7-ի մի հաղորդագրության մեջ ասված է, որ մարզի դպրոցներն ունեն 4000 նստարանի և 200 գրատախտակի կարիք¹⁴:

Մարզի կուսակցական և պետական մարմիններն ամեն կերպ նպաստում էին դպրոցական ցանցի ընդլայնմանը: Արդեն 1925/26 ուսումնական տարում մարզում դպրոցների թիվը հասնում էր 144-ի, իսկ դասարանների թիվը՝ 458-ի: Նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ աշակերտների թիվը զգալիորեն ավելացել և հասել էր 15413-ի¹⁵:

Մարզում ուսումնական գործը աստիճանաբար դարձավ համաժողովրդական: Դիզակի շրջանային լուսահրահանգիչ Տ. Տեր-Սահակյանի 1926/27 ուսումնական տարվա առաջին եռամսյակն ամփոփող զեկուցագրում ընթերցում ենք. «Պետք է ասել, Դիզակի աշխատավորները... ուսման ծարավ են զգում և ամեն կերպ աշխատում են բարենորոգել և ավելի լայն ու կայուն հիմքերի վրա դնել դպրոցական գործը իրենց գյուղում: Այդ ցույց է տալիս այն, որ ամեն դիզակցի, չնայած ինքը մեղ տնտեսական կացության մեջ է գտնվում, իր որդուն աշխատում է դպրոց տալ»¹⁶: Նույն էին վկայում նաև մյուս շրջանների լուսահրահանգիչները: Բնակչությունը, զգալով դպրոցի դերն ու նշանակությունը, ամեն կերպ օժանդակում էին նրան: «Վաղուհասում բացվել է դպրոց,—

գրել է «խորհրդային Ղարաբաղը»,— գյուղացիները 20 մտարան, մեկ գրատախտակ, մեկ սեղան, երկու աթոռ են պատրաստել»¹⁶։ Վարուհաս-ցիների օրինակը եզակի չէր։

Մարզային լուսժողովմատը պատրաստում և հրատարակում էր շրջաբերականներ, մեթոդական հրահանգներ, տպագրում գյուղատն-տեսական բնույթի բրոշյուրներ և դասագրքեր։ «Դպրոցների վարիչնե-րին» շրջաբերականում խորհուրդ էր տրվում աշակերտներին էքսկուր-սիա տանել դեպի բնություն, ստեղծել դպրոցական թանգարաններ և դրանք հարստացնել նկարներով, քարտեզներով և զանազան մոդելնե-րով¹⁷։ Առանձնապես հետաքրքիր էին աշակերտների գրավոր և բանա-վոր խոսքի, ուղղագրության և ուղղախոսության, մտածողության զար-գացմանը, աշակերտների ինքնավարության վերաբերյալ մեթոդական հրահանգները։ Այդ փաստաթղթերում քննադատական խոսք է ասված աշակերտների գրավոր խոսքի, ընթերցանության և հասարակագիտու-թյան թույլ դասավանդման մասին։ Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում ուսուցչի հեղինակության բարձրացման հարցին։ 1924 թ. «խորհրդային Ղարաբաղ» թերթում տպագրված լուսավորության աշ-խատողների միության վարչության հրամանում ասված է, որ գյուղում և ամենուր ուսուցիչը պետք է գտնվի իր բարձրության վրա, կապված լի-նի գյուղի աշխատավորների հետ, նրանց օգնի ամեն ինչում, վերացնի անգրագիտությունը, բացի ակունք, կազմակերպի գրադարան—ընթեր-ցարան, ինքնագործ խմբակներ, մասնակցի արտելների կազմակերպ-ման աշխատանքներին, օգնի կոոպերացիային, կարգա դասախոսու-թյուններ, օգնի շաբաթօրյակների կազմակերպմանը և այլն¹⁸։ Լուսժող-կոմատի 1925 թ. շրջաբերականներից մեկում ասված է, որ ուսուցիչնե-րը պետք է լուրջ ուշադրություն դարձնեն դպրոցական հանդեսների, ներկայացումների, էքսկուրսիաների և հասարակական օգտակար աշ-խատանքների կազմակերպմանը։ «Ուսուցչությունը,— ասված է այդ շր-ջաբերականում,— միշտ էլ աչքի է ընկել շրջապատի հասարակական կյանքի բազմազան աշխատանքներին մասնակցելու իր մեծ պատրաս-տակամությամբ։ Մեր ուսուցչությունը այդ ուղղությամբ արել է սպաս-վածից ավելին։ Մենք հավատացած ենք, որ այսուհետև Ձեր աշխա-տանքներն այդ ուղղությամբ ավելի ու ավելի պետք է ուժեղանան, և գյուղում չպետք է լինի կուլտուր—կրթական աշխատանքի մի տեսակ, ուր դրված չլինի Ձեր աշխատանքի կնիքը»¹⁹։

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում ուսում-նական գործն իր առաջին տապան ավարտեց 20—ական թթ. վերջին։ 1930/31 ուսումնական տարվանից խորհրդային դպրոցն սկսեց իր երկ-րորդ շրջանը, երբ մտցվեց ընդհանուր պարտադիր տարրական ուսու-

ցում։ ԼՂԻՄ մարզգործկոմը, ելնելով 1929 թ. ապրիլի 27—ի իր «Ընդհա-նուր պարտադիր կրթության մասին» որոշումից, հոկտեմբերի 11—ին որոշում ընդունեց մարզի 55 գյուղերում պարտադիր ուսուցում մտցնե-լու մասին։ Եվ, ելնելով տարրական կրթության պարտադիր լինելու մա-սին 1930 թ. հուլիսի 25—ի Կենտկոմի որոշումից, մարզգործկոմը երկրա-մասի տարածքում բնակվող 8, 9 և 10 տարեկան երեխաների համար պարտադիր ուսուցում մտցրեց 1931/32 ուսումնական տարվանից։ Մարզի մի քանի գյուղերում պարտադիր ուսուցում մտցվեց 8—12 տարե-կան երեխաների համար²⁰։ Մարզժողկրթբաժինը պահանջեց դպրոցնե-րին կից ստեղծել պարտուսի հանձնաժողովներ (դպրոցի վարիչ, գյուղ-խորհրդի նախագահ և կոմերիտական բջիջի քարտուղար) և զարկ տալ դպրոցաշինությանը։

1929/30 ուսումնական տարում դպրոց էր ընդգրկվել մարզի 8—13 տարեկան երեխաների 76.3%—ը։ Պլանավորվեց հաջորդ ուսումնական տարում մարզի դպրոցներում ունենալ 735 դասարան՝ ավելի քան 21 հազար աշակերտի ընդգրկումով։ Դիզակի շրջանում հոկտեմբերի 17—ը սահմանվեց պարտուսի օր։ Այդ օրը տեղի էին ունենում միտինգներ և հանդիսավոր միստեր, որտեղ լսվում էին պարտուսի հանձնաժողովնե-րի նախագահների և դպրոցների վարիչների զեկուցումներ ու համերգ-ներ։ Դիզակցիներին ընդօրինակեցին մարզի մյուս շրջանները։

1930 թ. նոյեմբերին մարզխորհրդի գործադիր կոմիտեի պլենումը, քննարկելով «Պարտուսի ընթացքը և անգրագիտության վերացումը» հարցը, մշեց, որ պարտուսի օրենքի իրագործման ուղղությամբ սկսված մրցությունը դեռևս մասսայական բնույթ չի կրում։ Հարց դրվեց չքավորների երեխաներին ապահովել հագուստներով, զրեմական պի-տույքներով, մեծացնել պարտուսի ֆոնդերը և այլն։ Մարզում հայտա-րարվեց պարտուսի միամսյակ, որի ընթացքում դպրոցները պետք է ապահովվեին վառելափայտով, դպրոցահասակ բոլոր երեխաներն ընդգրկվեին դպրոց, ուշադրություն դարձվեր ազգային փոքրամասնու-թյան դպրոցներին, ժողկրթբաժիններում ստեղծվեին նվիրատվության ֆոնդեր, կառուցվեին մանկական հրապարակներ և այլն²¹։ Ձեռնարկ-ված միջոցառումների արդյունքում 1930/31 ուսումնական տարում մարզի առաջին աստիճանի դպրոցներում ընդգրկվեց 23026, իսկ 1932/33 ուսումնական տարում՝ 30567 երեխա²²։ Բացի այդ, մարզի երկ-րորդ աստիճանի հինգ դպրոցներում ընդգրկվել էր 222 սովորող։ Արդեն երկրորդ հնգամյակի վերջին մարզում գործում էր մոտ 200 դպրոց, որոնցում սովորում էր 36986 աշակերտ։ 1937/38 ուսումնական տարում մարզում գործում էին 6 միջնակարգ—մասնագիտական ուսումնարան-ներ՝ 1605 սովորողով։

30-ական թթ. արագորեն բարելավվում էր ուսուցչական կադրերի որակը: Այսպես, եթե 1925/26 ուսումնական տարում աշխատող 241 ուսուցիչներից բարձրագույն կրթություն ունեւր ընդամենը երկու հոգի, միջնակարգ կրթություն՝ 165-ը, ապա 1933/34 ուսումնական տարում 999 ուսուցիչներից բարձրագույն կրթություն ունեւր 28, միջնակարգ՝ 909 հոգի²³:

Տարւ տարում (1923-1933 թթ.) մարզում կառուցվել է դպրոցական 40 շենք: Եթե 1923/24 ուսումնական տարում մարզում լուսավորական գործին հատկացվել է բյուջեի 39.6%-ը, ապա 1933 թ. այն կազմել է 44%: Եթե 1914/15 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում մեկ մարդու հաշվով լուսավորության գծով ծախսվել է 90 կոպեկ, 1918/20 ուստարում՝ 5-10 կոպեկ, 1924-ին՝ 1.30 ռ., 1928-ին՝ 5.01 ռ., 1932-ին՝ 20 ռ., ապա 1933-ին այն կազմել է 28 ռ.²⁴:

1920-1930-ական թթ. ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում կարևոր հարց էր անգրագիտության վերացումը: 1921 թ. տվյալներով՝ մարզի բնակչության 90.7%-ն անգրագետ էր: Մարզում առաջին լիկկայանները բացվեցին 1922/23 ուսումնական տարում: Արդեն 1924/25 ուսումնական տարում մարզում գործում էր 117 լիկկայան, որոնցում ընդգրկված էր 1379 հոգի, իսկ 1929/30 ուսումնական տարում գործող 407 լիկկայաններում գրագիտություն էր սովորում 13262 հոգի²⁵:

Կուսակցության մարզկոմն ու մարզգործկոմը բազմիցս անդրադարձել են մարզում անգրագիտության վերացման հարցին և նշել կոնկրետ միջոցառումներ: 1930 թ. նոյեմբերի 10-ի դրությամբ մարզում եղած 18219 անգրագետ և 7092 կիսագրագետներից լիկկայաններում ընդգրկվել էր 14078 հոգի²⁶: Նույն թվականի նոյեմբերի վերջին մարզում ստեղծվեց կուլտուրական արշավի կենտրոնական շտաբ, իսկ դեկտեմբերի 11-ին մարզկոմի բյուրոն որոշեց մինչև հունվարի մեկը 100%-ով լիկկայաններում ընդգրկել 1909-1912 թթ. ծնված անգրագետ և կիսագրագետ բնակիչներին: Մարզկոմի բյուրոյի որոշմամբ՝ մարզային կուսակցական և պետական մարմիններում աշխատող 100 հոգի աշխատանքի ուղարկվեց անգրագիտության վերացման կետերը²⁷: 1930/31 ուսումնական տարում մարզում գործում էր 646 լիկկայան, որոնցում ընդգրկված էր 19212 հոգի: Ղա կազմում էր նախատեսված պլանի 78%-ը²⁸: Մարզում անգրագիտության վերացման հարցը մարզկոմի բյուրոն լայն ժամալով քննության առավ 1936 թ. հոկտեմբերի 22-ին: Այդ ժամանակ մարզում դեռևս հաշվվում էին 6785 անգրագետ և 11104 կիսագրագետ²⁹:

Խորհրդային իշխանության տարիներին մարզում զարգացան նաև տպագրությունը, գրականությունը և արվեստը: 1923 թ. ապրիլի 4-ից Շուշիում սկսեց լույս տեսնել Շուշիի գավկուսկոմի և գավգործկոմի օրգան

«Ղարաբաղի գեղջուկ» թերթը՝ Սերո Մանուցյանի խմբագրությամբ, 4ս տպաքանակով: Իմիջիայլոց, նախախորհրդային Ղարաբաղում տպագրվել է 21 ամուն թերթ, որից 19-ը՝ հայերեն, 2-ը՝ ռուսերեն: Այնպես որ արցախցիները թերթ տպագրելու փորձ և ավանդություն ունեին: 1923 թ. «Ղարաբաղի գեղջուկը» վերանվանվեց «Խորհրդային Ղարաբաղ» և դարձավ կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի և աշխատավորների պատգամավորների մարզխորհրդի գործկոմի օրգանը: 1925 թ., երբ Ս. Մ. Կիրովը եկավ Ստեփանակերտ, հետաքրքրվեց տպագրական գործով և օգնեց կարգավորել տպարանը: Նրա անմիջական օգնությամբ տպարանը ստացավ տպագրական նոր մեքենա, տառեր և թուղթ: Ղա նպաստեց նույն թվականին «Խորհրդային Ղարաբաղ» թերթի տպաքանակը 2300-ի հասցնելուն³⁰: Հետագայում թերթին կից լույս տեսան «Երիտասարդ Լեռնայան», «Կուլտարչավ», «Ղարաբաղի բատրակ» թերթիկներն ու հավելվածները և կարճատև «Կայծ» գեղարվեստական հանդեսը: 30-ական թթ. հանդես եկան նաև մի շարք շրջանային թերթեր: 1937 թ. մարզում լույս էր տեսնում 6 ամուն թերթ՝ 15.2 հազար տպաքանակով³¹:

Խորհրդային կարգերի առաջին տարիներին մարզում գրադարաններ, ընթերցարաններ և ակումբներ բացելու հնարավորություն և պայմաններ չկային: Ղրանց բացմանը հիմնականում ձեռնամուխ եղան ինքնավար մարզի ստեղծումից հետո: Արդեն 1930 թ. մարզում գործում էին 3 ընթերցարան, 2 մասսայական գրադարան, 11 ակյուն և հասարակական հիմունքներով աշխատող 150 խրճիթ-ընթերցարան³²: Հաջորդ տարիներին կարևոր ուշադրություն դարձվեց մասսայական գրադարանների բացմանը: Երկրորդ հնգամյակի վերջին արդեն մարզում կար 15 մասսայական գրադարան՝ 19.2 հազար գրքային ֆոնդով³³:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին Արցախ-Ղարաբաղում չկային նաև ակումբներ: Ակումբ բացելու առաջին փորձը կատարվեց Շուշիում: Արսեն Սարգսյանը պատմում է, որ երբ 1920 թ. մայիսին Կարմիր բանակի զորամասերը մտան Ղարաբաղ, հրամանատարության առաջարկությամբ և հեղկոմի ակտիվ մասնակցությամբ բացվեց մշակույթի ժողովրդական տուն, որին կից կազմակերպվեց դրամատիկական խմբակ, որի աշխատանքներին մասնակցում էին քաղաքի բնակիչներն ու կարմիրբանակայինները³⁴:

Ակումբ գնալը և ներկայացում դիտելը հետզհետե մտավ արցախցիների կենցաղի մեջ: Արդեն 1927 թ. մարզում կային 28 ակումբային հիմնարկություններ, բոլորն էլ գյուղական վայրերում, 1933-ին՝ 84, որից 4-ը՝ քաղաքներում, իսկ 1937-ին՝ 141-ը, որից 137-ը՝ գյուղերում³⁵: 1932 թ. օգոստոսին հիմնադրվեց Ստեփանակերտի Մ. Գորկու անվան (ներկայումս՝ Վ. Փափազյանի անվան) դրամատիկական թատրոնը:

1924 թ-ից Ստեփանակերտում սկսեց գործել առաջին կինոտեղա-
կայունը: Կինոն մուտք գործեց ամբողջ մարզ: 1928 թ. մարզկոմի պլե-
նումը որոշում ընդունեց հատուկ ուշադրություն դարձնել կինոցանցի և
ռադիոցանցի ընդլայնմանը: Արդեն առաջին հնգամյակի վերջում մար-
զում կար 8 կինոտեղակայում, իսկ 1937 թ. այդ թիվը հասել էր 15-ի:

Մարզում ռադիոն առաջին անգամ մուտք գործեց 1927 թ.: 1932 թ.
մարզում կար ռադիոհաղորդման 3 հանգույց 250 ռադիոկետով²⁶: Երկ-
րորդ հնգամյակի վերջին գրեթե եռապատկվել էին ռադիոհանգույցնե-
րը, և տասնապատկվել՝ ռադիոկետերի թիվը:

Նախահեղափոխական Արցախ-Ղարաբաղի մամուլում գեղարվես-
տական գործերով հանդես էին գալիս Գրիգոր Ներսիսյանը, Խորեն Բոր-
յանը (Լորենց), Միսակ Պետրոսյանը, Գառնիկ Ղազարյանը, Հակոբ
Խանլարյանը, Լևոն Աթաբեկյանը, Լևոն Վարդունին, Սիմոն Առաքելյանը
և ուրիշներ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո լուրջ ուշադ-
րություն էր դարձվում գեղարվեստական խոսքի զարգացմանը:
1920-1930-ական թթ. Լեռնային Ղարաբաղի մամուլի էջերում տպագր-
վում էին Գրիգոր Ներսիսյանի, Գուրգեն Հովնանի, Լևոն Բաղդասարյա-
նի, Արփո Պետրոսյանի ստեղծագործությունները: 1928 թ. մարտին
կազմակերպվեց Լեռնային Ղարաբաղի պրոլետ գրողների ասոցիացի-
ան, որի նախագահ ընտրվեց Արմո Խաչումյանը: 30-ական թթ. տպագր-
վում էին Հակոբ Աթաբեկյանի, Աշոտ Ուլուբաբյանի, Իսրայել Պետրոսյանի,
Գրիգոր Մովսիսյանի և ուրիշների ստեղծագործությունները: 1935թ. աշ-
նանը ստեղծվեց գրողների մարզային բաժանմունքը, իսկ 1937 թ. նոյեմ-
բերի 3-ին աշխատավորների պատգամավորների մարզխորհրդի գոր-
ծադիր կոմիտեին կից ստեղծվեց արվեստի բաժին:

Եվ այսպես, արդեն երկրորդ աշխարհամարտի նախօրյակին Լեռնա-
յին Ղարաբաղի Ինքնավար Մարզն իրենից ներկայացնում էր գրեթե հա-
մատարած գրագիտության և զարգացող մշակույթի երկրամաս:

Արցախ-Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին

ա) Ռազմաճակատում

Արցախահայությունն իր ողջ ունակությունները, տաղանդը, հայրե-
նիքին նվիրվածությունը դրսևորեց 1941-1945 թթ. Հայրենական մեծ
պատերազմի տարիներին: Պատերազմի 1418 օրերի ընթացքում ար-
ցախցիները ոչինչ չխնայեցին, արեցին անհնարինը: Չի եղել որևէ ռազ-
մաճակատ, որևէ կարևոր տեղամաս, որտեղ մարտնչած չլինեն արցա-
խահայության զավակները և ցուցաբերած չլինեն բարձր մարտունա-
կություն:

1939 թ. մարդահամարի տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնա-
վար Մարզում բնակվող 150800 մարդուց 132800-ը հայեր էին, իսկ Հյուս-
սիսային Արցախում բնակվում էր ավելի քան 140000 հայ: Լեռնային Ղա-
րաբաղից ռազմաճակատ մեկնեց հայ ժողովրդի 45056 զավակ, որոն-
ցից 1850-ը՝ կանայք¹, իսկ Հյուսիսային Արցախից զորակոչվել էր ավելի
քան 44000 մարդ: Այսպիսով Արցախից զորակոչվել է մոտ 90 հազար
մարդ: Մի շարք բնակավայրերից զորակոչվածների թիվը կազմել է նույ-
նիսկ բնակչության 38%-ը: Օրինակ՝ Հաղորուքի շրջանից զորակոչվել է
8267 մարդ: Հազար մարդու հաշվով դա 5-6 անգամ ավելի էր, քան
ադրբեջանական շրջաններից զորակոչվածների թիվը²: Լեռնային Ղա-
րաբաղից և Հյուսիսային Արցախից զորակոչված 90 հազար հայերից
զոհվել են մոտ 40 հազարը, որոնցից 22 հազարը ԼՂԻՄ-ից: Պատերազ-
մի տարիներին արցախցիներից 31 հոգի արժանացել է Խորհրդային
Միության հերոսի կոչման³, 7 հոգի դարձել է Փառքի շքանշանի լրիվ աս-
պետ⁴: Պատերազմին մասնակցած 90 հազար արցախցիներից 30 հա-
զարը, որոնց կեսը՝ Լեռնային Ղարաբաղից, պարգևատրվել են մարտա-
կան շքանշաններով ու մեդալներով: Պատերազմի մասնակից 3 արցա-

խահայի շնորհվել են մարշալի, 1-ին ծովակալի, 26-ին գեներալի կոչումներ: Պատերազմի տարիներին արցախցիներից 1-ը եղել է ռազմաճակատի, 2-ը բանակի, 1-ը կորպուսի, 2-ը դիվիզիայի, 2-ը բրիգադի, 8-ը գնդի հրամանատարներ: Ավելի քան 1000 արցախցիներ մարտնչել են հայկական կազմավորումների շարքերում. նրանք մեծ թիվ են կազմել նաև ադրբեջանական ազգային դիվիզիաներում:

Պատերազմի առաջին իսկ օրերից մարզի բոլոր բնակավայրերում տեղի ունեցան հանրահավաքներ, որտեղ հնչում էին կոչեր՝ կանավոր մեկնելու ռազմաճակատ և պաշտպանելու հայրենիքը: Հագարավոր արցախցիներ գալիս էին զինկոմիսարիատներ նման խնդրանքով, այդ թվում և բազմաթիվ կանայք: Քաղաքներում և գյուղերում տեղի ունեցող հանրահավաքներում մարդիկ պարտավորվում էին հնարավոր բոլոր միջոցներով օգնել ռազմաճակատին և օր առօր քաջախել թշնամուն: Հունիսի 23-ին Ստեփանակերտի շրջանի Մեհիշեն գյուղի կոլտնտեսուհի Հայկանուշ Վարդանյանն իր տղային ներկայացրել է Ստեփանակերտի շրջզինկոմիսարիատ և հայտարարել. «Ես մայր եմ, գիտեմ այն մասին, որ երեկ շատ վաղ գերմանական զորքերը հարձակվել են մեր հայրենիքի վրա: Իմ երկու տղան գտնվում են Կարմիր բանակի շարքերում: Միս և այս մի տղան ևս ներկայացնում են ձեզ՝ անմիջապես ռազմաճակատ ուղարկելու համար: Խնդրում եմ չմերժեք, թող նա ևս գնա իր եղբայրների հետ միասին կռվի թշնամու դեմ»: Մարտակերտից կրտսեր լեյտենանտ Մ. Ղալլաբյանը հայտարարել է, որ զնում է ռազմաճակատ և իր արյան վերջին կաթիլը չի խնայի հայրենիքի համար ու միշտ բարձր կպահի խորհրդային քաղաքացու պատվավոր կոչումը: Նա իր խոսքն ավարտել է հետևյալ կերպ. «Չկա ավելի մեծ փառք, քան կռվել հայրենիքի պաշտպանության համար. սա է մեր այսօրվա ամենապատվավոր գործը»:

Սարուշենից մի խումբ երիտասարդներ ռազմաճակատ մեկնելուց առաջ տվել էին երդում. «Սիրելի՛ ծնողներ, մենք մեկնում ենք թշնամու դեմ մարտնչելու: Լավ իմացեք, որ մեր հաղթանակը կախված է թիկունքի ամրությունից: Անձնվեր աշխատեցե՛ք, մեզ համար աճեցրե՛ք արագավազ ձիեր, զարգացրե՛ք տնտեսությունը: Մենք, անկասկած, կջախջախենք նենգ թշնամուն»⁷: Մարտակերտի շրջանից մի քանի հարյուր հոգի դիմել էին ու խնդրել իրենց անմիջապես ուղարկել ռազմաճակատ: Խնձրիստանի կոլտնտեսության նախագահ Ջինավոր Միրզոյանը և կուսկազմակերպության քարտուղար Գրիշա Հակոբյանը իրենց դիմումն ունեցնում գրել էին. «Չկա ուրիշ ավելի սրբազան գործ, քան կրծքով պաշտպանել մայր հայրենիքի անառիկ սահմանները: Մենք Կարմիր բանակի շարքերն ենք գնում՝ կատարելու մեր քաղաքացիական մեծ պարտքը»:

Ստեփանակերտի շրջանի Շոշ գյուղից 30 հոգի միանգամից դիմել էին ռազմաճակատ մեկնելու համար⁸: Միայն հունիսի 26-ին Հաղրութի շրջկոմիսարիատում ստացվել էր 157 դիմում, որոնցից 67-ի հեղինակները կանայք էին⁹: Ստեփանակերտից Նինա Պողոսյանը, Վերա Տևալովան և շատ ուրիշ կանայք, դիմելով զինկոմիսարիատ, խնդրում էին իրենց անմիջապես ուղարկել ռազմաճակատ¹⁰: Բաղարա գյուղից երվանդ Գաբրիելյանը պատերազմի հենց առաջին օրը հայտարարում է, թե ինքը գնում է Կարմիր բանակ՝ հայրենիքը պաշտպանելու և չի խնայի իր արյան վերջին կաթիլը¹¹: Բուժքույրեր Արշալույս Հայրապետյանը և Մարո Շատրյանը, կանավոր մեկնելով Կարմիր բանակ, հավաստիացնում էին, որ իրենք իրենց պարտականությունը կկատարեն նվիրվածությամբ և հերոսաբար կկռվեն թշնամու դեմ¹²: Հունիսի 26-ին իր որդու հետ Ստեփանակերտի զինկոմիսարիատ ներկայանալով՝ Ղարաբուլաղ գյուղացի ութուամսյա Մամիշակ Մարտիրոսյանն ասում է. «Իմ միևնուճարն է, բայց եկել է ռազմաճակատ մեկնելու: Համոզված եմ, որ իմ Սարգիսը մինչև արյան վերջին կաթիլը կպայքարի թշնամու դեմ, իսկ ես կվերցնեմ մանգաղը և հունձ կանեմ, որ մեր որդիները ճակատում մթերքի կարիք չզգան»¹³:

Պարզվում է, որ 1941 թ. հունիսի 22-ի դրությամբ մարզային կուսակցական կազմակերպության շարքերում եղած 5214 մարդուց ռազմաճակատ է մեկնել շուրջ 66%-ը, իսկ մարզային կոմերիտական կազմակերպության 11000 անդամներից 72.2%-ը¹⁴: Պատերազմի առաջին ամիսներին ռազմաճակատ մեկնեցին կուսակցական, պետական, հասարակական կազմակերպությունների հարյուրավոր դեկավար աշխատողներ, կոլտնտեսությունների նախագահներ և հաշվապահներ, գրողներ, լրագրողներ, տասնյակ բժիշկներ:

Կարելի է օրինակներ շատ բերել: Սակայն սրանք էլ բավական են, որպեսզի համոզվենք, թե ինչպիսի վճռականությամբ էին լի արցախցիները, ովքեր ռազմաճակատ էին մեկնում՝ համոզված լինելով, որ կվերադառնան հաղթանակով:

Դեռ ֆիննական պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման էր արժանացել Լեռնային Ղարաբաղի Մաշտիշեն (ներկայումս Կոլխոզաշեն) գյուղում ծնված, գեներալ-լեյտենանտ (հետագայում գեներալ-գնդապետ) Միքայել Արտյոմի Պարսեղովը: Պատերազմից առաջ, լինելով Լենինգրադի զինվորական օկրուգի իրետանային դիվիզիայի հրամանատար, նա հանձնարարություն էր ստացել նախապատրաստվելու հանրահայտ Մաններիայնի պաշտպանական գիծը ճեղքելուն: Պարսեղովը, ի սպաս դնելով իր ռազմական փորձն ու վարպետությունը, էապես նպաստեց 1940 թ. փետրվարի 11-ին Մաններիայնի գծի

ճեղքմանը, ինչի համար էլ նրան շնորհվեց հերոսի կոչում: Հետագայում անվանի զորավարը՝ որպես 40-րդ բանակի հրամանատար, ապա՝ հեռավոր արևելյան խորհրդային բանակի հրետանու պետ, մեծ ներդրում ունեցավ Հայրենական մեծ պատերազմում գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի նկատմամբ տարած հաղթանակներում¹⁷:

Սպիտակ ֆինների ջախջախման գործում ցուցաբերած խիզախության և անվեհերության համար հերոսի կոչման է արժանացել նաև Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի հերիսան գյուղից *Իսահակ Մարկոսի Մանասյանը*, որը ղեկավարում էր զնդացրային դասակ: Նրա դասակը խիզախություն ցուցաբերեց Կիրկ բարձունքը գրավելու ժամանակ: Այնուհետև նա մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և փառքով է պատկվել մի շարք մարտերում¹⁸:

Սպիտակ ֆինների դեմ մղված մարտերում աչքի է ընկել նաև ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Մինգրլեսկ գյուղից փոխգնդապետ *Գիրգոր (Գուրգեն) Միքայելի Հայրապետյանը*: Նա 1936 թ. զորակոչվել էր բանակ, ավարտել հրամանատարական դասընթացներ և նշանակվել հրաձգային վաշտի հրամանատար: Նա Մանենրիայի պաշտպանական գիծը գրոհող կամավոր խմբերից մեկի հրամանատարն էր և փայլուն կերպով կատարեց հանձնարարությունը, ինչի համար էլ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով նրան արժանացրեց խորհրդային Միության հերոսի կոչման: Գ. Հայրապետյանը մասնակցել է Հայրենական պատերազմի մի շարք ռազմական գործողությունների և պարգևատրվել Լենինի շքանշանով: Պատերազմից հետո երկար տարիներ աշխատել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես դասախոս¹⁹:

Հայրենական պատերազմի հենց առաջին օրերին Բալթյան նավատորմում աչքի է ընկել օդաչու, կրտսեր լեյտենանտ (հետագայում գվարդիայի փոխգնդապետ) *Նելսոն Գևորգի Ստեփանյանը*, որը ծնունդով Արցախի Շուշի քաղաքից էր: Ցուցաբերած բացառիկ ունակությունների և քաջության համար նա առաջին անգամ հերոսի կոչման արժանացել է 1942 թ.: Պատերազմի սկզբից մինչև 1944 թ. օգոստոսի 18-ը և Ստեփանյանը կատարել է 239 մարտական թռիչք, որոնց ընթացքում խորտակել է 13 նավ, ոչնչացրել մոտ 5000 ֆաշիստական զինվոր ու սպա, 80 տանկ, 600 ավտոմեքենա, 249 հրանոթ, 130 զնդացրային կետ, 40 երկաթուղային գնացք, մեկ քերմաքարչ և տարբեր տեսակի 27 ինքնաթիռ: Նելսոն Ստեփանյանն իր վերջին թռիչքը կատարել է 1944 թ. դեկտեմբերի 14-ին: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1945 թ. մարտի 6-ին նրան շնորհել է խորհրդային Միության հերոսի երկրորդ կոչումը²⁰:

Փառավոր ուղի է անցել խորհրդային Միության մարշալ, խորհրդային Միության կրկնակի հերոս *Հովհաննես Քրիստափորի (Խաչատուրի) Բաղդամյանը*: Նա ծնվել է Ելիզավետպոլի (Գանձակ) երկաթուղային կայարանի բանվորական ավանում: Նրա ծնողները ծնունդով Հյուսիսային Արցախի Շամխորի շրջանի Չարդախլու գյուղից էին: ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1940 թ. սեպտեմբերի 2-ի հրամանով զնդապետ Հ. Բաղդամյանը նշանակվել է Կիևի հատուկ զինվորական օկրուգի 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ: Եղել է Կուրսկի աղեղում ծեռք բերված հաղթանակում մեծ դեր խաղացած 11-րդ գվարդիական բանակի հրամանատարը, իսկ 1943 թ. նոյեմբերի 17-ին գեներալ-գնդապետ Հ. Բաղդամյանը նշանակվել է 1-ին մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար: Մեկ օր անց նրան շնորհվել է բանակի գեներալի կոչում: Պատերազմից հետո բանակի գեներալ Բաղդամյանը շարունակել է իր ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերում. նա վարել է մի շարք բարձր, այդ թվում՝ պաշտպանության նախարարի տեղակալի, պաշտոններ, արժանացել խորհրդային Միության մարշալի կոչման, հերոսի երկրորդ Ոսկե աստղի: Մահացել է 1982 թ. սեպտեմբերի 21-ին Մոսկվայում: Նրա աճյունաստիճարն ամփոփված է Կրեմլի պատուօձի²¹:

1941 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին մղված հերոսական մարտերում ծնվեց խորհրդային գվարդիան: Առաջին գվարդիականներից էր 40-րդ բանակի 127-րդ հրաձգային դիվիզիայի 395-րդ հրաձգային զնդի հրամանատար *Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը*, որը Չարդախլու գյուղից էր: Նրա գլխավորած զուևող Ելնյայի մոտ ոչնչացրել է հակառակորդի ավելի քան 6000 զինվոր և սպա, մոտ 30 տանկ, տասնյակ հրանոթներ, ականանետներ, զնդացիրներ, մինչև 100 ավտոմեքենա և մոտոցիկլետ: Ջրահատանկային բանակի ապագա գլխավոր մարշալ Հ. Բաբաջանյանը մասնակցել է Իսպուտի և Գնեստրի գետանցմանը, ինչի համար արժանացել է խորհրդային Միության հերոսի կոչման: Նա, հերոսաբար կռվելով ֆաշիզմի դեմ, մասնակցել է նաև Բեռլինի գրավմանը: Մահացել է 1977 թ.²²:

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակում առանձնակի ներդրում է ունեցել խորհրդային Միության հերոս *Հովհաննես (Իվան) Ստեփանի Իսակովը*: Նա ծնվել է Կարսի մարզի Հաջիքենդ գյուղում: Հայրը ծնունդով Հյուսիսային Արցախի Գետաշեն գյուղից էր, մայրը Էստոնիայից: 1940 թ. անռանը Իսակովին շնորհվել է ծովակալի կոչում, իսկ նոյեմբերին Ի. Վ. Ստալինի ցուցումով նրան նշանակել են գլխավոր ծովային շտաբի պետ: Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Հ. Իսակովը Բալթիկայում էր: 1941 թ. հուլիսից նա հյուսիսարևմտյան ուղղությամբ գլխավոր հրամանատարի ծովային գծով տեղակալն էր: 1944

թ. նրան շնորհվել է նավատորմի ծովակալի կոչում: Պատերազմից հետո նա շարունակել է իր ծառայությունը ԽՍՀՄ ռազմածովային նավատորմում: 1955 թ. Իսակովին շնորհվել է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում, իսկ 1965 թ. մայիսին՝ Խորհրդային Միության հերոսի բարձր կոչում²³:

1942 թ. Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերը ղեկավարում էր գնդապետ *Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովը* (Արմենակ Արտեմի Խանփետրյանց): Նա ծնվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մեծ Թաղեր գյուղում: Ավարտել է ժուկովսկու անվան ռազմաօդային ինժեներական ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետը: Պատերազմի երկրորդ տարում նշանակվել է Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի հրամանատար: 1944 թ. նրան շնորհվել է ռազմաօդային ուժերի մարշալի կոչում: Որպես ռազմական փորձագետ, մասնակցել է 1945 թ. Ղրիմի խորհրդաժողովին: Պարգևատրվել է Լենինի շքանշանով և մի շարք մեդալներով: 1950 թ. գնդակահարվել է Բերիայի կողմից²⁴:

Պատերազմի սկզբին իր հերոսությամբ աչքի է ընկել 21-րդ բանակի, 227-րդ հրաձգային դիվիզիայի, 777-րդ հրաձգային գնդի, 3-րդ հրաձգային գումարտակի հրամանատար, Հյուսիսային Արցախի Խանլարի շրջանի Ջազիկ գյուղում ծնված *Խաչատուր Բեգլարի Մելիքյանը*: 1941 թ. վերջին և 1942 թ. սկզբին Բելգորոդի և Կուրսկի մարզերում ցուցաբերած հերոսության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով լեյտենանտ Խ. Մելիքյանին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում²⁵: Այդ նույն գյուղից գեներալին եֆրեյտոր *Ավետիս Աղայանը* 1941 թ. հունիսի 29-ին Բելոռուսիայի Յանովի շրջանում խիել է հակառակորդի 2 հետախուզական ինքնաթիռ, իսկ հուլիսին Բուրակլի շրջանում ուղիղ նշանառությամբ խիել է թշնամու մեկ տանկ, ինչի համար պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով²⁶:

Պատերազմի առաջին մարտերում իր համարձակությամբ և խիզախությամբ աչքի է ընկել Արևմտյան ռազմաճակատի 43-րդ բանակի 53-րդ հրաձգային դիվիզիայի 12-րդ հրաձգային գնդի հրամանատար մայոր *Արսեն Ավթանդիլյանը*, որը ծնունդով Մաքսուճու շրջանի Գիշի գյուղից էր: Մալոյարոսլավցեի մոտ մղված պաշտպանական մարտերում ցուցաբերած անվեհերության համար 1942 թ. փետրվարի 10-ին Ա. Ավթանդիլյանը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով²⁷: Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվել է Մոսկվայի պաշտպանության համար մղված մարտերում աչքի ընկած *Արտավազդ Մարտիրոսովը*, որը ծնվել է Չարդախլու գյուղում²⁸:

Արևմտյան ռազմաճակատի 146-րդ օդային դիվիզիայի 232-րդ գրոհային գնդի օդաչու ավագ լեյտենանտ *Արմեն Թևանի Հայրիյանը*, որը ծնվել է Հաղորթի շրջանի Տող գյուղում, կատարել է 105 մարտական թռիչք և ոչնչացրել հակառակորդի ավելի քան 310 զինվոր ու սպա, 12 ինքնաթիռ, 12 տանկ, 150 ավտոմեքենա, տարբեր տեսակի 20 հրանոթ, ինչի համար նրան շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում²⁹: Նույն գյուղից էր 43-րդ բանակի 1-ին գվարդիական հրաձգային դիվիզիայի 300-րդ գեներալին գնդի 37-մ գեներալին մարտկոցի հրամանատար, ավագ լեյտենանտ *Գարեգին Օսիպովը*, որի մարտկոցը 1941 թ. հոկտեմբերի 22-ին Նատո-Ֆոմինսկի մոտ խիել է «Ղոռնի-Ղո-217» ինքնաթիռը, իսկ հոկտեմբերի 24-ին «Յունկերս-87», «Յունկերս-88» և «Մեսերշմիտ» ինքնաթիռները: Պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով³⁰: Կարմիր դրոշի շքանշանի է արժանացել Կալինյան ռազմաճակատի 3-րդ բանակի 38-րդ հատուկ հրաձգային բրիգադի հրամանատար գնդապետ *Սմբատ Ղանիելյանը*, որը ծնվել է Չարդախլու գյուղում: Նրա գլխավորած զորամասերն անօրինակ խիզախությամբ աչքի են ընկել Մարիֆոնո-Նոգատինոյի շրջանում մղված մարտերում³¹: 51-րդ բանակի 91-րդ հրաձգային դիվիզիայի ավագ բուժակ *Երվանդ Գրիգորյանը*, որը ծնվել է Մարտունու շրջանի Դզղալա (ներկայումս Բերդաշեն) գյուղում, 1942 թ. հուլիսի 17-ից մինչև 1943 թ. հունվարի 1-ը Ստալինգրադյան ռազմաճակատում դաշտից դուրս է բերել 97 վիրավոր, ինչի համար արժանացել է Լենինի շքանշանի³²:

Հյուսիսային Արցախի Խաչակապ գյուղում ծնված *Գրիգոր Բաղդյանը*, որը Ստալինգրադյան ռազմաճակատում 47-րդ գնդի քաղցեկի տեղակալն էր, պաշտպանական մարտերում ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, իսկ հարձակողական մարտերում ցուցաբերած բացառիկ քաջության և հմտության համար նշանակվել է գնդի հրամանատար և արժանացել հերոսի կոչման³³:

Հետմահու Կարմիր դրոշի շքանշանի է արժանացել մարտունեցի տանկիստ *Գուրգեն Ավագյանը*: Նա կռվել է Ստալինգրադյան ռազմաճակատում: 1942 թ. ոչնչացրել է թշնամու 50 զինվոր և սպա, 1 դիտակետ, 2 ականանետներ: Գերի է վերցրել 2 զինվորի իրենց գնդացիներով³⁴: Իսկ 181-րդ տանկային բրիգադի 394-րդ տանկային գումարտակի հրամանատարի տեղակալ, ծնունդով Գիշի գյուղից Կապիտան *Եփրեմ Ղարիբյանը* 1942 թ. ղեկտեմբերին, իր վրա վերցնելով գոհված հրամանատարի պարտականությունը, ոչնչացրել է նահանջող հակառակորդի ավտոշարասյունը (150 զինվոր և սպա, ռազմամթերքով բեռնված 200 ավտոմեքենա): Ղարիբյանն անձամբ ոչնչացրել է թշնամու 30 զինվոր և սպա: Նա արժանացել է Կարմիր աստղի շքանշանի³⁵: Ստա

լինգրադյան ռազմաճակատում ցուցաբերած քաջության համար Կարմիր աստղի շքանշանի է արժանացել նաև ԼԴԻՄ-ի Մարտակերտի շրջանի Մատաղիս ավանում ծնված *Կարախան Չայրիկյանը*³⁶:

Շուշի քաղաքում է ծնվել *Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը*: Նա, լինելով Բրյանսկի ռազմաճակատի 13-րդ բանակի 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, մեծ ներդրում է ունեցել Կուրսկի ճակատամարտում: Գեներալ-մայոր Ա. Ղազարյանի գլխավորած դիվիզիան հինգ օրվա ընթացքում ոչնչացրել է թշնամու ավելի քան 30 տանկ, բազմաթիվ այլ ռազմական տեխնիկա: Գեներալն առանձնապես մեծ խիզախություն է ցուցաբերել Դնեպրի գետանցման ժամանակ: 1943 թ. հոկտեմբերի 16-ին արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Մասնակցել է նաև ճապոնական միլիտարիզմի ջախջախմանը: Պատերազմից հետո ծառայությունը շարունակել է մի շարք զինվորական օկրուգներում³⁷:

Վիկտոր Մուրադյանը ծնվել է Գաղրուբի շրջանի Կեմրակում գյուղում: Եղել է 89-րդ հայկական դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ: Խարկովի ազատագրման ժամանակ ցուցաբերած արիության համար պարգևատրվել է Գայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով³⁸: Օդաչու *Նիկոլայ Մանուչարյանը*, որը ծնվել է Մարտակերտում, Կուրսկի ճակատամարտում կատարել է 86 զինքերային թռիչք և պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով³⁹: Անդրկովկասյան ռազմաճակատի հյուսիսային խմբավորման 9-րդ բանակի 151-րդ հրաձգային դիվիզիայի 570-րդ հատուկ սակրավորական գումարտակի եֆրեյտոր *Մեսրոպ Ղազարյանը*, որը ծնվել է Գին Թաղեր գյուղում, 1942 թ. օգոստոսի 17-ից մինչև սեպտեմբերի 21-ը Թերեք գետի կամուրջները պայթեցնելու համար հետմահու պարգևատրվել է Լենինի շքանշանով, և նրա անունն առհավետ մտցվել է այդ սակրավորական գումարտակի անձնակազմի ցուցակի մեջ⁴⁰: Լենինի շքանշանով պարգևատրվել է նաև Անդրկովկասյան ռազմաճակատի 9-րդ բանակի 60-րդ առանձին բրիգադի հրետանային դիվիզիոնի կրտսեր սերժանտ *Բագրատ Մկրտչյանը*, որը ծնվել է Գյուսիսային Արցախի Խանլարի շրջանի Կուչչի գյուղում: Նա 1942 թ. նոյեմբերի 10-ին ուղիղ նշանառությամբ ոչնչացրել է թշնամու 9 տանկ, 12 ավտոմեքենա, 5 գնդացի և այլն⁴¹:

Պատերազմի տարիներին իր սխրանքներով աչքի է ընկել 390-րդ հրաձգային գնդի ակամանետային գումարտակի հրամանատար, Կարմիր դրոշի շքանշանակիր, ավագ լեյտենանտ *Արսեն Չայրապետի Մուքանյանը*, որը ծնվել է Մարտունու շրջանի Սոս գյուղում: Նա կռվելով Գյուսիսային Կովկասից հասել է մինչև Ավստրիա: Պատերազմից հետո

հաշմանդամ մայոր Ա. Մուքանյանը երկար տարիներ ղեկավարել է հայրենի գյուղի կուլտնտեսությունը և խաղաղ աշխատանքում ևս հասել բարձր ցուցանիշների⁴²:

Լեգենդար հերոս է Կովկասյան ռազմաճակատում մարտնչած 526-րդ հրաձգային գնդի 7-րդ հրաձգային դասակի հրամանատար լեյտենանտ *Թեմիկ Ալթանդիյանը*, որը ծնվել է Մարտակերտ ավանում: Նա բազմաթիվ քաջագործությունների համար արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման⁴³: Նույն գնդի սերժանտ *Նելսոն Իզմայիլյանը*, նույնպես Մարտակերտ ավանից, Կերչի օպերացիայի ժամանակ ոչնչացրել է 27 ֆաշիստ: Նա առաջինն է անցել Կատեռլիզ գետը, գրավել 2 տուն, ինչի համար պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով⁴⁴: Պատմական Գյուլիստան գյուղում է ծնվել *Գարեգին Բալայանը*, որը պատերազմում Դնեպրի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության համար արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման, և նրա անունն առհավետ գրանցվել է իր զորամասի 1-ին մտոհրաձգային վաշտի անձնակազմի ցուցակում⁴⁵:

5-րդ օդադեսանտային բրիգադի 3-րդ գումարտակի հրամանատար, վարդիայի ավագ լեյտենանտ *Սուրեն Գրիգորի Պետրոսյանը*, որը ծնվել է Ստեփանակերտի շրջանի Ու գյուղում, իր գումարտակի զլուխ անցած, 1943 թ. սեպտեմբերի 24-ին Չերկասկի շրջանում առաջինն է անցել Դնեպրը: Նրա գումարտակը ոչնչացրել է 800 գերմանական զինվոր և սպա, 21 տանկ, 83 ավտոմեքենա, 6 հրանոթ, 47 գնդացի, 5 էլեկտրակայան, 5 գումարտակային շտաբ, 1 դիվիզիայի շտաբ, 21 ռադիոկայան, պայթեցրել է 13 կամուրջ, 3 գնացք, գերի վերցրել 382 գերմանական զինվոր և սպա, 18 ավտոմեքենա, 11 մոտոցիկլետ, 49 ականանետ, 100 գնդացի, 121 ծի և այլն: ԽՍՀՄ Գիտնախազարթության 1944 թ. ապրիլի 24-ի հրամանագրով Սուրեն Պետրոսյանին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում⁴⁶:

Չարդախլու գյուղում ծնված *Գուրգեն Մանասյանը* Բելոռուսիայի ազատագրման համար մղված մարտերում ոչնչացրել է հակառակորդի 2 տանկ, 81-մմ ականանետների 2 ջուկ, 3 ավտոմեքենա և այլն: Նա 1944 թ. հունիսի 18-ին պարգևատրվել է Գայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով⁴⁷: Ծնունդով Ստեփանակերտի շրջանի Ազնեք գյուղից ավագ սերժանտ *Ժորա (Գեորգի) Իսրայելյանը*, որը հրաձգային գնդի սակրավորական դասակի հրամանատարի տեղակալ էր, 1945 թ. պարգևատրվել է փառքի 1-ին աստիճանի շքանշանով⁴⁸:

831-րդ հրետանային դիվիզիայի բժշկուհի, բուժծառայության կապիտան *Շուշանիկ Մուսայելյանը* աչքի է ընկել իր անխոնջ աշխատանքով, ինչի համար արժանացել է Կարմիր աստղի շքանշանի⁴⁹:

46-րդ բանակի 109-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 309-րդ գվարդիական հրաձգային գնդի 1-ին հրաձգային գումարտակի գնդացրային վաշտի հրամանատարն էր Արամ Յովակիմի Սաֆարյանը (Սաֆարով), որը Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հաղորտի գյուղից էր: Գվարդիայի լեյտենանտ Ա. Սաֆարյանն իր քաջությամբ աչքի է ընկել Դնեպրի գետանցման ժամանակ: Անցնելով գետը Սաֆարյանի վաշտը փակել է Բելգորոդ տանող ճանապարհը: 1943 թ. հոկտեմբերի 8-ի առավոտյան Սաֆարյանը թշնամու հետ կատաղի մարտում հերոսաբար զոհվել է: 1945 թ. նրան հետմահու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում⁵⁰:

Բուդապեշտից դեպի արևելք Յասբեռն քաղաքի շրջանում, 1944 թ. նոյեմբերի 14-ին հրաձգային դիվիզիայի մի խումբ սակրավորներ, որոնց թվում էր 682-րդ առանձին սակրավորական գումարտակի շարքային Արտահամ Ղուլյանը Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղից, գնդի հարձակումն ապահովելու համար հրաման էին ստացել անցումներ բացելու 684-րդ հրաձգային գնդի դիմաց թշնամու ստեղծած ակամադաշտի միջով: Թշնամու գնդակոծության տակ խումբը շարունակել է ակամազերծման աշխատանքները: Վնասագերծվել է հակառակորդի 30 ակամ: Առաջադրանքի կատարման ավարտին թշնամու գնդակից զոհվել է շարքային Արտահամ Ղուլյանը: Անձնագրի սակրավորը հետմահու պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով: Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղից էր նաև 964-րդ հրաձգային գնդի 6-րդ մարտկոցի հրանոթային նշանառու, շարքային Պետրոս Ղուլյանը, որը լուծել է իր համագյուղացու վրեժը: Նա դիպուկ կրակով ոչնչացրել է ավելի քան 20 ավտոմատավոր, 2 գերմանական զրահամեքենա և 4 հաստոցային գնդացիր: Այդ սխրանքի համար խիզախ հրետանավորը պարգևատրվել է «Արիության համար» մեդալով⁵¹:

Արցախի Հաղորտի շրջանի Դուդուկչի գյուղում է ծնվել Խորհրդային Միության հերոս Աշոտ Ջուճուղի Գասպարյանը (Կասպարով): Նա միշտ էլ պատվով է կատարել բոլոր մարտական առաջադրանքները: Գրոհային պատերազմի Գասպարյանը կատարել է 80 մարտական թռիչք, որից 28-ի ժամանակ վայրէջք է կատարել թշնամու թիկունքում և ժողովրդական վիրժառուներին հասցրել 90 տ ռազմամթերք, թիկունք տեղափոխել վիրավոր պարտիզանների: Գասպարյանը 16 անգամ մասնակցել է Բեռլինի ռմբակոծումներին: Պատերազմից հետո երկար տարիներ ղեկավարել է շրջկենտրոնի կոլտնտեսությունը և հասել տնտեսական մեծ հաջողությունների⁵²:

Մեծ հայրենականի տարիներին պարտիզանական պայքարում իրենց սխրագործություններով աչքի են ընկել բազմաթիվ ղարաբաղցի-

ներ, որոնք արժանացել են շքանշանների և մեդալների: Կարելի է հիշատակել Սմբատ Արզումանյանին (Ճարտար), Գուրգեն Յովսեփյանին (Ներքին Հոռաթաղ), Սամսոն Գարաբաբյանին (Շոշ), Սերգեյ Սահինյանին, Միքայել Բաղդասարյանին (Սամնա) և ուրիշներին:

Պատերազմի տարիներին իրենց խիզախություններով աչքի են ընկել ծնունդով արցախցի հայրուրավոր բժիշկներ, գիտնականներ և այլ բնագավառների աշխատողներ: Արժե, թերևս, հիշատակել այն փաստը, որ Շուշիում էին տեղակայված թիվ 1493 և թիվ 2472 հիվանդանոցները⁵³:

բ) Թիկունքում

Մարտնչող խորհրդային բանակին հարկավոր էին զենք ու զինամթերք, սնունդ, հագուստ և այլնայլ անհրաժեշտ պարագաներ: Այդ ամենով ապահովելու համար ոտքի էր ելել ամբողջ խորհրդային ժողովուրդը, այդ թվում մեր լեռնաշխարհի մարդիկ: Այդ մասին իրենց էջերում բավականին նյութեր են հրատարակել մարզային «Սովետական Ղարաբաղ» (հայերեն և ռուսերեն) և հանրապետական «Կոմունիստ» (հայերեն) թերթերը, որոշ փաստաթղթեր էլ պահպանվել են ԼԴՀ պետական արխիվում⁵⁴:

Մարզի բնակչությունը ծերունիներն ու կանայք, նույնիսկ դպրոցականները օր ու գիշեր աշխատում էին ռազմաճակատի պահանջները բավարարելու համար: Բաքվում տպագրվող հայերեն «Կոմունիստ» թերթը 1944 թ. գրել է. «Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղի կոլտնտեսության անդամ Պետի դային շատ արիեստներ գիտի, կոլտնտեսությունում աշխատում է 3-4 վարպետի փոխարեն, պատրաստում սայլեր, պահարաններ, սեղաններ, վառարաններ, դուլլեր, խախալներ, թիեր և այլն կատարելով օրական մոտ երկու նորմա: Չնայած իր 102 տարեկան հասակին նա իրեն ջախել և աշխույժ է զգում: Պետի դայու հարկի տակ հասակ է առել 46 մարդ: Նրանցից 9-ը զսնվում են Հայրենական պատերազմի ռազմաճակատում»⁵⁵: Պետի դայու այդ օրինակն ընդհանուր է ամբողջ արցախահայության համար:

Պատերազմի առաջին օրերին մարզի ձեռնարկություններում և կոլտնտեսություններում տեղի ունեցող հանրահավաքներում և միտինգներում մարդիկ ստանձնում էին պարտավորություններ և ամեն կերպ ձգտում դրանք կատարել ժամկետից շուտ: Մարտունու շրջանի Դզդալա գյուղից մարզխորհրդի պատգամավոր Հայկանուշ Դանիելյանը հայտարարում է. «Կարմիր բանակի թիկունքում մենք կոլտնտեսականներս, կանգնած ենք պատրաստ, և եթե հարկ լինի, նրանց հետ մի-

ասին պայքարի կելնենք գազագած ֆաշիզմին ջախջախելու համար»: Իսկ կոլտնտեսության նախագահ Ի. Հարությունյանը նշում է. «Մեր կոլտնտեսուհիները տղամարդկանց հետ պայքարում են բերքահավաքն անկորուստ հավաքելու համար: Այսօր նրանք պատրաստ են կրկնապատկելու իրենց ողջ ուժն ու եռանդը հայրենիքին էլ ավելի հաց ու միս հանձնելու համար, մեր գործող բանակի շարքերը անցնող տղամարդկանց փոխարինելու համար»⁵⁶: Ասկերանի ռեկտիֆիկացիոն (կրկնազտող) գործարանի բանվորներն իրենց միտինգում որոշեցին. «Մենք պատրաստ ենք կրծքով պաշտպանել մեր հարազատ հայրենիքը: Մենք մեր աշխատանքում կկատարենք առավելագույնը, որպեսզի մեր Կարմիր բանակի հարվածն անարգ թշնամուն լինի ավելի ծանր, ավելի ճգմիչ: Թշնամին կպարտվի»⁵⁷:

Առաջին արդյունքներն ուրախալի և ոգևորիչ էին: Ստեփանակերտի Բաքվի 26 կոմիսարների անվան մետաքսագործական ֆաբրիկան հուլիսի 23-ին իր օրվա պլանը կատարեց 100.9%-ով, իսկ 24-ինը 104.7%-ով: Այդ օրը բանվորուհի Թամարա Աբրահամյանը պլանային 885 գրամ մետաքսաթելի դիմաց կարծեց 1100 գրամ բարձրորակ մետաքսաթել⁵⁸: Քարինտակի մետաքսուղորման ֆաբրիկայի բանվորուհիները 1941 թ. հուլիսի առաջին կեսի մետաքսի ոլորման պլանը կատարել են 180.5%-ով: Շատ բանվորներ օրվա պլանները կատարում էին մինչև 150%-ով⁵⁹: Մեծ եռանդով էին աշխատում շերամապահները: Նրանք ձգտում էին ժամկետից շուտ կատարել տարեկան պլանը: 1941 թ. հուլիսի սկզբին Հաղործի շերամապահները տարեկան պլանը գերակատարել էին 113.6%-ով, Շուշիի շրջանը 102%-ով: Մարզի մի շարք ձեռնարկություններ և կոլտնտեսություններ օրվա պլանները գերակատարում էին: Իրենց առաջին քայլերն էին կատարում նույնիսկ պիոներներն ու կոմերիտականները: Մարզային թերթը հաղորդում է, որ Ստեփանակերտի շրջանի Հարավ գյուղից 40 պատանիներ ընդգրկվել են հասկահավաքի ճակատում և օրական հավաքում են 350-400 կգ հասկ: Նաև հաղորդում է, որ այդ կոլտնտեսությունում արտադրության մեջ աշխատող կանանց թիվը 14-ից հասել է 60-ի: Այստեղ ամեն օր գերակատարվում էին կաթի և այլ մթերքների արտադրության պլանները⁶⁰: Կա նաև այսպիսի հաղորդում. Ստեփանակերտի մեխանիկական գործարանից չնայած 25 հոգի մեկնել էին ռազմաճակատ, սակայն գարծարանում ոչ մի հաստոց կանգ չէր առել, և օրվա պլանները գերակատարվում էին⁶¹: Ղարաբոյնիության «Մետալիստ» արտելի 36 վարպետներից ճակատ էին գնացել 16-ը: Սակայն արտելը օրվա պլանները գերակատարում էր: Վարպետ Ա. Ավանեսյանը միաժամանակ աշխատում էր 3-4 վարպետի փոխարեն և օրվա պլանը կատարում էր 250-300%-ով, իսկ Գ. Ղազարյանը և Ա. Իշխանյա-

նը իրենց պլանները կատարում էին 150-180%-ով⁶²: Մարտունու շրջկոմբինատի ալրադացի վարպետ Ղադայանն ամեն օր գերակատարում էր պլանը, իսկ հուլիսի 10-ին գերակատարեց 343%-ով: Խնձրիստանի մետաքսուղորման ֆաբրիկայի ստախանովական Ղումաշ Ալաջանյանը իր ամենօրյա պլանը կատարում էր 116.5, Տողի ֆաբրիկայից Մաշինկա Բեջանյանը 130%-ով, Պուժի Ղուկասյանը և Ղուշի Ղարաշյանը 129%-ով⁶³: Ստեփանակերտի առևտրի բաժանմունքի կարի արհեստանոցի վարպետներ Ա. Հայրապետյանը և Ն. Սարգսյանը օրվա պլանը կատարում էին 130-ական տոկոսով-ով, իսկ Ա. Առաքելյանը 140: Մարտունու շրջանի Մուշկապատից 114, Կուխոզաշենից 130, Սոսից 120, Նորշենից 140, Եմիշճանից 82, Չարդանաշենից 76 դպրոցականներ և ուսուցիչներ, հրաժարվելով իրենց արձակուրդից, ակտիվորեն մասնակցում էին բերքահավաքին: Քարինտակի կոլտնտեսությունը հուլիսի 1-ի դրությամբ պետությանն էր հանձնել 6783 կգ միս, 377 կգ յուղ, 800 ձու, մուժել էր 14070 ռ. պետական փոխառության գումար և բավականին մթերքներ հանձնել 1942 թ. հաշվին: Ստեփանակերտի շրջանի Շոշ գյուղից 85-ամյա կոլտնտեսական Հ. Յախշիբեկյանը հնձի օրվա նորման կատարում էր 170%-ով, նրա հասակակից Թ. Գաբրիելյանը 160%-ով: Օրվա երկու նորմա էին կատարում կոլտնտեսականներ Ս. Բաբայանը, Չ. Բաղդասարյանը, Ն. Գարաբյանը և ուրիշներ: Մարտակերտի շրջանի Հայադ գյուղում ամեն օր աշխատանքի էր դուրս գալիս 30 կին, ովքեր մինչ այդ չէին աշխատում: Նրանցից 55-ամյա Մայրանգյուլ Շատրյանը հնձի օրվա նորման կատարում 110-115%-ով: Ստեփանակերտի շրջանի Խաչմաչ գյուղի կոլտնտեսությունը 1941 թ. պետական առաջադրանքների պլանը կատարել էր հուլիսի 20-ի դրությամբ: Նույն շրջանի Դահրավ գյուղից ռազմաճակատ մեկնած ամուսիններին փոխարինած Մանյա Մարգարյանը, Մարալ Հախումյանը և Նախշուն Չաքարյանը հնձի օրական պլանը գերակատարում էին⁶⁴, իսկ Մարտունու շրջանի Հացի գյուղից Մարուսյա Աթայանը կալսման օրվա պլանը կատարում էր 150%-ով, Սոնյա Հարությունյանը 160%-ով: Նույն շրջանի արդյունաբերական կոմբինատը հուլիս ամսվա պլանը 20 օրում գերակատարել էր 138.7%-ով, Ղավախանից բրուտագործ Ա. Սահակյանը օրվա պլանը կատարում էր 210%-ով, իսկ կոմիտրի գործարանի վարպետի օգնական Մարիամ Օհանյանը օրվա պլանը սխտեմատիկ կատարում էր 150%-ով, դարբին Ս. Հայրապետյանը 140%-ով⁶⁵: Հաղործի շրջանը հացամթերման տարեկան պլանը կատարել էր հուլիսի կեսերին⁶⁶:

Պատերազմի հենց առաջին օրերից մասսայական բնույթ էին կրում նվիրատվությունները: Ամեն օր պաշտպանության ֆոնդ (ՊՖ) էին մուծվում դրամ, մթերքներ, անասուններ, թանկարժեք իրեր: Հենց առաջին

օրերին Չարդուբի շրջանի շրջափակողի աշխատողները ՊՖ մուծեցին 2000 ռ., Տոդի կոլտնտեսականները՝ 5 կգ արծաթ, 2800 ռ., 18675 փոխառության գումար: Մարզպետակոուպի բոլոր աշխատողները խոստացան յուրաքանչյուր ամսվա 3-ական օրվա աշխատավարձը մուծել ՊՖ, իսկ աշխատակիցներ Բ. Գաբրիելյանը միանգամից մուծեց 500 ռ., Պ. Տերտերյանը՝ 300 ռ., Ա. Իսրայելյանը՝ 100 ռ.: Լայն թափ առավ մետաղների ջարդոնների հավաքումը և հանձնումը: Գյուլես ճարտարի բնակիչները մի քանի օրում հանձնեցին 23 տ երկաթ և 710 կգ պղինձ⁶⁷:

Մարզի աշխատավորները մասսայաբար օգնում էին նաև դպրոցական և մանկական հիմնարկներին ու ընդգրկվում հակաօդային պաշտպանության (ՉՕՊ) խմբերում: Մարզային թերթը հաղորդում է, որ Քարինտակ գյուղում կազմակերպված ՉՕՊ-ի խմբում ընդգրկվել է 75 երիտասարդ, գյուղի դպրոցի նստարաններից նորոգվել են 25-ը, ձեռք է բերվել 3 նոր գրատախտակ, կուտակվել է 75 խրախուրդ մետր վառելափայտ: Թերթը նաև հաղորդում է, որ Ստեփանակերտի Բաբվի 26 կոմիսարների ամսվա մետաքսագործական ֆաբրիկայի աշխատողները ՊՖ են մուծել 9000 ռ., իսկ Սոսի կոլտնտեսությունը՝ 50250 ռ. փոխառության գումար⁶⁸: Մարտակերտի շրջանի բնակիչները պատերազմի առաջին օրերին մուծեցին 20000 ռ., մարզսոցապի վարիչ Չայկանուշ Ադամյանը՝ 350 ռ., 110 գրամ արծաթ և որոշել էր մինչև պատերազմի վերջը յուրաքանչյուր ամսվա երկու օրվա աշխատավարձը նույնպես հանձնել ՊՖ, մարզպետակոուպի մթերման բաժնի վարիչ Բ. Գաբրիելյանը պաշտպանության ֆոնդ մուծեց 500 ռ., Ղազբուլաղի կոլտնտեսության նախագահ Ծատրյանը՝ 100 ռ., Բալլուջայի կոլտնտեսությունը՝ 1000 ռ., 3 զլուխ խոշոր եղջերավոր անասուն, 60 կգ յուղ, Մարտունու շրջանի Նորշենի բնակիչները՝ 1200 կգ պղինձ, 8000 կգ երկաթ, Մարտակերտի շրջանում՝ 37693 ռ., 225 ոչխար, 32 զլուխ խոշոր եղջերավոր անասուն, 436 կգ յուղ, 1269 կգ պանիր, 3.5 տ կարտոֆիլ, 1 տ սոխ, 3 տ կաղամբ, 2 տ խաղող, 10000 ռ. փոխառություն, 8084 կգ պղինձ, 145 տ մետաղի ջարդոն և այլն: Գիշի գյուղի պիոներները ՊՖ մուծեցին 64 կգ չորացրած թուփ, 32 զույգ գուլպա, 20 թաշկինակ և այլն: Ղզղալայի կոլտնտեսությունում ՊՖ մուծվեց 300 աշխօր և բավականին մթերքներ, իսկ կոլտնտեսական Գ. Սարուխյանը նվիրեց 1 խոզ: Մարտակերտի շրջանի Կիջան գյուղից 80-ամյա Գ. Սարգսյանը՝ մեկ երիմեջ, նույն գյուղից Ս. Ստեփանյանը՝ մեկ ոչխար, Չաթերքի կոլտնտեսությունը՝ 250 կգ յուղ, 1 տ. պանիր, 2 տ կարտոֆիլ, 3 տ կաղամբ⁶⁹: Եվ այսպես, մարզում մարդիկ ՊՖ էին մուծում, ինչ կարող էին: Կարելի է շատ օրինակներ բերել: Սակայն բերված օրինակներից էլ բավական է համոզվել, թե մարզի բնակչությունն ինչպիսի նվիրվածությամբ էր աշխատում պատերազմի օգ-

տին: Այդպես շարունակվել է պատերազմի տարիներին, մինչև փառապանծ հաղթանակը: Այդ ոգևորությունը և նվիրվածությունը հետզհետե նոր թափ էին ընդունում, նոր ծավալ: Տանկային շարասյուն կառուցելու համար Մարտունու շրջանի Սխտորաշենի կոլտնտեսության նախագահ հաչատուր Պետրոսյանը մուծել է 50000 ռ., նույն շրջանի Մարտունու ավանի կոլտնտեսության նախագահ Գրիգոր Ստեփանյանը՝ 12000 ռ., Մարտակերտ ավանի կոլտնտեսության նախագահ Կարապետ Պետրոսյանը՝ 51000 ռ.: ԽՍՀՄ պաշտպանության կոմիտեի նախագահ Ի. Ստալինը հաչատուր Պետրոսյանին հեռագրել է. «Ընկ, Պետրոսյան. ընդունեցեք իմ ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը Կարմիր բանակի մասին Ձեր հոգատարության առթիվ»⁷⁰: հաչատուր Պետրոսյանը, կոչով դիմելով մարզի բոլոր աշխատավորներին, նշել է. «Մեր Լեռնային Ղարաբաղի զավակները ռազմաճակատում հերոսաբար պայքարում են թշնամու դեմ: Դուք բոլորդ լսել եք Հին Թաղեր գյուղացի Մեսրոբ Ղազարովի սիրագործության մասին, որն իր կյանքը զոհելով պայթեցրել է կամուրջը: Դուք ընթերցել եք Չայկազ Շադունցի մասին, որը չնահանջեց բազմաթիվ թշնամու առջևից և ոչնչացնելով գերմանական 7 տանկ ստիպեց թշնամուն հետ նահանջել: Դուք լսել եք Չարդուբի գյուղացի Առաքելյանի մասին, որը ստացել է 2 շքանշան անվեհերության համար...

Սիրելի հայրենակիցներ, մենք կարող ենք և կկառուցենք ավելի շատ տանկեր գերմանական ունակներին ջարդելու համար, մենք կարող ենք և կազատենք մեր հողը գերմանական սրիկաներից...»⁷¹:

Արձագանքելով Խ. Պետրոսյանի կոչին Մարտակերտից Մամիկոն Սիրգոյանը տանկային շարասյան ֆոնդ մտցրեց 51000 ռ., Սարուշենի կոլտնտեսության նախագահ Ս. Առստամյանը՝ 10000 ռ., իսկ Ննգի գյուղի կոլտնտեսության հաշվապահ Չայրապետ Քամայանը 110000 ռ: Ղավախանցիները երկու օրում այդ ֆոնդ մուծեցին 23000 ռ., այդ նույն գյուղի կոլտնտեսության նախագահ Արսեն Ասիրյանը՝ 55000 ռ., Ստեփանակերտի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 դպրոցի ուսուցիչները 6468 ռ.⁷²:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը սրտացավ օգնություն էր ցույց տալիս էվակուացվածներին. նրանց տրամադրում բնակարան, սնունդ, հագուստեղեն, տեղավորում աշխատանքի, իսկ երեխաներին դպրոցներում, մտուր-մանկապարտեզներում և պիոներական ճամբարներում:

Մարզի բնակիչներն ակտիվորեն մասնակցում էին փոխառությունների տարածմանն ու իրացմանը: Պետական ռազմական երրորդ փոխառության բաժնեգրությունը 1944 թ. մարտի 8-ի դրությամբ կազմել էր 39317000 ռ., ըստ որում Մարտունու շրջանի Ավդուռ գյուղի կոլտնտե-

տության նախագահ Սամվել Բաբայանը բաժնեգրվել է 110000 ռ., նույն շրջանի Քերթի կոլտնտեսության նախագահ Բարսեղ Արահամյանը՝ 102000 ռ., Նորշենի կոլտնտեսության նախագահ Իվան Ջարգարյանը, Մյուրիչի կոլտնտեսության նախագահ Ամիրջան Գարուբյունյանը, Մավասի կոլտնտեսության նախագահ Առուշան Ավանեսյանը, Ղզղալայի կոլտնտեսության նախագահ Իշխան Գարուբյունյանը, այդ գյուղի ֆերմայի վարիչ Լևոն Ավանեսյան՝ 100000—ական ռ. և այլն⁷³: Այդ նույն տարում մարզում իրացվեց 41298000 ռ. փոխառություն:

Մարզում, անկախ տարիքից, բոլորը ներգրավված էին հանրօգուտ աշխատանքներում: 1944 թ. մայիսի սկզբին Մարտակերտի շրջանի Դաթերքի ենթաշրջանի ծերունի կոլտնտեսականների հավաքին մասնակցած 80 հոգու անունից 94—ամյա Խուդան Գրիգորյանը իր ելույթում խոստացավ պայքարել երկրին ավելի շատ հաց տալ՝ նշելով. «Ես վեց բանակայինի հայր եմ... Իմ որդիների օրինակով ես թիկունքում ոչ մի ջանք չեմ խնայի, օր ու գիշեր կպայքարեմ բերքատվության բարձրացման համար», իսկ Միրզա Ամիրյանն ասաց. «Ծերունիներս մինչև նենգ թշնամուն վերջնականապես ոչնչացնելը պետք է աշխատենք երիտասարդների նման: Ես ամրացված եմ չորս գուրբանի: Ինձ հետ աշխատում են հատկապես բանակայինների կանայք, որոնց ուժերով 65 հեկտար բարձր որակի հերկ ենք կատարել...»: Ծերունիները մեծ պարտավորություններ ստանձնեցին⁷⁴:

Մարզի բազմաթիվ կոլտնտեսություններ, տարեկան պլանները կատարելուց բացի, մթերքներ էին հանձնում հաջորդ տարվա պլանների հաշվին: Օրինակ՝ Դադրուքի շրջանի Ծամծորի կոլտնտեսությունը, 1944 թ. աշնանը կատարելով տարեկան պլանը, 1945 թ. հաշվին հանձնել էր 3558 կգ հացահատիկ, 420,4 կգ բուրդ, 59 կգ յուղ, 127 կգ պանիր, 783 ձու, 1200 կգ խոտ, 107 կգ միս և այլն⁷⁵: Մարզում մասն կոլտնտեսություններ շատ կային:

Պատերազմի տարիներին նվիրվածությամբ էին աշխատում ոչ միայն կոլտնտեսականներն ու բանվորները, այլև ուսուցիչներն ու դպրոցականները: 1943 թ. մարտին Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվը, կոչով դիմելով մարզի բոլոր ուսուցիչներին և ռազմիկներին, հորդորում էր իրենց գյուղերում ծավալել քաղաքական—ռազմական քարոզչություն, ռազմական ուսուցման մեջ ընդգրկել 1925 և 1926 թթ. ծնված զորակոչիկներին ու զինապարտներին, աշակերտների լրիվ ներկայությունն ապահովել ռազմագիտության դասերին, գյուղում և դպրոցում պատրաստել վորոշիլովյան հրածիզներ, 1925 և 1926 թթ. ծնված զորակոչիկներին ընդգրկել ռուսաց լեզուն ուսումնասիրող խմբակներում, դպրոցականների ուժերով օգնել

կարմիրբանակայինների ընտանիքներին և այլն⁷⁶: Վաղուհասցիների կոչին ջերմորեն արձանգամբեցին տասնյակ միջնակարգ դպրոցների ուսուցչական կոլեկտիվներ:

Ճակատայինների ընտանիքներին օգնելը դարձել էր մասսայական գործ: Օրինակ՝ Ստեփանակերտի շրջանում մանկապարտեզներում 1943 թ. ընդգրկվել էին 1313 ճակատայինների երեխաներ: Ճակատայինների ընտանիքներին տրվել էր 1320 խորանարդ մետր վառելափայտ, 23 ց հացահատիկ, վերանորոգվել բանակայինների 100 բնակարան: Դամանման օգնություններ ցույց էին տրվում նաև մյուս շրջաններում: Մարտակերտի շրջանում ճակատայինների ընտանիքներին օգնել էին 31 տ հացահատիկով, 15148 ռ. դրամով և ուրիշ շատ մթերքներով ու անհրաժեշտ պարագաներով: Մարզկոմին առընթեր ստեղծվել էր ճակատայինների երեխաներին օգնելու հատուկ ֆոնդ: Կոմերիտականները, պիոներները և կրսուեր դպրոցականները այդ ֆոնդ մուծեցին մոտ 200 1000 ռ., 47449 կգ հացահատիկ, վերանորոգեցին ճակատայինների 908 բնակարան⁷⁷: Ղարմարզկոմի բյուրոյի որոշմամբ՝ 1943 թ. մարտի 20—31—ը մարզում անցկացվեց ճակատայինների ընտանիքներին օգնություն ցույց տալու տասնօրյակ⁷⁸: Ստեփանակերտ քաղաքում ճակատայինների 1111 դպրոցական երեխաներ ապահովվել էին հագուստով և կոշիկներով: Աշակերտական թոշակ է նշանակվել 102 երեխայի, որոնք ամսական ստանում էին 100—ական ռուբլի: 1945 թ. մանկամտություններում ընդունել էր ճակատայինների 1170 երեխա, 945 երեխա ընդգրկվել էին կլոր տարում գործող մանկասանատորիաներում, 300—ը՝ մանկապարտեզներում, 150—ը՝ հանգստյան տիպի ճամբարներում⁷⁹:

Երբ խորհրդային ուժերն անցան հակահարձակման և սկսեցին ազատագրել ֆաշիզմի կողմից զրավված տարածքները, անհրաժեշտություն զգացվեց օգնություն ցույց տալ հայրենի օջախ վերադարձածներին: Մարզի բնակչությունը ներգրավվեց նաև այդ աշխատանքում: Առաջիններից մեկը Գյունե ճարտարի կոլտնտեսությունն այդ նպատակի համար հատկացրեց 2 տ հացահատիկ, 40 դեկալիտր գինի, 200 ափսե, 400 գրպ, 1000 բաժակ, 2 ինքնատե, 1000 հատ ձու և այլ մթերքներ: Լեռնային Ղարաբաղի մարզկոմի և մարզգործկոմի համատեղ նիստը⁸⁰, որը տեղի է ունեցել 1943 թ. սեպտեմբերի 15—30—ը, քննարկելով այդ հարցը, որոշեց գերմանացիներից ազատագրված գյուղերի համար զնել 250 ոչխար և 300 այծ⁸¹: Արցախցիները Ստավրոպոլի երկրամաս ուղարկեցին 98 տ ցորեն, 343 տ միս, 16 հազար ց սերմացու, 105600 ռ., 675 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, ավելի քան 1000 աշխօրի արժեքի մթերքներ, 6425 տնային գործածական իրեր և այլն⁸²: Այդ օգնության համար Ստավրոպոլի աշխատավորներն իրենց շնորհակալությունը հայտնեցին դարաբաղցիներին:

Պատերազմի տարիներին արցախցի կանայք բանակի համար գործում էին գուլպաներ, ձեռնոցներ, տաք շորեր: Երանք ռազմաճակատ ուղարկած իրենց նամակներում ոգևորում էին կռվող մարտիկներին և կոչ անում անխնա ոչնչացնել նենգ թշնամուն: Ստեփանակերտի Ձակֆեդերացիայի փողոցի թ. 5 տան կանայք իրենց նամակում գրել էին. «Աեր սիրելի եղբայրներ: Ձեր սխրագործությունները ոգևորում են թիկունքի սարդական: Մենք հավատացած ենք, որ ֆաշիզմը կջախջախվի: Աճեն ինչով կօգնենք ձեզ՝ մոտավորտ հաղթանակն ապահովելու համար»⁶⁴:

Իրոք, անզնահատելի է թիկունքի կանանց կատարած մեծագույն աշխատանքը պատերազմի տարիներին: Ստեփանակերտի Բաքվի 26 կոմիսարների անվան մետաքսագործական ֆաբրիկայի բանվորուհի Լիզա Վերդյանը օրվա նորմաները կատարում էր 150%-ով: Երկու հաստոցների վրա առաջիններից մեկը սկսեց աշխատել Սիրան Գասպարյանը:

Մարզում շատ կանայք սովորում էին նոր մասնագիտություններ՝ դառնալով տրակտորիստներ, կոմբայնավարներ: Նրանցից ոմանք վիրավորներին ներարկելու նպատակով 1-15-ական լիտր դոնորական արյուն են հանձնել, որոնցից էին Աղավնի Դանիելյանը, Աշխեն Ասրյանը, Սանյա Սաֆարյանը, Նադեժդա Իվանովան, Վարդանուշ Օհանյանը և ուրիշներ⁶⁵: Մարտունու շրջանի Մյուրիշենի կոլտնտեսուհի Արզու Ասրյանը ուներ 12 տղա և մեկ աղջիկ: 1941-ի ամռանը միանգամից 4 գերանդի կախվեցին: Կամավոր ռազմաճակատ մեկնեցին Վարդանը, Հակոբը, Սուրենը և Արամը: Բայց և այնպես նրա ընտանիքը 1942 թ. վաստակեց 1800 աշխօր և բավականին օգնություն հանձնեց ՊՖ⁶⁶: Ստեփանակերտի շրջանի Շոշ գյուղից 8 բանակայինի մայր Մինա Բաբայանը, Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղից 6 բանակայինի մայր Վարդիթեր Շիրինյանը, նույն շրջանի Հաթերքից 7 բանակայինի մայր Ս. Գրիգորյանը, Սարուշենից 7 բանակայինի մայր Թամամ Հայրիյանը գերակատարում էին տարեկան պլանները⁶⁶:

Մարզի կանայք հազարավոր ծանրոցներ էին ուղարկում ռազմաճակատ: Եվ ահա մարտակերտցիները ծանրոցներից մեկն էլ ուղարկել էին մարշալ Գ. Կ. ժուկովի անունով: Մարշալի պատասխանը չուշացավ՝ ուղղված Մարտակերտի շրջանի կանանց: Նախ՝ շնորհակալություն է հայտնում նրանց ուղարկած ծանրոցի և նամակի համար, ապա շարունակում. «Գերմանական բարբարոսների դեմ Հայրենական մեծ պատերազմում խորհրդային բազմազգ պետության միլիոնավոր կանայք զենքը ձեռքներին պաշտպանում են իրենց պատիվն ու անկախությունը:

Ձեզնից ստացած նամակից երևում է, որ Ձեր շրջանի կանայք ընթանում են թիկունքում Կարմիր բանակի հաղթանակը դարբնողների ավանգարդում: Դրանում է Ձեր պատիվն ու անվեհերությունը, այդ իր նշանակությամբ պակաս տեղ չի գրավում, քան զենքը ձեռքներին նողկալի թշնամու դեմ անմիջական պայքարը...»

Կարմիր բանակի և անձամբ իմ անունից մի անգամ են շնորհակալություն են հայտնում Ձեզ Կարմիր բանակին ցույց տված մեծ օգնության համար և ցանկանում են Ձեր հետագա արդյունավետ աշխատանքը Կարմիր բանակի ապահովման բնագավառում մինչև թշնամու հանդեպ վերջնական հաղթանակը»⁶⁷:

Պատերազմի տարիներին տասնյակ արցախցի կանայք ոչ միայն աշխատում էին գործարաններում և կոլտնտեսային դաշտերում, այլև կատարում էին կուսակցական, պետական և տնտեսական ղեկավար աշխատանքներ: 1943 թ. մարտի սկզբի տվյալներով Ստեփանակերտի շրջանում առաջ էին քաշվել 63 կին մասնագետներ, որոնցից 18-ը աշխատում էին ժողովրդական կրթության բնագավառում, 8-ը կոլտնտեսությունների և գյուղական խորհուրդների նախագահներ էին, 13-ը ֆերմաների վարիչներ, 10 հոգի էլ աշխատում էին կուսակցական և պետական պատասխանատու տեղամասերում⁶⁸: Մարզում ավելի քան 350 կանայք աշխատում էին պատասխանատու օղակներում: 1944 թ. մարզում կային կոլտնտեսությունների 18 կին նախագահներ, գյուղական խորհուրդների 38 նախագահ, 63 բրիգադավար, ֆերմաների 155 վարիչ, իսկ 59 կին էլ աշխատում էր կուսակցական և խորհրդային շրջանային ու մարզային մարմիններում:

Պատերազմի տարիներին մեծ ներդրում ունեցան նաև մարզի կոմերիտականները: Առաջին օրերին կամավոր ռազմաճակատ մեկնեց 2000 կոմերիտական: Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի աշխատողների 80%-ը և արհեստագործական արտելների աշխատողների 90%-ը կոմերիտականներ էին: Մեծ հայրենականի տարիներին մարզի արդյունաբերական ձեռնարկություններից 138 կոմերիտականներ դարձան 2 և 3-հարյուրականներ, այսինքն իրենց արտադրական պլանները կատարում էին 200-300%-ով: Մարզի կոմերիտականներն ու պիոներները հավաքել և պաշտպանության ֆոնդ են մտցրել 473000 կգ սև, 24000 կգ գունավոր մետաղ: Կուսակցության մարզկոմի կոչով նրանք ֆաշիստական լծից ազատագրված իրենց քույրերին և եղբայրներին ուղարկել են 106000 ռ. դրամ, 6425 տնային իրեր, գյուղատնտեսական բազմաթիվ գործիքներ, 675 գլուխ խոշոր եղջերավոր անասուն ու խոզ⁶⁹: Անասնաբուծության բնագավառում աշխատելու համար մշտական աշխատանքի մեկնեց 1800 կոմերիտական: Մարզի կոմերիտականներն ու պիոներ-

ները տանկային շարասյուներ և մարտական ինքնաթիռներ կառուցելու համար ՊՖ մուծեցին 3 մլն ռ., որի համար մարզային կոմերիտկազմակերպությունն արժանացավ գերագույն գլխավոր հրամանատարության գրավոր շնորհակալությանը: Մարզի կոմերիտականները ծակատայիններին ուղարկեցին 21782 տ ծանրոց, 13914 կտոր տաք շոր: Կոմերիտականները շեֆության վերցրին Ղարաբաղ տեղափոխված հոսպիտալների նկատմամբ, որոնց համար հանգանակեցին 40000 ռ. և մոտ 1700 կտոր գիրք⁹⁰:

Պատերազմի տարիներին նվիրված են աշխատել մարզային կուսակցական և պետական մարմինները: Այդ ժամանակ մարզկոմը ղեկավարում էր Եղիշե Գրիգորյանը, որն ամբողջովին նվիրված էր հայրենի երկրամասի բարգավաճմանը: Մարզկոմի և մարզխորհրդի գործկոմի համատեղ նիստերում քննարկվում էին զանազան հարցեր, և ընդունվում վճռական որոշումներ: Հրդեհից փրկված ԼՂՀ պետական արխիվի փաստաթղթերից երևում է, որ մարզկոմի և մարզգործկոմի ուշադրությունից չի վրիպվել որևէ կարևոր հարց, և ընդունված որոշումները գործնական էին, օգնող ու նպաստող: Մարզում հրատապ հարց էր դարձել ջրային ռեսուրսները մեծացնելու խնդիրը: 1943 թ. փետրվարի 1-ի համատեղ նիստում քննարկելով այդ հարցը որոշվում է առանց ուշացնելու կարգավորել մարզի տարածքում գտնվող քյարիիզները և վերանորոգումներն ավարտել մինչև նույն տարվա հուլիսի սկիզբը⁹¹: Այդ նույն ամսվա 15-ին քննարկելով բնակարանային հարցը որոշվում է մինչև ապրիլի 1-ը նորոգել քաղաքների և շրջակենտրոնների բնակելի պետական տները: Ստեղծվում է շտաբ, որի վրա է դրվում ողջ պատասխանատվությունը: Այդ նույն նիստում նաև որոշվում է մարզում անցկացնել ծառատունկ՝ պտղատու և դեկորատիվ: Որոշվում է տնկել 18 հազար ծառ, հիմնադրել 40 հա խաղողենու այգի և հիվանդություններից բուժել 100 հա այգի: Այդ աշխատանքները ղեկավարելու համար նույնպես ստեղծվում է մարզային շտաբ⁹²: Նույն թվականի մարտի 5-ի նիստում քննարկելով մարզում ճանապարհաշինարարության հարցը որոշվում է այդ նպատակով ծախսել 1257121 ռ.: Մինևույն ժամանակ որոշվում է գումար հատկացնել և ավարտել Սեփանակերտի դրամատիկական թատրոնի շենքի շինարարությունը⁹³: Հետաքրքիր է ապրիլի 4-ին տեղի ունեցած նիստը: Այդ նիստում քննարկվում է մարզում եղած ջրաղացների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու հարցը: Ըստ այդ արձանագրության՝ մարզում գտնվող 270 ջրաղացներն օրական աղում էին 930 ց հացահատիկ: Մարզի կոլտնտեսություններին պատկանող 256 ջրաղացներից 1942 թ. 42-ը չէին աշխատել, իսկ 25-ը աշխատել էին 15-90 օր: Արդյունքում օգտագործվում էր մարզի ջրա-

ղացների հզորության միայն 44.7%-ը: Հանձնարարվեց մարզի կոլտնտեսությունների նախագահներին բոլոր ջրաղացների աշխատանքները կարգավորել ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում և պատժել նրանց, ովքեր դրան խոչընդոտ կհանդիսանան⁹⁴:

Մարզում բանջարեղենի արտադրությունը միշտ էլ գտնվել է ետին պլանի վրա: Մարզկոմի և մարզխորհրդի գործկոմի համատեղ նիստը, 1943 թ. մայիսի 5-ին քննարկելով այդ հարցը, որոշում է այն զարգացնելու համար 5 օրվա ընթացքում հատկացնել 310 հա տարածություն և տալ անհատ մշակողներին⁹⁵:

Կարևոր էր մանկամսուրների հարցը: Այդ նույն նիստում քննարկելով այդ հարցը՝ որոշվում է կոլտնտեսություններում բացել սեզոնային 390 մսուր՝ 2730 երեխայի ընդգրկումով, ստեղծել ժամանակավոր 195 մանկական հրապարակ 3900 երեխայի ընդգրկումով, բացել 50 մանկապարտեզ 1250 տեղով⁹⁶:

Մարզային կուսակցական և պետական մարմինների ուշադրության կենտրոնում էր կարմիրբանակայինների ընտանիքներին աշխատանքով ապահովելու հարցը: Մարզգործկոմի և մարզկոմի համատեղ նիստերից մեկում ստեղծվում է հանձնաժողով, որը երկու շաբաթվա ընթացքում պետք է ստուգեր կարմիրբանակայինների ընտանիքների վիճակը: Որոշվել էր յուրաքանչյուր ամսում նորոգել 3-5 կարմիրբանակայինի տուն, իսկ կարիքավոր ընտանիքներին տրամադրել 200 զույգ մանկական կոշիկ, 100 զույգ կանացի կոշիկ, 5000 տրիկոտաժե արտադրանք, 5000 պատրաստի արտադրանք, 3 տ չոր պտուղ, 3 տոննա աղ, 100 երեխայի համար Շուշիում կազմակերպել մանկական ճամբար⁹⁷:

Մարզային կուսակցական և պետական մարմինները հատուկ ուշադրություն էին դարձնում մարզի բնակչության ռազմական ուսուցումը կազմակերպելու հարցին: Օրինակ 1943 թ. մայիսի 31-ին մարզկոմի և մարզգործկոմի համատեղ նիստը, քննարկելով այդ հարցը, հանձնարարում է ձեռնամարտերի խմբակներում ընդգրկել 5000 հոգի⁹⁸: Նույն թվականի սեպտեմբերի երկրորդ կեսին տեղի ունեցած նիստում հատուկ քննարկվում է էվակուացված ընտանիքների ապրելապայմաններին վերաբերող հարցը և հանձնարարվում հոկտեմբերի 1-ի դրությամբ ստուգել էվակուացված ընտանիքների վիճակն ու բնակարան չունեցող ընտանիքներին բավարարել բնակարաններով, նորոգման ենթակա բնակարաններն անհապաղ նորոգել, նրանց օգնել տնային իրերով, մինչև հոկտեմբերի 15-ը բոլոր ընտանիքներին ապահովել վառելափայտով, տեղավորել աշխատանք չունեցողներին, էվակուացվածների երեխաներին բաժանել 600 զույգ մանկական կոշիկ, 100 տրիկոտաժե արտադրանք, 50 պատրաստի արտադրանք և այլն⁹⁹: Քանի որ մարզում կային

բավական թվով որք երեխաներ, որոշվում է նախ որբերի համար բաց թողնել կոշիկ և հագուստ, հետո բոլորին տեղավորել Շուշիի որբանոցներում: Նաև որոշվում է 6-17 տարեկան բոլոր դպրոցահասակ երեխաներին ընդգրկել դպրոցներում¹⁰⁹:

Ընդհանրացնելով՝ ասենք, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչությունը պատերազմի տարիներին ՊՖ է մուծել 42 մլն ռ., ռազմաճակատ ուղարկել 48000 անձնական և կոլեկտիվ ծանրոցներ, մոտ 8000 կտոր տաք հագուստ, 7620 լ օղի և սպիրտ, Կարմիր բանակի ֆոնդ է մուծել շուրջ 2.7 կգ ոսկի, 32 կգ արծաթ, հավաքել ու պետության է հանձնել ավելի քան 473 տ սև և 24 տ գունավոր մետաղ, մեծ թվով անասուններ, այլ մթերքներ, մասնակցել փոխառությանը և այլն:

Պատերազմի տարիներին կառուցվել են 14 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք հիմնականում արտադրանք էին տալիս ռազմաճակատի համար: Պատերազմի վերջում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները տալիս էին 9%—ով ավելի արտադրանք, քան 1940 թ.: Մարզի ցանքատարածություններն ընդլայնվել էին և հասել 85.7 հազար հա—ի, ինչը 6000 հա—ով գերազանցել է նախապատերազմյան մակարդակը: Նույն ժամանակաշրջանում մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացել է 42, իսկ մանր եղջերավորներից 25%—ով: Ասենք նաև, որ 1945 թ. մարզում բացվել են 6 նոր միջնակարգ դպրոցներ, և 1944/45 ուսումնական տարում պետությունը մարզի ժողովրդական կրթության համար հատկացրել է 23900000 ռ.¹⁰¹:

Այսպիսով՝ արցախահայությունը, որը խորհրդային իշխանության դաժան վճռով կտրվեց մայր Հայաստանից և հանձնվեց թուրք իշխանությանը, այդուհանդերձ, պատերազմի տարիներին ցուցաբերեց իր բարձր մարդկային հատկությունները և նկատելի դեր խաղաց մեծ հաղթանակի նվաճման գործում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ՇԵՊԱՏԵՐԱԾՍՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1946-1985 ԹԹ.)

1. Արդյունաբերության հետագա զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը

Մեծ Հայրենականը հաղթանակով ավարտվելուց հետո երկրի առաջ կանգնած ամենակարևոր խնդիրը տնտեսության վերականգնումն էր: Նախահեղափոխական Լեռնային Ղարաբաղում գոյություն ունեցած մի քանի տասնյակ փոքր ձեռնարկությունների հիմքի վրա 1920—1930—ական թթ. երկրամասում ստեղծվել էր սոցիալիստական արդյունաբերություն: Նախկին Վարարակնին հանքենդին, «փոխարինած» Ստեփանակերտը և Շուշին աստիճանաբար փոխում էին իրենց դեմքը, որով հետև խորհրդային տարիներին առաջին արդյունաբերական ձեռնարկությունները ծնունդ էին առել հենց այդ քաղաքներում: Հետպատերազմյան շրջանում դրված էր ոչ միայն ձեռնարկությունների արտադրողականությունը լրիվ վերականգնելու, այլև նորերը կառուցելու հարցը:

Լեռնային Ղարաբաղի տարածքը հարուստ է զանազան հանքային պաշարներով: Խորհրդային իշխանության տարիներին մասամբ ուսումնասիրվել էին մարզի հանքային հարստությունները: Մարտակերտի շրջանի Մեհմանա, Կուսապատ, Դրմբոն, Գյուլաթաղ, Ջանյաթաղ գյուղերի շրջաններում հայտնաբերվել էին պղինձ, ցինկ և մի շարք պոլիմետալային հանքատեղեր: Քարածուխ է հայտնաբերվել Վանք և Մաղավուզ գյուղերի մոտ: Գանձասարի, Ղազանչիի և Տոնաշենի մերձակայքում հայտնաբերվել են երկաթի, քարածխի, բարիտի հանքատեղեր: Բարիտի հանքատեղ է հայտնաբերվել նաև Կուսապատի մոտերքում: Հաղրուքի շրջանի Ցոր գյուղի մոտ հայտնաբերվել է երկաթ: Հանքատեղեր են հայտնաբերվել Տունիի մոտերքում: Այդտեղ հայտնաբերվել է նաև իսլանդական շպատ: Հովանդական շպատ է հայտնաբերվել Մար-

տունու շրջանի Սարգսաշեն, Կաղարծի, Գաղրուծի շրջանի Տող գյուղերի շրջանում: Գայտնաբերվել է նաև լիտոգրաֆիական քար: Մարմարի հանքեր կան Սոս, Գարավ և Քոսանի գյուղերի շրջաններում: Ցեմենտի կավաքար է հայտնաբերվել Ասկերանի և Մաղաթաշեն գյուղի շրջակայքում: Ստեփանակերտի շրջանի Փահլուր, Մարտակերտի շրջանի Սեհմանա և Ահանաձոր գետերի հովտում հայտնաբերվել են կավի և ճեմապակու հանքատեղեր: Լիսագորի, Քուլատակի և Զարդարաշենի մոտերքում գտնվող հանքային ջրերից կարելի է օրական 20–25 հազար լիտր հանքային ջուր ստանալ¹:

Մարզի առաջնեկը և ամենախոշոր ձեռնարկությունը համարվում էր Ղարմետաքսարդյունաբերական կոմբինատը: 1945 թ. հուլիսի 8–ին Ստեփանակերտում տեղի ունեցած կոմբինատի ստախանովականների հավաքը կոչ արեց բոլոր աշխատավորներին՝ աշխատել «անսահման նվիրվածությամբ»²: Իսկ 1946 թ. հուլիսի 14–ին տեղի ունեցած ստախանովականների նոր հավաքը շեշտեց, որ մետաքսագործական ֆաբրիկաները չորրորդ հնգամյակի առաջին տարվա կեսի պլանը կատարել են 114,2%–ով: Նրանք խոստացան հնգամյակի առաջին տարվա պլանը գերակատարել ժամկետից շուտ³:

Ղատերագմից հետո առաջին տարվա կարևորագույն իրադարձություններից էր Մատաղիսի եացունը, որը տեղի ունեցավ 1945 թ. օգոստոսի 15–ին: Դեկի շինարարությունը սկսվել էր նախապատերազմյան տարիներին «Ղարաքյոփի» (Սև կամուրջ) տեղամասում, Մատաղիս գյուղի մոտ, Թարթառ գետի վրա: Էլեկտրակայանն էներգիա էր մատակարարում թուրքաբնակ Միրբաշիի, Բարդայի, Աղդամի շրջաններին, մասամբ էլ Մարտակերտի շրջանի որոշ բնակավայրերի: Մատաղիսում կառուցվել էին շինարարական կոմբինատ և մի շարք այլ ձեռնարկություններ: Ենթադրվում էր հետագայում Մատաղիսի հիդրոկայանի էներգիայի օգնությամբ կառուցել Մարսանգի հիդրոկայանը:

Մարզում հաստատուն քայլեր էին կատարում նաև արդյունաբերական մյուս ձեռնարկությունները: Այն ժամանակ մարզխորհրդի նախագահ Ե. Ս. Ակոպովի մի հողվածից իմանում ենք, որ մարզի մետաքսագործները, հավատարիմ լինելով իրենց խոստմանը, 1946 թ. պլան–առաջադրանքները կատարել են դեկտեմբերի 2–ին ու պլանից դուրս երկրին տվել 2,2 մլն ռ. արտադրանք: Գիծու տրեստը տարեկան պլանը կատարել էր 102%–ով, իսկ տեղական արդյունաբերության վարչությունը՝ 100,1%–ով⁴: Ընդհանուր առմամբ, մարզի արդյունաբերական ձեռնարկությունները 4–րդ հնգամյա պլանի առաջին տարվա առաջադրանքները կատարել են դեկտեմբերի 20–ի դրությամբ⁵:

Խոշոր միավորում էր մարզի տեղական արդյունաբերությունը, որի մեջ մտնում էր 51 ձեռնարկություն: Ղարաղյունաբերության մեջ մտնում էր 79, Ղարզինտրեստի մեջ՝ 4, Ղարմետաքսարդյունաբերության մեջ՝ 7 ձեռնարկություն: Մարզի բոլոր շրջաններում գործում էին շրջանային արդյունաբերական և սննդի կոմբինատներ: Առանձին խորհուրդ ուներ բնության գրկում գտնվող Մատաղիսի եկը, որտեղ արդեն կառուցել էին 13 ձեռնարկություն կահույքի, լուցկու, ֆաներայի ֆաբրիկաներ. համամիութենական նշանակություն ուներ կաուչուկի գործարանը: Մինչ այդ մարզի 22 գյուղերում կառուցվել էին փոքր էլեկտրակայաններ⁶:

1948 թ. համարվում էր հետպատերազմյան հնգամյակի վճռական տարի: Հնգամյա պլանով նախատեսվում էր 1948 թ. արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակետից գերազանցել 1940 թ. մակարդակը: Մետաքսարդյունաբերության թիվ 4–րդ ֆաբրիկայի առաջավոր բանվորուհիներից Արաքսյա Բաբայանը կոչ էր անում հնգամյակը կատարել 2–3 տարում: Ֆաբրիկայի բանվորուհիները, մտնելով սոցիալիստական մրցության մեջ, հնգամյակի երրորդ տարվա պլանը կատարեցին 1948 թ. հոկտեմբերի 14–ին: Խնձրիստանի մետաքսագործների այս քայլը վարակեց մետաքսարդյունաբերության մյուս ձեռնարկությունների աշխատավորներին: Բացի տարեկան պլանները գերակատարելուց, մարզի մետաքսագործները պայքարում էին աշխատանքի արտադրողականությունը ֆաբրիկաներում բարձրացնել մոտ 14%–ով⁷:

Մարզի մետաքսագործների շրջանում լայնորեն ծավալված մրցության արդյունքում ճյուղի բոլոր ձեռնարկությունները ժամկետից շուտ ավարտեցին հնգամյա պլանը և զգալի արտադրանք տվեցին հաջորդ հնգամյակի հաշվին: Մետաքսագործներ Սիրան Բաբայանը, Մաշինկա Գրիգորյանը և Վարդանուշ Բեգլարյանը 3,5–4 տարում կատարել էին իրենց հնգամյա պլանը: Ղարմետաքսարդյունաբերության տնօրեն Ա. Խոջակի հաղորդումից իմանում ենք, որ Ղարմետաքսարդյունաբերության ձեռնարկությունները չորրորդ հնգամյա պլանի առաջադրանքները կատարել էին 1950 թ. սեպտեմբերի 10–ի դրությամբ: Քարինտակի մետաքսուլորման ֆաբրիկայի ոլորդները հնգամյակի վերջին տարվա պլանը կատարել էին 7 ամսում և տվել 20 տ արտապլանային արտադրանք: Տնտեսվել է 30500 կգ բոժոժ: Մի շարք բանվորուհիներ իրենց տարեկան պլանները կատարել էին 3 տարի 7 ամսում: Կազմակերպվել էին ստախանովականների կարճատև դասընթացներ, որին մասնակցել էր 134 հոգի: Սկսվել էր 100 դազգահ ունեցող գործվածքային ֆաբրիկայի շինարարությունը, և ենթադրվում էր մինչև տարեվերջ պլանից դուրս տալ 2000 կգ մետաքս⁸:

Ժամանակի մամուլը հաղորդել է, որ չորրորդ հնգամյակի տարիներին հաջողությունների էին հասել նաև մարզի մյուս արդյունաբերական ձեռնարկությունները: «Սովետական Ղարաբաղ» թերթը հաղորդել է, որ Ստեփանակերտի փայտամշակման ֆաբրիկան 1948 թ. պլանը կատարել է 120.2%-ով և տվել է 75000 ռ. գերպլանային արտադրանք: Իսկ Ստեփանակերտի մետաղաձուլական արտադրամասը 1948 թ. պլանը կատարել է 250%-ով, Ասկերանի գինու-օղու գործարանը 115.7%-ով, Կարմիր շուկայի գինու գործարանը՝ 128.4%-ով¹⁰:

Կուսակցության մարզկոմի 13-րդ կոնֆերանսն ընդհանրացրեց, որ մարզի արդյունաբերությունը 1946 թ. պլանը կատարել է 104.5, 1947-ինը՝ 108.2%-ով, իսկ 1948 թ. մինչպատերազմյան մակարդակը գերազանցել է 45%-ով¹⁰: Արդեն 1950 թ., հնգամյակի վերջին տարում 1947 թ. համեմատությամբ մարզի արդյունաբերությունը աճել էր 39,1%-ով, պլանից դուրս տրվել էր 13.376 կգ մետաքսե հումք, 9440 կգ ոլորած մետաքս և 20800 մետր գործվածք: Միայն վերջին երեք տարում տնտեսվել էր 52 տ բոժոժ: Ղարմետաքսը, իր հնգամյա պլանը կատարելով 1950 թ. սեպտեմբերի 10-ին, մինչև տարեվերջ պլանից դուրս տվել է 14 տ մետաքսե հումք, 40000 մետր գործվածք և 26 տ ոլորած մետաքս, ընդամենը՝ 6.280000 ռ. արտադրանք¹¹:

1951 թ. մայիսի 11-12-ը տեղի ունեցած կուսակցության մարզկոմի 14-րդ կոնֆերանսը նշեց, որ մարզում արդյունաբերության համախառն արտադրանքի թողարկման պլանը 1950 թ. կատարվել է 109.8%-ով¹²:

Հնգամյակի տարիներին լայնորեն օգտագործվում էր էլեկտրաէներգիան: Օրինակ Մարտակերտի շրջանի 56 կուտնտեսություններից 31-ը էլեկտրիֆիկացվել էին: Էլեկտրական էներգիայով աշխատում էր 11 կուտնտեսային ռադիոհանգույց, հարյուրավոր ռադիոընդունիչներ, 4 կինոսարքավորում: Հանրապետական թերթը հաղորդել է, որ հաջողություններն ավելի շոշափելի կլինեն, եթե մասնագետների խիստ կարիք չունենային¹³:

Նշենք, որ 1950-ական թթ. Լեռնային Ղարաբաղի արդյունաբերության մեջ որևէ հրաշք տեղի չի ունեցել: Այն զարգանում էր իր հունով, առանց ակնկալիքների: Բայց և այնպես զարգանում էր, որովհետև այլ կերպ լինել չէր կարող: ԼՂԻՄ-ը մտնում էր ԽՍՀՄ կազմի մեջ և ենթարկվում էր նրա պլանային տնտեսությանը: Այդ նշանակում է, որ հնգամյակով նախատեսվածը պետք է կատարվեր: Չենք կարող համաձայնվել նրանց հետ, ովքեր իրենց հողվածներում կան աշխատություններում պնդում են, թե իբր Ադրբեջանի իշխանությունների մեղքով Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը միշտ անկում է ապրել: Կրկնում ենք, ԼՂԻՄ տնտեսությունը սոցիալիստական էր, ենթարկվում էր սոցիալիզմի ընդ-

հանուր օրենքներին և զարգանում էր պլանային սկզբունքով: Որ մարզի տնտեսությունը ճիշտ չէր պլանավորվում, և նրա զարգացումն ամուր հիմքի վրա չէր դրված, դա ուրիշ հարց է: Դե հիմա փորձիր հնգամյա պլանը չկատարել: Ինչպե՞ս կարող էիր: Ասվածից հետևում է, որ որևէ հեղինակներ, փոխանակ հարցերը հանգամանորեն դիտարկելու և Ադրբեջանի իշխանության ազգայնամուլ քաղաքականությունը մերկացնելու, անհիմն հայտարարություններ են անում: Որ 50-ական թթ. տարեկան 5000 տ խաղող արտադրող Լեռնային Ղարաբաղը արդեն 1980-ական թթ. կեսին արտադրում էր 160 հազ., տոննա և մարզի բյուջեն ծածկում սեփական միջոցներով, մի՞թե սա արցախցու փայլուն հաղթանակ չէր:

Հինգերորդ հնգամյակում մարզում հիմնականը մնում էր էլեկտրաէներգիայի, մետաքսի, գինու և կոնյակի, սղոցանյութերի, կրի, կոմիսի, կահույքի, կենդանական յուղի արտադրությունը: Նշենք, որ իր տեսակամիով մարզի արդյունաբերությունը դեռևս շեշտակիորեն չէր բարձացել 1913 թ. մակարդակից:

5-րդ հնգամյակում ևս առաջին տեղում էին մետաքսարդյունաբերությունը և խմիչքների արտադրությունը: Հնգամյակի սկզբից լայն թափ էր ստացել սոցիալիստական մրցությունը: Օրինակ՝ 966 մետաքսագործ բանվորուհիներ ժամկետից շուտ կատարել էին հնգամյա պլանը, և 1940 թ. համեմատությամբ մեկ բանվորի աշխատանքի արտադրողականությունը բարձրացրել է 24,4%-ով, իսկ 1945 թ. համեմատությամբ համախառն արտադրանքի թողարկումը 1950 թ. կազմել էր 173.8%¹⁴: 1952 թ. հունվարին տեղի ունեցած մարզի ստախանովականների հավաքը խոստացավ հինգերորդ հնգամյա պլանը ավարտել ժամանակից բավականին շուտ: Մետաքսարդյունաբերության տնօրեն Ա. Խոջակի զեկուցումից երևում է, որ մետաքսագործները 1951 թ. պլանը կատարել էին 23 օր շուտ՝ տալով 6 մլն 675 հազար ռուբլու գերպլանային արտադրանք: Նաև մշվեց, որ կոմբինատի ֆաբրիկաները տնտեսել են 2 մլն ռ. հումք, աշխատանքի արտադրողականությունը բարձրացրել են 108%-ով: Ֆաբրիկաները տնտեսված հումքի հաշվին լրացուցիչ տվել են 4932 կգ արտադրանք: Մարզի մետաքսագործների շարքում ստախանովականների թիվը հասնում էր 700-ի:

Արմատավորելով երկու ձեռքով աշխատելու նոր մեթոդը՝ ստախանովական մետաքսագործներ Մ. Ջհանգիրյանը, Շ. Գրիգորյանը, Լ. Մինասյանը, Մ. Գալստյանը և ուրիշներ զգալիորեն բարձրացրել էին աշխատանքի արտադրողականությունը և ավելացրել հումքի տնտեսումը: Կոմբինատի աշխատավորները պարտավորվեցին տարվա պլանը կատարել մինչև դեկտեմբերի 27-ը¹⁵, իսկ ստախանովականների մարզա-

ին հավաքը, դիմելով ճյուղի 7 ֆաբրիկաների աշխատավորներին, կոչ արեց 1952 թ. պլանը ժամկետից շուտ ավարտել և տալ պլանից դուրս ավելի քան 2 մլն ռ. արտադրանք¹⁶: Կոմբինատի աշխատողները կատարեցին իրենց խոստումը. մետաքսարդյունաբերության նոր տնօրեն Ա. Պողոսյանի հաղորդումից իմանում ենք, որ հնգամյակի տարիներին ճյուղը պետությանը պլանից դուրս տվել է 16,5 մլն ռ. արտադրանք¹⁷:

Հնգամյա պլանը գերակատարել էին նաև Ղարաբաղի տեղաբնակյա արդյունաբերությունը: Ավարտվել էին Մատաղիսի և Մարտակերտ-Աղդամ-Ստեփանակերտ էլեկտրագծի կառուցման աշխատանքները, անց էր կացվում Եվլախ-Աղդամ-Ստեփանակերտ էլեկտրագիծը¹⁸: 1956 թ. հունվարին տեղի ունեցած Ադրբեջանի կոմկուսի 21-րդ համագումարում արտասանած իր ճառում ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Ե. Գրիգորյանը հայտարարեց, որ մարզը կատարել է հնգամյա պլանը: Դա ուրախալի էր:

Հետպատերազմյան գրեթե բոլոր տարիներին չի կատարվել կապիտալ շինարարությունների պլանը: 1955 թ. այն կատարվել է 71%-ով: Ամեն տարի հարյուրավոր բնակարաններ, մշակույթի օջախներ և արտադրական օբյեկտներ մնում էին չկառուցված: Այդ առթիվ մարզկոմի առաջին քարտուղար Ե. Գրիգորյանը վերոհիշյալ ելույթում շեշտեց, որ հանրապետության քաղաքային և գյուղական շինարարության նախարարությունը մարզին շատ վատ է օգնում շինանյութերով: Եվ չնայած մարզի ղեկավարությունը բազմիցս առաջարկություններ է մտցրել մարզի քարահանքերը մեքենայացնելու, աղյուսի արտադրություն կազմակերպելու, փայտամշակման ֆաբրիկա կառուցելու համար, սակայն ոչ մի դրական պատասխան չի ստացվել պաշտոնական Բաքվից: Պարզվում է, որ հանրապետության կոմկուսի Կենտկոմը, նախարարների խորհուրդը, մյուս ղեկավար մարմիններն աչքաթող էին անում Ղարաբաղի հետ կապված կենսական շատ հարցեր¹⁹:

Ե. Գրիգորյանը նույն ոգով ելույթ ունեցավ նաև 1958 թ. փետրվարին տեղի ունեցած Ադրկոմկուսի 22-րդ համագումարում: Նա շեշտեց, որ անցած տարում կապիտալ շինարարության պլանը հազիվ կատարվել է 74%-ով, որովհետև շինարարության նախարարությունը Լեռնային Ղարաբաղին: «միանգամայն անբավարար է մատակարարում անտառանյութ, ցեմենտ, ծածկաթիթեղ և այլ շինանյութեր: Կառույցները տրանսպորտով վատ են ապահովված»: Մարզկոմի առաջին քարտուղարը համարձակորեն նշեց, որ «մարզի օգտակար հանածոների հանքավայրերի մշակման և արդյունաբերական յուրացման, անտառանյութերի հայթայթման, մեքենայացման, կոլտնտեսությունների էլեկտրիֆիկացման շահերը հրամայաբար պահանջում են ԼՂԻՄ-ի էներգետիկ բազայի ամ-

րապնդում: Վաղուց հասունացել է մեխանիկական նորոգման գործարանի կառուցման հարցը և այլն»²⁰: Ամշուշտ, այդ ելույթը Ե. Գրիգորյանի վրա էժան չպետք է նստեր: Եվ պատահական չէր, որ շուտով նա ազատվեց մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից:

1950-ական թթ. երկրորդ կեսին մարզի արդյունաբերության մեջ նոր աշխուժացում էր նկատվում: Օրինակ՝ մարզի արդյունաբերությունը 1956 թ. պլանը կատարել է 108.6%-ով և տվել 18 մլն ռ. գերարտադրանք: Ղարմետաքսում շահագործման էին հանձնվել 50 նոր դազգահներ, որի հետևանքով մետաքսուղորման արտադրանքն ավելացել էր 112, իսկ գործվածքային արտադրանքը՝ 121%-ով: Ղարձյալ չէր կատարվել կապիտալ շինարարության պլանը, թերակատարվել էր 5.6 մլն ռ., որից 1 մլն 450 հազարը բնակարանային շինարարության գծով: Նախատեսվել էր 1957 թ. Ստեփանակերտում և Շուշիում կատարել 15 մլն ռ. կապիտալ շինարարական աշխատանքներ, ըստ որում Ստեփանակերտում կառուցել կահույքի ֆաբրիկա, 33-սենյականոց բնակելի տուն և ռադիոկետերի թիվը ավելացնել 3500-ով: Մարզգործկոմի նախագահ Ռ. Շահրամանյանը իր մի հոդվածում նշել է, որ խորհրդային իշխանության տարիներին մարզում արդյունաբերական արտադրանքն ավելացել է 76 անգամ²¹: Հավատա՞լ:

Ա. Ջաքարյանն իր «Լեռնային Ղարաբաղի մետաքսարդյունաբերությունը սովետական իշխանության տարիներին» ուսումնասիրության մեջ ընթերցողին հանդուժում էր, որ խորհրդային իշխանության տարիներին Ղարմետաքսկոմբինատի արտադրողական կարողությունը 1950-ական թթ. վերջին երկու անգամ ավելին էր, քան տալիս էին նախահեղափոխական Ղարաբաղի 46 ֆաբրիկաները միասին վերցրած: Եթե մետաքսկարծական թասի տարեկան արտադրանքը 1913 թ. կազմել է 76 կգ, ապա 1957-ին այն հասել էր 440 կգ-ի, ուղորման իլիկի արագությունը մի րոպեում 3-5 հազար պտույտից հասել էր մինչև 15 հազարի: Մետաքսաթելի թողարկումը 1957-ին 1940-ի համեմատությամբ ավելացել էր 1.2 անգամ, ուղորած թելինը՝ 3.5, իսկ գործվածքինը՝ ավելի քան 13 անգամ: Կոմբինատը 1957-ին թողարկել է մոտ 7.5 մլն ռ. արտադրանք: Աշխատավորներից 1150-ը պարգևատրվել են մեդալներով, շքանշաններով, կրծքանշաններով: Հեղինակը, ելնելով կոմբինատի արտադրանքի ծավալի մեծացումից, հարց էր դնում արհեստական մետաքսաթելի հաշվին բարձրացնել արտադրության ծավալը: Այսպիսով առաջարկվում էր արհեստական թելի օգտագործումը և դրա ընդլայնումը դարձնել կոմբինատի գլխավոր նպատակներից մեկը: Այդ հեռանկարային առաջարկությունը լայն արձագանք գտավ մետաքսագործների շրջանում:

50-ական թթ. երկրորդ կեսին ավելի տեսանելի դարձավ մարզի արդյունաբերության մյուս ճյուղերի զարգացումը և: Այսպես՝ 1957 թ. մարզի արդյունաբերական արտադրանքի պլանը գերակատարվել էր 105%-ով, ըստ որում Ղարմետաքսկոմբինատը՝ 108, Մարտակերտի մեխանտառկետը՝ 113, մարզգյուղարդը՝ 95, հացի գործարանը՝ 103, տեղարդյունաբերությունը՝ 102, քաղսննդկոմբինատը՝ 108, մարզարհմիության արտելները՝ 108, էլեկտրակայանների փնջային միավորումը՝ 127, Մատաղիսի էլեկտրակայանը՝ 110, մարզսպառկոոպի ձեռնարկությունները՝ 92, մարզային ձուլարանը՝ 121%-ով: Տարեկան պլանից դուրս թողարկվել էին 1062 կգ մետաքսի հումք, 63.277 մետր մետաքսե գործվածք, 2408 դեկալիտր գինի, 274 ց կենդանական յուղ, 176 տ հացաբուլկեղեն և այլն²²:

1959 թ. երկիրը սկսեց յոթնամյա պլանի կատարումը: Յոթնամյա պլանով նախատեսված էր 1965 թ. մարզում արտադրել 860 հազար դեկալիտր գինի, 500 հազար տուփ պահածո, Ստեփանակերտում կառուցել 3.1 մլն ռ. արժողությամբ կաթի վերամշակման գործարան, կահույքի թողարկումն ավելացնել 2, մահճակալներինը՝ 2.5, կաշվե կոշիկեղենինը՝ մոտ 10 անգամ: Նախատեսված էր հացահատիկի համախառն արտադրանքի աճը ապահովել 1.7 անգամ: Բանջարի բերքատվությունը պետք է բարձրացվեր 35%-ով, ծխախոտի համախառն բերքը՝ 30%-ով, կարտոֆիլինը՝ 90, բանջարեղենինը՝ 36, բոժոժինը՝ 30%-ով: Նախատեսվեց յոթնամյակի տարիներին հիմնադրել 10000 հա խաղողի այգի: Խաղողի արտադրությունը նախատեսված էր 1965 թ. հասցնել 40 հազար տոննայի՝ 1957-ի 9330 տոննայի դիմաց, իսկ պտուղներինը՝ 4930 տոննայի:

Յոթնամյակի տարիներին կարևոր ուշադրություն պետք է դարձվեր նաև անասնապահության զարգացմանը: 1965 թ. մսի արտադրությունը պետք է ավելանար 2, կաթինը՝ 2.5 անգամ, բրդինը՝ 84%-ով: Յոթնամյակի վերջին տարում կովերի գլխաքանակը կուլտնտեսություններում պետք է ավելանար 7200-ով, խոզերինը՝ 4 հազարով, մանր եղջերավոր անասուններինը՝ 80 հազար գլխով:

Նախատեսվեց յոթնամյակի տարիներին Ստեփանակերտում կառուցել 1000-համարանոց ավտոմատ հեռախոսակայան: Մարզում կինոսարքերի, ակումբների և գրադարանների թիվը պետք է ավելանար 79-ով և 1965-ին հասներ 322-ի: Հիվանդանոցներում մահճակալների թիվը պետք է ավելանար 220 տեղով: Նախատեսված էր ապրանքաշրջանառության աճը ապահովել 50%-ով:

Մարզում կապիտալ ներդրումները պետք է հասնեին 250.7 մլն ռ., որից 105 միլիոնը՝ արդյունաբերության մեջ: Նախատեսված էր կառուցել խաղողի սկզբնական վերամշակման 5 գործարան, Ստեփանակեր-

տեսական մթերքների տարեկան միջին համախառն արտադրանքը աճել և հասել է 79 միլիարդ ռուբլու, որը 12.7 միլիարդ ռուբլով ավելին էր, քան նախորդ 5 տարում²²:

1971 թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ ԼՂ մարզկոմի 25-րդ կոնֆերանսը, որտեղ հաշվետվությամբ հանդես գալով առաջին քարտուղար Գ. Մելքունյանը վերլուծեց հաշվետու ժամանակաշրջանում մարզում ձեռք բերված հաջողությունները, նաև խոսք բացեց մի շարք ձեռնարկությունների (ամենից առաջ սննդի) մասին, որոնք հետ էին մնում հնգամյակի առաջադրանքները կատարելուց: Անթույլատրելի էր, երբ հնգամյակի տարիներին չէին յուրացվել 11.8 միլիոն ռուբլու կապիտալ ներդրումներ: Կոնֆերանսի ընդունած բանաձևը պարտավորեցնում էր մարզի կուսակցական, պետական և հասարակական մարմիններին թուր հնարավորություններն օգտագործել և 9-րդ հնգամյա պլանի կատարումը սկսել պատրաստ և ավարտել հաղթանակով:

Արթրեջանում տեղի էին ունենում քաղաքական տեղաշարժեր: Անվտանգության կոմիտեի նախագահ Հեյդար Ալիևը, դառնալով հանրապետության կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, որպես Ադրբեջանում ընդունված կարգ, իր շուրջը պետք է համախմբեր իր ազգակիցներին: Այս առումով նրա համար ո՞վ էր Գուրգեն Մելքունյանը: 1973 թ. աշնանը Գուրգեն Մելքունյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից, և մարզկոմի առաջին քարտուղար ուղարկվեց մինչ այդ Բաքվի Քիչլիի շրջանի շրջկոմի առաջին քարտուղար Բորիս Կևրկովը: Նա այդ պաշտոնում մնաց մինչև 1988 թ. փետրվարի 22-ը: Ամբողջ այդ ընթացքում այդ շառլատանը միայն նսեմացնում էր արցախահայությանը և անառարկելիորեն իրագործում Բաքվի կամքը: Վերջին տարիներին մարզկոմի նախկին քարտուղար Եղիշե Սարգսյանը և մարզկոմի նախկին աշխատող Վահան Հարությունյանը, հանդես գալով մարզային մամուլում, փորձել են Բ. Կևրկովին, այսպես ասած, վարկափրկել և մասնակիորեն արդարացնել: Անկասկած, Կևրկովը Լեռնային Ղարաբաղում որոշ աշխատանքներ է կատարել արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման գործում: Սակայն նրա այն քաղաքականությանը, որը տանում էր մարզը թուրքացնելու և արցախահայությանը թուրք-ազերիների առաջ նսեմացնելու համար, ոչ մի ներում չի կարող լինել: Լեռնային Ղարաբաղում նրա վարած կադրային քաղաքականությունը ոչ մի քննադատության չի դիմանում: Նրա քարտուղարության օրոք հարյուրավոր մասնագետներ և ընտանիքներ են հեռացել հայրենի օջախներից, իսկ դրա փոխարեն հազարավոր թուրք-ազերիներ են բնակություն հաստատել Լեռնային Ղարաբաղում:

Բոքիս Կևորկովը սիրում էր հաճախակի և ցուցադրաբար հանդես գալ հաշվետվություններով ու ռեզյումեներով քվերը: Նա, 1974 թ. փետրվարի 12-ին տեղի ունեցած ԼՂ մարզկոմի 26-րդ կոնֆերանսում հանդես գալով հաշվետվությամբ, վերլուծելով վերջին երեք տարում մարզի արդյունաբերության զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, նշեց, որ մարզի արդյունաբերությունը տեխնիկապես վերազինվել է, գիտատեխնիկական նվաճումներն արմատավորվել են, և ամրապնդվել է արտադրության կոմպլեքսային մեքենայացումը: Այս հայտարարությունները չափազանցված էին: Նա նաև հայտարարեց, թե արդյունաբերության բնագավառում աճի տեմպերը 10.3%-ի դիմաց կազմել են 71.1%, որը թերևս խիստ մեծացված է: Նա չթաքցրեց, որ 9-րդ հնգամյակի առաջին երեք տարում պլաններից պակաս է թողարկվել գրեթե 2 մլն ռ. արտադրանք: 1973 թ. վատ աշխատանքի հետևանքով չէին կատարվել արդյունաբերության «Բ» ճյուղի պլանները:

70-ական թթ. Լեռնային Ղարաբաղում աշխատանքները համեմատաբար հաջող էին ընթանում գյուղատնտեսության բնագավառում, մանավանդ խաղողագործության, հացահատիկային կուլտուրաների մշակման, անասնաբուծության և այլն: Օրինակ 9-րդ հնգամյակում գյուղատնտեսության համախառն արտադրանքի տարեկան արտադրությունն աճել էր 2.1%-ով: Կոնֆերանսում ընդունված բանաձևը պարտավորեցնում էր հնգամյակն ավարտել բարձր ցուցանիշներով¹³:

Բ. Կևորկովի քարտուղարության օրոք մարզում արմատավորվում էին քծնանքը և խաբեբայությունը, կեղծիքն ու երեսպաշտությունը: Դա ժառանգվել էր Ադրբեջանի իշխանություններից: Բացի դրանից, Կևորկովն իր համար ստեղծել էր կուռք և ամեն կերպ նպաստում էր արցախցիների աչքում Ալիևի դերի բարձրացմանը: Այդպիսի մի ցայտուն առիթ հանդիսացան 1979 թ. հունվարյան իրադարձությունները: Գոնվարի 12-ին շարք մտավ Ադդամ-Ատեփանակերտ երկաթուղագիծը: Շնորհավորելու համար Ատեփանակերտ էր ժամանել Զեյդար Ալիևը: Ըստ Բ. Կևորկովի բնորոշման Զեյդար Ալիևը հանդիսանում էր արցախահայության ամենաջերմ բարեկամը, հոգացող հայրը: Գոնվարի 13-ին Ստեփանակերտի Ս. Գորկու անվան դրամատիկական թատրոնում տեղի էր ունենում կուսակցության մարզկոմի 28-րդ կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում էր նաև Զեյդար Ալիևը: Որպես պատասխան Կևորկովի քծնանքի, ճառով հանդես գալով Ալիևը աչ ու ծախ կեղծում և խաբում էր: Տեսեք նրա արտահայտվելու ոճը. «Կոնֆերանսը տեղի է ունենում գաղափարաքաղաքական բարձր մակարդակով, վառ կերպով արտացոլում է ԼՂԻՄ-ում, ինչպես և մեր ամբողջ հանրապետությունում տիրող բարոյաքաղաքական ու գործարար ամբողջ իրադրությունը.

ցուցադրում է մարզային կուսակցական կազմակերպության, Լեռնային Ղարաբաղի բոլոր աշխատավորների միաձուլյ համախմբվածությունը մեր կուսակցության, նրա Կենտրոնական կոմիտեի, ընկեր Լ. Ի. Բրեժնևի գլխավորած Կենտկոմի քաղբյուրոյի շուրջը»: Ապա՝ «Վերջին տարիներին բարձրացել է կուսակցության մարզային կոմիտեի ամբողջ գործունեության մակարդակը, զգալիորեն շարժացել է մարզկոմի, շրջկոմների, ԼՂԻՄ բոլոր կուսակցական կազմակերպությունների աշխատանքի ոճը: Ռեժեղացել է ժողովրդական տնտեսության ղեկավարությունը, ամրապնդվել է կարգապահությունը, բարձրացել պահանջկոտությունը, կոմունիստների, ղեկավար կադրերի պատասխանատվության զգացումը»: Այդքան սուտը քիչ համարելով հանրապետության Կենտկոմի քարտուղարը չի կարողանում պահել իր սամձը. «Փոփոխություններ են տեղի ունեցել կուսակցական աշխատանքի այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են կադրերի ընտրությունը, տեղաբաշխումը և դաստիարակությունը: Զգալիորեն ուժեղացել է գաղափարական աշխատանքը»: Իսկ վերջում՝ «Վերջին տարիներին հանրապետության, այդ թվում Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի ձեռք բերած հաջողությունները գաղափարական աշխատանքի ուժեղացման, մեր կուսակցության լեհինյան ազգային իմաստուն քաղաքականության կենսագործման արդյունքն են...»¹⁴: Ահա քեզ Զեյդար:

Չարմանալի է, երբ մարզկոմի քարտուղարը ձգտում էր մարդկանց խաբել կեղծ քվերով: 1983 թ. հունիսի սկզբին հողվածով հանդես գալով հանրապետական «Կոմունիստ» թերթում (N130) կատարում է այսպիսի մի հայտարարություն. մարզի արդյունաբերությունը 1983 թ. 1923 թ. համեմատությամբ աճել է 912 անգամ: Մարզը կազմակերպվել է հենց այդ նույն թվականի կեսերին, և նոր էր սկսվել արտադրության կազմակերպումը: Ինչո՞ւ 1983 թ. մակարդակը չէր համեմատում 1913 թ. մակարդակի հետ, այլ համեմատում էր 1923 թ. հետ: Դա կլիներ ավելի գիտական և համոզիչ, այլ ոչ թե բացահայտ աչքակապություն:

Զետպատերազմյան տարիներին մարզի կյանքում կարևոր տեղ ունեին աշխատավորների պատգամավորների մարզային խորհուրդները: Խորհուրդները, լինելով ամենամասսայական պետական կազմակերպությունները, զբաղվում էին ժողովրդական զանգվածների ամենալայն հարցերով: 1945 թ. օգոստոսի 22-ին տեղի ունեցած մարզխորհրդի նստաշրջանը, քննարկելով տեղական խորհուրդների կազմակերպական-մասսայական աշխատանքը, հավաստիացրեց

մարզի բնակչությանը, որ «խաղաղ զարգացման ժամանակաշրջանում մարզի տեղական խորհուրդները փառքով կկատարեն իրենց առաջ դրված մեծագույն խնդիրները, ներկա պահանջների համապատասխան կվերակառուցվեն գյուղում տարվող կազմակերպական-մասսայական աշխատանքները»¹⁵: Կուսակցական կազմակերպությունները, հաստատելով իրենց մենիշխանությունը, կամա թե ակամա իրենց վրա էին վերցրել նաև տեղական խորհուրդների մի շարք ֆունկցիաներ: Խորհուրդները ճնշված և իրավագրկված էին: Այդ նույնը կատարվում էր նաև Լեռնային Ղարաբաղում: Բաքվից եկած մանկլավիկները, ամբողջ իշխանությունը կենտրոնացնելով իրենց ձեռքում, մարզային խորհուրդներին քշել էին մի անկյուն և նրանց կտրել ժողովրդական մասսաներից:

1946 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած մարզխորհրդի 9-րդ նստաշրջանում, որտեղ հաշվետվությամբ հանդես եկավ մարզխորհրդի նախագահ Ե. Ալոպովը, նշվեց, որ մարզում արդյունաբերական ապրանքների համախառն արտադրանքը կատարվել է 106%-ով, ըստ որում Ղարաբաղի արդյունաբերությունը՝ 114.4, Ղարաբնտրեստը՝ 110.3, տեղական արդյունաբերությունը՝ 101.3, հացի գործարանը՝ 135.9, տպարանը՝ 111.6, բոժոժի մթերումը՝ 107.5%-ով: Այդ պլանների գերակատարման գործում կարևոր դեր են ունեցել նաև տեղական խորհուրդները և արտադրության մեջ աշխատող պատգամավորները: Նստաշրջանում առանձնապես խոսվեց մարզում խաղողի այգիների տարածությունն ընդլայնելու մասին՝ 2741 հեկտարից հասցնել 3041 հեկտարի¹⁶:

Մարզի գյուղական խորհուրդների աշխատանքները վերակառուցման կարիք ունեին: Այն պետք էր մոտեցնել աշխատավոր մասսաներին: Նստաշրջանում նշվեց, որ այդ տեսակետից խրախուսելի աշխատանք են կատարում Մարտունու շրջանի Սխտորաշենի, Գիշիի, Բզղալայի, Ստեփանակերտի շրջանի Բալուջայի, Հաղրութի շրջանի Տողի, Տունիի և այլ գյուղական խորհուրդներ:

Մարզային խորհուրդների աշխատանքներում կարևոր դեր ուներ պետական պլանների կատարումը: Կազմակերպված մասսայական լայն աշխատանքի շնորհիվ մարզում օգոստոսի 12-ին կատարվել էր հացահատիկային կուլտուրաների 1947 թ. պետական պլանը, իսկ բոժոժի պլանը կատարվել էր 105%-ով: Մարզի դպրոցական բոլոր շենքերը ենթարկվել էին նորոգման, մթերվել էր վառելիքայտը, դպրոցների համար ձեռք էր բերվել որոշ իրեր և այլն: Մարզի տեղական խորհուրդներում գործող 434 մշտական հանձնաժողովների աշխատանքներին ներգրավվել էին երկու հազարից ավելի պատգամավորներ¹⁷:

Ղարաբաղի տեղական խորհուրդների ընտրությունները տեղի էին ունեցել ութ տարի առաջ՝ 1939 թ.: Այդ տարիներին մարզային խորհրդի գործկոմի, շրջանային և գյուղական խորհուրդների գործունեությունը հիմնականում կենտրոնացված է եղել մարզի մշակութային և տնտեսական շինարարության, պետական կարգի պահպանումն ամրապնդելու և երկրի պաշտպանությունն ուժեղացնելու վրա: Մարզգործկոմի նախագահի տեղակալ Ա. Մուսայելյանը, խոսելով մարզային խորհուրդների կատարած աշխատանքների մասին, նշել է, որ այդ տարիներին խորհուրդների օժանդակությամբ կառուցվել է Մատաղիսիէկը, Ստեփանակերտում հիվանդանոց, մարզային նոր հիվանդանոց՝ 200 մահճակալով, բնական կաուչուկի արտադրության փորձնական գործարանը, բժշկական ուսումնարանի շենքը և այլն: Շուշում կառուցվել են մետաքսակարծական ֆաբրիկայի նոր արտադրամաս, կաշեգործարան, կոշկեղենի և հագուստի անհատական պատվերների ֆաբրիկա, մեխանիկական սայլաշինության, փայտամշակման, կղմինդրի, աղյուսի, գինու, օղու, լուցկու արտադրամասեր, ալրադաց և այլն: Ստեփանակերտում կառուցվել են սոցկուլտուրայի տուն, միջնակարգ դպրոցի շենք, անտառտնտեսության տուն, ճանապարհաշինարարության բաժնի տուն, Ղարաբնտրեստի տուն: Ավարտվել է 400 կիլովատտանոց ջերմաէլեկտրակայանի կառուցումը: Ընդհանուր առմամբ, 1947 թ. տեղական արդյունաբերության արտադրանքն ավելացել էր 3.4 անգամ, արհեստակցական կոոպերացիայինը 28.8 անգամ¹⁸:

Մարզը նախապատրաստվում էր անցկացնել տեղական խորհուրդների ընտրություններ: Նախատեսված էր ընտրել 1800 ժողովրդական պատգամավոր: Խորհուրդների ընտրությունները տեղի ունեցան 1948 թ. հունվարին: Ընտրվեց 1700 պատգամավոր: Մարզի նորընտիր խորհուրդներում քննարկվում էին տնտեսությանը, կենցաղին, մշակութային, սոցիալական խնդիրներին վերաբերող հարցեր: 1950 թ. ապրիլի սկզբին մարզխորհրդի գործկոմը, քննարկելով Մարտակերտի շրջանի Մաղավուզի և Ստեփանակերտի շրջանի Խանաբաղի գյուղխորհուրդների նախագահների զեկուցումները մարզխորհրդի 8-րդ նստաշրջանի «Մարզի գյուղի վիճակի և նրանց բարեկարգման միջոցառումների մասին» որոշման կենսագործման ուղղությամբ իրենց կատարած աշխատանքների մասին, նշեց, որ չնայած շինարարության բնագավառում երկու գյուղերում էլ հասել են որոշ հաջողությունների, այնուամենայնիվ, այդ գյուղերի գյուղխորհուրդների գործունեության մեջ կան լուրջ թերություններ, մանավանդ Խանաբաղում: Մարզգործկոմը նպատակահարմար գտավ լրջորեն զբաղվել մարզի գյուղերի բարեկարգման հարցերով¹⁹:

խորհուրդների աշխատանքներում կարևոր տեղ ունեն սոցիալիստական մրցության կազմակերպման և ղեկավարման գործը: Մարգարիտի հրահանգչուհի Փնջիկ Ահարոնյանը, այդ առթիվ հանդես գալով մամուլում, կոչ էր անում գյուղական խորհուրդներին հմտորեն գլխավորել կոլտնտեսային արտադրությունը, իսկ դա պետք է հանդիսանա խորհուրդների սոցիալիստական մրցության կարևոր կետերից մեկը: Մամուլը հաղորդել է, որ հմտորեն են աշխատում Գյուլնե ճարտարի, Շեխերի, Չլդրանի, Ն. Գոռաթաղի, Գին Թաղերի, Փիրջամալի և այլ գյուղական խորհուրդներ: Կոչ է արվում, որ ոչ մի գյուղխորհուրդ դուրս չմնա սոցիալիստական մրցությունից:

Տեղական խորհուրդների հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 1950 թ. դեկտեմբերի 24-ին: Թեկնածուներ առաջադրվեցին արտադրության առաջավորներ, գիտության և մշակույթի ներկայացուցիչներ, ուսուցիչներ, բժիշկներ և այլն: Ընտրվեցին մարզային մեկ, քաղաքային երկու և գյուղական 84 խորհուրդներ: Ընտրություններին մասնակցեց 72.667 հոգի²⁰, որը կազմել է ընտրողների թվի 99.98%-ը: Խորհրդային պատմության մեջ մինչև 1980-ական թթ. վերջը այսպես կեղծվել են ընտրությունների արդյունքները: Դա տեղի էր ունեցել ոչ միայն տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ, այլև Գերագույն խորհրդի, միայն թե աշխարհին խաբեին խորհրդային երկրի ժողովուրդների միասնությունով և, որպես դրա լավագույն ապացույց, բերում էին խորհուրդների ընտրությունների արդյունքները:

1952 թ. հունվարին տեղի ունեցած ԼՂ մարզային խորհրդի չորրորդ նստաշրջանը քննարկեց գյուղական խորհուրդների կազմակերպական-մասսայական աշխատանքների վիճակը և նրա բարելավման միջոցառումների մասին հարցը: Ձեկուցումով հանդես եկավ մարգարիտիցի նախագահի տեղակալ Ռ. Շահրամանյանը: Թե զեկուցողը և թե ելույթ ունեցողները բացահայտեցին մի շարք թերություններ և դրանք վերացնելու համար նշեցին ուղիներ:

Մարգարիտիցի հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 1953 թ. մարտի 15-ին, որն ուղիղ նախորդի կրկնությունն էր: Մարգարիտիցի սիստեմատիկ հետևում էր գյուղական խորհուրդների աշխատանքներին և ձգտում նրանցում տեղ գտած թերությունները վերացնել ու նրանց գործունեության մեջ նոր թարմություն մտցնել: 1954 թ. հունվարին տեղի ունեցած մարգարիտիցի 5-րդ նստաշրջանը, քննարկելով «Գյուղական խորհուրդների աշխատանքի դրվածքի և նրա բարելավման միջոցառումների մասին» հարցը, ընդունեց որոշում, որում մի շարք միջոցառումներ էին առաջարկվում գյուղական խորհուրդների աշխատանքները անհրաժեշտ բարձրության վրա դնելու համար: Գյուղական խոր-

հուրդների դերի և հեղինակության բարձրացման հարցին անդրադարձավ «Սովետական Դարաբաղ» թերթը 1954 թ. մայիսի 27-ի համարում, որտեղ շեշտվեց, որ գյուղատնտեսության զարգացման հարցում կարևոր դեր ունեն գյուղական խորհուրդները: Օրինակ է բերվում, որ Մարտակերտի շրջանի Թալիշի գյուղական խորհրդի աջակցությամբ անրապնդվել են կոլտնտեսության կազմակերպատնտեսական աշխատանքները, և բարձրացվել աշխատանքային կարգապահությունը²¹:

Մարզի տեղական խորհուրդներում բավականին թվով պատգամավոր կանայք կային: Օրինակ Ստեփանակերտի շրջանի խորհուրդների անդամներից 162-ը կին էին: Կին պատգամավորները արտադրության առաջավորներ էին, մշակույթի և սոցիալական բնագավառի ներկայացուցիչներ: Միայն Դարմետաքսարդյունաբերության համակարգում աշխատող 2200 կանանցից 1500-ը արտադրության առաջավորներ էին, որոնցից 10-ից ավելին խորհուրդների պատգամավորներ: Ա. Ալավերդյանը, Փ. Աբրահամյանը, Ա. Դադայանը աշխատում էին երեքական դագահի վրա և օրվա առաջադրանքները կատարում 115-130%-ով²²: 1955 թ. մարտի 6-ին տեղի ունեցած խորհուրդների ընտրությունների ժամանակ 611 կին ընտրվել էր խորհուրդների պատգամավորներ:

1957 թ. մարտին տեղի ունեցած խորհուրդների ընտրություններից հետո ապրիլի 6-ին, տեղի ունեցած ԼՂԽ խորհուրդների 6-րդ գումարման մարզային խորհրդի առաջին նստաշրջանում մարգարիտիցի նախագահ վերընտրվեց Ռ. Շահրամանյանը: Նա լավ գիտեր իր գործը, նվիրված էր և սկզբունքային, մտահոգված էր մարզի վերելքով: Մարզի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հարցերը մարգարիտիցի ուշադրության կենտրոնում էին: Մարգարիտիցի ուշադրությունից չէին վրիպում նաև լուսավորության, առողջապահության, սոցիալական մյուս բնագավառների հարցերը²³:

ԼՂԽ մարգարիտիցի, 1957 թ. հունիսին իր նստաշրջանում լսելով գյուղական բնակչության բուժապասարկման վիճակի հարցը, արձանագրեց, որ ներկայումս մարզի հիվանդանոցներում գտնվող 825 մահճակալից 365-ը գտնվում են գյուղական վայրերում, իսկ բժշկական 810 միջին աշխատողներից 494-ը աշխատում են գյուղերում²⁴: Մարգարիտիցի նստաշրջանը որոշում ընդունեց գյուղական այն վայրերում, որտեղ բուժկետեր չկան, դրանք բացել, ընդայնել գյուղական հիվանդանոցների թիվն ու տեղերը:

Տեղական խորհուրդների կյանքում կարևոր տեղ ունեին խորհուրդների մշտական հանձնաժողովները: Մարզի խորհուրդների 369 մշտական հանձնաժողովներում ընդգրկված էր 1638 պատգամավոր, 341-ով ավելի, քան անցած ընտրությունների ժամանակ էր: Օրինակելի աշխա-

տանըներ էին կատարում Մարտակերտի շրջանի Լենինավանի գյուղապան խորհրդի մշտական հանձնաժողովները: Նրանցից հետո էլին մնում Ստեփանակերտի շրջանի Նախիջևանիկի և Խանաբադի գյուղական խորհուրդների հանձնաժողովները²⁵:

Յուրաքանչյուր հնգամյա պլանի ընդունման և իրագործման մեջ վճռական դեր ունեին խորհուրդները: Խորհուրդները, հետամուտ լինելով պլանների կատարմանը, իրենց միատերում հաճախակի էին քննարկում դրա հետ կապված այս կամ այն հարցը և ընդունում որոշումներ: 1961 թ. մարտի 19-ին տեղի ունեցած մարզային խորհուրդների ընտնություններից հետո մարզխորհրդի նախագահ Ռ. Շահրամանյանը իր հաշվետու զեկուցման մեջ հարց դրեց ուժեղացնել մշտական հանձնաժողովների աշխատանքները, նրանցում ընդգրկել ավելի մեծ թվով ոչ պատգամավորներ: Այդ ժամանակ մարզում գործում էին 344 մշտական հանձնաժողովներ, որոնց աշխատանքներին մասնակցում էին 2000-ից ավելի արտադրության առաջավորներ: Վերոհիշյալ միատուն նաև մշվեց, որ իրենց արդարացում են տեղական խորհուրդներին կից ստեղծված արտահաստիքային բաժիններն ու հրահանգիչները, ինչպես և Ստեփանակերտի քաղաքային ու շրջանային խորհուրդների գործկոմներին առընթեր արտահաստիքային առևտրական բաժինները, որոնցում ընդգրկված էր 50 մարդ²⁶:

Ինչպես մշվել է, պլանների քննարկման և ընդունման հարցը միշտ էլ գտնվել է տեղական խորհուրդների ուշադրության կենտրոնում: 1962 թ. հունվարին տեղի ունեցած մարզխորհրդի 8-րդ գումարման չորրորդ նստաշրջանը, քննարկելով 1962 թ. ժողովրդական տնտեսության զարգացման պլանը, նախ վերլուծեց նախորդ տարվա պլանի կատարումը, ապա՝ անդրադարձավ 1962 թ. պլանի կատարման հնարավորությունների հարցին: Արդյունքում ընդունվեց պլանը, առաջարկվեց այն գերակատարել մի քանի միլիոն ռուբլու արտադրանքով: Միշտ էլ մարզխորհրդի միատերում քննարկվել է մարզում գրեթե ոչ մի տարի չկատարվող կապիտալ շինարարությունների հարցը²⁷:

Տարեցտարի ավելանում էր տեղական խորհուրդների անդամների թիվը: Այսպես՝ 1963 թ. մարտի 17-ին տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ մարզային խորհրդի անդամ ընտրվեց 119, քաղաքային խորհրդի՝ 122, շրջանային խորհուրդների՝ 240, գյուղական խորհուրդների՝ 1899 և ավանային խորհուրդների՝ 126 պատգամավոր²⁸:

Ստալինի մահից հետո, երբ իշխանության եկավ Ն. Խրուշչովը, որոշ չափով ընդլայնվեցին տեղական խորհուրդների իրավունքները: Նույնիսկ տեղական խորհուրդներն ունեին արտահաստիքային բաժիններ:

Մարզի չորս շրջանային և երկու քաղաքային խորհուրդներում կար կազմակերպչական հինգ, առևտրի և հասարակական սննդի՝ վեց, աշխատավորների դիմումների և բողոքների քննարկման վեց և առողջապահական արտահաստիքային մեկ բաժին, որոնցում հասարակական հիմունքներով աշխատում էր 108 մարդ: Արտահաստիքային բաժինների վարիչները հաստատվում էին համապատասխան խորհրդի նստաշրջանում, իսկ հրահանգիչները՝ գործկոմի միատերում: Այդ բաժինները կարժ ժամանակամիջոցում դարձել էին շրջանային և քաղաքային խորհուրդների գործկոմների համար հենարաններ²⁹:

1963 թ. ապրիլին տեղի ունեցած մարզխորհրդի 9-րդ գումարման առաջին նստաշրջանը մարզգործկոմի նախագահ ընտրեց Մուշեղ Օհանջանյանին: Նա գործունյա անձնավորություն էր, և մարզկոմի առաջին քարտուղար Գուրգեն Մելքունյանի հետ ավելի շատ մտահոգված էին մարզի կյանքով: Մ. Օհանջանյանն իր մի հոգվածում առաջարկում էր հատուկ ուշադրություն դարձնել խորհուրդների նստաշրջանների հրավիրման նախապատրաստմանը, սիստեմատիկ կազմակերպել խորհուրդների գործկոմների նախագահների և քարտուղարների խորհրդակցություններ, բարձրացնել պատգամավորների ակտիվությունը: Նա առաջարկում էր խորհուրդներին բնակչության հետ իրենց կապերն ամրապնդել նախ և առաջ կենցաղային սպասարկման կետեր բացելով և մշակույթի օջախների գործունեությունն ակտիվացնելով³⁰:

Գյուղական խորհուրդները շատ քիչ էին զբաղվում կենցաղային հարցերով, ինչն էլ, բնականաբար, արժանանում է խիստ քննադատության: Նախատեսված էր 8-րդ հնգամյակում կենցաղային սպասարկման աշխատանքների ծավալը մեծացնել մոտ 2,5 անգամ, այդ թվում՝ գյուղական վայրերում ավելի քան 3 անգամ: Մարզի ավելի քան 150 գյուղերում գործում էին կենցաղային սպասարկման օբյեկտներ, կային արհեստանոցներ, կոշիկների նորոգման, կարի կետեր, տարբեր տեսակի տաղավարներ և այլն: Ժամանակի մամուլը և գործկոմները մշում էին, որ տասնյակ գյուղերում լավ է կազմակերպվում բնակչության կենցաղային ապահովումը: Սակայն տասնյակ գյուղերում էլ մոռացության էին տրվել բնակչության կենցաղային հարցերը (Ջանյաթաղ, Մեծ Շեն, Կարմիր գյուղ, Նախիջևանիկ և այլն)³¹:

Մարզի գյուղական և ավանային խորհուրդների աշխատանքներում տեղ գտած բացերն ու թերությունները վերացնելու համար 1967 թ. սեպտեմբերին տեղի ունեցած մարզխորհրդի նստաշրջանը, քննարկելով այդ հարցը, պահանջեց խորհուրդներից՝ ճիշտ կատարել իրենց պետական պարտականությունները, ակտիվորեն մասնակցել տնտեսական և

մշակութային շինարարությանը, ապահովել պետական պլանների կատարումը և խորհուրդների պատգամավորներ ընտրել ավելի կարգապահ ու աշխատանքին նվիրված մարդկանց:

1967 թ. մարտին տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրության ժամանակ պատգամավոր էր ընտրվել 2047 հոգի, որոնք բարեխղճորեն աշխատում էին մարզի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Գովասանքի արժանի աշխատանք էին կատարում ճարտարի գյուղխորհուրդը, Մարտակերտի շրջխորհրդի նախագահ Ա. Խաչատրյանը, Էդիլուի գյուղխորհրդի նախագահ Վ. Նավասարդյանը, Նոր Շենի գյուղխորհրդի նախագահ Լ. Գասպարյանը, Չայլուի գյուղխորհրդի նախագահ Ե. Վանյանը և ուրիշներ³²:

1967 թ. հոկտեմբերի 18-ին Լեռնային Ղարաբաղին հանձնվեց Լեռնի շքանշան: Դրանում իր ավանդն ունեին մարզի տեղական խորհուրդները և արտադրության մեջ աշխատող 2000-ից ավելի տեղական խորհուրդների պատգամավորները: Այդ ձեռնարկություններից էր Ղարաբաղի տաքսկոմբինատը: Արդյունաբերական այդ հսկան ավտոմատ հաստոցներով, ժամանակակից այլ սարքավորումներով հագեցված ձեռնարկություն էր, որտեղ աշխատում էին 3 հազար բանվոր և ծառայողներ: Գայտնի էին նաև էլեկտրատեխնիկական գործարանը, կահույքի և կարի նոր ֆաբրիկաները: Մարզի գյուղատնտեսությունը հագեցված էր հարյուրավոր տրակտորներով, կոմբայներով, ավտոմեքենաներով և այլ տեխնիկայով³³: Այդ ամենում իրենց ներդրումն են ունեցել մարզի խորհուրդների հարյուրավոր պատգամավորներ:

Մասսաների հետ կապի լավագույն միջոց էին բնակչության նամակներն ու բողոքները: Տեղական խորհուրդների վերադաս իշխանությունները տարեկան ստանում էին մի քանի հազար նամակ ու բողոք: 1968 թ. մայիսի 28-ին ԼԴԽՄ 11-րդ գումարման մարզային խորհրդի 5-րդ նստաշրջանը, քննարկելով մարզի խորհրդային մարմիններում, ձեռնարկություններում, կազմակերպություններում և հիմնարկություններում աշխատավորների նամակների, զանգատների և դիմումների քննարկման վիճակի, ինչպես և մարզային կոմունալ տնտեսության բարեկարգման հարցերը, պարզում է, որ այդ բնագավառներում կային շատ լուրջ թերություններ: Եթե 5 տարի առաջ մարզագործկոմը ստացել էր 1277 դիմում, ապա 1968-ին այն իջել էր 736-ի: Այդ դիմումներում շատ հարցեր էին բարձրացվում, որոնք քննարկման և լուծման կարիք ունեին³⁴:

Տեղական խորհուրդների հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 1968 թ. մարտի 16-ին: Ընտրվեց 2586 պատգամավոր, որոնց մեծամասնությունը արտադրության առաջավորներ էին: Մարզխորհրդի նախագահ Ս. Օհանջանյանը, հանդես գալով մամուլում, նշում է, որ տարեց-

տարի փոխվում են գյուղերի և ավանների տեսքը, շահագործման են հանձնվում դպրոցական նոր շենքեր, մշակույթի օջախներ: Ավարտվելու վրա էին Նորագյուղի, Աշանի, Քոչքեկի վերակառուցումը: Գյուղերում, ավաններում և քաղաքներում կառուցվել էին անհատական բազմաթիվ տներ, կենցաղի մեջ էին մտել հեռուստացույցը, սառնարանը, բարձրորակ կահույքը և այլ կենցաղային իրեր: Տասնյակ կիլոմետր ճանապարհներ են կառուցել Տուճի, Էդիլու, Մեծ Թաղեր, Չլղրան, Խաչմաչ, Սոս, Աշան և այլ գյուղերի կուլտնտեսությունները: Մեծ թափ էր առել պատերազմում զոհվածների հուշարձանների շինարարությունը: Այդպիսի հուշարձաններ կանգնեցրին մարզի բոլոր գյուղերում: Իսկ այդ ամենում իրենց տեղն ունեին խորհուրդներն ու նրանց պատգամավորները:

1971 թ. հունիսին տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ մարզային 1, շրջանային 5, քաղաքային 2, գյուղական 72 և ավանային 6 խորհուրդների կազմում ընտրվեց 2592 պատգամավոր. նրանց թիվը գերազանցում էր նախորդ ընտրությունների ժամանակ ընտրվածների թվին: Ավելացել էին նաև մշտական հանձնաժողովները և հասել 543-ի, որոնցում ընդգրկված էր 1934 պատգամավոր³⁵:

Քրոսի Կևորկովը, դառնալով մարզկոմի առաջին քարտուղար, ձեռնամուխ եղավ իր շուրջը հյուսիս-հնագանը, կամակատար մարդկանց համախմբելուն: Նրան հարկավոր էր նաև մարզխորհրդի նոր նախագահ: Նա հասավ այն բանին, որ 1973 թ. հունիսի 17-ին տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ մարզային խորհրդի պատգամավոր ընտրվեց ոմն Արամայիս Ասլանով, որը և ընտրվեց մարզխորհրդի նախագահ: Նա, չինելով Կևորկովի համախոհը, չէր կարող առանց նրա հետ համաձայնեցնելու որևէ քայլ կատարել: Նա Արցախ- Ղարաբաղը թուրքացնելու Կևորկովի քաղաքականությունը լավ էր սերտել և ամեն կերպ արագացնում էր այդ գործընթացը:

1973 թ. մարտ ամսին մարզխորհրդի գործկոմը որոշում էր ընդունել մարզում սկսել բարձր կուլտուրայի և հասարակական կարգ ու կանոն հաստատելու շարժումը: Արձագանքելով այդ որոշմանը դիմումով հանդես եկավ Մարտակերտի շրջանի Սեյտուլանի գյուղական խորհուրդը, որը լայն պաշտպանություն գտավ մարզում: Քաղաքային և շրջանային խորհուրդների գործկոմները, ամփոփելով շարժումը, 13 ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների շնորհեցին բարձր կուլտուրայի և հասարակական կարգ ու կանոնի կուլեկտիվի կողմն³⁶:

1975 թ. գարնանն ավարտվել էր Ստեփանակերտի օդանավակայանի շինարարությունը: Այստեղ պիտի վայրէջք կատարեին «Յակ-40» ինքնաթիռներ: Նույն թվականի օգոստոսի 6-ը ժողովրդական տոն էր: Այդ օրը առաջին ուղերթն էր կատարվում դեպի Երևան: Առաջին ուղևոր-

Ների հետ Երևան մեկնեց Ստեփանակերտի պատվիրակությունը: Ժամանակի մամուլը գրել է. «Հարյուրավոր երևանցիներ դրոշներով ու տրանսպարանտներով դիմավորելու էին եկել... Բուռն ծափահարությունների, զինվորական նվագախմբի խրոխտ հնչյունների ուղեկցությամբ պատվիրակության անդամներին, մյուս ուղևորներին թարմ ծաղիկներ են նվիրվում: Ձեռքասեղմումները, գրկախառնություններն ու ուրախ բացականչություններն ալիքվում են Հայաստանի մայրաքաղաքի հնագույն օդանավակայանում»:

— Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում բոլոր նրանց,— իր ելույթում ասաց Երևանի քաղխորհրդի նախագահ Մ. Մուրադյանը,— ովքեր ջանքեր են ներդրել Երևան—Ստեփանակերտ, Ստեփանակերտ—Երևան օդային կամուրջ ստեղծելու գործում: Կամուրջ, որը կոչվում է երկու քաղաքների միջև, մեր երկու եղբայրական հանրապետությունների միջև տնտեսական, գիտական ու կուլտուրական կապերն ամրապնդելու, ցեմենտավորելու համար: Մենք ուրախ ենք, որ այս հանդիսավոր օրը մեզ մոտ է ժամանել Ստեփանակերտի պատվիրակությունը՝ քաղխորհրդի գործկոմի նախագահ Գ. Ավանեսյանի գլխավորությամբ:

— Հարգելի ընկերներ,— ասաց Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Գ. Ավանեսյանը,— թանկագին երևանցիներ, թույլ տվեք առաջին ուղևորների, Ստեփանակերտ քաղաքի և ամբողջ Լեռնային Ղարաբաղի աշխատավորների անումից ջերմորեն ողջունել ձեզ, ի դեմս ձեզ Երևանի և Հայաստանի բոլոր աշխատողներին, մաղթել քաջառողջություն և դարաբաղյան երկարակեցություն³⁷:

Ստեփանակերտ—Երևան, Երևան—Ստեփանակերտ օդային այդ կամուրջը մեծագույն դեր է խաղացել մանավանդ արցախյան ազատագրական պայքարի տարիներին:

Մարզային, շրջանային, գյուղական և ավանային խորհուրդների միատերում քննարկվում էին հարցեր, որոնք կապված էին արտադրության այս կամ այն լայն խնդիրների հետ: Օրինակ 1976 թ. ապրիլի 26—ին տեղի ունեցած մարզխորհրդի 15—րդ գումարման ԼՂԻՄ մարզային խորհրդի 5—րդ նստաշրջանում, ինչպես նշվել է, քննարկելով «Մարզում խաղողագործության վիճակի և նրա հետագա զարգացման միջոցառումների մասին» հարցը, զեկուցումով հանդես եկավ մարզխորհրդի նախագահի առաջին տեղակալ Շմավոն Պետրոսյանը³⁸:

Մարզխորհուրդը հետևողական քայլեր էր ձեռնարկում բարձրացնելու տեղական խորհուրդների դերը: Մարզում գործող 73 գյուղական և 6 ավանային խորհուրդների շարքում հատուկ տեղ ունեւր Գիշիի գյուղական խորհուրդը, որի գլխավորությամբ գյուղում ստեղծվել էր ֆիզկուլ-

տուրայի 2 կոլեկտիվ՝ 266 հոգու ընդգրկումով: Գործում էին սպորտային 6 հրապարակներ: Մարտակերտի շրջանի Լեռնիմավանում բնակվում էր 4861 հոգի: Այնտեղ կար հիվանդանոց, 2 միջնակարգ և 2 ութամյա դպրոցներ՝ 1000 սովորողով, մշակույթի 5 տուն, 5 գրադարան, 15 խանութ, 3 ճաշարան, ավտոմատ հեռախոսակայան՝ 600 համարով³⁹:

Մարզային խորհուրդներին մտահոգում էր անասնաբուծության զարգացման հարցը: 1979 թ. հուլիսին տեղի ունեցած մարզխորհրդի 16—րդ գումարման 10—րդ նստաշրջանը, քննարկելով մարզում անասնապահության հետագա զարգացման հարցը, որոշում է ընդունում կառուցել նոր խոզանոցներ, անասնապահական համալիրներ և այլն:

1980 թ. փետրվարին տեղի ունեցած մարզային խորհուրդների ընտրությունների ժամանակ ժողովրդական պատգամավոր էր ընտրվել 2812 հոգի: Այդ թիվը պահպանվեց նաև 1982 և 1985 թթ. տեղի ունեցած ընտրությունների ժամանակ:

Հետպատերազմյան տարիներին մարզի հասարակական—քաղաքական կյանքում որոշ դեր են խաղացել նաև կոմերիտական կազմակերպությունը, արհմիությունները, հասարակական մյուս կազմակերպությունները: Դեռևս Մեծ հայրենականի տարիներին փառավորված մարզի կոմերիտական կազմակերպությունը հետագայում ևս աչքի է ընկել իր նվիրվածությամբ: Ասենք, որ խոպանի յուրացման ժամանակ Լեռնային Ղարաբաղից աչքի էր ընկել 91 կոմերիտական: Ավելի քան 79 դարաբաղցի կոմերիտականներ արժանացել են կոմերիտիության մարզկոմի և շրջկոմների պատվոգրերի: 12 հոգի էլ ներկայացվել են ՀամԼԿԵՄ պատվոգրով պարգևատրվելու համար⁴⁰: 1982 թ. հունվարի 30—ին տեղի ունեցած ԼԿԵՄ ԼԳ մարզային կազմակերպության 33—րդ կոնֆերանսը հայտարարեց, թե մարզի կյանքում չկա որևէ անկյուն, որտեղ իրենց նվիրվածությամբ չաշխատեին կոմերիտականները, որոնց թիվը այդ ժամանակ հասնում էր 12 հազարի⁴¹:

Մարզի կյանքում առանձնահատուկ տեղ ունեին մանավանդ խորհուրդների պատգամավոր կանայք: Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորներ էին ընտրվել Լեռն Ղուլյանը, Լաուրա Կարապետյանը (Մարտակերտի շրջան), Արեգա Մանվելյանը (Ասկերանի շրջան), Լյուդմիլա Սահակյանը (Հաղթութի շրջան): Հազարավոր կանայք ընտրվել են տեղական խորհուրդների պատգամավորներ: Հասարակական կյանքի ինչ բնագավառ էլ որ վերցնելու լինենք՝ էկոնոմիկա, գիտություն, մշակույթ, ամենուրեք պատասխանատվությամբ էին աշ-

խատում կանայք: ԽՍՀՄ Պերագույն խորհրդի պատգամավոր Ս. Օրբելյանը մարզի հպարտությունն էր, Սոցիալիստական աշխատանքի հերոսներ Ք. Առաքելյանը, Գ. Մարինյանը և շատ ու շատ կանայք օրինակ էին ցույց տալիս մարզի կանանց: Մարզից 384 մայրերի շնորհիվ է «Յերոսուհի մայր» կոչում: Նրանք շրջապատված էին հոգատարությամբ⁴²:

Մարզի կենտրոն Ստեփանակերտի տարածությունը կազմում է 14 քառակուսի կիլոմետր: Հետպատերազմյան տարիներին քաղաքն իր թևերը փռել է և հասել մինչև Կարկառ: Բարձրացվել են արտադրական, մշակութային և կենցաղային տասնյակ նոր կառույցներ, բնակելի տներ, թաղամասեր: 1975 թ. հանդիսավորությամբ բացվեց Մեծ հայրենականում զոհված արցախցիների հուշահամալիրը: Մարզի 145,5 հազար բնակիչներից 57,5 հազարը բնակվում են Ստեփանակերտում⁴³:

4. Ադրբեջանի իշխանությունների քաղաքական անբարոյականությունը արցախահայության նկատմամբ

Անկախ նրանից, թե խորհրդային իշխանության տարիներին արցախցիներն ինչպիսի մեծագույն մաքառումներով ու նվիրվածությամբ էին հաղթահարում դժվարությունները և առաջ մղում երկրամասը, Ադրբեջանի թուրքական իշխանությունները նրանց նկատմամբ դրսևորում էին բացահայտ հակահայկական քաղաքականություն: Թուրք-ազերիների իշխանության այդ քաղաքական անբարոյականությունը և ազգայնամոլությունն արցախցիներին հարկադրեց բռունցք բարձրացնել և զնդանից դառնալ մուրճ: Արցախցին այլ ելք չուներ: Նրան հարկավոր էր գոյատևել: Նա «ատամն ընդ ատաման» և «ակն ընդ ական» կարգախոսներով պետք է պատասխաներ թուրքի հայատյացությանը:

Արդեն գիտենք, որ Ադրբեջանի իշխանությունները 1920-1930-ական թթ. սկսած վարում էին անբարո քաղաքականություն: Եվ եթե չլինեք արցախցիների նվիրվածությունն ու հավատարմությունը խորհրդային կարգերին, իսկ դա այդպես էր, ապա Արցախ-Ղարաբաղը վաղուց վերացված կլինեք ասպարեզից: Ավազակաբարո թուրքը արժանի է ատելության, ամենից առաջ այն բանի համար, որ միայն 1890-ական թթ. մինչև 1920-ական թթ. սկիզբը նրա ձեռքով սրախողխող է արվել ավելի քան 2 միլիոն 600 հազար հայ: Եվ ո՞ր ժողովուրդը նման ծանր չարիքը կարող է ներել:

Արցախ-Ղարաբաղը հայաթափելու թուրք-ազերիների քաղաքականությունը ավելի բացարձակ դարձավ 1930-ական թթ. և թե Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Թուրքը միշտ էլ մնացել է թուրք: Դեռևս

1933 թ. Բաքուն Մոսկվայի առջև հարց էր բարձրացրել, որ Սևանի ջուրը հասցնեն իրենց տափաստանները շատ լավ պատկերացնելով, որ Սևանն է Հայաստանին պահողը: Հետո էլ ասում են, թե թուրքը բան չի հասկանում: Դիմենք այլ փաստերի. Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի նիստը 1942 թ. հունվարի 22-ին (արձանագրություն N52), քննարկելով «Քաղաքի երիտասարդությանը հավաքագրելու և ֆզո ուղարկելու» հարցը, համաձայն մարզային գործադիր կոմիտեի և մարզային կուսակցական կոմիտեի բյուրոյի համատեղ նիստի որոշման, մինչև փետրվարի 1-ը պետք է հավաքագրվեք 40 հոգի 16-17 տարեկան տղաներ ու 17-18 տարեկան աղջիկներ և ուղարկել Բաքվի ֆզո (ֆարգործուսուցման դպրոց): Մարզի վերադաս իշխանությունների կողմից համաման պահանջ ուղարկվել էր նաև մարզի բոլոր շրջագործկոմներին:

Հետագա իրադարձությունները համոզում են, որ ատյորժակը ուտելու ժամանակ է բացվում: 1942 թ. փետրվարի 15-24-ը տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի և մարզկոմի բյուրոյի համատեղ նիստը, քննարկելով Ադրբեջանի նախարարների խորհրդի փետրվարի 10-ի թիվ 10 հեռագիրը, որը մարզի իշխանություններից պահանջում էր մինչև մարտի 1-ը Բաքվի 130-րդ ֆզո ուղարկել 16-18 տարեկան 150 տղաների և աղջիկների: Նիստը որոշում է կատարել Բաքվի պահանջը և իջեցված թիվը բաժանում է հետևյալ կերպ. Մարտակերտի շրջան 40, Մարտունու 30, Ստեփանակերտի 30, Հաղուրթի 25, Շուշիի 15 և Ստեփանակերտ քաղաք 10 հոգի: Քաղխորհրդին և շրջխորհուրդներին հանձնարարվում է ընտրել «Ֆիզիկապես առողջ տղաներ և աղջիկներ», նրանց ապահովել տաք հագուստներով, կոշիկներով, սպիտակեղենով և ճանապարհածախսով: Ըստ որում ծախսերի կատարումը դրվում էր ծնողների վրա, որոշ դեպքերում էլ ժողկրթբաժինների⁴⁴:

Այս անգամ ևս Բաքվի պահանջը կատարվել է ամառարկելիորեն: Չանցած չորս ամիս հուլիսի 1-ին, Ստեփանակերտում ստացվում է Ադրբեջանի նախարարների խորհրդի նոր թիվ 74 հեռագիրը, որը պահանջվում էր մինչև հուլիսի 10-ը Բաքվի երկաթուղայինների ֆզո ուղարկել 14-17 տարեկան 120 տղա և աղջիկ: Մարզային իշխանություններն այս անգամ այդ թիվը բաժանում են հետևյալ կերպ. Հաղուրթի շրջան 30, Մարտունու 30, Ստեփանակերտի 15, Մարտակերտի 30, Շուշիի 5 և Ստեփանակերտ քաղաք 10 հոգի: Նույն ձևով անպայման «Ֆիզիկապես առողջ տղաներ և աղջիկներ», և դարձյալ բոլոր ծախսերը պետք է հոգային ծնողները կամ ժողկրթբաժինները⁴⁵:

Մի փոքր անց Բաքվից մարզային իշխանություններին հասկացնում են, որ բանվորկան ուժի խիստ կարիք ունի նաև Շուշի քաղաքը, հետևապես պետք է նրան էլ օգնության հասնել: Եվ մարզային իշխանու-

բյուրերը որոշում են այնտեղ ուղարկել 75 երիտասարդների: Ընդունված որոշման մեջ զգուշացվում է, որ պահանջը չկատարող շրջադասի հուրդների ղեկավարները կենթարկվեն պատժի: Պատկերացրեք, թե պատերազմի այդ ծանր շրջանում դա ինչ էր նշանակում: 1942 թ. հուլիսի 27-ին Մարտունու շրջադասի հուրդը ստանում է մարզխորհրդի գործկոմի և մարզկոմի բյուրոյի հեռագիրը, ըստ որի Բաքվի ֆոնդերում սովորելու համար հանձնարարվում էր շրջանի գյուղերից հավաքագրել հիսուն 16-17 տարեկան տղաներ ու 17-18 տարեկան աղջիկներ և ուղարկել Բաքու ֆոնդ: Շրջադասի հուրդը նույն օրը գործկոմի նիստում քննարկում է հարցը և որոշում պարտավորեցնել բոլոր կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների գործկոմների նախագահներին Բաքվի ֆոնդ ուղարկվելիք երիտասարդներին ապահովել հազուստով, կոշիկներով և ճանապարհածախսով: Մարզային իշխանությունները նման հանձնարարություններ տվել էին նաև մյուս շրջադասի հուրդների և Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմներին:

Ահա մեր ձեռքի տակ է 1943 թ. հոկտեմբերի 16-25-ը տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի և մարզկոմի բյուրոյի համատեղ նիստի արձանագրությունը: Այս նիստում, քննարկելով նույն ամսի 20-ին Աղրբեջանի նախարարների խորհրդի հեռագիրը, որոշվում է 16-18 տարեկան 75 տղաների ու աղջիկների անհապաղ ուղարկել Բաքվի ֆոնդեր՝ որպես Աղրբեջանի ապագա բանվորական ուժ⁶:

Այսպիսով միայն 1942-1943 թթ. մոտավոր հաշվումներով Լեռնային Ղարաբաղից դուրս է բերվել 14-18 տարեկան առնվազն 800 երիտասարդ: Իսկ հետագայում: Երբ սկսվեցին Մինգեչաուրի և Սումգայիթի շինարարությունը, Լեռնային Ղարաբաղից հարյուրավոր երիտասարդներ և ընտանիքներ կենտրոնացված փոխադրվեցին այնտեղ՝ որպես բանվորական ուժ: Հետպատերազմյան այդ տարիներին Աղրբեջանը, Լեռնային Ղարաբաղում շարունակելով Նախիջևանում հայերի նկատմամբ իրագործած քաղաքականությունը, նորանոր հոծ խմբեր էին ուղարկում Բաքու և այլ կառույցներ: Արցախ աշխարհը պարզապես դատարկվում էր: Իսկ դրանից հրճվանք էր զգում Ադրբեյջանի Կենտկոմի առաջին քարտուղար, հայերի դահիժ Մ. Բաղիրովը: Արցախահայությունը արտաքսելուց բացի, հայերի սպանդ էին կազմակերպում նաև տեղերում:

1939 թ. Շուշիում բացվել էր երկամյա մանկավարժական ինստիտուտ: Ինստիտուտի առաջին տնօրեն Ջավադ Մախլյանի ռազմաճակատ մեկնելուց հետո նրան փոխարինեց պատմաբան, ճանաչված մանկավարժ Աղասի Սաֆարյանը (1941-1947 թթ.), որին սիրում և հարգում էին ինստիտուտի մանկավարժական կոլեկտիվը և ուսանողները⁷: 1946

տում կահույքի, կարի, կոշիկի ֆաբրիկաներ, աղյուսի և կրի գործարաններ, Մարտակերտում գաջի գործարան, ընդլայնել Շուշիի տրիկոտաժի արտադրությունը:

Պլանավորված էր յոթ տարում պետության միջոցներով կառուցել 90.5, իսկ պետության օգնությամբ՝ անհատական 32 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն: Ստեփանակերտում և Շուշիում պետք է գազաֆիկացվեր 3200 բնակարան, կառուցել կոյուղի: Հարց դրվեց Ստեփանակերտում կառուցել ավտոնորոգման, իսկ Ասկերանում ցեմենտի գործարաններ, ինչպես նաև կարկառի ջրանցքը²³:

Թե որքանով էր ԼՂԻՄ յոթնամյա պլանը իրատեսական, դրանում մարզի բնակչությունը համոզված չէր, մասնավորապես շինարարությունն ամեն տարի 30-40%-ով թերակատարվում էր: Ե. Գրիգորյանին փոխարինած մարզկոմի նոր քարտուղար Նիկոլայ Շահնազարովը, որը մինչ այդ Նախիջևանի ԻՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալն էր, վերլուծելով յոթնամյակի տարիներին մարզի բնակչության անելիքների հարցը, ընդգծեց, որ յոթ տարում մարզի ժողովրդական տնտեսության մեջ կներդրվի 250 մլն ռ. կապիտալ միջոցներ, որը երեք անգամ ավելին էր, քան նախորդ 7 տարում: Նա հայտարարեց, թե յոթնամյակի վերջում մարզը կունենա 27.200 կով, 40 հազար խոզ, 230 հազար ոչխար, մսի արտադրությունը կավելանա 2.5, կաթինը 2.1, ձվինը 3.5 անգամ, բրդինը 35%-ով, մարզում կկառուցվի 112 հազար քառակուսի մետր բնակատարածություն²⁴:

Լեռնային Ղարաբաղի արդյունաբերության մեջ վերջին 20 տարում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների մասին հանգամանորեն խոսվեց 1960 թ. ապրիլի վերջին ԼՂԻՄ մարզխորհրդի և մարզկոմի հանդիսավոր նիստում: Մարզկոմի առաջին քարտուղար Ն. Շահնազարովը հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղը դարձել է խոշոր, ինդուստրիալ մարզ: Նա նույնիսկ բարձրաձայնեց, թե «մինչեղափոխական Լեռնային Ղարաբաղը համարյա արդյունաբերություն չի ունեցել: Ներկայումս գործող խոշոր ձեռնարկությունները՝ Ղարմետաքսկոմբինատը, Ղարգինտրեստը, Մատաղիսիկը, կահույքի ֆաբրիկան, յուղարդկոմբինատը, տեղական արդյունաբերության ձեռնարկությունները ստեղծվել են խորհրդային իշխանության տարիներին: Այժմ մարզում հաշվվում են 38 խոշոր մեքենայացված արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցում աշխատող բանվորների և ծառայողների թիվը 1920 թ. համեմատությամբ աճել է հինգ անգամ: Մարզկոմի առաջին քարտուղարի բերած այդ թիվը ճիշտ լինել էր կարող, որովհետև 1920 թ. Արցախում փաստորեն չէր աշխատում որևէ արդյունաբերական ձեռնարկություն: Այդ դեպքում ի՞նչ բանվորների թվի մասին կարող է խոսք լինել:

Ասենք, որ խաղողագործության բնագավառում նկատվում էր առաջընթաց քայլ: Եթե կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները 1958 թ. տվել էին 8747 տ խաղող, ապա 1959-ին այն հասցվել է 13985 տ²⁵: խաղողի արտադրությունը մեծապես նպաստում էր մարզի արդյունաբերության զարգացմանը:

Ստորև բերվող աղյուսակում ցույց է տրված մարզի արդյունաբերության աճը 1940-1959 թթ.²⁶:

	1940	1959	Աճ
Էլեկտրաէներգիա (մլն կվտ ժամ)	1.51	11.2	7.4 անգամ
Մետաքսի հումք (տ)	93	115.4	1.2 անգամ
Մետաքսի խամ գործվածքներ (մլն մ)	0.12	2.3	19 անգամ
Խաղողի գինի (մլն դեկալիտր)	0.1	0.45	4.5 անգամ
Կոնյակ (հազար դեկալիտր)	1.1	8.7	8 անգամ
Սղոցանյութեր (հազար քառ. մ)	1.1	5.8	5.3 անգամ
Կիր (տ)	913	6300	6.9 անգամ
Կղմինդր (հազար հատ)	688	1.572	2.3 անգամ
Կահույք (մլն ռ.)	0.26	7.6	29.2 անգամ
Կենդանական յուղ (տ)	12.8	278	21.8 անգամ

Ինչպես շեշտվել է, երկրամասում արդյունաբերական առաջատար ճյուղ հանդիսացող մետաքսարդյունաբերությունից ետ չէր մնում գինեգործական արտադրությունը: Ղարգինտրեստը, խորհրդային տարիներին իր համար ստեղծելով հումքի սեփական բազա, արդեն 1959 թ. դրությամբ ուներ խաղողի ընդունման կետեր, սկզբնական գինեգործության գործարաններ՝ Մարտունու շրջանի Կարմիր շուկա ավանում և Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղում, երկու պետական տնտեսություններ՝ Մարտունու N1 և Ստեփանակերտի N2 պետտնտեսությունները, երկու գործարան Ստեփանակերտում և Բաքվում, որոնք պատրաստի արտադրանք էին թողարկում: Ղարգինտրեստն ամեն տարի թողարկում էր զանազան տեսակի 400-500 հազար դեկալիտր թունդացրած գինիներ և մինչև 10 հազար դեկալիտր կոնյակ: Տրեստի արտադրության ընդհանուր ծավալը 1959 թ. հասել էր 103 մլն ռ.:

Ղարգինտրեստի Ստեփանակերտի սննդի կոմբինատը զբաղվում էր մրգեղենի և հատապտուղների վերամշակմամբ: Ամեն տարի կոմբինատը թողարկում էր ավելի քան 2 մլն ռ. զանազան անուշախամ մուրաբա-

ներ, պովիլլո, ջեմեր, նաև չոր մրգեղեն և մրգեղենի հյութերի կիսաֆաբրիկատներ: Կարկառ գետի ափին կառուցվում էր սննդի նոր կոմբինատը, որը շահագործման պետք է հանձնվեր 1960 թ. և պետք է թողարկեր 5 մլն ռ. արտադրանք:

Մարզի տեղական արդյունաբերությունը հիմնականում զբաղվում էր շինանյութերի արտադրությամբ, անտառամշակմամբ և փայտամշակմամբ: Ընդհանրապես, մարզի տնտեսության մեջ մեծ կշիռ ուներ տեղական շինանյութերի արտադրությունը: Շրջարդկոմբինատները 1959 թ. արտադրել են 45 հազար խորանարդ մետր անմշակ քար: Նախատեսվում էր յոթնամյակում կառուցել կրի գործարան Ստեփանակերտում և գաջի գործարան՝ Մարտակերտում:

Ստեփանակերտի շրջարդկոմբինատը Հարավ գյուղի տարածքում արտադրում էր վարդագույն մարմար, որը վերամշակելու համար հանձնվում էր Բաքվի մարմարե առարկաների գործարաններին: Մարտակերտի շրջանի Կանք գյուղի շրջարդկոմբինատը շարունակում էր պատրաստել ջրաղացքարեր, որոնք արտահանվում էին նաև այլ երկրներ:

Երկրամասում արտադրվող շինափայտը (տարեկան մոտ 40 հազար խորանարդ մետր) օգտագործվում էր կահույք, սղոցանյութեր, սայլեր և մանրատախտակ պատրաստելու համար: Ստեփանակերտում կառուցվող կահույքի նոր ֆաբրիկան նախատեսված էր շահագործման հանձնել 1961 թ.: Մարտակերտի շրջանի Կաղուխասի կանուրջի մոտ բարձրացել էր արդյունաբերական մի նոր ձեռնարկություն՝ Մարտակերտի մեջենայացված անտառակետը, որի տարեկան ծրագիրը հասնում էր 3 մլն ռ.:

Հետպատերազմյան տարիներին արհեստագործական մի շարք արտեղներ նկատելիորեն ընդլայնել էին իրենց արտադրությունը: Կահույքի, շինանյութերի և կարի պարագաների արտադրությամբ զբաղվող արտեղները, 1956 թ. վերջերից սկսած, միավորվել էին տեղական արդյունաբերության համասեռ ձեռնարկությունների հետ: Արհեստակցական կոոպերացիայի արտեղները հիմնականում զբաղվում էին մարզի քաղաքների ու գյուղերի բնակչության կենցաղային կարիքների սպասարկմամբ: Այդ արտեղների աշխատանքի ծավալը 1960 թ. կազմել էր 9.8 մլն ռ.:

Գորգագործության «Ղարաբաղ» արտելը արհեստանոցներ ուներ Դաշբուլաղ և Աեծ Թաղեր գյուղերում: Գորգերի տարեկան արտադրությունը կազմում էր մոտ 1500 քառակուսի մետր: Նախատեսված էր յոթնամյակի տարիներին Ստեփանակերտում կառուցել գորգագործական նոր ֆաբրիկա և գորգերի արտադրությունն ավելացնել 5.5 անգամ:

հնչպես արդեն նշվել է, Արցախ-Ղարաբաղը հարուստ է արժեքավոր շատ հանածոներով: Եվ ծրագրված էր ավելի խոր ուսումնասիրել և շահագործել մի շարք հանքավայրեր, որոնք օգուտ կբերեին մարզի տնտեսությանը:

Մարզում հետզհետե ավելի էր մեծանում էլեկտրաէներգիայի պահանջը 1959 թ. որսգ անգամ ավելի էլեկտրաէներգիա էր արտադրվել, քան 1940 թ.: Ճիշտ է, սկսած 1957 թ-ից՝ մարզը էլեկտրաէներգիա էր ստանում Սինգեշաուրից, սակայն անհրաժեշտ էր նաև օգտագործել սեփական հնարավորությունները, մանավանդ որ մարզը ուներ ջրային առատ պաշարներ:

Նախատեսված էր 1959-1965 թթ. արդյունաբերական շինարարության համար հատկացնել 105 մլն ռ.²⁷:

Պայքարելով յոթնամյա պլանը ժամկետից շուտ գերակատարելու համար մարզի մետաքսագործները, որոնք գտնվում էին Նուխիի և Երևանի մետաքսագործների հետ սոցմրցության մեջ, հասել էին բարձր ցուցանիշների, մանավանդ կարժողները: Վերջինները, 1960 թ. տարվա պլանը կատարելով ժամկետից շուտ, տվել էին 5355 կգ արտապլանային մետաքսաթել, իսկ ոլորման արտադրամասի աշխատավորները նախատեսված 500 կգ մետաքսաթելի դիմաց տվել են 2740 կգ արտապլանային արտադրանք: 1960 թ. շահագործման հանձնված կարժական նոր կորպուսը, որը սարքավորված էր նոր և բարձրորակ հաստոցներով, խոշորագույն ներդրում էր մետաքսարդյունաբերության մեջ: Կարժողուհիներ Ելենա Մեհրաբյանը, Անինկա Աղաջանյանը, Գյուլիգար Զախարյանը, ոլորողուհիներ ժասմեն Բաբյանը, Թամարա Սուխորուկովան, Աինա Ալավերդյանը, ջուլիակուհիներ Սիրան Սաֆարյանը, Մանիշակ Գալստյանը, Աշխեն Գովհաննիսյանը և շատ ուրիշներ իրենց օրվա առաջադրանքները գերակատարում էին և օգնության հասնում էտ մնացողներին: Անհամատեղելիս այն էր, որ հանրապետության թեթև արդյունաբերության վարչությունը տարվա մեջ մի քանի անգամ փոխում էր գործվածքի տեսականին, որի հետևանքով էլ կոմբինատը չէր կարողանում պլանները կատարել: Այդ քմահաճ արարքը առաջ էր բերում խիստ դժգոհություն և բողոքներ²⁸:

Յոթնամյա պլանի կատարումը դարձել էր հիմնական խնդիր: ԼՂԻՄ գյուղատնտեսության, արդյունաբերության և շինարարության առաջավորների 1962 թ. մարտի սկզբին տեղի ունեցած խորհրդակցությունը, հաստատելով ԼՂԻՄ աշխատավորների 1962 թ. սոցպարտավորությունները, արդյունաբերության բնագավառում նախատեսում էր արտադրանքի թողարկման տարեկան պլանը ավարտել դեկտեմբերի 25-ին և պլանից դուրս թողարկել 875 հազար ռուբլու արտադրանք²⁹:

Ակնհայտ էր, որ խորհրդային կարգերում պլանը օրենք էր, որը պետք է պարտադիր կատարվեր: «Սովետական Ղարաբաղ» թերթի 1962 թ. հունվարի 27-ի առաջնորդողը, այդ մասին խոսելով, շեշտում է մարզի ձեռնարկությունների կողմից պետական պլանները կատարելու խիստ կարևորությունը: Թերթը նշում է, որ 1961 թ. լավագույն ցուցանիշներով են փակել Ղարմետաքսկոմբինատը, Ղարզինտրեստը, տեղարդյունաբերության մի շարք ձեռնարկություններ և այլն: Պարզվում է, որ մարզում արտադրվող 24 հիմնական արտադրատեսակներից պլանները կատարվել էին միայն 11-ի գծով³⁰: Պլանների կատարման հարցը առաջ մղելով՝ մարզխորհրդի նախագահ Ռ. Շահրամանյանը, իր մի հոդվածում թվարկելով վերջին տարիներին շարք մտած ձեռնարկությունները՝ սննդի կոմբինատ, կահույքի նոր ֆաբրիկա, տպարան, Շուշիի հեռուստահաղորդումների վերահաղորդման ենթակայան, պահամջում էր դրանք կատարեն պետական պլանները³¹:

1961 թ. գործարկվեց Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանը: Նրա արտադրանքն առաքվում էր Մոսկվա, Լենինգրադ, Վոլգոգրադ, Կույբիշև, Ռիգա, Կիլմյուս, Օդեսա, Խաբարովսկ, Կիև, Տաշքենդ, Ալմա-Աթա և այլ քաղաքներ: Արտադրվող էլեկտրակենցաղային շարժիչները երկրում մեծ պահանջարկ ունեին: Ձեռնարկությունը հնարավորություն ուներ ընդլայնելու արտադրությունը, ավելացնելու արտադրանքի տեսականին: Նախատեսվում էր այդ գործարանի արտադրանքը 1966-ին հասցնել 1 մլն ռուբլու, աշխատատեղերի թիվը՝ 450-500 հոգու³²:

1962 թ. հուլիսին Ադրբեջանի Կենտկոմը և Ադրբեջանական ԽՍՀ նախարարների խորհուրդը հաստատեցին ԼՂԻՄ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման և աշխատավորների կուլտուր-կենցաղային սպասարկման բարելավման միջոցառումների պլանը, ըստ որի նախատեսվում էր 1958 թ. համեմատությամբ համախառն արտադրանքի թողարկումն ավելացնել 10.5%-ով, պետությանը ավել փաճառել միս՝ 26.1%, կաթ՝ 22.9%, ձու՝ 37.3%-ով: Արդեն յոթնամյակի առաջին երեք տարում շահագործման էին հանձնվել 15 հազար քառակուսի մետր բնակարանություն, դպրոցներ՝ 1580 տեղով, մանկապարտեզներ և մանկանսուրներ՝ 400 տեղով և այլն³³:

Համեմատաբար անհաջողակ տարի էր 1962 թ.: Ճիշտ է, այդ տարի մետաքսկոմբինատը տարեկան պլանը կատարել է 109.3%-ով և տվել 2 մլն ռ. արտապլանային արտադրանք³⁴, սակայն մարզում էտ էր մնում ընդհանուր պլանների կատարումը: Օրինակ՝ մարզի արդյունաբերության 1963 թ. պլանը կատարվել է 89%-ով: Արդյունաբերական 35 ձեռնարկություններից 16-ը չէին կատարել տարեկան առաջադրանքները և երկրին պակաս էին տվել 6.6 մլն ռ. արտադրանք: Տեղական արտադրու-

բյան և կենցաղային սպասարկման բաժինը ապրանքի 23 հիմնական տեսակներից պլանը կատարել էր միայն 7-ի գծով: Կապիտալ ներդրումների տարեկան պլանը մարզում կատարվել էր հազիվ 69%-ով³⁵:

Յոթնամյա պլանի կատարման արդյունքներն ամփոփվեցին 1966 թ. հունվարի 15-ին տեղի ունեցած կուսակցության մարզային կոնֆերանսում: Մարզկոմի հաշվետվության մեջ նշված է, որ մարզում արդյունաբերական արտադրանքի թողարկման պլանը կատարվել է 101%-ով: Յոթնամյակի վերջին տարիներին ավարտվել էին Ղարմետաքսկոմբինատի 400 հաստոցով գործվածքային ֆաբրիկայի, Ասկերանի գարեջրի գործարանի, Ստեփանակերտի քիմիական մաքրման ֆաբրիկայի, Կուրոպատիկոնյի գինու նախնական վերամշակման գործարանի և այլ արտադրական օբյեկտների կառուցումը: Շահագործման էին տրվել էլեկտրատեխնիկական գործարանի արտադրական երկու կորպուսները և այլ ձեռնարկություններ:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունների թիվը տարեցտարի ավելանում էր: Նախատեսված էր կառուցել տարեկան 3.5 մլն զույգ կոշիկի արտադրությամբ ֆաբրիկա: Հրատապ խնդիր էր թարթառ գետի վրա 360 մլն խորանարդ մետր տարողությամբ անբարտակի կառուցումը: Այն պետք է ոռոգելի դարձներ Մարտակերտի շրջանի ներքին զոնայի և հարևան թուրքական շրջանների հողատարածությունները³⁶:

Մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի 63.3%-ը թողարկում էին Ստեփանակերտի ձեռնարկությունները: Առաջին շարքերում էին Բաքվի 26 կոմիսարների անվան մետաքսի ֆաբրիկան, գինու և կոնյակի արտադրության գործարանը, էլեկտրատեխնիկական գործարանը, տեղական արդյունաբերության տասնյակ ձեռնարկություններ³⁷:

Ստեփանակերտի կենցաղային սպասարկման կոմբինատը չէր կատարում տարեկան պլանները, բացառությամբ 1966 թ-ից: Մինչդեռ տեղական հումքի բազայի վրա աշխատող այդ ձեռնարկությունները կարող էին ավելի շատ արտադրանք տալ: Բերվող արյուսակը ցույց է տալիս կոմբինատի արտադրության դինամիկան 1960-1963 թթ.:

Թթ.	Պլան (հազ. ռ.)	Փաստորեն կատարվել է (հազ. ռ.)	Կատարվել է (%-ներով)
1960	128	120	94
1961	163	140	85.9
1962	235	146	62
1963	205	168	82

Թերակատարվում էր արտադրանքի գլխավոր տեսակների թողարկման պլանը: Քիչ էր հոգ տարվում արտադրանքի որակի բարձրացման ուղղությամբ: Իսկ որակի հարցը մնում էր մարզի արդյունաբերական ձեռնարկությունների գլխավոր հոգսերից մեկը: Մարզում ցածր մակարդակի վրա էր գտնվում շինարարության մեջ ավտոմատիկայի օգտագործման մակարդակը³⁸:

Ութերորդ հնգամյակի տարիներին համեմատաբար արագ էր մեծանում արդյունաբերական արտադրանքի ծավալը: Ըստ վիճակագրական տվյալների 1940 թ. համեմատությամբ արդյունաբերության համախառն արտադրանքի պլանը 1968 թ. կատարվել էր 528%-ով: Վիճակագրական տվյալները նաև վկայում են, որ 1969 թ. 34 արդյունաբերական ձեռնարկություններից տարեկան պլանները չէին կատարել չորսը, որոնք չէին տվել 621.1 հազար ռ. արտադրանք: Այդ ժամանակ նոր գործարկված հիմնական ֆոնդերի արժեքը կազմել է 1169 հազար ռ., իսկ դա մեկ շնչի հաշվով զգալիորեն պակաս էր հանրապետության միջինից:

Հետաքրքիրն այն է, որ պաշտոնական նյութերում միշտ էլ շեշտվում էր, որ մարզի արդյունաբերությունը խորհրդային իշխանության տարիներին կատարել է թռիչք: Մարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքունյանը 1970 թ. «Սովետական Ղարաբաղ» թերթի փետրվարի 2-ի համարում շեշտում է, որ խորհրդային իշխանության տարիներին մարզի արդյունաբերության համախառն արտադրանքն ավելացել է 227 անգամ: Մինչդեռ, համեմատելով 1913 թ. հետ, այդ թիվը տասնյակ անգամ իջնում է:

Որ ութերորդ հնգամյակում մարզի արդյունաբերությունը որոշ առաջընթաց քայլեր է կատարել, դա այդպես է: Հնգամյակի չորս տարում արդյունաբերությունը տվել էր 10 միլիոն ռ. գերպլանային արտադրանք, և արտադրված ապրանքներն արտահանվում էին տասնյակ երկրներ: Հնգամյակում մարզի առաջատար կառույցներից էին կոշիկի ֆաբրիկան, Մարտակերտի գինու նախնական մշակման գործարանը, Ստեփանակերտի երկաթբետոնային շինվածքների գործարանը, Թարթառի վրա բարձրացող հիդրոկայանը: Անկասկած, այս կառույցների ավարտումով ավելի կբարձրանար արդյունաբերության դերը մարզի կյանքում:

Ութերորդ հնգամյա պլանի կատարումը մարզին հնարավորություն տվեց հաջորդ 15 տարիներին մինչև 1985 թ., արդյունաբերական մի քանի կառույցներ ձեռնարկել, մանավանդ գինեհումքի արտադրության բնագավառում: Ըստ վիճակագրական տվյալների 9-րդ հնգամյակի տարիներին մարզի բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները

կատարել էին իրենց նվազագույն խոստումները: Հնգամյակի առաջին տարում գործարկվել էին 11.132 հազար ռուբլու հիմնական ֆոնդեր, շահագործման էր հանձնվել տարեկան 3.6 մլն գույգ կարողությամբ կոշիկի ֆաբրիկան: Շահագործման էր հանձնվել նաև Բալուջայի 470-տեղանոց դպրոցը, 18491 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ բնակելի տներ: Մարզում աշխատանքի արտադրողականությունը բարձրացել էր 4.1%-ով: Այս և այլ ցուցանիշներ խոսում են մարզում տնտեսության նվազագույն աճի մասին: Այդ մասին վկայում են նաև 1973 թ. հունվարի 24-ին Ստեփանակերտում տեղի ունեցած մարզային ակտիվի նիստում բերված տվյալները: Մարզխորհրդի նախագահ Մ. Օհանջանյանն իր զեկուցման մեջ նշել է, որ մարզի արդյունաբերությունը 1972-ին արտադրանքի իրացման պլանը կատարել է հազիվ 100.6%-ով, և պլանից դուրս իրացվել է ընդամենը 519 հազար ռուբլու արտադրանք: Այն, որ դրա կողքին արդյունաբերական օբյեկտների շինարարության պլանը կատարվել էր հազիվ 75%-ով³⁹, ևս փաստ է:

70-ական թթ. շարունակում էր ծավալվել մետաքսի արտադրությունը: Մետաքսի գործվածքի արտադրությունը տարեկան հասել էր 11 մլն մետրի: Ստեփանակերտի գորգի ֆաբրիկան ընդարձակել էր արտադրությունը և արտադրանքի թողարկումը հասցրել 1700 քառ. մետրի: Այն արտահանվում էր Անգլիա, Իտալիա, Շվեդիա, Եգիպտոս, Արաբական հանրապետություն և այլ երկրներ:

Էլեկտրատեխնիկական գործարանը տարեկան տալիս էր մինչև 11 մլն ռ. արտադրանք: Նրա արտադրանքը կարելի էր տեսնել աշխարհի բազմաթիվ շուկաներում:

Մարզի սննդի ձեռնարկությունները շարունակում էին աշխատել տեղական հումքի բազայի վրա: Արդեն Ղարափնտրեստի 11 ձեռնարկությունները տալիս էին տարեկան ավելի քան 44 մլն 240 հազար ռուբլու արտադրանք: «Ղարաբաղ», «Մարտունի», «Ճարտար», «Գիշի» գինիների տեսակները և կոնյակը հարզի էին ամբողջ երկրում:

Մարզում վեր էին բարձրանում նոր կառույցներ: Ամենախոշոր շինարարական կառույցը Թարթառի վրա բարձրացող հիդրոկայանն էր⁴⁰: 9-րդ հնգամյակի երեք տարվա տվյալները ցույց են տալիս, որ մարզի արդյունաբերությունը թե բնական աճի տեսակետից և թե արտադրանքի արժեքով վերելք էր ապրում: Դա երևում է հետևյալ աղյուսակից⁴¹:

	1971	1972	1973
Էլեկտրալուսավորման արժատուրա (հազ. հատ)	479	506	564
Քար-կուբիկ (հազ. հատ)	707	729	860
Կիր (հազ. տ)	6.2	5.0	5.9
Սղոցանյութ (հազ. խոր. մ)	16.0	10.3	4.3
Մետաքսե գործվածք (հազ. խոր. մ)	10745	11668	11910
Կենդանական յուղ (տ)	634	671	677
Պանիր (տ)	466	425	537
Կաթնամթերքի արտադրություն (տոննա)	2125	2379	2653
Գինի (հազար դեկալիտր)	470	518	433
Կոնյակ (հազար դեկալիտր)	23.70	25.06	24.94

«Սովետական Ղարաբաղ» թերթի 1973 թ. թիվ 247-ում տպագրված Ա. Ջաքարյանի «ԼՂԻՄ արդյունաբերությունը 50 տարում» վերատառությամբ հոդվածում խոսվում է մարզում գինեգործության և օղու արտադրության մասին շեշտելով, որ 1909-1913 թթ. թթի սպիրտի հումքի (թթի օղու) տարեկան միջին արտադրանքը կազմում էր 59.6 հազար դեկալիտր: Անդրկովկասում բոլոր տեսակի մթերքներից պատրաստված սպիրտի 8.6%-ը արտադրվել է Ղարաբաղում: Հետագայում հիմնադրված Ղարափնտրեստը կարողացավ իր ձեռքում կենտրոնացնել խմիչքների արտադրությունը և այն դնել արդյունաբերական հիմքի վրա: Իսկ ինչ վերաբերում է մետաքսարդյունաբերությանը, 1948-1957 թթ. մոդեռնացվել էին մետաքսակարծակյան բոլոր հաստոցները, 1954 թ. շահագործման հանձնվել գործվածքային արտադրությունը, 1955-ին մետաքստլորման արտադրամասի նոր կորպուսները, 1965-ին չորսհարկանի գործվածքային խոշոր ֆաբրիկան սարքավորված 600 ավտոմատ հաստոցներով: Հիսուն տարում կոմբինատի համախառն արտադրանքը ավելացել էր 91.3, իսկ աշխատանքի արտադրողականությունը 7.2 անգամ:

Մարզի տնտեսության մեջ կարևոր դեր է խաղացել նաև արհեստակցական կոոպերացիան, որը ստեղծվել էր 30-ական թթ. սկզբին: Այն իր թևերը փռել էր մարզի ամբողջ տարածքում: 20-րդ դարի 60-70-ական թթ. կոոպերացիան ուներ տասնյակ փոքր և մեծ ձեռնարկություններ:

9-րդ հնգամյակի վերջին երկու տարիների արդյունաբերական արտադրանքի վիճակագրությունը վկայում է, որ մարզի արդյունաբերությունը զարգացել է համաչափ: Դա երևում է հետևյալ աղյուսակից⁴².

	1940	1960	1970	1974	1975
Էլեկտրաէներգիայի արտադրությունը (հազ. հատ)	-	-	474	596	585
Կիր (տ)	1.2	7.1	7.2	6.0	5.9
Աղյուս (հազար հատ)	172	325	814	1299	1373
Սղոցանյութ (հազար խորանարդ մ)	1.3	11.7	18.0	15.0	20.8
Մետաքսե հունք (տ)	98	121	124	139	143
Մետաքսե գործվածք (հազար մ)	120	2259	9773	11463	11656
Կոշիկ կաշվե (հազար գույզ)	12	75	8.4	1627	1869
Կենդանական յուղ (տ)	13	346	550	928	723
Պանիր (տ)	61	268	557	545	477
Գինի (հազ. դեկալիտր)	40	-	539	793	870
Կոնյակ (հազ. դեկալիտր)	1.2	11.4	11.0	11.6	6.6
Գարեջուր (հազ. դեկալիտր)	-	-	171	164	140

1976 թ. սկզբին առաջ քաշվեց հինգ տարում երկու հնգամյա պլան կատարելու կոչը: Գրեթե բոլոր ձեռնարկություններում լայնորեն ծավալվել էր սոցմրցությունը: 1976 թ. հունվարից սկսված Աղդամ-Ստեփանակերտ երկաթգծի շինարարությունը գրավեց շատերի ուշադրությունը: Նույն թվականի փետրվարի 9-ին տեղի ունեցած մարզի աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչների ակտիվի ժողովը, ամփոփելով 1975 թ. կատարված աշխատանքները և քննարկելով մարզի աշխատավորների 1976 թ. սոցիալիստական պարտավորությունները, շեշտեց, որ 10-րդ հնգամյակի սկզբից սկսած՝ մեծանում է արդյունաբերական արտադրանքի ծավալը: Նշվեց, որ անցած հնգամյակի վերջին տարում մարզում պլանից դուրս արտադրվել է 22 մլն ռ. արտադրանք: Արտադրանքի աճի 80%-ը ձեռք է բերվել աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, յուրացվել են 30 նոր արտադրատեսակներ, և 11 արտադրատեսակի շնորհիվ է որակի պետական նշան⁶³: Ակտիվի ժողովը մարզի բնակչությանը կոչ արեց լարել բոլոր ուժերը և 10-րդ հնգամյա պլանը կատարել ավելի բարձր ցուցանիշներով: Ջուլիակուտի Սայիդա Օրբեյանի նախաձեռնությունը՝ մեկ հնգամյակում կատարել երկու հնգամյա պլան, լայն արձագանք գտավ մարզի արդյունաբերական ձեռնարկություններում:

Այնուհանդերձ, մտահոգիչ հարց էր ամեն տարի կապիտալ ներդրումների թերակատարումը: Այդ մասին 1976 թ. հուլիսի 27-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումում արտահայտվեց նաև Բ. Կերոկովը:

Նա նշեց, որ 9-րդ հնգամյակում շարք էին մտել Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկան, Մարտակերտի շրջանում նախնական մշակման գինու երկու գործարան, Ղարնետաքսկոմբինատի կենցաղային տունը, Շուշի քաղաքի գործվածքային արտադրամասը, մի քանի տասնյակ անասնապահական շենքեր և այլն: Երկար տարիների ընթացքում հազիվ մեկ անգամ 1976 թ., կատարվել էր կապիտալ ներդրումների պլանը, և իրացվել 32.2 մլն ռ. ծավալով կապիտալ ներդրումներ⁶⁴: 1978 թ. հունվարի 4-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումը հայտարարեց, թե մարզի 44 արդյունաբերական ձեռնարկություններից տարեկան պլանները կատարել են 43-ը, չէր կատարել միայն կոշիկի ֆաբրիկան⁶⁵: Պլենումը նաև նշեց, որ առավել բարձր ցուցանիշների է ձգտում Ղարգինսովխոզտրեստը, որի գինու արտադրությունը 1977-ին հասել էր 1 մլն 62 հազար դեկալիտրի, իսկ կոնյակի արտադրությունը՝ 26.2 հազար դեկալիտրի: Արդեն 10-րդ հնգամյակի վերջին տրեստի ձեռնարկությունները տարեկան արտադրում էին մինչև 131.5 մլն ռ. գինեմթերք, որը 10.4 անգամ ավելի էր 1965 թ. արտադրվածից⁶⁶:

1976 թ. դեկտեմբերի 24-ին շինարարությունը սկսվելուց 12 տարի անց, բացվեց Մարսանգի ջրանցքը: Ջրամբարն ունի 12-14 կմ երկարություն, 1.5-2 կմ լայնություն: Ամբարտակի բարձրությունը 125 մետր է, Եվրոպայում ամենաբարձրը: Ջրամբարի ջրատարողունակությունը կազմում է մոտ 0.5 միլիարդ խորանարդ մետր: Ջրամբարի ջրով հնարավոր է ոռոգել ավելի քան 150 հազար հեկտար տարածություն: Ջրամբարից սկիզբ առնող 386 մ երկարությամբ թունելից սմվող 2 տուրբիններով կայանն արտադրում է 50 հազար կվտ ժամ էլեկտրաէներգիա: Դիդրոհանգույցը, ըստ Շահեն Մկրտչյանի տվյալների⁶⁷, կառուցվել է կիսատ-պռատ, տնտեսվել էր 80 միլիոն ռուբլի և ներդրվել Բաքվի մետրոյի շինարարության վրա: Այն, ինչ արցախցիներն ակնկալում էին, չստացվեց: Դարևան աղբեջանական շրջաններից հազարավոր ընտանիքներ սեփական բնակարաններ կառուցեցին հիդրոհանգույցի շինանյութերը գողանալու միջոցով: Այդ թերակառույց շինարարությունը թե՛ ժամանակի և թե՛ կորուստների տեսակետից ծանր նստեց պետության վրա:

1979 թ. գործարկվեց Աղդամ-Ստեփանակերտ երկաթուղին, և հունվարի 12-ին Ստեփանակերտ հասավ մարդատար առաջին գնացքը: Երկաթուղու կառուցումը, չնայած այն տեղի էր ունեցել շատ ուշացումով, այնուամենայնիվ, մարզի համար տնտեսական կարևոր նշանակություն ուներ: 1979 թ. հունվարի 13-ին տեղի ունեցած կուսակցության մարզկոմի 28-րդ կոնֆերանսի նյութերից իմանում ենք, որ մարզում այդ վերջին տարիներին արտադրական բարձր ցուցանիշների էին հասել Ղար-

մետաքսկոմբինատից ջուլհակուհի Սայիդա Օրբելյանը, Զմարիկ Առաքելյանը, Սառա Դասանովան, Ամայա Աղաջանյանը, Ռոզա Պետրոսյանը, կարժողուհիներ Դասմիկ Պողոսյանը, Անտոնինա Պաշչենկոն, Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի հավաքող-փակահագործներ Սուրեն Պողոսյանը, Վլադիմիր Խարչենկոն, Շուշիի տեղարդկոմբինատից Թամաշա Աղանան և ուրիշներ:

Կոնֆերանսի նյութերից երևում է, որ հնգամյակի երեք տարում ԼՂԻՄ-ում արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել էր 41%-ով պլանով նախատեսված 24-ի դիմաց: Այդ ժամանակաշրջանում արտադրվել է 2.1 անգամ ավելի արտադրանք, քան թողարկվել էր 9-րդ հնգամյակի առաջին երեք տարում: 1978 թ. թողարկվել էր 222.2 մլն ռ. արդյունաբերական արտադրանք կամ 7.3 մլն ռ-ով ավելի պլանավորվածից: Գնգամյակի 3 տարում աշխատանքի արտադրողականությունը բարձրացել էր 34.7%-ով հնգամյակի վերջին տարվա համար նախատեսված 17.1%-ի դիմաց: Արդեն 1970-ական թթ. վերջին մարզի արդյունաբերական ձեռնարկությունները թողարկում էին 80 տեսակի բարձրորակ արտադրանք: Սակայն պետք է նշել, որ դեռևս չէին կարողանում օգտագործել բոլոր հնարավորությունները: Դրա համար էլ արդյունաբերության կազմակերպման բնագավառում լուրջ թերություններ կային: Իսկ դրանք նախ և առաջ բխում էին ոչ ճիշտ պլանավորումից, հումքն արդյունավետ չօգտագործելուց, պլանները հաճախակի փոփոխվելուց և այլն⁴⁰:

11-րդ հնգամյակը խորհրդային պլանավորման նախավերջին ակորդն էր: 1981 թ. ապրիլին տեղի ունեցած ԼՂԻՄ 17-րդ գումարման 6-րդ նստաշրջանը, ամփոփելով 10-րդ հնգամյակի արդյունքները, ընդգծեց, որ հնգամյակում պլանից դուրս իրացվել է ավելի քան 52 մլն ռ. արդյունաբերական արտադրանք: Արտադրության ծավալը պլանային 24%-ի դիմաց աճել էր 62%-ով: Գնգամյակում, Աղդամ-Ստեփանակերտ երկաթգծից բացի, կառուցվել են 8560 աշակերտական տեղերով 20 դպրոց, սպորտդահլիճներ և այլ օբյեկտներ: Ընդհանրապես, 10-րդ հնգամյակում պլանից դուրս իրացվել էր 52 մլն ռ. արդյունաբերական արտադրանք: Արդյունաբերության արտադրանքի աճը կազմել է 62% կամ 2.6 անգամ ավելի նախատեսվածից⁴¹: Ըստ վիճակագրական տվյալների հնգամյակում մարզում գործադրվել են 176 մլն ռ. ընդհանուր արժողությամբ հիմնական ֆոնդեր: Դա 1.8 անգամ գերազանցում էր 9-րդ հնգամյակում ներդրածին⁴²: Ըստ տվյալների՝ 70-ական թթ., այսինքն՝ 10 տարում, մի քանի խոշոր կառույցներ շահագործելուց բացի, կապիտալ ներդրումներ են կատարվել նաև գյուղերում, ասեմք՝ ճարտարում, Սոսում, Ավետարանցում և այլ բնակավայրերում:

1984 թ. հունվարի 13-ին տեղի ունեցած ԼՂԻՄ մարզկոմի 30-րդ կոնֆերանսը, ամփոփելով 11-րդ հնգամյակի երեք տարիների արդյունքները, նշեց, որ ընդհանրապես արդյունաբերության բնագավառում մարզի աշխատողները հասել են զգալի հաջողությունների: Պլանից դուրս արտադրվել և իրացվել էր 43 մլն ռ. արտադրանք: Մարզի արդյունաբերությունը յուրացրել էր 132 նոր արտադրատեսակներ: Արտադրվում էր 36 տեսակի որակամիշոյվ արտադրանք, որոնցից 32-ը՝ ժողովրդական սպառման ապրանքներ⁴³: Այնուամենայնիվ, մի շարք ձեռնարկություններ ետ էին մնում և չէին կատարում հնգամյակով նախատեսված պլանները: Օրինակ Ստեփանակերտի Բաքվի 26 կոմիսարների անվան մետաքսագործական ֆաբրիկան երեք տարվա պլանը թերակատարել էր 4.1%-ով, իսկ արտադրության ծավալի աճի պլանը՝ 5.4%-ով⁴⁴: Նման վիճակ տիրում էր նաև այլ ձեռնարկություններում: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 1984-ին վիճակը մասնակիորեն բարելավվեց և հնգամյակի 4 տարում աշխատանքի արտադրողականությունը 1.2%-ի փոխարեն աճեց 2%-ով: 1986 թ. հունվարին տեղի ունեցած կուսակցության մարզկոմի 31-րդ կոնֆերանսը հայտարարեց, թե 11-րդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի ծավալը 8.1%-ի դիմաց աճել է 20.3%-ով, և որ նրա հանրագումարային ծավալը կազմել է 1 միլարդ 858 միլիոն ռուբլի, որը 1.4 անգամ ավելի է նախորդ հնգամյակից: Նաև ասվեց, որ աշխատանքի արտադրողականությունն աճել է 7.7%-ով: Օրինակ բերվեց, որ 5 տարում շինանյութերի կոմբինատում իրականացվել են 768.0 հազար ռ. ընդհանուր տնտեսական օգուտով նոր տեխնիկայի արմատավորման 30 միջոցառումներ: Առաջընթաց գրանցվեց կոշիկի ֆաբրիկայում և էլեկտրատեխնիկական գործարանում: Գնգամյակի տարիներին նախատեսված 140 հազար քառակուսի մետր բնակարանությունից շահագործման էր հանձնվել 104.4 հազար քառակուսի մետր, իսկ դա կազմում էր հարյուրավոր բնակարաններ⁴⁵:

Ահա այսպիսին էր ԼՂԻՄ արդյունաբերության վիճակը հետպատերազմյան տարիներին: Այդ ժամանակ մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորների թիվը հասնում էր 12.000-ի: Ասեմք նաև, որ հարյուրավոր ընտանիքներ տարիներ շարունակ սպասում էին բնակարանների, իսկ տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց կարիքը խիստ անհրաժեշտ էր, մնում էին չկառուցված, մարզի ճանապարհները քարուքանդ էին, դանդաղ էր փոխվում բնակավայրերի դեմքը: Եվ հաց, յուղ, միս արտադրող արցախցին, սակայն, հույսը դրել էր Աղդամի շուկայի վրա, որովհետև նրան ամհասանելի էին պետական հատկացումները, և բացառված իր իսկ արտադրանքից օգտվելու հնարավորությունները:

2. Տեղաշարժեր մարզի գյուղատնտեսության մեջ

Արցախ-Ղարաբաղը դարեր շարունակ հանդիսացել է գյուղատնտեսական երկրամաս, որտեղ արտադրանքի տեսականու մեջ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը ծավալուն տեղ է բռնել, չնայած արտադրված սեփական հացը չի բավարարել բնակչության պահանջը: Ջրառատ մի երկրամասում ցանքերը մնում էին անջրդի, և բավականին ցածր էր բերքատվությունը: Արցախցին ստիպված էր լինում հացի պակասը լրացնել արտագնա աշխատանքով: Նա թողնում էր տուն ու տեղ, մեկնում երկրամասից և աշխատանք որոնում արդյունաբերական քաղաքներում, մասնավանդ Բաքվում:

Հայրենական մեծ պատերազմն ավարտվելուց հետո մարզի կուսակցական և պետական մարմինները մտահոգված էին սեփական հնարավորությունների հաշվին բարձրացնել մարզի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Քանի որ մարզի արդյունաբերությունը շատ էր կապված գյուղատնտեսության հետ, մասնավանդ մարզմետաքսարոշյունաբերությունը և Ղարաբնդերեսը, ուստի գյուղատնտեսության հետագա զարգացումը մնում էր հիմնական խնդիրներից մեկը:

Պատերազմից հետո չորրորդ հնգամյակի տարիներին մարզի տնտեսության արագ վերականգնումը և նախապատերազմյան 1940 թ. մակարդակի գերազանցումը այնքան էլ ծանր չընթացան: Մարտունու շրջանի Գյումե ճարտարի կոլտնտեսությունը մարզի ամենաքայքայված տնտեսություններից մեկն էր: Եվ ահա այդ նույն կոլտնտեսությունը, որը համառորեն պայքարում էր տնտեսությունը վերականգնելու համար, 1946 թ. ամռան սկզբին դիմելով մարզի բոլոր կոլտնտեսություններին, նշում է. «Սեր դաշտում աճել է չտեսնված առատ բերք: Բայց բերքը պետք է հավաքել լիովին, մինչև վերջին հասկն ու հատիկը: Այդ նպատակով էլ մենք ... կոչ ենք անում ձեզ բոլորիդ համառ ու քրտնաթոր աշխատանքով հավաքել ամբողջ բերքը»: ճարտարցիները, մրցության հրավիրելով մյուս կոլտնտեսություններին, խոստացան հնձվորների թիվը հասցնել 600-ի և հունձն ավարտել հուլիսի 10-ին, իսկ հացահատիկի կալսումը օգոստոսի 10-ին և հավաքել 120 տոննա հասկ ու ժամանակին ավարտել պետական մթերման պլանը: Այդ կոչի տակ ստորագրել էին մեկ տարի առաջ կոլտնտեսության նախագահ ընտրված Սուրեն Ադամյանը, գյուղխորհրդի նախագահ Ա. Սուլեյմանյանը, կուսկազմակերպության քարտուղար Բ. Բախշյանը և տասնյակ կոլտնտեսականներ:

ճարտարցիների կոչը լայն արձագանք գտավ ամբողջ մարզում: Մարզկոմն ու մարզխորհուրդը, մայիսի 29-ին անդրադառնալով ընթացիկ տարվա հացահատիկային կուլտուրաների բերքի հավաքմանը և պետական մթերումների կատարմանը, միջոցներ նշակեցին բերքն անկորուստ հավաքելու վերաբերյալ:

1946 թ. գարնանացանի պլանը չէին կատարել 36 կոլտնտեսություն. Մարտակերտի շրջանում 12, Ստեփանակերտի շրջանում 10, Շուշիի շրջանում 6, Մարտունու շրջանում 4, Հաղրուփի շրջանում 4: Ստուգումները պարզել էին, որ տեղերում ղեկավարները թույլ էին ղեկավարում բամբակի, գվալուլայի, ծխախոտի, հացահատիկի, բանջարեղենի ցանքերի պլանների կատարումը, վատ էին օգնում նաև կոլտնտեսություններում կազմակերպված բրիգադների և օղակների աշխատանքների ճիշտ կազմակերպմանը: Այդ թերությունները վերացնելու համար մարզային իշխանություններն ընդունեցին կոնկրետ որոշում³:

Հնգամյա պլանը կատարելու համար մարզի բոլոր բնակիչները կոլտնտեսականներից մինչև դպրոցականները, ընդգրկված էին սոցմրցության մեջ: Օրինակ Մարտակերտի միջնակարգ դպրոցի կոմերիտականներին ու պիոներները, դիմելով մարզի բոլոր կոմերիտականներն և պիոներներին, կոչ արեցին հավաքել դաշտերի ամբողջ հասկը: Իրենք խոստացան հավաքել 100 տոննա: Իսկ դա նշանակում էր իրենց կոլտնտեսությունում մեկ աշխօրի արժեքը մեծացնել 800 գրամ հացահատիկով:

Մարզկոմի գյուղատնտեսական բաժնի վարիչ Մ. Նիկողոսյանը, հանդես գալով գյուղատնտեսության զարգացման հարցի շուրջ, օրինակ է բերում, որ պատերազմի տարիներին մարզի կոլտնտեսությունների ցանքատարածություններն ընդլայնվել էին 15000 հեկտարով և հասցվել 85000 հեկտարի: Արցախը երբեք այդքան ցանքա չէր կատարել: Մարզը 6 տարվա ընթացքում հայրենիքին տվել է 325806 g հացահատիկ, 74272 g բամբակ, 3262 g ծխախոտ, 7219 g բոժոժ, 806030 g խաղող, 18 մլն աստիճան թթի օղի և այլ մթերքներ, չհաշված ֆինանսական միջոցներն ու մյուս նվիրատվությունները: Պատերազմի տարիներին մարզի կոլտնտեսություններին լավորակ սերմեր էին մատակարարում Շեխերի, Նորագյուղի, Մեծ Շենի և այլ կոլտնտեսություններ: Դեռ այն ժամանակ մարզի 7 կոլտնտեսություններում, որպես առաջադեմ քայլ, անց էր կացվում ցանքաշրջանառություն: Մարզում տարեցտարի բարձրանում էր բերքատվությունը, և որոշ տեղեր հասել էր հեկտարից 17 ցենտների: Մարզում հարզի էր տեխնիկական կուլտուրաների մշակումը: 1946 թ. տվյալներով՝ մարզն ուներ 20 հա գվալուլա, 5.5 հազար հա խաղողի, թթի և պտղատու այգիներ⁴:

հորհրդային բանակից զորացրվածների մի մասը մնում և աշխատում էր կոլտնտեսություններում: Օրինակ Գյուլեն ճարտար գյուղից զորացրվածներից 20 հոգի առաջադրվել և կոլտնտեսությունում աշխատում էին ղեկավար պաշտոններում⁶:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում գյուղատնտեսության զարգացման հարցը մնում էր անլուծելի: Եվ չնայած ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1947 թ. փետրվարյան պլենումը որոշում ընդունեց մոբիլիզացնել ուժերը և գյուղատնտեսությունը շարժել տեղից, սակայն արդյունքը զոհացուցիչ էր: Օրինակ ԼՂԽՄ-ում բերքատվությունը շարունակում էր մնալ ցածր մակարդակի վրա: Միայն 7 հազար հեկտարից է, որ միջին հաշվով ստացվել էր 15–17 ց բերք, իսկ մնացած ամբողջ տարածություններից 6–7 ց: Հացահատիկից բացի, մարզում 1946 թ. 105 կոլտնտեսություն էր կատարել կովերի և գոմշակովերի գլխաքանակի պլանը, 36 կոլտնտեսություն՝ մայր խոզերի, 63 կոլտնտեսություն՝ մայր ոչխարների ու այծերի: Հատուկ խստությամբ դրվեց բամբակի, գվայուլայի, ծխախոտի, խաղողի և այլ տեխնիկական կուլտուրաների բերքատվության բարձրացման հարցը:

Վերոհիշյալ փետրվարյան պլենումի որոշումների լույսի տակ լայն թափ էր առել սոցիալիստական մրցությունը: Սոցմրցման պայմանագրեր կնքվեցին Ստեփանակերտի շրջանի 48 կոլտնտեսությունների, 105 ֆերմաների, 80 բրիգադների և 79 օղակների միջև: Մարտունու շրջանում կազմակերպվեցին բարձր բերքատվության 8 կոլտնտեսություն, 49 բրիգադ և 64 օղակ, խաղողի գծով՝ մեկ կոլտնտեսություն, 10 բրիգադ, 24 օղակ և շերամի գծով՝ 3 բրիգադ, 25 օղակ⁷:

Մարզկոմի առաջին քարտուղար Մ. Մանուկյանը մասնաւորում հրապարակած իր մի հոդվածում օրինակ է բերում, որ մարզում 48 կոլտնտեսություն, 230 բրիգադ և 566 օղակ ստացել են բարձր բերք: Մարտակերտի շրջանում 2 կոլտնտեսություն և 16 բրիգադ պայքարում էին իրենց ամբողջ տարածության յուրաքանչյուր հեկտարից 35–40, իսկ 11 օղակ՝ 85 ց բամբակի համար: Այդ նույն թվականին բարձր ցուցանիշների էին հասել նաև մարզի շերամապահները: Մարզում 38 շերամապահներ տվել էին ռեկորդային բերք՝ մեկ տուփից 115–120 կգ բոժոժ, իսկ 32 կոլտնտեսություններում յուրաքանչյուր մեկ տուփից ստացել էին 65 կգ-ից ավելի բոժոժ: Այդ տարում մարզի շերամապահները բոժոժի մթերման պլանը կատարել են 105.5%-ով⁸: Չեռնարկված միջոցառումների հետևանքով բարձրանում էր նաև անասունների մթերատվությունը և բույսերի բերքատվությունը:

Անկասկած, սովի և կարիքի մեջ տքնող արցախցիների հույսը մնում էր գյուղատնտեսությունը: Գրեթե բոլորն էին պայքարում մանավանդ հացահատիկի բարձր բերք ստանալու համար: Նման մի խիզախություն

կատարվեց Գյուլեն ճարտարի կոլտնտեսությունում, որի համար 5 հոգու, այդ թվում և կոլտնտեսության նախագահ Սուրեն Արամյանին, շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, 5 հոգի էլ ստացան մեդալներ և շքանշաններ:

Հնգամյա պլանով նախատեսված էր նախապատերազմյան մակարդակը գերազանցել 1948 թ.: Դրանում կարևոր դեր խաղացին գյուղատնտեսական աշխատողների հավաքների, խորհրդակցությունների հրավիրումը և փոխայցելությունների ու փորձի փոխանակման կազմակերպումը: Այդ ամենի արդյունքում մարդկանց խոստումները դառնում էին շոշափելի: Ավելանում էին ընդհանուր արտադրությունը, անասունների զլխաքանակը, հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը և այլն: 1947 թ. փետրվարին տեղի ունեցած գյուղատնտեսության առաջավորների մարզային հավաքը, որին մասնակցում էր 400 հոգի, հայտարարեց, որ մարզում կատարվել են ծխախոտի մթերման պլանը (107.6%) և բոժոժի հանձնումը (107.8%): Հայտարարվեց, որ մնացած ճյուղերում ևս կհասնեն նման հաջողությունների: Մարդիկ բարձր հաջողությունների էին հասնում նվիրված աշխատանքի շնորհիվ: Պատկերացրեք. Գյուլեն ճարտարում 96-ամյա Դովսեփ Դանիելյանը, մանգաղը վերցրած, հպարտ քայլերով գնում էր հնձի: Չէ՞ որ նրա համագյուղացիները խոստացել էին հեկտարից ստանալ 30 ց ցորեն: Այստեղ անցած 1946 թ. աշխօրին բաժանվել էր 6.5 կգ հացահատիկ: Այդ տարում Համբարձում Հարությունյանի ընտանիքը ստացել է 10 տ հացահատիկ, 300 լ օղի, 300 լ գինի, իսկ խորեն Սարգսյանի ընտանիքը՝ 12 տ հացահատիկ: Այդ կոլտնտեսությունում 360 մարդ լրացուցիչ վարձատրություն էր ստացել 92 տ հացահատիկ⁹:

Տեխնիկական կուլտուրաների, առանձնապես բոժոժի, մշակումը կարևոր տեղ ուներ: Մետաքսարդյունաբերության զարգացումը պահանջում էր ընդլայնել շերամի արտադրությունը: 1947 թ. պլանային 48 կգ-ի դիմաց 32 կոլտնտեսություններում յուրաքանչյուր տուփ գրենայից միջին հաշվով ստացել էին 65.7 կգ բոժոժ, 33 շերամապահներ 100, 232 շերամապահներ՝ 70 կգ: Խանաբադի Նելսոն Ստեփանյանի անվան կոլտնտեսությունում յուրաքանչյուր տուփից միջին հաշվով ստացել են 76.6 կգ բոժոժ, Ղզղալայի Մարտունու անվան կոլտնտեսությունում՝ 75.6 կգ, Խնուշինակի «Կոմունար» կոլտնտեսությունում՝ 77.5 կգ և այլն¹⁰:

Ինչպես նշվել է, Լեռնային Ղարաբաղն ունի ջրային մեծ պաշարներ, որոնք պետք է ծառայացվեն մարզի կարիքներին: Գյուղատնտես Սամսոն Բարսեղյանը գրել է, որ մարզի կոլտնտեսությունները անձան ամիսների ռոտզման ջրի խիստ կարիք են զգում: Բազմամյա բույսերը բավա-

կանին ցածր բերք են տալիս ջրի պակասության պատճառով: Սկսած 1950 թ. մարզի կոլտնտեսությունները ծավալել էին ջրաշինարարական աշխատանքներ: Մարտակերտի շրջանում գտնվող 35-ական կմ երկարություն ունեցող Շիխ-արխը և Ղազ-արխը ընդլայնվել էին իրենց կես երկարության վրա: Կարմիրավանի կոլտնտեսությունը փորել էր արտեզյան երկու ջրհոր և ոռոգում էր բանջարեզանու ու բանջարանոցային կուլտուրաները: Համանման ջրհորներ ձմեռային արոտավայրերում փորել էին նաև Մարտունու և Մարտակերտի շրջաններից 4 կոլտնտեսություններ: Մարզում ավարտվել էր 24 նոր ջրամբարների կառուցումը, փորվում էին արտեզյան նոր ջրհորներ: Սակայն այդ ամենը կազմում էր մարզի ջրային պաշարների մի չնչին մասը: Նախատեսված էր 1954 թ. մարզում կառուցել 45 ջրամբար 400-750 խորանարդ մետր միջին տարողությամբ: Սակայն սկսված աշխատանքները շատ դանդաղ էին ընթանում¹¹:

Ջրի հարցը 60-70-ական թթ. ևս մնում էր ցավոտ հարց: Ճարտարգիները Ալիբալիի տեղամասում 50-ական թթ. կառուցեցին նոր քյարիիզ, որը 1 վայրկյանում տալիս էր 4 լ ջուր: Նրա երկրորդ հոսանքի բացվելուց հետո 1 վայրկյանում ստացվում էր 10-12 լ ջուր: Ջրերի օգտագործման տեսակետից խրախուսելի աշխատանքներ էին կատարվում Ննգիի, Շոշի, Բալլուջայի, Նախիջևանիկի, Մարտակերտի, Թալիշի և այլ կոլտնտեսություններում: Պլանավորել էին կառուցել Մարտակերտի շրջանի Վերին արխը, որի արդյունքում ջրովի կդարձվեր 25 հազար հա հողատարածություն¹²:

Կարևորը դաշտավայրերը ջուր հասցնելն էր: Ղեռևս 1950 թ. հունվարին նախատեսվել էր երեք ամսում մաքրել 233000 մետր ջրատար, վերանորոգել 67 քյարիիզ, 20 ջրամբար, կառուցել 10 նոր քյարիիզ, 22 ջրամբար: Սակայն սկսված աշխատանքները դանդաղում էին¹³, նախ և առաջ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

Գյուղատնտեսության բնագավառում չորրորդ հնգամյակը հաջող եզրափակելու համար 1950 թ. ապրիլի 3-ին տեղի ունեցած մարզկոմի չորրորդ պլենումը զովեստով էր խոսում Գյունե ճարտարի, արդեն Ղուզե ճարտարի հետ միավորված Մարտունի շրջկենտրոնի, Մարտակերտի շրջկենտրոնի, Լեռնարխի, Փիրջամալի, Շեխերի և այլ կոլտնտեսությունների մասին, որոնք արդեն նվաճել էին հնգամյակի նախադուռը: Առաջարկվեց և հանձնարարվեց անզիջում պայքար մղել յուրացումների, շոյալումների և գողությունների դեմ, կոլտնտեսություններն ապահովել համապատասխան սերմերով, օգտագործել բնական և հանքային պարարտանյութեր, հոգ տանել անասունների ցեղայնությունը բարելավելու համար և այլն: Այդ որոշումը կատարելու համար հրավիրվում էին տարբեր բնույթի խորհրդակցություններ, որտեղ ստանձում

էին նոր պարտավորություններ: 1950 թ. Ստեփանակերտում տեղի ունեցած շերամապահների մարզային խորհրդակցությունը, քննարկելով մարզմետաքսի կառավարիչ Ա. Գրիգորյանի զեկուցումը, նշեց, որ մարզում գրեթե ամեն տարի կատարվում է բոժոժի պլանը, իսկ 1949 թ. կատարվել է 108.4%-ով: Միջին հաշվով յուրաքանչյուր տուփից պլանային 52.5 կգ-ի դիմաց ստացվել և պետությանն է հանձնվել 58.8 կգ բոժոժ: Շերամապահությամբ զբաղվող մարզի 146 կոլտնտեսությունից 104-ը գերակատարել էին բոժոժահանձնման պլանը: Մարտունու շրջանի շրջկենտրոնի Սյասնիկյանի անվան կոլտնտեսությունը 104 տուփ գրեմայի յուրաքանչյուր տուփից ստացել էր 66.5 կգ բոժոժ և բոժոժահանձնման պլանը կատարել 112.9%-ով: Իսկ Մարտակերտի շրջանի Մարալյան-Մարով գյուղի Շահունյանի անվան կոլտնտեսությունում յուրաքանչյուր տուփ գրեմայից ստացել էին 72 կգ բոժոժ: Բոժոժահանձնման պլանները կատարել էին տասնյակ կոլտնտեսություններ: 1949 թ. շերամապահության բոլոր 118 բրիգադներն ու օղակները 665 տուփ գրեմայի յուրաքանչյուր տուփից միջին հաշվով ստացել էին 68 կգ բոժոժ¹⁴:

Այդ խորհրդակցությունում բացահայտվեցին նաև բավականին թերություններ: Օրինակ կատարվում էին միջոցների գերծախսումներ, և բոժոժից ստացված եկամուտը չէր փակում կատարված ծախսերը, կոլտնտեսությունները կրում էին վնաս: Ելույթ ունեցած բոլոր 22 հոգին էլ խիստ քննադատության ենթարկեցին գյուղատնտեսության վարչությանը, շրջխորհուրդներին, շրջմետաքսի ղեկավարությանն ու մասնագետներին, որոնք լուրջ ուշադրություն չէին դարձնում մասնավոր բոժոժի ինքնարժեքի իջեցման հարցին:

Մարզի գյուղատնտեսության մեջ կարևոր տեղ ուներ անասնապահությունը: 1950 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի կոլտնտեսություններում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նախորդ տարվա համեմատությամբ աճել էր 3.6%-ով, խոզերինը՝ 28.7, թռչուններինը՝ 58.2: Միայն 1949 թ. մարզում կազմակերպվել էին անասնաբուժական 103 նոր ֆերմաներ, կառուցվել էին 112 անասնազոմ, 25 ձիանոց, 126 ոչխարանոց և այլն¹⁵: Այդ ժամանակ կարևոր հարց էր անասունների գլխաքանակի անկումը կանխելու խնդիրը: Դրա համար մոբիլիզացրեցին անասնաբույժներին, և պահանջվեց հնարավոր միջոցառումներ ձեռնարկել և կանխել ինչպես անասունների, այնպես էլ թռչունների անկումը:

Սեփական հաց ունենալը միշտ էլ անհանգստացրել է արցախցիներին, և հացի պակասը հանդիսացել է տարագնացության հիմնական պատճառը: Բազմիցս հարց է դրվել մարզն ապահովել սեփական արտադրության հացով: 1950 թ. օգոստոսի 19-ին տեղի ունեցավ

մարզային կուսակցական ակտիվի ժողովը, որտեղ զեկուցումով հանդես եկավ մարզկոմի առաջին քարտուղար Ս. Աբրամովը, և ընդունվեց կոնկրետ որոշում մարզը սեփական հացով ապահովելու վերաբերյալ: Դա նախ և առաջ ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր էր¹⁶: Նույն թվականին խոշորացվել է տասնյակ կոլտնտեսություններ: Քազրատ Ուլուբայամը, «խոշորացված կոլտնտեսությունը և նրա հեռանկարները» հողվածում խոսելով երկու ճարտարների կոլտնտեսությունների միավորման մասին, վեր է լուծում խոշորացման առավելությունները: Միավորված այդ երկու տնտեսությունները բաղկացած էին 900 տնտեսություններից, ունեին 4500 բնակիչ, 3400 հա ցանքատարածություն, 250 հա խաղողի, 60 հա թթի, 30 հա պտղատու այգիներ, 2200 գլուխ խոշոր և 6000 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 300 ծի, 5000 թռչուն, 500 խոզ և այլն: Խոշորացված տնտեսությունը ռեալ հնարավորություն ուներ այդ ամենը կրկնապատկելու¹⁷: Այսպիսի խոշորացված կոլտնտեսությունների թիվը մարզում հասնում էր մի քանի տասնյակի: Սակայն փորձը ցույց տվեց, որ ոչ բոլոր կոլտնտեսությունների խոշորացումն էր նպատակահարմար: Գետագայում ստիպված էին սխալն ուղղել և ապախոշորացնել կոլտնտեսությունները:

Չորրորդ հնգամյակի վերջին երկու տարիներին ցանքատարածություններն ընդլայնվել էին 14 հազար հեկտարով: Մարզում գործում էր ագրոտեխնիկական և գոտեխնիկական 78 խմբակ, որտեղ գիտելիքներ էր ձեռք բերում ավելի քան 2000 մարդ: Արցախի հացագործները պայքարում էին հեկտարից ստանալ մինչև 20 ց հացահատիկ: Կային և կոլտնտեսություններ, որոնք խոստացան այդ թիվը հասցնել 22–25 ցենտների, իսկ ոռոգվող հողամասերը մեկ հեկտարից մինչև 26–30 ց: Դրա համար ցանքի մեջ էին մտցրել 4000 տ հանքային պարարտանյութ և 100000 տ գոմաղբ:

Մարզում հացահատիկի արտադրության վերելքը ապահովելու համար նախ և առաջ պետք է օգտագործվեին նոր տեխնիկա և տեխնոլոգիա, հողամշակման առաջավոր մեթոդներ, օգտագործել հացահատիկայինների նոր տեսակներ և այլն: 1952 թ. հունվարի 15–ին տեղի ունեցած մարզկոմի 4–րդ պլենումը, քննարկելով մարզխորհրդի նախագահ Ե. Ակոպովի զեկուցումը՝ 1951 թ. մարզի գյուղատնտեսության արդյունքների վերաբերյալ, ըստ էության լիովին չբացահայտեց մարզում հողագործության և անասնաբուծության ետ մնալու պատճառները: 1951 թ. եզրափակվել էր ցածր ցուցանիշներով: Չէին կատարվել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության, հանրային անասնաբուծության զարգացման, բանբակի և ծխախոտի պլանները: Հանրային

անասնաբուծությունը զտնվում էր ծայրաստիճան անբավարար վիճակում: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի տարեկան պլանը կատարվել էր 94.5%–ով, մանր եղջերավոր անասուններինը՝ 89.5, խոզերինը՝ 93: Իրավիճակն առավել վատ էր Մարտակերտի, Ստեփանակերտի և Մարտունու շրջաններում: Այդտեղ կոշտ կերերի մթերման պլանային առաջադրանքը կատարվել էր 44%–ով, սիլոսացումը՝ 42.5: Նախորդ տարում մեկ ոչխարից խուզվել էր հազիվ 1.2 կգ բուրդ, իսկ մեկ ֆուրաժային կովից կթվել էր 262 լիտր կաթ: Մարզի ղեկավարության ուշադրությունից դուրս էին մնացել գյուղատնտեսության մեքենայացման և էլեկտրիֆիկացման հարցերը: Պարզվում է, որ մարզի կոլտնտեսությունների մեծամասնությունում չէին պահպանվում ագրոտեխնիկական կանոնները, ցածր էր դաշտային աշխատանքների որակը, ծախսողվում էր հացահատիկային և կերային կուլտուրաների բերքատվության ապահովման հարցը: Մասնագետների հետ գրեթե աշխատանքներ չէին տարվում, կաշառակերներն ու խաբեբաները չէին հեռացվում աշխատանքից: Մարզում ընդհանուր պայքար չէր ծավալվում հանրային սեփականությունը հափշտակողների դեմ: Բերված փաստերը համոզում են, որ մարզային ղեկավարության ուշադրությունից լրիվ վրիպել էր գյուղատնտեսությունը:

Այդ, մարզում ամեն ինչ նորմալ չէր ընթանում, թերությունները գլուխ էին բարձրացրել, որի հետևանքով խստորեն տուժվում էր արտադրությունը: 1952 թ. ապրիլին տեղի ունեցած մարզային ակտիվի ժողովը, որտեղ զեկուցումով հանդես եկավ քարտուղար Եղիշե Գրիգորյանը, նշեց, որ մի շարք կոլտնտեսություններում յուրացնում են հանրային հողերը, հացահատիկը, հարյուրավոր խոշոր և մանր եղջերավոր անասուններ, դրամական միջոցներ և այլն: Ելնելով ստեղծված իրավիճակից և մարզի բնակչության պահանջից պաշտոնից ազատվեցին 19 կոլտնտեսության և 52 վերստուգիչ հանձնաժողովների նախագահներ: Հավաքում նաև շեշտվեց, որ հաշվարկի վատ դրվածքի հետևանքով 17 կոլտնտեսություններում 1951 թ. շռայլվել էր 7500 աշխօր, իսկ 3600 հոգի էլ չէր կատարել աշխօրի մինիմումը¹⁸:

Այդ բոլորը նկատի ունենալով՝ մարզում մասսայական պայքար սկսվեց նման տեսակի խախտումները վերացնելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար: Պայքարն անձամբ ղեկավարում էր մարզկոմի առաջին քարտուղար Ե. Գրիգորյանը: Նա Ադրկոմկուսի 19–րդ համագումարին զեկուցեց, որ մարզը կատարել է 1952 թ. հացամթերման պլանը, և պետությանը հանձնվել է 509 հազար փոփ ավելի հացահատիկ, քան հանձնվել է 1951 թ.: Բրդի հանձնման պլանը կատարվել է 109, բոժոժինը՝ 100.5%–ով:

Ստալինի մահից հետո՝ 1953 թ. սեպտեմբերին, տեղի ունեցած ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը նոր հնարավորություններ բացեց ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսության և մյուս ճյուղերի զարգացման համար: Ն. Խրուշչովը այդ պլենումում ընտրվելով ՍՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, նկատելի աշխատանք կատարեց երկրում ժողովրդավարությունը զարգացնելու և երկրի պատմության մեջ սև էջերը խարազանելու գործում: Նրա սկսած բուռն գործունեությունը նպաստեց երկրի կյանքի աշխուժացմանը: Այն նորը, որը բերեց Խրուշչովը, սառցահալոց էր, որը, սակայն, առաջ չգնաց:

Մարզի գյուղատնտեսության զարգացմանը նպաստում էին նաև գյուղատնտեսական ցուցահանդեսները: Մարզում այն բացվեց 1952 թ. գյուղատնտեսական տեխնիկումի շենքում: Գուցահանդեսի նյութերից իմանում ենք, որ հացահատիկայինների, բամբակի և խաղողի ռեկորդային բերք աճեցնելու համար մարզից 17 հոգու շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, հարյուրավոր մարդիկ պարգևատրվել էին Խորհրդային Միության շքանշաններով և մեդալներով: Ըստ ցուցահանդեսի տվյալների՝ այդ վերջին երկու տարիներին հացահատիկայինների ցանքերի տարածությունն ավելացել էր 9300 հա-ով, 1949 թ. համեմատությամբ բերքատվությունը բարձրացել էր 229%-ով: Բարձր բերք էին ապահովել ճարտարոհները, շխեր-ցիները, սոսեցիները և այլ կոլտնտեսություններ: Մարտակերտի շրջանի Ֆրունզեի անվան կոլտնտեսությունում Աոնյա Բալադյանը իր աճեցրած բամբակի բարձր բերքի համար արժանացել էր Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Նա 6 հա տարածություն ապահովել է հեկտարից 84 ց բամբակի հումք: 1952 թ. Բալադյանի օղակը պլանը կատարել էր 200%-ով:

Չեռնարկված մի շարք միջոցառումների շնորհիվ սկսեց վերելք ապրել անասնապահությունը: Մեկ տարում անասունների զխաքանակն ավելացել էր 127%-ով: Առաջընթաց էր ապրում մանավանդ խաղողագործությունը, որը լայնորեն ցուցադրված էր ցուցահանդեսում: Ղար-գինտրեստի N1 պետտնտեսությունում եթե 1940թ. ստացվել է 531 տոննա խաղող, ապա 1950-ին այն հասցվել էր 1160, իսկ 1952-ին՝ 1634 տոննայի: 1946 թ. համեմատությամբ թթի այգիներն ավելացել էին 50%-ով¹⁹: Իրոք, 50-ական թթ. սկզբներին տասնյակ կոլտնտեսություններ հասել էին արտադրական բարձր ցուցանիշների և հանդիսանում էին մարզի հպարտությունը: Թերևս արժե հիշատակել ճարտարի կոլտնտեսության

ճախագահ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Սուրեն Աղամյանին: Ինչպես ինքն է խոստովանել, իր սխրանքների ու աննախադեպ նվաճումների համար նա պարտական էր ճարտարի հասարակությանը²⁰:

Սուրեն Հարությունի Աղամյանը ծնվել է Գյումե ճարտարում 1913 թ. մայիսի 10-ին, չքավոր գյուղացու ընտանիքում: Նա վաղ մանկությունից զրկվել է հորից: Փոքր հասակից այքի էր ընկնում քչախոսությամբ, խելամիտ էր ու գործունյա: Ավարտելով գյուղի յոթնամյա դպրոցը կրթության ծարավը նրան տանում է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկում: Այն գերազանց գնահատականներով ավարտելուց հետո բարձրագույն կրթություն է ստանում Երևանում և համալսարանն ավարտելուց հետո վերադառնում հայրենի ճարտար ու գյուղի յոթնամյա դպրոցում աշխատում որպես պատմության դասատու, այնուհետև դպրոցի տնօրեն: Պատերազմի տարիներին գորակոչվել է խորհրդային բանակ: Ջորաջվելուց հետո անցնում է իր պաշտոնին: 1945 թ. ստանձնելով կոլտնտեսության նախագահի պաշտոնը՝ աստիճանաբար դրսևորվում է նրա տաղանդը: Այդ նրա օրոք կառուցվեցին 750-տեղանոց մշակույթի պալատ, 500-տեղանոց միջնակարգ դպրոցի շենք, 50-մահճակալանոց հիվանդանոց, կոլտնտեսության վարչական շենք, հյուրանոց, հանգստի տուն, 1941-1945 թթ. Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձան, բաղնիք, ալրադաց, հացի փուռ, գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգման արհեստանոց, 400 գլուխ կովի համար կովանոց, ջրամբարներ՝ իրենց ոռոգման ցանցերով, 12 հատ արտեզյան հորատանցներ, ամբողջ ճարտարների էլեկտրիֆիկացում, 10 կմ երկաթուղային ավտոճանապարհ, գինու գործարան և այլն²¹: Որ ճարտարի կոլտնտեսությունը տարեցտարի վեր էր բարձրանում և նվաճում նորանոր բարձրումներ, դա անկասկած էր:

Սուրեն Աղամյանի կողքին կարելի է հիշատակել նաև արտադրության գիտակներ Սոսի Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ Արսեն Մուքուչյանին, Մարտակերտի ԽՄԿԿ 22-րդ կուսհամագումարի անվան պետտնտեսության տնօրեն Սամվել Մամունցին և ուրիշների:

ԽՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան և 1954 թ. փետրվարյան պլենումների որոշումները մի տեսակ դժվար էին տեղ գտնում ԼՂԻՄ կյանքում: 1954 թ. ապրիլին տեղի ունեցած մարզկոմի պլենումը նշեց, որ չնայած մարզի տնտեսության մեջ նշմարվում էին որոշակի հաջողություններ, սակայն դրանք դեռ անբավարար են: Դեռևս լուրջ ուշադրություն չէր դարձվում կոլտնտեսությունների նախագահների ընտրության և դաստիարակության հարցին: Բարձիթողի վիճակում էր գտնվում հացահատիկային տնտեսության զարգացումը: Կոլտնտեսային կյանքում

անբավարար էին արմատավորվում գիտության նվաճումները, նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրումը, առաջավորների փորձի ուսումնասիրումն ու տարածումը²²։

Դեռ 30-ական թվականներից կյանք էր մտել կոլտնտեսություններին շեֆական օգնություն ցույց տալը։ Կուսակցության 1953 թ. սեպտեմբերյան 11-ի նիստի որոշմամբ հետո մարզի 23 արդյունաբերական ձեռնարկություններ ստանձնել էին 26 կոլտնտեսությունների շեֆությունը։ Վերցրած պարտավորությունները լավ էր կատարում «Մերելչիկ» արտելը, որը օգնում էր Զարավի Ֆիոլետովի անվան կոլտնտեսությանը, մասնավոր կերերի և հանքային պարարտանյութերի տեղափոխման գործում։ Ստեփչր-ջարդկոմբինատը Բալլուջայի կոլտնտեսությանն օգնում էր խտացրած և կոպիտ կերերով։ Կոմբինատի աշխատողները կիրակի օրերին մեկնում և աշխատում էին կոլտնտեսությունում։ Մարզի արդյունաբերական ձեռնարկությունները կոլտնտեսություններին օգնում էին խոպան հողերի յուրացման գործում։ Այդ օգնությամբ է, որ Մարտունու շրջանի Դզդալայի կոլտնտեսությունը յուրացրել էր 150 հա խոպան հողեր²³։

Չեռպատերազմյան տարիներին մարզում անասնապահության զարգացումը սերտորեն կապված էր Լիսագորի ցեղային անասնաբուծական պետտնտեսության հետ։ 1952-53 թթ. ձեռք բերած բարձր ցուցանիշների համար պետտնտեսությունը ներկայացվել էր Դամասիոսե-նական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու թեկնածու։ Այստեղ եթե 1940 թ. ֆուրաժային կովի միջին կաթնատվությունը եղել է 1765 կգ, ապա 1953 թ. այն հասել էր 2260 կգ։ Այդ նույն թվականին կթվորուհի Վարդանուշ Սելբումյանն իրեն ամրացված 14 կովից ստացել է յուրաքանչյուրից միջին հաշվով 3198 կգ կաթ, իսկ առանձին՝ մինչև 4816 կգ կաթ²⁴։ Լիսագորի պետտնտեսությունը սիստեմատիկ օգնում էր մարզի և հարևան շրջանների կոլտնտեսությունների ֆերմաներին, մասնավոր կովերի տոհմաբարելավման գործում։

1954 թ. հուլիսի սկզբին Ստեփանակերտում երկու օր շարունակված հանրապետության անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտի գիտական նստաշրջանը վերլուծեց մարզի անասնապահության զարգացման ընթացքը և բացահայտեց այդ բնագավառում գոյություն ունեցած մի շարք դրական և բացասական կողմեր։ Գիտաժողովում հատուկ ուշադրությամբ լսվեց Մարտունու շրջանի ճարտարի Ստալինի անվան կոլտնտեսության նախագահ Սուրեն Ադամյանի զեկուցումը անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման բնագավառում իրենց կոլտնտեսության ձեռք բերած փորձի մասին։ Գիտական նստաշրջանը մի շարք առաջարկություններ մտցրեց մարզում անասնաբուծության հետագա զարգացման և մթերատվության բարձրացման վերաբերյալ²⁵։

Կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցը դարձել էր կուսակցական և պետական մարմինների հետագա քննարկման առարկա։ 1955 թ. հունվարի սկզբին տեղի ունեցած կուսակցության մարզկոմի պլենումը, քննարկելով կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատանքի կազմակերպման մասին գյուղատնտեսության մարզային վարչության պետ Ս. Միքայելյանի զեկուցումը, ընդունեց որոշում մարզի կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու վերաբերյալ։ Նշվեց, որ Մարտունու շրջանը հացահատիկի բարձր բերք ստանալու համար կմասնակցի Դամասիոսե-նական գյուղատնտեսական ցուցահանդեսին։ Նաև նշվեց, որ գյուղատնտեսության ետ մնալու հիմնական պատճառը դաշտավարական և տրակտորային բրիգադներում աշխատանքի վատ կազմակերպումն է, աշխօրերի շռայլումը, աշխատապայմանների անբավարար լինելը և այլն։ Մարզում շատ դանդաղ էր զարգանում հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացումը, չէին մեծանում կոլտնտեսությունների անբաժան ֆոնդերը։ Եթե 1950 թ. մարզում այն կազմել է 1827162 ռ., ապա 1953 թ. այն աճել էր ընդամենը 7%-ով։

Ադր. ԽՍՀ նախարարների խորհուրդը և կուսակցության Կենտկոմը 1955-ի սկզբին հաստատեց 1955-1960 թթ. ԼՂԻՍ գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների պլանը, ըստ որի նախատեսվում էր 1960 թ. արտադրել է 73000 տ հացահատիկ, 2400 տ բանջարաբուստանային կուլտուրաներ, բամբակի ցանքսը հասցնել 4000 հա-ի, իսկ բերքատվությունը՝ հեկտարից 28 ց, ծխախոտի ցանքսը՝ 350 հա-ի, խաղողի տարածքը՝ 800 հա-ի և այլն։ Նախատեսվում էր մարզում կառուցել բանջարանոցակարտոֆիլային մեծ պահեստ՝ 250 տ տարողությամբ, կոլտնտեսային շուկաներ Ստեփանակերտում և Շուշիում²⁶։

1951-1955 թթ. հնգամյա պլանի խնդիրները դժվարությամբ էին կատարվել։ Այդ հնգամյակի վերջին տարում ցանքատարածություններն ընդարձակվել էին 9092 հեկտարով։ Կարևոր խնդիր է եղել անասունների գլխաքանակի պլանի կատարումը։ ԼՂ մարզկոմի պլենումը, 1956 թ. մայիսին քննարկելով կոլտնտեսություններում խոզաբուծության դրվածքի հարցը, միջոցառումներ մշակեց այդ ճյուղի հետագա զարգացման համար։ Նշվեց, որ 1955-ին յուրաքանչյուր 100 հա հողահանդակի դիմաց մարզում ստացվել էր 14.6 ց խոզի միս, և այն կազմել էր ընդհանուր արտադրության 24.6%-ը։ Նախատեսվում էր 1957-ին արտադրված ամբողջ մսի 50%-ը արտադրել խոզի միս²⁷։ 1956 թ. մայիսին «Կոմունիստ» թերթում տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ այդ վերջին երկու տարում մարզում խոզերի գլխաքանակն ավելացել էր 11700-ով,

որոնցից բաժնի և մասնաբաժնի 10 հազար 400 գլուխ յուրաքանչյուրը 90–100 կգ կենդանի քաշով: Հնգամյակի վերջին տարում 1955–ին, արտադրվել էր 1928 տ միս, որը 1950 թ. համեմատությամբ 780 տ–ով ավելի էր: Մարզի կոլտնտեսությունները միայն 1956 թ. անասնաբուծության այս ճյուղից ստացել էին ավելի քան 6 մլն ռ. եկամուտ: Մարզի կոլտնտեսությունները պլանավորել էին 1956 թ. յուրաքանչյուր 100 հա հողատարածությունից ստանալ 21.8 ց խոզի միս²⁸:

Հատկանշական է, որ հարթավայրային շրջանների կոլտնտեսություններն ավելի հարուստ էին, քան լեռնային շրջանների կոլտնտեսությունները: Դրա հիմնական պատճառների մասին հանդես գալով մամուլում է. Ալեքսանյանը փորձում էր ցույց տալ, թե ինչ ուղիներով պետք է զարգացնել նաև լեռնային շրջանների կոլտնտեսությունները: Հեղինակը օրինակ է բերում, որ բուսաբուծության գծով մարզում 1955 թ. ծախսվել է 4744400 աշխօր, իսկ անասնաբուծության գծով՝ 2969000 աշխօր, ըստ որում բուսաբուծությունից ստացված եկամուտները կազմել են 34953 հազար ռուբլի, իսկ անասնաբուծությունից՝ 34306 հազար ռ.: Պարզվում է, որ լեռնային շրջաններում չէին կատարվում անասունների գլխաքանակի ավելացման պլանը: Դա մասամբ երևում էր Շուշիի շրջանի ութ կոլտնտեսությունների օրինակի վրա: Այդ կոլտնտեսություններում դաշտավարության գծով ծախսվել էր 167380 աշխօր, իսկ ստացվել էր 284949 ռ., մինչդեռ անասնաբուծության գծով ծախսվել էր 131201 աշխօր, և ստացվել է 1065729 ռ.: Այսպիսով, եզրահանգում է հեղինակը, դաշտավարության գծով մեկ աշխօրի դիմաց ստացվել էր 1 ռ. 70 կ. եկամուտ, իսկ անասնաբուծության գծով՝ 8 ռ. 20 կ.: Հաղորդի շրջանի Շահունյանի անվան կոլտնտեսությունում 1955 թ. բուսաբուծության գծով ծախսվել էր 71718 աշխօր և ստացվել 90280 ռ. եկամուտ, անասնաբուծության գծով՝ 50912 աշխօր, իսկ ստացվել է 733435 ռ. եկամուտ: Բուսաբուծության բնագավառում ծախսված յուրաքանչյուր աշխօրին ընկնում էր 1 ռ. 40 կ., իսկ անասնաբուծության բնագավառում՝ 14 ռ. 20 կ.:²⁹ Հետևապես՝ լեռնային շրջաններում օգտավետ էր զբաղվել անասնաբուծությամբ, իսկ հարթավայրային շրջաններում՝ բուսաբուծությամբ:

Մարզում բամբակ մշակվում էր միայն Մարտակերտի շրջանում: Այստեղ բամբակի մշակումը սկսվել էր դեռ նախահեղափոխական շրջանից: Այն լայն թափ էր առել խորհրդային տարիներին: 1930 թ. Մարտակերտի շրջանում ցանվել էր 2100 հա բամբակ, և պետությանն էր հանձնվել 716 տ բամբակի հումք: Արդեն 1953 թ. բամբակի ցանքաը հասել էր 3000 հա, և ստացվել էր 6173 տ բամբակ: Դա ռեկորդային բերք էր: Սակայն, սկսած այդ ժամանակաշրջանից, այն զարգացում էր առաջ մղվում, թե մարտակերտցիներին պարտադրված բամբակագործությունից պետք է աստիճանա-

մաբար հրաժարվել և լայն ասպարեզ տրամադրել խաղողագործությանը: Բայց դա դեռ հեռանկարային էր, գիտականորեն ճիշտ կանխատեսում: Միայն 1957 թ. հուլիսին տեղի ունեցած մարզկոմի հինգերորդ պլենումը նշեց, որ չնայած ԽՄԿԿ 20–րդ համագումարից հետո մարզում որոշ աշխատանքներ բարելավվել են, սակայն տեղ են գտել նաև լուրջ թերություններ: Դեռևս ցածր էր գյուղատնտեսության և արդյունաբերության ղեկավարման մակարդակը: Պահանջվեց ուժեղացնել ՄՏկայանների ղեկավարությունը, ամրապնդել պետական և կուսակցական կարգապահությունը, զարգացնել գյուղատնտեսության առավել եկամտաբեր և հեռանկարային ճյուղերը, առանձնապես խաղողագործությունը: Սակայն պարզվում է, որ այդ վերջին տարիներին խաղողի, կարտոֆիլի և պտղատու այգիների տարածքներ ընդլայնվելու փոխարեն պակասել էին: Մարզկոմի պլենումը պահանջեց բացահայտված թերությունները վերացնելու համար ձեռնարկել վճռական միջոցառումներ³⁰:

Ինչպես նշվեց, մարզում ամենահեռանկարայինը խաղողագործության զարգացումն էր: Նախնական հաշվումներով երկրամասը կարող էր տարեկան տալ մի քանի հարյուր հազար տ խաղող: Մարզի տարածքում խաղողը առատ բերք է տալիս հատկապես հարթավայրային և նախալեռնային շրջաններում: Օրինակ՝ Ճարտարի կոլտնտեսությունում խաղողի այգիները ավելացել էին 62 հեկտարով և հասել 219 հա: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Մարտունու շրջանում կոլտնտեսությունների ընդհանուր եկամտի 41.1%–ը ստացվել էր խաղողագործությունից և պտղաբուծությունից: Այդ թիվը Հաղորդի շրջանում կազմում էր 32%: Սակայն ոչ բոլոր տեղերում էր վիճակը բարվոք: Մարտակերտի շրջանում, օրինակ, վերջին տարիներին շարքից դուրս էր եկել 437 հա խաղողի այգի, իսկ Ստեփանակերտի շրջանի կոլտնտեսությունների 1956 թ. 418 հա խաղողի այգիներից ստացվել էր հեկտարից ընդամենը 10–ական ցեմտներ խաղող:

Մարզում իր զբաղեցրած տարածքով խաղողեցունց հետո երկրորդ տեղը զբաղեցնում էին շաիթների այգիները: 1950–1955 թթ. մարզում տնկվել էր 542 հա թթենու այգի: Թուրք շաիթաբեր պտուղ է, և այն հիմնականում տարածված է Մարտունու, Հաղորդի և Ստեփանակերտի շրջաններում: 1950–ական թթ. գյուղատնտեսության մեջ առաջնակարգ տեղ ունեցող խաղողի և թթի արտադրության բազմապատկումը օրակարգի խնդիր էր դարձել: Ելնելով դրանից՝ մարզի ղեկավարությունը պարտավորվել էր մինչև 1960 թ. հիմնադրել 2500 հա խաղողի և թթենու նոր այգիներ:

Մարզի կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները յոթնամյակը սկսեցին լրջորեն: Ցանքատարածությունները հասցրվեցին 84 հազար հեկտարի, որից 63.5 հազարը հացահատիկային կուլտուրաներ

էին: Հացահատիկային կուլտուրաների այդքան ցանքս մարզում առաջին անգամն էր կատարվում, ըստ որում առաջին անգամ կատարվել էր 40.5 հազար հա ցորենի ցանքս: Վճռական քայլ էր կատարվել նաև անասունների գլխաքանակն ավելացնելու ուղղությամբ: Յոթնամյակի սկզբին մարզն ուներ 82.4 հազար խոշորեղջերավոր անասուն, 285.2 հազար մանր եղջերավոր անասուն, 47.6 հազար խոզ: Փաստորեն, մանր եղջերավոր անասունների գլխաքանակի այդ մակարդակի ավելացումը թուրքական գործոնի հետևանք էր: Մասնագետների հաշվումով Լեռնային Ղարաբաղը հնարավորություն ուներ պահել հազիվ 100–120 հազար ոչխար: Այն ժամանակվա ղեկավար այրերից մեկը մի առիթով ասել է, որ ազերի իշխանությունը փորձում է արցախցիներին պարտադրել ոչխարների թիվը հասցնել 400 հազարի: Քանի որ ոչխարաբուծական ֆերմաներում աշխատողների 80–90%–ը թուրքեր էին, ապա տեսե՞ք ինչքան թուրք ընտանիքներ պետք է տեղավորվեին մարզի հայկական գյուղերում: Բացի այն, որ խախտվում էր մարզի էթնիկական կառուցվածքը, ոչխարաբուծական ճյուղը գրեթե լրիվ անցնում էր թուրքի ձեռքը, և բավականին վարելահողեր ու արտավայրեր տրամադրվում էին զարգացող թուրք ընտանիքներին բնակարաններ կառուցելու համար: Թուրքը ձգտում էր իր ձեռքը վերցնել նաև անտառատնտեսությունը, խաղողի արտադրության զգալի մասը, ներքին շուկան, ավտոձեռնարկությունները և այլն: Թուրքը ահա այսպես էր սկսել նվաճել Արցախ–Ղարաբաղը: Եվ հիմքը ոչխարաբուծությունն էր:

Յոթնամյակի պլանով մսի արտադրությունը պետք է ավելացվեր 2, կաթինը 2.5 անգամ, բրդինը՝ 84%–ով, բամբակի բերքատվությունը՝ 35%–ով, հացահատիկի համախառն արտադրանքը՝ 1.7 անգամ, ծխախոտի համախառն բերքը՝ 30, կարտոֆիլինը՝ 90, բանջարեղենինը՝ 36, բոժոժինը՝ 30%–ով և այլն: Այդ ամենին հասնելու համար պահանջվում էին մեծ ջանքեր: Կուլտնտեսություններն ու պետական տնտեսությունները պայքարում էին յոթնամյա պլանը ավարտել ժամկետից շուտ և տալ բավականին քանակությամբ գերարտադրանք: Յոթնամյակի սկզբից կարևոր ուշադրություն էր դարձվում խոզի մսի արտադրության ավելացմանը: Այդ բնագավառում հաջողություններն ավելի մեծ կլինեին, եթե մարզն ունենար խտացրած կերերի արտադրության գործարան: Տարիներ շարունակ բարձրացված այդ հարցը մերժվում էր ազերի թուրք իշխանության կողմից: Մարզի կուլտնտեսություններն ու պետտնտեսությունները խտացրած կերեր բերում էին Հորադիզ, Եվլախ կայաններից ու Կիրովաբադից, այն էլ՝ մեծ պակասորդով: Յոթնամյակի առաջին տարում, օրինակ, Մարտակերտի Լենինի անվան կուլտնտեսությունում մսի մաճառման առաջադրանքի 48%–ը կատարվել էր խոզի մսի

հաշվին: Այդ կուլտնտեսությունը 1960 թ. ուներ 700 գլուխ խոզ: Այնտեղ մեկ խոզամերունից տարեկան ստանում և պահպանում էին 11.3 խոճկոր: Կուլտնտեսությունը խոզաբուծությունից 1959 թ. ստացել էր 330 հազար ռուբլի դրամական եկամուտ: Այդ տեսակետից Լենինի անվան կուլտնտեսությունը մարզում եզակի չէր: Մարտունու շրջանի ճարտարի կուլտնտեսությունում 1959 թ. արտադրվել է 645 ց խոզի միս կամ յուրաքանչյուրի 100 հա վարելահողի դիմաց՝ 18 ց: Այդ նույն թվականին ճարտարի կուլտնտեսությունում խաղողաբուծությունից ստացվել էր ավելի քան կես միլիոն ռուբլու դրամական եկամուտ, և զգալիորեն իջեցվել խոզի մսի ինքնարժեքը³¹: Խոզի մսի արտադրությունը բարձրացնելու համար շատ կարևոր է խոզամերունների գլխաքանակի ավելացումը: Սակայն ի՞նչ է պարզվում: 1953–1960 թթ. մարզում խոզամերունների գլխաքանակը պակասել էր 5674–ով, որից 2473–ը՝ Մարտակերտի շրջանում: Այդ նշանակում է՝ կուլտնտեսություններն ու պետական տնտեսությունները պակաս են ստացել մոտ 60 հազար խոճկոր, կամ պակաս է արտադրվել վեց հազար տոննա միս: Խոզերի վատ խնամքի և անուշադրության հետևանքով մարզի կուլտնտեսությունները 1959 թ. խոզի մսի պլանը թերակատարել են 499%–ով³²: Վատ է, բայց անհուսալի չէր, որովհետև մարզի տասնյակ կուլտնտեսություններ և պետական տնտեսություններ լուրջ հաջողությունների էին հասել հենց խոզի մսի արտադրության բնագավառում: Քայլեր էին ձեռնարկվում անասնապահությունը, մասնավոր խոզաբուծությունը մարզի ամենաեկամտաբեր ճյուղերից մեկը դարձնել: 1959 թ. ապրիլին տեղի ունեցած մարզային ակտիվի խորհրդակցությունը, քննարկելով անասնաբուծության վիճակի և նրա հետագա զարգացման խնդիրների հետ առնչվող հարցը, նշեց, որ ԽՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո կովերի գլխաքանակը մարզի կուլտնտեսություններում ավելացել է 2794–ով կամ 17%–ով, ոչխարներինը՝ 82264–ով, ֆուրաժային կովի կաթնատվությունը 457 կգ–ից հասցվել է 1072 կգ–ի: 1953 թ. անասնաբուծությունից ստացված 19 մլն 877 հազ. ռ. դիմաց 1958–ին կուլտնտեսությունները ստացել են 59 մլն 738 հազ. ռ. դրամական եկամուտ, մոտավորապես 3 անգամ ավելի: Սակայն այդ ժամանակաշրջանում կուլտնտեսությունները պակաս էին արտադրել 1135 տ կաթ³³:

1959 թ. զարմանը տեղի ունեցած գյուղատնտեսության երիտասարդ առաջավորների մարզային հավաքի մասնակիցները, դիմելով մարզի գյուղական երիտասարդությանը, կոչ են արել անասնապահության, բամբակաբուծության, այգեգործության, ծխախոտագործության և եգիպտացորենի արտադրությամբ գերակատարել յոթնամյակի առաջադրանքները³⁴:

Յոթնամյակի տարիներին շարունակում էին ավելանալ ցանքատա-
րածությունները, և 1959-ին այն կազմեց 89670 հազար հա: Դա թերևս
ամենաբարձր ցուցանիշն էր: Հիմնականում ցանվում էր «Արանդանի»
պինդ ցորենի տեսականի, որը դեռևս 1948 թ. նվաճել էր առաջին տեղը
և զբաղեցնում էր աշնանացան ցորենի 75%-ը: Ցանում էին նաև «Շարզ»
նոր տեսականի: Այն ցանվում էր հարթավայրային չորային գոտում: Նա-
խալեռնային և միջին գոտու համար ցորենի լավագույն սորտ դարձավ
«Անինց» տեսականին, իսկ բարձր լեռնային գոտում պահպանվում էր
«Կարմիր գյուրջանի» փափուկ ցորենի հին տեսականին: Յոթնամյա
պլանով նախատեսված էր մարզում հացահատիկի արտադրությունը
1965 թ. հասցնել 73700 տ:

Մարզում, որպես նոր բուսատեսակ, հետզհետե լայնորեն տարած-
վում էր եգիպտացորենը: Արդեն այն հասել էր 10392 հա: Սակայն բեր-
քատվությունը խիստ ցածր էր: Համեմատաբար բարձր բերք էին ստա-
նում Մարտակերտի շրջանի որոշ կոլտնտեսություններ: Նախատեսված
էր եգիպտացորենի ցանքսի տարածությունը յոթնամյակի վերջին հասց-
նել 16600 հա: Եգիպտացորենը խիստ անհրաժեշտ էր մանավանդ
անասնապահության զարգացման համար:

1956 թ. մարզում հավաքվել էր 7541 տ բամբակ, որը համեմատա-
բար ավելին էր, քան ստացվել էր 1913 թ.: Լեռնավանի, Մարտակերտի
և Սեյսուլանի կոլտնտեսություններում հեկտարից տարեկան ստանում
էին 27-30 ց բամբակ: Մարտակերտի շրջանում առանձին դրամական
եկամուտների մոտ 40%-ը ստանում էին բամբակագործությունից:
Շրջանում լայնորեն պայքարում էին բամբակի արտադրությունը 8000
տոննայի հասցնել:

Մարզում ծխախոտագործությամբ զբաղվում էին այն կոլտնտեսու-
թյունները, որտեղ բնակչիմայական պայմանները նպաստավոր էին:
Ծխախոտագործությամբ զբաղվում էին Տողի, Խոջալուի, Դաշբուլաղի,
Հաթերքի, Հարությունգոմերի, Նորագյուղի, Չլրբանի և այլ կոլտնտեսու-
թյունները: Ծխախոտի տարածությունը զբաղեցնում էր 320 հա: Միայն
1959 թ. ծխախոտից ստացվել է 2600 հազ. ո. եկամուտ:

Ըստ էության, մարզում բուստանային կուլտուրաների մշակությամբ
հիմնականում սկսել էին զբաղվել 1953 թ. սեպտեմբերյան պլենումից
հետո: Յոթնամյակի առաջին երկու տարում մարզի կոլտնտեսություննե-
րում արտադրվել էր 3.5-4.0 հազար տ կարտոֆիլ: Ուսումնասիրությու-
նը ցույց է տալիս, որ մարզի կոլտնտեսությունների դրամական բոլոր
եկամուտների ավելի քան 50%-ը բաժին էր ընկնում բուսաբուծությու-
նից իրացվող արտադրանքին:

Խաղողի և պտղատու ավելի շատ այգիներ կային Մարտունու և Հադ-
րութի շրջաններում: Մարտունու շրջանում, օրինակ, դրամական եկա-
մուտի 33.2%-ը ստացվել էր խաղողագործությունից: Ճարտարի կոլտն-
տեսության ստացած դրամական եկամուտի 60%-ը՝ 7.6 մլն ո., հենց
պայմանավորված էր խաղողագործությամբ: Խաղողի տեսականու մեջ
առաջին տեղը զբաղում էր «Խնդողնի» տեսականին, ապա՝ «Բայան շի-
րեյը»: Ծրագրված էր յոթնամյակի տարիներին մարզի խաղողի այգինե-
րի տարածքն ընդլայնել 10 հազար հեկտարով և հասցնել 13844-ի:

Մարզի գյուղատնտեսության մեջ, ինչպես նշվել է, որոշ տեղ ուներ
շերամապահությունը: 1959 թ. կոլտնտեսությունները շերամապահու-
թյունից ստացել են 7.2 միլիոն ռուբլի եկամուտ: Մարզի կոլտնտեսա-
կանները շերամապահությունից կրում էին վնաս, որովհետև կերա-
պաշարները չէին հերիքում, կոլտնտեսությունները ստիպված էին այն
զնել հարևան թուրքական շրջաններից:

Յոթնամյա պլանով նոր խնդիրներ դրվեցին անասնապահների
առաջ: Նախատեսվեց 1965 թ. հանրային նախրում կովերի գլխաքա-
նակն ավելացնել 35%-ով: Այն փաստը, որ 1962 թ. մարզի կոլտնտեսու-
թյունների եկամուտի մեջ անասնաբուծության մթերքների արտադրան-
քի տեսակարար կշիռը կազմել է 49.3%, ապացուցում է վերոհիշյալը:
Այդ նույն թվականին մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխա-
քանակը հասել էր 84.6, մանր եղջերավոր անասունների՝ 320.1, խո-
զերինը՝ 55.7 հազարի: Բարելավվել էր նաև անասունների տոհմային
կազմը: Արդեն 1962 թ. հունվարի 1-ի դրությամբ ցեղային էին խոշոր եղ-
ջերավոր անասունների 92.7, ոչխարների 95.1, խոզերի 95%-ը: Բավա-
կանին աշխատանք էր տարվել նաև բարելավելու անասունների սերմ-
նավորման տոհմային կայանը, միջկոլտնտեսային բուծման կետերը և ին-
կուբատորային կայանները բարելավելու ուղղությամբ:

Նախատեսվում էր մարզում զարգացնել նաև մեղվաբուծությունը,
որի համար կային նպաստավոր պայմաններ: Մարզի 88 կոլտնտեսու-
թյուններից 78-ում կային ապրանքային փեթակներ:

Մարզում կար 5 ՄՏկայան, որոնք սպառել էին իրենց: Երկրի ՄՏկա-
յանների վերակառուցումը և ամբողջ տեխնիկական կոլտնտեսություննե-
րին վաճառելը դարձել էր անհրաժեշտ խնդիր: Հենց դրա համար էլ յոթ-
նամյակի սկզբին երկրի բոլոր ՄՏկայանները լուծարվեցին, ու ամբողջ
տեխնիկական վաճառվեց կոլտնտեսություններին:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին, այնուամենայնիվ, մարզի
գյուղատնտեսության զարգացման գործում կային նաև բավականին թե-
րություններ: 1962 թ. հունիսին տեղի ունեցած մարզային կուսակցական
ակտիվի ժողովը բացահայտեց մի շարք բացեր: Օրինակ՝ 1961 թ. հանե-

մատուցյալը 1962 թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը պակասել էր 4.8%-ով, իսկ Մարտակերտի շրջանում՝ 8.9%-ով: Իբրև վնասակար կողմ, շեշտվեց, որ «չափից ավելի աճում է անասունների գլխաքանակը անհաստական սեկտորում»: Բարձր տոկոս էր կազմում կովերի ստերջությունը, թույլ էր կազմակերպվում արհեստական սերմնավորումը: Խիստ քննադատական խոսք հնչեց մարզկոմի հասցեին, որը չէր նպաստում մարզում խոզաբուծության հետագա զարգացմանը: Անուշադրության էր մատնվել կերերի կայուն բազայի ստեղծումը: Կուսակցական ակտիվի ժողովը խստորեն պահանջեց հաշվառել սովորել, տնտեսությունը վարել հաշվենկատ և խելացիորեն³⁵:

Մարզում պայքարում էին ժամկետից շուտ եզրափակել յոթնամյակի 5-րդ տարին: Նախատեսված էր 1963-ին արտադրել 69.3 հազար տ հացահատիկ, 15795 տ խաղող, 5390 տ բանջարեղեն, 350 տ ծխախոտ, 7000 տ բամբակ, պատրաստել 171 հազար տ սիլոս, կատարել 12 հազար հա եզիպատացորենի, 1360 հա շաքարի ճակնդեղի ցանք: Կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները պետությանը պետք է վաճառեին ավելի քան 13060 տ հացահատիկ, որը 1031.2 տ ավելին էր 1962 թ. վաճառվածից: Նախատեսված էր նաև վաճառել 13100 տ խաղող, 860 տ կարտոֆիլ, 950 տ բանջարեղեն, 184 տ բոժոժ, 350 տ միս (կենդանի քաշով), 13470 տ կաթ, 4 մլն 875 հազար հատ ձու, 644.4 տ բուրդ և այլն³⁶:

1965 թ. ԽՄԿԿ մարտյան պլենումն արձանակալական փոփոխություններ մտցրեց ժողովրդական տնտեսության պլանավորման մեջ: Կոլտնտեսություններին և պետական տնտեսություններին իրավունք էր վերապահվում ինքնություն պլանավորել իրենց տնտեսությունն ու արտադրությունը: Պլանավորման այս ձևը արդյունավետ էր, և, ըստ էության, վերանում էր հարկադրանքը:

Մարզում խաղողագործության զարգացումը մնում էր հիմնական խնդիրներից մեկը: 1964 թ. աշնանը փաստորեն որդեգրվեց խաղողագործության զարգացման նոր ելակետ: Պլանավորվեց 1964 թ. հիմնադրել 2000 հա խաղողի այգի և 1970 թ. արտադրել 80 հազար տ խաղող, իսկ հեռանկարում՝ 150-180 հազար տ³⁷:

Եվ այսպես, ուղեգիծը որոշված էր, մնում էր այն նվաճել: Իսկ դա կարող էին անել արցախցիները, որոնք հաջողությամբ նվաճեցին յոթնամյա պլանը: Այդ մասին 1966 թ. հունվարի 15-ին տեղի ունեցած մարզկոմի 23-րդ կոնֆերանսում հայարտությամբ հայտարարեց մարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքունյանը: Յոթնամյակում խաղողի այգիներն ընդարձակվել էին 4500 հա, և պետությանը վաճառված խաղողի պլանը կատարվել էր 126.3%-ով: Մարտունու N1 խաղողի պետտնտե-

սությունը մեկ հեկտարից ստացել էր 285-324 g բարձրորակ խաղող, իսկ ճարտարի կոլտնտեսությունը խաղողի արտադրությունը յոթնամյակի վերջին հասցրել էր 4 հազար տ³⁸: Մարզը հաջողության էր հասել նաև մյուս ճյուղերում, մանավանդ անասնաբուծության և տեխնիկական կուլտուրաների մշակման բնագավառներում:

1966-1985 թթ. իրագործվել է չորս հնգամյակ: Այդ ժամանակաշրջանում, այսինքն բրեժնևյան իշխանության լճացման տարիներին, Արցախ-Ղարաբաղի ընդհանուր վիճակը չնայած քաղաքական տեսակետից ծանր էր ու բարդ, սակայն գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը շարունակում էին ամրապնդվել: Այդ ժամանակաշրջանում օրակարգային հարցերից էր ջրարբիացման խնդիրը: 1965 թ. ոչնչացվել էր 34 հա աշնանացան ցանքս, իսկ դա կազմել էր ամբողջ աշնանացան ցանքսերի 63%-ը: Ինչպես ակնարկվել է, մարզի ջրային ռեսուրսները խելացի չէին օգտագործվում: Մասնագետները գտնում էին, որ հնարավոր է մարզում 22757 հա տարածություն ոռոգել: Դրանից 835 հա դուրս էր եկել շարքից, իսկ մնացած 21922 հա-ից 18715 հա մի ժամանակ ոռոգվում էր: Մարտակերտի շրջանում հնարավոր էր Թարթառի ջրով ոռոգելի դարձնել բավականին տարածություններ: Ժամանակի մամուլը հաղորդել է, որ ճարտարի, Գիշիի, Էդիլուի, Նորագյուղի և այլ կոլտնտեսություններում ջուրն օգտագործում էին խնամքով և առանց կորուստների: Մարզկոմի պլենումը շեշտել էր, որ «հողերի մեկտրացումը միջոցառումների այն կոմպլեքսն է, որի կենսագործման համար պետք է պայքարել ամեն օր և ամենուրեք»³⁹:

Մարզի գյուղատնտեսությունը տեխնիկայով հագեցված կոլտնտեսային-պետական բազմաձյուղ խոշոր տնտեսություն էր: Այն կենտրոնացվում էր 69 կոլտնտեսություններում և 10 պետտնտեսություններում: 1966 թ. մեկ կոլտնտեսությանը և պետտնտեսությանը միջին հաշվով ընկնում էր մոտ 1040 հա ցանքատարածություն, 775 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, այդ թվում 235 կով, 2600 ոչխար և 430 խոզ:

Մարզի կոլտնտեսություններն ու պետտնտեսությունները 60-ական թթ. կեսերին ունեին գյուղատնտեսական բարձր տեխնիկա, ավտոտրանսպորտ, նորոգման կայաններ: Գյուղատնտեսական մեքենաների պարկը կազմում էր 900 տրակտոր, ավելի քան 300 հացահատիկային կուլտուրաների և սիլոսացման կոմբայներ, 2000-ից ավելի գութան և այլ մեքենաներ: Ութերորդ հնգամյակի տարիներին մարզում նկատվում էր գյուղատնտեսության աճ: Օրինակ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը

ավելացել էր 80%-ով, ոչխարներինը և այծերինը՝ ավելի քան 7.5 անգամ, խոզերինը՝ մոտ 9 անգամ: Անասունների գլխաքանակի ավելացումը տեղի էր ունենում ոչ միայն քանակով, այլև որակով: Գրեթե ամբողջովին բարելավվել էր կովերի, խոզերի և այծերի ցեղայնությունը, ու զգալիորեն բարձրացել է նրանց մթերատվությունը:

Տարեցտարի մեծանում էր պետությանը վաճառվող մթերքների քանակը, և ավելանում կոլտնտեսությունների դրամական եկամուտները: Օրինակ՝ 1966 թ. բոլոր կոլտնտեսությունների դրամական եկամուտները կազմել են 15.7 մլն ռ., միջին հաշվով մեկ կոլտնտեսությանն ընկնում էր 220 հազար ռուբլի, որը 17 անգամ ավելին էր 1940 թ. ստացածից: Կոլտնտեսությունների անբաժան ֆոնդը 1966 թ. կազմել էր 26.8 մլն ռ., միջին թվով մեկ կոլտնտեսությանն ընկնում էր 283.2 հազար ռ., 1940 թ. չորս հազարի դիմաց:

Ութերորդ հնգամյակի տարիներին Ղարաբաղի գյուղատնտեսության կյանքում ամենախոշոր առաջընթացը տեղի է ունեցել խաղողագործության բնագավառում: Ճարտարի կոլտնտեսության նախագահ Սուրեն Աղամյանը, հանդես գալով «խաղողագործությունը Մարտունու շրջանի կոլտնտեսությունների էկոնոմիկայում» հոդվածով, նշում է, որ շրջանում եթե 1965 թ. արտադրվել է 8963 տ խաղող, ապա 1968 թ. այն հասել էր 15570 տոննայի, և խաղողի միջին բերքատվությունը մեկ հա հասել 103 ց: 1968 թ. Մարտունու շրջանի բոլոր կոլտնտեսությունների ընդհանուր եկամուտը կազմել է 2 մլն 233 հազար ռ., այդ թվում՝ միայն խաղողից՝ 1 մլն 984 հազար ռուբլի: Շրջանի խաղողի այգետարածությունները կազմում էին օգտագործվող հողատարածությունների 9.6%-ը: 1968 թ. շրջանի կոլտնտեսությունների մաքուր եկամուտի 78.9%-ը ստացվել էր խաղողագործությունից: Շրջանում խաղողի արտադրության վրա ծախսվել էր աշխօրերի ընդհանուր քանակի 18.7%-ը, և ստացվել ամբողջ եկամուտի 46%-ը*: Մասնագետն իր բերած այդ տվյալներով համոզում էր, որ հնարավորություն ունեցող բոլոր կոլտնտեսությունները պետք է շրջադարձ կատարին դեպի խաղողագործությունը:

Գնգամյա պլանի ժամկետից շուտ կատարումը ասես դարձել էր պարտադիր: 1970 թ. մարզի կոլտնտեսություններում կաթի համախառն արտադրանքի տարեկան պլանը կատարվել էր 114.7, ձվինը՝ 128.4, խաղողինը՝ 116.2%-ով: Անհամեմատ բարձրացել էր անասունների մթերատվությունը. ֆուրաժային կովի կաթնատվությունը նախատեսված 1265 կգ-ի դիմաց միջին հաշվով կազմել է 1485 կգ կամ 1965 թ. համեմատությամբ ավելացել էր 452 կգ-ով: Այդ հաջողությունների հետ միասին չեն կատարվել մսի, բրդի, հացահատիկի, բանջարեղենի և մի շարք այլ մթերքների պետությանը վաճառվելիք պլանները:

9-րդ հնգամյակի տարիներին կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները համեմատաբար նոր թափով ու նոր եռանդով էին աշխատում: Գյուղատնտեսության բնագավառի աշխատողները խոստացան հացահատիկի արտադրությունն ավելացնել 15%-ով և հասցնել 50 հազար տ: Այդ նշանակում էր՝ յուրաքանչյուր հեկտարի բերքատվությունը բարձրացնել 3 ցենտներով, իսկ առանձին շրջաններում և կոլտնտեսություններում՝ 4-5 ցենտներով: Անասնաբուծությունը զարգացնելու համար անհրաժեշտ համարվեց ամրապնդել կերային բազան: Որոշվեց առավել ուշադրություն դարձնել խաղողագործության և բանջարաբուծության զարգացմանը, ըստ որում՝ խաղողի արտադրությունն ավելացնել 19-20 հազար տոննայով և տարեկան արտադրանքը հասցնել 80 հազար տոննայի:

Գնգամյակի պլանով նախատեսվում էր հատուկ ուշադրություն դարձնել անասնաբուծության զարգացմանը և բարձրացնել կովերի գլխաքանակը ընդհանուր հոտում, իսկ խոզերի գլխաքանակը ավելացնել 17-18%-ով և հասցնել 37.5-38 հազարի: Նախատեսվել էր կովերի միջին կաթնատվությունը 1975 թ. հասցնել 1550 կգ-ի, իսկ կաթի տարեկան ամբողջ արտադրությունը՝ 22.3 հազար տոննայի, որը 32%-ով կզերակչեք նախորդ հնգամյակում արտադրածը: Նաև նախատեսվել էր մսի արտադրությունը հասցնել 6.2 հազար տոննայի, ձվի արտադրությունը ավելացնել 39.2, իսկ բրդինը՝ 28.2%-ով: Անհրաժեշտ էր ընդլայնել կոլտնտեսությունների արդյունաբերական և օժանդակ ձեռնարկությունների ցանցը, ավելացնել նրանց արտադրանքը, հանրային արտադրության մեջ արմատավորել գիտության նվաճումները և առաջավոր փորձը: Նախատեսված էր ավելացնել տրակտորների, բեռնատար ավտոմեքենաների, կոմբայնների թիվը: Պլանավորված էր 5 տարում կոլտնտեսություններում կապիտալ ներդրումների աճը ապահովել 70%-ով:

Մարզի կուսակցական և պետական մարմինները, հաճախակի անդրադառնալով մարզի տնտեսության զարգացման այս կամ այն հարցին, ընդունում էին անհրաժեշտ որոշումներ: Օրինակ՝ 1970 թ. հունիսին ԼՂ մարզկոմի պլենումը, քննարկելով մարզի արդյունաբերության, շինարարական կազմակերպությունների, կոլտնտեսությունների և պետտնտեսությունների գործունեության հետ առնչվող հարցերը, նշեց տեղ գտած թերությունները և ուղիներ գծեց դրանք վերացնելու համար:

9-րդ հնգամյակի առաջին երկու տարվա արդյունքները ցույց են տալիս, որ, իրոք, մարզի գյուղատնտեսությունը վերելք էր ապրում: Գյուղատնտեսության մարզային վարչության ֆինանսական բաժնի պետ Զրաչյա Մկրտչյանը իր «Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսու-

թյունը վերելքում» հողվածում նշում էր, որ Խորհրդային Միության տարիներին արմատապես փոխվել է Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը: Խորհրդային իշխանությունը գյուղացիների օգտագործմանն էր համընդհանուր 160 հազար հեկտար գյուղատնտեսական հողահանդակներ և անտառներ: Խորհրդային իշխանության տարիներին հիմնովին փոխվել է հողահանդակների որակը: Բարձրացել է դրանց բերքատվությունը, ավելացվել են ոռոգվող հողատարածությունները, արոտավայրերի մի մասն ապահովվել է ջրով, կառուցվել են 10-ից ավելի ջրանցքներ, բազմաթիվ արտեզյան ջրհորներ, արհեստական լճեր և ջրմուղ կայաններ: Հետպատերազմյան տարիներին խիստ ավելացել էին կերակուլտուրաների ցանքատարածությունները, և դրանց տեսակարար կշիռը 70-ական թթ. սկզբին հասել էր 30%-ի, մյուս ցանքատարածությունները կազմում էին մինչև 67%, մնացած 3%-ը՝ տեխնիկական կուլտուրաները:

Մարզում ամասնապահությունը ետ չէր մնում մյուս ապրանքային ճյուղերից: Օրինակ՝ խոշոր եղջերավոր անասունների թիվը 1971 թ. հասել էր 80.2 հազարի: Այդ տարիներին խոզերի գլխաքանակը հասել էր 60 հազարի, ոչխարներինը՝ ավելի քան 250 հազարի: Նկատելիորեն բարձրացել էր նաև անասունների մթերատվությունը: Եթե 1940 թ. մեկ ֆուրաժային կովի կաթնատվությունը մարզում կազմում էր 335 կգ, ապա 1970-ին այն հասել էր 1496 կգ-ի, ընդ որում 11 կուլտնտեսություններում այն անցել էր 2000 կգ-ից, իսկ Սոսի, Ճարտարի, Ղզղալաջի կուլտնտեսություններում՝ 3000 կգ-ից: Ասենք նաև, որ 60-70-ական թթ. ընդհանուր առմամբ փոխվել էին մարզի գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածությունը և էներգետիկական զինվածությունը: Արդեն 70-ական թթ. սկզբին կուլտնտեսությունների և պետտնտեսությունների դաշտերում աշխատում էին 1177 միավոր տրակտոր, 192 հացահատիկային և 132 սիլոսային կոմբայն, 840 բեռնատար մեքենա և այլն: Այդ ժամանակ 13 պետտնտեսություններից 11-ը կենտրոնացված էին Ղարաբաղի խոզաբուծությանը: Մարզի կուլտնտեսություններում աշխատում էին 1650-ից ավելի մեխանիզատորներ: Կուլտնտեսություններում և պետտնտեսություններում կենտրոնական դեմքը դարձել էր գյուղատնտեսական մասնագետը: Այդ նա էր որոշում գյուղատնտեսական արտադրության բախտը: Օրինակ՝ ճարտարում ամբողջ խաղողագործության պատասխանատվությունը հանձնված էր մարզում հայտնի մասնագետ, լենինյան շքանշանակիր Ջահան Լալայանին. նրա նման մասնագետներ քիչ չկային մարզում: Այդ նույն ճարտարում Աշոտ Ալիբաբյանը խաղողի մեկ հեկտարի բերքատվությունը հասցրել էր 241 ցենտների: Հենց այդ ժամանակ՝ 1973 թ. լույս տեսավ Սուրեն Ադամյանի

«Կոմունիզմ» կուլտնտեսությունը» աշխատությունը, որն ուսանելի դեր կատարեց մարզի կուլտնտեսությունների համար: Փորձառու ղեկավար մասնագետը, տալով ճարտարի «Կոմունիզմ» կուլտնտեսության համառոտ բնութագիրը, հստակ շարադրել է ճարտարի կուլտնտեսությունում հացահատիկային կուլտուրաների բարձր բերք ստանալու գաղտնիքը, գյուղատնտեսության ինտենսիվացման, աշխատանքի գիտական կազմակերպման և այլ հարցերի մասին: Հեղինակը, շարադրելով կուլտնտեսության ղեկավարման իր փորձն ու հմտությունները՝ ելնելով գյուղատնտեսության զարգացման հեռանկարներից, փաստորեն գործնական ցուցումներ էր տալիս մարզի կուլտնտեսությունների, պետական տնտեսությունների և արտադրության մյուս ղեկավարներին:

1970-ական թթ. սկզբներից մարզի իշխանությունը կենտրոնացվեց Հեյդար Ալիևի մանկավանդի Բորիս Կեռկովի ծեռքում: Այնուհետև երկրամասի տնտեսության զարգացումն ընթանում էր կամայականությամբ: Այստեղ կարևորն այն չէ, թե ինչպես էին հորինվում թվերը, այլ այն, որ դա տեղի էր ունենում ամենակուպիտ և վայրագ մեթոդներով: Բռնություններն ու մարդկանց կոպտելը Բ. Կեռկովի «ղեկավարման» մեթոդն էր: Մարզի թուրքացումը հանդիսանում էր Կեռկովի քաղաքական աստառը: Նա իրեն ապահովված էր զգում այն իրական թվերի ետևում, որոնք իրենց նվիրվածությամբ և քրտնաջան աշխատանքով ստեղծում էին մարզի աշխատավորները: Իսկ այդ թվերի մասին մամուլում անընդհատ պրոպագանդում էր երվանդ Բաղդասարյանը, որն այն ժամանակ մարզի հայտնի տնտեսագետներից մեկն էր: Նա իր մի հողվածում նշում է, որ 70-ական թթ. մարզում զգալիորեն աճել էր գյուղատնտեսական հիմնական մթերքների արտադրությունը: Օրինակ է բերում, որ խաղողի արտադրությունն աճել է ավելի քան չորս անգամ: Չարգացել էր նաև բանջարեղենի, ձվի և կաթի արտադրությունը: Մարզում հացահատիկի արտադրությունն աճել էր ցանքատարածությունների պակասեցման պայմաններում, բերքատվության բարձրացման հաշվին: Խաղողի արտադրությունն աճել էր թե՛ այգիների տարածության ընդլայնման և թե՛ բերքատվության բարձրացման հաշվին: Կաթի արտադրությունն ավելացել էր կովերի կաթնատվության բարձրացման, իսկ ձվի արտադրությունը՝ թռչունների քանակի և նրանց ձվատվության ավելացման շնորհիվ: «Այդ ամենը, — եզրակացնում է հեղինակը, — վկայում են, որ մարզի գյուղատնտեսությունը դրվել է զարգացման ինտենսիվ ուղու վրա»¹¹:

Այդ ժամանակաշրջանում շարքից դուրս էին եկել գվայուլան ու բամբակը, և դրանց տեղը զբաղեցրել էին խաղողի այգիները: Թերևս դա նպաստեց, որ 9-րդ հնգամյակի վերջին տարում այլևս այն 59 հազար տ խաղողի դիմաց պետությանը վաճառվեց 62.358 տ: Դրանում մեծ

ավանդ ունեին Մարտունու և Մարտակերտի խաղողագործները: Բարձր ցուցանիշների էին հասել նաև Հաղուբի ու Ստեփանակերտի խաղողագործները:

1975 թ. դեկտեմբերի 25-26-ը տեղի ունեցած ԼՂ մարզկոմի 27-րդ կոնֆերանսը ամփոփեց 9-րդ հնգամյակի արդյունքները և քննարկեց 10-րդ հնգամյակի դիրեկտիվները: Կոնֆերանսը նշեց, որ հնգամյակում մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է 1.6 անգամ: Պլանից դուրս թողարկվել է 19.2 մլն ռ. արտադրանք: Հնգամյակի տարիներին ավելացել էին էլեկտրական ջահերի, մետաքսի, գինու-կոնյակի, կաթնամթերքի, կահույքի, շինանյութերի և այլնի թողարկումը: Կոնֆերանսը պահանջել էր հատուկ ուշադրություն դարձնել գիտատեխնիկական առաջընթացի արագացմանը, խնայողության ռեժիմի ու ժեղացմանը, աշխատանքային ռեսուրսների և արտադրական ֆոնդերի ռացիոնալ օգտագործմանը, արտադրանքի թողարկման վրա կատարվող ծախսերի իջեցմանը: Շեշտվեց, որ պետք է հատուկ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության զարգացման կոմպլեքսային ծրագրի կատարմանը: Հնգամյակի տարիներին զգալիորեն ամրապնդվել էր մարզի կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների տեխնիկական զինվածությունը, բարձրացվել էր արտադրության առանձին ճյուղերի շահութաբերությունը, աճել էին կոլտնտեսությունների դրամական եկամուտներն ու անբաժան ֆոնդերը:

Մարզում հացահատիկի նկատմամբ պահանջը մեծանում էր, մանավանդ որ հացահատիկի մի մասն օգտագործվում էր որպես անասնակեր: Նախատեսվել էր 1980 թ. ստանալ 66 հազար տ հացահատիկ: Բացի այդ, ըստ 10-րդ հնգամյա պլանի, 1980 թ. նախատեսված էր ստանալ 2000 տ պտուղներ, 8.5 հազար տ բանջարեղեն, 4.5 հազար տ կարտոֆիլ, 100 հազար տ խաղող, 9.1 հազար տ միս, 36.5 հազար տ կաթ, 9.2 միլիոն հատ ձու և այլն⁴²:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1975 թ. վերջին մարզում եղած 18 պետտնտեսություններն ու 64 կոլտնտեսությունները 9-րդ հնգամյակի տարիներին արտադրել են (հազար ռուբլով արտահայտած)⁴³.

	Կոլտնտեսություններ	Պետտնտեսություններ
1971	23829	12004
1972	23467	11447
1973	28450	14869
1974	31087	15791
1975	25079	21428

Հնգամյակի տարիներին մարզում ցանվել են (հազար հեկտար)⁴⁴.

	Ամբողջ ցանքը	Հացահատիկ	Տեխնիկական կոլտուրա	Կարտոֆիլ	Կերակուլտուրաներ
1971	47.7	18.4	1.6	1.6	26.1
1972	78.9	47.6	1.6	1.5	28.2
1973	73.6	41.7	1.7	1.6	28.6
1974	75.8	45.0	1.7	1.6	27.5
1975	64.1	30.4	1.2	1.7	30.8

Ընդհանրապես 9-րդ հնգամյակում մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքն աճել է ավելի քան 18%-ով, աշխատանքի արտադրությունը 12,2%-ով: Ամենափայլուն հաղթանակը ձեռք էր բերվել խաղողի արտադրության բնագավառում. այն ավելացել էր 56,6%-ով⁴⁵: Խաղողագործության հարցը հատուկ քննարկվեց 1976 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած մարզխորհրդի 15-րդ գումարման 15-րդ նստաշրջանում: «Մարզում խաղողագործության վիճակի և նրա հետագա զարգացման միջոցառումների մասին» զեկուցումով հանդես եկավ մարզխորհրդի նախագահի տեղակալ Շ. Պետրոսյանը: Ըստ նրա բերած տվյալների՝ այդ ժամանակ մարզն ունեցել է 13.481 հա խաղողի այգի, որից բերքատու 8525 հա, 1975-ին մարզում արտադրվել է 75.400 տ խաղող⁴⁶: Չեռք բերված լավագույն ցուցանիշների համար Մարտակերտի 22-րդ կուսհամագումարի անվան պետտնտեսության տնօրեն Սամվել Սամոնցին շնորհիվ է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Այստեղ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 217 ց: Մոտ 300 հեկտարականներ ապահովել էին հեկտարից 280-340-ական ցենտներ խաղողի բերք⁴⁷:

10-րդ հնգամյակի պլանը մարզում իրագործվել է հաջողությամբ: 1977 թ. մայիսի 5-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումն ընդգծեց, որ հնգամյակի առաջին տարվա բարձր արդյունքները համոզում են, որ մարզի աշխատավորները հաջողությամբ կեզրափակեն նաև հնգամյակի մյուս տարիները: Ղարաբաղում գյուղատնտեսական մթերքների արտադրանքի ծավալը 1976 թ. աճել էր 17%-ով: Այդ թվականին մարզի խաղողագործները պետությանը վաճառեցին 96.6 հազար տ խաղող և ապահովեցին մեկ հեկտարից 104.1 ց խաղողի ստացումը: 100 հազար տոննայի սահմանագծին մոտենալը մարզի խաղողագործների ձգտումն

եր: 9-րդ հնգամյակում տարեկան խաղողի արտադրությունն աճել էր 68.5, հացահատիկինը՝ 33.9, բանջարեղենինը՝ 32.9, կարտոֆիլինը՝ 31.2%-ով: Կաթի արտադրությունը հասել էր 31.254 տ՝ 1970 թ. արտադրված 24.341-ի դիմաց: Ֆուրաժային կովերի միջին կաթնատվությունը հասել էր 1941 կգ-ի և 1970 թ. համեմատությամբ աճել էր 441 կգ-ով⁴⁸:

10-րդ հնգամյակի հաջորդ տարիներին գյուղատնտեսության զարգացման առաջընթացը նույնպես ապահովված էր: 1980 թ. հունվարի 3-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումը շեշտեց, որ 10-րդ հնգամյակի չորրորդ տարվա համար նախատեսված 24%-ի դիմաց աշխատանքի արտադրողականությունն աճել էր 50.2%-ով: Ստացվում է, որ 4 տարում կատարվել էր երկու հնգամյա պլան: Մարզում գյուղատնտեսական համախառն արտադրանքի միջին տարեկան ծավալի աճը 4 տարում 16.8%-ի փոխարեն կազմել է 44.1%: Հացահատիկի արտադրությունը 4 տարում աճել էր 35%-ով, խաղողինը՝ 2.1 անգամ, բանջարեղենինը՝ 36, կարտոֆիլը՝ 22, պտուղներինը՝ 10, ծխախոտինը՝ 25, մսինը՝ 28, կաթինը՝ 34, բրդինը՝ 32, ձվինը՝ 43, բոժոժինը՝ 20%-ով: Պլանային 58.5 հազար տոննայի դիմաց հավաքվել է 68.7 հազար տ հացահատիկ և 90 հազար տ փոխարեն պետությանն է հանձնվել խաղողի ռեկորդային բերք՝ 112.5 հազար տ, որը 12 հազար տ-ով գերազանցել էր 1978 թ. մակարդակը: Խաղողի միջին բերքատվությունը կազմել էր հեկտարից 105 գ: 1979 թ. կաթի արտադրությունը հասել էր 37.379 տ, ֆուրաժային կովի կաթնատվությունը՝ 2290 կգ-ի⁴⁹:

Մարզի աշխատավորները, կատարելով 10-րդ հնգամյակի պլանը, նույն հաջողությամբ էլ սկսեցին 11-րդ հնգամյա պլանի կատարումը: Բավական է նշել, որ 11-րդ հնգամյակի առաջին տարում պլանային 111 հազար տոննայի դիմաց արտադրվել և պետությանը վաճառվել է 140200 տ խաղող: Բարձր ցուցանիշների էին հասել Մարտակերտի, Մարտունու և Հաղրուքի խաղողագործները: Մարտակերտի շրջանը պլանային 52900 տ դիմաց պետությանը վաճառել է 74102 տ, Մարտունու շրջանը՝ 33.270 տ-ի դիմաց՝ 41.705 տոննա: Մարտակերտի շրջանի Լեռնի մանկան պետտնտեսությունը պլանային 10500 տ-ի դիմաց հանձնել էր ավելի քան 25 հազար տ⁵⁰: Հաջորդ տարում՝ 1982-ին, մարզը պլանային 122 հազար տոննայի դիմաց պետությանը վաճառել է 154 հազար տ խաղող⁵¹: Հաջողություններն ակնառու էին նաև մյուս բնագավառներում: Դրան նպաստել էին մի շարք միջոցառումներ: 1970-80-ական թթ. կառուցվել և շահագործման են հանձնվել խոզաբուծական երկու համալիր Ասկերանի և Մարտակերտի շրջաններում, տարեկան 2800 տ ընդհանուր հզորությամբ, կառուցվել են նաև տարե-

կան 1600 գլուխ խոշոր եղջերավոր անասունների աճեցման և բտման համար 4 հարթակներ, կաթնային համալիր՝ 800 գլուխ կովի համար: Մեծ աշխատանքներ էին տարվել անասնապահության մեջ աշխատատար պրոցեսների մեթոդայացման ուղղությամբ:

Պլանավորվել էր 1985 թ. մարզում հացահատիկի արտադրությունը հասցնել 66-68 հազար տ, խաղողի արտադրությունը՝ 170.8, բանջարեղենինը՝ 10.3, կարտոֆիլինը՝ 13.6, կաթի արտադրությունը՝ 59.5, մսինը (սպանդային քաշով)՝ 13.3 հազար տ, ձվինը՝ 35.9 միլիոն հատի: 11-րդ հնգամյակի վերջին տարիներին խաղողի միջին բերքատվությունը հասցվել է 117.5 գ, համախառն արտադրանքը՝ 158.4 հազար տ, 1965 թ. համեմատությամբ 11.7 անգամ ավելի: Նշենք, որ մարզում խաղողի արտադրության բարձրացման շնորհիվ զգալիորեն աճել են մարզի եկամուտները: Եվ դա հնարավորություն տվեց, սկսած 1970-ական թթ. սկզբից, մարզի բյուջեն ապահովել առանց պետական միջոցներից դուտացիա ստանալու⁵²:

11-րդ հնգամյակի վերջին տարում մարզում արտադրվել է 116.9 տ մետաքսե հումք, 3836 տ միս, 960 տ կենդանական յուղ, 164659 տ խաղող, 7780 տ բանջարեղեն, 1236 տ պտուղներ, 346 տ ծխախոտ, 1604 տ կարտոֆիլ: Մարզում կար 64372 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 74437 խոզ, 188018 ոչխար⁵³:

Այդ, առատության եղջյուր էր հոսում Արցախում, որտեղ մարդիկ, հաղթահարելով բոլոր դժվարությունները, արարում էին, ստեղծում: Սակայն դրա ո՞ր մասն էր հասնում արցախցուն:

3. Լեռնային Ղարաբաղի հասարակական-քաղաքական կյանքը հետպատերազմյան տարիներին

Հետպատերազմյան տարիներին Լեռնային Ղարաբաղի հասարակական-քաղաքական կյանքն ընթացել է երկրի տնտեսական կյանքին համահունչ և թուրք-ազերիների կրկնակի ճնշման տակ: Կամայականություններն ու մարդու իրավունքների ռոմահարումը արցախահայությանը բերում էին մեծ վնասներ: Մարզային կուսակցական և պետական մարմինները որքան էլ ձգտեին աշխատել ազնվորեն ու կառավարումն առաջ մղեին ժողովրդավարության սկզբունքներով, երկրի սահմանադրական պահանջներին համապատասխան, չէր ստացվի: Չէր ստացվի, որովհետև ամբողջ համակարգն էր գտնվում հոգեվարքի մեջ, և մարզի վրա կախված էր դահիճ Միրջաֆար Բաղիրովի դաժան բռնուցքը:

Մարզի կուսակցական և պետական մարմինների առաջին դեմքերն ուղարկվում էին Բաքվից: Եվ չնայած նրանք ինչ—որ տեղ արյունակցական կապեր ունեին դարաբաղցիների հետ, սակայն չէին կարող դուրս գալ Բաքվի գծած շրջանակներից: Ուրիշ հարց է, որ այդ տարիներին մարզի կուսակցական, պետական և հասարակական մարմիններում աշխատել են հայրենի հողին նվիրված մարդիկ, ուլքեր, իրոք, արժանի են դրվատանքի: Այդ մասին, անշուշտ, կգրվի: Սակայն հիմա այլ է մեր խնդիրը:

1942 թ. ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար դարձավ Եղիշե Գրիգորյանը: Նա ծնունդով Մարտակերտի շրջանի Մաղապուզ գյուղից էր: Կուսակցական նրա կարիերան անցել էր Բաքվում: Դառնալով Լեռնային Դարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար՝ իրեն դրսևորեց որպես չեզոք կուսակցական աշխատող: Աշխատելով պատերազմի տարիներին մի կողմից՝ կատարում էր Մ. Բաղիրովի բոլոր պահանջները, իսկ մյուս կողմից էլ շատ էր մտահոգված մարզի ճակատագրով: 1946 թ. հուլիսի 7—ին տեղի ունեցած մարզային կուսակցական կազմակերպության 12—րդ կոնֆերանսը, լսելով 1940—1946 թթ. ընկած ժամանակաշրջանում մարզկոմի հաշվետվությունը, որի վերաբերյալ հանդես եկավ Ե. Գրիգորյանը, շեշտեց, որ Մեծ հայրենականի տարիներին մարզի ամբողջ բնակչությունը ոչինչ չի խնայել թշնամուն ջախջախելու գործում: Կոնֆերանսը հանգամանորեն վերլուծեց պատերազմի ծանր օրերին երկրամասի տնտեսական, հասարակական և քաղաքական զարգացման ընթացքը: Օրինակ բերվեց, որ եթե 1940 թ. մարզում կար 3242 բանվոր, ապա 1946 թ. այդ թիվը հասել էր 4243—ի: Պատերազմի տարիներին հատուկ ուշադրություն է դարձվել կանանց դերի բարձրացմանը: Տասնյակ կանայք առաջ էին քաշվել պատասխանատու աշխատանքի, որոնց մեծամասնությունն իրենց արդարացրել են: Եթե 1940 թ. մարզում կար ընդամենը 15 կին կուսակցական աշխատող, ապա 1946 թ. այդ թիվը հասել էր 76—ի: Պատերազմի տարիներին ուշադրությունից չեն վրիպել նաև մշակույթի հարցերը: Պատերազմի վերջում մարզում գործում էր հանրակրթական 198 դպրոց, որից 41—ը՝ միջնակարգ: Դպրոցներում սովորում էր 32627 երեխա: Մարզն ուներ 14 հիվանդանոց՝ 424 մահճակալով, 10 ծննդատուն՝ 64 մահճակալով, մշտական գործող 22 մանկամսուր՝ 797 մահճակալով, 3 պոլիկլինիկա՝ 22 կաբինետով, 2 ամբուլատորիա, գյուղական բժշկական 15 կետ, մանկական և կանանց 5 կոնսուլտացիա և այլն: Կոնֆերանսում ընդունված բանաձևը մարզի սկզբնական կուսակցական կազմակերպություններին հանձնարարել էր բոլոր ուժերը լարել և նպաստել մարզի տնտեսության արագ վերականգնմանը, ընդլայնել կուսակցական աշխատանքը, նոր թափ հաղորդել տնտե-

սության բոլոր ճյուղերի զարգացմանը: Այդ ժամանակ մարզում կային 104 սկզբնական կուսակցական կազմակերպություններ, որոնց անդամների թիվը հասնում էր 3500—ի՝:

Կուսակցության մարզկոմի 12—րդ կոնֆերանսը, չնայած գոհ էր Ե. Գրիգորյանի աշխատանքից, սակայն առաջին քարտուղար ընտրեց Բաքվին ավելի հմազանդ Ս. Ս. Մանուկյանին, որը չկարողացավ երկար աշխատել, և 1948 թ. ամռանը նրան փոխարինեց Տիգրան Գրիգորյանը՝ ծնունդով Մարտունու շրջանի Դոզալա գյուղից: Մի քանի ամիս անց՝ 1949 թ. հունվարի 8—9 տեղի ունեցած ԼՂ կուսակցության մարզկոմի 13—րդ կոնֆերանսում հաշվետվությամբ հանդես գալով՝ Տ. Գրիգորյանը նշեց, որ նախորդ կոնֆերանսից հետո անցած 2.5 տարում մարզի թե՛ արդյունաբերությունը և թե՛ գյուղատնտեսությունը տեղաշարժ են կատարել: Առաջին տեղ գրաված մետաքսի կոմբինատն ունի 200 ստախանովական, որոնք տարեկան իրենց պլանները կատարում են 8—9 ամսում: Կոմբինատի 527 բանվորներից պլանները չէին կատարել 71—ը:

Կոնֆերանսում շեշտվեց, որ անբավարար են տեղական արդյունաբերության աշխատանքները: Շուշի, Մատղաղիսի և Ստեփանակերտի արհկոմբինատները չեն կատարել պլանները: Գյուղատնտեսության բնագավառում աչքի են ընկել Գյունե ճարտարի կոլտնտեսությունը, Մարտակերտի շրջանի բանբակագործները, որտեղ բարձր բերքատվության 42 օղակ 710 հա տարածությունից պլանային 19—31 ց բանբակի դիմաց ստացել են մինչև 66 ց: Բանբակի պլանը կատարվել է 105.6%—ով: Սոնյա Բալայանը, Յերիք Չարությունյանը, Սանամ Աթաբեկյանը, Ջուշուղ Առաքելյանը հեկտարից ստացել են 42—88.5 ց բանբակ: Մարզում հաջողությունների էին հասել նաև ծխախոտագործները: Անասունների զլխաքանակը որոշ չափով ավելացել էր. 1940 թ. համեմատությամբ ավելացել էր 13.590 գլխով, իսկ 1946 թ. համեմատությամբ 6263 գլխով: Ընդհանրապես, կային և բավականին թերություններ թե՛ հացահատիկի արտադրության և թե՛ անասնաբուծության բնագավառներում:

Տ. Գրիգորյանի հաշվետվությունը չբավարարեց կոնֆերանսի պատգամավորներին: Իբր կազմված էր չափազանց մակերեսորեն: Եվ ահա Բաքվի հրահանգով մարզկոմի առաջին քարտուղար ընտրվեց Ս. Կ. Աբրամովը²: Նա, ըստ էության, միջին մակարդակի կուսակցական աշխատող էր: Նրա քարտուղարության օրոք տեղի ունեցավ կոլտնտեսությունների խոշորացում, ինչը բերեց նոր պահանջներ ու խնդիրներ: Դեռ նրա նախածեռնությամբ 1951 թ. հունվարի 30—ին տեղի ունեցած մարզային կուսակցական և տնտեսական ակտիվի ժողովը, որին մասնակցեց ավելի քան 400 հոգի, քննարկելով կոլտնտեսությունների խոշորացումից հետո նոր գյուղերի շինարարության և եղած գյուղերի

վերակառուցման հարցը, ընդունեց որոշում, որը կատարելու համար, սակայն, շատ աննշան բան արվեց: Թերևս Աբրամովի նախաձեռնությամբ 1952 թ. հունվարին տեղի ունեցավ ԼՂ մարզկոմի 4-րդ պլենումը, որը քննարկելով մարզխորհրդի գործկոմի նախագահ Ե. Ակոպովի զեկուցումը 1951 թ. տնտեսական տարվա արդյունքների մասին, որոշում ընդունեց մերժել Ե. Ակոպովի աշխատանքային պրակտիկան: Ժամանակակիցները վկայում են, որ դա միանգամայն միտումնավոր որոշում էր: Ըստ պլենումի որոշման՝ մարզկոմի ապարատում իբր տիրում էր անհանդուրժելի վարչարարությունը, և քննադատության ու ինքնաքննադատության բացակայությունը հասցրել էր մարզում գյուղատնտեսական աշխատանքների տապալմանը: Պարզվում է, որ մարզխորհրդի մշտական հանձնաժողովները ձևական էին, ծախողվել էին մարզի բնակավայրերի բարեկարգման, շինարարության, բնակչության հետ տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքները: Պլենումը նաև նշեց, որ տեղի են ունեցել պետական միջոցների յուրացումներ³:

Կուսակցության մարզկոմը և նրա առաջին քարտուղարը ևս հեռու չէին թերություններից: Պարզապես նրանք չեն ցուցաբերել կուսակցական պատասխանատվություն կոլտնտեսությունները կազմակերպչական-տնտեսական տեսակետից ամրապնդելու և մարզում առաջավոր ազդրբիոլոգիական հզոր բազա ստեղծելու ուղղությամբ: Հինգերորդ հնգամյակի առաջին տարում բավականին ցածր է եղել հացահատիկային կուլտուրաների բերքը: Անասնաբուծությունը մնում էր գյուղատնտեսության ետ մնացող բնագավառ: Մարզկոմը և նրա առաջին քարտուղարը լուրջ ուշադրություն չէին դարձրել կոլտնտեսությունների ղեկավար կադրերի ընտրությանը, տեղաբաշխմանը և դաստիարակությանը: Այս հարցերը քննարկման առարկա դարձան 1952 թ. մարտին տեղի ունեցած ԼՂ մարզկոմի 5-րդ պլենումում: Ճարտարի կոլտնտեսության նախագահ Սուրեն Ադամյանը իր ելույթում շեշտեց. «Կուսակցության մարզկոմը կոպիտ սխալներ է թույլ տվել կուսակցական, խորհրդային և տնտեսական ղեկավար կադրերի ընտրության ժամանակ: Գեկավարներից շատերը կտրված են եղել կոլտնտեսություններից և չեն իմացել իսկական դրությունը տեղերում»⁴:

Կուսակցության մարզկոմի պլենումը Ս. Աբրամովին ազատեց գրադեցրած պաշտոնից՝ որպես աշխատանքի մեջ թերացողի: Մարզկոմի պլենումը կրկին մարզկոմի առաջին քարտուղար ընտրեց Եղիշե Գրիգորյանին: Վերջինս, երկրորդ անգամ ստանձնելով մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, ավելի հասուն էր և լավ էր հասկանում Լեոնային Ղարաբաղի ցավերն ու հոգսերը: Այս անգամ նա ավելի համարձակ էր, ավելի հմուտ, ավելի հոգատար: Ճիշտ է, նա չէր կարող իրեն ինքնու-

րույն ճանաչել և հրաշքեր գործել: Սակայն նա փորձում էր իրեն չճանաչել Ադրբեջանի իշխանությունների ստրուկ: Ադրբեջանի իշխանություններին համարձակորեն քննադատելով հենց Ադրկոմկուսի համագումարների ամբիոնից՝ նրանցից պահանջում էր կատարել իրենց պարտավորությունները Լեոնային Ղարաբաղի նկատմամբ: Ե. Գրիգորյանը մարզի ղեկավարներից պահանջում էր ավելի մոտիկից և նվիրվածությամբ ղեկավարել մարզը, արձագանքել նրա բոլոր ցավոտ հարցերին, կարևոր ուշադրություն դարձնել մարզի արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը, նրա մշակույթին: Ե. Գրիգորյանի օրոք մարզում բարելավվեց պետական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների ղեկավարումը, ակտիվացվեց կուսակցական կազմակերպությունների և խորհուրդների գործունեությունը, ոտքի կանգնեցվեցին կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները: Հաջողություններն ակնառու էին մանավանդ գյուղատնտեսության բնագավառում: Մարզում դեռևս կային հետ մնացող կոլտնտեսություններ, որոնք չէին կարողանում կատարել պլանները: Միջոցառումներ մշակվեցին նման կոլտնտեսություններին օգնելու և առաջ մղելու համար:

Հետամուտ լինելով մարզկոմի առաջին քարտուղար Ե. Գրիգորյանը պարզեց, որ մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքի 44 հիմնական տեսականուց 10-ի գծով պլանը չէր կատարվում: Դա համարելով աններելի պայմաններ ստեղծվեցին բացը վերացնելու համար: Տեղարդյունաբերության պահեստներում թափված էր հարյուր հազարավոր ռուբլու ապրանք, որը ցածրորակ լինելու պատճառով չէր վաճառվում: Արտադրանքի որակը բարձրացնելու համար լայն պայքար ծավալվեց: Մետաքսկոմբինատում առաջին տեսակի մետաքսահումքը պլանային 54.2-ի դիմաց կատարվել էր 42.2%-ով: Այդ հարցը դարձավ մարզկոմի քննարկման առարկա, որոշում ընդունվեց միջոցառումներ ձեռնարկել վիճակը բարելավելու համար:

Կոլտնտեսություններում անտեսվում էր անասունների տոհմի բարելավման և անասունների ամբողջ զլխաքանակի համար կերային ամուր բազա ստեղծելու հարցը: Պահեստներում շարունակում էին մնալ տասնյակ չտեղադրված դազգահներ և նոր տեխնիկա, ռացիոնալ չէր օգտագործվում ՄՏկայանների տեխնիկան: Լուրջ թերություններ կային նաև առողջապահության բնագավառում: Այս և համանման այլ հարցեր դառնում էին կուսակցության մարզկոմի քննարկման առարկա, և դրանք ուղղելու համար ընդունվում որոշումներ⁵:

ԼՂ մարզկոմի առաջին քարտուղարը Ադրբեջանի իշխանություններից պահանջում էր մարզին տրամադրել պահանջվող շինանյութերն ու ֆինանսական միջոցները: 1958 թ. փետրվարի 10-ին տեղի ունե-

ցած ԼՂ մարզկոմի 19-րդ կոնֆերանսը, որին ներկա էր Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահ Վ. Յա. Ախունդովը, ընդառաջելով Բաքվի իշխանությունների պահանջին, առաջին քարտուղարի պաշտոնից ազատեց Ե. Գրիգորյանին և նրա փոխարեն մարզկոմի առաջին քարտուղար ընտրեց Ն. Ս. Շահնազարովին: Նրա նախնիներն արցախցիներ էին: Սակայն նա պատահական անձնավորություն էր Լեռնային Ղարաբաղում, որի հիմնական նպատակն էր Արցախ-Ղարաբաղը թուրքացնել: Նիկոլայ Շահնազարովը փորձում էր մարզում շատ թերություններ հայտնաբերել. իբր նա եկել էր դրանք վերացնելու և մարզի վերելքն ապահովելու համար: Նա պարզեց, որ մարզում կովերի գլխաքանակի պլանը կատարվել էր 83.2%-ով: Կամ Ստեփանակերտի շրջանում 1958 թ. կովերի 31.6%-ը մնացել էր ստերը: Դրանք վերացնելու համար մարզկոմի նոր քարտուղարն անցկացրեց քննարկումներ: Ասեմք նաև, որ արդյունաբերության բնագավառում որոշ տեղաշարժեր նկատվում էին: 1960 թ. հունվարին տեղի ունեցած ԼՂ կուսակցական կազմակերպության 20-րդ կոնֆերանսում նա հայտարարեց, որ մարզում երկու տարում լրացուցիչ թողարկվել է 17 մլն ռ. արտադրանք: Կոնֆերանսում լուրջ քննադատության ենթարկվեց տեղարդյունաբերության ղեկավարությունը, որը միջոցառումներ չէր ձեռնարկել թողարկվող արտադրանքի որակը բարձրացնելու համար: Ստեփանակերտի փայտամշակման ֆաբրիկան շարունակում էր թողարկել ցածր որակի կահույք: Մարզկոմը, չնայած այդ և նման մի շարք դրական փաստերի առկայությանը, իրավիճակին մոտեցավ քննադատաբար, սակայն շատ քիչ բան արվեց այդ թերությունները վերացնելու համար:

Նիկոլայ Շահնազարովի քարտուղարության օրոք մարզի աշխատավորները մնում էին դժգոհ և նրանից պահանջում էին հեռանալ մարզից: Նրանք այդ առթիվ բազմաթիվ նամակ-բողոքներ էին ուղարկում Մոսկվա և Բաքու՝ պահանջելով զբաղեցրած պաշտոնից ազատել Շահնազարովին: 1962 թ. նրան փոխարինեց մարզկոմի քարտուղար Գուրգեն Մելքունյանը, որը ծնունդով Հայրուքի շրջանից է և իր կուսակցական աշխատանքը սկսել էր Ղարաբաղում: Գ. Մելքունյանը հայրենիքին մվիրված անձնավորություն է: Նա իր լիբերալությամբ փորձում էր երկար մնալ պաշտոնում: Ավելի քան 10 տարի լինելով ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Գուրգեն Մելքունյանը փորձում էր ընդլայնել մարզի արդյունաբերությունը, նոր թափ հաղորդել գյուղատնտեսությանը, առաջ մղել մշակույթը: Սակայն ասել, թե նա փորձել է դուրս գալ Ադրբեջանի ստեղծած կաղապարից, կլինի իրականությանը հակասող: Ազգային զարթոնքը, որը սկսվել էր 60-ական թթ. Հայաստանում, իր ար-

ձագանքը գտավ նաև Արցախում: Գուրգեն Մելքունյանը ջանացել է դա իրենից հեռու վանել, միայն թե իր փեշերը մաքուր մնային: Այդ առթիվ որևէ պատրանք տեղծելն իմաստ չունի:

Գուրգեն Մելքունյանը կողմնակից էր արտադրության մեջ նորի ներդրմանը, միայն թե այն նպաստի արտադրության վերելքին: 1967 թ. օգոստոսին տեղի ունեցած կուսակցության մարզային ակտիվի ժողովը, անդրադառնալով տնտեսավարման նոր սիստեմին, առաջ քաշեց մարզի ներգործարանային պլանավորման, արտադրության հնարավորությունների ու ռեզերվների լիովին օգտագործման, արտադրանքի իրացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման, շահութաբերության, արտադրության տնտեսական խթանման և համանման այլ հարցեր: Գ. Մելքունյանն իր ելույթում շեշտեց, որ մարզի 37 արդյունաբերական ձեռնարկություններից 32-ը հաջողությամբ իրացրել են իրենց առաջ դրված խնդիրները: Նա հարց դրեց՝ մարզում ետ մնացող ձեռնարկություն չլինի: Այդ հարցն ավելի հանգամանորեն քննարկվեց հաջորդ տարվա հունվարին տեղի ունեցած ԼՂ մարզկոմի 24-րդ կոնֆերանսում: Մարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքունյանը մարզկոմի հաշվետվության մեջ ընդգծեց, որ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ երկու տարում մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը աճել է 31%-ով: Այդ ժամանակաշրջանում թողարկվել է 23.3 մլն ռ. արտապլանային արտադրանք, և շահույթը կազմել է 1.5 մլն ռ., աշխատանքի արտադրողականության տարեկան աճը՝ 8%: Նա նաև նշեց, որ արտադրությունը բարձրացրել են Ղարմետաքսկոմբինատի, էլեկտրատեխնիկական, կահույքի, կարի, գորգագործական, Շուշիի գուլպատրիկոտաժեղենի աշխատավորները: Որպես թերություն, նշվեց ձեռնարկությունների պլանավորման և տնտեսական խթանման նոր սիստեմին անցնելուն ցածր մակարդակով նախապատրաստվելը, արտադրության մեջ աշխատանքի գիտական կազմակերպման սկզբունքները չկիրառելը և այլն: Կոնֆերանսը նաև ընդգծեց, որ հաճախ խորը և բազմակողմանի չի վերլուծվում աշխատանքի արտադրողականության հարցը: Օրինակ բերվեց, թե մարզի 5 ձեռնարկություններ չեն կատարել շահույթների ստացման, 6-ը՝ աշխատանքի արտադրողականության առաջադրանքները, իսկ 9-ը թույլ են տվել ինքնարժեքի բարձրացում: Նշվեց, որ դեռևս վատ են օգտագործվում եղած ռեզերվները, անբավարար է ընթանում առաջավորների փորձի ընդհանրացման և մասսայականացման գործը, վատ են զբաղվում բանվորների աշխատանքի և կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու հարցերով: Նշվեց, որ 60-ական թթ. կեսերից մարզում գործող 3 շինվարչությունները և 1 շինկոմբինատը պետք է սկսեին կոշ-

իկի ֆաբրիկայի և Մարտակերտի ու Լենինավանի խաղողի սկզբնական վերամշակման գործարանների շինարարությունը, վերականգնեցին Ստեփանակերտի գինու-կոնյակի գործարանը, ավարտեցին Շուշան-Շուշի, Չայրուշան-Ստեփանակերտ ջրնուղների, Շուշի կարի ֆաբրիկայի և այլ օբյեկտների շինարարությունը: Այդ և նման ուրիշ թերություններ վերացնելու համար ընդունվեց որոշում⁹:

Մարզում ձեռք բերված հաջողությունների և աշխատանքներում տեղ գտած թերությունների մասին մարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքունյանը հաճախակի հանդես էր գալիս հանրապետական և մարզային մամուլում: Մարզի ինքնավարության 45-ամյակին նվիրված իր մի հոդվածում խոսելով մարզի ձեռք բերած առաջընթացի մասին նա նշում է, որ Ղարմետաքսի բանվորները պլանից դուրս արտադրել են 338 հազար մ գործվածք, 3900 կգ ուղրած թել, 520 կգ մետաքսաթել: Մարզկոմի քարտուղարը բարձրացրել է մետաքսկոմբինատում ներկյալ արտադրամաս ունենալու հույս կարևորությունը: Սակայն ավելի քան 20 տարի շարունակ այդ հարցը արժարժվել է, բայց Ղարմետաքսը այդպես էլ ներկյալ արտադրամաս չունեցավ, որի պատճառով էլ Ղարաբաղի մետաքսը իր վերջնական տեսքը ստանում էր Լուխիում: Դրանում Ղարմետաքսը կորցնում էր հսկայական գումարներ տարեկան մինչև 60 մլն ռ.: Մարզկոմի քարտուղարը խոսում է նաև հնգամյակի խոշոր կառույցներից մեկի՝ Մարսանգի հիդրոկայանի կառուցման մասին, որի հետ շատ հույսեր էին կապում մարզում: Դարք է դրվում Մեծմանայում կառուցել հարստացուցիչ ֆաբրիկա, որը հնարավորություն կտար մշակել հազվագյուտ մետաղներ: Մարզկոմի քարտուղարը հատուկ խոսում է կաթի արտադրության բարձրացման մասին, որը շատ նպաստավոր է բնակչության համար, որպես կենսամթերք¹⁰:

Մարզկոմի պլենումներում և կոնֆերանսներում հիմնականում քննարկվում էին մարզի հետ կապված կենսական հարցեր: Օրինակ 1968 թ. նոյեմբերի 28-ին մարզկոմի պլենումը, հանգամանորեն քննարկելով հնգամյակի երեք տարում մարզի տնտեսությունների կատարած աշխատանքների հարցը, նախ՝ հարց է դնում ձեռք բերել գյուղատնտեսական նոր ու առաջավոր տեխնիկա և երկրորդ՝ հնգամյակի սկզբից չնայած գյուղատնտեսության համախառն արտադրանքն ավելացել էր 19%-ով, սակայն դա չէր բավարարում բնակչության պահանջը¹¹:

Ընդհանրապես, 7-րդ հնգամյակում մարզում ձեռք էին բերվել զգալի հաջողություններ թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության և թե մյուս բնագավառներում: 1970 թ. օգոստոսին տեղի ունեցած մարզկոմի 9-րդ պլենումը, վերլուծելով հնգամյակի չորս տարում կատարված աշխատանքները, նշեց, որ այդ ժամանակաշրջանում գյուղատն-

տեսական մթերքների տարեկան միջին համախառն արտադրանքը աճել և հասել է 79 միլիարդ ռուբլու, որը 12.7 միլիարդ ռուբլով ավելին էր, քան նախորդ 5 տարում¹²:

1971 թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ ԼՂ մարզկոմի 25-րդ կոնֆերանսը, որտեղ հաշվետվությամբ հանդես գալով՝ առաջին քարտուղար Գ. Մելքունյանը վերլուծեց հաշվետու ժամանակաշրջանում մարզում ձեռք բերված հաջողությունները, նաև խոսք բացեց մի շարք ձեռնարկությունների (ամենից առաջ սննդի) մասին, որոնք հետ էին մնում հնգամյակի առաջադրանքները կատարելուց: Անթույլատրելի էր, երբ հնգամյակի տարիներին չէին յուրացվել 11.8 միլիոն ռուբլու կապիտալ ներդրումներ: Կոնֆերանսի ընդունած բանաձևը պարտավորեցնում էր մարզի կուսակցական, պետական և հասարակական մարմիններին բոլոր հնարավորություններն օգտագործել և 9-րդ հնգամյա պլանի կատարումը սկսել պատրաստ և ավարտել հաղթանակով:

Աղբբեջանում տեղի էին ունենում քաղաքական տեղաշարժեր: Անվտանգության կոմիտեի նախագահ Զեյդար Ալիևը, դառնալով հանրապետության կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, որպես Աղբբեջանում ընդունված կարգ, իր շուրջը պետք է համախմբեր իր ազգակիցներին: Այս առումով նրա համար ո՞վ էր Գուրգեն Մելքունյանը: 1973 թ. աշնանը Գուրգեն Մելքունյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից, և մարզկոմի առաջին քարտուղար ուղարկվեց մինչ այդ Բաքվի Քիչլիի շրջանի շրջկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովը: Նա այդ պաշտոնում մնաց մինչև 1988 թ. փետրվարի 22-ը: Ամբողջ այդ ընթացքում այդ շառլատանը միայն նսեմացնում էր արցախահայությանը և անառարկելիորեն իրագործում Բաքվի կամքը: Վերջին տարիներին մարզկոմի նախկին քարտուղար Եղիշե Սադոյանը և մարզկոմի նախկին աշխատող Վահան Գարությունյանը, հանդես գալով մարզային մամուլում, փորձել են Բ. Կևորկովին, այսպես ասած, վարկափրկել և մասնակիորեն արդարացնել: Անկասկած, Կևորկովը Լեռնային Ղարաբաղում որոշ աշխատանքներ է կատարել արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման գործում: Սակայն նրա այն քաղաքականությանը, որը տանում էր մարզը թուրքացնելու և արցախահայությանը թուրք-ազերիների առաջ նսեմացնելու համար, ոչ մի ներում չի կարող լինել: Լեռնային Ղարաբաղում նրա վարած կադրային քաղաքականությունը ոչ մի քննադատության չի դիմանում: Նրա քարտուղարության օրոք հարյուրավոր մասնագետներ և ընտանիքներ են հեռացել հայրենի օջախներից, իսկ դրա փոխարեն հազարավոր թուրք-ազերիներ են բնակություն հաստատել Լեռնային Ղարաբաղում:

Բորիս Կևորկովը սիրում էր հաճախակի և ցուցադրաբար հանդես գալ հաշվետվություններով ու ճառերով թվերը: Նա, 1974 թ. փետրվարի 12-ին տեղի ունեցած ԼՂ մարզկոմի 26-րդ կոնֆերանսում հանդես գալով հաշվետվությամբ, վերլուծելով վերջին երեք տարում մարզի արդյունաբերության զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, նշեց, որ մարզի արդյունաբերությունը տեխնիկապես վերազինվել է, գիտատեխնիկական նվաճումներն արմատավորվել են, և ամրապնդվել է արտադրության կոմպլեքսային մեքենայացումը: Այս հայտարարությունները չափազանցված էին: Նա նաև հայտարարեց, թե արդյունաբերության բնագավառում աճի տեմպերը 10.3%-ի դիմաց կազմել են 71.1%, որը թերևս խիստ մեծացված է: Նա չթաքցրեց, որ 9-րդ հնգամյակի առաջին երեք տարում պլաններից պակաս է թողարկվել գրեթե 2 մլն ռ. արտադրանք: 1973 թ. վատ աշխատանքի հետևանքով չէին կատարվել արդյունաբերության «Բ» ծյուղի պլանները:

70-ական թթ. Լեռնային Ղարաբաղում աշխատանքները համեմատաբար հաջող էին ընթանում գյուղատնտեսության բնագավառում, մանավանդ խաղողագործության, հացահատիկային կուլտուրաների մշակման, անասնաբուծության և այլն: Օրինակ 9-րդ հնգամյակում գյուղատնտեսության համախառն արտադրանքի տարեկան արտադրությունն աճել էր 2.1%-ով: Կոնֆերանսում բնորոշված բանաձևը պարտավորեցնում էր հնգամյակն ավարտել բարձր ցուցանիշներով¹²:

Բ. Կևորկովի քարտուղարության օրոք մարզում արմատավորվում էին թծնանքը և խաբեբայությունը, կեղծիքն ու երեսպաշտությունը: Դա ժառանգվել էր Ադրբեջանի իշխանություններից: Բացի դրանից, Կևորկովն իր համար ստեղծել էր կուռք և ամեն կերպ նպաստում էր արցախցիների աչքում Ալիևի դերի բարձրացմանը: Այդպիսի մի ցայտուն առիթ հանդիսացան 1979 թ. հունվարյան իրադարձությունները: Յունվարի 12-ին շարք մտավ Ադդամ-Ստեփանակերտ երկաթուղագիծը: Շնորհավորելու համար Ստեփանակերտ էր ժամանել Յեյդար Ալիևը: Ըստ Բ. Կևորկովի բնորոշման Յեյդար Ալիևը հանդիսանում էր արցախահայության ամենաջերմ բարեկամը, հոգացող հայրը: Յունվարի 13-ին Ստեփանակերտի Մ. Գորկու անվան դրամատիկական թատրոնում տեղի էր ունենում կուսակցության մարզկոմի 28-րդ կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում էր նաև Յեյդար Ալիևը: Որպես պատասխան Կևորկովի թծնանքի, ճառով հանդես գալով Ալիևը աչ ու ծախ կեղծում և խաբում էր: Տեսեք նրա արտահայտվելու ոճը. «Կոնֆերանսը տեղի է ունենում զաղափարաբաղաբաղական բարձր մակարդակով, վառ կերպով արտացոլում է ԼՂԻՄ-ում, ինչպես և մեր ամբողջ հանրապետությունում տիրող բարոյաբաղաբաղական ու գործարար ամբողջ իրադրությունը.

ցուցադրում է մարզային կուսակցական կազմակերպության, Լեռնային Ղարաբաղի բոլոր աշխատավորների միաձույլ համախմբվածությունը մեր կուսակցության, նրա Կենտրոնական կոմիտեի, ընկեր Լ. Ի. Բրեժնևի գլխավորած Կենտկոմի քաղբյուրոյի շուրջը»: Ապա «Վերջին տարիներին բարձրացել է կուսակցության մարզային կոմիտեի ամբողջ գործունեության մակարդակը, զգալիորեն բարձրացել է մարզկոմի, շրջկոմների, ԼՂԻՄ բոլոր կուսակցական կազմակերպությունների աշխատանքի ոճը: Ուժեղացել է ժողովրդական տնտեսության ղեկավարությունը, ամրապնդվել է կարգապահությունը, բարձրացել պահանջկոտությունը, կոմունիստների, ղեկավար կադրերի պատասխանատվության զգացումը»: Այդքան սուտը քիչ համարելով հանրապետության Կենտկոմի քարտուղարը չի կարողանում պահել իր սանձը. «Փոփոխություններ են տեղի ունեցել կուսակցական աշխատանքի այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են կադրերի ընտրությունը, տեղաբաշխումը և դաստիարակությունը: Զգալիորեն ուժեղացել է գաղափարական աշխատանքը»: Իսկ վերջում «Վերջին տարիներին հանրապետության, այդ թվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ձեռք բերած հաջողությունները զաղափարական աշխատանքի ուժեղացման, մեր կուսակցության լենինյան ազգային իմաստուն քաղաքականության կենսագործման արդյունքն են...»¹³: Ահա քեզ Յեյդար:

Ձարմանալի է, երբ մարզկոմի քարտուղարը ձգտում էր մարդկանց խաբել կեղծ թվերով: 1983 թ. հունիսի սկզբին հողվածով հանդես գալով հանրապետական «Կոմունիստ» թերթում (N130) կատարում է այսպիսի մի հայտարարություն. մարզի արդյունաբերությունը 1983 թ. 1923 թ. համեմատությամբ աճել է 912 անգամ: Մարզը կազմակերպվել է հենց այդ նույն թվականի կեսերին, և նոր էր սկսվել արտադրության կազմակերպումը: Ինչո՞ւ 1983 թ. մակարդակը չէր համեմատում 1913 թ. մակարդակի հետ, այլ համեմատում էր 1923 թ. հետ: Դա կլիներ ավելի գիտական և համոզիչ, այլ ոչ թե բացահայտ աչքակապություն:

Յետպատերազմյան տարիներին մարզի կյանքում կարևոր տեղ ունեին աշխատավորների պատգամավորների մարզային խորհուրդները: Խորհուրդները, լինելով ամենամասսայական պետական կազմակերպությունները, զբաղվում էին ժողովրդական զանգվածների ամենալայն հարցերով: 1945 թ. օգոստոսի 22-ին տեղի ունեցած մարզխորհրդի նստաշրջանը, քննարկելով տեղական խորհուրդների կազմակերպական-մասսայական աշխատանքը, հավաստիացրեց

մարզի բնակչությանը, որ «խաղաղ զարգացման ժամանակաշրջանում մարզի տեղական խորհուրդները փառքով կկատարեն իրենց առաջ դրված մեծագույն խնդիրները, ներկա պահանջների համապատասխան կվերակառուցվեն գյուղում տարվող կազմակերպական-մասսայական աշխատանքները»¹⁵: Կուսակցական կազմակերպությունները, հաստատելով իրենց մենիշխանությունը, կամա թե ակամա իրենց վրա էին վերցրել նաև տեղական խորհուրդների մի շարք ֆունկցիաներ: Խորհուրդները ճնշված և իրավագրված էին: Այդ նույնը կատարվում էր նաև Լեռնային Ղարաբաղում: Բաքվից եկած մանկլավիկները, ամբողջ իշխանությունը կենտրոնացնելով իրենց ձեռքում, մարզային խորհուրդներին ջշել էին մի անկյուն և նրանց կտրել ժողովրդական մասսաներից:

1946 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած մարզխորհրդի 9-րդ նստաշրջանում, որտեղ հաշվետվությամբ հանդես եկավ մարզխորհրդի նախագահ Ե. Ակոպովը, նշվեց, որ մարզում արդյունաբերական ապրանքների համախառն արտադրանքը կատարվել է 106%-ով, ըստ որում Ղարաբաղարդյունաբերությունը՝ 114.4, Ղարաբնտրեստը՝ 110.3, տեղական արդյունաբերությունը՝ 101.3, հացի գործարանը՝ 135.9, տպարանը՝ 111.6, բոժոժի մթերումը՝ 107.5%-ով: Այդ պլանների գերակատարման գործում կարևոր դեր են ունեցել նաև տեղական խորհուրդները և արտադրության մեջ աշխատող պատգամավորները: Նստաշրջանում առանձնապես խոսվեց մարզում խաղողի այգիների տարածությունն ընդլայնելու մասին՝ 2741 հեկտարից հասցնել 3041 հեկտարի¹⁶:

Մարզի գյուղական խորհուրդների աշխատանքները վերակառուցման կարիք ունեին: Այն պետք էր մոտեցնել աշխատավոր մասսաներին: Նստաշրջանում նշվեց, որ այդ տեսակետից խրախուսելի աշխատանք են կատարում Մարտունու շրջանի Սխտորաշենի, Գիշիի, Ղզղալայի, Ստեփանակերտի շրջանի Բալլուջայի, Գաղրուֆի շրջանի Տողի, Տունիի և այլ գյուղական խորհուրդներ:

Մարզային խորհուրդների աշխատանքներում կարևոր դեր ուներ պետական պլանների կատարումը: Կազմակերպված մասսայական լայն աշխատանքի շնորհիվ մարզում օգոստոսի 12-ին կատարվել էր հացահատիկային կուլտուրաների 1947 թ. պետական պլանը, իսկ բոժոժի պլանը կատարվել էր 105%-ով: Մարզի դպրոցական բոլոր շենքերը ենթարկվել էին նորոգման, մթերվել էր վառելափայտը, դպրոցների համար ձեռք էր բերվել որոշ իրեր և այլն: Մարզի տեղական խորհուրդներում գործող 434 մշտական հանձնաժողովների աշխատանքներին ներգրավվել էին երկու հազարից ավելի պատգամավորներ¹⁷:

Ղարաբաղի տեղական խորհուրդների ընտրությունները տեղի էին ունեցել ութ տարի առաջ՝ 1939 թ.: Այդ տարիներին մարզային խորհրդի գործկոմի, շրջանային և գյուղական խորհուրդների գործունեությունը հիմնականում կենտրոնացված է եղել մարզի մշակութային և տնտեսական շինարարության, պետական կարգի պահպանումն ամրապնդելու և երկրի պաշտպանությունն ուժեղացնելու վրա: Մարզգործկոմի նախագահի տեղակալ Ա. Մուսայեչյանը, խոսելով մարզային խորհուրդների կատարած աշխատանքների մասին, նշել է, որ այդ տարիներին խորհուրդների օժանդակությամբ կառուցվել է Մատաղիսիէկը, Ստեփանակերտում հիվանդանոց, մարզային նոր հիվանդանոց 200 մահճակալով, բնական կաուչուկի արտադրության փորձնական գործարանը, բժշկական ուսումնարանի շենքը և այլն: Շուշիում կառուցվել են մետաքսակարժական ֆաբրիկայի նոր արտադրամաս, կաշեգործարան, կոշիկեղենի և հագուստի անհատական պատվերների ֆաբրիկա, մեխանիկական սայլաշինության, փայտամշակման, կոճինդրի, աղյուսի, գինու, օղու, լուցկու արտադրամասեր, ալրաղաց և այլն: Ստեփանակերտում կառուցվել են սոցկուլտուրայի տուն, միջնակարգ դպրոցի շենք, անտառտնտեսության տուն, ճանապարհաշինարարության բաժնի տուն, Ղարաբնտրեստի տուն: Ավարտվել է 400 կիլովատտանոց ջերմաէլեկտրակայանի կառուցումը: Ընդհանուր առմամբ, 1947 թ. տեղական արդյունաբերության արտադրանքն ավելացել էր 3.4 անգամ, արհեստակցական կուլպերացիայինը՝ 28.8 անգամ¹⁸:

Մարզը նախապատրաստվում էր անցկացնել տեղական խորհուրդների ընտրություններ: Նախատեսված էր ընտրել 1800 ժողովրդական պատգամավոր: Խորհուրդների ընտրությունները տեղի ունեցան 1948 թ. հունվարին: Ընտրվեց 1700 պատգամավոր: Մարզի նորընտիր խորհուրդներում քննարկվում էին տնտեսությանը, կենցաղին, մշակութային, սոցիալական խնդիրներին վերաբերող հարցեր: 1950 թ. ապրիլի սկզբին մարզխորհրդի գործկոմը, քննարկելով Մարտակերտի շրջանի Մաղավուզի և Ստեփանակերտի շրջանի Խանաբաղի գյուղխորհուրդների նախագահների զեկուցումները մարզխորհրդի 8-րդ նստաշրջանի «Մարզի գյուղի վիճակի և նրանց բարեկարգման միջոցառումների մասին» որոշման կենսագործման ուղղությամբ իրենց կատարած աշխատանքների մասին, նշեց, որ չնայած շինարարության բնագավառում երկու գյուղերում էլ հասել են որոշ հաջողությունների, այնուամենայնիվ, այդ գյուղերի գյուղխորհուրդների գործունեության մեջ կան լուրջ թերություններ, մանավանդ Խանաբաղում: Մարզգործկոմը նպատակահարմար գտավ լրջորեն զբաղվել մարզի գյուղերի բարեկարգման հարցերով¹⁹:

խորհուրդների աշխատանքներում կարևոր տեղ ուներ սոցիալիստական մրցության կազմակերպման և ղեկավարման գործը: Մարգարիտի հրահանգչուհի Փնջիկ Միարոնյանը, այդ առթիվ հանդես գալով մամուլում, կոչ էր անում գյուղական խորհուրդներին հմտորեն գլխավորել կոլտնտեսային արտադրությունը, իսկ դա պետք է հանդիսանա խորհուրդների սոցիալիստական մրցության կարևոր կետերից մեկը: Մամուլը հաղորդել է, որ հմտորեն են աշխատում Գյուլնե Ճարտարի, Շեխերի, Չլղրանի, Ն. Գոռաթաղի, Հին Թաղերի, Փիրջամալի և այլ գյուղական խորհուրդներ: Կոչ է արվում, որ ոչ մի գյուղխորհուրդ դուրս չմնա սոցիալիստական մրցությունից:

Տեղական խորհուրդների հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 1950 թ. դեկտեմբերի 24-ին: Թեկնածուներ առաջադրվեցին արտադրության առաջավորներ, գիտության և մշակույթի ներկայացուցիչներ, ուսուցիչներ, բժիշկներ և այլն: Ընտրվեցին մարզային մեկ, քաղաքային երկու և գյուղական 84 խորհուրդներ: Ընտրություններին մասնակցեց 72.667 հոգի²⁰, որը կազմել է ընտրողների թվի 99.98%-ը: Խորհրդային պատմության մեջ մինչև 1980-ական թթ. վերջը այսպես կեղծվել են ընտրությունների արդյունքները: Դա տեղի էր ունեցել ոչ միայն տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ, այլև Գերագույն խորհրդի, միայն թե աշխարհին խաբեին խորհրդային երկրի ժողովուրդների միասնությունով և, որպես դրա լավագույն ապացույց, բերում էին խորհուրդների ընտրությունների արդյունքները:

1952 թ. հունվարին տեղի ունեցած ԼՂ մարզային խորհրդի չորրորդ նստաշրջանը քննարկեց գյուղական խորհուրդների կազմակերպական-մասսայական աշխատանքների վիճակը և նրա բարելավման միջոցառումների մասին հարցը: Ձեկուցումով հանդես եկավ մարզխորհրդի նախագահի տեղակալ Ռ. Շահրամանյանը: Թե գեկուցողը և թե ելույթ ունեցողները բացահայտեցին մի շարք թերություններ և դրանք վերացնելու համար նշեցին ուղիներ:

Մարգարիտի հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 1953 թ. մարտի 15-ին, որն ուղիղ նախորդի կրկնությունն էր: Մարգարիտի սխտեմատիկ հետևում էր գյուղական խորհուրդների աշխատանքներին և ձգտում նրանցում տեղ գտած թերությունները վերացնել ու նրանց գործունեության մեջ նոր թարմություն մտցնել: 1954 թ. հունվարին տեղի ունեցած մարգարիտի 5-րդ նստաշրջանը, քննարկելով «Գյուղական խորհուրդների աշխատանքի դրվածքի և նրա բարելավման միջոցառումների մասին» հարցը, ընդունեց որոշում, որում մի շարք միջոցառումներ էին առաջարկվում գյուղական խորհուրդների աշխատանքները անհրաժեշտ բարձրության վրա դնելու համար: Գյուղական խոր-

հուրդների դերի և հեղինակության բարձրացման հարցին անդրադարձավ «Սովետական Ղարաբաղ» թերթը 1954 թ. մայիսի 27-ի համարում, որտեղ շեշտվեց, որ գյուղատնտեսության զարգացման հարցում կարևոր դեր ունեն գյուղական խորհուրդները: Օրինակ է բերվում, որ Մարտակերտի շրջանի Թալիշի գյուղական խորհրդի աջակցությամբ ամրակնդվել են կոլտնտեսության կազմակերպատնտեսական աշխատանքները, և բարձրացվել աշխատանքային կարգապահությունը²¹:

Մարզի տեղական խորհուրդներում բավականին թվով պատգամավոր կանայք կային: Օրինակ Ստեփանակերտի շրջանի խորհուրդների անդամներից 162-ը կին էին: Կին պատգամավորները արտադրության առաջավորներ էին, մշակույթի և սոցիալական բնագավառի ներկայացուցիչներ: Միայն Ղարմետաքսարդյունաբերության համակարգում աշխատող 2200 կանանցից 1500-ը արտադրության առաջավորներ էին, որոնցից 10-ից ավելին խորհուրդների պատգամավորներ: Ա. Ալավերդյանը, Փ. Արախամյանը, Ա. Դադայանը աշխատում էին երեքական դագահի վրա և օրվա առաջադրանքները կատարում 115-130%-ով²¹: 1955 թ. մարտի 6-ին տեղի ունեցած խորհուրդների ընտրությունների ժամանակ 611 կին ընտրվել էր խորհուրդների պատգամավորներ:

1957 թ. մարտին տեղի ունեցած խորհուրդների ընտրություններից հետո ապրիլի 6-ին, տեղի ունեցած ԼՂԽ խորհուրդների 6-րդ գումարման մարզային խորհրդի առաջին նստաշրջանում մարգարիտի նախագահ վերընտրվեց Ռ. Շահրամանյանը: Նա լավ գիտեր իր գործը, նվիրված էր և սկզբունքային, մտահոգված էր մարզի վերելքով: Մարզի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հարցերը մարգարիտի ուշադրության կենտրոնում էին: Մարգարիտի ուշադրությունից չէին վրիպում նաև լուսավորության, առողջապահության, սոցիալական մյուս բնագավառների հարցերը²³:

ԼՂԽ մարգարիտի, 1957 թ. հունիսին իր նստաշրջանում լսելով գյուղական բնակչության բուժսպասարկման վիճակի հարցը, արձանագրեց, որ ներկայումս մարզի հիվանդանոցներում գտնվող 825 մահճակալից 365-ը գտնվում են գյուղական վայրերում, իսկ բժշկական 810 միջին աշխատողներից 494-ը աշխատում են գյուղերում²⁴: Մարգարիտի նստաշրջանը որոշում ընդունեց գյուղական այն վայրերում, որտեղ բուժկետեր չկան, դրանք բացել, ընդայնել գյուղական հիվանդանոցների թիվն ու տեղերը:

Տեղական խորհուրդների կյանքում կարևոր տեղ ունեին խորհուրդների մշտական հանձնաժողովները: Մարզի խորհուրդների 369 մշտական հանձնաժողովներում ընդգրկված էր 1638 պատգամավոր, 341-ով ավելի, քան անցած ընտրությունների ժամանակ էր: Օրինակելի աշխա-

տակըներ էին կատարում Մարտակերտի շրջանի Լեմինավանի գյուղական խորհրդի մշտական հանձնաժողովները: Նրանցից հետո չէին սնուն մտեփանակերտի շրջանի Նախիջևանիկի և Խանաբադի գյուղական խորհուրդների հանձնաժողովները²⁵:

Յուրաքանչյուր հնգամյա պլանի ընդունման և իրագործման մեջ վճռական դեր ունեին խորհուրդները: Խորհուրդները, հետամուտ լինելով պլանների կատարմանը, իրենց միատեղում հաճախակի էին քննարկում դրա հետ կապված այս կամ այն հարցը և ընդունում որոշումներ: 1961 թ. մարտի 19-ին տեղի ունեցած մարզային խորհուրդների ընտրություններից հետո մարզխորհրդի նախագահ Ռ. Շահրամանյանը իր հաշվետու զեկուցման մեջ հարց դրեց ուժեղացնել մշտական հանձնաժողովների աշխատանքները, նրանցում ընդգրկել ավելի մեծ թվով ոչ պատգամավորներ: Այդ ժամանակ մարզում գործում էին 344 մշտական հանձնաժողովներ, որոնց աշխատանքներին մասնակցում էին 2000-ից ավելի արտադրության առաջավորներ: Վերոհիշյալ միտում նաև նշվեց, որ իրենց արդարացնում են տեղական խորհուրդներին կից ստեղծված արտահաստիքային բաժիններն ու հրահանգիչները, ինչպես և Ստեփանակերտի քաղաքային ու շրջանային խորհուրդների գործկոմներին առընթեր արտահաստիքային առևտրական բաժինները, որոնցում ընդգրկված էր 50 մարդ²⁶:

Ինչպես նշվել է, պլանների քննարկման և ընդունման հարցը միշտ էլ գտնվել է տեղական խորհուրդների ուշադրության կենտրոնում: 1962 թ. հունվարին տեղի ունեցած մարզխորհրդի 8-րդ գումարման չորրորդ նստաշրջանը, քննարկելով 1962 թ. ժողովրդական տնտեսության զարգացման պլանը, նախ վերլուծեց նախորդ տարվա պլանի կատարումը, ապա՝ անդրադարձավ 1962 թ. պլանի կատարման հնարավորությունների հարցին: Արդյունքում ընդունվեց պլանը, առաջարկվեց այն գերակատարել մի քանի միլիոն ռուբլու արտադրանքով: Միշտ էլ մարզխորհրդի միատեղում քննարկվել է մարզում գրեթե ոչ մի տարի չկատարվող կապիտալ շինարարությունների հարցը²⁷:

Տարեցտարի ավելանում էր տեղական խորհուրդների անդամների թիվը: Այսպես՝ 1963 թ. մարտի 17-ին տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ մարզային խորհրդի անդամ ընտրվեց 119, քաղաքային խորհրդի՝ 122, շրջանային խորհուրդների՝ 240, գյուղական խորհուրդների՝ 1899 և ավանային խորհուրդների՝ 126 պատգամավոր²⁸:

Ստալինի մահից հետո, երբ իշխանության եկավ Ն. Խրուշչովը, որոշ չափով ընդլայնվեցին տեղական խորհուրդների իրավունքները: Նույնիսկ տեղական խորհուրդներն ունեին արտահաստիքային բաժիններ:

Մարզի չորս շրջանային և երկու քաղաքային խորհուրդներում կար կազմակերպչական հինգ, առևտրի և հասարակական սննդի՝ վեց, աշխատավորների դիմումների և բողոքների քննարկման՝ վեց և առողջապահական արտահաստիքային մեկ բաժին, որոնցում հասարակական հիմունքներով աշխատում էր 108 մարդ: Արտահաստիքային բաժինների վարիչները հաստատվում էին համապատասխան խորհրդի նստաշրջանում, իսկ հրահանգիչները՝ գործկոմի միատեղում: Այդ բաժինները կարճ ժամանակամիջոցում դարձել էին շրջանային և քաղաքային խորհուրդների գործկոմների համար հենարաններ²⁹:

1963 թ. ապրիլին տեղի ունեցած մարզխորհրդի 9-րդ գումարման առաջին նստաշրջանը մարզագործկոմի նախագահ ընտրեց Մուշեղ Օհանջանյանին: Նա գործունյա անձնավորություն էր, և մարզկոմի առաջին քարտուղար Գուրգեն Մելքունյանի հետ ավելի շատ մտահոգված էին մարզի կյանքով: Մ. Օհանջանյանն իր մի հողվածում առաջարկում էր հատուկ ուշադրություն դարձնել խորհուրդների նստաշրջանների հրավիրման նախապատրաստմանը, սիստեմատիկ կազմակերպել խորհուրդների գործկոմների նախագահների և քարտուղարների խորհրդակցություններ, բարձրացնել պատգամավորների ակտիվությունը: Նա առաջարկում էր խորհուրդներին բնակչության հետ իրենց կապերն ամրապնդել նախ և առաջ կենցաղային սպասարկման կետեր բացելով և մշակույթի օջախների գործունեությունն ակտիվացնելով³⁰:

Գյուղական խորհուրդները շատ քիչ էին զբաղվում կենցաղային հարցերով, ինչն էլ, բնականաբար, արժանանում է խիստ քննադատության: Նախատեսված էր 8-րդ հնգամյակում կենցաղային սպասարկման աշխատանքների ծավալը մեծացնել մոտ 2,5 անգամ, այդ թվում՝ գյուղական վայրերում՝ ավելի քան 3 անգամ: Մարզի ավելի քան 150 գյուղերում գործում էին կենցաղային սպասարկման օբյեկտներ, կային արհեստանոցներ, կոշիկների նորոգման, կարի կետեր, տարբեր տեսակի տաղավարներ և այլն: Ժամանակի մասուլը և գործկոմները նշում էին, որ տասնյակ գյուղերում լավ է կազմակերպվում բնակչության կենցաղային ապահովումը: Սակայն տասնյակ գյուղերում էլ մոռացության էին տրվել բնակչության կենցաղային հարցերը (Ջանյաթաղ, Մեծ Շեն, Կարմիր գյուղ, Նախիջևանիկ և այլն)³¹:

Մարզի գյուղական և ավանային խորհուրդների աշխատանքներում տեղ գտած բացերն ու թերությունները վերացնելու համար 1967 թ. սեպտեմբերին տեղի ունեցած մարզխորհրդի նստաշրջանը, քննարկելով այդ հարցը, պահանջեց խորհուրդներից՝ ճիշտ կատարել իրենց պետական պարտականությունները, ակտիվորեն մասնակցել տնտեսական և

մշակութային շինարարությանը, ապահովել պետական պլանների կատարումը և խորհուրդների պատգամավորներ ընտրել ավելի կարգապահ ու աշխատանքին նվիրված մարդկանց:

1967 թ. մարտին տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրության ժամանակ պատգամավոր էր ընտրվել 2047 հոգի, որոնք բարեխղճորեն աշխատում էին մարզի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Գովասանքի արժանի աշխատանք էին կատարում Ճարտարի գյուղխորհուրդը, Մարտակերտի շրջխորհրդի նախագահ Ա. Խաչատրյանը, Էդիլլուի գյուղխորհրդի նախագահ Վ. Նավասարդյանը, Նոր Շենի գյուղխորհրդի նախագահ Լ. Գասպարյանը, Չայլուի գյուղխորհրդի նախագահ Ե. Վանյանը և ուրիշներ³²:

1967 թ. հոկտեմբերի 18-ին Լեռնային Ղարաբաղին հանձնվեց Լեռնի շքանշան: Դրանում իր ավանդը ունեին մարզի տեղական խորհուրդները և արտադրության մեջ աշխատող 2000-ից ավելի տեղական խորհուրդների պատգամավորները: Այդ ձեռնարկություններից էր Ղարմետաքսկոմբինատը: Արդյունաբերական այդ հսկան ավտոմատ հաստոցներով, ժամանակակից այլ սարքավորումներով հագեցված ձեռնարկություն էր, որտեղ աշխատում էին 3 հազար բանվոր և ծառայողներ: Հայտնի էին նաև Էլեկտրատեխնիկական գործարանը, կահույքի և կարի նոր ֆաբրիկաները: Մարզի գյուղատնտեսությունը հագեցված էր հարյուրավոր տրակտորներով, կոմբայներով, ավտոմեքենաներով և այլ տեխնիկայով³³: Այդ ամենում իրենց ներդրումն են ունեցել մարզի խորհուրդների հարյուրավոր պատգամավորներ:

Մասսաների հետ կապի լավագույն միջոց էին բնակչության նամակներն ու բողոքները: Տեղական խորհուրդների վերադաս իշխանությունները տարեկան ստանում էին մի քանի հազար նամակ ու բողոք: 1968 թ. մայիսի 28-ին ԼՂԻՄ 11-րդ գումարման մարզային խորհրդի 5-րդ նստաշրջանը, քննարկելով մարզի խորհրդային մարմիններում, ձեռնարկություններում, կազմակերպություններում և հիմնարկություններում աշխատավորների նամակների, գանգատների և դիմումների քննարկման վիճակի, ինչպես և մարզային կոմունալ տնտեսության բարեկարգման հարցերը, պարզում է, որ այդ բնագավառներում կային շատ լուրջ թերություններ: Եթե 5 տարի առաջ մարզգործկոմը ստացել էր 1277 դիմում, ապա 1968-ին այն իջել էր 736-ի: Այդ դիմումներում շատ հարցեր էին բարձրացվում, որոնք քննարկման և լուծման կարիք ունեին³⁴:

Տեղական խորհուրդների հաջորդ ընտրությունները տեղի ունեցան 1968 թ. մարտի 16-ին: Ընտրվեց 2586 պատգամավոր, որոնց մեծամասնությունը արտադրության առաջավորներ էին: Մարզխորհրդի նախագահ Ս. Օհանջանյանը, հանդես գալով մամուլում, նշում է, որ տարեց-

տարի փոխվում են գյուղերի և ավանների տեսքը, շահագործման են հանձնվում դարոցական նոր շենքեր, մշակույթի օջախներ: Ավարտվելու վրա էին Նորագյուղի, Աշանի, Քոչքեկի վերակառուցումը: Գյուղերում, ավաններում և քաղաքներում կառուցվել էին անհատական բազմաթիվ տներ, կենցաղի մեջ էին մտել հեռուստացույցը, սառնարանը, բարձրորակ կահույքը և այլ կենցաղային իրեր: Տասնյակ կիլոմետր ճանապարհներ են կառուցել Տուսի, Էդիլլու, Մեծ Թաղեր, Չլդրան, Խաչմաչ, Սոս, Աշան և այլ գյուղերի կոլտնտեսությունները: Մեծ թափ էր առել պատերազմում զոհվածների հուշարձանների շինարարությունը: Այդպիսի հուշարձաններ կանգնեցրին մարզի բոլոր գյուղերում: Իսկ այդ ամենում իրենց տեղն ունեին խորհուրդներն ու նրանց պատգամավորները:

1971 թ. հունիսին տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ մարզային 1, շրջանային 5, քաղաքային 2, գյուղական 72 և ավանային 6 խորհուրդների կազմում ընտրվեց 2592 պատգամավոր. նրանց թիվը գերազանցում էր նախորդ ընտրությունների ժամանակ ընտրվածների թվին: Ավելացել էին նաև մշտական հանձնաժողովները և հասել 543-ի, որոնցում ընդգրկված էր 1934 պատգամավոր³⁵:

Բորիս Կևորկովը, դառնալով մարզկոմի առաջին քարտուղար, ձեռնամուխ եղավ իր շուրջը հյու-հնազանդ, կամակատար մարդկանց համախմբելուն: Նրան հարկավոր էր նաև մարզխորհրդի նոր նախագահ: Նա հասավ այն բանին, որ 1973 թ. հունիսի 17-ին տեղի ունեցած տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ մարզային խորհրդի պատգամավոր ընտրվեց ոմն Արամայիս Ասլանով, որը և ընտրվեց մարզխորհրդի նախագահ: Նա, լինելով Կևորկովի համախոհը, չէր կարող առանց նրա հետ համաձայնեցնելու որևէ քայլ կատարել: Նա Արցախ-Ղարաբաղը թուրքացնելու Կևորկովի քաղաքականությունը լավ էր սերտել և ամեն կերպ արագացնում էր այդ գործընթացը:

1973 թ. մարտ ամսին մարզխորհրդի գործկոմը որոշում էր ընդունել մարզում սկսել բարձր կուլտուրայի և հասարակական կարգ ու կանոն հաստատելու շարժումը: Արձագանքելով այդ որոշմանը դիմումով հանդես եկավ Մարտակերտի շրջանի Սեյտուլանի գյուղական խորհուրդը, որը լայն պաշտպանություն գտավ մարզում: Քաղաքային և շրջանային խորհուրդների գործկոմները, ամփոփելով շարժումը, 13 ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների շնորհեցին բարձր կուլտուրայի և հասարակական կարգ ու կանոնի կոլեկտիվի կոչում³⁶:

1975 թ. գարնանն ավարտվել էր Ստեփանակերտի օդանավակայանի շինարարությունը: Այստեղ պիտի վայրէջք կատարեին «Յակ-40» ինքնաթիռներ: Նույն թվականի օգոստոսի 6-ը ժողովրդական տոն էր: Այդ օրը առաջին ուղերթն էր կատարվում դեպի Երևան: Առաջին ուղևոր-

ների հետ երևան մեկնեց Ստեփանակերտի պատվիրակությունը: Ժամանակի մամուլը գրել է. «Հարյուրավոր երևանցիներ դրոշներով ու տրանսպարանտներով դիմավորելու էին եկել... Բուռն ծափահարությունների, զինվորական նվագախմբի խրոխտ հնչյունների ուղեկցությամբ պատվիրակության անդամներին, մյուս ուղևորներին թարմ ծաղիկներ են նվիրվում: Չեռքասեղմունները, գրկախառնություններն ու ուրախ բացականչություններն ալիքվում են Հայաստանի մայրաքաղաքի հնագույն օդանավակայանում»:

— Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում ջոլոր նրանց, — իր ելույթում ասաց երևանի քաղխորհրդի նախագահ Մ. Մուրադյանը, — ովքեր ջանքեր են ներդրել երևան-Ստեփանակերտ, Ստեփանակերտ-Երևան օդային կամուրջ ստեղծելու գործում: Կամուրջ, որը կոչվում է երկու քաղաքների միջև, մեր երկու եղբայրական հանրապետությունների միջև տնտեսական, գիտական ու կուլտուրական կապերն ամրապնդելու, ցեմենտավորելու համար: Մենք ուրախ ենք, որ այս հանդիսավոր օրը մեզ մոտ է ժամանել Ստեփանակերտի պատվիրակությունը՝ քաղխորհրդի գործկոմի նախագահ Զ. Ավանեսյանի գլխավորությամբ:

— Հարգելի ընկերներ, — ասաց Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Զ. Ավանեսյանը, — թանկագին երևանցիներ, թույլ տվեք առաջին ուղևորների, Ստեփանակերտ քաղաքի և ամբողջ Լեռնային Ղարաբաղի աշխատավորների անունից ջերմորեն ողջունել ձեզ, ի դեմս ձեզ երևանի և Հայաստանի բոլոր աշխատողներին, մաղթել քաջառողջություն և դարաբաղյան երկարակեցություն³⁷:

Ստեփանակերտ-Երևան, Երևան-Ստեփանակերտ օդային այդ կամուրջը մեծագույն դեր է խաղացել մանավանդ արցախյան ազատագրական պայքարի տարիներին:

Մարզային, շրջանային, գյուղական և ավանային խորհուրդների միստերում քննարկվում էին հարցեր, որոնք կապված էին արտադրության այս կամ այն լայն խնդիրների հետ: Օրինակ՝ 1976 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած մարզխորհրդի 15-րդ գումարման ԼՂԻՄ մարզային խորհրդի 5-րդ նստաշրջանում, ինչպես նշվել է, քննարկելով «Մարզում խաղողագործության վիճակի և նրա հետագա զարգացման միջոցառումների մասին» հարցը, զեկուցումով հանդես եկավ մարզխորհրդի նախագահի առաջին տեղակալ Շմավոն Պետրոսյանը³⁸:

Մարզխորհուրդը հետևողական քայլեր էր ձեռնարկում բարձրացնելու տեղական խորհուրդների դերը: Մարզում գործող 73 գյուղական և 6 ավանային խորհուրդների շարքում հատուկ տեղ ունեւր Գիշիի գյուղական խորհուրդը, որի գլխավորությամբ գյուղում ստեղծվել էր ֆիզկուլ-

տուրայի 2 կուլեկտիվ՝ 266 հոգու ընդգրկումով: Գործում էին սպորտային 6 հրապարակներ: Մարտակերտի շրջանի Լեհինավանում բնակվում էր 4861 հոգի: Այնտեղ կար հիվանդանոց, 2 միջնակարգ և 2 ութամյա դպրոցներ՝ 1000 սովորողով, մշակույթի 5 տուն, 5 գրադարան, 15 խանութ, 3 ճաշարան, ավտոմատ հեռախոսակայան՝ 600 համարով³⁹:

Մարզային խորհուրդներին մտահոգում էր անասնաբուծության զարգացման հարցը: 1979 թ. հուլիսին տեղի ունեցած մարզխորհրդի 16-րդ գումարման 10-րդ նստաշրջանը, քննարկելով մարզում անասնապահության հետագա զարգացման հարցը, որոշում է ընդունում կառուցել նոր խոզանոցներ, անասնապահական համալիրներ և այլն:

1980 թ. փետրվարին տեղի ունեցած մարզային խորհուրդների ընտրությունների ժամանակ ժողովրդական պատգամավոր էր ընտրվել 2812 հոգի: Այդ թիվը պահպանվեց նաև 1982 և 1985 թթ. տեղի ունեցած ընտրությունների ժամանակ:

Հետպատերազմյան տարիներին մարզի հասարակական-քաղաքական կյանքում որոշ դեր են խաղացել նաև կոմերիտական կազմակերպությունը, արհմիությունները, հասարակական մյուս կազմակերպությունները: Դեռևս Մեծ հայրենականի տարիներին փառավորված մարզի կոմերիտական կազմակերպությունը հետագայում ևս աչքի է ընկել իր նվիրվածությամբ: Ասենք, որ խոպանի յուրացման ժամանակ Լեռնային Ղարաբաղից աչքի էր ընկել 91 կոմերիտական: Ավելի քան 79 դարաբաղի կոմերիտականներ արժանացել են կոմերիտիության մարզկոմի և շրջկոմների պատվոգրերի: 12 հոգի էլ ներկայացվել են Հասն-ԿեՄ պատվոգրով պարգևատրվելու համար⁴⁰: 1982 թ. հունվարի 30-ին տեղի ունեցած ԼԿԵՄ ԼՂ մարզային կազմակերպության 33-րդ կոնֆերանսը հայտարարեց, թե մարզի կյանքում չկա որևէ անկյուն, որտեղ իրենց նվիրվածությամբ չաշխատեին կոմերիտականները, որոնց թիվը այդ ժամանակ հասնում էր 12 հազարի⁴¹:

Մարզի կյանքում առանձնահատուկ տեղ ունեին մանավանդ խորհուրդների պատգամավոր կանայք: Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորներ էին ընտրվել Լեռնա Ղուլյանը, Լաուրա Կարապետյանը (Մարտակերտի շրջան), Արեգա Մանվելյանը (Ասկերանի շրջան), Լյուդմիլա Սահակյանը (Հաղորթի շրջան): Հազարավոր կանայք ընտրվել են տեղական խորհուրդների պատգամավորներ: Հասարակական կյանքի ինչ բնագավառ էլ որ վերցնելու լինենք էկոնոմիկա, գիտություն, մշակույթ, ամենուրեք պատասխանատվությամբ էին աչ-

խատում կանայք: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Ս. Օրբելյանը մարզի հպարտությունն էր, Սոցիալիստական աշխատանքի հերոսներ Ք. Առաքելյանը, Գ. Սարինյանը և շատ ու շատ կանայք օրինակ էին ցույց տալիս մարզի կանանց: Մարզից 384 մայրերի շնորհվել է «Հերոսուհի մայր» կոչում: Նրանք շրջապատված էին հոգատարությամբ⁴²:

Մարզի կենտրոն Ստեփանակերտի տարածությունը կազմում է 14 քառակուսի կիլոմետր: Հետպատերազմյան տարիներին բաղաբն իր թևերը փռել է և հասել մինչև Կարկառ: Բարձրացվել են արտադրական, մշակութային և կենցաղային տասնյակ նոր կառույցներ, բնակելի տներ, թաղամասեր: 1975 թ. հանդիսավորությամբ բացվեց Մեծ հայրենականում զոհված արցախցիների հուշահամալիրը: Մարզի 145,5 հազար բնակիչներից 57,5 հազարը բնակվում են Ստեփանակերտում⁴³:

4. Ադրբեջանի իշխանությունների քաղաքական անբարոյականությունը արցախահայության նկատմամբ

Անկախ նրանից, թե խորհրդային իշխանության տարիներին արցախցիներն ինչպիսի մեծագույն մաքառումներով ու նվիրվածությամբ էին հաղթահարում դժվարությունները և առաջ մղում երկրամասը, Ադրբեջանի թուրքական իշխանությունները նրանց նկատմամբ դրսևորում էին բացահայտ հակահայկական քաղաքականություն: Թուրք-ագերիների իշխանության այդ քաղաքական անբարոյականությունը և ազգայնամոլությունն արցախցիներին հարկադրեց բռունցք բարձրացնել և զնդանից դառնալ մուրճ: Արցախցին այլ ելք չուներ: Նրան հարկավոր էր գոյատևել: Նա «ատամն ընդ ատաման» և «ակն ընդ ական» կարգախոսներով պետք է պատասխաներ թուրքի հայատյացությանը:

Արդեն գիտենք, որ Ադրբեջանի իշխանությունները 1920–1930–ական թթ. սկսած վարում էին անբարո քաղաքականություն: Եվ եթե չլիներ արցախցիների նվիրվածությունն ու հավատարմությունը խորհրդային կարգերին, իսկ դա այդպես էր, ապա Արցախ–Ղարաբաղը վաղուց վերացված կլիներ ասպարեզից: Ավագակաբարո թուրքը արժանի է ատելության, ամենից առաջ այն բանի համար, որ միայն 1890–ական թթ. մինչև 1920–ական թթ. սկիզբը նրա ձեռքով սրախողխող է արվել ավելի քան 2 միլիոն 600 հազար հայ: Եվ ո՞ր ժողովուրդը նման ծանր չարիքը կարող է ներել:

Արցախ–Ղարաբաղը հայաթափելու թուրք-ագերիների քաղաքականությունը ավելի բացարձակ դարձավ 1930–ական թթ. և թե Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Թուրքը միշտ էլ մնացել է թուրք: Ղեռև

1933 թ. Բաքուն Մոսկվայի առջև հարց էր բարձրացրել, որ Սևանի ջուրը հասցնեն իրենց տափաստանները՝ շատ լավ պատկերացնելով, որ Սևանն է Հայաստանին պահողը: Հետո էլ ասում են, թե թուրքը բան չի հասկանում: Դիմենք այլ փաստերի. Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի նիստը 1942 թ. հունվարի 22–ին (արձանագրություն N52), քննարկելով «Քաղաքի երիտասարդությանը հավաքագրելու և ֆզո ուղարկելու» հարցը, համաձայն մարզային գործադիր կոմիտեի և մարզային կուսակցական կոմիտեի բյուրոյի համատեղ նիստի որոշման, մինչև փետրվարի 1–ը պետք է հավաքագրվեր 40 հոգի 16–17 տարեկան տղաներ ու 17–18 տարեկան աղջիկներ և ուղարկվել Բաքվի ֆզո (ֆաբգործուսուցման դպրոց)⁴⁴: Մարզի վերադաս իշխանությունների կողմից համանման պահանջ ուղարկվել էր նաև մարզի բոլոր շրջգործկոմներին:

Հետագա իրադարձությունները համոզում են, որ ախտորժակը ուտելու ժամանակ է բացվում: 1942 թ. փետրվարի 15–24–ը տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի և մարզկոմի բյուրոյի համատեղ նիստը, քննարկելով Ադրբեջանի նախարարների խորհրդի փետրվարի 10–ի թիվ 10 հեռագիրը, որը մարզի իշխանություններից պահանջում էր մինչև մարտի 1–ը Բաքվի 130–րդ ֆզո ուղարկել 16–18 տարեկան 150 տղաների և աղջիկների: Նիստը որոշում է կատարել Բաքվի պահանջը և իջեցված թիվը բաժանում է հետևյալ կերպ. Մարտակերտի շրջան 40, Մարտունու՝ 30, Ստեփանակերտի՝ 30, Հադրուբի՝ 25, Շուշիի՝ 15 և Ստեփանակերտ քաղաք՝ 10 հոգի: Քաղխորհրդին և շրջխորհուրդներին հանձնարարվում է ընտրել «ֆիզիկապես առողջ տղաներ և աղջիկներ», նրանց ապահովել տաք հագուստներով, կոշիկներով, սպիտակեղենով և ճանապարհածախսով: Ըստ որում՝ ծախսերի կատարումը դրվում էր ծնողների վրա, որոշ դեպքերում էլ՝ ժողկրթբաժինների⁴⁵:

Այս անգամ ևս Բաքվի պահանջը կատարվել է անառարկելիորեն: Չանցած չորս ամիս՝ հուլիսի 1–ին, Ստեփանակերտում ստացվում է Ադրբեջանի նախարարների խորհրդի նոր թիվ 74 հեռագիրը, որը պահանջվում էր մինչև հուլիսի 10–ը Բաքվի երկաթուղայինների ֆզո ուղարկել 14–17 տարեկան 120 տղա և աղջիկ: Մարզային իշխանություններն այս անգամ այդ թիվը բաժանում են հետևյալ կերպ. Հադրուբի շրջան՝ 30, Մարտունու՝ 30, Ստեփանակերտի՝ 15, Մարտակերտի՝ 30, Շուշիի՝ 5 և Ստեփանակերտ քաղաք՝ 10 հոգի: Նույն ձևով անպայման «ֆիզիկապես առողջ տղաներ և աղջիկներ», և դարձյալ բոլոր ծախսերը պետք է հոգային ծնողները կամ ժողկրթբաժինները⁴⁶:

Մի փոքր անց Բաքվից մարզային իշխանություններին հասկացնում են, որ բանվորական ուժի խիստ կարիք ունի նաև Շուշի քաղաքը, հետևապես պետք է նրան էլ օգնության հասնել: Եվ մարզային իշխանու-

թույնները որոշում են այնտեղ ուղարկել 75 երիտասարդների: Ընդունված որոշման մեջ զգուշացվում է, որ պահանջը չկատարող շրջտորհուրդների ղեկավարները կենթարկվեն պատժի: Պատկերացրեք, թե պատերազմի այդ ժամը շրջանում դա ինչ էր նշանակում: 1942 թ. հուլիսի 27-ին Մարտունու շրջտորհուրդը ստանում է մարզխորհրդի գործկոմի և մարզկոմի բյուրոյի հեռագիրը, ըստ որի Բաքվի ֆզոներում սովորելու համար հանձնարարվում էր շրջանի գյուղերից հավաքագրել հիսուն 16-17 տարեկան տղաներ ու 17-18 տարեկան աղջիկներ և ուղարկել Բաքու ֆզո: Շրջտորհուրդը նույն օրը գործկոմի նիստում քննարկում է հարցը և որոշում պարտավորեցնել բոլոր կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների գործկոմների նախագահներին Բաքվի ֆզո ուղարկվելիք երիտասարդներին ապահովել հագուստով, կոշիկներով և ճանապարհածախսով: Մարզային իշխանությունները նման հանձնարարություններ տվել էին նաև մյուս շրջտորհուրդների և Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմներին:

Ահա մեր ձեռքի տակ է 1943 թ. հոկտեմբերի 16-25-ը տեղի ունեցած մարզխորհրդի գործկոմի և մարզկոմի բյուրոյի համատեղ նիստի արձանագրությունը: Այս նիստում, քննարկելով նույն ամսի 20-ին Ադրբեջանի նախարարների խորհրդի հեռագիրը, որոշվում է 16-18 տարեկան 75 տղաների ու աղջիկների անհապաղ ուղարկել Բաքվի ֆզոներ որպես Ադրբեջանի ապագա բանվորական ուժ:

Այսպիսով միայն 1942-1943 թթ. մոտավոր հաշվումներով Լեռնային Ղարաբաղից դուրս է բերվել 14-18 տարեկան առնվազն 800 երիտասարդ: Իսկ հետագայում: Երբ սկսվեցին Մինգեչաուրի և Սուճախի շինարարությունը, Լեռնային Ղարաբաղից հարյուրավոր երիտասարդներ և ընտանիքներ կենտրոնացված փոխադրվեցին այնտեղ որպես բանվորական ուժ: Հետպատերազմյան այդ տարիներին Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղում շարունակելով Նախիջևանում հայերի նկատմամբ իրագործած քաղաքականությունը, նորանոր հոծ խմբեր էին ուղարկում Բաքու և այլ կառույցներ: Արցախ աշխարհը պարզապես դատարկվում էր: Իսկ դրանից հրճվանք էր զգում Ադրկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, հայերի դահիժ Մ. Բաղիրովը: Արցախահայությանը արտաքսելուց բացի, հայերի սպանդ էին կազմակերպում նաև տեղերում:

1939 թ. Շուշուն բացվել էր երկամյա մանկավարժական ինստիտուտ: Ինստիտուտի առաջին տնօրեն Զավադ Մախլյանի ռազմաճակատ մեկնելուց հետո նրան փոխարինեց պատմաբան, ճանաչված մանկավարժ Աղասի Սաֆարյանը (1941-1947 թթ.), որին սիրում և հարգում էին ինստիտուտի մանկավարժական կոլեկտիվը և ուսանողները: 1946

թ. ինստիտուտը տեղափոխվեց Ստեփանակերտ: Ինստիտուտի կյանքում տեղի ունեցող դրական փոփոխությունները չէին գոհացնում Ադրբեջանի իշխանություններին: Ուստի Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ղեկավարությունը մեղադրվեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու ձգտման մեջ: Ինստիտուտի շատ դասախոսներ դատապարտվեցին, իսկ տնօրեն Աղասի Սաֆարյանին մղեցին ինքնասպանության: Դաժան ճնշման ենթարկվեցին դասախոսներ Արտավազ Ավագյանը, Ռուբեն Ալավերդյանը, Խորեն Բալայանը և ուրիշներ:

Արցախահայության համար մեծագույն ողբերգություն էր Հայրենական մեծ պատերազմը: Նշվել է, որ Խորհրդային բանակ զորակոչվեց ավելի քան 45 հազար արցախցի, իսկ Հյուսիսային Արցախի հետ միասին 90 հազար, որը կազմում էր Արցախ-Ղարաբաղի հայության մեկ երրորդը: Թուրք-ազերիները, լայնորեն օգտագործելով կաշառքն ու այլ միջոցներ, խուսափում էին զորակոչվելուց:

Լեռնային Ղարաբաղը հայաթափելու, այն թուրքերով բնակեցնելու քաղաքականությունը լայնորեն կիրառվեց հետպատերազմյան տարիներին: 1949 թ. հունիսի 13-ին Հայաստանից Ալթայի երկրամաս արքորվեց ավելի քան 12 հազար մարդ: Այդ հարվածից զերծ չմնաց նաև Լեռնային Ղարաբաղը: Շահեն Մկրտչյանը պատմում է, որ 1949 թ. հունիսի 13-ի գիշերը Ստեփանակերտում տեղակայված զորամասի ակունքում կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Սեդրակ Աբրամովի ստորագրած ծանուցագրի հիման վրա տեղի ունեցավ մարզի կուսակցական ակտիվի *խիստ զաղտնի ժողով*, որտեղ պետական անվտանգության մարզային վարչության պետ, գնդապետ Չախլովը հայտնեց, որ գիշերը պետք է կալանվեն և մարզի սահմաններից արտաքսվեն նախկինում դաշնակցական կառավարության մեջ, ինչպես նաև գերմանական գերության մեջ եղած անձինք: Նրանք պիտի արքորվեն իրենց ընտանիքների հետ միասին: Շահեն Մկրտչյանը գրում է, որ այդ օրը Արցախից Ալթայի երկրամաս են արքորվել բոլորովին անմեղ հազարավոր հայկական ընտանիքներ, որոնց թվում էին Ստեփանակերտի միակ ռուսական դպրոցի տնօրեն Համազասպ Ղուկասյանը, Ղարմետաքսկոմբինատի պահեստապետ Կարապետ Ասրյանը, երաժիշտ Գերասիմ Խաչատրյանը և այլք: Պարզվում է, որ հազարավոր հայ ընտանիքներ արքոր են քշվել 1949-ի հունիսին, իսկ նրանց արքորելու վերաբերյալ որոշումը ձևակերպվել է հինգ ամիս ուշ՝ հոկտեմբերի 26-ին, երբ արդեն հարյուրավոր արքորականներ, չդիմանալով անասելի ծանր ու դժվարին պայմաններին, արդեն կենդանի չէին:

Արցախում գործի դրվեց «թևանականությունը», և այդ պիտակով արքայազնի բազմաթիվ ընտանիքներ: Բաքվից Ալթայի երկրամաս ար- սորված նախկին ֆիդայի, գրող, հրապարակախոս Արամայիսը (Միսակ Տեր-Ղանդեյան) 1949 թ. Ալթայի երկրամասից իր հարազատներին գրել է, որ մոտ 50 հազար հայ է արքայազն: Նաև հաղորդել է, որ Բառնա- ուլի մարզի Պարֆիմովկայի շրջանում գտնվում են Ղարաբաղից ար- սորված հետևյալ ընտանիքները.

1. Օհանյան Պավլի, Տումի գյուղից, մոտ 70 տարեկան, ինքն է, կինը, երկու տղան, երկու հարսը, երեք թոռները:
2. Մարդանյան Պավլի, Տումի գյուղից, մոտ 50 տարեկան, ինքն է, կինը, 5 երեխաները:
3. Մելքունյան Սիմոն, Տումի գյուղից, մոտ 60 տարեկան, ինքն է, կինը, երկու տղաները և դուստրը:
4. Ազիզբեկյան Հարություն, Տումի գյուղից, մոտ 35-40 տարեկան, ինքն է, կինը, երկու երեխաները:
5. Սողոմոնյան Գրիշա, Ղզղալա գյուղից, 60-65 տարեկան, ինքն է, կի- նը, տղան և 20-23 տարեկան դուստրը”:

Մ. Բաղիրովի բռնատիրության շրջանում հայ գրողը, հայ արվես- տագետը, հայ գիտնականը իրավունք չունեին ուր ղնել Արցախ և հանդիպել իրենց հայրենակիցների հետ: Բագրատ Ուլուբաբյանը պատմում է, որ 1948 թ. ամռանը Ավետիք Իսահակյանն այցելել է Ար- ցախ, և կուսակցության մարզկոմում ու Ստեփանակերտի երկամյա ինստիտուտում համարձակվեցին ընդունել իրենց ազգային մեծ բա- նաստեղծին: Հենց դրա համար Մ. Բաղիրովը հրավիրել տվեց մարզա- յին արտահերթ կոնֆերանս, մարզկոմը ցրեց, իսկ մարզում էլ կազմա- կերպեց գաղափարական շանտաժ, բանտ ու արքայազնից մարզի լա- վազույն մտավորականներին¹²: Դրանցից էր բանաստեղծ Բոգդան Ջանյանը, որը 1948-ի դեկտեմբերի 18-ին ձերբակալվեց, արքայազն Սիրիի «Նացիոնալիզմի» և «Խակախորհրդային» տրամադրություններ տարածելու մեղադրանքով: Միայն վեց տարի անց նա վերադարձավ հայրենի օջախ¹³:

Դեռևս Մեծ հայրենականի տարիներին սփյուռքահայությունը ցան- կություն էր հայտնել հնարավորություն ընձեռել վերադառնալ և ապրել հայրենիքում: Ելնելով դրանից, ինչպես և արտահայտելով իսկական հայրենասերի իր դիրքն ու կողմնորոշումը Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գր. Հարությունյանը (Հարությունով) 1945 թ. նո- յեմբերի 11-ին անձամբ դիմել է Իոսիֆ Ստալինին Արցախի հիմնահար- ցով: Նկատի ունենալով փաստաթղթի կարևորությունը՝ այն մեջ ենք բե- ռում ամբողջովին.

«ՀամԿ(բ)Կ Կենտկոմ, ընկեր Ստալինին.

Իոսիֆ Վիսարիոնովիչ,

Հայաստանի տարածքին հարող Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1923 թվականից մտնում է Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ:

Այդ մարզի բնակչությունը հիմնականում հայկական է: 153 հազար բնակիչներից 137 հազարը հայեր են:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը հար ու ման է Հայաս- տանի լեռնային մասի գյուղատնտեսությանը: Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ միավորելը մեծապես կնպաստեր նրա զար- գացմանը և կբարելավեր տնտեսության ղեկավարումը:

Բնակչության մշակութային-զանգվածային և քաղաքական սպա- սարկումը մայրենի լեզվով կուժեղանար Հայաստանի հանրապետա- կան մարմինների կողմից ղեկավարվելու դեպքում:

Լեռնային Ղարաբաղի մարզի Հայաստանի կազմի մեջ մտնելը տե- դական կադրերին հնարավորություն կտար շարունակել մայրենի լեզ- վով բարձրագույն կրթություն ստանալ Հայաստանի բուհերում: Մյուս կողմից՝ Հայկական ԽՍՀ-ը կկարողանա Լեռնային Ղարաբաղի մարզից ստանալ ազգային կադրեր, որոնք աչքի են ընկնում իրենց գործարա- թությանը և ներկայումս, բնականաբար, չեն կարող լրիվ օգտագործվել Ադրբեջանում:

Ելնելով դրանից և Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությու- նից՝ Հայաստանի Կենտրոնական կոմիտեն և ժողկոմխորհը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և միութենական կառավարության քննարկմանն են ներկա- յացնում Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ որպես Ղարաբաղի մարզ մտցնելու հարցը:

Այդ հարցի դրական լուծման դեպքում Կենտկոմը և Հայաստանի ժողկոմխորհը կառավարությանն առաջարկություն կներկայացնեն Ղա- րաբաղի նախկին կենտրոնի՝ Շուշի քաղաքի վերակառուցման մասին, այն ավերվել էր խորհրդային իշխանության հաստատումից առաջ:

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար

Գր. Արուսիևով

1945 թ., նոյեմբերի 11»¹⁴:

Գր. Հարությունյանի այդ կուռ և տրամաբանորեն շարադրված նա- մակին անդրադարձել են հայ պատմաբաններ Հրաչիկ Սիմոնյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Ադրբեջանի պատմաբան Իգոր Ալիևը, որը ժամանակին եղել է Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտի տնօրե- նը: Ըստ վերջինի մեկնաբանության՝ Մալենկովը Հարությունյանի դիմու- մը ժամանակին ուղարկել է ԱդրԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար

Մ. Գ. Բաղիրովին ծանոթանալու և արված առաջարկի նկատմամբ իր կարծիքը հայտնելու հանձնարարությամբ: Իբր Բաղիրովը մերժել է Հարությունյանի բոլոր փաստարկները, սակայն մինևույն ժամանակ տվել է իր համաձայնությունը Հայկական ԽՍՀ-ին միացնելու ԼՂԻՄ-ը առանց Շուշիի շրջանի, և Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու Հայկական ԽՍՀ երեք շրջաններ¹⁵: Պարզվում է, որ Բաղիրովն ու Բերիան նույնիսկ մտադիր են եղել Հայաստանից առանձնացնել տարբեր շրջաններ. բնակչության թիվը պակասեցնելով մեկ միլիոնից՝ նրան զրկել հանրապետության իրավունքից¹⁶: Այդ ծրագիրը խախտվեց Ստալինի մահով: Իսկ մինչ այդ բարձրացել էր վերաբնակեցման հարցը՝ Հայաստանում ապրող 130 հազար թուրք-ազերիներին Ադրբեջան տեղափոխելու և Հայաստանում սփյուռքահայությանը տեղավորելու մասին: Ըստ որում՝ վերաբնակեցման հետևանքով ազատված հողերն ու բնակարանները կօգտագործվեին արտասահմանից հայրենիք վերադարձող հայերին տեղավորելու-դասավորելու համար: Ադրբեջանի իշխանությունները փորձեցին թուրք-ազերիների, որոնք պետք է վերաբնակեցվեին և տեղավորվեին Կուր-արաքսյան հարթավայրում, մի մասին տեղավորել Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Արցախցիները լավ էին հասկացել վերաբնակեցման բուն նպատակը: Մեկ տարի անց՝ 1949 թ. ամռանամուտին, նրանց Արցախից տեղափոխեցին Շահումյանի, Խանլարի, Քարհատի և այլ շրջաններ:

Ադրբեջանի իշխանությունները նվաստացուցիչ քաղաքականություն էին վարում ոչ միայն արցախահայության նկատմամբ, այլև հանրապետությունում բնակվող ամբողջ ադրբեջանահայության նկատմամբ: Այն շրջանները, որտեղ ճնշող մեծամասնությունը հայկական բնակավայրեր էին, միացնում էին հարևան ադրբեջանական շրջաններին և դրանք ադրբեջանականացնում: Այդպես վարվեցին Խանլարի և այլ շրջանների հետ:

Ադրբեջանի ազգայնամոլ պարագլուխներն ամեն կերպ նպաստում էին Արցախի տնտեսության քայքայմանն ու թուլացմանը: Կոլտնտեսականները, որոնք օրական աշխատում էին 10-14 ժամ, վարձատրվում էին աննշան: Արցախցին պետք է կերակրեր ընտանիքը, ծերունիներին, փակեր օջախի վրա ծանրացած փոխառությունները, մսի, ձվի, բրդի, յուղի, մորթու պետական պարտքերը: Եվ այդ ամենին զումարվեց 1950 թ. դեկտեմբերին ստեղծված վիճակը: Պետությանը հանձնվող բրդի պլանը գերակատարելու համար այդ ժամանակ տեղական կուսակցական-պետական ղեկավարության և մարզի դատաբանչական աշխատողների հսկողությամբ ու մասնակցությամբ քանդվեցին բնակիչների տեղաշորերը՝ վերմակները, ներքնակները, բարձերը, և հանվեց դրանց միջի բուրդը:

Ասում են այդ ժամանակ Մ. Բաղիրովը Կրեմլին տված իր խոստումը «փայլուն» կերպով կատարել է և պետությանը հանձնել լրացուցիչ մի քանի հարյուր տոննա բուրդ և:

Արցախում ծանրացող տնտեսական պայմանները հազարավոր մարդկանց ստիպում են թողնել հայրենի եզերքը և ապրելու պայմաններ որոնել այլ տեղերում: Ճնշող ծանր կենսապայմանները, չդադարող բռնությունները և ընդհանուր վիճակի մշուշոտությունը տասնյակ հազարավոր արցախցիների դուրս մտեցին երկրամասից: Այդ դաժան ճակատագրի պատճառով 1949-1956 թթ. շուրջ 30 հազար աշխատավոր կամ մարզի բնակչության մոտ 20%-ը հեռացել էր հայրենի հողից:

Ադրբեջանի իշխանության քմահաճ վերաբերմունքի հետևանքով փակվեցին տեղական արդյունաբերության 18 արտել՝ 1054 աշխատողով, շինանյութի ձեռնարկությունը՝ 317 աշխատողով, 5 մետաքսագործական ֆաբրիկաներ 926 աշխատողով, նույնիսկ բռնի ուժ գործադրելով դատարկվեցին ՀԽՍՀ-ին հարող հայկական Թեգխարաբ, Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Արփազյադուկ գյուղերը, փակվեց Հաղորթի մանկավարժական տեխնիկումը, 1953-ին՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը: Ամբողջովին քանդեցին և ավիրեցին Եվլախ-Ստեփանակերտ 116 կմ երկարությամբ երկաթուղին, կտրեցին շուրջ 1200 հա շահ թեքնու դարավոր այգիներ, ավերեցին 100-ից ավելի հայկական հուշարձաններ¹⁷:

1956 թ. տեղի ունեցած ԽՄԿԿ 20-րդ համագումարը փորձեց խորհրդային կյանքում «միջանցիկ քամի» առաջ բերել: Հեղուկատերազմյան տարիներին, մանավանդ Ստալինի մահից հետո, երկրի հասարակական-քաղաքական կյանքում մեծ տեղաշարժեր էին տեղի ունեցել: Դառնություններով լի կյանքը, այնուամենայնիվ, արցախցիներին չկարողացավ ստիպել լինել հնազանդ: 1958 թ. կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար դառնալով՝ Նիկոլայ Շահնազարովը իրեն զրևսորեց ավելի համարձակ: Ըստ ժամանակակիցների պատմածի՝ նա, ելույթ ունենալով Շուշիի կուսակցական ակտիվի միստում, պահանջել էր ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում ժողովներն անցկացնել միայն ադրբեջաներեն¹⁸: Նա խրախուսում էր մարզային բնույթի միջոցառումների ժամանակ խոսել ադրբեջաներեն, իսկ նրանցից, ովքեր հայերեն էին խոսում, պահանջում էր խոսել ռուսերեն: Մարզում հիմնականում տեղավորում էր թուրք մասնագետների, առաջին հերթին՝ բժիշկներին: Նույնիսկ մտադիր էր «խորհրդային Ղարաբաղ» չորստեղանոց թերթի երկու էջերն ադրբեջաներեն դարձնել:

Այս ամենը, անշուշտ, չէր կարող առաջ չբերել մարզի բնակչության թողոքն ու դժգոհությունը:

Ն. Շահնագարովը, գրում է Բագրատ Ուլուբաբյանը, հավանաբար «կազմել էր բերանները փակելու, այսպես կոչված, ազգայնական խնդրումները տեղեղում ոչնչացնելու իր ծրագիրը», որի իրականացումը սկսվեց Ստեփանակերտի շինարարների ակտիվի մի նիստով: Նա որոշել էր այդ նիստում հպարտանալ Բաքվից եկած էմիգրանտների առաջ և ցույց տալ, թե ինչպես է նրանց հանձնարարությունն իրականացնում օր առաջ: Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը զբաղեցրած արցախցի շինարարները փորձեցին Շահնագարովին հասկացնել, որ «Նախիջևանից բերած զուռնան Արցախում չի կարող նվագել...»¹⁹: Դահլիճը թույլ չտվեց, որ Շահնագարովը զեկուցի: Նրանից պահանջեցին միայն լսել իրենց: Այդ ժողովում Շահնագարովը գնահատվեց որպես շառլատան, և նրա յուրաքանչյուր երկու քայլից մեկը՝ դատապարտելի:

Լեռնային Ղարաբաղից հարյուրավոր աշխատողներ բողոք—նամակներ էին ուղարկում վերադաս մարմիններին, որոնց հեղինակներն իրենց վրդովմունքն էին արտահայտում մարզկոմի քարտուղարի դեմ և պահանջում նրան ազատել զբաղեցրած պաշտոնից: Նրանք նաև ներկայացնում էին իրենց պահանջը՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորել հտորիրդային Հայաստանի հետ: Հանուն այդ կարևորագույն խնդրի՝ առաջինը իրենց ծայրը բարձրացրին Ստեփանակերտի ավտոշարասյան աշխատավորները, ովքեր, 300 ստորագրությամբ ԽՄԿԿ Կենտկոմ և նախարարների խորհուրդ ուղարկած բողոք—նամակում նկարագրելով մարզի գյուղական վիճակը, պահանջում էին ընդառաջել հայության կանքին և Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի հետ: Այդ ժամանակ 1960—ական թթ. սկզբին, Ստեփանակերտի ավտոշարասյունը դարձել էր բոլորի ուշադրության կենտրոնը: Բագրատ Ուլուբաբյանը հիշում է. «Քննչական մարմինները, ներքին գործերի մինիստրության ու ՊԱԿ—ի աշխատողներն այնտեղ շատ գործ կատարեցին՝ մարդկանց նեղելու, ձեռնարկությունում սարսափի ու խեղճացման հին մթնոլորտը վերականգնելու համար»²⁰:

Պայքարը, որը տարվում էր Ն. Շահնագարովի դեմ, հիմնականում նպատակ ուներ պահպանել մարզի հայկականությունը: Ն. Շահնագարովի քառամյա գործունեության ժամանակ կատարված հակաօրինական քայլերի մասին Բագրատ Ուլուբաբյանը բողոք ներկայացրեց Մոսկվա: 1962 թ. Շահնագարովն ազատվեց պաշտոնից, և մարզկոմի առաջին քարտուղար ընտրվեց Գուրգեն Մելքունյանը, որը մինչ այդ աշխատում էր որպես մարզկոմի քարտուղար:

Մեր սերունդը լավ է հիշում, որ Լեռնային Ղարաբաղի մյուս հարակից հայկական շրջանների վիճակը բարելավելու և մայր Հայաստանի հետ վերամիավորելու շարժումը կրկին օրակարգի հարց դարձավ, երբ ստա-

լինյան բռնատիրությունը ջախջախիչ հարված ստացավ ու ասպարեզ բարձրացավ ժողովրդավարության համար տարվող պայքարը: Այդ ժամանակաշրջանում արցախցիները, ինչպես ակնարկվեց, հանդես էին գալիս դիմումներով, խնդրագրերով և ստորագրահավաքներով:

Այդ կարգի փաստաթղթերից է նաև Արցախի և Գարդմանի հայերի շուրջ 2500 ստորագրությամբ համախոսական դիմումը, որը 1862 թ. ուղարկվել է Նիկիտա Խրուշչովին, որտեղ հանգամանորեն շարադրվել էր երկրամասի բնակչության ծանր և անտանելի վիճակը: Այդ նամակն առաջին անգամ հրատարակվել է «Սփյուռք» շաբաթաթերթի 1963 թ. դեկտեմբերի 31—ի համարում: Նրանում մասամբ ասված է, որ Արցախը, որն ընկած է Արաքսի, Քոչի և Սևանա լճի միջև և «միշտ էլ Հայաստանի անբաժանելի մասն է կազմել», գտնվում է ստրկական վիճակում: Թուրք—մոնղոլները, որոնք Միջին Ասիայի կողմերից երևացին միջնադարում, հայերին դուրս մղեցին հարթավայրերից, ոչնչացրին նրանց գյուղերն ու քաղաքները և քոչվորների համար վերածեցին արոտավայրերի: Իսկ երբ 1923—ին Արցախին տրվեց ինքնավարություն, Ադրբեջանի պարագլուխների պահանջով անջատվեցին Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի և Շահունյանի, այսինքն Արցախի ամբողջ հյուսիսային շրջանները, որտեղ ապրող բնակչության 90%—ից ավելին հայեր էին, և ուղղակի մտցվեցին Ադրբեջանի Հանրապետության կազմի մեջ: Համախոսականում այնուհետև պատմվում է, թե ինչպես Միրջաֆար Բաղիրովի իշխանության օրոք մարզը աստիճանաբար բնակեցվել է ազերիներով: Նրա նպատակն էր հայ ազգաբնակչությանը դուրս մղել Ղարաբաղից և մարզը լիովին զրկել ինքնավարությունից: «Ուղղակի,— կարդում ենք այդ փաստաթղթում,— տարում է ազգային, շովինիստական քաղաքականություն... Մեր վիճակն այժմ վատթար է, քան 1918—1920 թվականներին, թուրք մուսուլմանական եւ անգլիական նուաճման շրջանում: Այժմ կատարում է նոյնը բարեկամութեան քողի տակ»: Համախոսականն ավարտվում է հետևյալ խնդրանքով. «Ամյասպաղ լուծել Լեռնային Ղարաբաղը եւ յարակից հայկական բոլոր շրջանները ՀԽՍՀ—ի մեջ վերամիավորելու... հարցը»:

Արցախ—Գարդմանի հայության այդ խնդրանքը լուրջան մատնվեց, և Կրեմլը չցանկացավ նույնիսկ պատասխան տալ: Այդ բողոքը գործնական արդյունք չտվեց. մարզի վիճակն ավելի ծանրացավ, և այստեղ իր օրրանում, դարեր շարունակ ապրող հայը շարունակում էր ճնշվել ավելի անողքաբար: Սակայն արցախահայությունը չնահանջեց: Այդ ժամանակաշրջանում նոր թափ առավ հայերի պահանջատիրական շարժումը, որը լայն արձագանք գտավ թե՛ Արցախում, թե՛ հտորիրդային Հայաստանում և թե՛ Սփյուռքում:

հնչալես նշվեց, Լիկոլայ Շահնագարովին փոխարինեց Գուրգեն Մելքունյանը: Բազրատ Ուլուբաբյանը գրել է, թե Գ. Մելքունյանը տասը տարի դիմացել է ոչ թե մարդկային բարեմասնությունների համար, այլ փափուկ բնավորության, որովհետև «նրա առկայությունը խանգարիչ հանգամանք չէր»: Դենց դա էլ հնարավորություն էր տալիս հանրապետության պարագլուխներին «իրենք ազատ ու անկաշկանդ վարեն իրենց բացահայտ քաղաքականությունը»²¹:

20-րդ դարի 60-ական թթ. սկզբից ազգային-ազատագրական շարժումը նոր վերելք է ապրում Հայաստանում: 1965 թ. լրանում էր Հայոց եղեռնի 50-ամյակը: Հայոց ցեղասպանության 50-ամյակի ոգեշնչումը Խորհրդային Հայաստանում պայմանավորված էր տիրող վարչակուսակցական հասարակարգի գործոնով: Այդ ժամանակվանից էլ Հայոց ցեղասպանությունը դադարեց միայն հայ սեփականությունը լինելուց: Դենց այդ օրերին էլ սկիզբ դրվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը²²:

1960-ական թթ. Հայաստանում տեղի ունեցած այդ իրադարձությունները լայն արձագանք գտան նաև Լեռնային Ղարաբաղում: 1965 թ. հունիսի սկզբին Լեռնային Ղարաբաղից 13 մտավորականներ նամակ հղեցին ԽՍՀՄ Կուսակցական և պետական մարմիններին, որի տակ ստորագրել էին ԼԴԻՄ գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար Բազրատ Ուլուբաբյանը, Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի նախագահ Սերգեյ Շաքարյանը, «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի խմբագիր Լազր Գասպարյանը, մարզային ռադիոյի ավագ խմբագիր Գրիգոր Ստեփանյանը, Ստեփանակերտի N2 պետտնտեսության տնօրեն Արամ Բաբայանը, Սոսի Շահունյանի անվան կոլտնտեսության նախագահ Արսեն Մուբանյանը, կուլտուրայի մարզային վարչության պետ Գուրգեն Գաբրիելյանը, բանաստեղծ Բոգդան Ջանյանը, հանրապետության ժողովրդական դերասան Միքայել Կորգանյանը, Ստեփանակերտի N 59 շինվարչության պետ Արկադի Մանուչարյանը, Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Ալբերտ Մեյրամյանը, Ստեփանակերտի ռադիոյի ավագ խմբագիր Մաքսիմ Ավանեսյանը և N59 շինվարչության գլխավոր ինժեներ Սերգեյ Գրիգորյանը: Նամակում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Կապանի և Ջանգեզուրյան լեռների շարունակությունը, հարուստ է պղնձի, մոլիբդենի, արծճի, իսլանդական շպատի և այլ հանքային թանկարժեք հանածոների վիթխարի պաշարներով, ինչպես նաև արժեքավոր անտառներով, հարուստ ջրերով: Խորհրդային իշխանության 45 տարիների ընթացքում պարզապես ոչինչ չի առվել, և

մարզը մնում է որպես հետամնաց, գյուղատնտեսական երկիր: Այստեղ ոչինչ չի կառուցվում, եղածն էլ հետզհետե կրճատվում կամ հանվում է մարզի ենթակայությունից:

Անգործության մատնված շատ արցախցիներ ստիպված են թողնել հայրենի տունն ու տեղը և աշխատանք որոնել մարզի սահմաններից դուրս: Աղբբեջանի ղեկավարությունը հետզհետե ուժեղացնում է Աղբբեջանի հայության ճնշումը: Միայն 1939-1950 թթ. մարզից հեռացել է 110 հազար բնակիչ, որոնց մեծամասնությունը գաղթել է Աղբբեջանի Սումգաիթ, Բաքու և այլ քաղաքներ: Բանվորական ուժի հավաքագրման ճանապարհով ամեն տարի մարզից հանրապետության այլ քաղաքներ են տանում 250-300 տղամարդկանց: Միջին հաշվով Ստեփանակերտում կա 700 անգործ, 2000 արհեստավոր էլ աշխատում է հանրապետության այլ շրջաններում:

«Ավելի վատթար է մշակույթի բնագավառը,— շարունակում են նամակի հեղինակները,— մեկը մյուսի ետևից փակվում են դպրոցները, մարզը չունի հրատարակչություն, պարբերական գրական-գեղարվեստական օրգան»: Եվ ապա «Ուղղակի պետք է կույր և խուլ լինել՝ չտեսնելու, չզգալու համար այն ծրագրվածությունը, որով պարբերաբար խափանվում է մեր մարզի տնտեսական ու մշակութային առաջընթացը, ոտնահարվում դարաբաղցի հայերի օրինական իրավունքներն ու ազգային արժանապատվությունը: Եվ այսօր հասցրել է նրան, որ այժմ «ինքնավար» ածականը մարզի կողքին հնչում է որպես չար կատակ:

Աղբբեջանի ղեկավարները Լեռնային Ղարաբաղին նայում են որպես օտարերկրացիներով բնակեցված մի երկրամասի»:

Նամակի հեղինակները միանգամայն արդարացիորեն պահանջում են քանի որ Լեռնային Ղարաբաղի բնակչության 85%-ը հայեր են, և նրանք այս հողի վրա ապրում են անհիշելի ժամանակներից, ուստի հողը պատկանում է նրանց: Նրանք հույս են հայտնում, որ ԽՄԿԿ Կենտկոմը, խորհրդային կառավարությունը իրենց ուշադրությունը կդարձնեն դարաբաղցի հայերի օրինական ձայնին ու «մարզը կվերամիացնեն Հայկական ԽՍՀ-ին»²³:

Նամակի հեղինակները, բնական է, ենթարկվեցին հալածանքների և արտաքսվեցին հայրենի երկրամասից: 1965 թ. դեկտեմբերի 9-ին մարզկոմի բյուրոն, քննարկելով նրանց հարցը, որտեղ ելույթ ունեցան մի շարք արցախցի պնակալեզներ և գրպարտիչներ, ընդունեց մի որոշում, որը նախ և առաջ ուղղված էր արցախահայության պահանջի դեմ և դատապարտեց Արցախ-Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու պահանջը: Եվ այդ դատապարտող հանդիսացավ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոն՝ կուսակցական ակտիվի հետ միասին:

1960–ական թթ. վերադաս մարմիններին նամակներ և բողոքներ ուղարկել էին ոչ միայն խմբովին, այլև անհատական, որոնց հեղինակներն արտահայտել են իրենց ցասումն ու ընթուստությունը: 1965 թ. կուսակցության Կենտկոմ ուղարկած Ե. Գ. Գովհաննիսյանի հղած նամակում հեղինակը գրել է. «Քսաներորդ համագումարի նախօրյակին գրած իմ նամակին Ն. Ս. Խրուշչևը պատասխանեց, որ Կենտրոնական կոմիտեն այժմ չի կարող զբաղվել այդ հարցով: Մինչև ե՞րբ»,— զարմանում էր նամակի հեղինակը: Համանման խուսափողական պատասխաններ էին ստանում նաև մյուս բողոք–նամակների հեղինակները:

1965–1966 թթ. Արցախ–Ղարաբաղում տեղի ունեցավ ստորագրահավաք: Ոմանք նշում են 40, իսկ ոմանք էլ նույնիսկ 100 հազար ստորագրություններով Մոսկվա ուղարկված համախոսականի մասին, որի տակ ստորագրողները պահանջում էին Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Խորհրդային Հայաստանի հետ: Այս անգամ ևս խորհրդային վերադասը համաժողովրդական այդ պահանջն անուշադրության մատնեց:

20–րդ դարի 60–ական թթ. կեսերին արցախյան հիմնախնդիրը հետզհետե ընդլայնվում էր, իր մեջ ներառում նաև Հայաստանի հասարակական–քաղաքական որոշ գործիչների, այդ թվում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանին: Մոսկվա ուղարկված վերոհիշյալ մասսայական բողոքները, այնուամենայնիվ, չէին կարող լիովին մատնվել անուշադրության: Եվ ահա 1966 թ. օգոստոսի 8–ին ԽՄԿԿ Կենտկոմում ընդունվեց մի որոշում, որով հանձնարարվում էր Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարներին համատեղ ջանքերով քննել Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հնարավորությունը և իրենց առաջարկությունները ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմ հարցի վերջնական լուծման համար: Ըստ էության, տեղի էին ունեցել մի շարք հանդիպումներ, որոնց ընթացքում Ադրբեջանի ղեկավարները ԽՄԿԿ ԿԿ քարտուղար Սուսլովի և Ա. Միկոյանի հետ միասին ծախողել են հարցի լուծումը²⁴:

Հայաստանի մտավորականները, 1966 թ. օգոստոսին մի նամակով դիմելով ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին, Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների Կենտկոմների առաջին քարտուղարներ Վ. Ախունդովին և Ա. Քոչինյանին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանին միավորելու խնդրանքով, գրել են. «Լեռնային Ղարաբաղի ազգակիցներին Հայկական ԽՄԳ կազմում մեզ հետ ուս ուսի մեր միալեզու ազգային մշակույթը, գիտությունն ու տնտեսական կյանքը զարգացած տեսնելու հայ ժողովրդի նվիրական, խոր ու անկեղծ երազանքը լիովին համընկնում է լեռնյան մեծ սկզբունքների հետ:

Ղարաբաղը Հայաստան է տարածքով և ազգային կազմով, Հայաստան է կենսաձևով, հոգևոր կերտվածքով և կենցաղով:

Ղարաբաղի պատմությունը Հայաստանի պատմությունն է, հայկական են Ղարաբաղի լեզուն, արվեստը և գրականությունը: Եվ քանի որ գոյություն ունի Հայկական ԽՄԳ, նպատակահարմար չէ նրա անբաժանելի մասը արհեստականորեն կտրել Խորհրդային Հայաստանից»: Նամակի հեղինակները հույս են հայտնում, որ երկու հանրապետությունների Կենտկոմների առաջին քարտուղարները կդառնան «այդ հարցի լուծման նախաձեռնողները», և որ այդ հարցի լուծումը կամրապնդի մեր ժողովուրդների համագործակցությունը, քանի որ նրանք վաղուց են հասունացել հարցի նման լուծման համար: Ցանկություն են հայտնում, որ նպատակահարմար կլինի «հարցի լուծումը համընկնի Հայաստանում խորհրդային իշխանության կարգերի հաստատման տարեդարձին»²⁵:

1966 թ. հայ մտավորականները երկրորդ նամակը հղեցին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին, ԱԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Վ. Յու. Ախունդովին և ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանին, որը ստորագրել էին նաև Մարտիրոս Սարյանը, Երվանդ Քոչարը, Համո Սահյանը և Պարույր Սևակը, որտեղ ասված է. «Լեռնային Ղարաբաղի ազգակիցներին Հայկական ԽՄԳ կազմում մեզ հետ ուս ուսի մեր միալեզու ազգային մշակույթը, գիտությունն ու տնտեսական կյանքը զարգացած տեսնելու հայ ժողովրդի նվիրական, խոր ու անկեղծ երազանքը լիովին համընկնում է լեռնյան մեծ սկզբունքների հետ»²⁶:

Հայ ժողովրդի մտավորականների այս նամակներից բխած Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը և Հայկական ԽՄԳ նախարարների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանը 1966 թ. սեպտեմբերի 30–ին մի նամակ հղեցին ԽՄԿԿ Կենտկոմ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին: Փաստաթղթի սկզբում նշված է, որ ԽՄԳ գիտության և մշակույթի մի խումբ գործիչներ նամակ էին հղել ԽՄԿԿ 23–րդ համագումարին, որը և ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը ուղարկել էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմ պատասխանելու համար: Այդ նամակում դրված էր Հայկական ԽՄԳ–ին Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի ԽՄԳ–ի վերադարձի հարցը: Հեղինակների կարծիքով Հայկական ԽՄԳ–ի վերոհիշյալ հողերի վերադարձը կնպաստի ժողովուրդների միջև եղբայրության և բարեկամության հետագա ամրապնդմանը կրկին անգամ ցուցադրելով լեռնյան ազգային քաղաքականության հաղթահանղեսը:

Ա. Քոչինյանը և Բ. Մուրադյանը իրենց նամակում նշում են, որ Հայաստանի գիտության և մշակույթի գործիչների կողմից բարձրացված հարցը առաջին անգամ չէ, որ հարցադրվում են: ԽՄԿԿ Կենտկոմում և

Հայկոմկուսի Կենտկոմում վերջին տարիներին համանման բազմաթիվ փնտնումներ են հղվել: Անկասկած, հայ ժողովրդի մեծամասնությունը գրավոր թե բանավոր ձևով աշխուժորեն դնում է Ղարաբաղը և Նախիջևանը Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հարցը:

Այա նշում են, որ նման տրամադրությունները լայնորեն տարածվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության շրջանում, ինչի մասին վկայում են ԼՂԻՄ-ի աշխատավորության տարբեր խմբերից 344 Կենտկոմում ստացվող բազմաթիվ մամակները:

Նամակի հեղինակները գրում էին, որ Ադրբեջանական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի փոխանցումից հետո անցած 40 տարում չի ապահովվել Լեռնային Ղարաբաղի անհրաժեշտ տնտեսական և մշակութային զարգացումը, իսկ վերջին 33 տարիներին մարզի հայ բնակչության թվաքանակը 111694-ից իջել է 110053-ի: Եվ, չնայած դրան, մարզի բնակչությունը այժմ էլ 85%-ով բաղկացած է հայերից: Նաև ասված է, որ Ղարաբաղը բոլոր բնագավառներում զարգացման համար ավելի նպաստավոր հնարավորություններ ունի: Հայաստանի ղեկավարությունը գտնում էր, որ եթե Նախիջևանի վերադարձնելը ժամանակակից փուլում կապված է որոշ դժվարության հետ, ապա ՀԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղը վերադարձնելը որևէ դժվարությունների հետ կապված չէ և կարող է իրականացվել անցավազին: Հույս են հայտնում, որ հարցի դրական լուծումը կունենա բացառիկ կարևոր քաղաքական նշանակություն և կհանդիսանա ազգային քաղաքականության հաղթանակ²⁷:

1965 թ. մի շարք արցախցի կոմունիստների գրած մամակ-բողոքներ քննարկվել էին Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոյում: Մարզկոմի բյուրոն պատրաստեց մախագիծ ընկերների «սխալ» արարքի մասին, որը տեղ գտավ դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած Ստեփանակերտի քաղկոմի հաշվետվության մեջ: Այնտեղ ասված էր, որ նման արարքը, այսինքն՝ բողոքներ ուղարկելը, իբր դեմ է լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներին և վնաս է հասցնում ժողովուրդների ինտերնացիոնալ դաստիարակությանն ու բարեկամությանը²⁸:

Ընդհանրապես, արցախահայության ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ կարևորվում է 1967 թ-ը: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղում ավելի մեծ չափերի էին հասել հայերի գաղտնի սպանությունները թուրք-ազերիների կողմից: Ադրբեջանը Ղարաբաղում ստեղծել էր պաշարողական վիճակ: Այստեղ անարգել կերպով իրագործվում էին ահաբեկելու և բռնություններ իրագործելու ձևերը: Իրականում ջլատվեց մարզի ղեկավար խավը, անողորմ հալածանք

սկսվեց մտավորականության դեմ, որոնց մի մասը ստիպված էր փոխադրվել Հայաստան կամ Միության այլ վայրեր: Ադրբեջանի իշխանությունները Արցախի նկատմամբ նյութում էին նոր չարագործություններ ու դավեր: Օրինակ, նկատում է Բագրատ Ուլուբաբյանը, Կուրուպատիկ-նոյի խաղողագործական պետտնտեսությունում ազերիները սպանել էին գլխավոր ագրոնոմին, իսկ ամիսներ անց էլ սպանեցին նրա հաջորդի՝ Բենիկ Մովսիսյանի 9-ամյա որդուն: Պարզվեց, որ այդ ավազակաբարո արարքի կազմակերպիչը հանդիսացել է տեղի դպրոցի տնօրեն Արշադ Մամեդովը: Նա դպրոցի պահակի օգնությամբ երեխային քարշ էր տվել, մտցրել նկուղը, հոշոտել, գլխին մեխեր տնկելով սպանել: Այդ ստոր արարքի քննությունը կատարվեց շուրջ մեկ տարի: Այդ ընթացքում թուրք-ազերիներն իրագործեցին նոր սպանություններ: Մարտակերտի պետտնտեսության պահակին, նրա կնոջն ու երեխաներին վառել էին պահականոցում: Մարտունու շրջանի Նորաշենի կոլտնտեսության երկու տրակտորիստների սպանեցին գիշերավարի ժամանակ: Շուշի քաղաքի փողոցում օրը ցերեկով սպանեցին երիտասարդ մի հայի, Աղդամում՝ Ստեփանակերտի բնակիչ Ջավադ Ավանեսյանի որդուն: Շուշիում մղեգնել էր մի բարբարոսություն, որին զոհ գնացին հայկական 4 գերեզմանատներ, իրենց փառաշուք շիրմաքարերով, խաչքարկոթողներով²⁹:

Դահիճ Արշադ Մահմեդովի դատավարությունն անցկացվեց 1967 թ. ամռանը բացօթյա՝ Ստեփանակերտի ամառային զբոսայգու տարածքում: Հասարակությանը հայտնվեց, թե դահիճը դատապարտվում է 10 տարվա ազատազրկման: Հանցագործի հարազատների հայտարարություններից հավասարակշռությունը կորցրած ժողովուրդը հարձակվեց, պահակներից խլեց հանցագործներին, երեքին էլ սպանեց, և դիակները վառեցին զբոսայգում՝ խարույկի վրա³⁰: Այդ իրադարձությունից հետո անմիջապես բանտ նետվեց ավելի քան 50 մարդ: Հանցագործ Արշադ Մամեդովի մտերիմ, Ստեփանակերտի հիվանդանոցի բժիշկ Ա. Աբասովը մահախեղդ անելով սպանեց միլիցիայի վարչության պետի տեղակալ, նախաքննությամբ Ա. Մամեդովի չարագործությունը մերկացրած Ա. Աբրահամյանին: Բաքվում հարցաքննության ժամանակ ծեծելով սպանեցին միլիցիայի մարզային վարչության աշխատակից լեյտենանտ Լևոն Հարությունյանին³¹: Եվ այդ հանցագործությունները մնացին չբացահայտված, իսկ հանցագործները անպատիժ:

Այսպիսի պայմաններում 1967 թ. Բեյրութում լույս տեսնող «Ազդակ» օրաթերթի սեպտեմբերի 8-ի համարում իրապարակվեց արցախահայության կողմ ուղղված Հայաստանի ժողովրդին և ղեկավարությանը: Այդ կոչում ասված է.

«Թանկագին հայրենակիցներ.

Այս նամակով ձեզ դիմում է Ղարաբաղի աղետեալ ժողովուրդը, որի վիճակն այժմ ավելի ծանր է, քան երբևիցե եղել է խանական բռնակալների ու նուսաւաթակաւանների ժամանակ:

Մեզմից ոչ ոք տնից ելնելիս վստահ չէ, որ երեկոյան տուն կը վերադառնայ: Անարգւում է մեր պատիւը, բռնադատում են մեր իրաւունքներն ու արժանապատւութիւնը: Ոչ ոք չի լսում մեր բողոքի ձայնը, ոչ մէկը ականջ չի դնում մեր աղերսանքին: Հարիւրաւոր դիմումներ ենք յղել Մոսկվա՝ կենտրոնական կառավարութեանը, Արդբեջանի ղեկավարութեանը, եւ այդ բոլորի պատասխանը եղել է կամ քար լուփիւն, կամ մոլի հալածանք մեր եւ մեր զաւակների հանդէպ: Այսօր արդէն տասնամեակներով երիտասարդ դադարաւոցիներ ապօրինի բանտերն են լցուած կամ հեռացուած են աշխատանքից: Մեզ հասցրել են այնտեղ, որ մենք ստիպված ենք մեր աւանդական հողը լքել եւ դառնալ տարագիր ու անհայրենիք մի ժողովուրդ: Յոշոտում են մեր զաւակներին եւ չբաւականաւորվ պղծում եւ անարգում են նաեւ դիակները...»:

Այնուհետև հստակ օրինակներով ցույց է տրված Արդբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի բնակչության նկատմամբ կիրառվող անմարդկային և զագանային քաղաքականությունը: Իսկ երբ Ստեփանակերտ էր ժամանել Արդբեջանի կոմկուսակցության առաջին քարտուղար Յու. Ախունդովը, նա ցինիկաբար հոխորտում էր. «Մոռացե՛ք Հայաստանին միանալու ձեր պահանջը: Փիտցե՛ք, որ Լեռնային Ղարաբաղը եղել է, կայ եւ կը մնայ Արդբեջանի անբաժանելի մասը»:

Շարունակում ենք կարդալ.

«Հայ ժողովուրդ, քո հատուածներից մեկը, որ դարերի մռայլ ու դաժան ճանապարհին միշտ բարձր է պահել քո անունը, հիմա օրհասական վտանգի տակ է»: Ապա՝ «Մայր ժողովուրդ, որտեղ էլ որ կաս, քեզ ենք դիմում: Դու ես մեր յոյսն ու ապավինը: Դու սեփական կառավարութիւն ունես, ունես կուսակցութեան կենտկոմ: Նրանց ձայնը չի կարող չլսուել: Դու ունես զաւակներ, որոնց անուններն աստղերին են հասել... Չի կարող պատահել, որ նրանց ձայնը չհասնի Կրեմլին, երկրի ղեկավարներին չհասնի փոքրիկ Լեռնային Ղարաբաղի մեծ ողբերգութիւնը:

...Ղարաբաղի հայութիւնը սպասում է քո փրկարար ձայնին, հայ ժողովուրդ, մայր ժողովուրդ»:

Արցախահայության վիճակն ավելի ծանրացավ 70-ական թթ., երբ չափ ու սահման չէր ճանաչում արևելյան պանթուրքիստական հայաջինջ քաղաքականությունը: Ահա մի նամակ-փաստաթուղթ, որը պատկերում է Լեռնային Ղարաբաղի հայության այդ ժամանակաշրջանի կացությունը: Այն առաջին անգամ երևացել է 1972 թ. նոյեմբերի 27-ին

«Ազդակում»՝ «Ճանր, յուսահատ վիճակ է ապրում հայոց Ղարաբաղը» վերտառությամբ: Նրանում հաղորդվում է, որ Արդբեջանի ազգայնամուլների քարոզիչները «իրենց մամուլն ու գրքերը լցրեցին ամենաբազմազան անհեթեթություններով, որոնցից մեկի համաձայն Ղարաբաղի հայերը խեղճ եկուորներ են համարում իրենց հողի վրայ, միւսի կարծիքով նոյն այդ հայերը ոչ թե իսկական հայերն են, այլ բռնութեամբ հայացուած աղուաններ կամ թուրքեր»: Լսենք շարունակությունը. «Արդբեջանի ազգայնամուլ ղեկավարները Ղարաբաղի նուաճելու ամենայուսալի միջոցներից մեկն են համարում մարզի ազգաբաց ու համարձակ մտավորականների դէմ միւթող հալածանքները: Մարզում ստեղծել է այնպիսի վիճակ, որ արդարութեան խօսք ասող ու ընդվզող մտաւորականների շուրջը կրակի այնպիսի օղակ են ստեղծել, որ նրանք թողել են տունտեղ, պապեմական հող ու բնակավայր եւ ապաստան փնտրել ուրիշ վայրերում»: Եվ «...Ոչ մի հանրապետութիւնում այսքան չեն խոսում եղբայրութեան մասին, որքան Արդբեջանում: Ռ՞ւր է այդ եղբայրութիւնը: Ռ՞ւր են Ղարաբաղի հայութեան եղբայրները...»:

Արդբեջանի իշխանությունների կողմից Արցախ-Ղարաբաղի նկատմամբ իրագործված հանցագործ քաղաքականության մասին բազմաթիվ փաստեր բերելով՝ Շահեն Մկրտչյանը, մանավանդ իր «Արցախյան մտորումներ» և «Լեռնային Ղարաբաղ: Արդբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան» գրքերում ընթերցողին համոզում է, որ այդ հանցագործությունները սահման չունեն: Նա, սերտած լինելով Արցախ-Ղարաբաղի պատմական հուշարձանների այթուբենը, թուրքի հետ խոսում է անառարկելի ապացույցներով, չնայած հաճախ էլ անցնում է զգացմունքների սահմանը: Իսկ չէ՞ որ թուրքի հետ այլ կերպ էլ պետք չէ խոսել, մանավանդ երբ տեսնում ես, որ քոնը բացեիբաց գողանում է, թալանում, սեփականացնում և ոչինչ չունենալով՝ իրեն դարձնում է ամեն ինչի տեր: Շ. Մկրտչյանի հաշվումներով՝ 1971 թ. ԼԴԻՄ-ում մեկ շնչի հաշվով վաճառվել է 12.55 կգ միս, 20.5 կգ շաքար, 12.5 կգ կաթնամթերք, 4.4 կգ կենդանական յուղ: Այս այն դեպքում, երբ ԽՍՀՄ-ում նույն տարում բնակչության մեկ շնչի հաշվով վաճառվել է 38 կգ միս, 308 կգ կաթնամթերք, 38.8 կգ շաքար, 17.3 կգ կենդանական յուղ: Բացի այդ, մարզը զրկվում էր ազգային դեմքից: Նախիջևանի հետ հարցը լուծելուց հետո թուրք-ագերիների իշխանությունը շտապում էր լուծել նաև Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Արդբեջանում հրատարակվող ամբողջ գրականության մեջ Արցախ-Ղարաբաղը երևում է որպես անդեմ, սեփական արժանապատվությունից զուրկ երկրամաս, որը գոյատևում էր իբր թուրքի բռնամասնություններով:

Ասվել է, որ 1973 թ. հոկտեմբերին Գուրգեն Մելքունյանն ազատվել է մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից, և նրա փոխարեն նշանակվել է Բաքվից բերված Բորիս Կևորկովը: Նա, լինելով իրավաբան, պետք է ղեկավարեր հիմնականում գյուղատնտեսությանը զբաղվող մարզը: Հենց նրա պաշտոնավարության սկզբից արգելվեց Արցախի դպրոցներում հայ ժողովրդի պատմության դասավանդումը, արգելվեցին Հայաստանի հետ ունեցած մշակութային կապերը, լայնամասշտաբ հալածանք սկսվեց մարզի հայ մտավորականության դեմ: Լեոնիդ Հուրոնցի արտահայտությամբ՝ Արցախում իշխող նոր «բռնակալի օրոք» հայրենի երկրամասը «деградирует с катастрофической быстротой»³²:

1975 թ. մարտի 21-ին Բաքվի պահանջով հրավիրվեց ԼՂ կուսակցության մարզկոմի 6-րդ պլենումը, որը քննարկեց «Աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության հետագա բարելավման ուղղությամբ Ղարաբաղի մարզային կուսակցական կազմակերպության խնդիրների մասին» հարցը: Անկասկած, պլենումում Կևորկովի կարդացած զեկուցագիրը պատրաստվել էր Բաքվում: Բացի մարզկոմի անդամներից, պլենումին հրավիրված էին նաև մարզի կուսակցական, պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մաքսիմ Գորկու անվան դրամատիկական թատրոնը, որտեղ տեղի է ունեցել պլենումը, գրեթե լիքն էր, որոնց թվում էր տողերիս հեղինակը (անցաթուղթ հ. 416):

Բենում նստած էին մարզկոմի բյուրոյի, իսկ դահլիճի առաջին շարքերում՝ մարզկոմի անդամները: Ավելի ետևում նստած էին հրավիրվածները: Ձեկուցում կարդաց մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովը (մոտ չորս ժամ): Այն սկզբից մինչև վերջ սանձարձակ զրպարտություն էր և ատելություն Հայկական ԽՍՀ ղեկավարության, հայ մտավորականների, հայ ժողովրդի և ամեն հայկականի հանդեպ: Բաքվի հանձնարարությամբ Կևորկովը խնդիր ուներ պարզել Արցախ-Ղարաբաղի տեղը պատմության մեջ, այսինքն՝ պարզել և ապացուցել, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տարածք է: «Լեռնային Ղարաբաղի տեղի» հարցին, հատկացնելով զեկուցման զգալի մասը՝ Կևորկովն առաջ քաշեց «հայկական մոլեռանդ նացիոնալիզմի կործանարար վտանգ» պրոբլեմը: Նա հորջորջեց, թե իբր այդ վտանգավոր, մոլեռանդ նացիոնալիզմը արցախահայ աշխատավորների մեջ է մտցնում մարզի մտավորականությունը: Նա բռունցք ճոճեց պատմաբան Բագրատ Ուլուբաբյանի, բանաստեղծ Բոգդան Ջանյանի, գրող Լեոնիդ Հուրոնցի, գրող, հրապարակախոս Ջորի Բալայանի, գրականագետ ժան Անդրյանի, «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր Լազր Գասպարյանի, երկրագիտական թանգարանի նախկին տնօրեն Շահեն Սկրտչյանի, Ստեփանակերտի

քաղխորհրդի գործկոմի նախկին նախագահ Սերգեյ Շաքարյանի, Հադրուբի շրջանում «ետրիրոգային Ղարաբաղ» թերթի թրթակից Յաշա Բաբայանի, ռադիոհաղորդումների մարզային կոմիտեի զլխավոր խմբագիր Գրիգոր Ստեփանյանի և շատ ուրիշների դեմ: Ձեկուցման մեջ արված հիմնազուրկ ու անառարկա հայտարարությունները մերկացնում են հենց իրենք իրենց: Ձեկուցման հեղինակը փաստորեն կոչ է ուղղում երկրամասի պատմական հուշարձանների և արվեստի կոթողների դեմ: Բ. Կևորկովը, ցուցաբերելով բարբարոս վերաբերմունք, ամեն կերպ փորձում էր այդ հուշարձանները հանել շարքից: Եվ այդ հալածանքն ամենից առաջ ուղղված էր Ստեփանակերտի մուսուլման մոտ կանգնեցված «Ղարաբաղցիները» («Մենք ենք, մեր սարերը») կոթողի դեմ: Բ. Կևորկովն այս կոթողի մեջ տեսնում էր մոլեռանդ նացիոնալիզմ:

Բ. Կևորկովի օրոք առաջ մղվեց միջակությունը: Մարզային թերթում վայրագ հայտարարություններ արվեցին վերոհիշյալ ծնունդով արցախցի հայ գրողների և մշակույթի ներկայացուցիչների դեմ: Ըստ Կևորկովի՝ հայերը թուրք-ազերիների հետ կարող են բարեկամ լինել միայն Ադրբեջանի կազմում: Նա փորձում էր ապացուցել, թե Լեռնային Ղարաբաղը երբեք կապ չի ունեցել Հայաստանի հետ և իբր հիմա էլ չի ուզում ունենալ: Ովքեր չեն ցանկացել կապ ունենալ ադրբեջանական ժողովրդի հետ, հայտարարվել են ինտերնացիոնալիզմի և խորհրդային համակցության թշնամիներ: Եվ ի՞նչ, առանց նկատի ունենալու այն բոլոր բողոքները, որոնք Արցախից 60-ական թթ. կեսերին հասել էին Մոսկվա, Կևորկովն անամոթաբար հայտարարում էր, թե Ադրբեջանի ղեկավարության դեմ պայքարում է «դաշնակցության ճահիճը», և որ «Բագրատ Ուլուբաբյանը և նրան համախոհ հետամնաց, գաղափարապես չհասունացած մարդիկ փորձեցին Ղարաբաղի հարցը մեկնաբանել ազգային էգոիզմի և ազգային սահմանափակվածության արատավոր դիրքերից»: Կևորկովը, սահմանները կորցրած, իր վայրահաչոցներով փորձեց սեպ խրել Արցախ-Հայաստան կապի մեջ, սակայն դա այդ ստահակին չհաջողվեց: Այնուամենայնիվ, պլենումն ընդունեց որոշում, որի հիմքում ընկած է եղել «Լեռնային Ղարաբաղի տեղը» հարցը, ըստ որի իբր Լեռնային Ղարաբաղը ոչ մի ժամանակ որևէ կապ չի ունեցել Հայկական հանրապետության հետ, չունի և չի էլ ուզում ունենալ³³:

Պլենումի աշխատանքներն այնպես էին կազմակերպված, որ ելույթ ունենալու հնարավորություն ստացան միայն բյուրոյի և պլենումի մի քանի պնակալեզ անդամներ: Իսկ հրավիրվածներից նրանք, ովքեր ցանկացան ելույթ ունենալ, մերժվեցին:

Սուրբերի փոխանակությանը մասնակցեցին Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Ջ. Սովսիսյանը, Շուշիի շրջկոմի առաջին

քարտուղար Գ. Ասլանովը, Ղարմետաքսկոմբինատի ջուլիակուսի, մարզկոմի բյուրոյի անդամ Ս. Օրբեյանը, Մարտունու շրջանի ճարտարի «Կոմունիզմ» կոլտնտեսության նախագահ Ս. Ադամյանը, Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար Յու. Բադուցը, ԼԿԵՄ ԼԳ մարզկոմի առաջին քարտուղար Վ. Աթաջանյանը, Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Վ. Գաբրիելյանը, «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր Դ. Արզումանյանը, պետական անվտանգության կոմիտեի ԼԳԻՄ բաժնի պետ Ն. Դուբրովինը, Դադրուսի շրջանի Տոդի «Հոկտեմբեր» կոլտնտեսության կաթնապարանքային ֆերմայի բրիգադավար Մ. Գովհաննիսյանը և գրողների բաժանմունքի պատասխանատու քարտուղար Ա. Գովհաննիսյանը: Եվ բոլորն էլ, առանց բացառության, պաշտպանել են Կեդրկոմի բարբաջանքները³⁴:

Պլենումի հենց հաջորդ օրը մանկավարժական ինստիտուտի ադրբեջանական ֆակուլտետում կազմակերպվել էր մի խումբ, որի խնդիրն էր «հայերին ենթարկել շանտաժի», իսկ դա շատ հարմար էր նրանց համար³⁵: Ահա թեգ ինտերնացիոնալ դաստիարակություն:

Պլենումում քննարկված հարցը Կեդրկոմը քննության դրեց կուսակցական շրջկոմների պլենումների միատերում, մարզի սկզբնական կուսակցական բոլոր կազմակերպություններում, կոմերիտմիության մարզկոմի, շրջկոմների ու սկզբնական կազմակերպությունների, արհմիությունների մարզկոմի, շրջկոմների և տեղկոմների միատերում³⁶: Բոլոր տեղերում էլ արձանագրությունն ու պարտադրված որոշումը երկու օրինակից կազմվել են և ուղարկվել մարզկոմ: Այդ բոլորի թարգմանությունները կնքված նվիրվել են Ալիևին: Նա, անշուշտ, շատ գոհ է մնացել իր դրածոյի այդ եռանդուն խամաճիկությունից:

Հետաքրքիր է, թե այդ օրերին ինչ է տեղի ունեցել Հայաստանում, և ինչպիսի արձագանք է ունեցել ԼԳ մարզկոմի պլենումը: Այն ոտքի հանեց Հայաստանի ողջ մտավորականությանը: Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի և գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանի հանձնարարությամբ Բագրատ Ուլուբաբյանը գրեց «Լեռնային Ղարաբաղի վերջին դեպքերը (1975 թ. մարտ-ապրիլ)» տեղեկագիրը բաղկացած 59 մեքենագիր էջից: Այն հարուստ է իր բովանդակությամբ և մերկացնում էր Ադրբեջանի ազգայնամուլ իշխանությունների էությունը³⁷:

Հենց թարմ տպավորությունների ազդեցության տակ 14 հոգու ստորագրությամբ բողոք-նամակ է ուղարկվում ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին, պատճեն՝ Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին: Նամակ-բողոքի հեղինակների մեծամասնությունը մասնակցել էին ԼԳ մարզկոմի պլենումին: Այդ փաստաթղթի

մեջ ասված է, որ պլենումը եղել է «կազմակերպված դատարան, որտեղ նախօրոք բոլոր դեքերը բաժանված էին»³⁸: Լ. Բրեժնևին հայտնում են, թե նամակի հեղինակներից մեկի երկու տղաները ուզում էին գալ Մոսկվա և Կարմիր հրապարակում իրենց վառել: Ծանր է նրանց շրթունքներից լսել վախի, անօգնական լինելու և անվճռական լինելու մասին: Առավել անտանելի է խորհրդային ժողովրդի նկատմամբ այդ վիրավորանքը: Մարզկոմի քարտուղարը շուրջ չորս ժամ բարբաջել է միայն ատելություն սերմանելով³⁹:

1975 թ. ապրիլի 7-ին տեղի ունեցած Հայաստանի գրողների միության կուսակազմակերպության բյուրոն լսեց Ջորի Բալայանի դիմումը Ադր ԿԿ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Բ. Ս. Կեդրկոմի մարզային կոմիտեին տված զեկուցման մեջ իր հասցեին արված քաղաքական մեղադրանքների ու գաղափարական սխալների կապակցությամբ: Քննարկվող հարցի շուրջը ունեցած իրենց ելույթներում Ս. Հարությունյանը, Վլ. Հարությունյանը, Ս. Կուրղունյանը, Բ. Հովսեփյանը, Սիմոնյանը, Եդ. Թովչյանը, Ս. Խանգաղյանը պահանջեցին պատասխանատվության կանչել Կեդրկոմին, քանի որ Ջ. Բալայանի, Բ. Ուլուբաբյանի և Բ. Ջանյանի նկատմամբ նրա հայտարարությունները հանցագործություն են: Կեդրկոմի տգիտության պատճառով նրա ասածները հայ գրողների նկատմամբ առնվազն պրոպոկանդիա են: Բյուրոն, պաշտպանելով Ջ. Բալայանի պահանջը, որոշում է Կեդրկոմին պատասխանատվության կանչել իր գործունեության համար և պատժել: Այդ որոշմամբ դատապարտվում է Կեդրկոմը⁴⁰:

Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի անունով գրած իր դիմումի մեջ Լեռնիդ Հուրունցն արտահայտել է իր «խոր վրդովմունքն այն խուլիգանական այլանդակության դեմ, որով այդպես առատ է զեկուցումը»: Նա, հայտնելով, որ այդ հակահայկական ակտի մասին հեռագրել է Լ. Բրեժնևին, պահանջում է մեղավորին պատժել ըստ արժանվույն⁴¹:

1975 թ. հունիսի 5-ին Լ. Ի. Բրեժնևի անունով (պատճենը Կարեն Դեմիրճյանին) ընդարձակ հեռագիր է ուղարկել նաև Սիլվա Կապուտիկյանը: Նա խիստ բողոքել է մայիսի 29-ին «Պրավդայի» առաջնորդողում Լեռնային Ղարաբաղի հասցեին ասվածների համար⁴²:

Անցած դարի 70-ական թթ. կեսերին տեղի էր ունեցել մի իրադարձություն ևս, որն առնչվում է խնդրի առարկային: Քննարկվում էր ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագիծը: Մի շարք առաջարկություններ էլ մտցվեցին Արցախի հիմնահարցի վերաբերյալ, ինչը ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահության արձանագրության մեջ ստացավ հետևյալ ձևակերպումը. «Պատմական մի շարք հանգամանքների

հետևանքով մի քանի տասնամյակ առաջ Լեռնային Ղարաբաղն արհեստակարորեն միացվել է Ադրբեջանին: Ըստ այդմ՝ հաշվի չէին առվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը և տնտեսական շահերը: Անցել են տասնամյակներ, և Ղարաբաղի հարցը շարունակում է հղիլվել, առաջացնել անհանգստություն և անբարյացակամության պահեր դարավոր բարեկամությամբ իրար հետ կապված երկու ժողովուրդների միջև: Ամիրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ Արցախ) միացնել Հայկական ԽՍՀ-ի հետ: Այդ ժամանակ ամեն ինչ կբռնի իր օրինական տեղը»⁴³:

1977 թ. Խորհրդային Միություն էին եկել Զոհկաստանի կոմկուսակցության Ազգային խորհրդի անդամ Սարադա Միտրանը և Իրաքի կոմկուսակցության Կենտկոմի անդամ Ադել Խաբան: Նրանք Խորհրդային Միություն էին եկել խորհրդային կարգերի հաստատման 60-ամյակի կապակցությամբ, իբր ուսումնասիրելու ազգային հարցը: Պատվիրակությունը, լինելով Ադրբեջանում, այստեղ հանդիպել է Ադրբեջանի կոմկուսի բյուրոյի անդամ, Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովի և Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար Վ. Գաբրիելյանի հետ: Նրանք Բ. Կևորկովին հարցրել են, թե ինչու Լեռնային Ղարաբաղը չի գտնվում Հայկական ԽՍՀ կազմում, որից անջատված է հողի մի նեղ շերտով: Կևորկովը տալիս է աղավաղված և կեղծված հետևյալ պատասխանը. «Լեռնային Ղարաբաղի պատմությունը հյուսված է Ադրբեջանի պատմության հետ: Մարզը սերտորեն կապված է Ադրբեջանի էկոնոմիկայի, առանձնապես Հարթավայրային Ղարաբաղի և հարևան ադրբեջանական մի շարք շրջանների հետ:

Հայաստանից մարզը առանձնացված է բարձր լեռներով, Լեռնային Ղարաբաղում պահպանվել են հայկական ազգային սովորություններն ու լեզուն, և որ իբր 1923 թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումից հետո լավագույն պայմաններ են ստեղծվել այդ տարածքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու համար»:

Ա. Խաբայի այն հարցին, թե բոլորն են արդյոք միանգամից ընդունել այդ միջոցառումը և նման որոշման հիմնավորումը հասկացել, Բ. Կևորկովը պատասխանում է, թե իբր պահանջվել է բացատրական մեծ աշխատանք տանել: Կային մարդիկ, ովքեր չէին ընդունում և գերադասում էին վատ ապրել, սակայն լինել Հայաստանի հետ: Եվ իբր դա եղել է «բուրժուանացիոնալիստական մտածողություն, հետամնացության դրսևորում, չըմբռնում»: Ապա ցինիկաբար պնդել է, թե «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը իր պետականությունը ձեռք է բերել Ադրբեջանի կազմում և դա ընտրել է կամավոր»: Սա արցախահայության արժանիքները ոտնահարող պատասխան էր: Իսկ շրջկոմի քարտուղար Վ.

Գաբրիելյանն ավելացրել է, թե իբր Լեռնային Ղարաբաղն ունի լայն իրավունքներ, և այնտեղ չեն մտածում ազգային հարցի մասին, քանի որ այն լուծվել է և չկա սուր, հիվանդագին, գլխավոր հոգատարություն պահանջող ազգային հարց»:

Դժգոհությունները և պայքարը շարունակվում են նաև 80-ական թթ.: 1980 թ. փետրվարի 23-ին Հաղրութի շրջանի մի շարք գյուղերի 103 հոգու ստորագրությամբ բողոք-մամակ է ուղարկվել ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին, որում մասամբ ասված է. «Ադր. ԽՍՀ ղեկավար մարմինների կողմից ցուցաբերվող անտարբերության և Խտրական վերաբերմունքի հետևանքով մեր երբեմնի շեն գյուղերը վերածվել են ավերակների, պետական և կոլեկտիվ տնտեսությունները ետադինելով քայքայման եզրին են հասցվել»: Այնուհետև պատմում են, որ ետպատերազմյան 41 տարվա ընթացքում բնակավայրերում չի ստեղծվել ոչ մի ընկերային ենթակառուցվածք (ինֆրաստրուկտուրա), չի ավելացվել ոչ մի հեկտար ջրովի հող, կառուցվել ժամանակակից պահանջով անասնազոմ, բացվել արդյունաբերական ձեռնարկություն: Ճանապարհազուրկ գյուղերի բնակիչների վիճակը շատ ծանր է, մարդիկ հարկադրաբար թողնում են հայրենի գյուղերը, փակվում են դպրոցները, վերանում են գյուղերը: Առանձնապես վատ վիճակում է գտնվում բնակչության բուժսպասարկումը: Մարդիկ գրկված են մայրենի լեզվով հաղորդումներ լսելու հնարավորությունից: Հաղրութցիները վերջում խնդրում են դրական լուծում տալ իրենց «պահանջին՝ Լեռնային Ղարաբաղը միավորել Հայկական ԽՍՀ-ին», որով «վերջ կտրվի մեր տառապանքներին, կհաղթանակի բանակամությունը, ազգերի հավասար ծաղկման... քաղաքականությունը»⁴⁵:

Ադրբեջանի քաղաքական, տնտեսական և մշակույթային այդ աճաբարության դեմ պայքարում էին նաև այն ծնունդով արցախցիները, ովքեր ճակատագրի բերումով գտնվում էին երկրամասից դուրս: 1982 թ. օգոստոսի 16-ին մոսկվաբնակ 11 անվանի գիտնականներ և պատերազմի վետերաններ⁴⁶, դիմելով ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին, նրան հիշեցնում են, որ 26-րդ համագումարի ամբիոնից հայտարարել է, թե «այսօր խորհրդային ազգերի միասնությունը ամուր է, քան երբևիցե», միևնույն ժամանակ նաև նշել է, թե դա չի նշանակում, որ ազգային բոլոր հարցերը լուծվել են: Լ. Ի. Բրեժնևին հիշեցնում են, որ դեռևս 1920 թ. հուլիսի 19-ին Կարյազինոյի հեղկոմի նախագահ Ասադ Կարակը Գորիս գրած նամակում նշել է, թե Ձանգեզուրը Ղարաբաղի հետ միացնելու համար Ադրբեջանի կառավարությունը բաց է թողել 200 մլն ռուբլի, իսկ հուլիսի 21-ին գրած նամակում նա ավելի պրոկոկացիոն խորհուրդներ էր տալիս: Ադրբեջանը միշտ էլ նման քաղաքա-

կանությանը է հանդես եկել Ղարաբաղի նկատմամբ: Նամակի հեղինակները գլխավոր քարտուղարին խնդրում են Լեռնային Ղարաբաղի հարցը դարձնել միութենական մասշտաբի համակողմանի ուսումնասիրվող հարց և այն վճռել ԽՄԿԿ Կենտկոմի և նախարարների խորհրդի ստեղծած հեղինակավոր հանձնաժողովի միջոցով⁷:

Մի հանգամանք ևս, որը արժանի է ուշադրության: 1981 թ. հունիսի 16-ի «խորհրդային Ղարաբաղ» թերթը հրատարակեց Ադր. ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Կ. Խալիլովի և քարտուղար Ռ. Կազիևայի ստորագրությամբ հաստատված «Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետության օրենքը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության մասին»: Մարզի բնակչությունն անտեղյակ էր Բաքվում «թիված» և հրատարակված կանոնադրությանը, ինչպես դա տեղի էր ունեցել 1923 թ.: Կանոնադրության երրորդ հոդվածում ասված է. «Ինքնավար մարզի տերիտորիան չի կարող փոփոխվել առանց ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի խորհրդի համաձայնության»: Սակայն այդ դրույթը Ադրբեջանի իշխանությունների կողմից լրիվ ոտնատակ տրվեց 90-ական թթ., երբ ինքագլուխ մարզի տարածքում կատարում էին տարածքային և վարչական փոփոխություններ, որի դեմ մարզային իշխանությունները բարձրացրին բողոք:

Որ Ադրբեջանի բռնարարքերին զուգ էին գնում տասնյակ արցախցիներ, ավերվում էին պատմական հուշարձաններ, փակվում մշակութային օջախներ, դա անժխտելի է: Այդ հարցերին չամոլորակարձանք, որովհետև այդ մասին խոսվել է այլ հեղինակի ուսումնասիրության մեջ⁸:

5. Արցախի մշակութային կյանքը 1941–1985 թթ.

Արցախ–Ղարաբաղի մշակութային կյանքը փոքր–ինչ վերելք ապրեց հետպատերազմյան տարիներին:

Այնուհայտ է, որ Արցախի դպրոցը պատերազմի տարիներին իր յուրահատուկ ներդրումն է ունեցել ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Պատերազմի հենց սկզբից հարյուրավոր հայ ուսուցիչներ, մեկնելով ռազմաճակատ, իրենց կյանքը չեն խնայել թշնամուն ջախջախելու գործում: Թիկունքում մնացած ուսուցիչներն աշխատում էին հասունացող սերնդի հետ և առաջ մղում ուսուցման ու դաստիարակության շնորհակալ գործը: Պատերազմն արմատական փոփոխությունների ենթարկեց կրթության բովանդակությունը, ձևերն ու մեթոդները, և առանձին սրությամբ դրվեց սովորողների ռազմաօդայինասիրական դաստիարա-

կության խնդիրը⁹: Դպրոցների ուսուցիչները ջանասիրությամբ օգնում էին հոսպիտալներին և կարմիրբանակայինների ընտանիքներին, իսկ ավագ դպրոցականներն իրենց վրա էին վերցրել հոսպիտալների շեֆությունը: Այն ժամանակ մարզժողովրդաբաժնի վարիչ Գրիգոր Գրիգորյանը իր մի հաշվետվության մեջ հաղորդում է, թե 1941/42 ուսումնական տարվա հուլիսի 1–ի դրությամբ մարզի 193 դպրոցներից կապիտալ և ընթացիկ վերանորոգման են ենթարկվել 168–ը: 129 դպրոցներում արդեն մթերվել էր տարվա վառելիքայտը, դպրոցների կահավորման համար ձեռք են բերվել 131 հազար ռուբլու սարքեր¹⁰: Այդ նշանակում է, որ դպրոցը գտնվում էր ուշադրության կենտրոնում:

Մարզի ժողովրդության մարմինների և արհմիութենական կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների հետևանքով 1941–1945 թթ. աշակերտական, ինչպես նաև առողջապահական տիպի մանկական ճամբարներում հանգստացել և բուժվել է 4400 երեխա: 1942 թ. հուլիսի 30–ին ԽՍՀՄ ժողկոմխորհը հատուկ որոշում ընդունեց «Դպրոցական բոլոր երեխաներին դպրոց ընդգրկելու և դպրոցական շենքերն ըստ նշանակության օգտագործելու մասին»¹¹, որը պահանջում էր մինչև օգոստոսի 20–ը ազատել զբաղեցրած բոլոր դպրոցական շենքերը, առանձնացնել և կահավորել լրացուցիչ շենքեր, որոնք անհրաժեշտ են նոր ուսումնական տարին հաջող սկսելու համար: Ընդհանրապես, գյուղական դպրոցների ուսուցիչները ծանրաբեռնված էին աշխատանքներով և այն հաղթահարում էին մեծ դժվարություններով: Ելնելով այդ ամենից՝ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի և մարզխորհրդի՝ 1943 թ. սեպտեմբերին տեղի ունեցած համատեղ միստը որոշեց քաղաքների և գյուղերի ուսուցիչներին բավարարել արդյունաբերական ապրանքներով¹²:

Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմին կից ստեղծվել էր ճակատայինների ընտանիքներին և երեխաներին օգնելու հատուկ ֆոնդ, որտեղ կենտրոնանում էին բոլոր մուծումները: Մարզի դպրոցականների կազմակերպած շաբաթօրյակներից ստացված եկամուտները մուծվում էին ճակատայինների երեխաների օգնության ֆոնդ: Մարզի դպրոցների աշակերտներն ու ուսուցիչները մեծ հոգատարություն հանդես բերեցին խորհրդային ռազմիկների երեխաների նկատմամբ: Նման օգնությունն ամբողջ երկրում կրում էր զանգվածային բնույթ:

Ընդհանուր պարտադիր ուսուցման օրենքի կենսագործումը մնում էր առաջնահերթ խնդիր: «Ուսուցիչների և աշակերտների կուլտուր– կենցաղային պայմանները բարելավելու միջոցառումների մասին» 1942 թ. դեկտեմբերին ընդունված որոշումը կարևոր նշանակություն ունեցավ մարզի դպրոցների համար: 1944 թ. Շուշի քաղաքում բացվեցին երեք նոր մանկատներ, որտեղ ընդգրկված էին 397 որբ և անապաստան երեխաներ:

Մարզում ձեռնարկված կարևոր միջոցառումներից էր մակ այն, որ 1943/44 ուստարվամից հանրակրթական դպրոցներում ուսուցումն սկսվեց 7 տարեկանից: Չնայած պատերազմ էր, այնուամենայնիվ, մարզում հետզհետե ավելանում էր դպրոցների, աշակերտների և ուսուցիչների թիվը: Դա երևում է հետևյալ աղյուսակից².

Ուստարվան	Դպրոցների թիվը				Աշակերտների թիվը	Ուսուցիչների թիվը
	տարրական	յոթնամյա	միջնակարգ	ընդհ.		
1941-1942	44	102	33	179	26743	1590
1942-1943	44	104	34	182	32307	1500
1943-1944	46	105	36	187	31414	1490
1944-1945	51	106	41	198	33719	1674

Քանի որ շատ ուսուցիչներ մեկնել էին ռազմաճակատ, մարզային լուսբաժինը միջոցառումներ էր ձեռնարկում դպրոցներն ուսուցիչներով ապահովելու համար: Ուսուցիչներ էին պատրաստում Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտը, Շուշիի և Հաղորթի մանկավարժական տեխնիկումները: Ժողովրդական տնտեսության այլ բնագավառներում աշխատող ուսուցիչները վերադառնում էին դպրոց: Բարձրագույն կրթությանը այլ մասնագետներ վերապատրաստվում էին և աշխատանքի անցնում դպրոցներում:

Ելնելով պատերազմական պայմաններից՝ փոփոխությունների ենթարկվեցին կրթության բովանդակությունը, ինչպես և դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերն և մեթոդները: Կենսական պահանջ դարձավ դպրոցականների կողմից ուսումնական աշխատանքներին զուգընթաց հանրօգուտ և արտադրողական աշխատանք կատարելը: Բոլոր փոփոխությունները կատարվեցին միայն շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման հաշվին: Դպրոցներում հաճախակի քննարկվում էին աշակերտների ուսումնադաստիարակչական, գաղափարաքաղաքական, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, ռազմաօդային-համապարհական դաստիարակության վերաբերյալ հրատապ հարցեր և ընդունում կոնկրետ որոշումներ:

Դպրոցականների գիտակցական կարգապահությունն ամրապնդելուն նպաստում էր աշակերտների համար մշակված նոր կանոնադրությունը:

Հայրենական մեծ պատերազմն ավարտելուց հետո Լեռնային Ղարաբաղի հարյուրավոր ուսուցիչներ, մարտական շքանշաններով և մեդալներով պարգևատրված, վերադարձան հայրենի օջախ և նոր ուժով

ու եռանդով նվիրվեցին մանկավարժական աշխատանքի: Պատերազմի վերջին տարում արդեն բացվել էին 6 միջնակարգ դպրոցներ, և զգալիորեն ավելացել ուսումնական ծախսերը:

Դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով մարզի կուսակցական և պետական մարմինները ձեռնարկել էին մի շարք միջոցառումներ: Այսպես՝ մարզկոմի բյուրոն 1948 թ. օգոստոսի 18-ին քննարկելով «Դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների մասին» հարցը, նշեց, որ անցած ուսումնական տարում դպրոցներում սովորած 32.569 աշակերտներից 2398-ը մնացել են նույն դասարաններում, իսկ բոլոր աշակերտներից գերազանց գնահատականներ են ստացել 360-ը և ներկայացվել ոսկե մեդալի: Այդ նույն ուսումնական տարում դպրոցներից հեռացել էր 2986 աշակերտ, որոնցից 600-ը անհարգելի պատճառով: Ելնելով այդ ցածր արդյունքներից մի շարք դպրոցների տնօրեններ ազատվեցին պաշտոնից: Պահանջվեց աշակերտների համար ձեռք բերել դասագրքեր և դպրոցներն ապահովել կադրերով:

Երբ ուշադիր ուսումնասիրում ենք հետպատերազմյան ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի դպրոցի սովորողների և ուսուցիչների քանակական փոփոխությունների պատկերը, տեսնում ենք, որ կայուն զարգացում կար մինչև 60-ական թթ. վերջը և 70-ական թթ. սկիզբը: Այնուհետև այդ թվերը նկատելիորեն նվազել են: Դա, անշուշտ, կախված է եղել բնակչության տեղաշարժի հետ: Այսինքն այդ շրջանում ավելի շատ ընտանիքներ են հեռացել Լեռնային Ղարաբաղից, որի հետևանքով էլ դպրոցականների թիվը արագորեն նվազում էր:

1949 թ. մարտին տեղի ունեցած ԼՂ մարզկոմի բյուրոն, քննարկելով մարզում յոթնամյա կրթության իրականացման հարցը, ընդունեց համապատասխան որոշում, որը պարտավորեցնում էր դպրոցներին և տեղական խորհուրդներին պարտադիր իրագործել յոթնամյա պարտադիր կրթությունը և բոլոր երեխաներին ընդգրկել դպրոց:

50-ական թթ. աշխուժանում է դպրոցաշինությունը: Դպրոցական նոր շենքեր կառուցվեցին Ստեփանակերտում, Հաղորթում, Մարտունիում, շրջանների բազմաթիվ գյուղերում: Արդեն 1956/57 ուսումնական տարում այլևնով նախատեսված 1-7-րդ դասարաններում 21.232 աշակերտի փոխարեն ընդգրկվել էր 21.524 հոգի: Մարզի 204 հանրակրթական դպրոցներում աշխատում էր 2406 ուսուցիչ, որոնցից 1000-ը ունեին բարձրագույն կրթություն:

Տարեցտարի հարստանում էր մարզի դպրոցների ուսումնանյութական բազան: Առաջ եկան գիշերօթիկ դպրոցներ, բավականին աշխատանքներ տարվեցին արտադրության մեջ աշխատող երիտասարդու-

թյան կրթության ուղղությամբ: Արդեն 1950/51 ուսումնական տարում գործում էին 28 երեկոյան դպրոցներ, որոնցում ընդգրկված էին 1745 պատանիներ ու աղջիկներ, իսկ բանվորական երիտասարդական և գյուղական երիտասարդական ու մեծահասակների 30 դպրոցներում սովորում էր 1186 մարդ⁹:

1950–ական թթ. մարզի հանրակրթական դպրոցների կառուցվածքում և աշխատանքի բովանդակության մեջ զգալի փոփոխություններ տեղի ունեցան. առանձնահատուկ ուշադրություն դարձվեց պարտադիր յոթնամյա կրթությունից ընդհանուր միջնակարգ կրթության անցնելու հարցին:

Մարզում լայն ծավալ ստացավ առաջավոր ուսուցիչների փորձի ուսումնասիրումը: Պարզվում է հարյուրավոր ուսուցիչներ իրենց քրտնաջան աշխատանքի հետևանքով հասել էին բարձրտրոկուսանոց առաջադիմության:

Հատուկ ուշադրություն էր դարձվում նաև սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների բարելավմանը: Դրանում ուսուցիչներին մեծապես օգնում էին դպրոցների կոմերիտական և պիոներական կազմակերպությունները:

1950–80–ական թթ. ձեռնարկվեցին միջոցառումներ, որոնց նպատակն էր ավելի կարգավորել մարզի ժողովրդական կրթության գործը: ԽՍՀՄ 21–րդ համագումարի որոշումները գործունեության ուղենիշ հանդիսացան երկրի, այդ թվում նաև ժողովրդական կրթության բնագավառի աշխատավորների համար: Դպրոցի առաջ դրվեց նոր խնդիր: Առանձնապես կարևոր էր կյանքի հետ դպրոցի կապի հույժ կարևոր խնդիրը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1958 թ. դեկտեմբերի 28–ին ընդունած «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ԽՍՀՄ–ում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքի հիման վրա ընդունվեց «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ԽՍՀՄ–ում ժողովրդական կրթության հետագա զարգացման մասին» օրենքը: Սահմանվեց, որ հանրապետության յոթնամյա պարտադիր կրթությունից ութամյա կրթության անցումը պետք է սկսել 1959/60 ուսումնական տարուց և ավարտել 1962/63 ուսումնական տարում: Մարզում ժողովրդական կրթության հետագա զարգացմանը նպաստեց Լեռնային Դարաբաղի մարզկոմի և աշխատավորների դեպուտատների խորհրդի մարզգործկոմի 1959 թ. հուլիսին ընդունված «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ԼԴՀ ժողովրդական կրթության հետագա զարգացման մասին» որոշումը: Այսպիսով մարզում ևս ավարտվեց ժողովրդական կրթության համակարգի կազմակերպման վերակառուցումը: Բերվող աղյուսակում ցույց է տրված մարզի դպրոցների և աշակերտների թիվը 60–ական թթ. առաջին կեսին⁹.

Ուստարի	Դպրոց (բանվոր)	Տարրական	Յոթնամյա	Ութնամյա	Միջնակարգ 10-ամյա	Միջնակարգ 11-ամյա	Փիչետոթիկ	Երկարոյա	Աշակերտների թիվը
1960-1961	207	46	83	23	24	25	3	-	25933
1961-1962	211	48	53	54	8	44	4	-	26965
1962-1963	210	47	-	109	-	49	4	2	28936
1963-1964	211	46	-	110	-	48	4	3	32176
1964-1965	212	47	-	110	-	48	4	3	33870

Մարզում դպրոցաշինարարությունն արագացվեց 1960–ական թթ., ինչը նպաստեց ընդհանուր միջնակարգ կրթության իրականացմանը: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում նաև դպրոցներում ուսումնանյութական բազայի հարստացմանը: Դպրոցի վերակառուցման մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած օրենքի համապատասխան փոփոխության ենթարկվեցին նաև ուսումնական պլաններն ու ծրագրերը: 1970–80–ական թթ. մարզի թե դպրոցների և թե ուսուցիչների թիվը սիստեմատիկ պակասում էր, և արդեն 1985/86 ուսումնական տարում մարզի 195 դպրոցներում սովորում էր 31.637 աշակերտ, այդ այն դեպքում, երբ 1969 թ. ուսուցման բոլոր ձևերում ընդգրկվել էր 44 հազար մարդ, որը կազմում էր բնակչության ընդհանուր թվի 28.6%–ը: Այն ժամանակ հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը կազմել է 41.8 հազար մարդ, իսկ ուսուցիչների թիվը 3.2 հազար, միջնակարգ–մասնագիտական դպրոցներում սովորողների թիվը 2.1 հազար¹⁰: Սկսած 1970–ական թթ. դպրոցների թիվը նվազում էր: Ըստ վիճակագրական տվյալների 1975/76 ուսումնական տարում մարզում գործում էր 194 դպրոց, որտեղ սովորում էր 38.326 աշակերտ, և դասավանդում 3505 ուսուցիչ¹¹:

Մարզում ավանդույթ էր դարձել բարձրդասարանցիների աշխատանքի և հանգստի ճամբարների կազմակերպումը: Եթե 1976 թ. մարզում գործում էր այդպիսի 5 ճամբար, ապա 1982–ին նրանց թիվը հասնում էր 73–ի: Դպրոցականների աշխատանքային դաստիարակությունը լավ

հիմքերի վրա էր դրված Ստեփանակերտի թիվ 1, Քարինտակի, Ճարտարի, Տողի, Աղբուլաղի, Մաղավուզի, Սեյսուլանի, Շուշիի, Չանախչու, Մարուշենի, Լորագյուղի, Բաղարայի, Գիշու, Ղզղալայի և այլ դպրոցներում:

11-րդ հնգամյակի առաջին տարում՝ 1981 թ., մարզում դպրոցների թիվը իջել էր 177-ի, որտեղ սովորում էր 34.000 աշակերտ, և դասավանդում՝ 3563 ուսուցիչ: Կիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ մարզում հաջորդ տարիներին անընդհատ իջել է դպրոցների և սովորողների թիվը: Սա թուրք-ազերիների իշխանության վարած քաղաքականության արդյունք էր: Հայկական դպրոցներում սովորողների թիվն անընդհատ նվազում էր, իսկ աղբրեջանական դպրոցներում՝ ավելանում:

1939 թ., ինչպես նշվել է, Շուշիում բացվել է մինչև 1953 թ.: Դա այն առաջնեկն էր, որը պետք է ուսուցիչներ պատրաստեր մարզի դպրոցների համար: Այստեղ դասախոսական աշխատանքի էին հրավիրվել Արամ Մարտիրոսյանը, Սարգիս Աբրահամյանը, Կարո Դավթյանը, Սուրեն Հայրապետյանը, Վարդան Ստեփանյանը, Սարգիս Աղամյանը, Գրիգոր Գրիգորյանը, Թիմուր Ամիրջանյանը, Տատյանա Ալեքսանդրովնան և ուրիշներ: 1946 թ. ինստիտուտը Շուշիից Ստեփանակերտ տեղափոխվելուց հետո կուսակցության մարզկոմն ու մարզխորհուրդը սկսում են մոտիկից հետաքրքրվել ինստիտուտի կյանքով: Ինստիտուտը 1939-1953 թթ. տվել է շրջանավարտների 6 սերունդ, 450-ից ավելի մանկավարժներ: Աղբրեջանի իշխանությունների համար հաճելի չէր Ստեփանակերտում ունենալ ուսուցչական ինստիտուտ, ուստի այն փակվեց: Մոտ երկու տասնյակ տարի անց՝ 1969 թ., Աղբրեջանի իշխանությունները, հետապնդելով հեռահար ծրագիր, փակելով Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը, այն տեղափոխեցին Ստեփանակերտ՝ որպես մասնաճյուղ՝ երեք բաժիններով՝ հայկական, աղբրեջանական, ռուսական: Աղբրեջանը նպատակ ուներ Արցախում հիմքեր ստեղծել աղբրեջանցիների ավելացման և մտավորականության խիտ ուժեր ունենալու համար: Բաքվից իջեցված պլանի համաձայն՝ 1987 թ. նախատեսված էր հայկական սեկտորում ունենալ 200 ուսանող, իսկ աղբրեջանական սեկտորում՝ 175: Մինչդեռ Արցախում աղբրեջանական դպրոցների թիվը մոտ 10 անգամ պակաս էր հայկական դպրոցներից: Չէր փոխվում նաև ռուսական սեկտորում ընդունվողների թիվը: Դասախոսներ էին հրավիրվում Հայաստանից, Աղբրեջանից և այլ տեղերից: Այստեղ էին դասախոսում ղոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանը (հայոց լեզու և գրականություն), Սերգեյ Բաղդասարյանը (մաթեմատիկա և ֆիզիկա), Արմո Ներսիսյանը (մանկավարժություն և հոգեբանություն) և ուրիշներ: Այնուհետև ինստիտուտ աշխատանքի եկան

Սերգեյ Խաչատրյանը, Շահեն Աբրահամյանը, Ալբերտ Գրիգորյանը, Գրիգոր Սողոմոնյանը, Գրիշա Հարությունյանը, Աշոտ Նավասարդյանը, Ստեփան Պետրոսյանը, Ռուդիկ Առաքելյանը, Սուրատ Խանյանը, Գուրգեն Բաղդասարյանը, Կարո Դավթյանը, Մարուսյա Բաղդամյանը, Արզիկ Մխիթարյանը, Գրիշա Հարությունյանը (մանկավարժ), Օլեգ Եսայանը, Լավրենտ Դարայանը, Ստեփան Պողոսյանը, Ռոնա Բալայանը, Ռոմելա Ներսիսյանը, Ժամնա Գալստյանը, Աշոտ Հովհաննիսյանը և ուրիշներ: 1970-1980-ական թթ. գիտական, մանկավարժական, ստեղծագործական բեղմնավոր աշխատանք են կատարել և գիտական թեզեր պաշտպանել մի շարք դասախոսներ, որոնցից են Համլետ Գրիգորյանը, Կարեն Արամյանը, Հրանտ Խաչատրյանը, Արկաղի Թովմասյանը, Օֆիկ Բաբայանը, Լենա Գրիգորյանը, Դոնարա Գաբրիելյանը, Անահիտ Աթայանը, Համլետ Մովսիսյանը, Սերգեյ Սարգսյանը, Նիկոլայ Ավագիմյանը, Գրիշա Հարությունը և ուրիշներ: Ինստիտուտի հայ դասախոսները այդ մտայն տարիներին մեծ աշխատանք են կատարել հարյուրավոր հայ երիտասարդության դաստիարակության և կրթության գործում: Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը, արհամարհելով Աղբրեջանի իշխանությունների կողմից իրագործվող բռնարարքները, չկորցրեց հոգու արիությունը և մտքի սլացքը: Հաճախ հանդես էին գալիս հանրապետական, ինչպես և միութենական բնույթի գիտական կոնֆերանսներում և տարբեր բնույթի հավաքներում:

Թե՛ պատերազմի և թե՛ հետպատերազմյան տարիներին Արցախ-Ղարաբաղում գործել են նաև տարբեր մասնագիտությունների գծով ուսումնարաններ և տեխնիկումներ: Դրանցից ամենահինը Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումն է: 1951 թ. տվյալներով այդ տեխնիկումը ավարտել էին 301 ագրոնոմ, 438 զոտտեխնիկ և 390 անասնաբույժ¹²: Յոթնասույն տարիների ընթացքում տեխնիկումի թողարկած շրջանավարտների թիվը (1993) հասել էր 6821-ի¹³: Տեխնիկումի շրջանավարտներից են բազմաթիվ ղոկտոր, պրոֆեսորներ, ակադեմիկոսներ, բանաստեղծներ, կուսակցական և պետական գործիչներ: Տեխնիկումի ուսանողներից 35-ը իրենց կյանքը նվիրաբերել են թուրք-ազերիների դեմ մղված ազգային-ազատագրական պայքարին:

1984 թ. տվյալներով՝ մարզում գործում էին 10 պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարաններ՝ 2900 սովորողով և 4 միջնակարգ-մասնագիտական ուսումնարան՝ 2200 սովորողով¹⁴:

Ընդ մարզում նվազ քայլեր էր կատարում տպագրությունը: Եթե 1955-ին մարզում տպագրվում էին մարզային 2 և շրջանային 4 թերթեր, ապա 1983 թ. տպագրվում էին մարզային մեկ, շրջանային 5 և 1 բազմատիրաժ թերթեր¹⁵:

Մարզի աշխատավորների մեջ մեծ մասսայականություն է վայելում Ստեփանակերտի Մ. Գորկու անվան «Պատվո նշան» շքանշանակիր պետական դրամատիկական թատրոնը: Կես դարում թատրոնը բեմադրել է ավելի քան 300 ներկայացում, որոնք դիտել է ավելի քան 5 միլիոն մարդ: Թատրոնի հետ անխաղաղորեն կապված են բեմի վարպետներ Կարո Ավարյանը, Իվան Ավանեսյանը, Միքայել Կորգանյանը, Աննա Սելիքը, որոնք իրենց գործունեության առաջին տարիներին խաղացել են Ստեփանակերտի դրամատիկական թատրոնում: Հայտնի են ռեժիսորներ Հրայր Գրիգորյանը, Գուրգեն Թավրիզյանը, Արտաշես Հովհաննիսյանը, Հովհաննես Կարապետյանը, Ռեն Սարգսյանը: Քանիցս Ստեփանակերտի թատրոնում բեմ են դուրս եկել հռչակավոր դերասաններ Վահրամ Փափազյանը, Արուս Ոսկանյանը, Ժամենը, Իսահակ Ալիխանյանը: Հայտնի են մանավանդ բեմի վարպետներ Մ. Բալասանյանը, Ն. Ասատրյանը, Վ. Գևորգյանը, Մ. Միքայելյանը, Կ. Հարությունյանը, Ժ. Գալստյանը, Շ. Գրիգորյանը, որոնք արժանացել են ժողովրդական արտիստի կամ վաստակավոր արտիստի կոչմանը¹⁶:

Մարզում առաջին մախադպրոցական հիմնարկը բացվել է 1928 թ. Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի մետաքսակարժական ֆաբրիկային առընթեր: 1983 թ. մարզում գործում էին 87 մախադպրոցական հիմնարկներ, որոնցում ընդգրկված էր 6656 երեխա¹⁷:

Լեռնային Ղարաբաղում հեղինակություն էին վայելում Ղարաբաղի երգ ու պարի պետական համույթը և «Ղարաբաղ» պետական էստրադային նվագախումբը: Շուշիում գործում էին կուլտուրայի շրջանային տան ժողովրդական գործիքների համույթը և դրամատիկական կոլեկտիվը: Քառորդ դար է, ինչ աշխատում էր Մարտունու մշակույթի շրջանային տան «Քնար» ինքնագործ համույթը, որի գեղարվեստական ղեկավարն էր երաժիշտ Նորայր Ղանիեյանը:

1983 թ. տվյալներով մարզում գործում էին 700 ինքնագործ գեղարվեստական խմբակներ ու միավորումներ, որոնց մասնակցում էր 8000 սիրող: Մարզում գործում էին 253 ակումբային հիմնարկներ, 193 կինոտեղակայում, 9 թանգարան և այլն: 1984 թ. տվյալներով մարզում 1940 թ. եղած 73 մասսայական գրադարանների դիմաց կար 275 գյուղական գրադարան՝ 2.2 միլիոն գրքային ֆոնդով¹⁸:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում գործում էր գրողների միության մարզային բաժանմունք: Այստեղ բեղմնավոր աշխատել են արձակագիրներ, բանաստեղծներ և դրամատուրգներ: Մի շարք գրողներ մեկնել էին ռազմաճակատ և իրենց կյանքը նվիրել հայրենիքի պաշտպանությանը: Պատերազմից հետո Արցախում ստեղծագործում էին Բոգդան Ջանյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Սարգիս Աբրահամյանը, Վազգեն Օվյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Վար-

դան Հակոբյանը, Սուրատ Խանյանը, Արմեն Հովհաննիսյանը, Իսահակ Ալավերդյանը, Արկադի Թովմասյանը, Աբգար Դանիելյանը, Միքայել Հովհաննիսյանը, Գևորգ Աղաջանյանը և ուրիշներ: Արցախի բանաստեղծի կամ գրողի որևէ գրքի հրատարակումը կապված էր լուրջ դժվարությունների հետ: Աղբբեջանի իշխանություններն աննշան մամուլ էին հատկացնում դրա համար: Հետագայում ոչ թե Ստեփանակերտում, այլ Բաքվում տպագրվում էր «Գրական Աղբբեջան» հանդեսը, որը աննշան օժանդակություն էր ցույց տալիս Լեռնային Ղարաբաղի գրողներին:

Արցախահայությունը, 1983 թ. տվյալներով, աշխարհին տվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիաների 33 անդամ, 27 կոմպոզիտոր, 40 գրող, 32 ժողովրդական արտիստ, գիտությունների ավելի քան 115 դոկտոր, մեծ թվով բարձրաստիճան ռազմական գործիչներ, ինչպես և կուսակցական ու պետական գործիչներ¹⁹:

Արցախ աշխարհը հայտնի է նաև սպորտի և ֆիզկուլտուրայի զարգացմամբ: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1981 թ. մարզում կային ֆուտբոլի 65 դաշտ, վոլեյբոլի 246 և բասկետբոլի 93 հարթակ, 36 հարթակ ձեռքի գնդակի համար, 3 հրաձգարան, 56 մարզադահլիճ: Ստեփանակերտի 15000 տեղանոց մարզադաշտը կառուցվել է հետպատերազմյան տարիներին ժողովրդի մասնակցությամբ: «Ղարաբաղ» ֆուտբոլի թիմը հանդես էր գալիս ԽՍՀՄ չեմպիոնատի երկրորդ լիգայում: Ստեփանակերտում գործում էր մեկ հեկտար տարածություն զբաղեցնող լողավազան²⁰: Արդեն 1985 թ. տվյալներով՝ մարզում կային 93 ֆուտբոլի դաշտ, 70 սպորտային դահլիճներ, 493 սպորտային հրապարակներ, 11 հրաձգարան:

Ըստ տվյալների՝ միայն 1984 թ. մարզում պատրաստվել են ՊԱՊ-ի 20 հազար կրծքանշանակիրներ, 14800 մասսայական մարզիկներ, 172 առաջինկարգայիններ, ԽՍՀՄ սպորտի վարպետության 9 թեկնածու: Այդ ժամանակ մարզում գործում էր մանկապատանեկան 11 սպորտդպրոց, որտեղ զբաղվում էին շուրջ 3200 պատանիներ²¹:

ԱՄՓՈՓՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային հաջողություններն ավելի ակնառու կլինեին, եթե թուրք-ազերիների իշխանությունները միտումնավոր չվարեին հայաստյաց քաղաքականություն: Ադրբեջանը ձգտում էր ունենալ Արցախ առանց նրա բնիկ բնակչության, որը հազարամյակներ շարունակ ապրել է իր ոստանում:

Ակնհայտ է նաև այն, որ Անդրերկրյունի անօրեն որոշումով Արցախ-Ղարաբաղն անջատվեց մայր Հայաստանից և բռնակցվեց թուրքական իշխանությանը: Լեռնային Ղարաբաղը կազմել է Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքի 5.4 և բնակչության 2.6%-ը, որը թողարկում էր հանրապետության արդյունաբերական արտադրանքի 1.8 և գյուղատնտեսական մթերքների 3%-ը:

Մեր կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ մարզում ամեն տարի թերակատարվել էին կապիտալ շինարարության պլանները: 1981-1985 թթ. բնակչության 1000 շնչի հաշվով մարզում կատարված կապիտալ ներդրումներով ավելի քան 2, իսկ 1986 թ. 2.7 անգամ զիջում էր Ադրբեջանական ԽՍՀ միջին ցուցանիշներին¹: Մեկ ու կես տասնամյակ անընդմեջ մարզում թերակատարվում էին կապիտալ ներդրումների, շինարարական մոնտաժային աշխատանքների, հիմնական արտադրական ֆոնդերի շահագործման պլանային առաջադրանքները: Միայն 1971-1987 թթ. պլանավորված 147 մլն ռ. հիմնական ֆոնդից 1/4-ը շահագործման չի հանձնվել²: Մարզում կապիտալ ծախսերը կատարվում էին կանայական ձևով: Այսպես, եթե 1986 թ. Ադրբեջանական ԽՍՀ-ում այն կազմել է 342, ապա ԼՂԻՄ-ում՝ 181 ռ.³:

Տարեցտարի նվազում էր շահագործվող բնակարանների թիվը: Օրինակ, եթե 9-րդ հնգամյակում շահագործման է հանձնվել 269.2 հազար քառ. մ բնակարանություն, ապա 11-րդ հնգամյակում այն կազմել է 251.8 հազար քառ. մ⁴:

Մարզում հետզհետե կրճատվում էր դպրոցների և աշակերտների թիվը: Միայն 70-80-ական թթ. աշակերտների թիվը կրճատվել էր 13 հազարով⁵:

Մարզում արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացված էին Ստեփանակերտում, որոնց հուժքը մեծամասամբ ստանում էին Ադրբեջանից: Այն կատարվում էր անհամաչափ, և հիմնականում մատակարարվում էր անորակ հումք, որը խիստ ազդում էր արտադրանքի որակի վրա: Ֆոնդային հատկացումները լիովին չկատարվելու պատճառով մարզում շինարարությունը պարբերաբար ձախողվում էր: Ստեփանակերտում ավելի քան 20 տարի հերթի էին սպասում: Դրա հիմնական պատճառը ոչ միայն բնակարաններ կառուցելու համար նախատեսվող կապիտալ ներդրումների պակասն էր, այլ բնակարանաշինարարության պլանների պարբերաբար թերակատարումները⁶:

Ըստ էության, մինչև 1970-ական թթ. մարզի հայկական շրջաններում պետական բյուջեի հաշվին դպրոցական շենքեր, ակումբներ, կուլտուրայի տներ, սպորտային կամ հասարակական որևէ այլ օբյեկտ շատ քիչ է կառուցվել: Միայն Ստեփանակերտում 1988 թ. ավելի քան 3000 աշակերտական տեղերի հույժ կարիք էր զգացվում: Ստեփանակերտի դպրոցներում 5810 աշակերտական տեղի դիմաց կար 9118 աշակերտ⁷: Տվյալները վկայում են, որ 70-ական թթ. կեսերից մինչև 80-ական թթ. կեսերը կառուցվել էին միայն մի քանի դպրոցական շենքեր⁸: Ստեփանակերտի մանկապարտեզներում տեղերի քանակը հասնում էր 1575, սակայն երեխաների թիվը կազմում էր 2735: Ընդամենը նախատեսվել էր 12-րդ հնգամյակում կառուցել 280-տեղանոց 1 մանկապարտեզ և 1176 տեղանոց հանրակրթական 1 դպրոց: Բանը հասել էր նրան, որ մտուր-մանկապարտեզների թեկուզ մի փոքր խումբ հնարավոր չէր բացել առանց Բաքվի ղեկավարության հետ համաձայնեցնելու⁹:

11-րդ հնգամյակի տարիներին մարզում միջին հաշվով տարեկան արտադրվել է 145.7 հազար տ խաղող, մինչև 11 հազար տ միս, մոտ 55 հազար տ կաթ, որը 1000 շնչի հաշվով բավականին բարձր էր հանրապետության միջինից: Եվ փոխանակ նպաստելու, այդ ցուցանիշներն ավելի անրապնդելու, ընդհակառակը, ամեն կերպ արգելակում էին՝ նսեմացնելով արցախցու վաստակը: Օրինակ՝ նախատեսված էր Սարսանգի հիդրոհանգույցը կառուցելուց հետո Թարթառի ջրով ոռոգելի դարձնել Կուրոպատկիճոյի, Ալիբալուի և Աղբուռունի արոտավայրերը, սակայն ջրովի արտերի և արոտավայրերի տարածք է ավելացնելու փոխարեն, փաստորեն, ջուր չհատկացվեց: Ուշագրավել, որ սահմանափակ տարածք ունեցող մարզը պահում էր 100 հազար գլուխ խոշոր եղջերավոր մթերատու անասուն, ավելի քան 275 հազար գլուխ ոչխար և այծ, 95 հազար խոզ (այդ թիվը կազմում էր հանրապետությունում պահվող խոզերի 40%-ը)¹⁰: Սակայն մարզը չունեի խտացված կետերի արտադրության գործարան: Հանրապետության այլ տեղերից բերվող կե-

բերը կրկնակի թանկ էին նստում: Ամեն տարի կրճատվում էին կերաֆոն-դերը: Աղբյուրների թուրք-ազերիական իշխանությունը պարզապես նպատակ ունեւր Լեռնային Ղարաբաղը դարձնել անասնապահական արտադար: Հենց այդ նպատակով էլ տարեցտարի կրճատվում էին մարզի ցանքատարածությունները: Պա է ապացուցում հետևյալ աղյուսակը (արտահայտած հազար հեկտարով)՝

	1960	1970	1980	1985	1986
Ամբողջ ցանքատարածությունները	88.2	71.9	63.0	66.3	57.1
այդ թվում՝ հացահատիկային կուլտուրաներ	60.3	42.1	29.6	32.1	20.9
տեխնիկական կուլտուրաներ	3.7	1.6	0.2	0.5	0.5
կարտոֆիլ և բոստանաբանջարանոցային կուլտուրաներ	1.8	1.6	2.0	1.9	1.9
կերային կուլտուրաներ	22.4	26.6	31.2	31.8	33.8

Մարզում 1986 թ. խաղողի տարածությունները կազմել են 17.8 հազար հեկտար: Արցախցիները դարեր շարունակ զբաղվել են խաղողագործությամբ: Այն դարձել էր ամենատեղաբեր ճյուղերից մեկը, որը հեռանկարային է Արցախի համար: Մինչդեռ Աղբյուրների իշխանությունները սկսել էին քայլեր ձեռնարկել այդ բարեբեր այգիները վերացնելու ուղղությամբ:

Մարզում ծանր է եղել Արցախի բնակչության տեղաշարժը: 1913 թ. Լեռնային Ղարաբաղում ապրում էր 176 հազար մարդ, 1926-ին՝ 125.3 հազար¹², որի 94.4%-ը հայեր էին: 1939 թ. մարզում հայերի թիվը ավելացել էր 18.9%-ով, այսինքն՝ 1926 թ. 111.7 հազարից հասել էր 132.8 հազարի: Այդ նույն թվականին մարզի բնակչությունը 125.3 հազարից հասել էր 159.8 հազարի կամ ավելացել էր 20.4%-ով¹³: Սակայն Հայրենական պատերազմը և բնակչության արտահոսքն իրենց բացասական ազդեցությունն են թողել արցախահայության հետագա աճի վրա: 1959 թ. մարդահամարի տվյալներով՝ մարզում հայերի թիվը իջել էր 84.4%-ի¹⁴: Հետո՝ մինչև 1979 թ., այն ավելացել էր 13 հազար մարդով: Ավելի մեծ էր թուրք-ազերիների աճը: Պա մեծամասամբ կատարվում էր արհեստակարներն: Եթե 1926-1979 թթ. Ղարաբաղի հայ բնակչության թիվն ավելացել էր 3 անգամ¹⁵:

1989 թ. ԼՂԻՄ բնակչության թիվը իջել և կազմել է Աղբյուրների ԽՍՀ-ի ընդհանուր բնակչության հազիվ 2.7%-ը¹⁶: Նաև ասենք, որ 1923-1979 թթ. մարզի գյուղական բնակչությունը պակասել է 61.3 հազարով՝:

Մարզում ազգային կազմի տեղաշարժի վերաբերյալ պարզ պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը (արտահայտված հազարներով)՝

	1926	1939	1959	1970	1979	1989
Ամբողջ բնակչությունը	125.3	150.8	130.4	150.3	162.2	189.1
այդ թվում՝ հայեր	111.2	132.8	110.1	121.1	123.1	145.5
%-ներով	89.1	88.1	84.4	80.6	75.9	76.9
աղբյուրացիներ	12.6	14.1	18.0	27.2	37.3	40.6
%-ներով	10.1	9.3	13.0	18.1	22.9	21.5
ռուսներ	0.6	3.2	1.8	1.3	1.3	1.9
%-ներով	0.5	2.1	1.4	0.9	0.8	1.0

Ահա թե Արցախ-Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարի նախօրյակին ինչպիսի պատկեր ուներ երկրամասը, որտեղ անթաքույց ու մենզամիտ կերպով իրագործվում էր թուրք-ազերիների հայակործան քաղաքականությունը: Հենց այդ էր, ըստ էության, հիմնական պատճառը, երբ արցախահայությունն ընթուստացավ, բարձրացրեց իր բռունցքը և փշրեց թուրքական զնդանը (Այդ մասին հանգամանորեն հաջորդ Գ գրքում):

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. *Кочарян Г. А.*, Нагорный Карабах, Баку, 1925.
2. *Սեյրան Գ.*, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները (տնտեսական աշխարհագրություն), Թիֆլիս, 1928:
3. *Չոլիաննիսյան Գ. Ա.*, Լեռնային կոոպերացիայի պլանի հաղթանակը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Բաքու, 1958: Հետամնաց ագրարային գավառից՝ առաջավոր սոցիալիստական մարզ, Բաքու, 1963: Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971:
4. *Սոթքեյան Ար.*, Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզում, Ստեփանակերտ, 1939:
5. *Ջաբարյան Ա.*, Լեռնային Ղարաբաղի մետաքսարդյունաբերությունը, Բաքու, 1970:
6. *Բարսե Ա.*, Լեռնային Ղարաբաղ, Բաքու, 1963:
7. *Շահնազարով Լ. Ա.*, Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզ, Բաքու, 1960:
8. *Ավագյան Ա.*, Սովետական Ղարաբաղի մամուլը, Բաքու, 1962:
9. *Համլետ Գրիգորյան, Գրիշա Հարությունյան*, Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005:
10. Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, Степанакерт, 1963. Нагорный Карабах за годы Советской власти, Степанакерт, 1969. Депутату областного Совета депутатов трудящихся НКАО, Степанакерт, 1971. Делегату XXVI конференции Нагорно-Карабахской областной организации КП Азербайджана, Степанакерт, 1974. Достижения Нагорного Карабаха в девятой пятилетки, Степанакерт, 1976 և այլն:
11. Азербайджан в цифрах. Краткий статистический сборник, Баку, 1964. Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году (статистический ежегодник), Баку, 1985. Азербайджанская ССР. Документы и материалы, Баку, 1989 և այլն:
12. *Ուլուրարյան Բագրատ*, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994: Նույնի Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994: *Բալայան Վահրամ*, Արցախի պատմություն, Երևան, 2002: Եղբայրական ընտանիքում,

Բաքու, 1973: Սովետական Լեռնային Ղարաբաղ, Բաքու, 1983: *Խաչատրյան Սերգեյ*, Վաստակած պատիվ, Ստեփանակերտ, 2002: *Աղամյան Սուրեն*, «Կոնունիզմի» կոլտնտեսությունը, Երևան, 1973: *Հարությունյան Համլետ*, Ոգու լուսեղեն գաղտնիքը, Երևան, 2003: *Հարությունյան Թ.*, Ժողովրդական ուսուցիչը, Երևան, 2001: *Դանիելյան Արզար*, Հարազատ օջախ, Երևան, 1993: *Մարումյան Նուսեն*, Բաղաբալական և մշակութային իրավիճակը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 1960–80–ական թթ., Ստեփանակերտ, 2001: *Շոգինյան Մ.*, Нагорный Карабах, Москва, 1930: Նույնի Дневники, 1917–1932, Ленинград, 1932 և այլն:

13. *Մկրտչյան Շահեն*, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ. Բաքու, 1970: Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Երևան, 1996: Արցախում գրառումներ, Երևան, 2001: Լեռնային Ղարաբաղ: Աղբյուրների իրավունացրած ցեղասպանության անատոմիան, Երևան, 2003 և այլն:
14. *Հարությունյան Կիրիլենտ*, Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–1945 թթ.), Երևան, 2001: Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 2002: Участие армянского народа в Великой отечественной войне Советского Союза (1941–1945), Ереван, 2004 և այլն:
15. *Վարապետյան Սուրեն*, Լեռնային Ղարաբաղի քաջարի զավակները, Բաքու, 1969: *Շահրամանյան Փառո*, Լեռնային Ղարաբաղի կոմերիտական կազմակերպությունը Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945 թթ.), Ստեփանակերտ, 1958: *Բարայան Բելա*, Արցախի կինը պատմության մեջ, Ստեփանակերտ, 1958: *Գրիգորյան Հակոբ*, Արցախահայության մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.), Սեղմազիր, Երևան, 1904: *Շոքրոմանյան Դ.*, Нагорно-Карабахская областная организация коммунистической партии Азербайджана в годы Великой Отечественной войны Советского Союза (1941-1945 гг.), Автореферат, Баку, 1964. *Վիրաբյան Արշակ*, Знаменитые Арцахцы, Ереван, 1992 և այլն:
16. История Азербайджана, т. 3, ч. 1 и 2, Баку, 1963. Из истории Советского рабочего класса Азербайджана, Баку, 1964. Советский Союз Азербайджана, Москва, 1971, К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925. Документы и материалы, Баку, 1989. Конфликт в Нагорном Карабахе, Сборник статей, Баку, 1990. *Токаржевский Е. А.*, Очерки истории Советского Азербайджана в перехода на мирную работу по восстановлению народного хозяйства (1921-1925 гг.), Баку, 1956. *Шобанов Ф. Ш.*, Развитие Советского государственности в Азербайджана, Москва, 1959, *Халилов А. И.*, Потребительская кооперация Азербайджанской ССР в период восстановления народного хозяйства (1921-1925 гг.), Баку, 1963. *Коровелиев А.*, История потребительской кооперации Азербайджана, Баку, 1968. *Գյսեյնով Դ.*, *Найдель М.*, Профсоюзы Советской Азербайджана, Москва, 1962 և այլն:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական – սոցիալ-քաղաքական կյանքը 1920-1930-ական թթ.

1. Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը վերականգնման ճանապարհին

1. Ադրբեջանի քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների պետական արխիվ (այսուհետև՝ ԱԲԿԿ ՊԱ), ֆ. 89, ց. 1, գ. 44, ք. 17:
2. Նույն տեղում, ֆ. 1, ց. 74, գ. 643, ք. 180–181:
3. Ադրբեջանի Հանրապետության պետական արխիվ (այսուհետև՝ ԱՀՊԱ), ֆ. 412, ց. 1, գ. 174, ք. 149:
4. Առաքելյան Ար., Շերմապահությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, Ստեփանակերտ, 1939, էջ 205:
5. Кочарян Г. А., Нагорный Карабах, Баку, 1925, с. 32.
6. «Կոմունիստ» (Բաքու), 1967, N126: «Սովետական Ղարաբաղ», 1967, N218:
7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ (այսուհետև՝ ԼԴՀ ՊԱ), ֆ. 11, ց. 1, գ. 48, ք. 11: Քանի որ 1992–1994 թթ. Ղարաբաղյան պատերազմի ժամանակ թշնամու ռմբակոծությունից վառվել է մարզային արխիվը, որի հետևանքով շատ գործեր ոչնչացվել են, ուստի մինչև 1940 թթ. ընկած շրջանի տվյալները գործ ենք ածել հին ֆոնդերի համարներով:
8. Նույն տեղում:
9. «Խորհրդային Ղարաբաղ», N13, 31.08.1924:
10. ԱՀՊԱ, ֆ. 185, ց. 1, գ. 4, ք. 11:
11. Кочарян Г. А., նշվ. աշխ., էջ 22:
12. ԼԴՀ ՊԱ, ֆ. 11, ց. 1, գ. 18, ք. 58: Աստիճանը խմիչքի մեջ սպիրտի քանակի արտահայտման տոկոսն է:
13. Նույն տեղում, ք. 77:
14. Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928, էջ 63:
15. «Խորհրդային Ղարաբաղ», N27, 09.08.1925: “Бакинский рабочий”, 09.08.1925: Դա առիթ է հանդիսացել, որպեսզի հետագայում Ադրբեջանը աշխարհով մեկ աղաղակ բարձրացնի, թե հող են հատկացրել արցախցիներին, մինչդեռ այդ տարածքներն անցյալում մտնում էին Վարանդա գավառի մեջ և հանդիսանում էր նրա անբաժան մասը:

16. ԼԴՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 135, ք. 11:
17. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 20, ք. 35:
18. Նույն տեղում, ք. 8:
19. «Կոմունիստ», N133, 03.10.1923
20. ԼԴՀ ՊԱ, ֆ. 8, ց. 1, գ. 25, ք. 11:
21. Նույն տեղում
22. Սեյրան Գ., նշվ. աշխ., էջ 89:
23. «Խորհրդային Ղարաբաղ», N32, 13.09.1925:
24. Բյարիիզը Ղարաբաղում ստորգետնյա ջրերը ինքնահոս դուրս բերելու կառույց է:
25. «Կոմունիստ», N63, 17.03.1925:
26. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 2, ք. 28:
27. Кочарян Г. А., նշվ. աշխ., էջ 30:
28. ԼԴՀ ՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 53, ք. 19:
29. Шагинян М., Дневники (1917-1931), Ленинград, 1931. с. 221:
30. ԱՀՊԱ, ֆ. 411, ց. 1, գ. 1, ք. 31:
31. ԼԴՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 53, ք. 61:
32. Նույն տեղում, ք. 47:
33. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 1, ք. 31:
34. Коровелиев А., История потребительской кооперации Азербайджана, Баку, 1968, с. 168:
35. Кочарян Г. А., նշվ. աշխ., էջ 30:
36. ԼԴՀ ՊԱ, ֆ. 33, ց. 2, գ. 47, ք. 23:
37. Նույն տեղում, ք. 26:
38. Նույն տեղում, ֆ. 2, ց. 1, գ. 135, ք. 41:
39. Նույն տեղում, ֆ. 11, ց. 1, գ. 18, ք. 58:

2. Հասարակական-քաղաքական կյանքի տեղաշարժերը

1. К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанского ССР. 1918-1925: Документы и материалы (այսուհետև՝ Документы...), Баку, 1989, с. 149.
2. Նույն տեղում, էջ 149–150:
3. 1925 թ. Վարանդայի կենտրոնը ճարտարից տեղափոխվեց նախկին ռուսական բնակավայր Սկորոլսկ (Խոնաշեն), որն ի պատիվ Ալ. Մյասնիկյանի անվանվեց Մարտունի: 1927 թ. նոյեմբերի 11–ին մարզխորհրդի որոշմամբ Խաչենի շրջանը վերանվանվեց Ստեփանակերտի շրջան, Վարանդայինը՝ Մարտունու: 1978 թ. Ստեփանակերտի շրջանը վերանվանվեց Ասկերանի շրջան, և շրջկենտրոնը Ստեփանակերտից տեղափոխվեց Ասկերան: 1932 թ. նոյեմբերի 5–ի մարզգործկոմի որոշմամբ Ջրաբերդի շրջանն անվանվեց Մարտակերտի շրջան, իսկ Դիզակինը՝ Հաղորուփ:

4. Документы..., с. 158-159.
5. Նույն տեղում, էջ 154-155:
6. Նույն տեղում, էջ 159-160:
7. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 4, ք. 1:
8. Документы..., с. 165-166.
9. Նույն տեղում, էջ 173-175:
10. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 4, ք. 1:
11. Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 125, ք. 35:
12. Նույն տեղում, ֆ. 89, ց. 1, գ. 44, ք. 17:
13. Документы..., с. 183-184, 190.
14. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 5, ք. 6-8:
15. Документы..., с. 191-194.
16. Նույն տեղում, էջ 195-203, նաև ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 1, ց. 125, գ. 327, ք. 20-24:
17. «Խորհրդային Ղարաբաղ», N11, 18.11.1923:
18. Հովհաննիսյան Գ. Ա., Առվետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 246:
19. «Խորհրդային Ղարաբաղ», N11, 18.11.1923:
20. Նույն տեղում:
21. «Կոմունիստ», N174, 21.11.1923, նաև ԼԴՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 13, ք. 8-9, ֆ. 460, ց. 1, գ. 2, ք. 1:
22. ԼԴՀ ՊԱ, ֆ. 460, ց. 1, գ. 2, ք. 3: «Խորհրդային Ղարաբաղ», N11, 18.11.1923:
23. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 1, ց. 74, գ. 645, ք. 75-76:
24. Նույն տեղում, գ. 134, ք. 181:
25. Նույն տեղում, գ. 647, ք. 7-8:
26. Նույն տեղում, գ. 138, ք. 153:
27. Նույն տեղում, ֆ. 1, ց. 74, գ. 136, ք. 41:
28. "Бакинский рабочий", 07.05.1924.
29. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 1, ց. 74, գ. 137, ք. 59:
30. Նույն տեղում, ք. 58:
31. Документы..., с. 243.
32. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 1, ց. 74, գ. 137, ք. 96:
33. Նույն տեղում, ք. 98:
34. «Խորհրդային Ղարաբաղ», N13, 31.08.1924:
35. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 297, ք. 31:
36. Նույն տեղում, գ. 38, ք. 5:
37. Նույն տեղում, ք. 26:
38. Նույն տեղում, գ. 20, ք. 26:
39. «Խորհրդային Ղարաբաղ», N5, 18.05.1924:
40. Նույն տեղում:

41. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 113, ք. 12:
42. Նույն տեղում, գ. 59, ք. 44:
43. Նույն տեղում, ք. 193:
44. «Փայլակ», Շուշի, 1917, N22 և 38:
45. Гусейнов Г., Найдель М., Профсоюзы Советской Азербайджана, Москва, 1962, с. 63.
46. Սեյրան Գ., նշվ. աշխ., էջ 12:
47. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 1, ք. 9:

3. Ինքնավար մարզի արդյունաբերությունը 1920-1930-ական թթ.

1. Братское сотрудничество народов СССР (1922-1932 гг.). Сборник документов и материалов, Москва, 1964, с. 331-332.
2. ԼԴՀ ՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 7, ք. 15-16:
3. Նույն տեղում, ֆ. 11, ց. 1, գ. 92, ք. 54:
4. Նույն տեղում, ֆ. 33, ց. 1, գ. 45ա, ք. 5:
5. Նույն տեղում, ց. 1, գ. 48, ք. 4, ֆ. 11, ց. 1, գ. 94, ք. 48:
6. Նույն տեղում, ֆ. 18, ց. 1, գ. 139, ք. 22:
7. Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 26, ք. 69:
8. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 50, ք. 24:
9. ԼԴՀ ՊԱ, ֆ. 33, ց. 1, գ. 58, ք. 17:
10. Նույն տեղում, ց. 2, գ. 162, ք. 4, նաև ց. 1, գ. 139, ք. 23:
11. Նույն տեղում, ց. 1, գ. 58, ք. 21, ց. 2, գ. 162, ք. 5:
12. «Կոմունիստ», N299, 26.12.1934:
13. ԼԴՀ ՊԱ, ֆ. 33, ց. 1, գ. 257, ք. 11:
14. Նույն տեղում, ց. 2, գ. 477, ք. 29:
15. Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 48, ք. 6:
16. Նույն տեղում, ֆ. 18, ց. 1, գ. 139, ք. 16:
17. «Խորհրդային Ղարաբաղ», N31, 03.08.1929:
18. Առաքելյան Ար., նշվ. աշխ., էջ 23-31:
19. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 298, ք. 3:
20. "Заря Востока", 1927, N1407.
21. Նույն տեղում, N1527, 18. 02. 1927:
22. Նույն տեղում:
23. ԱՀՊԱ, ֆ. 412, ց. 2, գ. 572, ք. 9:
24. Նույն տեղում, ֆ. 2202, ց. 1, գ. 25, ք. 10:
25. «Խորհրդային Ղարաբաղ», 1929, N 196:
26. Նույն տեղում, 1932, N54:
27. Անդրկովկասյան խորհուրդների վեցերորդ համագումարը (սղագրական հաշվետվություն), Թիֆլիս, 1931, էջ 122:
28. ԼԴՀ ՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 62, ք. 47:

29. Նույն տեղում, ֆ. 18, ց. 1, գ. 139, ք. 28:
30. Նույն տեղում, ֆ. 481, ց. 1, գ. 8, ք. 102:
31. «Խորհրդային Ղարաբաղ», N240, 07.11.1933:
32. ԼՂՀ ՊԱ, ֆ. 481, ց. 1, գ. 1, ք. 5, գ. 8, ք. 50:
- 33 ԱԳՊԱ, ֆ. 2511, ց. 2, գ. 45, ք. 82-84:
34. ԼՂՀ ՊԱ, ֆ. 481, ց. 1, գ. 147, ք. 219:
35. ԱԲԿԳԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 863, ք. 242-243:
36. «Խորհրդային Ղարաբաղ», N151, 07.07.1938:
37. Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах (Այսուհետև՝ «Достижения СНК...»), Степанакерт, 1963, с. 20.
38. ԱԲԿԳԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 839, ք. 16:
39. «Կոմունիստ», N190, 17.08.1927:
40. «Սովետական Ղարաբաղ», N144, 29.06.1933:
41. ԼՂՀ ՊԱ, ֆ. 33, ց. 1, գ. 210, ք. 4:
42. Шагинян М., նշվ. աշխ., էջ 21:
43. ԼՂՀ ՊԱ, ֆ. 18, ց. 1, գ. 139, ք. 14-17:
44. Նույն տեղում, ֆ. 33, ց. 1, գ. 43, ք. 39:
45. Նույն տեղում, 78:
46. «Կոմունիստ», N249, 20. 10. 1939:
47. Достижения СНК..., с. 19-20.
48. Նույն տեղում, էջ 22:
49. ԼՂՀ ՊԱ, ֆ. 82, ց. 1, գ. 21, ք. 19:

4. Մարզի գյուղատնտեսությունը վերափոխման ճանապարհին

1. Լենին Վ. Ի. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 37, Երևան, էջ 441 և 442:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում, հ. 43, էջ 72:
4. Կարլ Մ., Էնգելս Ֆ., Ընտիր երկեր, երկու հատորով, հ. 2, Երևան, 1950, էջ 559-560:
5. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 42, էջ 197:
6. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 3, գ. 26, ք. 69:
7. Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 135, ք. 26:
8. Նույն տեղում, ֆ. 2, ց. 1, գ. 199, ք. 3, ֆ. 3, ց. 3, գ. 26, ք. 72:
9. «Խորհրդային Ղարաբաղ», N39, 27.09.1926:
10. Նույն տեղում, N15, 18.04.1927:
11. Հովհաննիսյան Գր., Հետամնաց ագրարային գավառից՝ առաջավոր սոցիալական մարզ, Բաքու, 1963, էջ 16:
12. «Խորհրդային Ղարաբաղ», N19, 10.05.1930:
13. Նույն տեղում, N27, 03.07.1926:

14. ԱԲԿԳԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 297, ք. 55-59:
15. Նույն տեղում, գ. 489, ք. 22:
16. «Заря Востока», N1370, 04.01.1927:
17. Արհամանյան Հրանտ, Սոցիալիստական վերափոխումների ճանապարհին, «Սովետական Ղարաբաղ», N210, 07.09.1967:
18. ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 179, ք. 169:
19. ԱԲԿԳԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 486, ք. 70:
20. ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 284, ք. 3-19:
21. «Խորհրդային Ղարաբաղ», N19, 10.05.1930:
22. Հովհաննիսյան Գր., նշվ. աշխ., էջ 23:
23. «Խորհրդային Ղարաբաղ», N41, 1929:
24. Նույն տեղում, N49, 12.10.1929:
25. ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 179, ք. 169:
26. «Խորհրդային Ղարաբաղ», N8, 1930:
27. Նույն տեղում, N1, 04.01.1930:
28. Նույն տեղում, N49, 1929:
29. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 37, էջ 443:
30. Հովհաննիսյան Գր., նշվ. աշխ., էջ 27:
31. «Խորհրդային Ղարաբաղ», N6, 22.02.1930:
32. Նույն տեղում, N8, 26.02.1930:
33. «Կոմունիստ», N26, 01.02.1930, N31, 7.02.1930:
34. «Խորհրդային Ղարաբաղ», N7, 15.02.1930:
35. ԱԲԿԳԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 639, ք. 2:
36. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 38, էջ 252:
37. Նույն տեղում, էջ 260:
38. Հովհաննիսյան Գր., նշվ. աշխ., էջ 19:
39. «Խորհրդային Ղարաբաղ», N2, 11.01.1930:
40. Նույն տեղում, N12, 12.03.1930:
41. ԼՂՀ ՊԱ, ֆ. 18, ց. 1, գ. 130, ք. 48:
42. «Заря Востока», N 2548, 1930
43. «Խորհրդային Ղարաբաղ», N31, 09.08.1930:
44. 1930 թ. մայիսի 23-ին տեղի ունեցած կուսակցության մարզային կազմակերպության 7-րդ կոնֆերանսը մարզային կոմիտեի առաջին քարտուղար ընտրեց Խ. Վարունցին:
45. «Խորհրդային Ղարաբաղ», N30, 06.08.1930:
46. Նույն տեղում, N20, 17.05.1930, N24, 20.05.1930:
47. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 151ա, ք. 21-22:
48. ԱԲԿԳԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 42, ք. 24-30:
49. «Խորհրդային Ղարաբաղ», N26, 02.09.1930:
50. Նույն տեղում, N45 և N1, 1931:
51. Նույն տեղում, N2, 06.01.1931:

52. ԱՅՊԱ, ֆ. 370, ց. 3, գ. 118, ք. 33:
53. «Խորհրդային Ղարաբաղ», N2, 06.01.1931:
54. Նույն տեղում, N49, 1931:
55. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 709, ք. 38:
56. «Խորհրդային Ղարաբաղ», N22, 25.03.1931:
57. Նույն տեղում, N59, 1931:
58. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 709, ք. 229–231: Տե՛ս նաև «Խորհրդային Ղարաբաղ», N80, 07.09.1931:
59. ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 179, ք. 169, գ. 176, ք. 163:
60. Նույն տեղում, ֆ. 3, ց. 3, գ. 70, ք. 9:
61. Достижения СНК..., с. 44.
62. ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 159, ք. 72:
63. «Կոմունիստ», N186, 1932:
64. «Խորհրդային Ղարաբաղ», N100, 1932:
65. ԼՂՀ ՊԱ, ֆ. 25, ց. 1, գ. 2, ք. 66–68:
66. «Խորհրդային Ղարաբաղ», N100, 1932:
67. ԼՂՀ ՊԱ, ֆ. 25, ց. 1, գ. 2, ք. 66–68:
68. ԱՅՊԱ, ֆ. 219, ց. 3, գ. 317, ք. 3:
69. Դանիելյան Արզար, Գարազատ օջախ, Երևան, 1993:
70. ԼՂՀ ՊԱ, ֆ. 11, ց. 1, գ. 96, ք. 31:
71. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 576, ք. 1:
72. «Սովետական Ղարաբաղ», N223, 22.09.1967:
73. ԱՅՊԱ, ֆ. 271, ց. 2, գ. 334, ք. 53:
74. ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 437, ք. 38:
75. ԱՅՊԱ, ֆ. 2499, ց. 1, գ. 28, ք. 8:
76. ԼՂՀ ՊԱ, ֆ. 33, ց. 1, գ. 43, ք. 48–52:
77. «Խորհրդային Ղարաբաղ», N3, 04.01.1934:
78. ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 559, ք. 44:
79. Նույն տեղում, ք. 43, 46 և 125:
80. «Կոմունիստ», N295, 24.12.1933:
81. «Խորհրդային Ղարաբաղ», N 9, 10.01.1934:
82. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 797, ք. 5–6:
83. Նույն տեղում, գ. 799, ք. 68:
84. «Խորհրդային Ղարաբաղ», N9, 10.01.1934:
85. «Կոմունիստ», N219, 18.09.1934:
86. «Խորհրդային Ղարաբաղ», N265, 14.09.1934:
87. Նույն տեղում, N9, 10.01.1934:
88. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 803, ք. 105–107:
89. «Կոմունիստ», N299, 26.12.1934:
90. "Революция и национальности", N11, 1936, с. 54.
91. «Կոմունիստ», N63, 17.08.1935:

92. Достижения СНК..., с. 65.
93. "Революция и национальности", N11, 1936, с. 54.
94. ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 798, ք. 41:
95. Նույն տեղում, գ. 771, ք. 30:
96. "Революция и национальности", N11, 1936, с. 54.
97. «Կոմունիստ», N155, 08.07.1938:
98. ԼՂՀ ՊԱ, ֆ. 23, ց. 1, գ. 663, ք. 43–46:
99. Նույն տեղում, ք. 99:
100. Достижения СНК..., с. 46, 50 и 82.
101. Նույն տեղում, էջ 48 և 49:

5. Խորհուրդների և հասարակական կյանքի վերակառուցման մի քանի հարցեր

1. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 297, ք. 32–33:
2. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 199, ք. 7:
3. «Խորհրդային Ղարաբաղ», N39, 27.09.1926:
4. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 296, ք. 25–26:
5. ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 199, ք. 7:
6. ԱՅՊԱ, ֆ. 379, ց. 1, գ. 14, ք. 2:
7. «Խորհրդային Ղարաբաղ», N39, 27.09.1926:
8. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 3, գ. 52, ք. 75:
9. «Խորհրդային Ղարաբաղ», N10, 06.02.1931:
10. 1930 թ. շրջանների վերանայման ժամանակ Խորհուրդների առաջարկությամբ Շուշիի և Ստեփանակերտի քաղխորհուրդները միացվեցին այդ նույն շրջանների շրջխորհուրդների գործադիր կոմիտեներին: Շուշիի շրջանից Բյուսալար, Խոջալու և Կրկժան գյուղերը տրվեցին Ստեփանակերտի շրջանին, իսկ Քարինտակ, Գին և Նոր Ղարաղշլաղները (Բերդաձոր) Ստեփանակերտի շրջանից տրվեցին Շուշիի շրջանին:
11. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 0, գ. 642, ք. 24–26:
12. Նույն տեղում, գ. 647, ք. 13–14:
13. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 52, ք. 53:
14. Նույն տեղում, ք. 101:
15. Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 3, ք. 21–22:
16. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 657, ք. 10:
17. ԱՅՊԱ, ֆ. 379, ց. 40, գ. 486, ք. 43–48:
18. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 2, գ. 39, ք. 124, ք. 101, ք. 1:
19. «Կոմունիստ», N25, 01.02.1936:
20. ԼՂՀ ՊԱ, ֆ. 33, ց. 2, գ. 479, ք. 36:
21. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 642, ք. 63:
22. «Խորհրդային Ղարաբաղ», N7, 08.01.1934:

23. Նախապատերազմյան տարիներին հրավիրվել է կուսակցության մարզային կազմակերպության 11 կոնֆերանս 1924 թ. ապրիլ, 1925 թ. նոյեմբեր, 1927 թ. հունվար, 1927 թ. նոյեմբեր, 1928 թ. նոյեմբեր և 1929 թ. փետրվար, 1930 թ. մայիս, 1932 թ. հունվար, 1934 թ. հունվար, 1936 թ. մայիս. 1938 թ. մայիս և 1940 թ. մարտ:
24. «Սովետական Ղարաբաղ», N230, 01.10.1968:
25. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 297, ք. 63, գ. 699, ք. 31:
26. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 2, գ. 39, ք. 124:
27. Նույն տեղում, գ. 101, ք. 1:
28. Достижения СНК..., с. 120.
29. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 3, գ. 104, ք. 47:
30. Նույն տեղում:
31. «Կոմունիստ», N8, 09.01.1934:
32. «Խորհրդային Ղարաբաղ», N155, 12.07.1933:
33. ԼՂՀ ՊԱ, ֆ. 11, ց. 1, գ. 48, ք. 10:
34. Достижения СНК..., с. 118.
35. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 3, գ. 104, ք. 54:
36. Достижения СНК..., с. 163-164.
37. ԱԳՊԱ, ֆ. 420, ց. 1, գ. 15, ք. 2:
38. «Կոմունիստ», N207, 06.09.1927:
39. ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 135, ք. 34-36:
40. Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 21, ք. 55:
41. Նույն տեղում, ց. 3, գ. 70, ք. 10:
42. Достижения СНК..., с. 147-166.
43. «Կոմունիստ», N91, 06.08.1923: ԼՂՀ ՊԱ, ֆ. 18, ց. 1, գ. 7ա, ք. 2:
44. ԼՂՀ ՊԱ, ֆ. 18, ց. 1, գ. 85, ք. 86:
45. Նույն տեղում, ֆ. 224, ց. 1, գ. 2, ք. 1:
46. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 839, ք. 231:
47. «Մշակ», N55, 1883:
48. Նույն տեղում, N67, 1886:
49. Նույն տեղում:
50. Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 42, էջ 457:
51. «ՍՄԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս I, Երևան, 1955, էջ 850:
52. «Խորհրդային Ղարաբաղ», N12, 24.08.1924:
53. «Կոմունիստ», N69, 1925:
54. ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 135, ք. 17:
55. «Խորհրդային Ղարաբաղ», N5, 31.01.1926:
56. «Կոմունիստ», N54, 08.03.1927:
57. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 3, գ. 3, ք. 18:
58. «Կոմունիստ», N55, 08.03.1935:

59. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 1, գ. 150, ք. 14:
60. «Խորհրդային Ղարաբաղ», N151, 07.07.1938:
61. ԼՂՀ ՊԱ, ֆ. 18, ց. 1, գ. 7ա, ք. 8:
62. Шагинян М., նշվ. աշխ., էջ 5:

6. Այսպես կոչված «քրդական» հարցը

1. Մկրտչյան Շահեն, Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Երևան, 1996, էջ 5:
2. Նույն տեղում, էջ 7:
3. Абрамян Г. Б., К вопросу об армянстве Арцаха как о “пришельцах”, “Вестник общественных наук”, N1, 1993, с. 9-21.
4. Документы..., с. 150.
5. Նույն տեղում, էջ 151.
6. Նույն տեղում, էջ 157:
7. Նույն տեղում, էջ 159-160:
8. Նույն տեղում, էջ 165-166:
9. Նույն տեղում, էջ 173-175:
10. Նույն տեղում, էջ 191-192:
11. Նույն տեղում, էջ 206:
12. Այստեղ Կասուճույլը մոզել է հետևյալ պատմությունը. ալիյալունցիների առաջնորդ Քերբալայ Մամեդ Քերբալայ Սարիի ձերբակալությունից հետո իբր նրան ազատելու համար դարաբաղցիները պատրաստել էին խնդրագիր և այն Ադրբեջանի իշխանությանը ներկայացնելու համար խնդրել Մամեդ Քերբալայի որդիներ Հասանին և Հասան Ալիին գալ Պետրոսաշեն և ստանալ խնդրագիրը: Ըստ Կասուճուկի ներկայացրածի՝ նրանք գնում են և դավադրաբար սպանվում «մաքուր ազգային հողի վրա» (նույն տեղում, էջ 219-223), և իբր այդ դավադրությանը կողմնակի մասնակցել են տեղական իշխանությունների ներկայացուցիչները և ստացել Հադրութի տեղամասային կոմիտեի նախագահ Աբուհի և տեղամասային միլիցիայի պետ Իսահակի հովանավորությունը: Կասուճույլը նաև հաղորդում է, թե այդ սպանության մեղավորները մինչև հիմա չեն հայտնաբերվել, և իբր Լեռնային Ղարաբաղի իշխանությունների մեղքով մարդասպանները դիմել են փախուստի: Եվ այդ ամենը ուղքի է հանել ալիյալունցիներից: Որ այդ սպանությունն իրագործվել է Ադրբեջանի իշխանությունների կողմից, դա անկասկած է: Երբեք հնարավոր չէ և ճշմարտությունից միանգամայն հեռու է այն վարկածը, թե հայերը նրանց հրավիրել են հայկական գյուղ և այնտեղ նրանց սպանել: Կան տվյալներ, որ երկու եղբայրները սպանվել են Պետրոսաշեն գալու ճանապարհին, և նրանց դիակները բերել ու գցել են գյուղի մատույցներում: Այդ մասին դեռևս 1970-ական թթ. ինժ պատմել են հարյուրեցիներն ու խժաբերոցիները:
13. ԱԲԿԴ ՊԱ, ֆ. 1, ց. 74, գ. 135, ք. 129:

7. Արցախի թեմը իր վերջին տարիներին

1. Այս հարցի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Հրանտ Աբրահամյան, Արցախի թեմն իր գոյության վերջին տարիներին (1920–1933 թթ.), «Էջմիածին», թիվ 2, 2003, էջ 87–96:
2. ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492, թ. 137:
3. Նույն տեղում, ց. 1, գ. 2723, թ. 2:
4. Նույն տեղում, թ. 34:
5. Նույն տեղում, թ. 8:
6. Նույն տեղում, թ. 9:
7. Նույն տեղում, գ. 2722, թ. 11:
8. Նույն տեղում, թ. 1:
9. Նույն տեղում, թ. 3–5:
10. Նույն տեղում, թ. 6:
11. Նույն տեղում, ֆ. 409, ց. 1, գ. 616, թ. 1:
12. Նույն տեղում, գ. 2722, թ. 13:
13. Նույն տեղում, թ. 32:
14. Նույն տեղում, գ. 2727, թ. 12:
15. Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Թ, Երևան, 2001, էջ 860–861:
16. ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2728, թ. 1:
17. Նույն տեղում, գ. 2723, թ. 3:
18. Նույն տեղում, գ. 2731, թ. 2:
19. Նույն տեղում, գ. 2736, թ. 1:
20. Նույն տեղում, 2740, թ. 1:

8. 1920–1930–ական թթ. Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած բռնարարքները

1. Հակոբջանյան Արտաշես, Արցախյան ազատամարտի ակունքների մոտ, Երևան, 2001, էջ 33:
2. Նույն տեղում, էջ 33–34:
3. Աբրահամյան Հր., Արցախը 1937–ին, «Քաղաքական գրուցակից», N23–24, 1990, էջ 38–41:
4. Նույն տեղում, էջ 39: Նաև ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 909, թ. 42:
5. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 44, թ. 45:
6. Նույն տեղում, թ. 51:
7. «Խորհրդային Ղարաբաղ», N151, 08.07.1938:

8. Նույն տեղում, 09.01.1937:
9. «Կոմունիստ», N234, 11.10.1937:
10. Մկրտչյան Լ., Արցախ–Ղարաբաղը իր անցելով և ներկայով, Աթենք, 1988, էջ 47:
11. Նույն տեղում, էջ 51:
12. Այդ գործերը մեզ է հանձնել Արցախի պետական համալսարանի ռեկտորի տեղակալ Ս. Դադամյանը: Մեր կողմից դրանք ԼՂԴ պետական արխիվ են հանձնվել 2005 թ. հունիսին:

9. Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքը 1920–1930–ական թթ.

1. «ՍՄԿ–ն բանաձևերում և որոշումներում», մաս 1, էջ 711:
2. ԱՅՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 157, թ. 14:
3. ԼՂԴ ՊԱ, ֆ. 484, ց. 1, գ. 10, թ. 1:
4. Նույն տեղում, ֆ. 18, ց. 1, գ. 139, թ. 91:
5. Նույն տեղում:
6. «Խորհրդային Ղարաբաղ», N218, 1967:
7. ԼՂԴ ՊԱ, ֆ. 10, ց. 1, գ. 5, թ. 9:
8. Նույն տեղում, գ. 10, թ. 6:
9. Նույն տեղում, գ. 191, թ. 13:
10. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 1, թ. 11:
11. Նույն տեղում, գ. 2, թ. 31–32:
12. «Խորհրդային Ղարաբաղ», N11, 17.08.1924:
13. ԱՅՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 452, թ. 45:
14. ԼՂԴ ՊԱ, ֆ. 10, ց. 1, գ. 37, թ. 2–3:
15. Նույն տեղում, գ. 160, թ. 14:
16. «Խորհրդային Ղարաբաղ», N1, 03.01.1926:
17. ԼՂԴ ՊԱ, ֆ. 10, ց. 1, գ. 159, թ. 8:
18. «Խորհրդային Ղարաբաղ», N14, 14.09.1924:
19. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 256, թ. 104:
20. ԼՂԴ ՊԱ, ֆ. 30, ց. 1, գ. 688, թ. 13:
21. Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 36, թ. 138:
22. Նույն տեղում, ֆ. 18, ց. 1, գ. 139, թ. 93, ֆ. 3, ց. 2, գ. 68, թ. 23:
23. Նույն տեղում, ֆ. 18, ց. 1, գ. 139, թ. 95:
24. Նույն տեղում, թ. 99:
25. Նույն տեղում, ֆ. 3, ց. 3, գ. 26, թ. 21:
26. ԱԲԿԿ ՊԱ, ֆ. 89, ց. 1, գ. 699, թ. 5:
27. Նույն տեղում, թ. 3:
28. Նույն տեղում, թ. 6:

29. Նույն տեղում, գ. 836, ք. 116:
30. Նույն տեղում, գ. 38, ք. 97:
31. Достижения СНК..., с. 142.
32. ԼՂՀ ՊԱ, ֆ. 3, ց. 3, գ. 26, ք. 24:
33. Достижения СНК..., с. 139.
34. Մարգարյան Ա. Ծ.. Հեղափոխական կրակների միջով (հուշեր), Երևան, 1967, էջ 55–56:
35. Достижения СНК..., с. 140.
36. Նույն տեղում, էջ 139:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐՅԱՆ-ՊԱՐԱԲԱՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵՑ ՊԱՏԵՐԱՇՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», N1, 1985, էջ 112: Նաև Բեգլարյան Հրաչյա, Արցախ–Նամե. իմ լեռնաշխարհի մարդիկ, Երևան, 2001, էջ 52:
2. Աբրահամյան Հրանտ, Մկրտչյան Շահեն, Արցախի համար զոհված դի-զակցիները, Երևան, 2000, էջ 15:
3. Այդ թիվը հրապարակվում է առաջին անգամ: Դրանցից 14–ը ծնվել են Լեռնային Ղարաբաղում, 9–ի ծնողները Լեռնային Ղարաբաղից էին, 8–ը Հյուսիսային Արցախից:
4. Арутюнян К. А., Участия армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945 гг.) (այսուհետև Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի...), Երևան, 2004, с. 748-818, 830-842.
5. «Սովետական Ղարաբաղ», N145, 25.06.1941:
6. Նույն տեղում, N 146, 26.06.1941:
7. Նույն տեղում, նաև Շահրամանյան Հ., Կոմունիստները առաջին շարքե-րում էին, «Սովետական Ղարաբաղ», 09.05.1965:
8. «Սովետական Ղարաբաղ», N146, 26.06.1941:
9. Նույն տեղում, N148, 28.06.1941:
10. Նույն տեղում, N146, 26.06.1941:
11. Նույն տեղում, 09.05.1965:
12. Նույն տեղում, N148, 28.06.1941:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում, N149, 29.06.1941:
15. Նույն տեղում, N148, 28.06.1941:

16. Գրիգորյան Հ. Թ., Արցախահայության մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, Մեղմագիր, Երևան, 2004, էջ 4:
17. Вирабян А., Знаменитые арцахцы, Ереван, 1992, с. 57-60 (այսուհետև Վիրաբյան Ա.):
18. Նույն տեղում, էջ 119–120:
19. Նույն տեղում, էջ 111–114:
20. Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի..., էջ 20–21, 481–482:
21. Հարությունյան Կ. Ա., Մարշալ Բաղրամյան, Երևան, 1997:
22. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 77–79:
23. Ծովակալ Իսակովի մասին ավելի հանգամանորեն տես Ա. Ե. Մարգարյան, Ծովակալ, Գիտնական, Գրող, Մարդ (ականավոր խորհրդային ծովապետ և մեծ գիտնական Հովհաննես Իսակովի ծննդյան 110–ամյակի առթիվ), «ԳԲ», 2004, N3–4: Ծովակալը շատ էր երազում երեկից լինել հայրենի երկրամասում: Նա 1953 թ. նոյեմբերի 2–ին իր օրագրում գրել է. «... Երազում եմ նաև ծննդավայրս, Լեռնային Ղարաբաղ, իմ նախնիների եզոր պապիս ու հորս հինավուրց երկրամասը զնախ: Առաջիկայում նոր բերկրալի ցնցումներ են սպասվում իմ նախնիների հողում...» (Ա. Արզումանյան, Ծովակալը, Երևան, 1973, էջ 371):
24. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 63–65:
25. Նույն տեղում, էջ 20–21:
26. Նույն տեղում, էջ 30:
27. Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի..., էջ 84:
28. Նույն տեղում, էջ 90:
29. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 93–95:
30. Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի..., էջ 93–94:
31. Նույն տեղում, էջ 97:
32. Նույն տեղում, էջ 111:
33. Նույն տեղում, էջ 144–145:
34. Նույն տեղում, էջ 171–172:
35. Նույն տեղում, էջ 173:
36. Նույն տեղում, էջ 174:
37. Նույն տեղում, էջ 198:
38. Նույն տեղում, էջ 211:
39. Նույն տեղում, էջ 233:
40. Նույն տեղում, էջ 256–257:
41. Նույն տեղում, էջ 259:
42. Նույն տեղում, էջ 277: «Սովետական Ղարաբաղ», N30, 13.03.1945, N 106, 07.05.1965:
43. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 136:
44. Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի..., էջ 343:
45. Նույն տեղում, էջ 358:

46. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 116–118:
47. Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի..., էջ 439:
48. Նույն տեղում, էջ 588:
49. Նույն տեղում, էջ 585:
50. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 103–104:
51. Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի..., էջ 642:
52. Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 84–87:
53. Բեգլարյան Հրաչյա, նշվ. աշխ., էջ 53:
54. Ինչպես նշվել է, արցախյան պատերազմի ժամանակ թուրք–ագերիների ոմբակոծության հետևանքով վառվել է ԼՂՀ պետական արխիվը: Միայն մի փոքր մասն է փրկվել ոչնչացումից: Դրանց մեջ եղած անհրաժեշտ նյութերն օգտագործվել են մեր կողմից:
55. «Կոմունիստ», 02.06.1944:
56. «Սովետական Ղարաբաղ», N145, 25.06.1941:
57. Նույն տեղում:
58. Նույն տեղում, N146, 26.06.1941:
59. Նույն տեղում, N166, 19.07.1941:
60. Նույն տեղում, N148, 28.06.1941:
61. Նույն տեղում, N149, 26.06.1941:
62. Նույն տեղում, N165, 18.07.1941:
63. Նույն տեղում, N166, 19.07.1941:
64. Նույն տեղում, N168, 22.07.1941:
65. Նույն տեղում, N169, 23.07.1941:
66. Նույն տեղում, N170, 24.07.1991:
67. Նույն տեղում, N181, 06.08.1941:
68. Նույն տեղում, N182, 07.08.1941:
69. Նույն տեղում, N 87, 13.08.1941:
70. Նույն տեղում, N178, 24.12.1942:
71. Նույն տեղում:
72. Նույն տեղում, N180, 29.12.1942:
73. Նույն տեղում, N53, 08.05.1944:
74. Նույն տեղում, N54, 10.05.1944:
75. Նույն տեղում, N110, 25.09.1944:
76. Նույն տեղում, N24, 13.03.1943:
77. Նույն տեղում, 24.10.1958:
78. Նույն տեղում, N29, 25.03.1943:
79. Նույն տեղում, N15, 06.02.1945:
80. Պատերազմի տարիներին այդ երկու մարմինների նիստերը տեղի էին ունենում համատեղ:
81. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 163, ք. 15:
82. «Բանբեր Հայաստանի արխիվների», N1, 1985, էջ 126:

83. «Սովետական Ղարաբաղ», N144, 22.06.1967:
84. Բեգլարյան Հրաչյա, նշվ. աշխ., էջ 53:
85. Նույն տեղում, էջ 69–70:
86. Լեռնային Ղարաբաղի 1068 ընտանիքներից պատերազմին մասնակցել են 4–11–ական բանակայիններ («Բանբեր Հայաստանի արխիվների», N1, 1985, էջ 124–125):
87. ԼՂՀ պատմաերկրագիտական թանգարան, զույք 274: 1986 թ. մարշալ ժուկովի դուստր Մարգարիտան ժամանել է Ղարաբաղ և մի ամբողջ շաբաթ հյուրընկալվել: Արցախյան գոյամարտի բոլոր տարիներին մարշալի դուստրը ռուս զորավարներին կոչ էր անում սենակ ու ամզեն չթողնել Ղարաբաղի հերոս ժողովրդին (Բեգլարյան Հրաչյա, նշվ. աշխ., էջ 52):
88. «Սովետական Ղարաբաղ», N22, 08.03.1943:
89. Նույն տեղում, 22.05.1967:
90. Նույն տեղում, 24.10.1958:
91. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 146, ք. 14–15:
92. Նույն տեղում, գ. 147, ք. 4:
93. Նույն տեղում, գ. 148, ք. 14:
94. Նույն տեղում, գ. 150, ք. 17, ք. 24–25:
95. Նույն տեղում, գ. 151, ք. 7:
96. Նույն տեղում, ք. 17:
97. Նույն տեղում, գ. 153, ք. 4–5:
98. Նույն տեղում, գ. 155, ք. 4:
99. Նույն տեղում, գ. 163, ք. 4:
100. Նույն տեղում, ք. 5–7:
101. «Սովետական Ղարաբաղ», 08.05.1965: Շահրամանյան Փ. Ա., Լեռնային Ղարաբաղի կոմերիտական կազմակերպությունը Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945 թթ.), Ստեփանակերտ, 1958: «Բանբեր Հայաստանի արխիվների», N1, 1985: Գրիգորյան Հ. Թ., Արցախահայության մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, Սեղմագիր, Երևան, 2004: Шахназарян Г. Л., Нагорно-Карабахская областная организация коммунистической партии Азербайджана в годы Великой Отечественной войны Советского Союза (1941-1945 гг.), Автореферат, Баку, 1964.

**ԼԵՆԻՆՅԻՆ ՂԱՐԱՔԱԿԸ ՇԵՏԳՍԵՐԱՇԱՅԱԼ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1946-1985 թթ.)**

**1. Արդյունաբերության հետագա զարգացման
ուղղությամբ ձեռնարկված քայլերը**

1. «Կոմունիստ», N101, 21.05.1946:
2. «Սովետական Ղարաբաղ», N82, 10.07.1945:
3. Նույն տեղում, N84, 13.07.1946:
4. «Կոմունիստ», N19, 26.01.1947:
5. «Սովետական Ղարաբաղ», N19, 26.01.1947:
6. «Կոմունիստ», N26, 05.02.1947:
7. «Սովետական Ղարաբաղ», N128, 07.11.1948:
8. Նույն տեղում, N112, 16.09.1950:
9. Նույն տեղում, N1, 01.01.1949, N4, 08.01.1949:
10. Նույն տեղում, N8, 20.01.1949:
11. Նույն տեղում, N1, 01.01.1951:
12. Նույն տեղում, N57, 15.05.1951:
13. «Կոմունիստ», N9, 13.01.1950:
14. «Սովետական Ղարաբաղ», N62, 26.05.1951:
15. Նույն տեղում, N12, 26.01.1952:
16. Նույն տեղում, N15, 05.02.1952:
17. Նույն տեղում, N29, 5.03.1955:
18. Նույն տեղում, N186, 24.10.1956:
19. «Կոմունիստ», N27, 01.02.1986:
20. «Սովետական Ղարաբաղ», N24, 02.02.1958:
21. Նույն տեղում, N221, 07.11.1957:
22. Նույն տեղում, N47, 07.03.1958:
23. Նույն տեղում, N245, 13.12.1958:
24. Նույն տեղում, N44, 03.03.1959:
25. Նույն տեղում, N98, 28.04.1960:
26. Շահնազարով Ն. Ա., Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզ, Բաթում, 1960, էջ 34:
27. Շարադրանքում օգտագործված մի շարք թվական տվյալներ քաղված են վերոնշյալ Ն. Շահնազարովի գրքից:

28. «Կոմունիստ», N5, 07.01.1961: Նաև Սերգեյ Խաչատրյան, Վաստակած պատիվ, Ստեփանակերտ, 2002:
29. «Սովետական Ղարաբաղ», N55, 06.03.1962:
30. Նույն տեղում, N23, 27.01.1962:
31. Նույն տեղում, N100, 28.04.1962:
32. Նույն տեղում, N162, 11.07.1962:
33. Նույն տեղում, N170, 20.07.1962:
34. Նույն տեղում, N26, 31.01.1963:
35. Նույն տեղում, N25, 30.01.1964:
36. Նույն տեղում, N15, 19.01.1966:
37. «Կոմունիստ», N103, 01.03.1967:
38. «Սովետական Ղարաբաղ», N200, 26.08.1967:
39. Նույն տեղում, N21, 25.01.1973:
40. Նույն տեղում, N157, 07.07.1973:
41. Делегату XXVI конференции Нагорно-Карабахской областной организации, Степанакерт, 1974, с. 11.
42. Достижения Нагорного Карабаха в девятой пятилетке, Степанакерт, 1976, с. 22:
43. «Սովետական Ղարաբաղ», N34, 11.02.1976:
44. Նույն տեղում, N176, 11.02.1976:
45. Նույն տեղում, N4, 05.01.1978:
46. Նույն տեղում, N40, 17.02.1978:
47. Սկրտչյան Շահեն, Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Երևան, 1996, էջ 41:
48. «Սովետական Ղարաբաղ», N13, 16.01.1979:
49. Նույն տեղում, N101, 25.04.1981:
50. Նույն տեղում, N102, 24.04.1981:
51. Նույն տեղում, N165, 11.07.1981:
52. Նույն տեղում, N14, 17.01.1984:
53. Նույն տեղում, N4, 05.01.1986:

2. Տեղաշարժեր մարզի գյուղատնտեսության մեջ

1. «Սովետական Ղարաբաղ», N71, 13.06.1946:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, N80, 04.07.1946:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, N1, 01.01.1947:
7. Նույն տեղում, N91, 31.07.1947:
8. Նույն տեղում, N138, 16.07.1942:

9. Նույն տեղում, N19, 27.06.1948:
10. Նույն տեղում, N51, 01.05.1954:
11. Նույն տեղում, N50, 11.03.1959:
12. «Կոմունիստ», N21, 29.01.1950:
13. «Սովետական Ղարաբաղ», N41, 04.04.1950:
14. Նույն տեղում, N48, 20.04.1950:
15. Նույն տեղում, N101, 22.08.1950:
16. Նույն տեղում, N17, 10.02.1950:
17. Նույն տեղում, N48, 19.01.1952:
18. Նույն տեղում, N118, 30.09.1952:
19. «Կոմունիստ», N228, 16.10.1952:
20. Հարությունյան Համլետ, Ռզու լուսեղեն գաղտնիքը, Երևան, 2003, էջ 67:
21. Նույն տեղում, էջ 17–43:
22. «Սովետական Ղարաբաղ», N46, 20.04.1954:
23. Նույն տեղում, N49, 28.04.1954:
24. Նույն տեղում, N63, 29.05.1954:
25. Նույն տեղում, N80, 08.07.1954:
26. Նույն տեղում, N20, 12.02.1955:
27. Նույն տեղում, N64, 06.05.1956:
28. «Կոմունիստ», N116, 18.05.1956:
29. Նույն տեղում, N214, 15.09.1956:
30. «Սովետական Ղարաբաղ», N143, 21.07.1957:
31. «Կոմունիստ», N94, 11.05.1960:
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում, N69, 08.04.1959:
34. Նույն տեղում, N71, 10.04.1959:
35. «Սովետական Ղարաբաղ», N154, 01.07.1962:
36. Նույն տեղում, N25, 30.01.1963:
37. «Կոմունիստ», N64, 18.03.1965:
38. «Սովետական Ղարաբաղ», N15, 19.01.1966:
39. Նույն տեղում, N192, 16.08.1966:
40. Նույն տեղում, N109, 11.05.1969:
41. Նույն տեղում, N149, 28.06.1975:
42. Նույն տեղում, N300, 26.12.1975:
43. Достижения Нагорного Карабаха в девятой пятилетке, Степанакерт, 1976, с. 32.
44. Նույն տեղում, էջ 35:
45. «Սովետական Ղարաբաղ», N45, 24.02.1976:
46. Նույն տեղում, N100, 29.04.1976:
47. Նույն տեղում, N303, 29.12.1976:
48. Նույն տեղում, N107, 7.05.1977:

49. Նույն տեղում, N5, 06.01.1980:
50. Նույն տեղում, N246, 17.10.1981:
51. «Կոմունիստ», 1983, N130: «Սովետական Ղարաբաղ», N133, 10.06.1983:
52. «Սովետական Ղարաբաղ», N198, 27.08.1983:
53. Նույն տեղում, N32, 7.02.1986:

3. Լեռնային Ղարաբաղի հասարակական–քաղաքական կյանքը հետպատերազմյան տարիներին

1. «Սովետական Ղարաբաղ», N80, 04.07.1946, N82, 09.07.1946:
2. Նույն տեղում, N5, 14.01.1949:
3. Նույն տեղում, N7, 15.01.1952:
4. Նույն տեղում, N40, 01.04.1952:
5. Նույն տեղում, N147, 10.12.1955:
6. «Կոմունիստ», N5, 07.01.1959:
7. Նույն տեղում, N20, 28.01.1960:
8. «Սովետական Ղարաբաղ», N100, 28.08.1967:
9. Նույն տեղում, N10, 13.01.1968:
10. Նույն տեղում, N157, 07.07.1968:
11. Նույն տեղում, N278, 28.11.1968:
12. Նույն տեղում, N198, 25.05.1970:
13. Նույն տեղում, N37, 13.02.1974:
14. Նույն տեղում, N14, 17.01.1979:
15. Նույն տեղում, N104, 30.08.1945:
16. Նույն տեղում, N95, 08.08.1946:
17. «Կոմունիստ», N178, 10.09.1947:
18. Նույն տեղում, N223, 14.11.1947:
19. «Սովետական Ղարաբաղ», N44, 11.04.1950:
20. Նույն տեղում, N57, 11.05.1950:
21. Նույն տեղում, N62, 27.05.1954:
22. Նույն տեղում, N30, 08.03.1955:
23. Նույն տեղում, N72, 12.04.1957:
24. Նույն տեղում, N130, 03.07.1957:
25. Նույն տեղում, N99, 20.05.1959:
26. «Կոմունիստ», N22, 27.01.1962:
27. «Սովետական Ղարաբաղ», N34, 09.02.1963:
28. Նույն տեղում, N68, 21.03.1963:
29. «Կոմունիստ», N174, 29.07.1964:
30. Նույն տեղում, N267, 12.11.1965:
31. «Սովետական Ղարաբաղ», N161, 11.07.1967:

32. Նույն տեղում, N246, 19.10.1967:
33. Նույն տեղում, N262, 07.11.1967:
34. Նույն տեղում, N124, 30.05.1968:
35. Նույն տեղում, N258, 02.11.1972:
36. Նույն տեղում, N292, 15.12.1974:
37. Նույն տեղում, N135, 09.08.1975:
38. Նույն տեղում, N100, 29.04.1976:
39. Նույն տեղում, N139, 05.06.1979:
40. Նույն տեղում, N177, 12.10.1956:
41. Նույն տեղում, N28, 03.02.1982:
42. Նույն տեղում, N58, 08.03.1985:
43. «Լեռնային Ղարաբաղը թվերով», Ստեփանակերտ, 2004, էջ 18 և 67:

**4. Ադրբեջանի իշխանությունների քաղաքական
անբարոյականությունը արցախահայության նկատմամբ**

1. ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 15, ք. 168:
2. Նույն տեղում, ց. 2, գ. 147, ք. 4–5:
3. Նույն տեղում, գ. 157, ք. 15:
4. Նույն տեղում, գ. 158, ք. 67:
5. Նույն տեղում, ք. 92:
6. Նույն տեղում, գ. 168, ք. 9–10:
7. Գրիգորյան Համլետ, Հարությունյան Գրիշա, Արցախի դալորոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005, էջ 446:
8. Սելիք–Շահնազարյան Լևոն, Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 14:
9. Սկրտչյան Շահեն, Արցախյան գրառումներ, Երևան, 2001, էջ 28:
10. Նույն տեղում, էջ 28–29:
11. ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 44, ք. 23–24:
12. Ուլուբաբյան Բագրատ, Արցախի պատմությունը, Երևան, 1994, էջ 255:
13. Ջանյան Բոգդան, Կյանքը հրացանի փողի տակ, Երևան, 2001:
14. ՀԱԱ, ֆ. 1, ց. 25, գ. 42, ք. 1:
15. Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, էջ 184–185:
16. Նույն տեղում, էջ 185:
17. Սկրտչյան Շահեն, Արցախյան գրառումներ, էջ 29:
18. Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքարը, էջ 199:
19. Նույն տեղում, էջ 199–200:
20. Նույն տեղում, էջ 201:
21. Նույն տեղում, էջ 272:

22. «Հայոց ցեղասպանության 50–ամյակը և Խորհրդային Հայաստանը», Երևան, 2005, էջ 6:
23. Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքարը, էջ 207–215: Նամակի վերջին արտահայտությունը, որտեղ հույս է հայտնվում, թե մարզը կվերամիավորվի Հայկական ԽՍՀ–ին, Մոսկվա տարված տեքստում չկար: Այն հետագայում՝ վերամշակելու ժամանակ է լրացվել Բագրատ Ուլուբաբյանի կողմից:
24. “Перестройка и национальные отношения”, Ереван, 1989, с. 40.
25. ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65 ք, ք. 1–2, կամ Քոչինյան Անտոն, Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, Երևան, 2003, էջ 33–34:
26. «Հայոց ցեղասպանության 50–ամյակը և Խորհրդային Հայաստանը», Երևան, 2005, էջ 188–189:
27. ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65 ա, ք. 1–9, նաև Քոչինյան Անտոն, Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, էջ 162–168:
28. ԼՂՀ ՊԱ, ֆ. 250, ց. 3, գ. 92, ք. 62:
29. Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքարը, էջ 281:
30. Այդ օրերին գործի բերումով գտնվելով Ստեփանակերտում՝ ներկա են եղել դատավարության մի քանի նիստերի, ներկա գտնվել դատավճռի ընթերցմանը և ականատես եղել դրան հաջորդած գործողություններին:
31. Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքարը, էջ 282:
32. Леонид Гурунц, Наедине с собой или как докричатся до вас, потомки! Дневниковые записки, 1975–1982, Ереван, 2002, с. 17.
33. «Սովետական Ղարաբաղ», N69, 23.03.1975:
34. Նույն տեղում:
35. ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 240, ք. 46:
36. «Սովետական Ղարաբաղ», 1975, մարտ–ապրիլ ամիսներ:
37. ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 240, ք. 60–119:
38. Նույն տեղում, ք. 46:
39. Նույն տեղում, ք. 48–52:
40. Նույն տեղում, ք. 58:
41. Նույն տեղում:
42. Նույն տեղում, ք. 154–155:
43. ԽՍՀՄ միևնույնի խորհրդի նախագահության 1977 թ. նոյեմբերի 22–ի նիստի արձանագրություն, N61.11–4133:
44. “Проблемы мира и социализма”, N 6, 1977, с. 12, 15.
45. Աբրահամյան Հրանտ, Մկրտչյան Շահեն, Արցախի համար զոհված դիպակցիները, էջ 18–20:
46. *Հակոբյան Հ.*, գնդապետ, պատմագիտության դոկտոր, *Գրիգորյան Տ.*, մարզկոմի նախկին առաջին քարտուղար, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Վարդանյան Ա.*, գեներալ–լեյտենանտ, *Արշարունի Ա.*, արվեստի վաստակավոր գործիչ, *Բուրջալով Է.*,

պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, *Եպիսկոսով Գ.*, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Արուսյունով Գ.*, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, *Շատուպովսկայա Օ.*, միութենական բոշակառու, *Մխիթարյան Ա.*, միութենական բոշակառու, *Սամվելովա Մ.*, տնտեսական գիտությունների թեկնածու, *Սարգսյան Ա.*, պատմական գիտությունների թեկնածու:

47. ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 373, ք. 1-11:

48. Սարունյան Նուեն, Քաղաքական և մշակութային իրավիճակը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 1960-80-ական թթ., Ստեփանակերտ, 2001:

5. Արցախի մշակութային կյանքը 1941-1985 թթ.

1. Գրիգորյան Համլետ, Հարությունյան Գրիշա, նշվ. աշխ., էջ 360:
2. Նույն տեղում, էջ 361:
3. Народное образование в СССР. Сборник документов в 1917-1973 гг., Москва, 1974, с. 117.
4. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 15, ք. 89:
5. Գրիգորյան Համլետ, Հարությունյան Գրիշա, նշվ. աշխ., էջ 363:
6. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 18, ք. 18-19:
7. «Սովետական Ղարաբաղ», N209, 22.10.1957:
8. Գրիգորյան Համլետ, Հարությունյան Գրիշա, նշվ. աշխ., էջ 373:
9. Նույն տեղում, էջ 378:
10. «Սովետական Ղարաբաղ», N36, 13.02.1970:
11. «Достижения Нагорного Карабаха в девятой пятилетке», Степанакерт, 1976, с. 131.
12. «Կոմունիստ», N25, 06.02.1951:
13. Ղանիելյան Արզար, Հարազատ օջախ, Երևան, 1993, էջ 37:
14. «Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году», Баку, 1985, с. 251.
15. «Սովետական Լեռնային Ղարաբաղ», Բաքու, 1983, էջ 144-145:
16. Նույն տեղում, էջ 142-143:
17. Նույն տեղում, էջ 138:
18. «Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году», Баку, 1985, с. 251.
19. «Սովետական Լեռնային Ղարաբաղ», էջ 146: «Արցախի ակադեմիկոսներ», Ստեփանակերտ, 2005:
20. «Սովետական Ղարաբաղ», N165, 11.07.1981:
21. Նույն տեղում, N173, 27.07.1985:

1. «Народное хозяйство Азербайджанский ССР. Юбилейный статистический ежегодник к 70-летию Великого Октября», Баку, 1987, с. 3, 11, 270, 279.
2. «Կոմունիստ», 11.05.1988.
3. «Народное хозяйство Азербайджанской ССР. Юбилейный статический ежегодник к 70-летию Великого Октября», с. 3,11, 266.
4. Նույն տեղում, էջ 279:
5. Նույն տեղում, էջ 272:
6. Խոջարեկյան Վ. Ե., նշվ. աշխ., Երևան, 1991, էջ 47:
7. Նույն տեղում, էջ 44-45:
8. «Սովետական Ղարաբաղ», 13.05 և 03.06.1988:
9. Խոջարեկյան Վ. Ե., Արցախը փորձության ժամին, էջ 45-46:
10. «Народное хозяйство Азербайджанский ССР. Юбилейный статистический ежегодник к 70-летию Великого Октября», с. 3, 98, 257, 262, 270, 275:
11. Նույն տեղում, էջ 272:
12. Նույն տեղում, էջ 12, 282:
13. Խոջարեկյան Վ. Ե., նշվ. աշխ., էջ 48:
14. Վլադիմիր Խոջարեկյանը նշում է, որ 1926 թ. Լեռնային Ղարաբաղում անցկացված մարդահամարի տվյալները խեղաթյուրվել են Ադրբեջանի իշխանության կողմից: Այն ժամանակ Ղարաբաղում իրականում եղել է 140.1 հազար մարդ, և հայերը կազմել են ընդհանուր բնակչության 89.6%-ը, մուսուլմանները՝ 10%-ը (14 հազար) (Խոջարեկյան Վ. Ե., Արցախը փորձության ժամին, էջ 66):
15. Նույն տեղում, էջ 66-67:
16. Նույն տեղում, էջ 67:
17. Նույն տեղում, էջ 68:
18. «НКАО. 50 лет дружной Советской семье», Степанакерт, 1973, с. 126. «Численность и состав населения СССР», Москва, 1924, с. 126, «Азербайджанская ССР. Документы и материалы». Баку, 1989.

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, 4005, 4025, 1033, 4034, 4049, 4050:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ, ֆ. 1, 2, 3, 7, 8 9, 10, 11, 18, 23, 25, 28, 30, 33, 34, 38, 64, 75, 77, 82, 88, 92, 95, 167, 179, 224, 229, 233, 242, 250, 254, 275, 345, 353, 450, 460, 465, 466, 475, 481, 485, 486:

Ադրբեջանի Հանրապետության պետական արխիվ, ֆ. 57, 85, 130, 133, 185, 271, 375, 411, 412, 420, 685, 796, 944, 2202, 2499, 2511:

Ադրբեջանի քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների պետական արխիվ, ֆ. 1, 89, 456:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՆ

- «Աշխատանք», Մարտունի, 1967:
- «Բարեկամություն», Մարտակերտ, 1967:
- «Բոլշևիկյան հաղթանակ», Մարտունի, 1935–1939:
- «Երիտասարդ բոլշևիկ», Ստեփանակերտ, 1934–1940:
- «Կոմունիստ», Բաքու, 1920–1987:
- «Կոլխոզնիկ», Հադրուբ, 1935–1938:
- «Կոլտնտեսական», Հադրուբ, 1967:
- «Սոցիալիզմի ուղիով», Մարտակերտ, 1932–1938:
- «Մովետական Հայաստան», Երևան, 1921–1940:
- «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1923–1986:
- “Заря Востока”, Тифлис, 1926-1932.
- “Известия”, Москва, 1926-1938.
- “Правда”, Москва, 1936-1946.

ԱՄՍԱԳՐԵՐ

- «Ազիտատոր», Բաքու, 1966–1972:
- «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1966–1985:
- «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1950–1985:
- «Հայոց բանակ», 2005, N2–3:
- «Մանկավարժ», Երևան, 1965–1985:
- «Էջմիածին», Էջմիածին, 2003:
- «Քաղաքական գրուցակից», Երևան, 1990:
- “Красный архив”, Москва, 1936.

- “Революция и национальности”, Москва, 1932-1936.
- “Социалистическое хозяйство Азербайджана”, Баку, 1931-1937.
- “Социалистическое хозяйство Закавказья”, Тбилиси, 1928-1936.

ՕՊՐՈՎԱԾՈՒՆԵՐ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՍՍԿԴ–ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների քանակներում և որոշումներում, մաս 1, 2, 3, Երևան, 1955:

Արցախի ակադեմիկոսներ, Ստեփանակերտ, 2005:

Անդրկովկասյան խորհուրդների վեցերորդ համագումարը (սղագրական հաշվետվություն), Թիֆլիս, 1931:

Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետության սահմանադրությունը (հիմնական օրենքը), Բաքու, 1971:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 40 տարին, Բաքու, 1963:

Սովետական Լեռնային Ղարաբաղ, Բաքու, 1983:

Լեռնային Ղարաբաղը թվերով, Ստեփանակերտ, 2004:

Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933 թ.) Երևան, 2001:

Азербайджан в цифрах, Баку, 1964.

Азербайджанская кооперация (обзор состояния на 1926-1927 гг.), Баку, 1928.

Азербайджанский ССР в период восстановления народного хозяйства (1921-1925 гг.), Баку, 1963.

Азербайджан, Москва, 1971.

Азербайджанская ССР, Документы и материалы, Баку, 1989.

Братское содружество народов СССР 1922-1926 гг. Сборник документов и материалов, Москва, 1964.

Достижения Советского Народного Карабаха за 40 лет в цифрах, Степанакерт, 1963.

Борьба за социализм, Тбилиси, 1923.

Достижения Советского Азербайджана за 40 лет в цифрах, Баку, 1960. Закавказье. Статистико-экономический сборник 1925 г., Тбилиси, 1926.

Законы Азербайджанской ССР, указы Президиума Верховного Совета Азербайджанской ССР и хронологический сборник постановлений Правительства Азербайджанской ССР, 1920-1935 гг., Баку, 1960.

Известия Аз. филиала АН СССР, N4, Баку, 1939.

К истории образования Нагорно-Карабахской Автономной области Азербайджанской ССР. Документы и материалы, Баку, 1989.

Конфликт в Нагорном Карабахе, сборник статей, Баку, 1990.

Конституция Азербайджанской Советской Социалистической республики, Баку, 1926.

К вопросу и политики сельскохозяйственной кооперации в Аз. ССР, Баку, 1928.

Краткий обзор народного хозяйства Закавказья, Тбилиси, 1925.

Местное хозяйство Азербайджанской ССР, Баку, 1924.

Нагорный Карабах за годы Советской власти, Степанакерт, 1970.

Народное образования в Азербайджане в 1920-1927 гг., Баку, 1928.

Народное образование в СССР. Сборник документов 1917-1973 гг., Москва, 1974.

Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году, Баку, 1985.

Перестройка и национальные отношения, Ереван, 1989.

Развития электрификации Советской страны 1921-1922 гг., Москва, 1956.

Резолюции и постановления съездов Советов Азербайджанской ССР (1921-1937 гг.), Баку, 1961.

Социалистическая индустриализация Азербайджана (1926-1932 гг.), Баку, 1957.

Шелководство, Баку, 1925.

ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991:

Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, գիրք Ա, Երևան, 2003:

Աբրահամյան Հ., Մկրտչյան Շ., Արցախի համար զոհված դիզակցիները, Երևան, 2000:

Արզումանյան Ա., Ծովակալը, Երևան, 1973:

Առաքելյան Ար., Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, Ստեփանակերտ, 1939:

Ավագյան Ս. Դ., Սովետական Ղարաբաղի մանուլը, Բաքու, 1962:

Բարսե Ա. Ն., Լեռնային Ղարաբաղ, Բաքու, 1963:

Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002:

Բաբայան Բ., Արցախի կինը պատմության մեջ, Ստեփանակերտ, 1998:

Բեգլարյան Մ., Ղարաբաղը պատմության զուգահեռներում, Ստեփանակերտ, 2002:

Բեգլարյան Մ., Ղարաբաղի մեր Քարահունքը, Ստեփանակերտ, 2004:

Բեգլարյան Հ., Արցախ-Նանե, Երևան, 2002:

Գրիգորյան Հ. Թ., Արցախահայության մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, Սեղմագիր, Երևան, 2004:

Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005:

Դանիելյան Ա., Հարազատ օջախ, Երևան, 1993:

Զախարյան Ա. Բ., Լեռնային Ղարաբաղի մետաքսարդյունաբերությունը, Բաքու, 1970:

Լենին Վ. Ի., Երկերի լիակատար ժողովածու, հ. 37, 38, 42, 43, Երևան:

Խաչատրյան Ս., Վաստակած պատիվ, Ստեփանակերտ, 2002:

«Հայ ժողովրդի պատմություն», հ. 7 և 8, Երևան, 1967:

Հովհաննիսյան Գր., Լենինյան կոոպերատիվ պլանի հաղթանակը Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզում, Բաքու, 1958:

Հովհաննիսյան Գր., Հետամնաց ազրարային գավառից՝ առաջավոր սոցիալիստական մարզ, Բաքու, 1963:

Հովհաննիսյան Գ. Ա., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971:

Հարությունյան Համլետ, Ոգու լուսեղեն գաղտնիքը, Երևան, 2003:

«Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը», Երևան, 2005:

Հարությունյան Թ., Իվան Աթայան (ժողովրդական ուսուցչի կյանքը և գործը), Երևան, 2001:

Հարությունյան Կ. Ա., Մարշալ Բաղրամյան, Երևան, 1997:

Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945), Երևան, 2001:

Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 2002:

Մկրտչյան Շ. Մ., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ուղեցույց), Բաքու, 1970:

Մկրտչյան Շ., Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Երևան, 1996:

Մկրտչյան Շ., Արցախյան զբառումներ, Երևան, 2001:

- Ակրոտյան Շ.**, Լեռնային Ղարաբաղ: Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Երևան, 2003:
- Ակրոտյան Է.**, Արցախ-Ղարաբաղը իր անցեալով և ներկայով, Աթենք, 1988:
- «Մեծ հաղթանակի 60-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր», Գյումրի, 2005:
- Սելիք-Շահնազարյան Լ.**, Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998:
- Շահնազարով Ն. Ա.**, Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզ, Բաքու, 1960:
- Շահրամանյան Ֆ. Ա.**, Լեռնային Ղարաբաղի կոմերիտական կազմակերպությունը Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.), Ստեփանակերտ, 1958:
- Սարումյան Ն.**, Քաղաքական և մշակութային իրավիճակը Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզում 1960-80-ական թթ., Ստեփանակերտ, 2001:
- Սեյրամյան Գ.**, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները (տնտեսական աշխարհագրություն), Թիֆլիս, 1928:
- Վիրաբյան Ա.**, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Երևան, 2001:
- Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994:
- Ուլուբաբյան Բ.**, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994:
- Քոչինյան Ա.**, Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, Երևան, 2003:
- Արությունյան Կ. Ա.**, Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945 гг.), Ереван, 2004.
- Աхундов Ф. В.**, Деятельность Советов в период завершения социалистической реконструкции народного хозяйства (1933-1937 гг.) (по материалам Азербайджанской ССР), Автореферат, Баку, 1963.
- Աхмедов О. Б.**, Борьба азербайджанского народа за осуществление ленинских идей орошения в республике (1920-1941 гг.), Автореферат, Баку, 1965.

- Алимирзоев Х. О.**, Азербайджанская деревня в годы Советской власти, Баку, 1963.
- Амиров А. Б.**, Прогресс индустрии, Баку, 1970.
- Вирабян А.**, Знаменитые арцахцы, Ереван, 1992.
- Гасанов Г.**, Из истории борьбы Коммунистической партии Азербайджана за развертывание культурного строительства, Баку, 1961.
- Гусейнов Г., Нойдель М.**, Профсоюзы Советского Азербайджана, Москва, 1962.
- Гудратов О. Г.**, Классовая борьба в азербайджанской деревне в период восстановления народного хозяйства (1921-1925 гг.), Автореферат, Баку, 1964.
- Гурунц Леонид**, Наедине с собой или как докричаться до вас, потомки! Дневниковые записки 1975-1982, Ер., 2002.
- Зейнолов Г. Ю.**, Рост материального благосостояния трудящихся за 50 лет, Баку, 1970.
- История Азербайджана**, т. 3. (ч. 1, 2), Баку, 1963.
- “Из истории Советского рабочего класса Азербайджана”, Баку, 1964.
- Кочарян Г. А.**, Нагорный Карабах, Баку, 1925.
- Коровелиев А.**, История потребительской кооперации Азербайджана, Баку, 1968.
- Курбанов М. К.**, Культура Советского Азербайджана, Баку, 1959.
- Кулиев А. С. Я.**, Коммунистическая партия в борьбе за осуществление ленинского кооперативного плана (по материалам Аз. ССР), Баку, 1955.
- Токаржевский Е. А.**, Очерки истории Советского Азербайджана в период перехода на мирную работу по восстановлению народного хозяйства (1921-1925 гг.), Баку, 1956.
- Хармандарян С. В.**, Ленин и становление закавказской федерации 1921-1923, Ереван, 1969.
- Халилов А. И.**, Потребительская кооперация Азербайджанской ССР в период восстановления народного хозяйства (1921-1925 гг.), Баку, 1963.

Шабанов Ф. Ш., Развитие Советской государственности в Азербайджане, Москва, 1959.

Шагинян М., Нагорный Карабах, Москва, 1930.

Шагинян М., Дневники 1917-1931, Ленинград, 1932.

Шахрамьян Г. Л., Нагорно-Карабахская областная организация коммунистической партии Азербайджана в годы Великой Отечественной войны Советского Союза (1941-1945 гг.), Автореферат, Баку, 1964.

Якубовская С. И., Закавказская федерация к концу восстановительного периода, Москва, 1950.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ	3
ՎՈՒԽ ՆՈՍԻՆ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Ցարգի տնտեսական - տնտեսա-քաղաքական կյանքը 1920-1930-ական թթ.	7
1. Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը վերականգնման ճանապարհին	7
2. Հասարակական-քաղաքական կյանքի տեղաշարժերը	16
3. Ինքնավար մարզի արդյունաբերությունը 1920-1930-ական թթ.	33
4. Սարգի գյուղատնտեսությունը վերափոխման ճանապարհին	48
5. Խորհուրդների և հասարակական կյանքի վերակառուցման մի քանի հարցեր	76
6. Այսպես կոչված «քրդական» հարցը	91
7. Արցախի թեմը իր վերջին տարիներին	96
8. 1920-1930-ական թթ. Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած բռնարարները	101
9. Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքը 1920-1930-ական թթ.	106
ՎԱԽՆ ԵՐԿՐՈՐԳ Արցախ-Ղարաբաղը Հայրենական ճեժ պատերազմի տարիներին	115
ա) Ուզմանակատում	115
բ) Թիկունքում	125

ՉԼՈՒՄ ԵՐՐՑՐԳ

Լեռնային Ղարաբաղի հետապատերազմյան տարիներին

[1946-1985 թթ.] 137

1. Արդյունաբերության հետագա զարգացման ուղղությամբ
ծեռնարկված քայլերը 137

2. Տեղաշարժեր մարզի գյուղատնտեսության մեջ 158

3. Լեռնային Ղարաբաղի հասարակական-քաղաքական կյանքը
հետապատերազմյան տարիներին 185

4. Աղբյուրեջանի իշխանությունների քաղաքական
անբարոյականությունը արցախահայության նկատմամբ 206

5. Արցախի մշակութային կյանքը 1941-1985 թթ. 230

Ամփոփում 240

Աղբյուրներ, գրականություն և մեկնաբանություններ 244

Մատենագիտություն 270

Գրականություն 272

ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱՐԲԱՅԱՄՅԱՆ

ՄԱՐՏԵՂՈՂ ԱՐՃԱԽԸ

1917-2000

**ԳԻՐԶ Բ
1923-1985**

**АБРАМЯН ГРАНТ БАРСЕГОВИЧ
СРАЖАЮЩИЙСЯ АРЦАХ**

1917-2000

**Книга Б
1923-1985**

Книга посвящена событиям, произошедшим в Арцах-Карабахе в 1923-1985 годах, в период, когда протурецкое правительство Советского Азербайджана вело по отношению к арцахским армянам безразличную политику отуречивания Арцаха.

**ABRAHAMYAN HRANT BASEG
FIGHTING ARTSAKH**

1917-2000

**BOOK B
1923-1985**

This book is dedicated to the events which took place in 1923-1985, a period, when the Turkish authoritatives of Soviet Azerbaijan were leading immorial policy towards Armenians of Artsakh making them become.

Հրատարակչության տնօրեն
Գեղարվեստական խմբագիր՝
Համակարգչային ձևավորումը՝
Սրբագրիչ՝

Էմին Սևրտչյան
Արա Բաղդասարյան
Վիտալի Ասրինի
Մարգարիտ Իսկանդարյան

Տպագրությունը օֆսեթ: Չափսը 60x84 1/16:
Թուղթը օֆսեթ: Շավաղը 17.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ: Գինը՝ պայմանագրային: օժ



«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28
Ֆաքս՝ (+37410) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am